ԵՂԻԱ ՆԱՃԱՐԵԱՆ

# ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՐՑԻ ՍԵՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ



9(47.925) 3062
Ա-27

ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՐՑԻ
ՍԵՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ

الكتاب الاسود
للقضية «ارتساخ» (غاراباغ)
الجزء الاول والثاني والثالث
بقلم يغيا نجاريان

**The Black Book**
**of Artzakh (High Karabagh) Problem**
**fascicules A,B and C**
**by Yéghia Nadjarian**

Ը-27

ԵՂԻԱ ՆԱԺԱՐԵԱՆ

# ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՐՑԻ ՍԵՒ ԹՂԹԱԾՐԱՐԸ

## ՊՐԱԿ
## Ա., Բ. եւ Գ.

3062

ԳՐ...ԱՆ
БИ...ИОТЕКА

ՊԷՅՐՈՒԹ 1989

# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶ



## ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՕՍՔ

Հայ ժողովրդի մի քանի զաւակների՝ արցախահայութեան սխրալից խոյանքով 1988 թ. Փետրուարին փիւնիկի նման վերածնուեց Հայկական հարցը, որը, ի հաճոյս ընդհանրապէս թիւրքութեան եւ ի մասնաւորի քեմալականութեան, Խորհրդային Ռուսաստանի թէ հակախորհրդային Արեւմուտքի ղեկավարները քսանական թուականներին, արդէն որերորդ անգամ, գերեզմանել էին։

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդային Հայաստանի հետ վերամիաւորման պահանջի դիմապաստառներով վերածնուած Հայկական հարցն ընդհանուր առմամբ, առաւել եւս 1988 թ. գարնանը (երբ շունն ու կատուն, իւրաքանչիւրն իր անխուսափելի դրդումներից մղուած, անբնական զուգաւորման սիրախաղերին էին տրուած) նախատեսուած չլինելով այս աշխարհի արեւելեան թէ արեւմտեան կողմի հզօրների դիւանագիտական խաղահրապարակների յայտագրով, պէտք է ամէն գնով եւ հնարաւոր արագընթացութեամբ եւս մղուէր դէպի խորաթմբիր քնի իր մահիճը։ Հետեւաբար, մինչ իր ազգային սրտատրոփը յանկարծօրէն վերայայտնաբերած մի ամբողջ ժողովուրդ, հայ ժողովուրդը, մայր հայրենիքում լինի թէ սփիւռքում, աննախընթաց համախմբուածութեամբ գումարւում էր իր սրբազան Դատի անբաժանելի մասնիկ արցախական պահանջատիրութեան շուրջ, այս աշխարհի հզօրները լուռ համախոհութեամբ Հայկական հարցի արդարացի պոռթկումը մի անգամ եւս դատակնքում էին մերժողական վճռով։

Ու քանի որ Հայկական հարցն այս անգամ, վերջապէ՛ս, ծագել էր ու պաշտօնական բեմահարթակ բարձրացել իր բնօրրան Հայաստանում, որ եւ նոյնն է՝ Խորհրդային Միութիւնում, այսինքն այնտեղ, որտեղ դեռ ցարերի օրօք, Օսմանեան կայսրութեան բաժանբաժանման շուրջ եւրոպական մեծ տէրութիւնների միջեւ խաղացուող Արեւելեան հարցի մրցամարտի, ուրեմն եւ իր սաղմնաւորման պահից, այնպէս էր գուրգուրուել ամէն անգամ, երբ պատշաճել էր ռուսական ծաւալապաշտ կայսերականութեան շահերին եւ որտեղ, բազմաց կարծեօք, մեր օրերում առաւել քիչ հաւանականութիւնն ունէր գլուխ բարձրացնելու, ապա Խորհրդային Միութեան ղեկավարութեանն էլ վիճակուած էր պաշտօնական գերեզմանողի տհաճ եւ դժուարին

առաքելութիւնը։ Այդ առաքելութեան գլուխ բերումն էլ, արդէն ոչ թէ բազմաց, այլ ընդհանրական կարծեօք, պայմանաւորուած էր այն իրողութեամբ, որ խնկական իրաւատէր հայ համախմբեալ ժողովրդի ազգային շարժումը թէկուզ եւ ղեկավարւում էր միասնական զանգուածի ծոցից դուրս եկած արի արանց՝ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի կողմից, ապա ի հակակշիռ՝ իր պաշտօնական պիտակի գերակշռութեամբ առկայ էր երեւանեան կուսակցական-պետական աւագանին, պատրաստակամ Տրոյական ձի, որն անկասկած կարող էր ներքնաբակի խայտապիսակ զամբիկների հետ հմայել ու իր ետեւից տանել նաեւ արտաքնոց։

Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան 1988 թ. յուլիսեան նիստը Հայկական վերածնուած հարցի հենց յուղարկաւորական հանդէսն էր, որում ընտրուած կապարաքաշ ծանրանիստ դամբանաքարի ճեղքերից ետյուլիսեան ժամանակաշրջանում Ղարաբաղի հարցի երբեմնակի ուղղուագծումը, յուսահանիչ այն նահանջների (այդ թւում եւ վերջինի՝ 1989 թ. յունուարեանի) ներքոյ, պարզապէս աւելին չէր, քան՝ լոկ երգչախումբ կազմած դպիրների ալլապէս քաղցրացուող բերանները յանուն ներգործութեան արհեստականօրէն լորձնոտող այն շաքարաքլորը, որով բոլոր ժամանակներում եւ բոլոր հորիզոնականներում «ծնողները», առաւել եւս երկրորդ պսակով բերուած խորթ մայրերը, փորձել են թթացնել-մեղմել «զաւակների» հերսը։

Այլ խօսքով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդային Հայաստանի հետ վերամիաւորման հարցը Հայկական անակնկալօրէն վերածնուած հարցի ակնկալելի հապշտապութեամբ անմիջապէս էլ եւ պաշտօնապէս փակուած մի դրուագն է արդէն։ Աւելին. եթէ զարմանալի մի հրաշք տեղի չունենայ, այն պատմութիւն էլ կը մնայ եւ այլեւս չի վերաբացուի բնաւ, հակառակ համարեա համապազօրեայ շշուկ ու շշնջիւնին։ Եւ քանի որ իր աւարտին մօտեցող դարը ի պէտս զրկուած-անիրաւուածների գործուող հրաշքների եւ մեծախոս-մեծահոգի հրաշագործների դար չէ, երբեք, եւ քանի որ հրաշքները, նամանաւանդ, չեն բաժանւում տղայական բարեմտութեամբ խնդրագրերի թղթապանակով գերհզօր շերեփատրներին խոնարհաբար ու լացակումած մատչողներին, ով դեռ հաւատում է Հայոց Հրաշքին եւ ուրեմն ակնկալում Հայոց Հրաշալի Յարութիւնը, պարտաւոր է արդէն մտածել այն մասին, որ հայ ժողովրդի համար չի՞ հնչել, արդեօք, որպէս հրամայական այլընտրանք, կողմնորոշուելու հետեւեալ երկընտրանքում. գերհզօրների հանդիսարահ կա՛մ թափանցել հրէական դրամապանակով, կամ էլ ներխուժել պաղեստինեան լանչապանակով։ Ուրիշ կերպ ասած՝ մեր փոքր ածուն, որ իրաւունք չունի իր իսկ Հրաշքին չհաւատալու եւ ուրեմն չհետամտելու Վ. Թէքէեանից անժամանակ երգուած իր իսկ Հրաշալի Յարութեան, դեռ Խրիմեան Հայրիկի օրերին Պերլինում ապարդիւն դուրս եկած եւ անցեալ Յուլիսին Մոսկովեան Կրէմլում աւելի քան խայտառակուած խնդրագրերի թղթապանակը վերջնականապէս դէն շպրտելով, պէտք չէ՞ արդէն ընտրութիւն կատարի ընդմէջ թափառական հրեայի դրամապանակի եւ պաղեստինցու լանչապանակի։ Եւ քանի ի յառաջագունէ անկասկածելի է, որ հրէական դրամապանակի հայկական տարատեսակն անպայման սակաւաքաշ ու մեղմահունչ է դուրս գալու Պաքուի հետ նաեւ Անգարայի ու այլ գանձարկղների ներդրումներով ուռճանալիք թուրանական տարատեսակից, ապա միայն ու միայն մե՞զ, թէ մեզ հետ նաեւ այլոց, այդ թւում

այս աշխարհի արեւմտեան թէ արեւելեան հզօրներին պէտք է լրջօրէն յուզի հայ ժողովրդի ընտրանքի սահմանափակման ու յանչապանակի վրայ կենտրոնացման տարբերակի հաւանականութիւնը:

«Արցախեան Հարցի Սեւ Թղթածրարի» յաջորդաբար լոյս ընծայելի պրակները, որոնք միտում են մանաւանդ հենց ա՛յդ հարցադրման պատասխանի որոնումը հեշտացնելու, յղացուած էին դեռ անցած գարնանը, հայ ժողովրդի ազատագրական ժամերին եւ, ի բացառեալ առաջին էջեր, շարադրուած էլ են այնտեղ, հայոց երազ դարձած հայրենիքի վերջին պատառիկի վրայ, հայութեան Վերազարթօնքի հարսանեկան օրերին: Դժբախտաբար, ինչպէս հայոց ամէն մի հարսանիք, վերջինը՝ արցախականը եւս, առանց այդ էլ թաթար թուրանամէտ խաժամուժից բազմիցս արիւնոտուած, եղերականօրէն ընդմիջուեց դեկտեմբերեան հայակուլ աղէտով՝ Մեծ Երկրաշարժով, որը եւ պրակների հրապարակումն ու հեղինակի հայրենիք դարձն ուշացնող առարկայական գլխաւոր պատճառը դարձաւ: Հարիւրօրեայ սգոյ աւարտին, ահա, ինչքան էլ որ Մեծ Երկրաշարժի չարաղէտ հետեւանքների ծանրութեանը ոչ-անմեղսակից բարձրաստիճանաւոր մարդկանց արցախական Հայաշարժը խափանելու եռանդի, յատկապէս Ղարաբաղեան կոմիտէի արի արանց արգելափակման պայմաններում դժուարացած ու պատժելի յանցագործութիւն յայտարարուած լինի հայոց Վերազարթօնքի ազատագրական ժամի վերսկզբնաւորումը, այնուամենայնիւ հայ ժողովրդի պարտքն է ու պարտականութիւնը թափ տալ իրեն եւ վերստին ու էլ աւելի ամուր ու վճռական կանգնել Հրաշքի հաւաքական որոնման ու նուաճման ճանապարհին: Եւ «Արցախեան Հարցի Սեւ Թղթածրարի» պրակները նախ միտում են ընթերցողներին մտորումների մղել եւ նպաստել Հրաշքի որոնման ու նուաճման կերպի ու եղանակի ճշտորոշմանը:

Պրակների սփիւռքում հրատարակուելու իրողութիւնը թելադրուած է ոչ միայն եւ ոչ այնքան հեղինակի հիւրաբար արտասահմանում գտնուելու փաստից, հայրենիքում տիրականօրէն առկայ պաշտօնական թէ կիսապաշտօնական գրաքննութեան բազմաստիճան խոչընդոտները շրջանցելու ցանկութիւնից եւ լիբանանահայ գրատպութեան անմրցակից արագընթացութեան ընձեռած առաւելութիւնից: Պրակներն սփիւռքում են հրատարակւում՝ նախ եւ առաջ ու գլխաւորաբար հասցէագրուած լինելով սփիւռքահայութեան: Հայրենահայութիւնը մեր պրակների տիպի հրատարակութիւնների բովանդակութիւնն անգիր գիտի՝ որպէս տասնամեակներ շարունակ ու մանաւանդ 1988 թուի Փետրուարից սկսած ամէն օր ապրուած ու դեռ դաժանօրէն ապրուող սեփական իրողութիւնների վերաբերեալ պատում: Բայց ահա սփիւռքահայութիւնը, չարադիտօրէն վաղուց բազմափեղկուած եւ հակառակ բոլոր բարեացակամ թէ նենգամիտ հաւաստիացումների բազմափեղկուած էլ մնացող, քաղաքական հուժկու ու բազմափորձ կենտրոններից աշխուժացուող գիտակից թէ անգիտակից մունետիկների «օգնութեամբ» իր հիմնական զանգուածով ակներեւօրէն խարխափում է թանձրաթանձր մի մշուշում: Իսկ ի շահ հայոց Վերազարթօնքի ազատագրական ժամի վճռականօրէն վերսկզբնաւորման, սփիւռքահայութիւնը պարտաւոր է ժամ առաջ դուրս պրծնել արհեստականօրէն աւելի ու աւելի թանձրացուող այդ մշուշից: Եւ մշուշից ելքի հնարաւորութիւնը հեշտացնող միջոցառումներից մէկը լինելու յաւակնութիւնն, ահա, բնաւ էլ խորթ չէ այս պրակներին: Ընդհակառակը: Որովհետեւ սփիւռքահայութիւնը պատմական իր դժնի ճակատագրի բերումով առաւել իրաւասու ներկայացուցիչն է

հայկական համապարփակ պահանջատիրութեան, առաւել անկաշկանդ ու ազատ, հետեւաբար առաւել վճռականօրէն եւ ներգործունօրէն դիրքորոշուելու ու շարժուելու ընդունակ ներկայացուցիչը, որից հայ ժողովրդի կեանքի ու գոյավիճակի մերօրեայ դասաւորութիւնը պահանջում է ոչ թէ կրաւորական հետեւորդ, այլ հայրենահայութեան կողքին լիիրաւ եւ հաւասարազօր ուղղորդ լինել Հայաշխարհի հրամայականօրէն կենսական երթում:

Հայաշխարհը շարունակւում է: Եւ ուրեմն օ՛ն անդր յառաջ:

Հայաշխարհը չի կարող չշարունակուել, քանի դեռ արի արանց արիւնը եռում է եւ հայկազանց հոգիք բորբոքին ի հուր:

Հայաշխարհը պէտք է շարունակուի՝ մինչեւ հնչի Մեծ Հայաշխարհի ժամը, մինչեւ հրաւէր հայրենեաց հնչակի ընդհանուր եւ Որդիք Որոտման՝ հայրենավրէժ հայկազունք ետ բերեն ոչ միայն Արցախը, Նաեւ Ուտիքն ու Նախիջեւանը, այլեւ Ջաւախքը, այնուհետեւ Կարսն ու Արտահանը, Էրզրումն ու Վանը, Մուշն ու Բիթլիսը, Խարբերդն ու միւսները, վերջապէս Հայկական Կիլիկիան:

Արցախը մի մասնիկն է Խորհրդային Հայաստանի, իսկ Խորհրդային Հայաստանը միայն մի մասն է **Հայաստանի**: Իսկ ով կ'ասի մասնիկ ու մաս եւ չի մտածի ամբողջի մասին, թող անիծուի մինչեւ եօթը պորտ:

Հայկական Արցախի տունդարձը սուրբ նպատակ է՝ սրբազնագոյն նպատակակէտի ճանապարհին առաջին քայլ:

Խորհրդային Հայաստանի պահպանումը, տարածքայնօրէն վերամբողջացումն ու զօրացումը սրբազան նպատակ է՝ սրբազնագոյն նպատակակէտի ճանապարհին կենսական հանգրուան:

Սրբազնագոյն նպատակակէտը, սակայն, եղել է, է՛ ու պիտի լինի **Հայաստանը**, *ԱՄԲՈՂՋԱԿԱՆԸ*:

Այս առումով էլ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական երեսփոխանների մարզային խորհրդի 1988 թուի Փետրուարի 20-ի եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Յունիսի 15-ի պատմական որոշումները՝ դէպի կենսական հանգրուան, հետեւաբար դէպի սրբազնագոյն նպատակակէտ այն առաջին քայլն էին, որը հայ ժողովուրդը երազում էր նետել 1921 թուականից ի վեր: Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Յուլիսի 18-ի չարաղէտ որոշումը այդ քայլը կասեցնող բռնագոյն յախտահարուածն էր, որի ե՛ւ ուժգնութիւնը, ե՛ւ հասցուելու կերպն ու եղանակը մեր ժողովրդի պատմական յիշողութեան մէջ շատ երկար են մնալու: Եւ մնալու են՝ հակառակ հետյուլիսեան ժամանակաշրջանում օդում մշտապէս ճօճուող մահակին ծեքծեքանքով ուղեկցուող կարկանդակի արհեստականօրէն, թէկուզ վարպետօրէն փխրեցուած պատառիկներին:

Ահա, թէ ինչո՛ւ Ղարաբաղեան հարցը, ըստ էութեան մէկ ամբողջութիւն կազմող մեր աշխատութեան պրակներում, որպէս կանոն դիտուելու է Յուլիսի 18-ի չարաղէտ որոշման պրիզմակով եւ թէ ինչո՛ւ որպէս հարցին, յատկապէս նրա ընթացիկ պահին առնչուող նիւթերը համախմբող ու մեկնաբանող թղթածրար, աշխատութիւնը կրում է **«Արցախեան Հարցի Սեւ Թղթածրարը»** խորագիրը:

## Առաջին պրակ

- ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱ-ՀՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆԽԱՊԱՏՐԱՍՏ ՔԱՆԱՁԵՒԸ
- «ԿՐՈՄԻՔՕ ԵՒ ԸՆԿ.» — ՊՐԵԺՆԵՒԵԱՆ ՃԱՀՃԻ ԿԱՇԱՌԱԿԵՐ «ՀԵՐՈՍՆԵՐԸ»
- ՔՐԷԱԿԱՆ ՅԱՆՑԱԳՈՐԾ ՀԷՅՏԱՐ ԱԼԻԵՒԻ ԴԷՊԻ «ԱԼԼԱՀՈՒ-ԹԻՒՆ» ԱՌԱՋԽԱՂԱՑՔԻ ՆԵՐՔՆԱԾԱԼՔԵՐԸ
- ԱՐՑԱԽԸ ՀԱՅԱԶՐԿԵԼՈՒ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳԷՈՐԳՈՎԻ ԳԼԽԱՒՈՐԱԾ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԻ ՄԵՂՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ
- ԲԱԶՄԱՄԵԱՅ ՉԵԿԻՍՏ ԵՒ ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱԶ ՄԱՄԷՏՈՎԻ ՄԵՂԱԴՐԱԿԱՆԸ ԹԱԹԱՐԱԿԱՆ ՄԱՖԻԱՅԻ ԴԷՄ. «ՍՈՒՄԿԱ-ՅԻԹԸ ՈՐՊԷՍ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՕՃԱԽ ԿԱՆԽՈՐՈՇՈՒԱԾ ԷՐ ԴԵՌ 1970-ԱԿԱՆ ԹԹ.»
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԸՆԿՆՈՒՄ ԵՆ ՍԱՀ-ՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ 70-ՐԴ ՓՈՒՃ ՅՕԴՈՒԱԾԻ ԹԱԿԱՐԴԻ ՄԷՋ՝ ԿԱՐԵՆԱԼ ԾՐՋԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋԱՏԻՐԱԿԱՆ 78-ՐԴ ՅՕԴՈՒԱԾԸ

Զօն՝

Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի արի ա-րանց, որոնք բարձր ծածանեցին պահանջատիրական դրօշը

եւ

Այն բազմաբիւր հայորդիներին, որոնք աննահանջ քայլեցին այդ դրօշի ետեւից եւ դեռ պիտի քայլեն...

# Ա.

ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան* 1988 Յուլիսի 18-ի «Ղարաբաղեան» նիստը նրա կազմակերպիչների մտայղացմամբ, ըստ երեւոյթին, պարզապէս թատերական ներկայացման բնոյթ պիտի կրէր եւ ստարտուէր կանխօրօք պատրաստուած որոշման նախագիծը առանց էական փոփոխութիւնների հաստատելով, այն վերածելով պաշտօնական որոշման։ Իսկ որոշման խնդրոյ առարկայ նախագիծը, որը գործնականում նախատահմանում էր հարցի քննարկման ամբողջ ընթացքի ուղղութիւնը եւ ուրեմն թելադրում ու պարտադրում ելոյթների ջախջախիչ մեծամասնութեան կառոյցն ու հունը, անխուսափելիօրէն կանխորոշում էր Ղարաբաղի ճակատագիրը, փաստօրէն հարցն ի յառաջագունէ լուծում յօգուտ ատրպատականեան թաթար ազգայնականութեան (նշանակում է՝ յօգուտ համաթիւրքական հեռահայեաց ոտնձգութիւնների) եւ ի վնաս մշտապէս իրաւազրկուող հայութեան։

Մենք ձեռքի տակ չունենք որոշման այդ նախագիծը եւ եթէ աչքի առաջ ունենանք արխիւային փաստաթղթերը կէս դար եւ աւելի եօթ կողպէքի տակ պահելու խորհրդային սովորոյթը, ապա գալիք դարի երկրորդ կէսի պատմաբաններն իսկ հազիւ թէ կարողանան դրա իսկական բնագրի հետ ծանօթանալ։ Իսկ որ այդպիսի նախագիծ եղել է, դա անկասկածելի է, ըստ որում ոչ միայն այն հիմամբ, որ Խորհրդային Միութեան կուսակցական թէ պետական բոլոր հաւաքոյթ-գումարումների համար ընդհանրական ու սրբազան կարգ է ի սկզբանէ, առանց թեր ու դէմ ելոյթները լսելու, հարցը վճռուած-լուծուած համարել եւ ուրեմն գերագոյն ղեկավարների նեղլիկ շրջանում էլ պատրաստել, ապա եւ ժողովականներին, բացառիկ դէպքերում աննշան հպում-փոփոխութիւններով, պարտադրել որոշման մի նախագիծ։ Ի դէպ, խորհրդային առնուազն վերջին վաթսունամեայ իրականութեան մէջ չի եղել ոչ իսկ մէկ որոշման պաշտօնական նախագիծ, որը արժանացած չլինի միաձայն քուէարկութեան...

---

(*) Խորհրդային համակարգում Գերագոյն Խորհուրդը օրէնսդիր բարձրագոյն իշխանութիւնն է ինչպէս Միութեան ստորհամակարգով (Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդ), այնպէս էլ 15 հանրապետութիւններից իւրաքանչիւրի (օրինակ՝ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդ)։ Համապատասխանում է դասական համակարգի խորհրդարանին։

Տարին մէկ կամ երկու անգամ ձեւականօրէն գումարուող խորհրդային «խորհրդարանը» իր լիազօրութիւնները փաստօրէն զիջել է իր անդամների թուաչափ մի մարմնի՝ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան, որի նախագահը համապատասխանում է հանրապետութեան նախագահին։

Եթէ ուշադիր ընթերցելու լինենք ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի այն սղագրութիւնը, որը լոյս տեսաւ խորհրդային անխտիր բոլոր թերթերում, ապա կարող ենք այն անմիջական տպաւորութիւնն ստանալ, որ նախագահ Անդրէ Անդրէեւիչ Կրոմիքոյի վարչաքաղաքական խմբաւորումը, որ եւ նոյնն է՝ պրեժնեւեան ճահճացման տարիներից եկող մեծամեծների նրա խմբակն ու նրա գլխաւորած Նախագահութեան մշտական քարտուղար վրացի Թ. Մէնթէշաշվիլու ղեկավարած մարմինը իբր որոշման ոչ մի նախագիծ չեն պատրաստել, որ Ղարաբաղի ճակատագիրը իբր բնաւ էլ կանխօրօք վճռուած չի եղել եւ որ հարցի շուրջ իբր արդարացի որոշում պէտք է կայացուէր միայն ու միայն անկողմնակալ քննարկման, ազատ ու անկաշկանդ վիճաբանութիւնների, թեր ու դէմ փաստերի հանգամանալի շարադրման ու հիմնաւորման որպէս ատրատկէտ։ Եւ իրօք, բացելով Նախագահութեան նիստը, Անդրէ Կրոմիքոն օրակարգի միակ հարցի նախապատմութիւնը կատարել է այսպէս.

«Օրակարգում գրուած է մէկ հարց. Լեռնային Ղարաբաղի առթիւ Հայկական ԽՍՀ ու Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդների որոշումների մասին։ Այս հարցը մեզ համար նոր չէ։ Ինչպէս յայտնի է, այն քննարկուեց ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Մարտի 23-ի նիստում։ Այն ժամանակ նշուեցին սահմանադրութեան եւ խորհրդային օրէնսդրութեան պահանջների պահպանման պայմաններում իրադրութեան կայունացմանը, ազգային քաղաքականութեան լենինեան սկզբունքների ոգով բնակչութեան շրջանում զանգուածային-քաղաքական եւ դաստիարակչական աշխատանքի բարելաւմանը նպատակամղուած միջոցառումներ։ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտէն եւ կառավարութիւնը մշակել եւ իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսական ու սոցիալ-մշակութային զարգացման հասունացած հարցերի արմատական լուծման միջոցառումներ։ Սակայն դրանից յետոյ էլ Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադրութիւնը շարունակում է շիկանալ։ Ատրպէյճանի ու Հայաստանի դիրքորոշումները մատնանշող իւրօրինակ սահմանագիծ դարձան այդ հանրապետութիւններում իշխանութեան բարձրագոյն մարմինների վերջերս կայացրած նստաշրջանները։ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը 1988 թուականի Յունիսի 15-ին ընդունեց մեզ բոլորիս յայտնի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ։ Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը Յունիսի 17-ին քննարկեց այդ հարցը եւ այդ որոշումը համարեց անընդունելի»։

Եթէ հաւատք ընծայենք սղագրութեանը, ապա, ըստ Անդրէ Կրոմիքոյի վերջին խօսքերի, Ատրպէյճանի Գերագոյն Խորհուրդը Յունիսի 17-ին որոշել է անընդունելի համարել Հայաստանի Գերագոյն Խորհրդի Յունիսի 15-ի որոշումը։ Հանրայայտ է, որ իրականութիւնն այդպէս չէ, բնաւ, քանի որ Պաքւում օրակարգի հարցը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհրդի Փետրուարի 20-ի որոշումն է եղել։ Այս ըստ էութեան ոչ-երկրորդական փաստն, ըստ ինքեան, խօսում է կա՛մ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստին նախապատրաստուելու (իր ներածական ելոյթը մշակելու) հարցում Անդրէ Կրոմիքոյի մօտ

պատասխանատուութեան զգացմունքի անգոյութեան, կամ էլ այդ նիւթի վերաբերեալ ոչագրական հաշուետուութիւն-արձանագրութիւն կազմելու հարցում ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան քարտուղարութեան անպատասխանատու թեթեւամտութեան մասին։ Հետագայում մամուլի էջերում ուղղման չարժանացած այս թիւրիմացութեան գիտակից կամ անգիտակից մեղաւորի ճշտորոշումը չի փարատի, անշուշտ, այն ցաւն ու տխրալի տպաւորութիւնը, որ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան կողմից եթէ ոչ անլուրջ, ապա առնուազն թեթեւամիտ վերաբերմունք է դրսեւորուել մի ամբողջ ժողովրդի յոյզերն ու ոգորումները մարմնաւորած կենսական մի հարցի նկատմամբ։ Այստեղ, սակայն, մեր նպատակն էր մատնանշել ոչ-այնքան այդ դատապարտելի վերաբերմունքը, որքան՝ այն տպաւորութիւնը, որ քննարկման դրուած հարցի «նախապատմութեան» վերաբերեալ Անդրէ Կրոմիքոյի ուղերձից մէջբերուած տողերում Ղարաբաղի խնդրի վաղօրօք, քուլիսների ետին որոշուած-վճռուած լինելը յուշող նուազագոյն իսկ ակնարկ չկայ։ Ընդհակառակը։ Բանն այն է, որ մէջբերուած եւ իրավիճակի լրջութիւնն ընդգծող խօսքերից անմիջապէս յետոյ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահը շարունակել է այսպէս.

«Այս իրավիճակը մեզանից պահանջում է իրազրութեան ամբողջ բարդութեան խոր ըմբռնում, յոյզերից եւ տարբեր կարգի վիրաւորանքներից վեր կանգնելու կարողութիւն յանուն խորհրդային ժողովրդի բարձրագոյն շահերի։ Ճիշտ որոշման որոնումը պէտք է կատարուի ԽՍՀՄ սահմանադրութեան, սոցիալիստական արժէքների, ժողովուրդներից իւրաքանչիւրի կարծիքի, աւանդոյթների, ազգային արժանապատուութեան փոխադարձ յարգման շրջանակներում։ Սա աքսիոմա է»։

Եւ ահա, Անդրէ Կրոմիքոյից անմիջապէս յետոյ, ինչպէս ասուած է ոչագրական հաշուետուութիւնում՝ «հաղորդումով հանդէս եկաւ» ի պաշտօնէ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահի տեղակալներից մէկը հանդիսացող Հրանդ Ոսկանեանը, Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահը։ Եւ իր «հաղորդման», աւելի ճիշտը կը լինէր ասել՝ Հայաստանի պաշտօնական, կուսակցական-պետական վերնախաւի տեսակէտի ու դիրքորոշման պարզաբանման ընթացքում էլ նա փաստօրէն, գուցէ թէ ակամայ, այլ հաստատօրէն իր վերադասների կամքին ու ցանկութեան հակառակ, պարզորոշօրէն բացայայտեց, որ նախ՝ պղնձեայ քանի՞ կոպէկ արժեն Անդրէ Կրոմիքոյի խօսքերը «որոշման որոնումը» իդէալական պայմաններում կատարելու «աքսիոմա»-ի վերաբերեալ եւ որ ապա՝ պետութեան ղեկավարը եւ իր քարտուղար Մէնթէշաշվիլուց ղեկավարւող պաշտօնեաները ինչպէ՞ս են դեռ մինչեւ նիւթի գումարումը իրավի հարցը վճռել յօգուտ Ատրպէյճանի, պատրաստելով եւ Նախագահութեան անդամներին բաժանելով որոշման համապատասխան մի նախագիծ, դոյզն իսկ չերկմտելով, որ ինչպէս անցած-գնացած բազում տասնամեակներում, ստալինեան լինի թէ պրեժնեւեան ժամանակաշրջաններում ի վերուստ իջեցուած անխտիր բոլոր նախագծերը, այնպէս էլ այժմ, «վերակառուցման» կորպաչովեան դարաշրջանում, իրենց բաժանած

նախագիծը անպայման անմռունչ ու միաձայն քուէարկութեամբ կը վերածուի անքննարկելի եւ անառարկելի որոշման։

«Ընկերներ,– իրօք էլ իր հաղորդման համարեա վերջում ասել է Հայաստանի Հանրապետութեան նախագահը,– ես կը ցանկանայի իմ կարծիքը յայտնել որոշման ներկայացուած նախագծի առթիւ»։

Հայաստանի պետական վարչամեքենայի առաջին (ըստ էութեան Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարից յետոյ երեւանեան իշխանաւորների շարքում երկրորդ) դէմքը այդ խօսքերով հաստատելով որոշման կանխապատրաստ նախագծի առկայութիւնը, այնուհետեւ փաստօրէն բացայայտել է նաեւ հրապարակման ոչ-ենթակայ այլ իրողութիւններ եւս. նախ՝ որոշման նախագծում Հայաստանի (ուրեմն եւ Արցախի) հայութեան արդարացի պահանջի կարուկ մերժուած լինելու իրողութիւնը, ապա եւ՝ այն իրողութիւնը, որ Անդրէ Կրոմիքօն եւ իր օգնականները, իրականում, սոսկ ձեւականօրէն նիստի գումարուած Նախագահութեան անդամներին կանխօրօք սիրաշահել են եւ իրենց մշակած հակահայկական նախագծի շուրջ ստեղծել համերաշխ միաձայնութեան մթնոլորտ։ Աւելին. Հայաստանի պետական վարչամեքենայի առաջին դէմքն այն աստիճանի պարզորոշ, Քրիստոսի վէրքին ձեռք տուող Թովմաս առաքեալից աւելի զգայական շօշափած է եղել համերաշխ միաձայնութեան այդ մթնոլորտի անխախտելիութիւնը, այնքան համոզուած է եղել հայութեան արդարացի պահանջի դէմ Նախագահութիւնում վաղօրօք բարձրացուած չինական պարսպի անխորտակ ամրութեան հարցում, որ հարկ է համարել նիստի նախօրէին Երեւանի ղեկավարութեան տարած բացատրական-նախապատրաստական աշխատանքներում ինչ որ թերութիւն ու բացթողում որոնել։ Եթէ փորձենք փոքր ինչ աւելի խորամուխ լինել, ապա Հրանդ Ոսկանեանի բառերի ետին կարող ենք մինչեւ իսկ տեսնել վատ քողարկուած ափսոսանք՝ Հայաստանի Գերագոյն Խորհրդի յունիսեան յայտնի որոշման զգուշաւոր ու սեթեւեթ հարցադրման առթիւ։ Որ այս բոլորը ոչ թէ մեր մտորումներն են ու անհող ենթադրութիւնները, այլ՝ ինչպէս կ'ասէր Անդրէ Կրոմիքօն ինքը՝ պարզապէս «աքսիոմա», անհերքելի, առնուազն հաստատման կարիք չունեցող ճշմարտութիւններ, ցոյց են տալիս Հայաստանի Հանրապետութեան նախագահի հետագայ խօսքերը.

«Ամենայն հաւանականութեամբ եւ ի մեծ ցաւ մեզ, մենք չկարողացանք Նախագահութեան անդամներին հասցնել Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տիրող իրավիճակի ամբողջ սրութիւնն ու ողբերգականութիւնը»։

Հայաստանի պետական վարչամեքենայի առաջին դէմքի ինքնաձաղկողական եւ յոռետեսութեամբ թաթաւուն հենց այդ խօսքերից էլ (նոյնիսկ եթէ չլինէր նրա ելոյթի շարունակութիւնը) հնարաւոր է եզրակացնել, որ Անդրէ Կրոմիքօյի եւ իր գործակիցների փակ դռների ետին մշակած որոշման նախագիծը հայութեան ազգային ըղձանքների բաւարարման հարցում ոչ միայն եղել է կարուկ մերժողական, այլեւ՝ նոյնիսկ քամահրական։

«Այսպիսի որոշման ընդունման դէպքում այն հայ ժողովրդի

մէջ առաջ կը բերի թէ՛ ցաւ, թէ՛ հիասթափութիւն,– իր խօսքը շարունակել է Հայաստանի Հանրապետութեան Նախագահը,– քանի որ ամբողջ հայ ժողովուրդն սպասում էր, որ այդ հարցը քննարկելիս կ՚առաջնորդուենք կուսակցական համաժողովի բանաձեւերի հիմնադրոյթներով, որոնց ակունքները սկիզբ են առնում ԽՄԿԿ Կենտկոմի ապրիլեան պլէնումից»։

Ընթերցողի ուշադրութեան նկատմամբ կասկածանքից չէ, որ ընդգծմամբ ուշադրութիւն ենք հրաւիրում Հրանդ Ոսկանեանի խօսքերում հայ ժողովրդի «սպասումների» արդէն անցեալ ու անկատար լինելը փաստագրող բայի վրայ։ Պարզապէս ուզում ենք շեշտել, որ Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարների բառ ու բանում աննախընթաց, առաւել եւս՝ Կրեմլի կամարների ներքոյ աննախադէպ այդ խօսքերը մտնում են Նախագահութեան նիստի առաջին իսկ րոպէներից հայ պատուիրակների շուրջը թանձրացած մթնոլորտի եւ նրանց հոգու վրայ տիրականօրէն փռուած զգացմունքների ողբերգականութիւնը. ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստը նոր-նոր է սկսուել, նախագահող Անդրէ Գրոմիկոն միայն օրակարգն է ներկայացրել եւ կոչ արել բացարձակ արդարամտութեամբ հարցին լուծում որոնել, անմիջապէս խօսք է տուել Հայաստանի ներկայացուցչին, իսկ վերջինս խօսում է Նախագահութեան անդամներից իւրաքանչիւրի ձեռքը տիրականօրէն խոթուած որոշման նախագծի ոչ միայն կանխորոշական զօրութեանն ու այդ նախագիծը որոշման վերածելիք մոգական գաւազանի ամենազօրութեանը հաստատապէս համոզուած, այլեւ՝ կարծես ինչ որ դիւթանքով հաւատացած, որ ինքը վերջին խօսողն է եւ այդ զօրութիւնն ու ամենազօրութիւնը արդէն իսկ անխափան տեսել են իրենց գործը։

Առաջ չընկնենք, սակայն, եւ ասենք, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահը Կրեմլի նիստին գնալուց առաջ կարծես թէ մանրամասն ուսումնասիրել էր Պերլինի վեհաժողովի պատմութիւնը եւ դասեր քաղել դրանից։ Յիշո՞ւմ էք Պոլսից Պերլին ուղեւորուելու նախապատրաստուող Խրիմեան Հայրիկի պատասխանն այն մարդկանց, ովքեր, գիտել տալով, որ ինքը ոչ մի օտար լեզու չգիտի, հարց էին տալիս, թէ ի՞նչ լեզուով է խօսելու եւրոպական մայրաքաղաքներում։ «Պիտի խօսիմ լեզու մը, որ համաշխարհային է եւ տառապանքի լեզու է միեւնոյն ժամանակ, այսինքն պիտի լամ»։ Հայաստանի պետական վարչամեքենայի առաջին դէմքն ինքը եւս, եթէ ոչ լացելով, ապա անկասկած լացակումած շարունակում էր իր ելոյթը.

«Ես դիմում եմ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան բոլոր անդամներին՝ խնդրում եմ ձեզ մէկ անգամ եւս համակուել մեր ժողովրդի իղձերով ու յոյսերով, ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման շահերով»։

Մենք դեռ կը վերադառնանք Հրանդ Ոսկանեանի վերջին խօսքերին, երբ կ՚անդրադառնանք «փոխզիջման» եւ «այլընտրանքի» չարաբաստիկ առաջարկութեանը, որը փաստօրէն ասպարէզ նետուեց Հայաստանի ղեկավարութեան կողմից։ Այստեղ ասենք, միայն, որ մեր կարծիքով որոշման այն նախագիծը, որ Անդրէ Գրոմիկոյի եւ նրա գործակիցների կողմից նախօրօք մշակուել էր, Յուլիսի 18-ին ընդունուած որոշման նոյն տեքստն էր մօտաւորապէս, միայն թէ դրանից մի տաս տող

հանած։ Այլ խօսքով ամենայն հաւանականութեամբ ունէր հետեւեալ տեսքը․

«ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի առթիւ Հայկական ԽՍՀ եւ Ադրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդների որոշումների մասին.

1) ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը, քննարկելով Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի 1988 թուականի Յունիսի 15-ի խնդրանքը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի խնդրագրի կապակցութեամբ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի կազմի մէջ անցնելու վերաբերեալ եւ Ադրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի 1988 թուականի Յունիսի 17-ի որոշումը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ի կազմի մէջ մտցնելու անընդունելիութեան մասին, անհնար է համարում Հայկական ԽՍՀ-ի եւ Ադրպէյճանական ԽՍՀ-ի սահմանների եւ սահմանադրական հիման վրայ հաստատուած նրանց ազգային-հողատարածքային բաժանման փոփոխումը։

Ընդունելով այսպիսի որոշում, ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը ելնում է ԽՍՀՄ սահմանադրութեան այն դրոյթից (յօդուած 78), որին համապատասխան միութենական հանրապետութեան տարածքը չի կարող փոփոխուել առանց նրա համաձայնութեան։ Այլ որոշումը կը հակասէր երկու հանրապետութիւնների ժողովուրդների շահերին, լուրջ վնաս կը հասցնէր այդ շրջանի ազգամիջեան յարաբերութիւններին։

ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը նշում է, որ խորհրդային իշխանութեան տարիներին լենինեան ազգային քաղաքականութեան իրականացման հիման վրայ Լեռնային Ղարաբաղի աշխատաւորները կուսակցական եւ խորհրդային կազմակերպութիւնների ղեկավարութեամբ նշանակալի յաջողութիւնների են հասել տնտեսութեան, գիտութեան զարգացման ասպարէզում եւ ընկերային կեանքի այլ ոլորտներում։ Դրա հետ մէկտեղ ինքնավար մարզում երկար ժամանակ չէին լուծւում հայ բնակչութեան ազգային շահերը շօշափող շատ հարցեր, յատկապէս մշակոյթի, կրթութեան ոլորտում, քադրային քաղաքականութեան մէջ։ Խախտւում էին ինքնավար մարզի սահմանադրական իրաւունքները։ Այդ բոլոր բացասական երեւոյթները ոչ միայն ժամանակին չէին վերացւում, այլեւ կուտակւում էին։ Ադրպէյճանական ԽՍՀ-ի, Հայկական ԽՍՀ-ի եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իշխանութեան մարմինները մակերեսօրէն մօտեցան ստեղծուած իրավիճակի գնահատմանը, չգիտակցեցին այդ շրջանում գոյութիւն ունեցող ազգային-հողային կառուցուածքը վերանայելու անհիմն կոչերի քաղաքական վտանգաւորութիւնը, կրաւորական, սպասողական դիրք գրաւեցին։ Հանրապետութիւններում սրուել է իրադրութիւնը, մեծ վնաս է հասցուել տնտեսութեանը, Հայաստանի եւ Ադրպէյճանի ժողովուրդների ազգամիջեան յարաբերութիւններին։ Այդ ամէնը արդարացիօրէն դատապարտուեց մեր երկրի աշխատաւորների կողմից։

Լեռնային Ղարաբաղում ստեղծուած դրութիւնը շտկելու եւ

լուրջ թերութիւնները վերացնելու համար ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան եւ ԽՍՀՄ Նախարարաց խորհրդի որոշումներով խոշոր միջոցառումներ են նախատեսուած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի տնտեսութեան, մշակոյթի հետագայ զարգացումն ապահովելու, աշխատաւորների բարեկեցութիւնը բարձրացնելու, սոցիալիստական օրինականութիւնն ու հասարակական կարգն ամրապնդելու, Ադրբէյճանական ԽՍՀ-ի եւ Հայկական ԽՍՀ-ի բնակչութեանը եղբայրական բարեկամութեան ու համագործակցութեան ոգով դաստիարակելն ուժեղացնելու համար։ Անհրաժեշտ նախադրեալներ են ստեղծուած Հայկական ԽՍՀ-ի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կապերն ընդլայնելու նպատակով...

2) ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը Ադրբէյճանական եւ Հայկական միութենական հանրապետութիւնների աշխատաւորներին, կուսակցական ու պետական մարմիններին կոչ է անում հնարաւոր ամէն ինչ անել, որպէսզի վերականգնուեն ադրբէյճանական ու հայ բնակչութեան բարի, եղբայրական յարաբերութիւնները։

ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին, Ադրբէյճանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ ժողովրդական երեսփոխանների խորհուրդներին, նրանց գործադիր ու կարգադրիչ մարմիններին յանձնարարում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, որպէսզի բնականոնացուի իրադրութիւնը Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում ու Ադրբէյճանի միւս շրջաններում, ապահովուի աշխատանքային կարգապահութեան ամրապնդումը, ԽՍՀՄ սահմանադրութեան եւ խորհրդային օրէնքների անշեղ կիրառումը, վճռականօրէն կասեցնելով ազգային թշնամանքի բորբոքմանը ուղղուած ամէն տեսակ գործունէութիւն, դեմոկրատական իրաւունքները հակադեմոկրատական նպատակներով օգտագործելու փորձերը...

3) ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը գտնում է, որ այժմ, երբ ԽՄԿԿ 19-րդ համամիութենական կոնֆերանսը նոր խնդիրներ է առաջադրել մեր հասարակութեան յեղափոխական վերակերտումների գործընթացները խորացնելու, այդ թւում եւ ազգամիջեան յարաբերութիւնները էլ աւելի ամրապնդելու ու զարգացնելու նպատակով, առանձնապէս կարեւոր է, որ բոլոր միութենական ու ինքնավար հանրապետութիւնների գերագոյն խորհուրդների նախագահութիւնները, ժողովրդական երեսփոխանների տեղական խորհուրդները մշտապէս տեսադաշտում պահեն միջազգայնականութեան սկզբունքների հիման վրայ խորհրդային մարդկանց բարեկամութեան եւ իրաւահաւասար համագործակցութեան ամրապնդման հարցերը։ Անհրաժեշտ է հոգ տանել, որ իւրաքանչիւր խորհրդային մարդ, անկախ ազգութիւնից, իրեն լիիրաւ քաղաքացի զգայ երկրի ցանկացած շրջանում։ Ազգամիջեան յարաբերութիւնների ծագող հարցերը պէտք է լուծել ժամանակին, առաւելագոյնս հաշուի առնելով ինչպէս իւրաքանչիւր ազգի եւ ազգութեան, այնպէս էլ մեր ամբողջ սոցիալիստական հայրենիքի շահերը»։

1988 թ. Յուլիսի 18-ին Կրեմլում (Մոսկուա) ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահ Ա. Կրոմիկոյի [illegible] Մէնթէշաշվիլու ատենապետութեամբ լոյս տեսած որոշման հիմնական [illegible]

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА



3062

մասն է (զանց առած առաջին եւ երկրորդ կէտերի վերջաւորութիւնների հինգական տողերը, որոնք իր տեղում կը մէջբերենք ու կը վերլուծենք), որ մեր կարծիքով որպէս մի ամբողջութիւն եղել է որոշման կանխապատրաստ նախագիծը։ Հենց այդ նախագիծը, որ աննշան յաւելմամբ վերածուելու էր որոշման, պատճառ է դառնում, որ ապստամբօրէն գլուխ բարձրացնեն հարցեր, որոնց պատասխան ստանալու, հակառակ դէպքում անձամբ պատասխանելու իրաւունքը հայ ժողովրդինն է։

Առաջին հերթին՝ սա հարցը.– այդ ո՞ր գերմարդու կամ ի՞նչ մամոնայի զօրութեամբ՝ նորահրաշ պարգեւ յայտարարուած դեմոկրատիայի օրնիբուն օրհներգման եւ վարչարարական-հրամայողական ստալինեան-պրեժնեւեան զազրելի գործելակերպի յամառ-յարատեւութեամբ խարանման մեր ժամանակներում, աներկիւղ հաստատակամութեամբ եւ անարգել վճռականութեամբ որդեգրուեց կարեւորագոյն ու նրբագոյն մի հարց կանխօրօք քուլիսների ետին վճռելու եւ կանխապատրաստ որոշման նախագծով պարտադրելու, այն էլ միաձայնութեան արժանացնելու հակադեմոկրատական դիկտատուրա-բռնադատական աւանդոյթը, այն աստիճանի բարոյագուրկ մի աւանդոյթ, որը չխնայեց անգամ եթէ ոչ իրականօրէն, ապա գոնէ իրաւականօրէն գերիշխան մի հանրապետութեան՝ Հայաստանի պետական վարչամեքենայի բարձրակէտում կանգնած գէթ երկու անձնաւորութիւնների, Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարի եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Նախագահի արժանապատուութեանը, թոյլ չտուեց նրանց ոտնակոխ չանել ուղիղ մի ամիս առաջ գոնէ ձեւականօրէն իրենց իսկ նախաձեռնութեամբ հայ խորհրդարանականների ընդունած որոշումը, առնուազն ձեռնպահ մնալ ու չմիախառնուել այդ որոշումը գերեզմանող կարգադրութիւնը կամայ թէ ակամայ ծափողջունողներին։

Ապա եւ՝ սա հարցը.– այդ ո՞ր գերմարդու կամ ի՞նչ մամոնայի զօրութեամբ միմեանց հակոտնեայ որոշումներ կայացրած երկու հանրապետութիւններից մէկի՝ Ատրպէյճանի հակասահմանադրական արատով խայտանշուած որոշմանը կանխօրօք այնպիսի հաստատակամութեամբ նախապատուութիւն տրուեց, իսկ միւսի՝ Հայաստանի ե՛ւ խորհրդային սահմանադրութեան, ե՛ւ Վ.Ի. Լենինի ուսմունքի ու ցուցմունքների տառին ու ոգուն հոգեհարազատ որոշումը ի յառաջագունէ այնպիսի կտրականութեամբ մերժուեց, որ երկայրի սուրասուր մի հարցի վերաբերմամբ պատրաստուեց եւ որպէս ուղեցոյց բաժանուեց-պարտադրուեց միակ ու միակողմանի մի նախագիծ։

Վերջապէս՝ սա հարցը.– այդ ո՞ր գերմարդու կամ ի՞նչ մամոնայի զօրութեամբ ի յառաջագունէ գուշակուեց-կանխատեսուեց պատմականօրէն հիմնաւոր, մարդկայնօրէն արդարացի ու բարոյականօրէն վեհ ազգային մի դատի՝ Ղարաբաղեան-Հայկականի «անհիմնաւորութիւնը», այն էլ այն դէպքում, երբ աւելի հեշտ էր կոյր աչօք որոշել փոթորկայոյզ ծովում լող տուող ձկնիկի սեռը, քան թէ՝ փաստարկել ու հիմնաւորել «յաղթանակի» արժանացուած միւս, թաթարական կողմի իրաւացիութիւնը։

Այսպիսի պայմաններում հնարաւո՞ր է հաւատալ, որ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում ընթացել է հարցի առարկայական եւ արդարացի լուծման քիչ թէ շատ լուրջ որեւէ որոնում, որ այդ նիստը չի կրել թատերական՝ իր ընթացքով եւ աւարտով ոչ միայն հեղինակին ու դերասաններին, այլեւ հանդիսատեսներին ի սկզբանէ քաջ յայտնի ներկայացման բնոյթ։ Եւ հնարաւո՞ր է, միթէ, նմանօրինակ մի նիստում ընդունուած որոշումը ի սկզբանէ անտի եւ գլխովին չհամարել ու չյայտարարել ապօրինի-անօրինական։

Ի դէպ, մեր կողմից էժանագին մեղադրանք կը լինէր՝ Ղարաբաղի հարցի վերաբերեալ որոշման նախագիծը յամառ կրկնողութեամբ վաղօրօք-կանխօրօք փակ դռների ետին յօրինուած յայտարարելու զուգընթաց, յօրինման գործում ենթադրելի-կռահելի գերմարդու ներշնչանք-օրհնանքի հետ մամոնայի ջերմացուցիչ փայլի ներգործութեանը եռակի ակնարկը։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ Պաքուից հասնող զրոյցների համաձայն թաթար ցուցարարները, որոշակի մի պահի աճարեկուած, որ հարցը յօգուտ հայութեան կը վճռուի, բանաւոր ելոյթներով թէ գրաւոր լոզունգներով առաջ էին քաշել «վերեւներ» ուղարկուած իրենց միլիոնները անյապաղ վերադարձնելու պահանջը։ Այդ զրոյցները, ինչքան էլ հաւաստուած լինէին Պաքուից վերադարձող հայ ականատեսների կողմից, մեր կարծիքով այնքան ստոյգ չեն, ինչքան՝ կողմնակի-անուղղակի փաստերը, որոնց հիմքում վաւերական իրողութիւններ են։

Բանն այն է, որ վերջին տարիներին Խորհրդային Միութեան տարբեր անկիւններում բացայայտուեցին եւ հրապարակայնօրէն ձաղկուեցին այնպիսի երեւոյթներ, որոնց մասին անցեալում, պրեժնեւեան ճահճացման ժամանակաշրջանում թէպէտ համարեա բոլորը գիտէին, սակայն դրանց շշուկով ակնարկելն իսկ կեանքի համար վտանգաւոր էր։ Յայտնաբերուեցին, օրինակ, որպէս կանոն կուսակցական եւ պետական ամենաբարձր պաշտօններ զբաղեցնող մարդկանց, մինչեւ իսկ ԽՄԿԿ Կենտրոնական Կոմիտէի եւ նրա Քաղաքական բիւրոյի* անդամների կողմից ղեկավարուող մաֆիաներ, որոնց հետ համեմատած իտալական կամ ամերիկեան մաֆիաները պատանեկան անփորձ խմբաւորումներ կարող են դուրս գալ։ Մամուլով եւ հեռուստատեսութեամբ խայտառակօրէն խաչահանուեցին արդէն իսկ մահացած կամ պաշտօնազրկուած շատ կուռքեր՝ Կրեմլի ամենազօր տէր Պրեժնեւը, Ուզպեքիստանի բացարձակ միապետ Ռաշիտովը, Մոսկուայի եւ Լենինկրադի կուսակցական սատրապները՝ Գրիշինն ու Ռոմանովը, ներքին գործերի նախարարութեան ահեղները՝ զօրավոր Շչելոկովը եւ Պրեժնեւի փեսայ Չուրբանովը, միջինասիական բազմամիլիոնատէր-ստրկատէր Ադիլովը եւ

---

(*) Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէն թուաշատ մի մարմին է, որ ընտրւում է համագումարի կողմից եւ որի լիագումար ժողովը (պլէնումը) կուսակցութեան գերագոյն մարմինն է համագումարների (նաեւ՝ բացառիկ դէպքերում գումարուող կոնֆերանս-համաժողովների) միջեւ ընկած ժամանակաշրջանում։ Գործնականում պլէնումից պլէնում առաւել յաճախ գումարւում է Կենտկոմի քաղաքական բիւրոն (վարիչ մարմինը), իսկ ընթացիկ աշխատանքները գործնականում ղեկավարւում են Կենտկոմի քարտուղարութեան, կուսակցական պաշտօնատարների նեղ խմբակի կողմից։

մահապարտների մենախցում նստած շատ ու շատ աւազակապետներ։

Եւ սակայն բոլոր աւազակապետները չէին, որ վերջնականապէս դիմակազերծուած էին, իսկ դիմակազերծուածներից էլ բոլորը չէին, որ իրենց կուսակցական-պետական բարձր բազկաթոռներից կամ անհատական թոշակառուի իշխանական բնակարաններից տեղափոխուած էին բանտախուց։ Այդ մասին էր վկայում այն փաստը, որ Ուզբեկիստանի կուսակցական-պետական աւազակախմբի ջախջախման եւ Մոսկուայի ղեկավար շրջանների հետ նրա սերտագոյն աղերսների մերկացման գործում առասպելական յաջողութիւնների հասած քննչական շուրջ հարիւր հոգիանոց խմբի հայազգի ղեկավարը՝ ԽՍՀՄ դատախազութեան յոյժ կարեւոր գործերի քննիչ Թելման Գդլեանը, իր հնգամեայ գործունէութեան ընթացքում Միջին Ասիայում թէ Մոսկուայում բազմաթիւ մահափորձերից պրծնելուց յետոյ, 1988 թուի սկզբներից բացայայտօրէն դէմ առաւ մոսկովեան կուսակցական-պետական վերնախաւերում իրենց ուժն ու հեղինակութիւնը պահպանած կաշառակեր աւազակների կռնծած թաթին։ Անպատիժ մնացած այդ թաթը դեռ այնքան գերհզօր ու միաժամանակ այնքան լկտի էր, որ քրէական յանցագործ միջավայրից սպրդող լուրերի համաձայն մահափորձերի նոր տարբերակներ էր մշակում յանդուգն հայորդու եւ նրա օգնականների դէմ։ Այս պայմաններում է, որ Գդլեանը եւ նրա աջ բազուկ քննիչ Իվանովը որոշեցին իրենց մինչ այդ գաղտնի տարուող գործունէութեան վերաբերեալ բոլոր խաղաթղթերը բացել հասարակութեան առջեւ։

Նրանց տուած տեղեկութիւնների հիմամբ «Փրաւտա» թերթում 1988 թ. Յունուարի 23-ին լոյս տեսաւ «Կոբրաները Ոսկու Ներքոյ» զգայացունց յօդուածը, որը հանրութեան պարզապէս նախաճաշակն էր տալիս միջին ասիական մաֆիայի լայնացանց գործունէութեան։ Ապրիլի 29-ին յաջորդեց տրամաբանական եւ խիստ անհրաժեշտ երկրորդ քայլը. կենտրոնական հեռուստատեսութեան ու ԹԱՍՍ-ի միջոցով կատարուեց խորհրդային քննչական աշխարհի կեանքում աննախընթաց մի յայտարարութիւն, պնդելով, որ մաֆիայի հետքերը գնում են դէպի «առ այսօր բարձրագոյն պաշտոններ զբաղեցնող գործիչները»։ Կրեմլի պարիսպներից ներս իրենց գործունէութիւնը յաջողապէս շարունակող կաշառակեր աւազակապետերի վերաբերեալ պատմութիւնը էլ աւելի բորբոքուն բնոյթ ստացաւ, երբ մոսկովեան «Օգոնյոկ» շաբաթաթերթի 1988 թ. յունիսեան համարի էջերում գլխաւոր խմբագիր Վիտալի Կորոտիչը համարձակօրէն տեղ տուեց Գդլեանի եւ Իվանովի «Դիմակայութիւն» վերնագրուած եւ ռումբի տպաւորութիւն գործած յօդուածին, որում քննիչները պնդում էին, որ համայնավար կուսակցութեան 19-րդ համաժողովի համար ընտրուած պատուիրակների թւում կան կուսակցական-պետական բարձրաստիճան կաշառակերներ։

Այդ ամէնը չէր կարող արձագանգ չգտնել հենց համաժողովի վիճաբանութիւնների ընթացքում, քանի որ «կաշառակերը» տուեալ դէպքում նշանակում էր ոչ միայն պարզապէս աստղաբաշխական մեծութեան գումարներ գրպանող, այլեւ ու մանաւանդ ստացած միլիոնների դիմաց կուսակցական ու պետական վարչամեքենան իրենց ոճիրների ու ոճրապարտ միւս արարքների համար գործիք դարձնող սրիկաներին

հովանաւորող, պաշտպանող ու քաջալերող։ Համաժողովի մի շարք պատուիրակներ (Վ.Ա. Սուքրոգուրցեւ, Գ.Ա. Զագայնով եւ այլք) ամպիոնից բացէ ի բաց խօսեցին «կուսակցական եւ պետական խոշորագոյն գործիչների» մասին, որոնք դեռ երէկ՝ Պրեժնեւի օրոք «չափազանց ծանր յանցագործութիւններ» կատարած լինելով հանդերձ, շարունակում էին անպատիժ գոյատեւել որպէս «անհպելիների մի ազանդագաս»։ Աւելին. համաժողովի պաշտօնական ամպիոնից տհաճ պայմաններում որպէս ճահճացման ժամանակաշրջանի «հերոսներ» հնչեցին անունները ոչ միայն արդէն հանգուցեալ մարդկանց, այլեւ՝ իշխանութեան գլուխ (ու համաժողովի դահլիճում) գտնուող գործիչների, այդ թւում նախագահական ամպիոնում բազմած Անդրէ Կրոմիկոյի։

Դա տեղի ունեցաւ հետեւեալ պայմաններում։ Կոմի ազգային շրջանի կուսակցական առաջին քարտուղար Վ.Ի. Մելնիկովը համաժողովից պահանջեց, որ կուսակցական եւ պետական բարձրագոյն մարմիններից հեռացուեն ու պատասխանատուութեան ենթարկուեն բոլոր նրանք, ովքեր «անցած-գնացած ժամանակներում գործուն մասնակցութիւն են բերել ճահճացման քաղաքականութեան անցկացմանը»։ Մ.Ս. Կորպաչովը նրան ընդմիջեց եւ պահանջեց «շօշափելի առաջարկութիւն» անել, ասելով. «Թէ չէ՝ նստած ենք ու չգիտենք, թէ դու ի՞նձ ես ակնարկում, թէ մէկ ուրիշի»։ Մելնիկովը պատասխանեց. «Իմ խօսքն առաջին հերթին վերաբերում է ընկեր Մ.Ս. Սոլոմենցեւին, ապա եւ ընկեր Ա.Ա. Կրոմիկոյին, Վ.Գ. Աֆանասեւին, Գ.Ա. Արբատովին եւ ուրիշներին»։ Ըստ որում այդ անունների թուարկումն արժանացաւ պատգամաւորների բուռն ծափերին։

Համաժողովի որոշ պատգամաւորներ ոչ այնքան յաջող մի փորձ կատարեցին Ա. Կրոմիկոյին վահանաւորելու։ Եւ սակայն առաջին դժուարին կրակոցներն արդէն կատարուել էին եւ հնարաւոր չէր դայթակղութեան հետագայ աճը կանխել։ Ալթայի երկրամասի կուսակցական կազմակերպութեան առաջին քարտուղար Ֆ.Վ. Պոպովը պահանջեց, որ պարզութիւն մտցուի այն հարցում, թէ համագումարների պալատում ներկայ բարձրաստիճանաւորների թւում ի՞նչ կաշառակերներ կան,– ինչպէս պնդում էր պատգամաւոր Կորոտիչը,– թէ՝ չկան,– ինչպէս ենթադրել էր տալիս լիազօրութեանց յանձնաժողովի զեկուցագիրը։ Համաժողովի պահանջով հանդէս եկաւ վերջինիս նախագահ Ռազումովսկին եւ յայտարարեց. «ԽՍՀՄ գլխաւոր դատախազը յայտնել է, որ ԽՍՀՄ դատախազութիւնը որոշում չի ընդունել համաժողովի պատուիրակ ընտրուած մարդկանցից որեւէ մէկին կաշառակերութեան կամ այլ յանցագործութիւնների համար պատասխանատուութեան կանչելու։ «Օգոնիոկ» հանդէսի յօդուածում բերուած փաստերը յատուկ ստուգման կարիք ունեն։ Լիազօր յանձնաժողովի կարծիքով դա պէտք է անեն ԽՍՀՄ գլխաւոր դատախազն ու ԽՄԿԿ Կենտկոմին կից կուսակցական վերահսկողութեան կոմիտէն եւ արդիւնքների մասին հաղորդեն»։ Խիստ դիւանագիտական այս յայտարարութիւնից դժգոհ պատուիրակները գոռում էին. «Պէտք է ձայն տալ խմբագրին, որպէսզի բացատրի, թէ ինչո՞ւմն է հարցը»։ Կորպաչովի թոյլտուութեամբ բեմ բարձրացաւ

հանդէսի խմբագիր Կորոտիչը, որի Մոսկուայից պատուիրակ ընտրուելը կարողացել էին ձախողեցնել ղեկավար շրջաններ եւ որ լիազօրուել էր ուկրաինական հեռաւոր Խերսոնի մարզից։ Նա յայտարարեց.

«Երբոր մեզ դիմեցին ԽՍՀՄ դատախազութեան աւագ քննիչներ, այսպէս ասած՝ իրաւագիտութեան զօրավարներ ընկերներ Գդլեանը եւ Իվանովը, որոնք վարում են ռաշիտովեան ամբողջ մաֆիայի գործը եւ ներկայումս զբաղուած են Զուրբանովի գործով, ապա նրանք մեզ ներկայացրեցին որոշակի ապացոյցներ եւ առաջ քաշեցին որոշակի հարցեր։ Նրանք մեզ ասացին այն մասին, որ իրենց չի յաջողւում դատի տալ տուեալ գործերով խնդրոյ առարկայ դարձած մարդկանց մի մասին, թէպէտ նրանց դէմ մեծ քանակութեամբ ցուցմունքներ են կուտակուած։ Քննչական բաժնի վարիչները այդ մասին հաղորդումներով բազմիցս դիմեցին ԽՄՀԿ կենտկոմին, ըստ որում վերջին անգամ՝ արդէն համաժողովի նախօրեակին»։

Կորոտիչը աւելացրեց, որ ինքը շատ է ուզում, որ ինչպէս առաջարկւում է, կուսակցութեան կենտրոնական կոմիտէին կից վերահսկողութեան կոմիտէն եւ ԽՍՀՄ-ի Գլխաւոր դատախազը վերջնապէս գնահատական տան այն բանին, ինչի մասին խօսում են քննիչները եւ կա՛մ պատժեն նրանց, ում մասին խօսք է գնում, կամ էլ պատժեն քննիչներին եւ լրագրողներին, որոնք իրենց թոյլ են տուել կասկածանքի ներքոյ առնել անմեղ մարդկանց։ Իսկ երբ դահլիճից մի ձայն հարց տուեց, թէ «պատուիրակների մէջ կասկածելիներ կա՞ն արդեօք», Կորոտիչը պարզաբանեց, որ խօսքը գնում է համաժողովի չորս պատուիրակների մասին։ Այս յայտարարութիւնը կատարելով, նա համաժողովի նախագահութեանը ներկայացրեց եւ անձամբ գլխաւոր քարտուղար Կորպաչովի ձեռքը յանձնեց ԽՍՀՄ Գլխաւոր դատախազութեան յոյժ կարեւոր գործերի հետաքննիչ խմբի հաղորդումների եւ կուսակցութեան կենտրոնական կոմիտէին տրուած բազմաթիւ դիմումների պատճէնները, ընդհանրապէս այն բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում էին «Օգոնիոկ»ի էջերում լոյս տեսած զգայացունց յայտարարութեան հիմնաւորութիւնը։

Սրանով էլ համաժողովի բաց բեմից քուլիսների ետին տեղափոխուեց պրեժնեւեան ճահճացման ժամանակաշրջանից յաջորդապէս «վերակառուցման» ժամանակաշրջան անցած բարձրաստիճան գործիչների, բնականաբար առաջին հերթին չորս «կասկածելիների», նաեւ Ա. Կրոմիքոյի անցեալ մեղքերի ճշտորոշման շատ կարեւոր հարցը։

Եւ ահա 1988 թ. Սեպտեմբերի 29-ին, այլ խօսքով կուսակցութեան կենտրոնական կոմիտէի Սեպտեմբերի 30-ի լիագումար ժողովի եւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Հոկտեմբերի 1-ի արտահերթ նստաշրջանի բառացիօրէն նախօրեակին, խորհրդային բազմաթիւ թերթերում, ճիշտ է՝ տեղական-հանրապետականներում եւ ոչ թէ մոսկովեան-կենտրոնականներում, լոյս տեսաւ լրագրող Վալերի Դիոմինի «Ոչ-տեղական Նշանակութեան Մարտեր» խորագրով յօդուածը, որը բազմացրել ու բաժանել էր «Նովոսթի» («Նորութիւններ») մամուլի գործակալութիւնը։ Գդլեանի եւ Իվանովի մերձակից եւ ըստ երեւոյթին «Օկոնիոկ»ի մերկացումների շարադրմանը մասնակից Դիոմինն իր յօդուածում փաստօրէն պահանջում

էր, որ հարցը քուլիսների ետևից վերստին բեմի առաջամաս բերուի և դրանով էլ կարծես թէ հող էր նախապատրաստում յաջորդ երկու օրերին տեղի ունենալիք ատրճանաւորական վերիվայրումներին: Նա գրում էր.

«Իրենք՝ քննիչներ Գդլեանն ու Իվանովը համագումարների պալատում տեղի ունեցածը գնահատեցին որպէս «մեծ խոյանք»: Բնականաբար նրանց հաստատման հիմնաւորութեան մասին դատել հնարաւոր պիտի լինի այն բանից յետոյ, երբ Գդլեանին և Իվանովին այդպիսի լուրջ յայտարարութեամբ հանդէս գալու հիմք տուող նիւթերի ուսումնասիրման արդիւնքների վերաբերեալ տեղեկատուութիւնը հրապարակայնութեան արժանանայ: Այն բանի անուղղակի հաստատումը, որ կուսակցական համաժողովից յետոյ իրադարձութիւնները զարգացան այն ուղղութեամբ, ինչ ենթադրում էին քննիչները, ըստ երևոյթին կարող է դառնալ նոյն ինքն Գդլեանի հեռուստատեսութեամբ Օգոստոս ամսին հաղորդուած մի պնդումը, որի միտք բանին հետևեալն է.— Վկայութիւնները հաստատուեցին, այժմ արդէն գործելու ժամանակն է այն մարդկանց, ովքեր իրաւասու են որոշում ընդունելու: Գդլեանն ասում է.— Պետութեան մէջ ոչ իսկ մի մարդ, ով կը խախտի օրէնքը, պէտք չէ իրեն սեփական պաշտօնով կամ հասարակական դիրքով պաշտպանուած զգայ: Երբ Մ. Կորպաչովն ասում է, որ մեր երկրում վերակառուցումը թշնամիներ չունի, բնականաբար նա նկատի ունի ազնիւ մարդկանց: Սակայն իրենց ասպարէզը կաշառքների վրայ կառուցած պաշտօնեայ անձինք չեն կարող վերակառուցման դաշնակիցները լինել: Բացախօսութիւնը նրանց համար մի իսկական մղձաւանջ է, ամէն ինչի կործանումը, դա մահից վատ բան է»:

Եւ «որոշում ընդունելու իրաւասու» մարդիկ վերջապէս գործեցին: Թէկուզ առօք ու փառօք, թոշակի ուղարկուեց Անդրէ Կրոմիքոն, որը տրամաբանօրէն դեռ չուրջ կէս տարի՝ մինչև 1989 թուականի Մարտ ամիսը, պէտք է իր աթոռի վրայ մնար: Նրա հետ ճանապարհուեցին նաև ուրիշներ, այդ թւում յամառ զրոյցների համաձայն չորս «կասկածելիների» թւում եղող Մ. Սոլոմենցեւն ու Վ. Դոլգիխը: Թէպէտ բարձրաստիճանաւորներից իւրաքանչիւրի մեղսագործութեան աստիճանը այնպէս էլ մնաց թանձր մշուշի մէջ, այնուամենայնիւ միջին ասիական և մոսկովեան մաֆիաների հանգուցակապի վերաբերեալ Գդլեանի խմբի եզրակացութիւնը գոնէ իր նախնական արդիւնքը տուեց: Այլ խօսքով հոգ չէ թէ լռելեայն առնուազն հաստատուեց, որ միջին ասիական աւազակախումբը մոսկովեան շատ բարձր ոլորտներում իրօք էլ ունեցել է յենարաններ, մեղսակից-շահակիցներ:

Միջին ասիական մաֆիայի մոսկովեան բարձրակարգ յենարաններն ու մեղսակից-շահակիցները, պարզագոյն տրամաբանութեամբ իսկ, չէին կարող յենարանն ու մեղսակիցը չլինել նաև այսրկովկասեան, հիմնականում՝ ատրպէյճանական մաֆիայի, որի գլխին, մինչև Կրեմլ տեղափոխուելը, Պաքւում կանգնած էր այնպիսի մի բազմափորձ քրէական յանցագործ, ինչպիսին ատրպատականեան թաթար իր հայրենակիցներից «ալլահ» հռչակուած Հէյտար Ալիեւիչ Ալիեւն էր: Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Ալիեւը, որին Լեոնիտ Պրեժնեւը, անշուշտ որ իրեն

ընծայաբերուած ոսկու եւ թանկարժէք քարերի փայլից առինքնուած, տեղափոխեց Կրեմլ եւ որպէս Քաղաքական բիւրոյի անդամ ու Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ՝ միախառնեց Կրեմլիքոյի, Գրիշինի, Ռաշիտովի ու միւսների փաղանգին, չէր կարող չվերածուել այն կայուն օղակի, որը թաթարական մաֆիան գործնապէս ու մշտապէս պէտք է առնչէր առ այժմ դեռ սոսկ որպէս կաշառակեր մատնանշուող, ուրիշ խօսքով առ առաւելն ծայրամասային աւազակախմբերի համար կենտրոնում իբր թէ սոսկ յենարան եղած, այլ շահակցութեամբ մեղսակցելու ճանապարհով իրականում իսկական մաֆիայի բոլոր գծերն ունեցող մոսկովեան խմբակին։ Ըստ որում յուզահարիչն այն էր, որ թաթար Ալիեւը, կորպաչովեան ժամանակաշրջանում թէկուզ լոկ միառժամանակ կարողացաւ պահպանել իր դիրքերը եւ թոշակի ուղարկուեց, սակայն, ինչպէս մամուլն ու հեռուստատեսութիւնը վկայել են ի զարմանս ապշանքից քար կտրած ժողովրդի, մինչեւ դեռ վերջերս, որպէս Նախարարաց խորհրդի յատուկ խորհրդական (ինչպէս չասես՝ վա՛յ քեզ կառավարութիւն, որի խորհրդականն Ալիեւն է) աթոռ էր զբաղեցնում Կրեմլի կամարների ներքոյ...

Հէյտար Ալիեւը տիպական ներկայացուցիչն է կուսակցական-պետական այն գործիչների, որոնց ղեկավար դիրքերում առկայութիւնը, իր անպատուաբերութեամբ ընդհանրապէս աներեւակայելի արտասահմանեան ցանկացած քաղաքական լուրջ կազմակերպութեան եւ իրաւական-պետական որեւէ վարչամեքենայի վերին ոլորտներում, որպէս առնուազն վերջին կէս դարում համայնավար կուսակցական եւ խորհրդային պետական կենցաղում օրինաչափութիւն, սոցիալիստական-խորհրդային իրաւակարգի ամօթն է ու խայտառակութիւնը։ Ալիեւի տիպի մարդիկ այլ կարգերում այս աշխարհի ուժեղների կողմից օգտագործւում են կա՛մ որպէս քրէական ստորակարգ տարր, կամ էլ որպէս ստորաքարշ մանկլաւիկ, մինչդեռ Խ. Միութիւնում նրանք դառնում են այս աշխարհի նոյնինքն ուժեղները։ Ոգով եւ էութեամբ ստրուկ, կենտրոնական ստրկատիրոջ ոտների տակ գօս ներքինի մնալով հանդերձ, նրանք վերածւում են հասարակութիւնը ստրկացնող թաւարեխ սատրապների։

Հէյտար Ալիեւը Նախիջեւանի թաթարներից է։ Նա սովորում էր Բաքուի Ազիզբեկովի անուան ճարտարարուեստական հիմնարկում, երբ սկսուեց պատերազմը։ Զօրակոչից խուսափելու համար նա ինստիտուտը թողեց եւ ապաստանեց իր ծննդավայրը, որտեղ ծանօթների օգնութեամբ եւ անկասկած կաշառքով ձեռք բերեց բժշկական մի կեղծ տեղեկանք այն մասին, որ իբր տառապում է ծանր թոքախտով, հետեւաբար եւ պիտանի չէ ռազմաճակատում հայրենիքը պաշտպանելու գործին։ Որպէս ցրիչ աշխատանքի տեղաւորուեց Նախիջեւանի ինքնավար հանրապետութեան ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատին ենթակայ մի արխիւում եւ այնտեղ էլ սկսեց իր բարեյաջող ասպարէզը։

Ըստ երեւոյթին հենց էնկավէդէում իր կապերի շնորհիւ էլ պատերազմի աւարտին ձեռք բերեց մի այլ կեղծ տեղեկանք այն մասին, որ իբր ծառայել է Կարմիր բանակի շարքերում եւ մասնակցել հայրենիքի պաշտպանութեան մարտերին։ Պատերազմի մասնակցի առաւելութիւն-

ներից օգտուելով էլ վերականգնեց ինստիտուտի ուսանողի իր վարկը, սակայն շուտով տեղափոխուեց Պաքուի համալսարանի պատմութեան ֆակուլտետի երրորդ կուրս եւ 1950-ական թուականների երկրորդ կէսին հեռակայ կարգով, այլ խօսքով առանց որեւէ լուրջ գիտելիք ստանալու, ստացաւ պատմաբանի վկայական:

Մի որոշ ժամանակ անց նա աշխատանքի անցաւ Ատրպէյճանի Պետական անվտանգութեան կոմիտէում: Այստեղ, գլխի ընկնելով, որ Ալիեւի կեանքում ամէն ինչ այնպէս չի եղել, ինչպէս ինքն է ներկայացրել, սկսեցին փորփրել նրա անցեալը: Կոմիտէի նախագահի տեղակալ Մ.Ա. Ալիզադէի նախագահութեամբ գործող յանձնաժողովը պարզեց նրա կեղծարարութիւնները եւ որոշեց նրան դատի տալ, սակայն Հէյտարի աւագ եղբայրը՝ ակադեմիկոս դարձած Հասան Ալիեւը ընկաւ Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար Ի.Դ. Մուստաֆաեւի ոտները: Վերջինիս միջամտութեամբ էլ Ալիեւը փրկուեց. նրան պատժեցին պարզապէս կուսակցական «խիստ նկատողութեամբ, գրանցելով անձնական գործում» եւ պաշտօնն էլ ցածրացրեցին:

Համայնավար չէկիստ Ալիեւը, սակայն, իր մեֆիստոֆելեան գիւղային գծերի եւ շրջապատում տիրող բարքերի օգնութեամբ հետագային վերստին մագլցեց պաշտօնական աստիճաններով, Պետական անվտանգութեան կոմիտէից տեղափոխուեց կուսակցական աշխատանքի՝ դառնալու համար տարպատականնեան թաթար համայնավարների կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարը, մինչեւ իսկ բժշկուհի կնոջ հետ միասին ընտրուեց Ատրպէյճանի գիտութիւնների ակադեմիայի իսկական անդամ:

Բարեմիտ ընթերցողը կարող է տարակուսել. մի՞թէ այդպիսի բան հնարաւոր է, մի՞թէ նմանատիպ կիսագրագէտ ու խարդախ սովորական մի ոստիկան, որի յանցագործ էութիւնն ու մանաւանդ ճակատագրական մի պահի հայրենիքի հանդէպ եթէ ոչ դաւաճանութիւնը, առնուազն դասալքութիւնը ստուգմամբ հաստատուել եւ յայտնի էին ե՛ւ համայնավար կուսակցութեան, եւ նրա աչալուրջ յենարան Պետական անվտանգութեան կոմիտէի ղեկավարներին, այդպէս անարգել հասել է մի ամբողջ հանրապետութեան ու ժողովրդի անթագակիր արքայի գահին, այնուհետեւ ընդունուել գիտութեան մի կաճառի անդամների շարքը եւ վերջապէս մտել աշխարհի խոշորագոյն տէրութիւններից մէկի ղեկն իր ձեռքում պահող խմբակի կազմում: Այդ տարակուսանքը, դժբախտաբար, անտեղի է, քանի որ Ալիեւի սրարշաւ վերընթացը Խ. Միութիւնում ոչ թէ բացառութիւն, այլ համարեա ընդհանրական օրինաչափութիւն էր:

Առաւել արտառոց իրողութիւն կայ:

Այսրկովկասում երեխաներն անգամ ամենօրեայ խօսք ու զրոյցներից գիտէին այն մասին, որ ոչ միայն անձամբ իր, իր տոհմի եւ իր աջակից-գործակից տարպատականնեան միւս «բիրդան ադամ» ղեկավարների բարօրութիւնն ապահովելու, այլեւ թաթար հայրենակիցներին եւ ընդհանրապէս Ատրպէյճանը տարատեսակ բարիքների ու առանձնաշնորհների արժանացնելու, այդ թւում Արցախի հայութեան նկատմամբ գործուող թիւրքավայել կամայականութիւններին թողտուութիւն եւ արցախցիների ահագնացող ցասման դէմ բռնամիջոցներ ապահովելու

համար, Ալիեւը Բրեժնեւին ու Կրեմլի երեւելիների թուից նրա հացկատակներին սիրաշահում էր մեծագումար հարկ ու նուէրներով։ Այսրկովկասում բոլորի երեւակայութիւնն էր բորբոքում Բաքուում Ալիեւի կողմից Բրեժնեւին ընծայաբերուած ադամանդակուռ այն դաշոյնի վաւերական պատմութիւնը, որի տարբերակները միմեանցից զանազանւում էին սոսկ բռնակոթի ու պատեանի թանկարժէք քարերի մեծութեամբ ու գոյներով։ Ի միջի այլոց, 1988 թ. Սեպտեմբերի 21-ին մոսկովեան «Լիտերատուրնայա Գազետա» («Գրական Թերթ») մեծազդեցիկ շաբաթաթերթում անուանի հրապարակախօս Արկադի Վաքսբերգը հաստատեց, որ Ալիեւն իր եւ իր թաթար համհարզների համար Բրեժնեւից «աստղեր, շքանշաններ ու մեդալներ» էր ստանում եւ որպէս գլխաւոր քարտուղարի «զինակիցներից հաւատարմագոյնը» նրան, «նրա բարեհաճութեան եւ առատաձեռնութեան» իբրեւ «պատասխան համեստ նուէրներ», ընծայում էր «ադամանդներ»։

Մի ուրիշ լրագրող՝ Վլադիմիր Սինիցինը, 1988 թ. Յունիսի 28-ին Բաքուից մոսկովեան «Սելսկայա Ժիզն» («Գիւղական Կեանք») թերթին ուղարկուած «Շամախու Ողբերգութիւնը» յօդուածում ի լուր ամէնքի հաստատեց, որ Հէյտար Ալիեւը, սպասելով իր հոգեւոր «հայր» Լեոնիդ Բրեժնեւի ժամանման, ամբողջ երեք տարի իր մայրաքաղաքում հեքիաթային մի յատուկ դղեակ էր կառուցում նրա համար, դղեակ, որի երդիքի ներքոյ համայնավար կուսակցութեան գլխաւոր քարտուղարը, անկասկած հմայագեղ թաթարուհիների գրկում, անցկացրել է ընդամէնը երկու գիշեր։ «Հայրիկի» երկօրեայ սարդանապաղեան խրախճանքը աշխատաւոր ժողովրդի վրայ նստել է միլիոն ու միլիոն։ Ասենք, որ Բրեժնեւը մի քանի գիշեր էլ անցկացրել է Երեւանում, սակայն Հայաստանի համայնավար ղեկավարները անկասկած այնքան շնորհ չեն ունեցել եւ «հեռատես» չեն եղել, որպէսզի նրա համար յատուկ պալատ կառուցեն եւ նրան հաւանաբար քնացրել են սովոր անկողնում, պաշտօնական հիւրերի վաղուց գործող այն առանձնատանը, որտեղ ով ասես որ չի իջեւանել։ Այս պայմաններում տեղին չի՞ լինի հարց տալ. Բրեժնեւն իրեն ո՞ւմ աւելի սրտամօտ կը համարէր, թաթար Ալիեւի՞ն, թէ՝ հայ Քոչինեանին կամ Դեմիրճեանին։

Առաւել կարեւորը. Սինիցինի յօդուածում բացայայտօրէն արձանագրուած էր, նախ, «ցաւալի եւ ամօթալի այն փաստը», որ Ալիեւը Բրեժնեւի «հայրական հոգատարութեան հետ» նաեւ Խ. Միութեան բարձրագոյն շքանշանով ապահովուելու համար նրա գրպանն է կոխել «հարիւր հազարաւոր ռուբլիներ»։ Իսկ Հայաստանի «ժլատ», միայն իր գրպանի մասին հոգացող առաջին քարտուղա՞րը. շատ-շատ, այն էլ հրապարակայնօրէն, իր ժողովրդի անունից Բրեժնեւին մատուցած կը լինի, թէկուզ եւ թանկարժէք, մի որեւէ յուշանուէր։ Այս պայմաններում տեղին չի՞ լինի տալ մի երկրորդ հարց. Ալիեւի կողմից «հարիւր հազարաւոր ռուբլիներով» իր եւ իր ժողովրդի համար ուղղակի գնուած Բրեժնեւի «հայրական հոգատարութիւնից» կարո՞ղ էր քիչ թէ շատ շօշափելի մաս ու բաժին մնալ մեզ՝ հայերիս, յատկապէս տորպատականցիների հետ որեւէ տարակարծութեան, ասենք՝ Արցախի հայութեան ազգային զգացմունքների թաթարների կողմից տրորման հար-

ցում ծագած վէճերի լուծման ժամանակ։

Արդ, Ղարաբաղեան հարցի լուծումն իրենց օգտին վճռելու համար պաքուեցիների կողմից Մոսկուայի կաշառակեր երեւելիների քսակը հոսեցուած միլիոնների մասին յամառօրէն շրջող զրոյցներին հայ ժողովուրդը պէ՞տք է հաւատայ, թէ՝ չհաւատայ, յատկապէս այն բանից յետոյ, երբ չիկարոր ամռան համարեա այն նոյն օրերին, երբ լոյս էր տեսնում Սինիցինի յօդուածը, Մոսկուայի կենտրոնական հեռուստատեսութիւնը Հէյտար Ալիեւին ցոյց էր տալիս Կրեմլում ինչ որ կարեւոր ժողովի կենտրոնակէտում բազմած։ Հասկանալի է, որ Ալիեւը «Հարիւր հազարաւոր ռուբլիներ» կաշառք էր տալիս ոչ իր սեփական գրպանից. ամբողջ կեանքում Պետական անվտանգութեան կոմիտէի եւ ատրպէյճանական ու միութենական կենտրոնների գանձարկղներից նա հազիւ թէ մի երկու հարիւր հազար ստացած լինի որպէս աշխատավարձ։ Նշանակում է, Սինիցինից մատնանշուած՝ Պրեժնեւին Բաքւում վճարուած «Հարիւր հազարաւոր ռուբլիներն» ու միւս, Մոսկուայում յանձնուած փարթամ քսակները, որոնց գումարը միլիոնների կը հասնի, անշուշտ որ Ալիեւին հայթայթում էին ատրպէյճանական մաֆիայի անդամները, ըստ որում ցնծալով ոչ թէ սոսկ սեփական գանձարկղներից, այլեւ հարկելով թաթարական ամբոխի մանր ու պճեղ մասնիկներին։ Եւ հայթայթում էին անշուշտ որ մի պայմանով. ատրպէյճանական հանրապետութիւնը, ուրեմն եւ նրա կազմում ընդգրկուած հայկական Ղարաբաղը թողնել իրենց ասպատակային գործունէութեան ազատ ասպարէզ։ Եւ ինչպէս այդ ասպատակային գործունէութեան, այնպէս էլ պարբերական հարկահաւաքների ընթացքում եթէ թաթարից մի կաշի էր պոկւում, ապա տարաբախտ հայերից քերթւում էր երկու ու երեք կաշի։ Բնականաբար անորակելի բարքերի այդ աղբանոցում էլ սնւում-աճում եւ մոսկովեան հովանաւորութեան երաշխաւորուածութեան գիտակցութիւնից անպատիժ սանձարձակւում էր թաթարական յելուզակային ազգայնականութիւնը, որ իր դիմանկարը դրոշմեց Սումկայիթի «պատուոյ տախտակին»։

Եւ ահա մտորումների այս շղթայի՝ տրամաբանութեամբ կռուած վերջին օղակը.— Ուրեմն հսկայագումար կաշառք տալու սովոր Ալիեւն ապրում է ու կայ։ Եթէ նա ասպարէզից, նոյնիսկ կեանքից հեռացած իսկ լինէր, ապրում են ու կան իր գործարքներին օժանդակած եւ մոսկովեան կաշառակերների հասցէները քաջ իմացող իր թաթար համքար-նոքարները։ Ապրում են ու կան նաեւ կաշառակերների արքայ Պրեժնեւի չքախմբի իշխաններն ու իշխանիկները, որոնց թւում քիչ չեն յական-յանուանէ որպէս կաշառակեր ամբաստանուածները։ Արդ, թաթար ղեկավարների ալիեւական կաշառատուութիւնն ու ռուս-ուկրաինացի-պելոռուս գործող բոյարների պրեժնեւական կաշառակերութիւնը մի՞թէ չի եղել այն հզօր լծակներից մէկը, որի օգնութեամբ լոյս աշխարհ է եկել եւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի մասնակիցների համար ներշնչանքի աղբիւր եւ ուղեցոյց դարձել հայ ժողովրդի արդարացի պահանջատիրութիւնը ոտնատակ տուող որոշման ծանօթ նախագիծը։

Կաշառատու թաթար Ալիեւի գոյութեան եւ իր հետ պորտակապով հանգուցուած կաշառակեր մոսկովեան բարձրաստիճանաւորների

միջավայրում Կրեմլի կամարների ներքոյ գործունէութեան՝ Արցախի ճակատագրի եղերական հանգուցալուծման հասցուելու, Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում յայտնի եղանակով լուծուելու հարցում որոշիչ դերը միայն մի դրուագն է հայ ժողովրդին թաթար ղեկավարի հասցրած ստոր հարուածների: Նոյնքան զազրելի եւ աւելի քան ոճրային է այն որոշիչ դերը, որ նա խաղացել է ատրպատականեան թաթարութեան մոլեկրօն ազգայնական ճահճուտում խորացնելու համար այն գարշելի խմորումները, որոնք չէին կարող չյանգեցնել եւ ի վերջոյ յանգեցրին էլ սումգայիթեան եղեռնագործութեան, ըստ որում դառնալի է գիտակցումն այն ճշմարտութեան, որ դեռ չուրջ երկու տասնամեակ առաջ, հենց Ալիեւի առաջին քարտուղարութեան օրօք եւ նրա իսկ օրհնութեամբ, Սումգայիթ քաղաքը ճշտորոշուած ու նախասահմանուած է եղել որպէս թատերաբեմը անհրաժեշտ ժամի չղթայազերծուելիք հակահայկական անասնական կրքերի, հակահայկական ցեղասպանական եղեռնագործութեան:

## Բ.

Յայտնի է, որ եթէ Ստալինի օրօք թաթար Բաղիրովը Այսրկովկասում արիւնալի հաշուեյարդարների, տասնեակ ու տասնեակ հազարաւորների գնդակահարման եւ հարիւր ու հարիւր հազարաւորների տեղահանման եւ աքսորման գլխաւոր դերքինն էր, ապա Բրեժնեւի օրօք թաթար Ալիեւը նոյն Այսրկովկասում դարձաւ թիւրք-մահմեդական մաֆիայի ղեկավարը եւ միջին ասիական ու մոսկովեան մաֆիաների հետ դաշինքի գլխաւոր դերքինը: Ըստ որում նա իր հանրապետութիւնում Բաղիրովից ոչ-պակաս դաժանութեամբ արիւնոտ հաշուեյարդար էր տեսնում իր կամքին, կամայականութիւններին եւ աւազակային նախաձեռնութիւններին ամէն մի ընդդիմացողի, իր յանցագործ շրջապատի սանձարձակութիւնները խոչընդոտող ամէն մի պաշտօնատարի հետ: Այսպէս է, որ նա հանրապետութեան դատախազութեան քննչական բաժնի վարիչ Իսրահիմ Բաբայեւին, որպէս «անկախութիւն եւ անհնազանդութիւն ցուցաբերողի», ամբաստանեց «մաֆիայի հետ լեզու գտած... միլիոններ գողող... յափշտակիչ ու կաշառակեր» լինելու յանցանքով եւ հապշտապ գնդակահարութեան դատապարտել տուեց, իսկ երբ ԽՍՀՄ Գերագոյն դատարանում կասկածեցին Բաքւում տրուած վճռի հիմնաւորութեանն ու արդարացիութեանը, գործի լծեց Կրեմլի բարձրագոյն ոլորտի իր քաւորներին, անձամբ Բրեժնեւին, որպէսզի ընկճեն Գերագոյն դատարանի դիմադրութիւնը եւ իրեն թոյլ տան ի կատար ածելու Բաբայեւի մահապատիժը:

Ալիեւի եւ նրա մաֆիայի աւազակային գործունէութեան գլխաւոր ընդդիմադիրներից մէկը 1971–1976 թուականներին Ադրպէյճանի հանրապետական դատախազի աթոռը գրաւած Գամբայ Ալեսքերովիչ Մամէտովն էր, որը եւ մեզ հնարաւորութիւն է տալիս փոքր ինչ բարձրացնելու սումգայիթեան եղեռնագործութեան երկարամեայ նախապատրաստման փաստը թաքցնող քօղը: Դատախազի իր պաշտօնից բիրտ կամայականութեամբ հեռացուելուց երկու տարի անց, 1978 թուի

Դեկտեմբերին, ատրպէյճանական Գերագոյն Խորհրդի նիստում Մամէտովը ամպիոնից յայտարարեց.

«Ուզում եմ երեսփոխաններին տեղեկացնել, որ ես որպէս հանրապետութեան դատախազ, 1971 թուականից սկսած, պարբերաբար ու գրաւոր յայտնել եմ ղեկավար մարմիններին, այն է՝ Ատրպէյճանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին, Հանրապետութեան Գերագոյն Խորհրդին եւ Նախարարների խորհրդին, անձամբ ընկեր Հէյտար Ալիեւիչ Ալիեւին, հանրապետութիւնում հակապետական խոշորաչափ գործունէութեան մասին, ինչպէս գիւղատնտեսութեան, այնպէս էլ արդիւնաբերութեան բնագաւառներում։ Բայց մեր բոլոր տեղեկատուութիւնները մնացել են առանց համապատասխան արձագանքի։ Չնայած դրան, քանիցս, 1975 թուի Դեկտեմբերի 15-ին, 1976 թուի Ապրիլի 12-ին եւ 21-ին, Սեպտեմբերի 16-ին գրաւոր դիմել եմ Ատրպէյճանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի անդամներին եւ Կենտրոնական կոմիտէի վերստուգիչ յանձնաժողովի նախագահին, խնդրելով ինձ ընդունել՝ հանրապետութեան գործերի վիճակի եւ համապատասխան միջոցներ ձեռնարկելու վերաբերեալ լրացուցիչ զեկուցման համար։ Վեց հեռագիր եմ ուղարկել, դիմելով որպէս երեսփոխան՝ երեսփոխաններին, ինձ ընդունելու եւ լսելու խնդիրքով։ Սակայն ըստ էութեան, ինձ ոչ ոք չի ընդունել։ Լաւ իմանալով գործերի վիճակը հանրապետութիւնում, յայտարարում եմ, որ այն նուաճումների հաւաստիութիւնը, որոնց մասին խօսում են ամենուրեք, կասկածի եմ ենթարկում։ Ես վստահ եմ, որ բոլոր պարգեւները Ատրպէյճանին շնորհուել են առանց նախապէս ստուգելու գործերի իսկական վիճակը հանրապետութիւնում»։

Իր «յաջողութիւնների» համար բազում չքանշանների արժանացած Ատրպէյճանին իր փառապսակից մերկացնելու այնպիսի «սրբապիղծ» մի արարք էր Մամէտովի յայտարարութիւնը, որ Ալիեւի հացկատակներից 60 երեսփոխաններ նետուեցին նախկին դատախազին հակահարուած տալու, սակայն ձայն ստացան եւ ելոյթ ունեցան միայն 17 հոգի, հիմնականում կուսակցութեան շրջանային կոմիտէների քարտուղարներ, նաեւ «ժողովրդական» գրողներ, այդ թւում Միրզա Իպրահիմովը, ոգով խաշնարած ալիեւական այն նոյն մանկլաւիկը, որ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում, Ղարաբաղեան հարցի քննարկման ժամանակ ելոյթ ունենալով եւ պաշտպանելով Կրեմլիքոյի գրասենեակում թաթարապաշտ դիւանակալների նախապատրաստած որոշման նախագիծը, բարբառել է.

«Ինչպէ՞ս է այդպիսի տրամաթիկ (ծանր) իրավիճակ ստեղծուել։ Պատճառները բազմակողմանի են, եւ դրանք այստեղ նշուեցին։ Ղարաբաղի իրադարձութիւններից արուած ամենակարեւոր հետեւութիւններից մէկը այն է, որ մեր կուսակցական եւ խորհրդային մարմինները, զանգուածային տեղեկատուութիւնների միջոցները, գրողները բաւականաչափ ուշադրութիւն չեն նուիրում ազգայնականութեան դրսեւորումներին։ Սահմանափակ մտքի տէր որոշ մարդիկ դեմոկրատիան հասկացել են որպէս ամենաթողութիւն։ Եւ նրանք, ցաւօք, իրենց գործողութիւններին ասպարէզ են ստացել»։

Հայ ժողովրդին «ազգայնականութեան», իսկ Ղարաբաղեան հայկական շարժման ղեկավարներին «մտքի սահմանափակութեան» մեջ մեղադրող ոգով խաշնարած այս թաթար «ժողովրդական գրողն», ահա, ադրբեջանական Գերագոյն Խորհրդի վերոնշեալ նիստում ալիեւեան հացկատակի իր ողջ էութիւնը մերկացրել է, յայտարարելով. «Հսկայական տաղանդ է պահանջում այս հանրապետութիւնում ղեկավար լինելը եւ նաւը ճիշտ ճանապարհով տանելը։ Այս բոլոր յատկանիշներն ունի մեր թանկագին, մեր ջերմագին սիրելի Հէյդար Ալիեւիչ Ալիեւը»։

«Ժողովրդական գրողի» ելոյթը ճիշտ ու լաւ է հասկացուել երեսփոխանների կողմից.— թաթարական անիշխանական-ազգայնական հասարակութիւնը ղեկավարելը, նրա մոլեկրօն-ցեղապաշտական մոլուցքը դէպի համապատասխան նպատակակէտ առաջնորդելը դժուարագոյն գործ է եւ Ալիեւը հենց այդ գործի յարմարագոյն մարդն է։ Եւ բնաւ էլ պատահական չէ, որ եթէ Ալիեւի միւս հացկատակների ելոյթները պարզապէս «բուռն ծափահարութիւնների» են արժանացել, ապա «ժողովրդական գրողի» խօսքերին, ինչպէս նշուած է ադրբեջանական Գերագոյն Խորհրդի նիստի սղագրական արձանագրութեան մէջ, յաջորդել են «օվացիայի վերածուող բուռն, երկարատեւ ծափահարութիւնները» եւ «բոլորը ոտքի են կանգնել»։

Պետական անվտանգութեան կոմիտէում 16 տարի (եւ երկար տարիներ Ալիեւի հետ համատեղ) աշխատած եւ հանրապետութեան գլխաւոր դատախազի աթոռը 6 տարի զբաղեցրած Մամէտովը, Գերագոյն Խորհրդի այս նիստից վեց օր անց, ալիեւականների կողմից ոտքի հանուած ամբոխի պահանջով զրկուել է երեսփոխանական աթոռից, իսկ անմիջապէս յետոյ կուսակցութիւնից վտարուել է որպէս «յափշտակիչների եւ կաշառակերների նկատմամբ հաշտուողական վերաբերմունք դրսեւորող», «յանցագործ տարրերը հովանաւորող», «պաշտօնական դիրքը չարաշահող» եւ «զրպարտչական յերիւրանքներ տարածող»։ Աւելին. ալիեւական դատախազութիւնը, հիմնուելով անստորագիր նամակների վրայ, նրա դէմ յարուցել է 125 կէտից բաղկացած ամբաստանութեամբ քրէական գործ։ Եւ սակայն ամբաստանուողն այնպիսի դէմք էր, որ Մոսկուան թոյլ չի տուել նրան էլ Բաբայեւի նման հապշտապ մահապատժի ենթարկել. գործի վարոյթը յանձնարարուել է ԽՍՀՄ գերագոյն դատախազին առընթեր առանձնայատուկ կարեւոր գործերի աւագ քննիչ Վլադիմիր Կալինիչենկոյին, որը, հակառակ ի գործ դրուող ահաւոր ճնշումների, որպէս անհիմն ու սարքովի զրպարտանք, մերժել է ամբաստանութեան 124 կէտերը, ընդունելով միայն մէկը. Մամէտովը, իբր, անձնական շահերից ելնելով, առանց հիմքի կարճել է քրէական մի գործ։ Վաղեմութեան պատճառով այդ 125-րդ «յանցանքն» էլ դատի ենթակայ չլինելով, քրէական գործը կարճուել է։ Պաշտօնը, կուսակցական տոմսը եւ երեսփոխանական աթոռը կորցրած նախկին դատախազը, քաջ իմանալով, որ հրապարակախօս Վաքսբերգի բնութագրմամբ՝ Ադրբեջանում «ամբողջապէս ու լիովին այլ կարգեր էին տիրում» եւ ուրեմն վախենալով ալիեւական մաֆիայի արիւնոտ ճիրաններից, եօթ տարի թաքնուել է Լենինգրադում, մինչեւ որ 1986 թուին, երբ թաթար

համայնավարների «աստուած» Հէյդարի «ազդեցութիւնը խիստ թուլացաւ», վերադարձել է Պաքու, մանաւանդ որ ԽՍՀՄ դատախազութիւնն էլ մինչ այդ իրեն արդարացրել էր նաեւ 125-րդ կէտի համար։

Բնականաբար հարց է ծագում. Ադրբեջանի հանրապետութեան դատախազ Գամբայ Ալեքսերովիչ Մամէտովն ինչո՞ւ էր այդքան սկզբունքայնօրէն պայքարում Պետական անվտանգութեան կոմիտէում իր աշխատանքային նախկին ընկերոջ, Ադրբեջանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար դարձած Ալիեւի եւ նրա ղեկավարած մաֆիայի դէմ, ըստ որում այնպիսի յամառութիւն էր դրսեւորում, որ, ինչպէս հաստատել է ԽՍՀՄ դատախազութիւնը, նրանց դէմ վերադաս տարբեր մարմիններին ներկայացրել է ութսունից ոչ պակաս դիմումներ եւ զեկոյցներ։ Բարեբախտաբար այսօր արդէն համարեա ստուգապէս կարելի է պատասխանել այդ հարցին։ Կարելի է հաստատապէս ասել, որ դատախազ Մամէտովը, յանձին թաթար համայնավարների առաջնորդի եւ նրա շրջապատի կուսակցական-պետական միւս գործիչների, տեսնում էր ոչ միայն Ադրբեջանը թալանելով միլիոններ կուտակող եւ Պրեժնեւին ու Կրեմլի այլ ղեկավարների կաշառելով անպատիժ մնացող մի աւազակախումբ։ Նա դեռ 1970-ական թուականների սկզբներին նոյնքան յստակօրէն տեսնում էր, որ Ալիեւի Ադրբեջանում Պաքուի թաթար ղեկավարութիւնը եւ Ղարաբաղում նրա դրածոյ Գէորգովը նպատակաուղղուած քաղաքականութեամբ ընկերային, տնտեսական եւ ազգային գետիններում պարարտ հող են նախապատրաստում հայ-թաթարական հակամարտութեան համար, որ այդ հակամարտութիւնը կարող է արիւնոտ ընթացք ստանալ եւ որ արիւնայեղութեան համար ամենից նպաստաւոր կլիման ստեղծւում է Սումկայիթ քաղաքում։ Հետաքրքիրն այն է, որ ինչպէս Պաքւում հանրապետական գլխաւոր դատախազ Մամէտովը, այնպէս էլ սումկայիթեան նրա ստորադաս՝ տեղական դատախազը անյաջող, աւելի շուտ Ալիեւի եւ ալիեւականների, այդ թւում «ժողովրդական գրող» Միրզա Իպրահիմովի կողմից վիժեցուած փորձ են կատարել առողջացնելու Սումկայիթում տիրող սոցիալ-տնտեսական ահաւոր ճահիճը եւ ստեղծելու քաղաքի թաթար ազգաբնակչութեան մոլեկրոն-ցեղապաշտական ջերմը, փաստօրէն կանխատեսել են եւ ջանացել են խոչընդոտել Սումկայիթի համայնավար կազմակերպութեան իրարայաջորդ ղեկավարներ Արասալիեւի եւ Բաղիրովի գլխաւոր դերակատարմամբ նախապատրաստուող հակահայկական սպանդը։

Ի՞նչ հիմքով ենք այս եզրակացութեան յանգում։

Ադրբեջանի Գերագոյն Խորհրդի 1978 թուի Դեկտեմբերի վերոյիշեալ նիստում, նախկին դատախազ Մամէտովի հակաալիեւեան ելոյթից փրփրած, ամպիոն բարձրացող երեսփոխանները իրենց ճառերում համարեա յստակօրէն յուշել են, որ Ալիեւը ոչ միայն աւազակային գործողութիւնների կազմակերպականացման ու ներդաշնակցման, այլեւ «ազգային» ընդհանրական մի ինչ որ ծրագրի շուրջ համախմբել է թաթար մոլեկրոն-ցեղապաշտ ջոկերի ատրի բաժանման հարցում նախկինում միմեանց յոշոտող անդամներին։ Ապշերոնի շրջանային կոմիտէի քարտուղար Գումբատովն, օրինակ, յայտարարել է.

«Հիմա մենք կարող ենք ազնուօրէն նայել միմեանց աչքերին... եւ դա կատարուել է Հէյտար Ալիեւի լարուած աշխատանքի շնորհիւ»: Միրբաշիրի շրջանային կոմիտէի քարտուղար Դ. Մամէտովն ասել է. «Մեր հանրապետութիւնը դեռ երբեք չի ունեցել այսպիսի ղեկավար, ինչպիսին Հէյտար Ալիեւն է: Ընկեր Ալիեւը միշտ աշխատում է մեզ պաշտպանել անվայել արարքներից»: Ադրբեջանի «ժողովրդական գրող» Սուլէյման Ռահիմովը փրփրաշուրթն գոռացել է. «Նախկին դատախազ Գամբայը խելքը թռցրել է: Այդ ո՞ւմ ես դէմ գնում, Գամբայ: Եթէ հաւատում ենք ալլահին, կարելի է ասել. մեր դիմաց հենց ալլահն է՝ ի դէմս Հէյտար Ալիեւի: Մեր ժողովրդին ալլահն է ուղարկել այսպիսի քաջարի զաւակ»:

Եւ սակայն ամէնն այս չէ: Աւելին ու աւելի կարեւորը կայ: Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչութեան պետ երեսփոխան Մ. Աբաստէյլիեւը յայտարարել է. «Կուսակցութեան Սումկայիթի քաղաքային կոմիտէի ժողովում Սումկայիթ քաղաքի դատախազը Գամբայ Մամէտովի պէս ելոյթ ունեցաւ: Այժմ յստակ երեւում է գրպարտիչ Մամէտովի թելադրանքը»:

Առ այժմ հնարաւորութիւնը չունենք պարզելու, թէ Սումկայիթի թաթար համայնավարների տեղական կոմիտէի ժողովում տեղի դատախազը, հանրապետութեան դատախազ «գրպարտիչ» Մամէտովի «թելադրանքով» ու նրա «պէս» այդ ի՞նչ «ելոյթ» է ունեցել: Ցամենայն դէպս կարող ենք որպէս կողմնորոշիչ կառչել այն ձեւակերպումից, որը Հէյտար Ալիեւը տուել է դատախազ Մամէտովի պաշտօնազրկման վերաբերեալ իր ստորագրած ապօրինի հրամանագրում. «Կորցնելով պատասխանատուութեան զգացումը, Մամէտովը կանգնել է դատախազութեան մարմինները կուսակցական մարմիններին հանդիպադրելու ուղու վրայ»: Այս ձեւակերպումը, հրապարակախօս Վաքսբերգի կարծիքով, դիւանակալականից սովորական լեզուի թարգմանուելով, նշանակում էր, որ կուսակցական աշխատողների, ինչպէս եւ անխտիր բոլոր քաղաքացիների համար, Մամէտովն ընդունում էր բոլորի համար ընդհանուր նոյն օրէնքը»:

Վաքսբերգի հաստատումը ճիշտ է, անշուշտ, սակայն դեռ ամբողջապէս չի բացայայտում ու պարզաբանում Ալիեւի հրամանագրի բովանդակութեան, որ եւ նոյնն է՝ հանրապետական դատախազի (հետեւաբար եւ Սումկայիթի դատախազի) «մեղքի» բուն միջուկը: Բարեբախտաբար Վաքսբերգն ինքը բաւականին խորաթափանցօրէն, եւ հոգ չէ թէ մասամբ, կռահել է նաեւ այդ միջուկը, թէպէտ համարձակութիւնը չի ունեցել իր մասնակի կռահումն իսկ ամբողջովին եւ բացորոշապէս շարադրելու: Եւ իրօք, նա շարունակել է այսպէս.

«Այսօր, երբ վերծանենք, թէ շօշափելի ի՛նչ նկատի ունէին (Ալիեւն ու ալիեւականները — Ե.Ն.), Մամէտովի «մեղքը» անսպասելի լոյսի տակ ի յայտ է գալիս: Դեռ այն ժամանակ էին հասունանում սաղմերն այն դրամայի, որ վերջերս ապրեցինք (Սումկայիթում,- Ե.Ն.), եւ այն ժամանակ, ինչպէս տեսնում ենք, այդ սաղմերը քողարկում էին բծախնդրօրէն: Ուշադրութիւն դարձնենք վերոբերեալ քաղուածքին, «... Սումկայիթ քաղաքի դատախազը Մամէտովի պէս ելոյթ ունեցաւ» (այն է՝ բացայայտեց բարեխաս կեղծիքը քաղաքի բարեյաջող վիճակի մասին): Եւ



Երեւան, Օփերայի եւ պալէի պետական թատրոնի հրապարակը, որը ժողովրդից վերամկրտուելու է Ազատութեան հրապարակ։ 1988 թուի Փետրուարի 20···Սկսւում է հայոց Նորագոյն թուարկութիւնը։

մէկ այլ քաղուածք, որը տեղ է գտել Մամէտովի կուսակցութիւնից վտարելու մասին որոշման մէջ. «... Շանթաժի է ենթարկել կուսակցական պատասխանատու աշխատողների, նրանց վարկաբեկող նիւթեր հաւաքել։ Նմանօրինակ գործողութիւններ է ձեռնարկել Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտէի առաջին քարտուղար ընկեր Գէորգովի, կուսակցութեան Սումկայիթի քաղաքային կոմիտէի նախկին քարտուղարներ ընկերներ Աբասալիեւի եւ Բաղիրովի դէմ...»։ Ո՞վ գիտէ, եթէ դատախազի «շանթաժը» հասցնէր օրինական եւ օրինաչափ եզրայանգման, թերեւս այս տարի (Սումկայիթում եւ Լեռնային Ղարաբաղի շուրջ — Ե.Ն.) կատարուածից շատ բան կը կանխուէր ժամանակին։ Ախտանշանները, ինչպէս տեսնում ենք, գոյութիւն ունէին վաղուց։ Եւ չէին սպրդել դատախազի ուշադրութիւնից։ Սակայն չափն անց աչալրջութիւնը յարգի չէր»։

Վաքսբերգին հարկ է ուղղել վերջին կարեւոր հարցում. Ալիեւի հանրապետութիւնում ոչ թէ «չափն անց», այլ սովորականչափաւոր «աչալրջութիւնն» անգամ ոչ թէ «յարգի չէր», այլ պարզապէս պիտանի չէր, աւելի շուտ՝ պարզապէս թաթարական մոլեկրօն-ցեղապաշտ օձը ջերմացնելու եւ այն հայակեր վիշապի վերածելու ալիեւական քաղաքականութեան դէմընթաց «հակահայրենասիրական» արարք էր։

Ի միջի այլոց, Մամէտովը Ադրբէյջանի հանրապետական դատախազն էր հէնց այն տարիներին, երբ Հէյտար Ալիեւը, իր դրածոյ եւ հաւատարիմ կամակատար Գէորգովի անմիջական աջակցութեամբ, եռանդագին վարում էր Լեռնային Ղարաբաղը Նախիջեւանի օրինակով հայազրկելու եւ հեռանկարում լրիւ ադրբէյջանականացնելու քաղաքականութիւն, ըստ որում «ազգայնական-դաշնակցական» պիտակով ահաբեկելով, ճնշելով ու հալածելով իր ընթացքին ընդդիմացող հայրենասէր արցախահայերին։

Բանն այն է, որ 1960-ական թուականների կէսերին, ի պատասխան թաթարական աւելի քան քառասնամեայ հակահայկական ոտնձգութիւնների, ծայր էր առել ու չէր դադարում առանձին երեւելի արցախահայերի կողմից Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին, Գերագոյն Խորհրդին եւ Նախարարաց խորհրդին հասցէագրուող դիմումնագրերի հեղեղը, նոյնիսկ շուրջ յիսուն հազար ստորագրութեամբ կազմուել էր ժողովրդական մի հանրագրութիւն՝ Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին վերամիաւորելու պահանջով։ Սրտադողի մատնուած, թաթար ազգայնական շրջանները Ստեփանակերտում հակահայկական կրքեր էին բորբոքում, հրահրում եւ գլուխ բերում ազգամիջեան բախումներ, հետապնդում եւ մարզից հալածում տաղանդաշատ գրող եւ ներհուն պատմաբանասէր Բագրատ Ուլուբաբեանի գլխաւորութեամբ հանդէս եկող երիտասարդ մտաւորականների մի ամբողջ փաղանգի, սակայն նրանց այնպէս էլ չէր յաջողւում ահաբեկել եւ կասեցնել արցախահայութեան ազգային շարժումը։

Այս պայմաններում է, որ թաթար համայնավարների ղեկավարմանը ոչ-վաղուց անցած Հէյտար Ալիեւին եւ Ղարաբաղի հայկական «ազգայնականութեան բոյնին» վերջ տալու առաջադրանքով Բաքուից

1973 թուին «որպէս ուժեղ ձեռք» նրա կողմից յատկապէս ուղարկուած մարզային կոմիտէի առաջին քարտուղար Գէորգովին, ցարդ մինչեւ վերջ չբացայայտուած գաղտնակների օգնութեամբ, սակայն անպայման նաեւ հիմնականում դրսեկ-պաքուեցի, ու որանց կողքին բնիկ ղարաբաղցի հայ համայնավար աստիճանաւորների մեղսակցութեամբ, յաջողուեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի համայնավարական ամբողջ կազմակերպութեան պարտադրել հակահայկական ամօթալի մի որոշում։ 1975 թուի Մարտին գումարուեց կուսակցութեան մարզկոմի լիագումար ժողով, որի օրակարգն ինքնին պերճախօս էր. «Մարզի աշխատաւորների միջազգային դաստիարակութեան, այդ աշխատանքում տեղ գտած թերութիւնների եւ նրա հետագայ բարելաւման գծով մարզային կազմակերպութեան խնդիրների մասին»։ Այդ օրակարգի ետին թաքնուած էր Ալիեւի նենգ նպատակը. Գէորգովի եւ նրա մարզկոմում աշխատող աստիճանաւոր հայ առաջատար համայնավարների կամակատարութեամբ ժողովի միջոցով նախ վերջնական ու անվերաքննելի յայտարարել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գոյավիճակը, այլ խօսքով հայկական Արցախը Ատրպէյճանական ԽՍՀ-ին ընծայող ու նրա անբաժանելի մասը յայտարարող 1921 թուի յուլիսեան որոշումը եւ ապա մարզի հայկական դիմագիծն աւելի ու աւելի աղարտելով վերջնականապէս թաթարականացնելու գործը հեշտացնելու նպատակով՝ ձեռք բերել հայրենասէր արցախահայերի դէմ պայքարի ու ճնշման «օրինական», տեղի հայ համայնավարների իսկ կողմից վաւերացուած ահեղ մի զէնք։

Ինչքան էլ զարմանալի թուայ, Ալիեւն ու Գէորգովը ապշեցուցիչ դիւրութեամբ հասան իրենց նպատակին։ Եւ իրօք, Պաքւում ալիեւական գաղափարակիցնորոնում պատրաստուած ծրագիր-նախագծի հիմամբ Ստեփանակերտի հայ համայնավար աստիճանաւորների օգնութեամբ շարադրուած իր ընդարձակ զեկուցման մէջ Գէորգովը, ծաւալուելով Լեռնային Ղարաբաղի վարչականօրէն Ատրպէյճանին պատկանելիութեան անվերաքննելիութեան շուրջ («Ղարաբաղը եղել է եւ մնում է Ատրպէյճանի անբաժանելի մասը»), կարողացաւ այդ տեսակէտը հեշտութեամբ՝ որպէս պաշտօնական որոշում, պարտադրել արցախահայ համայնավարների կազմակերպութեան։ Աւելին. մարզը ներկայացնելով որպէս հայկական ազգայնամոլութեան մի օճախ, որտեղ ազգայնականները, ոտնատակելով ժողովուրդների բարեկամութիւնը, իրենց թոյլ են տալիս հակաթաթարական բռնամիջոցներ, Գէորգովը կարողացաւ ժողովին պարտադրել նաեւ ատրպատականեան թաթար մոլեկրօն-ցեղապաշտների ձեռքին տասնամեակներ շարունակ որպէս անհաղթու զէնք ծառայած այն շանթաժային «տեսակէտը», որ Հայաստանի հետ վերամիաւորման պահանջը «պուրժուա-ազգայնական գաղափարախօսութեան եւ դաշնակցական քարոզչութեան ազդեցութեան դրսեւորում» է։

Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէի մշակոյթի բաժնի վարիչ Լեւոն Մկրտչեանը, վերյիշելով ժամանակի իրադարձութիւնները, իր «Հոգեւոր Աղբիւրի Ծարաւ» խորագրուած «Բարձրաձայն Մտորումներ»ում գրել է.

«Եւ վերջապէս, տեղի ունեցաւ ամենաահաւորը՝ կուսակցութեան մարզային կոմիտէի 1975 թուի մարտեան ժողովը, ուր Գէորգովը, Պաքուում Հէյդար Ալիեւի կողմից ծրագրուած ու մշակուած զեկուցումով հանդէս եկաւ եւ կոտրեց մարզի մտաւորականութեան մէջքը, ազգայնականների պիտակ կպցնելով Արցախի ազնիւ ազգասէր զաւակներին։ Արցախի հայ մշակոյթը ծանր կացութեան մէջ ընկաւ։ Մարզի մտաւորականները անելանելի վիճակում էին, նրանք ամէն մի արդարացի խօսքի համար հուժկու հարուած էին ստանում։ Անվստահելիների, կասկածելիների համար ծուղակ էին սարքում, հեռացնում զբաղեցրած պատասխանատու պաշտօններից, նրանց առաջ փակում բոլոր ուղիները։ ...Մտաւորականութեան ամէն մի արդարացի պահանջը մեկնաբանում էին որպէս նեղ ազգայնամոլական»։

Արցախահայ համայնավար աստիճանաւորութիւնը, որ աճպարարական տարբեր հնարներով կամազրկելով շարքայիններին, անշուշտ նպաստաւորուելով նաեւ վերջիններիս միջավայրում գոյատեւող ահաբեկ տրամադրութիւններից եւ մարզկոմի կողմից կենսագործուող «լենինեան ազգային քաղաքականութեան» հասցէին «Փրաւդա»յի առաջնորդողի դրուատանքի կախարդանքից, Լեռնային Ղարաբաղը փաստօրէն պարի էր հանել ալիեւական մուղամով նուագող գէորգովեան տուտուկի տակ, իրեն հաշիւ չէր տալիս, թէ դէպի ո՞ւր է գլորւում եւ դէպի ինչպիսի՞ խորխորատ քաշում հայկական Արցախի եւ արցախահայութեան ճակատագիրը։ Եթէ իրեն հաշիւ տուած լինէր, ապա մարզային կոմիտէի ժողովից յետոյ կանգ կառնէր, ինչքան էլ դա համայնավար կազմակերպական կենցաղին հակառակ, ուրեմն եւ դժուար լինէր, տարօրինակ մի եռանդով չէր գումարի նաեւ շրջանային կոմիտէների ժողովներ, այնուհետեւ սկզբնական կուսակցական կազմակերպութիւնների հաւաքներ, որոնցում Լեռնային Ղարաբաղի «ազգայնականութեան բոյնի» ալիեւական-գէորգովեան «տեսութեանը» հայթայթւում էին «շօշափելի-գործնական» հիմքեր. այն բոլոր արցախահայերը, որոնք երբեւէ արտայայտուել էին Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիաւորման օգտին կամ թէկուզ միայն Մայր Հայրենիքի հետ Արցախի մշակութային եւ այլ կապերի անհրաժեշտութեան մասին, նաեւ նրանք, ովքեր հանդէս էին եկել մարզի ինքնավարական իրաւունքների յարգման պահանջով, ովքեր արծարծել էին ազգային գրականութեան եւ արուեստի զարգացման, պատմական յուշարձանների պահպանութեան եւ այլ համանման հարցեր, համայնավար լինէին թէ անկուսակցական, ժողովական համայնավարների որոշակի մի խաւի կողմից յականէ յանուանէ ամբաստանւում էին որպէս «դաշնակցականամէտ ազգայնականներ»։ Առաւել ողբերգականը, նոյնիսկ եղերականն այն էր, որ տեղի տալով Ալիեւից հրահանգաւորուած Գէորգովի պահանջի առաջ, արցախահայ համայնավար աստիճանաւորութիւնը բոլոր ժողովների երկուորեակների պէս միանման որոշումները, պաշտօնական արձանագրութիւններով հանդերձ, ստորագրուած ու կնքուած, ուղարկում էր Պաքու։

Հատկանշալի է, որ դատական ամբաստանագրեր յիշեցնող այդ արձանագրութիւնները, առնուազն կարեւորագոյնները, բնագրով թէ

պատճենով չէին կարող չներկայացուել Ադրբեջանի հանրապետական դատախազութեան գրասենեակ, անձամբ մեզ ծանօթ Գամբայ Մամէտովին։ Հնարաւոր է ենթադրել, որ այն, ինչը, մեզ ասած՝ բթամտութեամբ ու կարճատեսօրէն աչքաթող էր անում արցախահայ համայնավար աստիճանաւորութիւնը, սրատեսօրէն ընկալել է թաթար համայնավար դատախազը. Լեռնային Ղարաբաղի կուսակցական մարմինների որոշումը «Հայ-ադրբեջանական միջազգայնական բարեկամութեան ամրապնդման» մակնիշով մի ակտ էր, որը չէր կարող ուշ կամ կանուխ չպայթել եւ իրադրութիւնը ծայր աստիճանի չբարդացնել, աւելին՝ «հայկական ազգայնականութեան» եւ «դաշնակցական քարոզչութեան» դէմ պայքարի լոզունգները պարզապէս այն ծխածածկոյթն էին, որի ետին թաքնուած էր մարզում հայկական ազգային ամէն մի ոգորում ճնշելու, մարզի ադրբեջանականացումը առաջ տանելու վտանգաշատ մի նենգութիւն։

Ի դէպ, Գէորգովին պաշտում եւ ատամներով պաշտպանում էին ոչ միայն Բաքւում, այլեւ Մոսկուայում։ Հակառակ դէպքում նրան չէր յաջողուի իր աթոռը պահպանել եւ Բրեժնեւի օրօք աւելի քան մէկ տասնամեակ անպատիժ մնացած իր չարագործութիւնները համարեա երեք տարի էլ շարունակել կորպաչովեան «վերակառուցման» ժամանակաշրջանում։ Եւ նրան իշխանութիւնից զրկելով ու «խստագոյնս» պատժելով պարզապէս կուսակցութիւնից վտարեցին (իսկ նա, ըստ «Փրաւտա»յի, ամպիոնից փղձկում էր. «Ընկերներ, կեանքս իմաստ չունի առանց կուսակցութեան, այս պատիժն ինձ համար շատ խիստ է») միայն ու միայն այն բանից յետոյ, երբ «Մաւրն իր գործն արել է, մաւրը կարող է հեռանալ» ասոյթն արդէն հիմք ունէր. Գէորգովը հաւատարմօրէն ու անձնուիրաբար կէտը կէտին կատարել էր թաթարական կուսակցական-պետական մաֆիայի գլխաւոր առաջադրանքը՝ առաջ տանել հակահայկական, վերջնական նպատակակէտում Արցախի հայազրկման միտող քաղաքականութիւնը, ըստ որում այնպէս առաջ տանել, որ դանակը թէկուզ հասնի ոսկորին եւ Ստեփանակերտը պոռթկումով ոտի ելնի, պայմանաւ որ ոտի ելնի՝ մօտաւորապէս Բաքուի ժամանակացոյցով. նախ՝ Հայաստանի ղեկավարութեան ծայրագոյն վարկաբեկման եւ ընդհակառակը Ալիեւի գլխաւորած թիւրք-թաթարական աւազակային «լոպպի»ի դիրքերի Մոսկուայում դեռ ամրապնդութեան պայմաններում, ապա եւ՝ երբ Ազգամից մինչեւ Սումգայիթ մոլեկրօն խաժամուժը պատրաստ լինի առաջին իսկ ազդանշանի խլրտալ։

Վերյիշելով դատախազ Մամէտովի մատնանշած թաթարական դաւի Ղարաբաղ-Սումգայիթ վաղեմի հանգուցակապը, հարց տանք այստեղ. մի՞թէ ըստ ինքեան պերճախօս չէ այն փաստը, որ «խստագոյնս պատժուելու» հարցում բախտակից դարձան երկու հեռակայ գործակիցներ՝ Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտէի առաջին քարտուղար Գէորգովն ու Սումգայիթի քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար Մուսլիմզադէն, որոնց հարցերը միմեանց ագուցուած քննարկելով, Ադրբեջանի համայնավարների Կենտրոնական կոմիտէի լիագումար ժողովը 1988 թուի Մայիսի վերջերին երկուսին էլ նոյն օրը եւ նոյն ժամին արժանացրեց միեւնոյն «պատժի»՝ կուսակցութիւնից

վտարման։ Այդ առթիւ «Փրաւդան», ինքն իրեն հաւատարիմ, փոխանակ շեշտը Գէորգով-Մուսլիմզադէ հանգուցակէտի վրայ դնելու, գրում էր․ «Ադրբեյճանում ոչ ոք չի յիշում այդպիսի զուգադիպութիւն, երբ Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան շարքերից միաժամանակ հեռացուած լինեն Հանրապետութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի անդամութեան թեկնածու ու մարզային կոմիտէի առաջին քարտուղար մի մարդ եւ Հանրապետութեան Կենտրոնական կոմիտէի անդամ ու քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար մի երկրորդ մարդ, ըստ որում երկուսն էլ Խորհրդային Միութեան ու Հանրապետութեան Գերագոյն խորհուրդների անդամ»։

Մուսլիմզադէին մենք հանգամանօրէն կ'անդրադառնանք երրորդ գլխում, երբ կը խօսենք Սումգայիթի ցեղասպանական ոճրի մասին։ Այստեղ, սահմանափակուելով Գէորգովի անձով, հարց տանք. եթէ արցախահայերը սոցիալ-տնտեսականի նման ստրկաբար տարած լինէին նաեւ ազգային-մշակութային լուծը եւ եթէ թաթարական համայնավար-խորհրդային բարձրաստիճան մաֆիան էլ նրանց ահաբեկելու կարիքը չզգալով՝ չբռնկեցնէր Սումգայիթը, ապա եւս քանի՞ տարի նա Ստեփանակերտում պիտի հանգիստ վարէր փոխարքայական իր պաշտօնը եւ շարունակէր տնտեսապէս, ընկերայնօրէն եւ ազգայնօրէն կործանել Լեռնային Ղարաբաղը։ Երեւի մինչեւ «վերակառուցման» նախնական փուլի եւ կոռուպցիոն իշխանութեան համար սահմանուած ժամկէտի աւա՞րտը՝ 1993 թուականին։

Իսկ ո՞վ էր նա, Պաքուի սիրեցեալն ու Մոսկուայի հովանաւորեալը, որին բազում տարիներ որպէս հրեշտակ փողահարած խորհրդային կենտրոնական մամուլը, «Փրաւդա»ի եւ «Իզվեստիա»ի գլխաւորութեամբ, միայն 1988 թուի Յունիս-Յուլիս ամիսներին, այն էլ հպանցիկ, ուրուագծեց որպէս հրէշի։

Գէորգովին մեղադրական գծերով ուրուանկարելու հարցում իր պաշտօնակիցներից շուրջ մէկուկէս ամիս յետոյ միայն լեզու ելած «Իզվեստիա»ն Յուլիսի 13-ին, «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ճահճացման դառը պտուղները» խորագրի ներքոյ, վերջապէս գրեց, որ հայանուն այլասերուած (ի՞նչ այլասերուած, պարզապէս թիւրքացած) կուսակցական այդ գործիչին եթէ ոչ ամէն ինչ, ապա շատ բան կասկածելի արագութեամբ է յաջողուել։ Ինչպէս որ Խորհրդային Միութիւնում կուսակցական աստիճաններով վեր խոյանալու պատրաստուող անձերի մեծ մասը, այնպէս էլ Գէորգովը, համալսարանը մի կերպ աւարտած, վերցուել է Համայնավար լենինեան երիտասարդական միութիւնում պատասխանատու աշխատանքի, որտեղից շատ շուտով առաջ է քաշուել Թաթար համայնավարների Կենտրոնական կոմիտէ, ապա նշանակուել շրջանային կոմիտէի քարտուղար։ Միջանկեալ ասենք, որ եթէ Պաքուի Կենտրոնական կոմիտէի վարչամեքենայի թէկուզ քիչ թէ շատ պատասխանատու մի օղակում հայանուն մարդու ներկայութիւնը դեռ աչք ծակող անբնականութիւն չէր, ապա թաթարական հանրապետութեան նահանգներից մէկի կամ որեւէ քաղաքամասի գլխին որպէս կուսակցական սատրապ նրա նշանակումը, նշանակում է՝ նախ նրա նկատմամբ թաթար խաժամուժի հանդուրժանքը, ըստ ինքեան մտածելու տեղիք

տուող բաներ էին։ Յամենայն դէպս մի կարճ ժամանակ անց Գէորգովը շրջանային կոմիտէից թռել է Ստեփանակերտ, մարզային կոմիտէի առաջին քարտուղարի գահին։ Երկու-երեք ամիս յետոյ «Մեծագոյն նուաճումների» համար նա Խորհրդային Միութեան Գերագոյն խորհրդից պարգեւատրուել է շքանշանով եւ փառաբանուել Մոսկուայի կենտրոնական հրատարակչութիւններից մէկի կողմից տպագրուած մի շքեղակազմ գրքում (որը, ըստ «Իզվեստիա»յի, «ձեւով թէ բովանդակութեամբ քաղցրաւենիքի շքեղ մի տուփ էր յիշեցնում»)։ Այնուհետեւ, մարզը դէպի քայքայում եւ անկում հրող սոցիալ-տնտեսական իր խայտառակութիւնները, կեղծ հաշուետուութիւնների ու խարդախուած տուեալների օգնութեամբ եւ անշուշտ որ Պաքուի յետին նպատակով կամաւորապէս կուրացած աչքի հանդուրժողութեամբ, ներկայացնելով որպէս «եւս առաւել նուաճում», նա արժանացել է նորանոր շքանշանների եւ մոսկովեան այլ շնորհների։

Շրջապատում բոլորը չէ, որ համակերպուել են Գէորգովի այլանդակութիւններին։ Առանձին արի ու համարձակ արցախահայեր (բացառուած չէ, նաեւ անձնական թէ նեղ-տեղական շահերից դրդուածներ) բողոքի ձայն են բարձրացրել, ահազանգել Պաքու ու Մոսկուա, սակայն թմթարական սարքը, տեղական թէ մոսկովեան իր սիրողներին թիկն տուած, անխնայ ճնշել է ու ոչնչացրել իր չարագործութիւնների առաջքն առնել փորձողներին։ «Ամենափոքր առարկութեան դէպքում մարդկանց վրայ պայթում էր հայհոյանքներով» եւ «շատ շուտով մարզում սահմանեց մի մթնոլորտ, որի զոհերն եղան շատ ու շատ ազնիւ մարդիկ». սրանք, ինչ խօսք որ չափազանց ուշացած, տողեր են «Իզվեստիա»յից, որը հակիրճ շարադրել է նաեւ մարզային կոմիտէի պատասխանատու աշխատողներից արցախահայ Աղամեանի ողբերգութիւնը։ Գէորգովը իր կամայականութիւններին մինչեւ վերջ չհանդուրժած կուսակցական-տնտեսական այդ գործիչին, որ մարզային խորհրդարանի անդամի հանգամանքով երեսփոխանական անձեռնմխելիութիւն էլ ունէր, իր չգործած ինչ որ յանցանքի համար դատապարտել է տալ 11 տարուան տաժանակիր աշխատանքի եւ ամբողջ ունեցուածքի բռնագրաւման, հետապնդումների ենթարկել տալով նաեւ Ադրբէջանական ԽՍՀ-ի հողատարածքի վրայ ապրող նրա բոլոր ազգականներին ու նոյնիսկ ազգանուանակից անծանօթներին։ Մէկուկէս տարի անց, միայն, Պաքուի գերագոյն դատարանը, վկաների ու փաստերի առաջ տեղի տալով, հարկադրուել է ի վերջոյ հաստատել զոհի անմեղութիւնը, սակայն Գէորգովը շարունակել է տաժանավայրից տուն վերադարձած հայի անխնայ հալածանքը, այն էլ այն դէպքում, երբ բացայայտօրէն հովանաւորել է քրէական յայտնի յանցագործների, այդ թւում նոյնիսկ մարդասպան աւազակների, փակել տալով նրանց դէմ յարուցուած բազմատասնեակ դատական գործեր։

Սոցիալ-տնտեսական մարզում Գէորգովի այլանդակութիւններին ու դրանցից բխող կորուստներին, զրկանքներին ու տուայտանքներին Արցախի հայութիւնը հանդուրժում էր եւ էլի երկար տարիներ կը հանդուրժէր, որպէս խորհրդային հասարակութեան անբաժանելի մի մասնիկ քաջ իմանալով, որ դրանք ի վերուստ են, ընդհանրական ու

տեւական, հետեւաբար եւ այն ճակատագիրն են, որից խուսափում ու պրծում չի եղել ու չի էլ լինելու։ Կորպաչովով կամ առանց նրան. մի քիչ պակաս կամ մի քիչ աւելի։ 1988 թուի Յունուարն էր եւ «վերակառուցումը» չուտով իր երրորդ տարին էր բոլորելու, սակայն Լեռնային Ղարաբաղում, ինչպէս որ անծայրածիր ամբողջ երկրում, ամէն ինչ նոյնութեամբ կամ համարեա նոյնութեամբ դեռ այնպէս էր, ինչպիսին որ էր նախընթաց ժամանակներում եւ իր իսկ ապականած մարզի փրկութեան նաւի ղեկին պահպանուած Գէորգովը, նոյն ինքն, կուսակցութեան մարզային կոմիտէի լիագումար ժողովում ապշեցուցիչ շնականութեամբ, ըստ «Իզվեստիա»ի մեզ ծանօթ համարի, յայտարարում էր. «Անհրաժեշտ է բաց խոսակցութիւն վարել համայնավարների հետ։ Անհրաժեշտ է վերջ տալ գիւտանակալական քաշքշուքի ոճին եւ իշխանութեան չարաշահումներին։ Իւրաքանչիւրս վերակառուցումը մենք մեզանից պէտք է սկսենք»։ Արցախի հայութիւնը չէր էլ լսում եւ յաջորդ օր թերթում չէր էլ ընթերցելու այդ բոլորը, որը, գիտէ՛ր, «վերակառուցման» վերաբերեալ ճամարտակութիւնից իր բաժինն էր…

Բայց ահա Արցախի հայութեան համար անտանելին ու ընդվզեցուցիչը այն էր, որ Գէորգովը հանդէս էր գալիս որպէս Պաքուի կառավարողների՝ հայկական մարզը անունից եւ պետական ենթակայութիւնից յետոյ նաեւ ազգային բովանդակութեամբ ու դիմագծով թաթարական Ղարաբաղի վերածելու եւ նրա ազգային-պատմական պատկանելիութիւնը խեղաթիւրելու քաղաքականութեան հաւատարմագոյն գործիքը, այլեւ ու մանաւանդ, լինելով հայանուն, այդ քաղաքականութեան թաթարական ակունք-ներշնչարանն ու համաթիւրքական-թուրանական էութիւն-նպատակադրումը սքօղող դիմակը։ Իր տեղում՝ ընդհանրապէս, իսկ հենց յաջորդող էջերում՝ մասնաւորապէս Գէորգովի գործունէութեան հետ կապուած դեռ մանրամասն կը խօսենք այդ քաղաքականութեան ու նրա գործնական կիրառման եղանակների ու հետեւանքների մասին։ Այստեղ չեշտենք միայն այն, որ այդ քաղաքականութիւնը «հայի» ձեռով կենսագործելու նենգամտութեան իրողութիւնը քաջ յայտնի էր շատերին, այդ թւում՝ առաջին հերթին Մոսկուայի բարձրակէտում նստած Պիղատոսներին։ Նաեւ խորհրդային հասարակական կարծիքն արարող ձեռնածուներին՝ մտաւոր-մշակութային աշխարհի առուտրուող «սերուցքին»։ Եւ սակայն ինչպէս Պիղատոսները, այնպէս էլ խնդրոյ առարկայ «սերուցքը», ի հաճոյս մեզ արդէն քաջածանօթ պատուիրատուների, անգէտ էին ձեւանում։ «Իզվեստիա»ն օրինակ, արտակարգ փափկանկատութեամբ խնայելով Գէորգովին որպէս խամաճիկ օգտագործողներին, փաստօրէն սուտ խենթ էր ձեւանում եւ իբր զարմանքով գրում. «Ազգութեամբ հայ, նա Լեռնային Ղարաբաղ գալու առաջին իսկ օրից ազգային հարցում իրեն չափազանց տարօրինակ պահեց. մինչեւ իսկ կուսակցական աշխատողներին արգիլեց…որպէս զբօսաշրջիկ Երեւան գնալ։ Նուազագոյնի հասցրեց թատերական եւ երաժշտական հիւրախաղերը, գրողների, արուեստագէտների, գիտնականների հետ հանդիպումները։ Տարուէ տարի, օրինակ, ձգձգեց Երեւանի հեռուստահաղորդումների ընկալումը»։

Ուչիմ ընթերցողը նկատած կը լինի, որ եթէ «Իզվեստիա»ի

պարբերութեան սկզբում ու վերջում Երեւանը յիշատակուած չլինէր, ապա հնարաւոր չէր լինի կռահել ազգութիւնն այն երեւելի մարդկանց, ում առաջ Գէորգովը փակել էր հայկական Արցախի դռները։ Աննպատակ չէ, որ «Իզվեստիա»ն «ինքնագործ» Գէորգովի «նախաձեռնութիւն» էր յայտարարում Ստեփանակերտի Թատրոնի անունից «հայկական»ի ջնջումը, «Մենք ենք՝ մեր սարերը» յուշակոթողի կառուցման խոչընդոտումը, Արցախի ազգագրական Թանգարանի փակումը, շախմատի ակումբից պատանիներին արտաքսելով շէնքը «հայ-ադրպէյճանական բարեկամութեան պալատ»ի վերածելը, Մաշտոցին ու նրա աշակերտներին հիւրընկալած Ամարասի վանքի վերանորոգման հետամտողներին «ազգայնական» հռչակելը։ Աւելին. արձանագրելով «ժողովուրդների բարեկամութեան, հայ-ադրպէյճանական եղբայրութեան» մասին ճամարտակող Գէորգովի այն խօսքերը, թէ «գաղափարականօրէն տհաս առանձին մարդիկ (հայեր,- Ե.Ն.) ազգայնական նախապաշարումներով են թունաւորուած», «Իզվեստիա»ն շարունակում էր. «Նա այսպէս էր խօսում ուրիշներից շատ աւելի լաւ իմանալով, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգաբնակչութիւնը ինչպիսի յուզմունքով է բռնկուած։ Նա գիտէր, որ մէկը միւսի ետեւից Մոսկուա պատուիրակներ են գնում, ուղարկւում են հարիւրաւոր ու հազարաւոր նամակներ, որոնց հեղինակները ուղղակի կամ անուղղակի մեղադրում են իրեն՝ Գէորգովին, ազգային քաղաքականութիւնը խեղաթիւրելու մէջ»։ Ի դէպ, «Փրաւտա»ն դեռ Յունիսի 2-ին, Գէորգովի բնութագրման գործը իր ոչ-անյայտ Թաթար աշխատակից Զաուր Կադիմբեկովին վստահելով, «հայազգի» ղեկավարի «ինքնագործունէութեան» հեքիաթի ուրուանկարը տուել էր արդէն։ Թռուցիկ շեշտելով, որ «հանրապետութեան կուսակցական մարմինների լրիւ Թողտուութեան պայմաններում» է մարզային կոմիտէի «ինքնագլուխ» առաջին քարտուղարը մենակը կատարել բազմապիսի այլանդակութիւններ, Թերթն ընդհանուր գծերով շարադրում էր Գէորգովի «յանցանքի» իբր Թէ գլխաւոր, այլ ըստ էութեան երկրորդական ու երրորդական պահերը, որպէսզի վերջում նրան մեղադրի այն բանում, որ Պաքուի վերադասներից «ինքնիշխան» Թողնուած լինելով, վճռական «իրադարձութիւնների պահին չի կարողացել որեւէ բան հակադրել (Արցախի հայութեան,- Ե.Ն.) անառողջ տրամադրութիւններին»։

Իրականում Գէորգովը Պաքուի գաղափարակենտրոնի արարածն էր եւ Պաքուի կողմից էլ գործարկւում հենց անհրաժեշտ պահի եւ որոշակի ուղղութեամբ։ Ինչպէս գրել է «Սովետական Հայաստան» օրաթերթը, «մարզի սոցիալ-տնտեսական զարգացման, նրա աշխատաւորութեան հոգեւոր պահանջմունքների բաւարարման հարցը Գէորգովին չէր հետաքրքրում», քանի որ «դրանք իր պարտականութիւնների մէջ չէին մտնում, Ալիեւը չէր ծրագրել. Գէորգովը լոկ ռոպոտ էր, մի մեքենայ, եւ աշխատում էր Ադրպէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնի կողմից նախօրօք կազմուած ծրագրով»։

Կարիք չկայ շեշտելու, որ այդ «ծրագիրը» չափազանց եւ ամբողջովին հակահայկական էր։

Բանն այն է, որ 1970-ական Թուականների սկզբներին,

արցախահայ մի խումբ երիտասարդ եւ ազգայնօրէն եռուն մտաւորականների յամառ կանչ ու կոչերին արձագանգելով, Երեւանի մտաւոր-մշակութային կեանքի պատասխանատուների շրջանում գտնուեցին մարդիկ, որոնք համարձակուեցին ընդառաջել ինքնավար մարզի հոգեւոր-ազգային պահանջմունքներին։ Ժամանակաշրջանն այսպէս է պատկերել արցախահայ մշակութային ճակատի աշխատող Լ. Մկրտչեանը. «Եղաւ մի պահ, որ մեր վրդովմունքը լսեցին Հայաստանի որոշ մտաւորականներ։ Նրանք արթնացրին շատերին, ստիպեցին մտածել մեր հոգսերի մասին։ Ու զարմանալիօրէն մէկը միւսի ետեւից մեզ մօտ հիւրախաղերի էին գալիս նոյնիսկ այնպիսի համոյթներ, արուեստի այնպիսի վարպետներ, որոնց Հայաստանի շրջաններում հազուադէպ կարելի էր հանդիպել... Սունդուկեանի անուան հայկական պետական ակադեմիական թատրոնը, Լենինականի, Կիրովականի, Կամոյի, Արտաշատի թատրոնները, երգի-պարի պետական էսթրադային խումբը, ռադիոյի եւ հեռուստատեսային ժողովրդական գործիքների համոյթը, ուրիշ-ուրիշ շատ խմբեր։ Հայֆիլմը Գէորգ Հայրեանի գլխաւորութեամբ կազմակերպեց ստուգատեսներ։ Մեր թանկագին հիւրերն էին ժամանակակից նշանաւոր շատ հայ գրողներ, արուեստի մարդիկ։ Կարծես թէ ամէն ինչ լաւ էր ընթանում»։

Արցախահայութեան ազգային-մշակութային զարթօնքի հենց այդ եռման պահին էր, որ Գէորգովը Պաքուից գործուղւում էր Ստեփանակերտ։ Եւ զարմանալին այն էր, որ թաթարական համայնավարութեան ճահճում իր հայկականութեան վերջին հեւքին հասած յաւակնոտ ու փառամոլ այդ մարդուկը, արցախահայութեան միջավայրում ինչ որ հրաշքով ասես եղափոխուած, խաղում էր Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան շրջանում սկսուած «ինքնագլուխ վերահայացման» թոհուբոհը ոնց որ թէ պաշտօնականացնելու, նոյնիսկ գլխաւորելու եկած գործիչի դերը։ Եւ խաղում էր հրաշալի, տալով նաեւ դերից պարտադրուած հայկականութեան դրսեւորումները։ «Մարզկոմի նորընտիր քարտուղար Գէորգովը,- գրել է ժամանակակիցը,- իր իսկական դէմքը դեռ ցոյց չէր տուել։ Եւ, կարծես, ուրախ էր այս ամէնի համար։ Շուտով Ստեփանակերտում վեր բարձրացան Յակոբ Յակոբեանի, Մուրացանի յուշարձանները, մեծ Հայրենականում զոհուած ղարաբաղցիների տուֆակերտ համալիրը... Քաղաքի տասը դպրոցներից եւ ոչ մէկը հայկական անուն չունէր. Նրանցից չորսը կոչեցինք Ղազարոս Աղայեանի, Չարենցի, Թումանեանի, Կնունեանցի անուններով, Ստեփանակերտի 38 փողոցներ վերանուանուեցին հայ գրողների, յեղափոխականների, երգահանների, պետական եւ ռազմական գործիչների, հերոսների անունով... Եւ այսպէս՝ հայկական ոգուն համապատասխան անցկացրինք բազում միջոցառումներ»։

Դժբախտաբար արցախահայ երիտասարդ մտաւորականները, բիւրեղեայ տղաներ, որոնք հայկական ոգու տիրապետութիւնն էին ջանում վերականգնել արցախահայ միջավայրում, ե՛ւ կենսափորձի պակասի ու բարեմտութեան հեռեւանքով, ե՛ւ Գէորգովի թաթարական նենգամտութեան նրբութեան ներգործութեամբ, գլխի չէին ընկնում, բնաւ, որ Լեռնային Ղարաբաղի ազգային զարթօնքի նկատմամբ ոչ թէ

պարզապէս հանդուրժանքը, այլ՝ նոյնիսկ «հովանաւորութիւնն» ու «քաջալերանքը» իրականում մաս էին կազմում Պաքուի ալիեւական գաղափարակենտրոնի հակահայկական լայնածաւալ մի դաւադրութեան, որի կարեւոր դրուագներից մէկը կենտրոնական մի տեղամասում կենսագործելու առաջադրանքով էր ուղարկուել Գէորգովը։

Եւ քանի որ գաղափարակենտրոնի մշակած դաւադրութիւնը բազմերես էր, ապա «Հայկական ոգու» զարթօնքի թոհուբոհին էլ ալիեւական-գէորգովեան «քաջալերանքը» հետապնդելու էր մի քանի նպատակներ։

Առաջինը՝ ազգայնօրէն հարբեցնել արցախահայութիւնը եւ հոգեւոր առօրէական-անցողիկ բաւարարութիւնների (հեշտութեամբ վերանալի ինչ որ կիսանդրիի տեղադրում, ցանկացած պահի փոփոխելի ինչ որ անուանակոչութիւն եւ այլն) հաճելի պահը ազգային հողի վրայ հատուցել տալ տեւական-մնայուն կորուստներով եւ անդառնալի նահանջներով։ Այդ մասին է ժամանակակիցը վկայել, գրելով. «Այդ ամէնը մեզ ուրախացնում էր։ Բայց մեր ուրախութիւնը, աւա՜ղ, շատ կարճ տեւեց։ Մենք այնքան միամիտ էինք... Թորամանկը նրանք էին, որոնք մեզ «քաղցրաւենիքով» խաբում էին եւ դրանց զուգահեռ իրենց սեւ գործը տանում։ Մեր հայկական պատմական յուշարձանները աղուանական էին կոչում, մեզ՝ արցախցիներիս աղուանների մնացորդներ էին անուանում, մեր հիմնարկների պետական կնիքներից հայկական տառերը դուրս էին վանում, մեր հայկական պետական դրամաթիկ թատրոնի անուան մէջ սրբագրութիւն էին կատարում, հանում «հայկական» բառը, մեր հայկական դպրոցների զուգահեռ դասարանների թիւն էր կրճատւում, փոխարէնը՝ այլալեզու դպրոցների դասարանները զուգահեռներ էին դառնում, քառապատկւում... Մանկավարժական ինստիտուտում, բժշկական տեխնիկումում ադրբէջանական բաժիններ էին բացում... Մեզ մօտ միջազգայնականութիւն էին քարոզում եւ դրա վառ ապացոյցը համարում այն, որ պետական վարչամեքենայում ղեկավարութեան մի մասը այլ ազգի (թաթար,- Ե.Ն.) ներկայացուցիչներ էին նշանակում։ Նշանակում էին, որ «եղբայրաբար» մեզ ղեկավարեն»։

«Հայկական ոգու» զարթօնքի թոհուբոհի «քաջալերանքը» հետապնդում էր, նաեւ, շատ աւելի չարագուշակ մի նպատակ եւս. բացայայտել ազգայնօրէն աւելի եռուն ու եռանդուն տարրերին, յատկապէս մտաւորականութեան միջավայրում, իր գործունէութեան հիմամբ որոշել իւրաքանչիւրի «վտանգաւորութեան» աստիճանը եւ առաջին իսկ առիթով վճռական հարուած հասցնելով «ազգայնականներին»՝ գլխատել Լեռնային Ղարաբաղի հայութիւնը, ընթացքում բացայայտելով եւ քայքայելով Խորհրդային Հայաստանի հետ կապերի ու շփումների ուղիներն ու եղանակները։ Սա այնպիսի մի մեքենայութիւն էր, որի հետեւանքները, ինչպէս տեսանք, հայ մտաւորականութիւնն սկսեց ճաշակել 1975 թուի մարտեան ժողովից յետոյ եւ որը, զուգորդուելով տնտեսական յարաբերաբար հեշտ գլուխ բերելի հեղձամղձուկին, Ղարաբաղը դարձնելու էր մի նոր Նախիջեւան։

Ալիեւի գաղափարակենտրոնում մի ամբողջ հակահայկական նպատակալաց «շտապ»ում մինչեւ վերջին մանրուքը վարպետօրէն

յղացուած եւ առ ի գործադրութիւն ստրկամիտ Գէորգովին յանձնարարուած «Ղարաբաղեան գործողութիւնը», կարիք չկայ ասելու, շատ ծանր նստեց արցախահայութեան վրայ, քանի որ, իր հանրայայտ միւս ու զազրելի հետեւանքներից անկախաբար, խլեց նաեւ մարզի լաւագոյն զաւակներից շատերի հոգին: Խօսքը մի անգամ եւս տանք ժամանակակից Լ. Մկրտչեանին.

«Հետզհետէ կորչում էր այն արահետը, որ հոգեւոր կապեր էր պահում Հայաստանի եւ Արցախի միջեւ: Արցախը կորցնում էր իր հայկական դէմքը, իր լեզուն: Ինքնավարութեան պետական լեզուն վանեցին ետին պլան: Բոլոր միջոցառումները, թէ՛ մարզային եւ թէ քաղաքային, տարւում էին ոչ հայերէնով: Հիմնարկների գործավարութիւնում չէր ընդունւում հայերէն գրագրութիւնը: Գէորգովը քանի՛ քանի անգամ էր սաստել մարզային ռատիոկոմիտէի նախագահին այն բանի համար, որ տեղական ռադիոյով հնչում էին հայկական երգեր՝ նուիրուած Հայաստանին, Երեւանին, հայ ժողովրդին...: Արգիլուեցին դրանք: Արգիլուեցին տեղական կինոէկրանների վրայ ցուցադրել Հայֆիլմի հայրենասիրական կինոնկարները: Պետական գործավարութիւնում հայերէն լեզուի փոխարէն օգտագործւում էր «տեղական լեզու» դարձուածքը, «հայ» կամ «հայկական» բառերը մերժուեցին: Հայաստանում կրթութիւն ստացած մասնագէտների նկատմամբ կասկածամտօրէն էին վերաբերւում, չէին վստահում: Ներքին կարգով, Գէորգովի անմիջական կարգադրութեամբ, արգիլուեց ժամանակակից նշանաւոր հայ գրողների... գրքերի վաճառքը: Արգիլուեց նաեւ «Հայրենիքի Ձայն» թերթի բաժանորդագրութիւնը, իսկ Հայաստանում հրատարակուող միւս թերթերի ու ամսագրերի բաժանորդագրութիւնը խիստ սահմանափակուեց: ...Վտանգաւոր էր յայտարարել, որ հարեւան շրջաններն ունեն տիպային մշակոյթի պալատներ, երաժշտական դպրոցի, արուեստի մանկական շէնքեր, գրադարաններ, ակումբներ, պատկերասրահներ, իսկ մեր քաղաքում այդ հիմնարկները տեղաւորուած են բնակելի տների նկուղներում կամ ոչ տիպային անյարմարաւէտ շէնքերում: Մեղադրում էին նրանց, ովքեր փորձում էին ասել, որ հիմա գիւղական վայրերում կան մշակոյթի կամ պիոներական պալատներ, տներ, իսկ մարզային կենտրոնը զուրկ է դրանցից, որ մարզական համալիրը 13 տարի առաջ սկսել են կառուցել, բայց առ այսօր նրա կիսահիմն պատերն են միայն երեւում»:

Այս ամենից յետոյ հասկանալի է ժամանակակցի եզրակացութիւնը. «Արցախցին համբերատար է: Համբերեց, համբերեց երկար, բայց երբ բաժակը լցուեց, այլեւս չդիմացաւ: Նա միանգամից պոռթկաց, վեր բարձրացաւ: Գիտէին, թէ կարող ենք տանել բոլոր կամայականութիւնները: Ինչքան լռում էինք, նրանք արագ էին գործում: Արցախցին իր լեռնցու խրոխտ ձայնով գոռաց աշխարհով մէկ»:

Արցախական աշխարհի «գոռոցը», որպէս անխուսափելի, անկասկած հաշուառուած էր Պաքուի գաղափարակենտրոնի համաթիւրքական-թուրանական համայնավար կուսակցապետի կողմից: Եւ սակայն նոյնքան անկասկած է, որ հաշուարկներում ճշգրտիւ չէին կանխատեսուած ո՛չ «գոռոցի» թնդութեան աստիճանը, ոչ էլ հզօրութիւնն այն

արձագանգի, որ «գոռոցը» գտնելու էր հայրենահայութեան հոգում։

Թնդութեան աստիճանն անկանխատեսելիօրէն բարձր եղաւ ինչպէս Թաթար մոլեկրոն ցեղապաշտների, այնպէս էլ նրանց մոսկովեան կնքահայրերի համար, քանի որ աւելի քան վեց տասնամեակ ձգուող տառապանքում արցախահայութիւնը, նաեւ նրա բարեկամները թէ չարակամները, չէին յուսացել, որ մարզային խորհուրդը կարող է վերածուել այն «արձագանգի արկղի», որի ձայնն արդէն շրջանցելի չէր ո՛չ «դիւանագիտական» խեղկատակութիւններով, ո՛չ վարչարարական կիսամիջոցներով, ոչ էլ, առաւել եւս, բռնամիջոցներով։

Եւ, հասկանալի է, Պաքուի գաղափարակիրներոնը, չեզոքացընելու համար Արցախի «գոռոցը», որին, հոգ չէ թէ ակամայ, պաշտօնապէս ձայնակցել էր մի ամբողջ հանրապետութեան՝ Հայկական ԽՍՀ-ի պետական իշխանութիւնը, պիտի դիմէր հնարաւոր եւ անհնարին բոլոր միջոցներին, որպէսզի քանի՛ դար Թաթարի գայլային դունչը ջարդած եւ միայն անգլիական գաղութարարների ու ստալինեան թիւրքապաշտների մեղսակցութեամբ Թաթարական ճիրանների մէջ ընկած Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը «չխլուէր» Ադրբէջանական ԽՍՀ-ից։

Այս ամէնի որպէս եզրակացութիւն հարկ է ասել հետեւեալը. Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիաւորման շարժման դէմ շուրջ երկու տասնամեակ ի վեր բացառիկ լարուածութեամբ ոգի ի բռին պայքարող Թաթար ազգայնական ղեկավարութիւնը, որ պրեժնեւեան ճահճացման տարիներին յանձին Հէյտար Ալիեւի գտել էր իր տարատեսակ աւազակային գործարքներին եւ «ազգային» նկրտումներին մոսկովեան բարձրաստիճանաւորների հովանաւորութիւնը միլիոնների օգնութեամբ գնելու յարմարագոյն միջնորդին, չէր կարող հենց բախտորոշ պահի՝ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի նախօրեակին չդիմել իր փորձուած աւանդոյթին։ Իսկ Թաթար ազգայնականութիւնը, որ քաջ գիտէր ղարաբաղեան իր Թղթածրարի փաստարկային փուճութիւնը, այնքան տխմար չէր, որ հայկական պատմական բռնացուած հողերից մի կարեւոր պատառ կորցնելու նուազագոյն հաւանականութիւնն իսկ կանխելու համար չդիմէր իր աւանդոյթին։ Եւ ինչպէ՞ս չդիմէր, երբ կային ե՛ւ ոսկին ու ադամանդները, ե՛ւ կաշառատուութեան գործում մասնագիտացած միջնորդ հնամեայ կեղծարար Հէյտար Ալիեւն ու նրա շնորհալի Թաթար սանիկները, ե՛ւ նրա կաշառատու հանգուցեալ քաւոր Լեոնիտ Պրեժնեւի բարձրաստիճանաւոր կենդանի աշակերտ–հետեւորդները։

Ի դէպ, դեռ 1988 Թ. Ապրիլի 5-ին, ուրեմն Դեմիրճեանի օրօք, այն ժամանակ, երբ Հայաստանի համայնավարների կուսակցապետը դեռ հարկադրուած չէր դերասանօրէն դիմակաւորել կրեմլահաճոյ իր հակառակամտութիւնը Ղարաբաղեան շարժման, Սիլվա Կապուտիկեանը, մեր գրողների դիմազուրկ փաղանգից առանձնացող եւ իրեն որպէս իսկական այր դրսեւորած հատուկէնտներից մէկը, «Գիտութեան, մշակոյթի եւ մամլոյ բոլոր ազնիւ գործիչներին» ուղղուած իր բաց նամակում գրում էր. «Գիտեմ նաեւ, որ մեզանից շատերը, չկարողանալով բացատրել կենտրոնական մարմինների բազմածաւալ կողմնա–

կալուածեան պատճառները, հակուած են մտածելու՝ թէ այստեղ էլ է կիրառուել անհրաժեշտ մարդկանց շահագրգռուածութիւնը բորբոքելու ամենազօր միջոցը, որի բարձրագոյն արտայայտութիւնը Պարսից տիրահռչակ արարողութիւնը եղաւ, երբ միլիոնաւոր հեռուստադիտողների ու ներկաների աչքի առաջ Պրեժնեւի, չգիտես ծերութիւնի՞ց թէ նորի ձեռքբերման հաճոյքի կանխավայելումից դողացող մատին աստղաչափական գնի ադամանդէ մատանի դրեցին։

Թաթարական աւանդոյթին Հայաստանն ի՞նչ կարող էր հակադրել։ Եթէ հաշուի չառնենք «վերակառուցման» երրորդ տարուայ վերջում Հայաստան վերադարձած վրացահայ նորընտիր առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեանի իսկական-կոմերիտականի «ազնիւ խօսքը» եւ հայկական պատուիրակների իրաւացի մարդու շիտակ համարձակութիւնը, ապա պիտի ասենք. Հայաստանը չէր կարող առճակատել թաթարական ամենազօր աւանդոյթի հետ։ Հայկական թղթածրարում մամոնան բացակայ էր։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ հայկական դատը երբեւէ իր յաջողութեան հեռանկարները չի առնչել մամոնայի զօրութեան հետ։ Այլեւ ու մանաւանդ այն պատճառով, որ Հայաստանի ստուերային գանձատունը դատարկ էր։ Նախկին անթագակիր արքայ Կ. Դէմիրճեանը խռոված հեռացել էր, իսկ նրա իշխաններն ու իշխանիկները, հակերը կիսակապած, հրաժեշտի իրենց ժամին էին սպասում, մրթմրթալով՝ «Մեզանից յետոյ թէկուզ ջրհեղեղ»...

Բոլոր դէպքերում շարունակենք հետեւել, թէ ինչպէ՞ս ընթացաւ Ղարաբաղեան կանխորոշուած հարցի մոսկովեան «քննարկումը»։

## Գ.

Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարները, հայրենի ժողովրդի անմարդկային կեղեքման, նրան անասելի յետամնացութեան, նուաստացման, թշուառութեան ու զրկանքների մատնելու գնով իրենց կուտակած ու որմնախորշերի մէջ հորած բազմամիլիոն միլիոններից ոչ միայն համապատասխան չափի բաժին չհանեցին Կրեմլը մեր արդարացի դատի հանդէպ անզգայացրած բոյարներին, այլեւ տարիներ շարունակ փաստօրէն մեղսակցեցին Արցախն ազգայնօրէն դիմազրկելով այդ դատն անբովանդակ դարձնել ու չքացնել ջանացող թաթար բարձրաստիճանաւոր համաթիւրքական-թուրանականներին։

«Հայաստանի ղեկավարներ»ն, այստեղ, որպէս հաւաքական կերպար, խորհրդանշական իմաստ են, հետեւաբար շատ ընդհանուր։ Եւ եթէ հաւատարիմ մնայինք խորհրդային հրապարակախօսութեան կանոնակարգին, ապա պարտաւոր էինք մասնաւորել. «Հայաստանի նախկին ղեկավարները»։ Բայց հենց դա էլ չենք կարողանում անել։ Եւ ահա, թէ ինչո՛ւ։

Ճիշտ է, նախկին կուսակցապետ Դէմիրճեանը գնացել էր ու մինչեւ Յուլիս նրա շքախմբից մէկուկէս-երկու մարդ էլ գուցէ թէ գնացել էր նրա ետեւից, եկել էր նոր կուսակցապետ Յարութիւնեանը ու մինչեւ Յուլիս մի քանի նոր դէմքեր, թիւրիմացութեամբ այլուր ընկած կոչումով



Երեւան, 1988 թուի Փետրուարի 23· Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի պալատի՝ դէմիրճեանական ղեկավարութեան «վերջին ապաստանարան»ի մուտքը գրաւուած է հայրենի ցուցարարների կողմից

կուսակցական գործիչներ, յայտնուել էին նրա շրջապատում։ Եւ սակայն մամուլով թմբկահարուող «Հայաստանի նոր ղեկավարութիւն»ը առասպել էր, քանի որ իրականում կար նախկին ղեկավարութեան միջավայրից բարձրացած նոր ղեկավար, իսկ որպէս «ղեկավարութիւն» տեղում մնում էր հին ղեկավարի «արքայական ամբողջ շքախումբ»ը։ Ի բաց առեալ այն փէշը, որ Կենտկոմի առաջին քարտուղարին անմիջականօրէն մատչելի-հասանելի էր սեփական հինգ զգայարաններով, նաեւ այն, ինչ մատչելի-հասանելի էր նորին առաջին քարտուղարութեան քարտուղարին, այլ խօսքով Հայաստանը համարեա ամբողջութեամբ եւ հայկական ամէն-ամէն ինչ շարունակում էր առնչուած մնալ «հին ղեկավարութիւն» հասկացութեան հետ։ Այդ թւում՝ մանաւանդ արցախական պահանջատիրութեան առարկան. Լեռնային Ղարաբաղի Հայաստանին վերամիաւորման հարցը։ Ջէ՞ որ ոչ ոք չէր լսել, որ նոր ղեկավարը, Հայկական ԽՍՀ Նախարարաց խորհրդի նախագահի նախկին առաջին տեղակալը, Փետրուարից մինչեւ նոր պաշտօնի նշանակումը տուեալ հարցում այլ դիրքորոշում ունեցած լինէր, քան՝ դէմիրճեանական շքախումբը։ Ընդհակառակը։

Եւ ի՞նչն էր վատը, տագնապահարողը։ Խորհրդային Միութիւնում «վերակառուցում»ը շուրջ երեք տարեկան էր արդէն եւ շուրջ երկու տարուց ի վեր հայկական միջավայրում խօսւում էր այն մասին, որ Միխայիլ Սերգէեւիչը ուր որ է Երեւանին նոր ղեկավար է շնորհելու՝ Հայաստանում էլ «վերակառուցում» սկսելու համար։ Ըստ որում խօսւում էր յանուանէ. Միխայիլ Սերգէեւիչը կա՛մ ուղարկելու է իր ճահելութեան ընկեր Մարգարեանցին, կամ էլ նշանակելու է տեղի ղեկավարներից առաւել ամբասիրին՝ Յարութիւնեանին։ Աշխարհի ամենից լաւատեղեակ եւ արագահաղորդ լրատուական գործակալութիւնը՝ ժողովուրդը («հասարակական կարծիքը») չէր սխալւում։ Բայց ահա վերեւներում սխալուելով սխալւում էին. նշանակումը ձգձգում էին։ Դէմիրճեանին խնայելու պատճա՞ռ ունենալով։ Ինչ որ մէկի՞ն անսալով։ Յամենայն դէպս, ձգձգումն ի վնաս Հայաստանի եւ հայ ժողովրդի էր։ Սակայն նաեւ՝ անպայման ու մանաւանդ նշանակելի նոր ղեկավարին։

Եթէ նշանակումը տեղի ունենար մինչեւ 1988 թուի Փետրուարի 19-ի կէս գիշերը, նոր ղեկավարը կը լինէր «վերակառուցման» առաքեալը։ Անհրաժեշտագոյն մարդը։ Եւ հայրենահայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը համախմբուէր նրա շուրջ։ Եւ Հայաստանը գուցէ թէ ոտք կը դնէր մարդկանց շարքն անցնելու ճանապարհի վրայ։ Առաւել կարեւորը՝ այդ դէպքում Փետրուարի 20-ից այլ իրադրութիւն ակնկալելի հնարաւոր կը դառնար։ Փետրուարի 20-ից յետոյ, «վերակառուցման» առաքեալն ինչքան էլ որ ցանկալի դէմք լինէր, կենսականօրէն անհրաժեշտ արդէն արցախական-պահանջատիրական առաքեալն էր։ Հայաստանի կուսակցական կազմակերպութեան եւ հայկական պետութեան նոր ղեկավար՝ անշո՛ւշտ, բայց մանաւա՛նդ հայ ժողովրդի ղեկավար՝ սրանից բխող ամէն-ամէն բանով։ Քաղաքական մի գործիչ, որ լինէր «կոմիտէական»՝ բառիս ե՛ւ իսկական, ե՛ւ փոխաբերական, ու լաւագո՛յն իմաստով։ Գործիչ, որ կանգնէր Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի ուղղակի գլխին, որ ամբողջ հոգով ու սրտով,

այլ ոչ երբեք դիւանագիտական ու ռազմավարական նկատառումներով, լինէր Ղարաբաղեան շարժման մարդը: Քանզի վերջին 67–68 տարիներին հայ ժողովուրդը երբեւէ չէր կանգնել այնպիսի ճակատագրական իրադրութեան, ուղղակի խառնիճաղանճի առաջ, ինչպէս Փետրուարի 20-ից յետոյ: Եւ այդ իրադրութեան մէջ ներհայկական կեանքում դիւանագիտական խաղերը խառնիճաղանճը քաոսի փոխակերպող եւ դէպի աղէտ տանող գլխաւոր ազդակն էին:

Առանց ներհայկական դիւանագիտական խաղերին, պահանջատիրական առաքել նոր քարտուղարով հանդերձ, Յուլիսի 18-ին արդիւնքը կարող էր նոյնը լինել: Կամ՝ մօտաւորապէս նոյնը: Մոսկովեան երթի արդիւնքի մասին է խօսքը:

Սակայն տանը արդիւնքն այլ կը լինէր: Աւելի շուտ՝ արդիւնքին հետեւանքը:

Եւ քանի որ դիւանագիտութիւն էր խաղացւում, ապա Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարները, նոր ղեկավարով հանդերձ, Կրեմլի յուլիսեան մրցասպարէզ ներկայացան բառիս բուն իմաստով վառօդագուրկ, բացայայտօրէն անպիտան մի զէնքով՝ խորհրդային սահմանադրութեան 70-րդ փուճ յօդուածը չայական:

Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում Հայութեան արդարացի ակնկալութիւնները գերեզմանափոս գլորելու գործում հիմնական լծակի դերը վերապահուած էր խորհրդային սահմանադրութեան 78-րդ յօդուածին, որն այսպիսին է. «Միութենական հանրապետութեան հողատարածքը չի կարող փոխուել առանց նրա համաձայնութեան: Միութենական հանրապետութիւնների միջեւ սահմանները կարող են փոփոխուել համապատասխան հանրապետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, որը ենթակայ է ԽՍՀ Միութեան հաստատմանը»:

Առաջ գնալուց առաջ կարեւորութեամբ ընդգծենք, որ Խ. Միութիւնն ունեցել է սահմանադրութիւն, սակայն փաստօրէն մինչեւ երէկ չի եղել եւ այսօր իսկ դեռ չէ բառիս բուն իմաստով սահմանադրական, այլ խօսքով Օրէնքի-Իրաւունքի պետութիւն: Խորհրդային սահմանադրութեան ոչ թէ գործնական անշեղ կիրառութեան հիմնական օրէնք, այլ հանդիսաւորապէս հռչակուող ու մեծ մասամբ թղթի վրայ էլ մնացող բարձր ու վեհ սկզբունքների մի բաւականին վատ խմբագրուած եւ մինչեւ վերջին ստորակէտը չճշտորոշուած ժողովածու լինելը կարելի է հաստատել այն փաստով իսկ, որ տարբեր յօդուածներ ըստ էութեան պարունակում են գոնէ երանգներով միմեանց հակոտնեայ ու իրարամերժ դրոյթներ, բազմաթիւ հարցերում տարտամ եւ տարընթերցումների տեղիք տուող շարադրանք: Հենց մէջբերուած 78-րդ յօդուածում, օրինակ, ի՞նչ է նշանակում «հանրապետութեան համաձայնութիւնը». սահմանների փոփոխութեան իրաւասութիւնը տեսականօրէն տուեալ հանրապետութեան բարձրագոյն իշխանութիւնը հանդիսացող Գերագոյն Խորհրդի՞ն է պատկանում, արդեօք, թէ գործնականում գերագոյն իշխանութիւնը հանդիսացող հանրապետական կուսակցական կազմակերպութեան կենտրոնական կոմիտէին: Եւ յետոյ, եթէ պատկանում է Գերագոյն Խորհրդին, ապա նրա բացարձակապէս ձեւական բնոյթ կրող

նստաշրջանների միջեւ ընկած ժամանակաշրջաններում Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը (որը՝ հաւանականօրէն ընդհանուր գումարման եւ տեսականօրէն հասարակութեան առաջ դռնբաց խորհրդարանից շատ աւելի հեշտութեամբ կուսակցութեան կարգադրութեան առաջ լուռ ու մունջ ծնկւող եւ որպէս կանոն դռնփակ գումարւող մի մարմին է) իրաւասո՞ւ է, արդեօք, սահմանների փոփոխութեան հարց վճռելու, իսկ եթէ պատկանում է կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին, ապա վերջինս իր լրիւ կազմո՞վ, թէ բիւրոյով իրաւասու է նման հարց լուծելու։

Հարցերի այս շարքը, անտեղի չլինելով, նաեւ բնաւ էլ պատահական չէ, քանի որ ինչպէս միւս բոլոր հանրապետութիւնների, այնպէս էլ Հայկականի կեանքում կուսակցութեան առաջատար դերի եւ իշխանութեան ոլորտում Գերագոյն Խորհրդի վճռորոշ տեղի վերաբերեալ յօդուածների անշաղկապութեան հետեւանքով յաճախ են առաջանում իրադրութիւններ, որոնք թէկուզ տարրական մտածողութեան տէր ամէն մի մարդու աչքերը ճակատը կը թռցնեն։ 1988 թ. Հոկտեմբերի 13-ին, օրինակ, գումարուել է Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի նիստ, որի վերաբերեալ մամուլում լոյս տեսած պաշտօնական հաղորդագրութեան մէջ կարդում ենք. «Կադրերի ընտրութեան կուսակցութեան սկզբունքների կոպիտ խախտումների, աշխատաւորների գաղափարաբարոյական դաստիարակութեան էական թուլացման, կուսակցական-քաղաքական աշխատանքի վերակառուցման գործի անբաւարար ղեկավարման, սոցիալ-տնտեսական զարգացման ասպարէզում եղած լուրջ թերութիւնների համար, որը յանգեցրել է շրջանում անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման, կուսակցութեան Թալինի շրջկոմի առաջին քարտուղար Ս.Գ. Մանուկեանին յայտարարուած է խիստ նկատողութիւն, գրանցելով հաշուառման քարտում։ Աննպատակայարմար է համարուած նրա հետագայ գտնուելը առաջին քարտուղարի պաշտօնում»։

Հաղորդագրութեան համայնավարի շարադրանքը եթէ վերածենք հայավարի շարադրանքի, ապա կը ստացուի հետեւեալը. Հայաստանի Թալինի գաւառակի կուսակցապետ Մանուկեանը, որ պաշտօնի բերմամբ աւատապետական միջնադարին վայել մի իսկական ամենազօր իշխան է եղել իրեն վստահուած (աւելի շուտ անկասկած մի խոշորագումար կաշառքով իրեն ժամանակաւորապէս վաճառուած) շրջանում, թալանել-քայքայել ու կործանման եզրին է հասցրել գաւառակը, իսկ Հայաստանի գերհզօր Կենտրոնական կոմիտէն, որտեղից քշուած է Մանուկեանի նախկին տէրը՝ առաջին քարտուղար Դէմիրճեանը, բաւարարւում է պարզապէս նրա ականջները քաշելով («յայտարարուած է խիստ նկատողութիւն») եւ Թալինի կուսակցական կազմակերպութեանը քաղաքավարօրէն հասկացնելով, որ նրան պաշտօնանկ անի («աննպատակայարմար է համարուած»)։ Ի միջի այլոց, Կենտրոնական կոմիտէի բիւրոն ձեւականօրէն ճիշտ է վարուել, քանի որ, նախ, դատական իրաւասութիւն չունենալով, ըստ օրինի չէր կարող Մանուկեանին, որպէս քրէական յանցագործի եւ հակախորհրդային չարագործի, գնդակահարութեան կամ ցկեանս բանտարկութեան դատապարտել, եւ ապա, որպէսզի իր որոշումն անառարկելի դառնար, պէտք է

յարգուէր կուսակցական «դեմոկրատիան»։ Մանուկեանին ընտրել է Թալինի շրջանային կոմիտէն եւ պաշտօնանկելու իրաւունքն էլ նրան է պատկանում։ Ի դէպ, հենց այդպէս էլ եղել է. բիւրոյի նիստի վերաբերեալ հաղորդագրութիւնից բացի թերթերը, ճիշտ է՝ մի այլ էջում, հրատարակել են Թալինի շրջկոմի լիագումար ժողովի շուրջ մի հաղորդում, որում նշուած էր. «Պլենումը աշխատանքում թոյլ տուած լուրջ թերութիւնների համար Ս.Գ. Մանուկեանին ազատեց կուսակցական շրջկոմի առաջին քարտուղարի պարտականութիւններից»։

Հայաստանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի բիւրոյի նիստի վերաբերեալ նոյն հաղորդագրութեան մէջ նաեւ ասուած էր. «Բիւրոն Ս.Ա. Օսիպեանին ազատեց Հայկական ԽՍՀ դատախազի պարտականութիւններից։ Որոշում ընդունուեց նրան ուղարկել Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի տրամադրութեան տակ։ Բիւրոն Ա.Ս. Դադայեանին ազատեց Հայկական ԽՍՀ արդարադատութեան նախարարի պարտականութիւններից՝ կենսաթոշակի անցնելու կապակցութեամբ։ Բիւրոն Հ.Բ. Միրզոյեանին ազատեց Հայկական ԽՍՀ կապի նախարարի պարտականութիւններից՝ կենսաթոշակի անցնելու կապակցութեամբ»։

Սա ի՞նչ բան է, կը մտածի ընթերցողը։ Եւ նրա շփոթութիւնն անտեղի չի լինի։ Կուսակցական չարագործ մի ղեկավարի իր պաշտօնից ազատելու հարցում «դեմոկրատական» կարգընթացն ու քաղաքավարութեան կանոնները յարգող եւ նախաձեռնութիւնն իր վրայ չվերցնող կուսակցական բիւրոն այդ ինչո՞ւ է ինքը վճռականօրէն ազատել, այլ խօսքով իրենց պաշտօնից հեռացրել Նախարարաց խորհրդի երկու անդամների, որոնք, ըստ հաղորդագրութեան, ոչ մի չարագործութիւն չեն կատարել ու պարզապէս ծերացած լինելով թոշակի են անցնելու, նաեւ Հայաստանի գլխաւոր դատախազին, որը, դարձեալ ըստ հաղորդագրութեան, ոչ մի չարագործութիւն չի կատարել ու պարզապէս իր ծանր աշխատանքից սպառուած լինելով՝ տեղափոխուելու է մի այլ աշխատանքի։ Այդ երբուանի՞ց կուսակցական բիւրոն նոյնացել է հանրապետութեան խորհրդարանի, թէկուզ նրա ղեկավար կորիզի՝ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան հետ եւ իրաւասու դարձել պաշտօնանկելու Գերագոյն Խորհրդի կողմից նշանակուած եւ նրա Նախագահութեան յատուկ հրամանագրով հաստատում ստացած երկու նախարարների եւ գլխաւոր դատախազի։

Հարկ է անմիջապէս նշել, որ բիւրոյի նիստի վերաբերեալ հաղորդագրութիւնից բացի թերթերի նոյն համարում, թէկուզ եւ մի այլ էջում, հրապարակուել էր նաեւ «Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնում» հաղորդումը, որում ասուած էր. «Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը ընկեր Աշոտ Սարուխանի Դադայեանին ազատել է Հայկական ԽՍՀ արդարադատութեան նախարարի պաշտօնից՝ կենսաթոշակի անցնելու կապակցութեամբ։ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը ընկեր Հայրիկօ Միրզոյեանին ազատել է Հայկական ԽՍՀ կապի նախարարի պաշտօնից՝ կենսաթոշակի անցնելու կապակցութեամբ»։ Եւ սակայն չի կարելի փախուստ տալ էական մի հարցից։ Հայաստանի կառավարութեան անդամ երկու նախարարների

ո՞վ է ազատել իրենց պաշտօնից. Հայաստանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի բիւրո՞ն, թէ՝ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը։ Եթէ երկուսն էլ ազատել են, ապա ո՞վ է առաջինն ազատել, ո՞վ է գերագահը նախարարների իրենց աթոռից ցած բերելու հարցում։ Ինչքանո՞վ է սահմանադրական մէկ հանրապետութեան ուսի վրայ երկու գլուխների, թէկուզ համազօր գլուխների առկայութիւնը։ Վերջապէս՝ Հայաստանի անմեղ-հրեշտակ դատախազն իր պաշտօնից ազատուա՞ծ է, թէ ոչ (ըստ բիւրոյի հաղորդագրութեան՝ ազատուած է, իսկ ըստ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան հաղորդման լրութեան՝ ազատուած չէ...)։

Բոլոր դէպքերում, խորհրդային սահմանադրութեան ընդհանուր տարօրինակութիւններից անկախաբար, մեզ այստեղ առանձնապէս զբաղեցնելու են սահմանադրութեան 78-րդ յօդուածի մասնաւոր տարօրինակութիւնները, գերտարօրինակութիւնները։

Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում, ինչպէս եւ կարելի էր ակնկալել, ատրպատականեան թաթարների հանրապետութեան նախագահ Ս.Գ. Թաթլիեւն ինքը հրապարակ հանեց 78-րդ յօդուածի փաստարկը, սակայն փաստօրէն իր ելոյթում այն սոսկ թռուցիկ յիշատակելով. «Այս տարուայ Փետրուարին (Լեռնային Ղարաբաղի)մարզային խորհրդի երեսփոխանները անիրաւականօրէն հարց դրեցին մարզը միութենական մի հանրապետութեան կազմից միւսի կազմի մէջ փոխադրելու մասին։ Անիրաւականօրէն, քանի որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին օրէնքով, որն ընդունուել է 1981 թուականին հենց իր՝ մարզային խորհրդի ներկայացմամբ, նրան այդպիսի իրաւունք չի վերապահւում։ Ասես խրախուսելով այդ անօրինական գործողութիւնները, Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը որոշում է ընդունում, որի էութիւնը մէկ այլ խորհրդային միութենական հանրապետութեան տարածքի, Ատրպէյճանական ԽՍՀ վարչատարածքային կառուցուածքի վերաձեւման յաւակնութիւն է։ Դրանով իսկ անտեսւում է Խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների միութեան սահմանադրութեան 78-րդ յօդուածը»։

Ռուսաստանեան Դաշնակցային Հանրապետութեան Նախագահ Օրլովը, որ մտքերի փոխանակութեան ժամանակ առաջին ձայն խնդրողն էր եղել, թաթարական տեսակէտի օգտին ծանր հրետանու դեր կատարելով՝ առաջինն էլ 78-րդ յօդուածը վերածեց «ամենազօր» արկի, յայտարարելով. «Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանի կազմից Հայաստանի կազմը փոխանցելու հարցի լուծման խնդրանքով ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդին դիմելը, առանց Ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի համաձայնութեան, հակասում է սահմանադրութեանը։ Չէ՞ որ թէ՛ 1924 թուականի, թէ՛ 1936 թուականի, թէ՛ 1977 թուականի, որով մենք առաջնորդւում ենք, սահմանադրութիւններում ըստ էութեան միեւնոյն գրառուած է այն մասին, որ միութենական հանրապետութեան հողատարածքը չի կարող փոխուել առանց նրա համաձայնութեան։ Միութենական հանրապետութիւնների միջեւ անցնող սահմանները կարող են փոխուել համապատասխան սոցիալիստական հանրապետութիւնների

փոխադարձ համաձայնությամբ, որոնք ենթակա են Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության հաստատմանը։ Այդ սկզբունքը համաժողովրդական պաշտպանության էր արժանացել սահմանադրության նախագիծը քննարկելիս, այդ թվում նաև Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատավորների կողմից։ Այն, ըստ էության, բոլոր միութենական հանրապետությունների իրավահավասարության և ինքնիշխանության այսօրվա կարևորագույն երաշխիքներից մեկն է։ Կարծում եմ, որ այստեղ մենք բախվել ենք դեմոկրատիայի իրավունքները հակադեմոկրատական, հակասահմանադրական նպատակներով օգտագործելու փորձի։ Դեմոկրատիայի նման չարաշահումները արմատապես հակասում են այսօրվա խնդիրներին, վերակառուցման խնդիրներին, հակասում են խորհրդային ժողովրդի շահերին»։

Հատկանշական է, որ Օրլովը, անկախ Մոսկվայում ալիևական մեկենասությամբ ուժեղացած թաթարասիրական տրամադրություններից, 78-րդ հոդվածը տարփողում էր առաջին հերթին որպես Ռուսաստանի Դաշնակցության անդամահատման ապագայ որևէ փորձի դեմ ամրակուռ վահան։ Բայց ահա Ուկրաինայի կուսակցապետ Շչերբիցկին, որ թվում է թե օրլովյան այդ նկատառումներից ձերբազատ, կարող էր իր ելույթում շրջանցել խնդրո առարկա հոդվածը, նույնպես վկայակոչում էր այն, թեպետ և թեթևակի վերապահությամբ. «Յայտնի է, որ սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն, այս մասին արդեն այսօր ասվեց, միութենական հանրապետությունների միջև սահմանները կարող են փոփոխվել միայն նրանց փոխադարձ համաձայնությամբ։ Այժմ այդպիսի համաձայնություն չկայ։ Ուստի սահմանադրության դրույթը թե՛ կողմնորոշիչ է, թե՛ հիմք որոշման ընդունման համար։ Ելնելով ներկայումս գործող օրենքներից, ինձ անհնարին է թվում, ինչպես որ դա առաջարկվում է նշել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության որոշման նախագծում, որոշում ընդունել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրավիճակի փոփոխման մասին»։

Ինչպես և սպասելի էր, հոգու խորքում Ռուսաստանի հողատարածքային անձեռնմխելիության շահերից եռևեփող ռուս այնպիսի մի պատասխանատու գործիչ, ինչպիսին Մոսկվայի կուսակցական քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Ն. Զայկովն էր, 78-րդ հոդվածի «իրավաբանական» արկը օրլովյան ծանրակշռությամբ էր օգտագործելու. «Հարցն այնպես չի դրված, թե իբր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության որոշումից է կախված միութենական հանրապետությունների սահմանների փոփոխումը կամ կենտրոնական իշխանության Լեռնային Ղարաբաղի անմիջական ենթարկումը։ Հարցն այն է, թե մենք դրա սահմանադրական իրավունք ունե՞նք, թե՞ ոչ։ Յայտնի է, որ ԽՍՀՄ սահմանադրության 78-րդ հոդվածը և հանրապետական սահմանադրությունների համապատասխան հոդվածները նախատեսում են, որ միութենական հանրապետությունների հողատարածքը չի կարող փոփոխվել առանց նրանց համաձայնության։ Հնչում են կոչեր. եկեք, իբր, ձևի յետևից չընկնենք և վերանայենք ԽՍՀՄ սահմանադրության դրույթները միութենական հանրապետությունների սահ-

մանների փոփոխման կարգի մասին։ Սա պարզունակ մոտեցում է։ Սահմանների անխախտութիւնը իւրաքանչիւր միութենական հանրապետութեան եւ ամբողջութեամբ վերցրած ԽՍՀՄ-ի գերիշխան իրաւունքն է։ ԽՍՀՄ սահմանադրութիւնը հնարաւորութիւն չի տալիս բաւարարել նաեւ ինքնավար մարզը ուղղակիօրէն իշխանութեան բարձրագոյն մարմիններին եւ ԽՍՀՄ կառավարութեանը ենթարկելու խնդրանքը։ Ինքնավար հանրապետութիւններն ու մարզերը մտնում են այս կամ այն միութենական հանրապետութեան կազմի մէջ եւ ուստի չեն կարող ժամանակաւորապէս կամ ընդմիշտ հանուել նրա ենթակայութիւնից։ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մէջ փոխանցելու անհրաժեշտութեան հիմնաւորման համար յաճախ խօսում են ազգերի ինքնորոշման մասին։ Լեռնային Ղարաբաղի աշխատաւորները 1923 թուականին Ատրպէյճանի կազմի մէջ ինքնավար մարզի իրաւիճակ ստացան այդ շրջանի հայ բնակչութեան կամքի կամաւոր արտայայտման միջոցով։ Ուրեմն օրինաչա՞փ բան է արդեօք հիմա այդ սահմանադրական որոշումը փոխելը։ Ոչ, անօրինաչափ է։ Սահմանների վերաձեւման ամէն մի նախադէպ յղի է կործանարար, անկանխատեսելի հետեւանքներով։ Թէ՛ Մոսկուայում, թէ՛ Բաքւում, թէ՛ Ստեփանակերտում հարկաւոր է հանդէս բերել զսպուածութիւն, համբերութիւն եւ իմաստութիւն։ Պետութեան ամբողջ իշխանութեամբ, մեր տրամադրութեան տակ եղած տնտեսական, քաղաքական եւ քարոզչական բոլոր միջոցներով մենք պէտք է վերջ դնենք այդ ձգձգուած անխոհեմ իրաւիճակին, Հայաստանի եւ Ատրպէյճանի մեր եղբայրներին վերադարձնենք աշխատանքի, բնականոն բարիդրացիական կեանքի»։

Եթէ դառնալու լինենք Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի սղագրութիւնից, ապա մեր հերթին կարող ենք արձանագրել, որ այնպէս, ինչպէս 78-րդ յօդուածը գլխաւոր արկն էր արցախահայութեան ազգային ըղձանքների դէմ շղթայազերծուած գրոհի, այնպէս էլ Լ.Ն. Զայկովն ինքը գլխաւոր հրանօթն էր Անտրէ Կրոմիկոյի խմբի կանխօրօք նախապատրաստուած հակահայկական արշաւանքի։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ նրա ելոյթում կիրքն ու մաղձը այն աստիճան վատ էին քօղարկուած, որ համարեա լսելի էր ճառախօսի ատամների սարքաշարի կճրտոցը։ Այլեւ ու մանաւանդ այն պատճառով, որ նա, ի տարբերութիւն այլոց, հակահայկական ճառախօսական մարզանքի էր դուրս եկել ոչ միայն 78-րդ յօդուածի պարսատիկով, այլեւ իր կապարճի միւս՝ թունաւորուած բոլոր նետերով։ Ըստ որում նա իր «որսի»՝ հայ ժողովրդի ազգային արդարացի պահանջի դէմ քայլում էր յաջողութեան կանխորոշուածութեան հարցում մի այնպիսի ինքնավստահութեամբ, որ նետերի ու դրանց օգտագործման եղանակի մէջ խտրութիւն չէր դնում։ Բաւական է մատնանշել այն իրողութիւնը, որ Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիաւորման անհնարինութեան ժամկէտը սահմանելով «յաւիտեանս յաւիտենից», նա անհոգի դաժանութեամբ բութ դանակով վերաբացում էր հայութեան հին, այլ տեւապէս կոտտացող վէրքը, պնդելով, որ իբր Լեռնային Ղարաբաղն Ատրպէյճանի կազմում է ընդգրկուել եւ ինքնավարութիւն ստացել իր «ազատ» կամայայտութեամբ։ Էլ չենք խօսում այն մասին, որ Լ.Ն. Զայկովը

փաստորէն նաեւ չէր թաքցնում սուր ու շանթաժի նկատմամբ իր հակումները, երբ խորհրդային հանրապետութիւնների միջեւ սահմանների վերափոխումները աննախադէպ էր յայտարարում եւ Հայութեան ձեռնարկումը բնութագրելով որպէս այդ ասպարէզում առաջին աննախընթաց քայլ, այդ «նախադէպն» էլ չարագուժօրէն ներկայացնում էր որպէս «կործանարար, անկանխատեսելի հետեւանքներով յղի»: Այս բոլորից յետոյ մի՞թէ փարիսեցիական կեղծաւորութեան դասական մի օրինակ չէին Լ.Ն. Զայկովի վերջին՝ հայերին իրեն «եղբայրներ» յայտարարող խօսքերը եւ մի՞թէ տեղին չի լինի ասել. հայ ժողովրդին թող աստուած պահի ու պահպանի գայլերի տիպի «եղբայրներից»:

Ղարաբաղեան տագնապի սրման ժամանակաշրջանում առաւել յաճախ զրոյցների ու քննարկումների առարկայ դարձած 78-րդ յօդուածն, իրականում, եթէ այն քննարկենք Արցախի շուրջ բարձրացած թոհ ու բոհից վերացարկուած, ըստ ինքեան ոչ միայն անբնականոն ոչինչ ունի, այլեւ յատկապէս իր առաջին դրոյթով նոյնիսկ դրական բովանդակութեան է: Չէ՞ որ «միութենական հանրապետութեան հողատարածքը չի կարող փոփոխուել առանց նրա համաձայնութեան» բանաձեւը, ըստ էութեան, Խ. Միութեան մաս կազմող ամէն մի հանրապետութեան հողային անձեռնմխելիութեան եւ ազգային սահմանների անսասանութեան, իր հայրենիքի կայուն հողատարածքի շրջանակներում իւրաքանչիւր ժողովրդի ազատ ինքնորոշման եւ այդ տարածքի նկատմամբ գերիշխան իրաւունքի անխախտ երաշխիքն է, կենտրոնական գերագոյն տարազգային իշխանութիւնների՝ առանձին հանրապետութիւնների հողատարածքի բացարձակ իրաւատէր այս կամ այն ժողովրդի ինքնորոշման իրաւունքն ու ազգային գերիշխանութիւնը կամայականօրէն խախտելով հողային վերաձեւումներ կատարելու, կամ չարամիտ ամէն մի հարեւանի, խորհրդային լինի թէ ոչ, ծաւալողական ոտնձգութեան դիմելու ամէն մի փորձի դէմ անանցանելի խոչընդոտ: 1924 թուի սահմանադրութիւնից յաջորդներին՝ «ստալինեան» եւ «պրեժնեւեան» հիմնական օրէնքներին անփոփոխ փոխանցուած 78-րդ յօդուածի այդ դրոյթը մեզ՝ հայերիս համար, յատկապէս, ամուր ու կայուն ամպհովանի է 1921 թուականի Նախիջեւանն Ատրպէյճանին ընծայաբերող ռուս-թուրքական պայմանագրի նման մի նենգ գործարքի կրկնողութեան դէմ:

Եւ սակայն 78-րդ յօդուածը, անկախ այն հանգամանքից, որ ղարաբաղեան տագնապում անհիմն կերպով այլ յաջողապէս օգտագործուեց հայ ժողովրդի ազգային արդարացի ըղձանքի ու սահմանադրական կամայայտութեան դէմ, հայութեան համար, որպէս հողատարածքային հարցում բառիս բուն իմաստով բռնաբարուած-թալանուած ժողովրդի, միաժամանակ ունի երկու շատ էական ժխտական պահեր:

Ժխտական պահերից գլխաւորն այն է, որ 78-րդ յօդուածն իր երկրորդ դրոյթով հայ ժողովրդի առաջ տեսականօրէն թէ գործնականօրէն փակում է սահմանակից երկու հանրապետութիւնների, նախ՝ Ատրպէյճանի կողմից (բացի Լեռնային Ղարաբաղից ու Նախիջեւանից) իւրացուած, ապա եւ Վրաստանի կողմից սեփականացուած եւ այդ հանրապետութիւնների կազմում էլ Խ. Միութեան մէջ մուծուած իր

պատմական հողատարածքներին վերատիրելու ամէն մի դուռ, որովհետեւ պարզապէս մանկամտութիւն կը լինի ակնկալել, որ թաթարական թէ վրացական ազգայնականութիւնները երբեւէ այնքան արդարամիտ ու վեհանձն կը գտնեն, որ կը համաձայնուեն կամովին իր բուն իրաւատիրոջը վերադարձնել Մեծ Եղեռնից հոգեվարքի մատնուած մի ժողովրդից իրենց չափազանց հեշտ կորզած, մարսած ու մարդկանց կողմից ներկայումս նոյնիսկ չյիշատակուող ընդարձակ հողատարածութիւնները:

Եթէ, սակայն, հայ ժողովրդի հայրենի հողատարածքի համընդհանրական վերահամախմբումը չի կարող իրականութիւն դառնալ այնքան ժամանակ, քանի դեռ Որոտման Որդւոց ահեղ կանչով չի հնչել Հայկի յետնորդների իսկական Յարութեան ժամը, երբ ոչ թէ միայն խորհրդային սահմանադրութեան 78-րդ յօդուածի, այլեւ ու մանաւանդ պատմութեան էջերում յայտանշուած միւս բոլոր՝ 18-րդ, 61-րդ եւ այլ յօդուածների կարիքը չի մնայ ընդհանրապէս, ապա Լեռնային Ղարաբաղի ու Նախիջեւանի եղերական ճակատագրերի սրբագրումն այսօրուայ այժմէական-անյետաձգելի գործ է: Եւ այստեղ է, որ մեր առաջ թու-նաւոր օձի նման ցցւում է 78-րդ յօդուածը՝ սահմանի փոփոխութեան վերաբերեալ իր երկրորդ դրոյթով:

Բանն այն է, որ 1917 թուի Հոկտեմբերից մինչեւ 1922 թուի Դեկտեմբերը նախկին ցարական կայսրութեան տարածքում Ռուսաստանեան դաշնակցութեան կողքին կազմաւորուած միւս՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբէյջանի, Հայաստանի եւ Վրաստանի խորհրդային հանրապետութիւնները, որոնց միաւորմամբ 1922 թուի վերջերին կազմաւորուեց Խորհրդային Միութիւնը, այնպէս էլ մինչեւ 1940 թուականը ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկուած իննը հանրապետութիւնները՝ միջին ասիականները, Մոլդաւիան եւ մերձբալթեանները, կոչուեցին 14 հիմնական ազգերի (թէկուզ սրանք ոչ թէ ազգ, այլ պարզապէս ցեղային խառնամուրճ էին) անունով՝ ուկրաինական, բելոռուսական, ադրբէյջանական, հայկական, մոլդաւական, թուրքմենական, ղազախական, ուզբեկական, կիրգիզական, տաճիկական, վրացական, լատվիական, լիտուական եւ էստոնական: Այն, որ Միութեան գլխաւոր անդամ ՌՍՖՍՀ-ն, միայն, ոչ թէ ռուս ազգի անունով ռուսական էր կոչւում, այլ մի երկրի՝ նախկին ցարական կայսրութեան անունով կոչւում էր ռուսաստանեան, այն էլ՝ դաշնակցային (ֆեդերացիւ), ըստ ինքեան յուշում էր այն մասին, որ միայն ու միայն Ռուսաստանի հողատարածքն էր, որ չէր հանդիսանում մէկ ու միակ ազգութեան (տուեալ դէպքում ռուս ժողովրդի) բացարձակ ու անբաժանելի սեփականութիւնը, իսկ միւս՝ տարբեր (իրապէս գո՛յ կամ յօրինուած) ազգերի անուամբ կոչուած 14 հանրապետութիւններից իւրաքանչիւրի ամբողջ հողատարածքը հանդիսանում էր որոշակի մի ազգութեան բացարձակ ու անկիսելի սեփականութիւնը:

Դա նշանակում էր, որ 78-րդ յօդուածի երկրորդ դրոյթում մատնանշուած սահմանային ամէն մի փոփոխութիւն խորհրդային 15 հանրապետութիւններից 14-ի դէպքում հոմանիշ էր դառնում առաջին դրոյթում յիշուող էապէս ազգային հողատարածքի վերաձեւման, մի

բան, որը յատկապէս ատրպէյճանական ու վրացական հանրապետութիւններում ինքնավար, հետեւաբար անուրանալիօրէն այլապատկան հողատարածքների առկայութեան պայմաններում, անհեթեթութիւն էր պարզապէս: Պէտք է չմոռանալ, որ 78-րդ յօդուածը, նաեւ միութենական ամէն մի հանրապետութեան Խորհրդային Միութեան կազմից ազատօրէն դուրս գալու իրաւունք վերապահող 72-րդ յօդուածը, մի դէպքում ուղղակի ու միւս դէպքում ակնարկով խօսելով միութենական հանրապետութիւնների հողատարածքների մասին ընդհանրապէս, չեն մասնաւորում ու չեշտում դրանց շրջանակներում ընդգրկուած ինքնավար հանրապետութիւնների ու մարզերի եւ ազգային օկրուգ-շրջանների հողատարածքների հարցը: Վերջիններիս վերաբերեալ որեւէ վերապահութիւն չպարունակող 78-րդ յօդուածից լռելեայն բխում է այն, որ միութենական որեւէ հանրապետութեան՝ որոշակի մի ժողովրդի ազգային հողատարածքը հանդիսացող տերիտորիայի մէջ հալւում-ձուլւում է ու նրա հետ նոյնականանում բացորոշապէս այլապատկան՝ տուեալ հանրապետութեան կազմի մէջ մտնող ինքնավար հանրապետութեան, ինքնավար մարզի կամ ազգային շրջանի բոլորովին այլ մի ժողովրդի պատկանող ազգային հողատարածքը:

78-րդ յօդուածում ամէն մի վերապահութեան անգոյութիւնը կրկնակի անհեթեթութիւն էր դարձնում այդ՝ Թուրքստանի դէպքում: Եւ իրօք, եթէ խօսքը մասնաւորենք հենց Թուրքստանեան միութենական դաշնակցային հանրապետութեան մասին, ապա պիտի տեսնենք, որ նրա կազմի մէջ մտնող «երկրորդակարգ» ազգային-պետական այն բոլոր կազմաւորումները, որոնք ընդհանուր սահման ունեն միութենական մի այլ հանրապետութեան հետ (Կարաչաեւ-Չերքեզական Ինքնավար Մարզն ու Կաբարդին-Բալկարական, Հիւսիս-Օսեթական եւ Չեչեն-Ինգուշական Ինքնավար Հանրապետութիւնները Վրաստանի հետ, Տաղստանի Ինքնավար Հանրապետութիւնը Վրաստանի եւ Ատրպէյճանի հետ, Լեռնային Ալթայի Ինքնավար Մարզը Ղազախստանի հետ), փաստօրէն լռելեայն զրկւում են իրենց սեփական հողատարածքի նկատմամբ գերիշխան իրաւունքից, քանի որ զրկուած են անմիջական հարեւան միութենական մի հանրապետութեան հետ իրենց սահմանագծի որեւէ փոփոխութեան հարց բարձրացնելու իրաւունքից. չէ՞ որ այդպիսի իրաւունքը, որեւէ վերապահութիւն չպարունակող 78-րդ յօդուածից բխող արտառոց տրամաբանութեան հիմամբ, ըստ էութեան պատկանում է ուրիշին՝ «բարեացակամօրէն» իրենց ընդգրկած Թուրքստանեան միութենական հանրապետութեանը, հետեւաբար եւ միութենական մի այլ հանրապետութեան հետ իրենց ընդհանուր սահմանի վերաբերեալ իրենց իսկ կողմից կնքուելիք որեւէ համաձայնութիւն մեկնաբանուելու է որպէս ԹԽՍՀ-ի սահմանի՝ առանց նրա համաձայնութեան հակասահմանադրական խախտում-փոփոխութիւն:

Եթէ դա կրկնակի անհեթեթութիւն էր դաշնակցային հանրապետութիւն, ուրեմն ռուսական ազգային հողատարածքի հետ այլազգային-այլապատկան հողաշերտեր ընդգրկող Թուրքստանի դէպքում, ապա դա եռակի ու քառակի անհեթեթութիւն էր ազգային այն հանրապետութիւնների, հետեւաբար իբր թէ միայն ու միայն ազգային

հողատարածքով շրջափակուող պետական կազմաւորումների դէպքում, որոնց սահմանների շրջանակներում կամայականօրէն ընդգրկուել են այլազգական «ինքնավար» տարածքներ։ Եւ փաստօրէն 78-րդ յօդուածի այդ արտառոց, ըստ էութեան ինքնավար մարզի ինքնորոշման իրաւունքը բռնաբարող տրամաբանութեան հիմամբ է, որ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում որպէս «հակասահմանադրական» մերժուեց Լեռնային Ղարաբաղի հայութեան կատարելապէս սահմանադրական որոշումը՝ վերամիաւորուելու իր Մայր Հայրենիքի հետ։ Արցախահայութեան արդարացի ըղձանքը ոտնատակ տալիս թէպէտ ոչ ոք առնականութիւնը չունեցաւ բացորոշապէս յայտարարելու, սակայն «միաձայն» քուէարկողները, այդ թւում եւ Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան նախագահը, լռելեայն հաւանած եղան Լեռնային Ղարաբաղի ինքնավարութեան պատրանք լինելը, մարզի հողատարածքի «ազգայնօրէն» ատրպէյճանական պատկանելիութեան «անառարկելիութիւնը»։ Հենց դրանով իսկ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում թէկուզ լռելեայն, այլ ամենայն պաշտօնականութեամբ ու հանդիսաւորութեամբ բացայայտուեց այն իրողութիւնը, որ Խ. Միութիւնում գոնէ ինքնավար մարզերի, ուրեմն եւ առաւել ստորակարգ ազգային շրջանների ինքնավարութիւնն ընդհանրապէս՝ հեռու հիմնաւոր եւ ուրեմն ըստ այդմ էլ գործնականում անշեղօրէն կիրառուող սկզբունք լինելուց, կրում է մաքուր ձեւական-յայտարարական բնոյթ, ուրեմն եւ պարզապէս առապատիր մի աչքակապութիւն է, խնդրոյ առարկայ հողատարածքների իրաւատէր ժողովուրդներին գաղջ ու գէջ թմբիրի մէջ պահելու, նաեւ ազգային հարցի լուծման խորհրդային եղանակի «իդէալականութիւնը» արտասահմանեան շուկաներում թմբկահարելու մի խաբեպատիր միջոց։ Նոյնիսկ եթէ մի պահ ենթադրենք, որ դա այդպէս չի եղել ի սկզբանէ անտի, ապա անպայման եւ անառարկելիօրէն այսօր այդպէս է համայնավար-խորհրդային մերօրեայ ղեկավարների համար. հնարաւոր չէ այսպիսի եզրայանգման չհակուել ու հակառակին հաւատալ՝ եթէ առարկայականօրէն ելնելու լինենք նրանց գործողութիւններից եւ այդ գործողութիւններն արդարացնելու համար կատարուող յայտարարութիւններից, յատկապէս Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում Լ.Ն. Զայկովի հետեւեալ խօսքերից. «Ինքնավար հանրապետութիւններն ու մարզերը մտնում են այս կամ այն միութենական հանրապետութեան կազմի մէջ եւ ուստի չեն կարող ժամանակաւորապէս կամ ընդմիշտ հանուել նրա ենթակայութիւնից»։

Խորհրդային մերօրեայ ղեկավարները մոռանում են, որ 1921 թուին Լեռնային Ղարաբաղին (իր ժամանակին նաեւ ինքնավար հռչակուող միւս մարզերին եւ ազգային շրջաններին) ինքնավարական գոյավիճակ է տրուել ոչ այն պատճառով, որ նրա հողատարածքում տուեալ պահին ազգաբնակչութեան մեծամասնութիւնը հայեր են եղել (ինչպէս եւ միւս կազմաւորումներում՝ ոչ այն պատճառով, որ կարաչաեւներն ու չերքեզները, նենեցները, կորեակները, հարաւային օսեթ-ալաններն ու միւսները թուականօրէն գերակշռել են), այլ՝ այն պատճառով, որ արցախահայութեան բնակութեան տարածքը պատմաազգայնօրէն պատկանել է իր տեղաբնիկ-հիմնական ազգաբնակչու-

թեանը եւ ոչ թէ այն ժողովրդին, որի միութենական հանրապետութեան հողաշերտի շրջանակներում կամայականօրէն ընդգրկուել է։

Այդ կարեւոր՝ ափոման ու բնակութեան տուեալ տարածքի նկատմամբ ազգային գերիշխան իրաւատիրութեան անառարկելիութիւնն է եղել այն հիմքը, որի վրայ խարսխուել է Լեռնային Ղարաբաղի հայկական մարզի ինքնավարութիւնը։ Հակառակ դէպքում հասկանալի չի լինի այն, որ ինչո՞ւ պատմութեան քառուղիներում երբեւէ ազգային պետականութիւն չունեցած դրսեկ քոչուոր ատրպատականեան թաթարների առաջին՝ մուսավաթական սարքովի հանրապետութեան ու նրա ժառանգորդ Խորհրդային Ադրբեջանի հողատարածքում հայերի հնամրոխ ափոման ու բնակութեան օճախ հանդիսացող պատմաաշխարհագրական միաւորներից միայն Լեռնային Ղարաբաղին է ինքնավարութիւն տրուել։ Չէ՞ որ իր հակահայկական մոլուցքով հանրայայտնի թաթարական մոլեկրօն ցեղայնական շովինիզմը արցախահայերի մի հատուածին պատմական Արցախի թէկուզ մի փոքր մասի շրջանակներում ինքնավարութիւն տալու հարցում «զիջման» է գնացել ոչ թէ մարդկայնական-միջազգայնական-եղբայրական զգացումների առաջ տեղի տալով կամ ժամանակի պոլշեւիկ-խորհրդային ղեկավարների ցանկութեան ու խորհուրդին ընդառաջելով, այլ՝ պատմական-աշխարհագրական եւ ցեղային-ազգային աղաղակող եւ անշրջանցելի ազդակների ներգործութեամբ, իսկ եթէ մտաբերենք նաեւ արցախահայութեան մինչխորհրդային հերոսամարտերը՝ նաեւ հակառակ դէպքում իշխելու փոխարէն անիշխանութեան բախուելու մտավախութիւնից։ Չէ՞ որ եթէ հայերի թուաքանակի ազդակը վճռորոշ եղած լինէր, ապա մայրաքաղաք Բաքուն անգամ կարող էր յաւակնել հայկական, առնուազն հայ-ռուսական համատեղ ինքնավարութեան...

Այս իմաստով էլ լոկ անգիտաց պիտանի, սոսկ սակաւիմացներին ու պարզամիտներին մոլորեցնելու միտումով հրապարակ նետուած թաթարական զարշելի նենգութիւն էր այն պնդումը, որ արցախահայութիւնն իբր իր ժամանակին միայն ու միայն թուաքանակային իր գերակշռութեան հիմամբ է Լեռնային Ղարաբաղում ինքնավարութիւն ձեռք բերել, եւ հայութիւնն էլ իբր այդ գերակշռութիւնից կառչելով է ներկայումս պահանջում մարզի հողատարածքի միաւորումը Խ. Հայաստանին, առաւել եւս՝ այն աւելի քան նենգ ու զարշելի պնդումը, որ իբր հայերը, գնչուական հակումներից լքելով հայրենի հողը եւ գնալով հոծախումբ բնակուելու ուրիշ ժողովուրդների հայրենի տարածքներում, կարող են իւրաքանչիւր րոպէի ամէն մի հիւրընկալ ժողովրդի ներկայացնել իրենց ինքնավարական յաւակնութիւնները նրա ազգային հողատարածքի մի կտորի նկատմամբ։

Այս իմաստով էլ սրբապիղծ խոզութիւն էր (ռուսերէն «սրբապղծութիւն» նշանակող «կոշունստվօ» բառն ըստ երեւոյթին ծագել է ֆրանսերէն «կոշոննըրի» – «խոզութիւն» բառից) Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում ճառախօսելիս հայկական հիմնաւոր պահանջների «անհիմնաւորութիւնը» փաստարկող Ադրբեջանի հանրապետութեան նախագահ Սուլէյման Թաթլիեւի հետեւեալ հարցադրումը. «Բայց կայ հարցի նաեւ մի այլ կողմ։ Խորհրդային հայերի 36 տոկոսը

ապրում է Հայկական ԽՍՀ-ից դուրս։ Այդ թւում մօտ մէկ միլիոնը՝ Ադրբէյճանում եւ Վրաստանում։ Նրանց հետ ինչպէ՞ս վարուել»։ Թաթլիեւն իր հարցադրմանը ինքն էլ պատասխանում էր՝ ոչ առանց յետին մտքի կառչելով գլխաւոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովի այլապէս ճիշտ, սակայն Ղարաբաղեան հարցի հետ անառնչակից մի յայտարարութիւնից եւ դրանով իսկ կորաքամակ խոնարհութեամբ փորձելով սիրաշահել Կրեմլի առաջին դէմքին. «Դրա պարզ ու յստակ պատասխանը տրուած է 19-րդ համամիութենական կուսակցական համաժողովում Մ.Ս. Գորբաչովի զեկուցման մէջ։– Շատ մարդիկ ապրում են իրենց ազգային կազմաւորումների սահմաններից դուրս,– ասուած է նրանում,– իսկ կան նաեւ հողային ինքնավարութիւն չունեցող ազգութիւններ։ Սրանք բոլորը մեր բազմազգ պետութեան իրողութիւններն են։ Այստեղ կարող են առաջանալ որոշակի բախումներ, եւ դրանց լուծման համար մենք ունենք միայն մէկ ուղի. միութենական պետութեան սահմանուած կառուցուածքի շրջանակներում ապահովել, որ առաւելագոյնս հաշուի առնուեն իւրաքանչիւր ազգի ու ազգութեան եւ խորհրդային ժողովուրդների ամբողջ ընկերակցութեան շահերը։ Մեր շօշափելի պայմաններում ուրիշ մօտեցում պարզապէս անհնար է, ուրիշ ճանապարհ բռնելու ամէն մի փորձ կործանարար կը լինէր»։

Ցաւալի է հաստատել, որ Խորհրդային բազմազգ Միութեան խառն ազգաբնակչութեամբ մի շարք շրջաններում ազգամիջեան պարբերաբար սրուող փոխյարաբերութիւններին սպեղանի որոնող եւ այդ որոնումների շղթայում էլ իւրաքանչիւր քաղաքացու իր բնակութեան վայրում սեփական տանն զգալու պայմանների անհրաժեշտութեան մտքին յանգած Մ.Ս. Գորբաչովը զարմանալիօրէն սիրաշահուեց թաթարական այդ աւելի քան ծիծաղելի «փաստարկին»։ Դա, դեռ փոքր ինչ տարտամ, ուրուագծուեց ակադեմիկոս Սերգէյ Համբարձումեանի հետ դեմոգրաֆիկ փոփոխութիւնների վերաբերեալ իր բանավէճի ընթացքում, երբ տեղի ունեցաւ այսպիսի երկխօսութիւն.

«Մ.Ս. Գորբաչով.– Այստեղ յաճախ շեշտը դրւում է այն բանի վրայ, թէ ինչպէս է փոխւում ժողովրդագրութիւնը, բնակչութեան կազմը. դա մատուցւում է որպէս փաստարկ եւ անգամ որոշակի քաղաքականութեան հետեւանք։ Ասացէք, դարասկզբին Երեւանում որքա՞ն էր ադրբէյճանական բնակչութեան թիւը։

Ս.Ա. Համբարձումեան.– Դարասկզբի՞ն, Երեւանո՞ւմ։

Մ.Ս. Գորբաչով.– Այո։

Ս.Ա. Համբարձումեան.– Դժուարանում եմ ասել։

Մ.Ս. Գորբաչով.– Դուք պարտաւոր էք իմանալ։ Ես Ձեզ յիշեցնեմ՝ 43 տոկոս ադրբէյճանցիներ են եղել Երեւանում դարասկզբին։ Այժմ քանի՞ տոկոս են ադրբէյճանցիները։

Ս.Ա. Համբարձումեան.– Այժմ շատ քիչ են, երեւի մէկ տոկոս։

Մ.Ս. Գորբաչով.– Եւ ընդ որում ես չեմ ուզում հայերին մեղադրել, որ նրանք այնտեղից դուրս են արել ադրբէյճանցիներին։ Երեւի ինչ որ պրոցեսներ են տեղի ունեցել, որոնք առհասարակ հարկաւոր է պարզել։ Եթէ մենք այսպէս ամէն թուի ետեւից ընկնենք, դրանից հեռու գնացող հետեւութիւններ անենք, մեղադրանքներ նետենք

միմեանց, ապա ոչինչ չի ստացուի։ Չէ՞ որ դուք գիտնական էք։ Հարկաւոր է ճշգրիտ լինել տեղեկութեանց, ճշգրիտ լինել ճշմարտութեան մէջ։ Եթէ դա լինի միայն մեր ճշմարտութիւնը, կամ իմ ճշմարտութիւնը՝ դա դեռ ճշմարտութիւն չէ։ Բայց կայ ճշմարտութիւն, որը կայացել է. այդ հողի վրայ դարերով ապրել են հայերն ու ադրբեջանցիները։ Ձեզ համար Լեռնային Ղարաբաղը օրրան է, այսպէս ասած՝ հայ ազգի յենակէտերից մէկը։ Բայց չէ՞ որ Շուշիից, Ղարաբաղից դուրս են եկել Ադրբեջանի ե՛ւ կոմպոզիտորներ, ե՛ւ արուեստի ուրիշ շատ գործիչներ։ Չի կարելի հենց այնպէս, ասես գութանով վարել մարդկային հոգիները, ընտանիքները, դարերը։

Ս.Ա. Համբարձումեան.– Միխայիլ Սերգէեւիչ, վարել պէտք չէ։ Հարկաւոր է ահա այսպէս, ունենալ ճշգրիտ տեղեկութիւն։

Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղարի դրոյթներում աչք ծակողը հենց «ճշգրիտ տեղեկութեան» պակասը, աւելի շուտ՝ թաթարական աղբիւրից հայթայթուած ոչ-ճշգրիտ տեղեկատուութեան առատութիւնն էր, դրա հետեւանքով էլ՝ պատմական հաւաստի անցուդարձերի անհաւաստի արտացոլանքը։

Հակառակ դէպքում ինչո՞վ բացատրել գլխաւոր քարտուղարի անհամաձայնութիւնն այն ճշմարտութեան հետ, որ թիւրքական* քոչուոր ցեղերի առաջնորդները, այնուհետեւ նրանց վրայ յենուող տերպատականեան խաները, աւելի ուշ մուսաւաթականներն ու թաթար պոլշեւիկ-խորհրդային ղեկավարներն Արեւելեան Հայաստանում, իսկ սուլթանական-երիտթուրքական-քեմալական հայակերներն Արեւմտեան Հայաստանում վարել են հայկական պատմական հողատարածութիւններում դեմոգրաֆիական վերիվայրումներով հայոց բնօրրանը թիւրքացնելու ծրագրային կուռ մի քաղաքականութիւն։

Հակառակ դէպքում ինչո՞վ բացատրել գլխաւոր քարտուղարի չկամութիւնը՝ Արեւելեան Հայաստանի, այդ թւում Երեւանի տարածքում տերպատականեան թաթարների խաժամուժի բազմացման գործընթացի խորքը թափանցելու հարցում, նաեւ նրա այն համոզմունքը, որ առ այսօր իբր պարզաբանուած չլինելով, պարզաբանման կարիք ունեն հայոց հայրենիքի սրտում՝ Արարատեան դաշտավայրում թաթարների թուաքանակի նուազման հանգամանքները եւ որ իբր այդ նուազումն էլ կարելի է հաւասարութեան նշանով զուգադրել իր հայրենի բնօրրանում արցախահայութեան թուաքանակի նուազման հետ։

Եւ վերջապէս՝ հակառակ դէպքում ինչո՞վ բացատրել գլխաւոր քարտուղարի այն «զօրեղ» փաստարկը, որ մօտիկ անցեալի եւ մերօրեայ

(*) Աշխատութեան էջերում տարբերակուած են «թիւրքը» եւ «թուրքը»։

«Թիւրք»ը ընդհանուր անուանումն է թիւրքական ցեղախմբից լեզուներով խօսող եւ նմանց կողմից ծագումնաբանօրէն էլ ցեղակից համարուող մի քանի տասնեակ ցեղերի եւ ժողովուրդների (թուրք, ադերի թաթար, թիւրքմէն, ուզբեկ, ղազախ, չուվաշ, պաշկիր, քարաքալպաղ, գագաուզ եւ այլն)։

«Թուրք» ասելով որպէս կանոն նկատի ունենք Օսմանեան կայսրութեան մէջ համախմբուած թիւրքալեզու ցեղերի խառնիճաղանջից առաջացած այն ժողովուրդն, որ ժամանակակից թուրքական հանրապետութեան հիմնական ազգաբնակչութիւնն է։

Շուշիի թաթարական պիղծ դիմագիծը հիմք է տալիս Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ադրբեջանական յաւակնութիւնները համարել նոյնքան բնական, որքան՝ հայ ժողովրդի համար Արցախի ազգային յենակէտ լինելու իրողութիւնից ելնող հայկական յաւակնութիւնները։

Եթէ առաջին երկու՝ գուցէ թէ պատմագիտական յատուկ պատրաստականութիւն ենթադրող հարցերում գլխաւոր քարտուղարի մոլորութիւնը հնարաւոր է արդարացնել, ապա չի կարելի արդարացնել նրա անտեղեակութիւնը Այսրկովկասի մօտիկ անցեալի վարչական-պետական, սոցիալ-տնտեսական եւ մարդագրական իրողութիւններին։ Հանրայայտ է, օրինակ, այն իրողութիւնը, որ ներկայիս Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում Շուշին, ընդհուպ մինչեւ մի հարիւրամեակ առաջ, ե՛ւ իր բազմամարդութեամբ, ե՛ւ իր առեւտրատնտեսական աշխուժութեամբ գերազանցում էր հիմնականում նաւթի արդիւնահանման կենտրոն եղող Բաքուին, ըստ որում քաղաքի ազգաբնակչութեան աւելի քան երկու երրորդը տեւապէս հայեր են եղել։ Հայոց բնօրրանի սիրտ Արարատեան դաշտավայրում եւ քաղաքամայր Երեւանում նորագոյն ժամանակներում թաթարների քանակական նուազման բնական երեւոյթին քննչակերպ մօտեցող գլխաւոր քարտուղարը ինչո՞ւ էր ակներեւ կողմնակալութեամբ լռութեան մատնում Շուշիի համարեա ի սպառ հայազրկման արիւնարբու երեւոյթը։ Եւ ո՞վ կարող է պնդել, թէ արհեստական չէր գլխաւոր քարտուղարի՝ մինչխորհրդային ժամանակաշրջանում Արեւելեան Հայաստանի հողատարածքի վրայ հայկական ազգային-մշակութային կեանքի գլխաւոր օճախ հանդիսացած, ընդհուպ մինչեւ խորհրդային կարգերի հաստատման նախօրեակը ոտից գլուխ հայաքաղաք Շուշիի այլանդակօրէն դիմափոխման եւ թաթարականացման հարցում եաթաղանի դերի վերաբերեալ ռուս մտաւորականութեան աշխատութիւնների, ընդհանուր առմամբ ռուսական պարբերական մամուլի էջերը հեղեղած հաւաստի հաղորդումներին անտեղեակութիւնը։

Աններելի պիտի լինէր պատմական տարրական իրողութիւններին նման անտեղեակութիւն՝ «արհեստական» լինի դա, թէ «բնական», որովհետեւ կան տարրական իրողութիւններ, որոնք խորհրդային երկրի ամէ՛ն մի դպրոցական, անկախ ծնողների ազգային ու կրօնական պատկանելիութիւնից, միջնակարգում պէտք է անպայման սերտած լինի, քանի որ դրանք անմիջականօրէն առնչւում են ռուս ժողովրդի պատմութեանը եւ Պատմական ճշմարտութիւնն են։

Պատմական ճշմարտութեան մէկ խիստ ցցուն երակը վերաբերում է Այսրկովկասում, հիմնականում մերօրեայ Հայկական եւ Ադրբեջանական խորհրդային հանրապետութիւնների տարածքում եկուոր, աշխարհամասի համար բացարձակապէս օտար ու անհարազատ թաթարների սփռման ակունքներին։ Եւ թէկուզ Միխայիլ Գորբաչովն, իր իսկ ասելով, չի սիրում, երբ մարդիկ իրեն «որպէս փաստարկ եւ անգամ որոշակի քաղաքականութեան հետեւանք մատուցում են բնակչութեան կազմի դեմոկրաֆիկ փոփոխութիւնը», այնուամենայնիւ հենց այդ փոփոխութեան հայելու մէջ պարտադրաբար պիտի որոնել ճշմարտութիւնը։

Այդպիսի մի ճշմարտութիւն, ահա, գլխաւոր քարտուղարին

մատուցում է ռուսանալով Իվան Իվանովիչ դարձած ֆրանսիացի Շոպենը, ազգագրագէտ ու պատմաբան, որ երկար տարիներ եղել է ցարական Ռուսաստանի Հայկական մարզի վարչութեան խորհրդականը, որ կառավարութեան յանձնարարութեամբ կատարել է վիճակագրական հետազօտութիւններ եւ որ յատկապէս 1840 թուին շարադրել ու 1852 թուին լոյս է ընծայել իր նշանաւոր «Պատմական Յուշարձան Հայկական Մարզի Կացութեան Մասին՝ Այն Ռուսական Կայսրութեան Միացնելու Ժամանակաշրջանում» աշխատութիւնը։ 19-րդ դարի առաջին կէսի այսրկովկասեան պատմութեան մի իսկական հանրագիտարան եղող իր երկում, որը, ի դէպ, ձեռագիր վիճակում արժանացել է Ռուսաստանի գիտութիւնների ակադեմիայի Տեմիդովեան մրցանակին, Շոպենը գրել է. «Հայկական բարձրավանդակի որոշ մասերում թաթարների բազմացում-ուժեղացումը պայմանաւորուած էր զուտ քաղաքական պատճառ-նախադրեալներով։ Ռուսաստանից սպառնացող վտանգը պարսկական կառավարութեանը ստիպում էր ուժեղացնել առաւել վստահելի մահմետական տարրը պետութեան սահմանամերձ շրջանում»։

Ի լրումն եւ ի պարզաբանումն Շոպենի հեղինակաւոր խօսքերի, արձանագրենք խորհրդահայ երկու հասարակագէտների՝ Հայկական Ակադեմիայի թղթակից անդամ Վ. Խոջաբեկեանի եւ Բ. Առաքելեանի հաստատումը, այն քաղելով համայնավար կուսակցութեան եւ խորհրդային իշխանութեան (եւ ոչ թէ, ասենք, սփիւռքահայ «ծայրայեղական-ազգայնական» շրջաններին) պատկանող մի թերթից՝ «Երեկոյեան Երեւանից»։ Խորհրդահայ հասարակագէտների հաստատումը մօտաւորապէս հետեւեալն է.

«17-րդ դարի երկրորդ կէսը, 18-րդ դարի սկիզբը բնութագրւում են Արեւելեան Հայաստանի ռուսական կողմնորոշման ուժեղացմամբ։ Ռուսաստանի հարաւային սահմաններն արդէն Կովկաս էին հասել։ Պարսկաստանի սահմանների ամբողջականութեան-անվտանգութեանը մշտապէս սպառնացող Ռուսական կայսրութեան սահմանների ընդլայնումը հարաւում, պայմանաւորեց շահական-խանական կառավարութեան քաղաքականութիւնը այսրկովկասեան մարզերում։ Պարսկաստանն սկսեց ամբողջ Արեւելեան Հայաստանը, այդ թւում Նախիջեւանը բնակեցնել մահմեդականներով։ 19-րդ դարի սկզբների ռուս-պարսկական պատերազմները էլ աւելի վատթարացրեցին հայ ազգաբնակչութեան վիճակը։ Փոփոխական յաջողութիւններով ընթացող պատերազմական գործողութիւնների ընթացքում հայերի՝ պարսիկների տեսակէտից ակնյայտ ռուսական կողմնորոշման, նաեւ պատերազմական գործողութիւններում ներգրաւուած լինելու հետեւանքով հայ ազգաբնակչութիւնը զգալի կորուստներ կրեց։ Իրենց իսկ հայրենի բնօրրանում հայերի թուաքանակը կարեւոր չափերով նուազեց, իսկ թաթարներինը՝ հայապատկան տարածքներում խիստ գերակշիռ դարձաւ»։

Ճիշտ է, յաղթական Ռուսաստանը 1828 թուականի Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ յօդուածով Պարսկաստան բռնագաղթած հայերի համար ապահովեց իրեն կցուած Արեւելեան Հայաստանում «վերաբնակուելու» իրաւունքը (ռուսերէն լեզուն, ի դէպ, ներգաղթ-

հայրենազրկություն չգիտի, սեփական հայրենիք վերադարձողն էլ, ուրիշի հողի վրա ապրողն էլ հավասարապես «վերաբնակիչ» – «պերեսելենեց» է), ինչ որ որոշ չափով նպաստեց ազգաբնակչության կազմում հայերի տեսակարար կշռի բարձրացմանը։ Եվ սակայն հայ ժողովուրդը կարո՞ղ էր ռուսական զենքի հաղթանակի հետ կապված իր բոլոր վարդագույն երազանքներին հասած լինել, երբ ռուսական գաղութարարությունը նույնքան եւ ավելի կեղտահոտի էր (քանզի ավելի ցածրաստիճան էր), որքան՝ ցանկացած ուրիշ գաղութարարություն, անգլիական լինի, թե՝ ֆրանսիական ու այլ, նույնքա՛ն խորամանկ եւ իր շահամոլության մեջ անհամեմատ բութ։ Եվ խորհրդահայ հասարակագետներն իրավացի էին հաստատելով, որ հետագայում Արեւելյան Հայաստանում «թաթարների աճի առանձնահատկությունները պայմանավորված էին ազգային փոքրամասնությունների նկատմամբ Ռուսական կայսրության վարած քաղաքականությամբ», հատկապես այն բանով, որ հայերի տոկոսային կշռի մեծացման պայմաններում «հայկական ավելի կազմակերպված տարրի ազգային գիտակցության աճը հակասում էր կայսրության շահերին»։ Էլ չենք ասում այն մասին, որ թաթարների արագաթափ աճը պայմանավորված էր նաեւ հետեւյալ իրողությամբ. «1897 թվականի Ռուսական կայսրության առաջին համընդհանուր մարդահամարի ժամանակ թաթարների շարքը դասվեցին մահմեդական տարբեր ժողովուրդներ, միայն Նախիջեւանի մարզում՝ քոչվոր կյանք վարող 24 ժողովուրդներ։ Իսկ դրա համար հիմք վերցվեց հավատի ընդհանրությունն ու լեզվի նմանությունը»։

Այսպիսին է պատմական իրողությունը, նո՛յնն ու շարունակականը, այն օրերից առ այսօր։ Անունն այլ է, ամանը՝ նո՛յնը։

Այսպիսիք են պատմական տարաշէկ իրողությունները։ Եվ արդե՞ոք առաջին աշխարհամարտի հանրահայտ իրողությունները, նաեւ՝ 1905 եւ 1918–1920 թվականներին թաթարների ներկայումս վարպետորեն թաքցնող եղեռնագործությունները լրիվ շրջանցել կարենալու համար չէ՞, որ Միխայիլ Կորպաչովը 20-րդ դարասկիզբն է վերցնում։

Ի միջի այլոց, գրող Վ. Պետրոսյանի հետ իր սուր բանավեճի ընթացքում է, որ կարողանալու համար առարկել իր ազգային պատմական հողատարածքի մի կտորի՝ Արցախի շրջաններում ապրող հայության ազգային ըղձանքին, գլխավոր քարտուղարը «փաստարկ» գործեց ինչպես Բաքվում հայկական հոծ գաղթօջախի, այնպես էլ Վրաստանի տարածքում հայերի զգալի թվաքանակի առկայությունը։ Տեղի ունեցավ այսպիսի երկխոսություն.

«Մ.Ս. Կորպաչով.– Ձեզ էլի մեկ հարց։ Ձեր ելույթում եւ ուրիշ ելույթներում առկայծում է այն միտքը, որ Լեռնային Ղարաբաղի հարցերը կարող են լուծվել միայն այն Հայաստանին փոխանցելու միջոցով։ Ասացեք՝ իսկ ուրիշ ուղի տրված չէ՞»։

Վ.Հ. Պետրոսյան.– Միխայիլ Սերգեեւիչ, ես այն չեմ տեսնում։

Մ.Ս. Կորպաչով.– Ասենք թե մենք ընդունեինք այնպիսի որոշում, ինչպիսին դուք էք առաջարկում։ Բայց 400 հազար հայ մնում է Ադրբեջանում,նրանցից 207 հազարը՝ Բաքվում։ 500 հազար հայ ապրում



Խորհրդահայ ապատեղեկատուական կենտրոններից մէկը՝ Երեւանի Մամուլի տունը պաշարուած եւ… պաշտպանուած

է Վրաստանում։ Ինչպե՞ս վարուենք նրանց հետ։ Նրա՞նց էլ է հարկաւոր յանձնել Հայաստանին։

Վ.Հ. Պետրոսեան.– Այստեղ բանն այլ է։

Մ.Ս. Կորպաչով.– Եթէ չի կարելի հարցը լուծել այլ կերպ, քան բնակչութեան մի մասի համար ինչ որ պետական կազմաւորման վերափոխման եւ սահմանագրութեան փոփոխման միջոցով, այն ժամանակ բնակչութեան միւս մասի համար էլ ինչ որ բան պէտք է որոշել։ Ինչպէ՞ս վարուենք այն ժամանակ տաճիկների հետ, որոնք ապրում են Ուզբեկիստանում, եւ ուզբեկների հետ, որոնք ապրում են Տաճիկիստանում։ Որքա՞ն ադրբէյճանցի է ապրում Վրաստանում, ընկեր Գիլաշվիլի։

Փ.Գ. Գիլաշվիլի.– Մինչեւ 500 հազար։

Մ.Ս. Կորպաչով.– Ինչպէս վարուենք նրանց հետ։ Նրանք ապրում են Ադրբէյճանի սահմանին կից, նրանց հեշտ է անջատել։ Ջէ՞ որ մենք պէտք է իրապաշտ նայենք կեանքի այդ բոլոր երեւոյթներին։ Մենք առաջարկում ենք, որ ամէն թիզ հողի վրայ, որտեղ ինչ ազգութեան խորհրդային մարդ էլ որ ապրելիս լինի, նա պէտք է իրեն լաւ զգայ։ Այո, դա ամենուրեք չէ, որ ստացւում է։ Դա բնական բան չէ։ Դա հարկաւոր է դատապարտել։ Մենք ձեւացրել ենք, թէ այդ բանը չկայ, վկայակոչել ենք իրօք հսկայական նուաճումները»։

Կրկնում ենք. գլխաւոր քարտուղարը այլապէս ճիշտ ու մարդկային եւ Խ. Միութեան ազգայնական ախտով վարակուած մի շարք շրջաններին աստուածաշնչային պատգամի նման անհրաժեշտ իր տեսակէտը հիմնաւորելու համար պարզապէս անհամապատասխան, ուղղակի վատ օրինակ է գտել՝ յանձին մեր ազգային պետականութեան սահմաններից պատմական անարդարութեան հետեւանքով դուրս մնացած տարածքների հայութեան եւ պատմական ճակատագրի հարկադրանքով ուրիշ ժողովուրդների տարածքներում ապաստան որոնած հայորդիների գոյավիճակների զուգադրման։

Մեր կարծիքով թաթարական այլանդակ «փաստարկն» ընդհանրապէս սեղան բերուելու իրաւունքը կը կորցնէր եւ գլխաւոր քարտուղարն էլ այդ «փաստարկին» սիրաշահուած տհաճ վիճակի մէջ չէր ընկնի, եթէ հայկական պատուիրակութիւնն ինքը կառչած լինէր 78-րդ յօդուածից եւ պահանջէր այն որոշակի ուղղութեամբ գործարկել։ Բայց այդ մասին՝ քիչ յետոյ։

78-րդ յօդուածի հետ կապուած մի այլ խնդիր էլ կայ։ Եթէ հետեւելու լինենք այդ յօդուածի տրամաբանութեանը, ապա միութենական հանրապետութիւնը, 72-րդ յօդուածով իրեն ընձեռուած իրաւունքից օգտուելու եւ Միութեան կազմից դուրս գալու դէպքում, ինքնաբերաբար իր հետ խորհրդային կարգերից դուրս է բերելու նաեւ երկրորդակարգ պետական այն կազմաւորումը, որն ընդգրկուած է իր շրջանակներում, իսկ դա՝ առանց նրա ժողովրդի կամքի ու ցանկութեան, այլ խօսքով ինքնորոշման սրբազան իրաւունքի հետ հաշուի նստելու։ Մեզ առանձնապէս հետաքրքրող շրջանակում մնալով շեշտենք, որ 78-րդ յօդուածն անվերապահօրէն կիրառելու դէպքում ադրպատականեան թաթարները, եթէ մի օր իրենց խելքին փչի 72-րդ յօդուածից օգտուելով դուրս գալ Միութեան կազմից եւ դաշնակցութիւն ստեղծել

իրենց հոգեհարազատ որեւէ երկրի, առանձնապէս Թուրքիայի հետ, ապա արցախահայութիւնն իր ազգային հողատարածքով հանդերձ գնալու եւ որոշ իմաստով վերենթարկուելու է ատրպատականեան-խանական գերիշխանութեան, որի լուծը երկու դար առաջ թօթափել է իր իսկ հրաւէրով այսրկովկասեան երկրամաս ժամանած ռուսական զօրամիաւորումների օգնութեամբ, կամ էլ թուրքականին, որից թո՛ղ բարձրեալը պահի հայ ժողովրդի ծայրագոյն-արեւելեան հատուածին։

Եւ, վերջապէս, անկախ այն հանգամանքից, թէ Խ. Միութիւնում կորպաչովեան «վերակառուցման» շրջանակում նախապատրաստուող բարենորոգութիւնների հիմամբ խորհրդային սահմանադրութեան այս կամ այն յօդուածը ի՞նչ տեսք կը ստանայ, մի՞թէ այլանդակ անախրոնիզմ չէ 20-րդ դարի վերջին այս կամ այն ժողովուրդն իր փոքրաթուութեան կամ այլ յատկանիշների հիմամբ պահպանել չուրջ եօթանասնամեայ գաղութային իւրատեսակ մի մանդատի ներքոյ, ինչպիսին իրականում խորհրդային ինքնավար հանրապետութիւնների ու մարզերի եւ ազգային շրջանների գոյավիճակն է։ Եւ մի՞թէ հենց այդ այլանդակ անախրոնիզմի դէմ չի խօսում այն փաստը, որ դեռ քսանական թուականների սկզբին Լենինը խիստ քննադատութեան է ենթարկել Խ. Միութեան կազմաւորման ստալինեան այն նախագիծը, որը նախատեսում էր առանձին հանրապետութիւնների ինքնավարութեան սկզբունքով մուտքը Ռուսաստանեան դաշնակցութեան կազմի մէջ, ըստ որում Լենինը պահանջում էր, որ բոլոր հանրապետութիւնները, այդ թւում Ռուսաստանը, ԽՍՀՄ-ի մէջ միաւորուեն լիակատար իրաւահաւասարութեան հիման վրայ։ Եւ մի՞թէ այդ այլանդակ անախրոնիզմը վերացնելու համար հուժկու փաստարկ չէ այն իրողութիւնը, որ տուեալ ժողովուրդները ոչ թէ իսկապէս ազատ կամայայտնութեամբ իրենք են իր ժամանակին որոշել իրենց գոյավիճակը, այլ ուրիշներ, իշխանութեան վերին օղակներում բազմած մարդիկ են իրենց փոխարէն ճշտորոշել այդ գոյավիճակը։ Այդ մարդիկ, թէկուզ պոլշեւիկ-խորհրդայինի կիտել հագած, ցարական կայսրութեան հողատարածքի կարօտախտով տոչորող ռուս մեծապետական շովինիստներն են եղել նախ եւ առաջ, ապա՝ մինչեւ ուղն ու ծուծը ռուսացած, իրենց ազգային յատկանիշներից միայն ժխտականները պահելով ռուսականների ժխտականներին միախառնած այլազգիներ, որոնց տիպական ներկայացուցիչը վրացի Ստալինն էր։

Մի՞թէ այդ այլանդակ անախրոնիզմի դէմ չի խօսում եւ այսպիսի հանրայայտ մի իրողութիւն. մեր օրերում Միացեալ Ազգերի Կազմակերպութեան անդամ պետութիւնների թւում, որոնց հետ, որպէս հաւասարը հաւասարի, դիւանագիտական յարաբերութիւններ է պահպանում Խ. Միութիւնը, կան ազգային անկախ կազմաւորում ունեցող գերիշխան ժողովուրդներ, որոնք թուականօրէն չեն գերազանցում խորհրդային այն ժողովուրդներին, որոնք Ռուսաստանեան դաշնակցութեան կազմում լոկ «ազգային շրջանի» գոյավիճակին են արժանացել։ Ամէնից սակաւաբնակիչ ազգային շրջան էվենկիեան իսկ, օրինակ, տարածքով աւելի քան երեսուն հազար անգամ, իսկ բնակչութեան թուաքանակով երկու անգամ գերազանցում է Օվկիանեան անկախ գաճաճ պետութիւններ Նաուրուին եւ Տիվալուին, որոնք ունեն համապատաս-

խանաքար 21 եւ 26 քառակուսի քիլոմեթր տարածք եւ 8000–ական բնակիչ։ Աբխազում շուրջ 15000 քառակուսի քիլոմեթր տարածքով եւ աւելի քան 600000 բնակչութեամբ Արեւելեան Թիմորը անկախ ու գերիշխան պետութիւն է, մինչդեռ նոյնքան տարածք եւ բնակչութիւն ունեցող Օսեթիան բաժանուած է Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ՝ որպէս ինքնավար հանրապետութիւն եւ ինքնավար մարզ։ Ամերիկայում Պարպատոսն անկախ պետութիւն է, իսկ Խ. Միութիւնում Կալմիկիան, ունենալով նոյնքան բնակչութիւն եւ 180 անգամ աւելի ընդարձակ հողատարածք, պարզապէս ռուսաստանեան մի «ինքնավար հանրապետութիւն» է։ Աւելացնենք, որ ռուսաստանեան որոշ ինքնավար մարզեր ունեն մինչեւ չորս միլիոն բնակչութիւն, ըստ որում վերջիններիս հիմնական ազգութիւնները հաշւում են մէկից մինչեւ եօթ միլիոն ներկայացուցիչ։

Արդ, խորհրդային սահմանադրութեան 84–րդ յօդուածը, որ արգելում է միութենական հանրապետութիւններին՝ փոփոխութեան ենթարկել իրենց կազմի մէջ մտնող ինքնավար հանրապետութիւնների հողատարածքն առանց նրանց համաձայնութեան, փաստօրէն այդ արգելքը չի տարածում ինքնավար մարզերի եւ ազգային օկրուգների վրայ։ Նշանակում է՝ սահմանադրութիւնը, ճանաչելով ինքնորոշման եւ սեփական հողատարածքի նկատմամբ որոշ ժողովուրդների ինքնիշխանութեան որոշակի իրաւունքը, նոյն այդ թէկուզ պոչատ իրաւունքը մերժում է այլ ժողովուրդների։ Իր հերթին 72–րդ յօդուածը, որ միութենական հանրապետութիւններին իրաւունք է վերապահում ազատօրէն դուրս գալ Խ. Միութեան կազմից, ոչինչ չի ասում երկրորդակարգ ազգային կազմաւորումների մասին, այլ խօսքով կա՛մ նրանց զրկում է այդ նոյն իրաւունքից, կամ էլ նրանց ժողովուրդներին դիտում է որպէս կամազուրկ–ձայնազուրկ ոչխարների հօտ, որը հլու համակերպութեամբ պէտք է հետեւի իր տէր ու տիրակալ հովուին՝ միութենական հանրապետութեանը։ Այս պայմաններում կարո՞ղ է խաբեպատիր չլինել իրաւահաւասարութեան վերաբերեալ շաղակրատանքը, որը տեւականօրէն գնացել է ու այսօր էլ գնում է Խ. Միութիւնում։ Իրաւահաւասարութեան մասին կարո՞ղ է խօսք լինել մի Միութեան մէջ, որում համախմբուած ժողովուրդները ոչ թէ հորիզոնական մի տարածքի վրայ սուփրի շուրջ որպէս հաւասարներ կողք–կողքի են նստած, այլ դասաւորուած են ուղղաձիգ. ամէնից ներքեւում ազգային շրջանների ժողովուրդները եւ նրանց գլխին ռուսները, քիչ վերեւում ինքնավար մարզերի ժողովուրդները եւ նրանց գլխին դարձեալ ռուսները, նաեւ ատրպէյճանցիները, վրացիներն ու տաճիկները, աւելի վերեւում ինքնավար հանրապետութիւնների ժողովուրդները եւ նրանց գլխին նոյնպէս ռուսները, ատրպէյճանցիներն ու վրացիները, ամենից վերեւում միութենական հանրապետութիւնների ժողովուրդները եւ նրանց գլխին էլ, որպէս բարձրեալն աստուած, տեսականօրէն բազմազգ Գերագոյն Խորհրդի մի Նախագահութիւն, որում իրական իշխանութիւնը ռուսների ու մասամբ ուկրաինացիների եւ բելոռուսների ձեռին է՝ մէկ–մէկ ու որոշ կէտերում միւս ազգերից տօնազարդ ներկայացուցիչներով։ Իրաւահաւասարութեան մասին կարո՞ղ է խօսք լինել, երբ ինքնավարը գործնականում նշանակում է այլավար, մի այլ եւ բառիս բուն իմաստով

օտար ժողովրդից ղեկավարուող, երբ սահմանադրութիւնը վրացուն իրաւունք է վերապահում ըստ կամս վերաձեւելու իրեն ստորադրուած հարաւային ալան-օսեթի հողատարածքը, ատրպէյճանցուն՝ արցախահայի հայրենի հողը, տաճիկին՝ սակերի բնօրրանը, ռուսին՝ ալտայկիճինների, տըլկէնների, խաքասների, նենեցների, կարաչաեւների, չերքեզների, պուրիաթների ու միւսների հողատարածքը։ Ո՞ւմ շահերից ելնելով են սահմանադրութեան պոլշեւիկ-խորհրդային հեղինակները, որոնք անկասկած իր ժամանակին պճնուել են «լենինեանի» փետուրներով, չեն անսացել Լենինի աներկիմաստ խօսքերին. «...Ամէն մի միջոցառում..., որն ազգերից մէկին որեւէ բանում արտօնութիւն է տալիս, խախտում է ազգերի իրաւահաւասարութիւնը կամ ազգային փոքրամասնութեան իրաւունքները, կը յայտարարուի անօրինական եւ անվաւեր, ու պետութեան իւրաքանչիւր քաղաքացի իրաւասու է պահանջելու նման միջոցառման վերացումը, որպէս հակասահմանադրական միջոցառում, եւ քրէական պատիժ նրանց համար, ովքեր այն կը կիրառեն կեանքում»։

Լենինեան այս խօսքերի լոյսի տակ ի՞նչ գնահատական կարելի է տալ այն իրողութեան, որ սահմանադրութեան 84-րդ յօդուածով ազգային հողատարածքի հարցում երաշխաւորուած թէ ոչ, Խ. Միութեան շատ ազգեր ու ազգութիւններ թաւալգլոր արագութեամբ վերանում են երկրի երեսից, ըստ որում ոչ միայն Սիպիրի եւ Հեռաւոր Արեւելքի խորքերում, այլեւ եւրոպական մասի ամէնից աչքի զարնող վայրերում։ 1926 թուականի մարդահամարի ժամանակ գրանցուած 194 էթնիկ-ազգային միաւորներից 85-ը 1959 թուի մարդահամարի ժամանակ արդէն գոյութիւն չունէին։ Ճիշտ է, 1959–1970 թուականներին անակնկալօրէն «յայտնուեցին», աւելի ճիշտը՝ իրենց գոյութեան փաստը պարտադրեցին նախկինում «աչքից բաց թողնուած» մի քանի ազգութիւններ՝ 760 հազարանոց չեչենները, աւելի քան հինգ հազարանոց տոլկանները, 900 հոգիանոց նկասանները եւ 500 հոգիանոց նեկիդալները, սակայն փաստը մնում է փաստ, որ 33 տարում տասնեակ ու տասնեակ ազգեր, ամէն տարի շուրջ երեք ազգութիւններ զոհ են գնացել «էթնիկ կոնսոլիդացման» քողի ներքոյ հիմնականում ռուսների, նաեւ նրանց շնորհալի աշակերտների, յատկապէս վրացիների եւ ատրպէյճանցիների կազմակերպած սպիտակ ջարդին։ Եւ չի կարելի զարմանալի համարել այն արտառոց փաստը եւս, որ ներկայումս Խ. Միութիւնում գոյութիւն չունի երկրում ապրող ազգերի եւ ազգութիւնների մի ճշգրիտ-ամբողջական ցուցակ անգամ...

Այդ ի՞նչ «հրաշքի» զօրութեամբ է, որ «էթնիկ կոնսոլիդացման» սոցիալիստական-խորհրդային թափանիւը Խ. Միութիւնում (նաեւ համայնավարական ղեկավարութեամբ միւս երկրներում) մորեխի նման խժռում-անհետացնում է իր ձեռն ընկած ազգերի եւ ազգութիւնների։ Մի՞թէ դա չի նշանակում, որ ինչ որ բան այստեղ այնպէս չէ, ինչպէս պնդւում է...

Խորհրդային Միութեան եւրոպական մասի հիւսիսում եղել է մի երկիր՝ Վէպսերի երկիրը, որի յաղթանդամ ու շիկահեր զաւակները՝ վէպսերը, հիմնականում Լատոկայի եւ Օնեկայի միջալճեքի ու յարակից տարածքների վրայ ձգուող իրենց հայրենիքում հազարամեայ տեւողու-

թեամբ ապրել են ու պահպանել իրենց լեզուն, մշակոյթը, բարքերը։ Յետոյ եկել են դէպի Բալթիկ ծով առաջ խաղացող ռուսները եւ առել.– Վէպսերի երկիր չկայ, կա՛յ Ռուսաստան։ Եւ եղել է Ռուսաստան, որտեղ տարուէ տարի նուազելով վէպսերը 1926 թուի մարդահամարին դուրս են եկել ընդամէնը 32400 հոգի։ 1927 թուին, երբ ռուսական մեծապետական շովինիզմի երդուեալ հակառակորդ Լենինը նորոգ հանգուցեալ էր ու նրա գաղափարների կրողներն էլ դեռ ի սպառ չէին անհետացել Կրեմլի դահլիճներից, Կարելիայում վէպսերի համար կազմաւորուել է Շելտոզերսկի «ազգային շրջան», այնուհետեւ՝ մի երկրորդ «ազգային շրջան» Լենինկրադի մարզում, ըստ որում վէպսերէնի համար ստեղծուել է կիւրեղատառ այբուբէն, սկսել են լոյս տեսնել գրքեր (շուրջ երեսուն անուն), բացուել են ազգային դպրոցներ։ Այդ բոլորը, սակայն, երկար չի տեւել. 1937 թուին «ազգային շրջանները» վերացուել են, ազգային դպրոցները փակուել, վէպսերը աւելի ու աւելի են դուրս մղուել «իրենց բնակութեան աւանդական վայրերից» (ռուսներն այսօր այդպէս են անուանում վէպսերի ռուսաստանացուած հայրենիքը), ըստ որում տեղափոխուողները հարկադրուել են «ազգութեամբ ռուս» արձանագրուել։ 1930-ական թուականների 35 հազար վէպսերից ներկայումս մնացել է հազիւ 12 հազար մարդ, ըստ որում քանի որ իրենց հայրենի բնօրրանից Լենինկրադի եւ Վոլոգդայի մարզերին պարգեւուած տարածքներում, ըստ «Սովետսկայա Կուլտուրա» («Խորհրդային Մշակոյթ») մոսկովեան թերթի հաղորդման, «վերադաս մարմինների կարգադրութեամբ» վէպսերը գիւղական խորհուրդների մատեաններում գրանցւում են որպէս ռուս, ապա պաշտօնական տուեալներով վէպսերը հիմնականում Կարելիայում եւ թուով 8100 հոգի են մնացել միայն։

Արդ, վէպսերի անհետացումը կարելի՞ է «էթնիկ կոնսոլիդացման» վերագրել, երբ նրանք ոչ թէ ցեղակից-լեզուակից մի ժողովրդի հետ են համախառնւում, այլ ուղղակի եւ «ամենաքաղաքակիրթ» եղանակով ձուլւում են մի օտար ժողովրդի՝ ռուս ժողովրդի կողմից։ Եւ ինչպէ՞ս է ռուսական միջավայրին անցեալին յաջողուել եւ այսօր էլ յաջողւում է ազգային ցանկացած փոքրամասնութիւնը երկրորդ կամ առ առաւելն երրորդ սերնդից կուլ տալ։ Եւ քանի որ խորհրդային կարգերի ներքոյ «ձուկը գլխից է հոտել», այլ խօսքով քանի որ առաջին հերթին «մեծ աղբեր» ռուս ժողովրդի միջավայրում է ընթանում տարբեր ազգերի եւ ազգութիւնների կա՛մ գլխովին, կամ էլ առնուազն նրանց ներկայացուցիչների առանձին հոծ խմբերի անխնայ եւ արագ, ըստ որում անկաշկանդ ու անպատիժ ձուլման գործընթացը, ապա «փոքր աղբերներից» ոմանք էլ, աւագից օրինակ վերցնելով եւ անպատիժ մնալու վստահութիւնից քաջալերուած, բարենպաստ հանգամանքներից օգտուելով խժռում-վերացնում են իրենցից աւելի փոքր «եղբայր» ազգութիւնների։

Հարկ է ընդգծել, որ միութենական հանրապետութիւն ունեցող ազգութիւններից միայն մի քանիսն են, հայերի հետ առաջին հերթին էստոնացիները, որ չեն մասնակցել ու չեն մասնակցում իրենց ազգային հողատարածքում բնակութիւն հաստատած էթնիկ այլ խմբերի մորեխի նման խժռելու ազգակերական գարշելի գործին (եթէ մի հրաշք տեղի չունենայ, էստոնացիներն իրենք իրենց իսկ հայրենիքում մօտիկ

ապագային ազգային փոքրամասնութեան են վերածուելու. քանի որ այսօր Հայաստանում 956,000 հայաստանցիների կողքին արդէն ապրում են աւելի քան 600,000 ռուսներ, որոնց թիւը վերջին երեսնամեակում եռապատկուել է)։ Ադրբեջանական դաշինքի գործում առանձնապէս մեծախորժակ ռուսներից, ուկրաինացիներից (որոնց միջավայրում հալուել-անհետացել են պոլեակները, չեխերը, գուցուլները, լիտվիները, պլեչչուկները եւ այլն) եւ վրացիներից (որոնց միջավայրում հալուել անհետացել են մեգրելները, բացբիյցիները, սվանները, լազերը եւ այլն) յետոյ բացառիկ աշխոյժ են եղել ադրբեջանցիները, որոնք շատ արագ իրենց մէջ ձուլել-անհետացրել են այրումներին, գարափափախներին, պատարներին, շահսեւեններին, շահդաղցիներին, ուդիներին, թալիշներին, թաթերին, նաեւ աւարների, լեզգիների, բուդուղցիների, գրիզների եւ էթնիկական այլ միաւորների զգալի խմբերի։

Ադրբեջանական ԽՍՀ հողատարածքում եթէ ոչ ի սպառ ձուլուած, ապա առնուազն պաշտօնապէս գոյութիւն ունենալուց դադարած համարուող ազգութիւններից մէկը մահմեդական քրդերն են, որոնց հոգեվարքային գոյատեւման փաստը լայն հասարակութեան մասշտաբի դարձաւ Լեռնային Ղարաբաղի իրադրութեան շուրջ բարձրացած աղմուկի պայմաններում միայն։

Որպէսզի իրավիճակը ներկայացնենք անկողմնակալօրէն, այստեղ համարեա ամբողջութեամբ ներկայացնելու ենք քիւրտ մտաւորականութեան երեւելի ներկայացուցիչների միջավայրում կազմուած եւ խորհրդային բարձրագոյն իշխանութիւններին յանձնուած մի պաշտօնական փաստաթուղթ։

«Քրդերը Խորհրդային Միութիւնում ապրում են Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում, Ղազախստանում, Թիւրքմենիայում եւ միութենական այլ հանրապետութիւններում։ Եթէ մենք համեմատելու լինենք նրանց դրութիւնը, ապա կը համոզուենք սոցիալ-քաղաքական եւ մշակութային մակարդակի տարբերութեան, կախուած այն բանից, թէ ազգային հարցն ինչպէ՞ս է լուծւում այս կամ այն հանրապետութիւնում։ Համեմատութեան համար վերցնենք Ադրբեջանն ու Հայաստանը, որտեղ ապրում են քիւրտ ազգաբնակչութեան հիմնական մասը եւ դիմենք տուեալների ու փաստերի, որոնք ըստ ինքեան խօսուն են։

1923 թուին Ադրբեջանում ստեղծուեց Քրդստանի գաւառակը Լաչին կենտրոնով։ Նրա մէջ մտնում էին մահմեդական քրդերով բնակուած շրջանները՝ Քելպաճարը, Կուպաթլին, Քիւրդ-Հաճին, Մուրաճալին եւ Ղարաղշլաղը։

... Շնորհիւ քրդերի նկատմամբ յեղափոխութեան առաջնորդ Վ.Ի. Լենինի հոգատար վերաբերմունքի, քրդերի համար բացուեցին դպրոցներ, հրատարակուեցին դասագրքեր եւ գրքեր, սկսեց լոյս տեսնել ռուսերէն «Սովետական Քրդստան» թերթը, Շուշիում բացուեցին մանկավարժական տեխնիկում եւ մշակոյթի այլ օճախներ։ Խորհրդային իշխանութեան առաջին տարիներին քիւրտ ազգաբնակչութիւնն ապրեց ընկերային եւ մշակութային վերածնունդ։ Սակայն դա երկար չտեւեց։

1920-ական թվականների վերջերին որոշակիորեն փոխվեց քուրդ ժողովրդի նկատմամբ քաղաքականությունը։ Քրդստանի գավառակը 1929 թվին լուծարքի ենթարկվեց, իսկ հետագայում քուրդ ազգաբնակչության զգալի մասը բռնությամբ աքսորվեց Ղազախստան և Թուրքմենիա։ Առաջավոր մտավորականությունը, մշակույթի և արվեստի գործիչները ճնշման ենթարկվեցին որպես «ժողովրդի թշնամիներ», շատերը գնդակահարվեցին։

Ստալինի մահից հետո, 1957 թվին, վերացվեցին հակաքրդական պահակակետերը և քրդերին թույլատրվեց վերադառնալ հարազատ վայրեր, սակայն արդեն անհնարին եղավ գավառակը վերստեղծել։ Քրդերին բոլոր տեսակի իրավունքներից զրկելու պրակտիկան սովորության ուժով շարունակվեց։ Ստալինյան ժամանակներում արթնացած համաթուրքականությունը գործում էր թաքուն, մարքս-լենինյան դրոշով դիմակավորված։ Եվ այսօր իսկ պաշտոնապես հերքվում է Ադրբեջանում քուրդ համախումբ ազգաբնակչության գոյությունը, նենգափոխվում է մարդահամարը, ինչպես նվազեցվում է քրդերի թվաքանակը։

Ադրբեջանում չկան քուրդ գրողներ, արվեստագետներ, գիտնականներ, խորհրդային և կուսակցական մարմինների աշխատողներ։ Որպեսզի հնարավորություն ունենան պատասխանատու պաշտոն զբաղեցնել, քուրդը հարկադրված է անձնագրում նշել տալ, որ ինքը պատկանում է ադրբեջանական ազգության։ Մի՞թե կարելի է սա հավասարություն և եղբայրություն անվանել։

Այստեղ անհրաժեշտ է համեմատել քրդերի դրությունը Ադրբեջանում և Հայաստանում։ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո քրդերն այստեղ անմիջապես զգացին կուսակցության և կառավարության մշտական և անդադրում հոգատարությունը, ինչը նրանց հնարավորություն տվեց արժանավորապես, գլուխը բարձր պահած քայլել սոցիալիզմի կառուցողների առաջին շարքերում։ Երևանը ներկայումս հանդիսանում է Խորհրդային Միությունում քրդական մշակույթի բոլոր օջախներից ամենահայտնին ու ամենակարևորը։ Բոլոր համագումարներում և պլենումներում, համաժողովներում և խորհրդակցություններում կարևոր տեղ է տրվում և լուրջ ուշադրություն ընծայվում Հայաստանի ազգային փոքրամասնություններին՝ քրդերին, ադրբեջանցիներին, հույներին և ասորիներին։ 1930 թվից Հայաստանում լույս է տեսնում «Ռյա Թազա» թերթը։ Այդ տարուց քրդերեն լեզվով հրատարակվում է նաև քաղաքական, գիտական, գեղարվեստական և մանկական գրականություն։ Քրդական գյուղերում գործում են դպրոցներ, որոնցում ուսուցումը կատարվում է մայրենի լեզվով։ Ամեն օր եթեր են դուրս գալիս քրդերեն ռադիոհաղորդումներ։ Հայաստանի գրողների միության կից գործում է քուրդ գրողների բաժանմունք։ Արևելագիտության հիմնարկում քրդագիտության բաժնում գիտնականները ուսումնասիրում են քուրդ ժողովրդի պատմությունը, նրա լեզուն, գրականությունը, մշակույթը, բանահյուսությունը։ Հայաստանում քուրդ ժողովուրդը յուրաքանչյուր քայլի զգում է հայ ժողովրդի բարեացակամությունն ու սիրալիրությունը, այն, ինչից

1929 թուականից սկսած զրկուած է քիւրտ ազգաբնակչութիւնը Ատրպէյճանում։

Կուսակցութեան 20-րդ համագումարից յետոյ քրտերը բազմիցս փորձեցին Ատրպէյճանում վերականգնել իրենց օրինական իրաւունքները։ Նրանք դիմեցին Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին, սակայն լոկ խոստումներ ու ամենայն հաւաստիացումներ ստացան, ուղարկեցին պատուիրակութիւններ, սակայն ամէն անգամ, երբ գործը հասաւ Ատրպէյճանի կոմունիստական կուսակցութեան Կենտրոնական կոմիտէ, ամէն ինչ հենց այնտեղ էլ հանգաւ, գոյութիւն ունենալուց դադարեց։ Աւելին, վատթարացաւ քրտերի առանց այդ էլ ծանր վիճակը։ Աւելի քան 200,000 քրտերի անձնագրերի «ազգութեան» սիւնակում գրուեց «ատրպէյճանցի», ինչը հանդիսանում է քիւրտ ժողովրդի նկատմամբ նպատակային կերպով ցեղասպանութեան քաղաքականութիւն վարող Թուրքիայի փորձի ուղղակի օգտագործումը։

Ապրելով Ատրպէյճանի սահմանային գիւղերում, քրտերը մշտապէս շփւում են հայերի հետ։ Նրանք սոցիալիստական մրցութեան մէջ են մտնում Հայաստանի հարեւան շրջանների աշխատաւորների հետ, ինչը որ էլ աւելի է ամրապնդում եւ խորացնում սոցիալիստական միջազգայնականութիւնը։

Հայաստանի քիւրտ ազգաբնակչութիւնը չի կարող անտարբեր մնալ Ատրպէյճանի իր ցեղակիցների ճակատագրի հանդէպ, որոնք իրաւազուրկ են, զրկուած՝ իրենց մշակոյթը զարգացնելու տարրական պայմաններից եւ կանգնած են լրիւ ձուլման ենթարկուելու վտանգի առաջ։

Այդ իսկ պատճառով մենք խնդրում ենք Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ ընկած հողատարածքը, որտեղ հիմնականում քրտեր են ապրում եւ որը նախկինում Քրտիստանի գաւառակն էր հանդիսանում, մտցնել Հայկական ԽՍՀ կազմի մէջ։ Դա ե՛ւ տնտեսապէս, ե՛ւ սոցիալականորէն նպատակայարմար եւ ձեռնտու է ինչպէս քիւրտ, այնպէս էլ հայ ժողովրդի, ամբողջ խորհրդային պետութեան համար։ ... Նորից ու նորից մենք խնդրում ենք ու պահանջում բաւարարել Ատրպէյճանի քիւրտ ազգաբնակչութեան խնդիրքը, յարգանքով վերաբերուել մեր միջնորդութեան եւ Քելպաճարի, Լաչինի, Կուբաթլիի եւ Զանգիլանի՝ Հայաստանի հետ սահմանակից շրջանները մտցնել Հայկական ԽՍՀ կազմի մէջ ու փրկել նրանց սպիտակ ցեղասպանութիւնից, որը ատրպէյճանական իշխանութիւնների կողմից սկսուել է 1929 թուականից եւ շարունակւում է առ այսօր։

Քիւրտ ժողովրդի համար վերականգնումն ու դեմոկրատականացումը սկսում են Ատրպէյճանի քիւրտ ազգաբնակչութեան ճակատագրի եւ դրութեան արմատական վերանայումից»։

Դիմումով խորհրդային քիւրտ մտաւորականութեան առաւել երեւելի ներկայացուցիչները ոչ միայն փաստագրում էին հայ ժողովրդի միջավայրում, ի տարբերութիւն Թաթարականի, ազգային նկրտումների անգոյութիւնը, այլեւ ըստ էութեան քաւում Ղարաբաղի քրտերի շուրջ եօթանասնամեայ մեղքը։ Բանն այն է, որ յարեւնման սուլ-

թանական-երիտթուրքական-քեմալական հայակերների, որոնք քրտական ինքնավարութեան խոստումով քիւրտ աւազանուն արեւմտահայութեան բնաջնջմանը մասնակից դարձնելուց յետոյ՝ իրենց հարուածն այնուհետեւ ուղղել էին քիւրտ ժողովրդի դէմ, մուսաւաթական աւազակապետերը 1918–1920 թուականներին մի անգամ չէ, որ Լաչինի շրջանում «Քրտիստան» ստեղծելու խաբէութեամբ, Արաքսից հիւսիս թափանցած եւ Ղարաբաղում հաստատուած քրտերին օգտագործել էին մարտնչող արցախահայութեանը Զանգեզուրի կողմից զինական ամէն մի օգնութիւն խոչընդոտելու եւ Հայկական Արցախի ռազմական օղակումը աւարտուն դարձնելու համար։ Ոչ թէ զինու զօրութեամբ մարտադաշտում, այլ խաբէութեամբ եւ բռիտանական ռազմական գործիչների խարդաւանքներով Արցախին տիրանալուց յետոյ, մուսաւաթական աւազակախմբերն իրենց հարուածը շատ բնականօրէն ուղղել էին մահմեդական քրտերի դէմ, որոնց եթէ ոչ փաստական ձուլման, ապա գոնէ որպէս ազգային ուրոյն միաւոր Ատրպէյճանում անգոյացման գործն իր աւարտին էին հասցրել թաթար համայնավար-խորհրդային աւազակները։ Մարդահամարների տուեալներով 1926 թուի 41,000 քրտերը 1970 թուին նուազել էին մինչեւ 7500, որպէսզի գլխովին անհետանան 1979 թուին։

Բոլոր դէպքերում Արցախի տարածքի մահմեդական քրտութեան ճակատագիրը դաս է ու խրատ Իսլամի հետեւորդ այն բոլոր ժողովուրդներին թէ համայնքներին, որոնք կրօնադաւանական միասնութեան ու «եղբայրութեան» ստապատիր քարոզներից մոլորուած, տասնել կամ նուազ խանդավառութեամբ գցւում են համաթուրքական ջերմով ոգեւորուած նախկին խաշնարածների թուրք թէ թաթար յետնորդների պղտորած ջրերը։

Եւ սակայն, իրենց բախտին թողնելով աղբդատապարտանեան թաթարների ազգակերական զազրելի հակումներին զոհ գնացող մահմեդական քրտերին, վերադառնանք հայկական Արցախի եւ տարաբախտ արցախահայերի ճակատագրի հետ կապուած հարցերին ու կատարենք մի շարք շատ կարեւոր հաստատումներ։

## Դ.

Արցախի հայութեան դժբախտ ճակատագրի մասին խօսելիս կայ մի ճշմարտութիւն, որի աչքերի մէջ ուղիղ նայելն, այսօ՛ր, աւելի քան անհրաժեշտ է, քանի որ Լեռնային Ղարաբաղի Խորհրդային Հայաստանի հետ վերամիաւորման համար համահայկական իսկական պայքարը դեռ առջեւում է։ Դա՝ արցախահայութեան ճակատագրի նկատմամբ խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութեան վերաբերմունքին վերաբերող ճշմարտութիւնն է։

Այդ ճշմարտութեանը հաղորդակից դառնալուց առաջ տեսնենք, թէ 1948 թուին Լեռնային Ղարաբաղին տուած իր կիսագաղտուկ (աւելի շուտ «արտասահմանից վերադարձած դաշնակցական-ազգայնական գրողի» թաթար չեկիստների համար խիստ տհաճ, հետեւաբար խստիւ հսկողութեան տակ առնուած) այցելութեան առթիւ Ա. Իսահակեանն ի՛նչ է արձանագրել իր «Ղարաբաղեան Գրառումնե-

րնում.

«Լեռնային Ղարաբաղի ինքնավարութիւնը բացարձակ սուտ բան է. նա Պաքուին ենթարկուած մի բան է։ Ատրպէյճանն է իշխում ամէն բանի մէջ։

Սահմանակերտ. հլու հպատակ։ Ձեւական ինքնավարութիւն, ինքնախաբէութիւն, իրաւազուրկ գրեթէ։ Ինքնավար չէ բնաւ. ամէն բանի մէջ, ամենաչնչին բանի մէջ ենթարկուող Պաքուին։

Ղարաբաղը բացարձակ կտրուած է Հայաստանից. ո՛չ թերթ, ո՛չ գիրք։ Սահմանակերտ ոչ մի հայ գիրք չի տպւում։ Մի ողորմելի թերթ։ Հայերէն դասագիրք չունեն. Պաքւում չեն տպում հայ դասագրքեր, նոյնիսկ մայրենի լեզուի։ Սա անհոգութեա՞ն արդիւնք է, թէ՝ սիստեմ, քաղաքականութիւն։

Խեղճ ղարաբաղցիք կարծում են, թէ իրենք ապրում են թուրք պատմական հողերի վրայ, ոչ թէ՝ ընդհակառակը։ Խաւար երկիր, իշացած։

Ղարաբաղում ռուսաց լեզուն նուիրագործուած է։ Կառավարութեան ժողովներում, միթինգներում, հանդէսներում ռուսերէն են խօսում։ Մարզային կոմիտէի նախկին քարտուղար Մանուկեանը բոլորի, գիտցող-չգիտցողի հետ ռուսերէն էր խօսում եւ ականջները ձեռքով ծածկում էր, երբ իր հետ հայերէն էին խօսում»։

Ընթերցում ես Վարպետի գրառումները եւ ցաւից սիրտդ ծակւում է։ Նրանք չընթերցէին ու չիմանային, որ աշխարհի վրայ ինչ որ տեղ քո հարազատ արիւնակիցներն այդ օրին են եղել եւ իրենց «վերածնուած» հայրենիքը չի էլ իմացել, որպէսզի նրա «բոցաշունչ ազգասէր» ղեկավարները թեւքերը քշտած ապեղանի հասցնէին դժբախտ ճակատագրի բերմամբ օտար ափեր ընկած իրենց բալեքին...

Կանգ առ, ընթերցող, յուզմունքի մի՛ տրուիր, սակայն, ճողոպրիր կաթուածից եւ հարց տուր Լեռնային Ղարաբաղից ընդամէնը մի ձորով բաժանուած Մայր Հայրենիքի ղեկավարներին՝ Յարութիւնեանին, Թովմասեանին, Քոչինեանին, Դեմիրճեանին ու նրանց եկած-գնացած թէ այսօր էլ դեռ Երեւանում պաշտօնական աթոռ զբաղեցնող չքախմբականներին.

— Հայաստանի պարոնայք ղեկավարներ, մի՞թէ չէիք տեսնում այդ ամէնը, ինչ հասարակ հեռադիտակով էլ կարող էիք հաստատել Զանգեզուրի զովասուն բարձրունքներից, երբ դարաւոր թթենու տակ քեֆի նստած, քարահունջի բաժակ ի ձեռին խմում էիք հայ կոլխոզնիկի վերջին ոչխարի խորովածը։ Տեսնում ու հաստատում էիք, անշուշտ, սակայն չնկատելու էիք տալիս։ Ինչո՞ւ։ Որպէսզի ձեր սիրտը չցաւի՞։ Հազիւ թէ։ Ծակւում է բաբախուն սիրտը։ Ո՛չ ստամոքս-սիրտը...

Ենթադրենք Վարպետի գրառածը 1948 չարագուշակ թուին էր։ Ստալինի ժամանակներն էին, Բերիա կար։ Իսկ 1988 թուի՞ն, Վարպետի գրառումից քառասու՛ն տարի անց։ Դեռ մինչեւ Փետրուարը, երբ արցախահայութիւնը «գոռաց»։ Արտախորհրդային սփիւռքի հայ մանուկների համար երկու տասնամեակ դասագրքե՛ր էին տպում։ Լաւ էին անում, չա՛տ լաւ։ Սակայն ինչո՞ւ մի երկու դասագիրք էլ արցախահայ մանուկների համար չէին տպում։ Նրանք, ի՞նչ է, սեւակն էին, իսկ արտա-

խորհրդայինները՝ կապուտաչեա՞յ։ Եթէ թաթարներն էին խոչընդոտում, այդ պարագայում ինչո՞ւ Մոսկուան չէին դիմում։ Մոսկուայում թաթարասէ՞ր խուժե՞ր էին նստած։

Ի միջի այլոց, Արցախի հայութիւնը 1988 թուի Փետրուարին «զոռաց» ոչ միայն թաթարների անհանդուրժելի զարգացած ոտնձգութիւններին ի բողոք…

…Նաեւ «զոռաց», որպէսզի կատարուած իրողութեան, իրենց ազգային պարտքի առաջ դէմյանդիման դնի Հայաստանի բարձրաստիճանաւորներին։

Ինչպէս գիտենք, «զոռոցը» հասաւ Հայաստան, այսինքն հայ ժողովրդին, միա՛յն ժողովրդին, որ իր ծոցից անմիջապէս ծնեց այդ «զոռոց»ին օրը օրին արձագանգող եղբայրաբար հաւատարիմ կոմիտէ՝ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէն։

Իսկ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի կոմիտէ՞ն, որը (ենթադրելով, որ դէմիրճեանական կուսակցական-պետական աւազանին ի պաշտօնէ մխլինաքաղի գործով բազմազմաղ էր) պէտք է ի պաշտօնէ գոնէ ինքը լսէր այդ «զոռոցը», քանի որ վերջին հաշուով Արցախն էլ «սփիւռք» էր։ Թէկուզ խորհրդային, բայց յամենայն դէպս սփիւռք. ինչպէս՝ Լիբանանը, կամ Սիրիան, Աւստրալիան, Արժանթինը։ Այն էլ՝ ամենամօտիկ սփիւռք…

Լսէք, թէ ի՛նչ է գրել «Սովետական Հայաստան» օրաթերթում, 1988 թուի ամռանը, Սոեփանակերտի պաշտօնատարներից մէկը՝ Լ. Մկրտչեանը, քաղգործկոմի մշակոյթի հարցերի պատասխանատուն.

«Հայաստանի պետական պաշտօնեաները այդ (Դէմիրճեանի իշխանութեան,– Ե.Ն.) տարիներին մեզ նայում էին որպէս այլ ազգի, կեղծ միջազգայնականի սեւ ակնոցներով։ Իսկ սփիւռքահայերին չէին մոռանում… Նրանց տեղը գիտէին, «բարեգործական նպատակներով» արտասահմանեան այցելութիւններ կային, հետաքրքրութիւն կար… Հայկական այս փոքրիկ ինքնավար մարզի հոգսերը երբեք օրակարգի հարց չդարձան նրանց համար։ Ծարը գլուխը. ի՞նչ օգուտ ղարաբաղցիներից։ Դժբախտաբար, Հայաստանում նման ձեւով մտածող պաշտօնեայ հայեր կային։ Ասում են, թէ հիմա էլ դեռ կան…»

«Հիմա էլ»– այսինքն նոր ղեկավարութեան օրօք։

Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի կոմիտէում նոր (յարութիւնեանական) ղեկավարութիւնը թէպէտ հին (դէմիրճեանական) ղեկավարութիւնն է, սակայն տեսնենք, թէ այդ հին-նոր ղեկավարութիւնն ի՞նչ մօտեցում է ունեցել Ղարաբաղեան հարցին, նաեւ՝ Ղարաբաղեան շարժման։ Դա շատ կարեւոր է. քանզի Սփիւռքահայութեան կոմիտէն, Ղարաբաղեան հարցում սփիւռքահայութիւնը կողմնորոշող (մեր կարծիքով՝ ապակողմնորոշո՛ղ) հիմնական ուղեցոյցն է։ Սոորեւ կոմիտէի «մօտեցումը» մասամբ, միայն մասամբ բացայայտող մի վաւերագիր, որը մենք ստացել ենք Երեւանում սովորող սփիւռքահայ ուսանողներից։

«Բաց նամակ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի կոմիտէի նախագահ ընկեր Կ. Դալլաքեանին (պատճենը՝ սփիւռքահայ մամուլին, կազմակերպութիւններին եւ զանգուածներին, հայրենի մտաւորականութեան).

1988 թուի Մարտի 31-ին, Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի կոմիտէի նախագահ ընկեր Կ. Դալլաքեանն ընդունեց Երեւանի բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում սովորող սփիւռքահայ ուսանողներին։ Զրոյց-հանդիպման առանցքային հարցը Ղարաբաղի հարցի շուրջ եղած իրադարձութիւններն էին։ ...Ընկեր Դալլաքեանը իր ելոյթում ունեցաւ որոշ արտայայտութիւններ, որոնք մեր կարծիքով չեն համապատասխանում նրա զբաղեցրած պաշտօնից բխող պատասխանատուութեան.

1) Ըստ ընկեր Դալլաքեանի, Ղարաբաղի հարցի ներկայիս բարձրացումը եւ այդ առնչութեամբ ժողովրդային ելոյթները «ժամանակավրէպ են» եւ վնասում են հարցի լուծմանը։ Նա յայտնեց, որ 1945 թուականին, երբ ստեղծուել էին նպաստաւոր պայմաններ Արեւմտեան Հայաստանի հողերի ազատագրութեան համար, «Հայաստանի կառավարութիւնը չունէր պատրաստի թղթածրար»։ Ընկեր Դալլաքեանը խոստովանեց, որ «Հայաստանի կառավարութիւնը գործնականօրէն, գիտականօրէն, քաղաքականօրէն (Ղարաբաղի) հարցին բոլոր հնարաւոր բաղադրամասերով եւ այլն նախապատրաստուած չէ»։ Վերլուծելով երեւանեան իրադարձութիւնները, ընկեր Դալլաքեանը հաւաստիացրեց, որ «ամենադժուար պահին (Հայաստանի) կառավարութիւնը լրիւ գտնուեց ժողովրդի կողքին»։

Հարց է առաջանում. այն մարմինները, որոնք 1945 թուականի դառը փորձից ելնելով լաւ էին գիտակցում, որ պատմականօրէն անհրաժեշտ պահերին հարկաւոր է համակողմանի պատրաստ լինել, ինչո՞ւ այսօր հարցին նախապատրաստուած չէին։ Իսկ եթէ անհրաժեշտ պահին չես կարողանում ըստ արժանւոյն ներկայանալ եւ ներկայացնել քո ժողովրդի շահերը, էլ ինչո՞վ եւ ինչպէ՞ս ես ժողովրդի կողքին լինում։ Դա փաստւում է գործերով, իսկ տուեալ պահին գործ նշանակում էր համակողմանի նախապատրաստութիւնը։

Սոցիալիստական հասարակագիտութիւնը մեզ սովորեցնում է, որ իւրաքանչիւր հասարակական երեւոյթ (ժողովրդական ելոյթներ եւ այլն) պատճառաբանուած է եւ երեւան է գալիս պատմական որոշակի, անխուսափելի, անհրաժեշտ պայմաններում։ Հետեւաբար, Ղարաբաղի հարցի ժամանակավրէպութեան մասին խօսել՝ նշանակում է աղաւաղել եւ վերաքննութեան ենթարկել մարքս-լենինեան ուսմունքի հիմնական դրոյթները։

2) Ընկեր Դալլաքեանը յայտնեց. «Մինչեւ հիմա Հայաստանի կառավարութիւնը ըստ մեր օրէնքների իրաւունք չի ունեցել իր սահմանից դուրս զբաղուելու հայերի հարցերով»։ Գտնում ենք, որ այս դատողութիւնը ճիշտ է, եթէ հարցը վերաբերում է հայերին որպէս անհատների, եւ երբեք ճիշտ չէ, եթէ այն վերաբերում է հայերին որպէս հաւաքականութեան։ Եթէ խնդիրը այդպիսին չլինէր, ապա ինչո՞ւ կազմակերպուեց եւ շարունակւում է ներգաղթը։ Լիբանանահայ գաղութը ընդմիշտ կը յիշէ 1978–1979 թուականների իր ամենածանր օրերին հայրենի կառավարութեան պաշտպանող ձեռքը։ Ինչո՞վ բացատրել Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի կոմիտէի գոյութիւնը, սփիւռքահայ ուսանողների հայրենիքում կեանքի ուղեգիր ստանալու փաստը եւ այլն։ Առաջ

գնալով իր խօսքում, ընկեր Դալլաքեանը ասաց. «Հայաստանի կառավարութիւնը ամենայն հայոց կառավարութիւն չէ… եւ չի էլ լինելու»։ Եթէ ոչ մեր, ապա ընկեր Դալլաքեանը տարիքը պիտի ներէր յուշելու սփիւռքահայութեան եռանդուն մասնակցութիւնը ֆաշիզմի դէմ պայքարում, Խորհրդային երկրի բանակին «Սասունցի Դաւիթ» տանկային շարասեան նուիրաբերումը, գաղթօճախների հայ կանանց հիւսած ձեռնոցներն ու գուլպաները խորհրդային բանակի հայ մարտիկների համար եւ նման հազարաւոր յուզալից իրողութիւններ։ Այս բոլորը վկայում են, որ սփիւռքահայութիւնը նաեւ իրն է համարում Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը։ Թէեւ ընկեր Դալլաքեանն ու հայրենիքում եւ սփիւռքում որոշ մարդիկ դժբախտաբար ժխտում են այս փաստը եւ աւելին՝ շեշտում, որ «Հայաստանի կառավարութիւնը ամենայն հայոց կառավարութիւն չի էլ լինելու»։ Մենք չենք հասկանում, թէ ընկեր Դալլաքեանը ի՞նչ հիման վրայ է խօսում նաեւ ապագայի հաշուին։

Հայաստանի կառավարութիւնը ունի իրաւունքն ու պարտականութիւնը զբաղուելու նաեւ Հայաստանի սահմաններից դուրս գտնուող ամբողջ հայութեան ճակատագրով, իսկ առաջադիմական եւ հայրենասէր սփիւռքահայութիւնը ունի բարոյական իրաւունքն ու պարտաւորութիւնը կիսելու հայրենի ժողովրդի ուրախութիւններն ու վշտերը։ Հայկական սփիւռքը ծնունդը չէ քաղաքական վտարանդիութեան, այլ զոհն է հայ ժողովուրդն ու Հայաստանը ջնջել փորձած բազմադարեան բարբարոսների դարաւոր ցեղասպանութեան։ Սփիւռքահայութիւնը հայրենիքից տարանջատելու բոլոր փորձերը դատապարտուած են ձախողութեան։

3) Սփիւռքահայութեան հետ խօսելիս, սպասում էինք… որ ընկեր Դալլաքեանը առարկայականօրէն կը գնահատէր Սումկայիթեան կազմակերպուած ջարդերի բնոյթը եւ կ'ասէր ճշմարտութիւնը։ Ցաւօք, մեր սպասածը չարդարացաւ։ Անկախ Սումկայիթում զոհուած հայերի թուաքանակից, այնտեղ կատարուածը հրէշային եղեռնագործութիւն է, որի մասին լռելը կամ իրականութիւնը խեղաթիւրելը նշանակում է յանցակից լինել ոճրագործներին ու նրանց կազմակերպիչներին, լռելեայն դուռ բացել նոր Սումկայիթների առաջ։

4) Ղարաբաղի հարցին շուրջ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ի եւ Սիլվա Կապուտիկեանի, Սօս Սարգսեանի եւ այլոց ելոյթների չտպագրուելը «Հայրենիքի Ձայն»ում, ընկեր Դալլաքեանը պատճառաբանեց այդ ժամանակաշրջանում իր Երեւանում չլինելով։ Սա վկայում է, նոյնինքն ընկեր Դալլաքեանի խօսքերով ասած, պիւրոկրատիզմի՝ «խոչընդոտի վերածուած կառավարման այն համակարգի մասին, որը… պիտի կոտրուի, ջարդուի, փշրուի…»։

5) Ընկեր Դալլաքեանը յայտնեց, որ «Ղարաբաղի հարցի առնչութեամբ եթէ ժամանակին շատ այդպիսի բաներ (նկատի ունի ժողովրդային բազմահազարանոց ցոյցերը եւ հաւաքները) չարուէին, հիասթափութիւն այս ձեւով չէր լինի»։

Նա ասաց, որ «հիասթափութիւն կայ ոչ միայն Հայաստանի երիտասարդութեան մօտ…, այլեւ սփիւռքում» եւ հարցերը իրատես դիրքերից դիտելու կոչ ուղղեց։ Ըստ ընկեր Դալլաքեանի, «Հայաստանը եղել է, կայ առանց Ղարաբաղի դժբախտաբար, այսուհետեւ էլ կը

մնայ դժբախտաբար առանց Ղարաբաղի,... եթէ ի հարկէ Ղարաբաղի հարցը չլուծուի այնպէս, ինչպէս մենք ենք ցանկանում»։ Քիչ ետք նա աւելի պարզեց իր միտքը, ասելով. «Ինչո՞ւ էք կարծում որ անպատճառ մեր սերնդի կամ ձեր սերնդի առջեւ է դրուած այդ (Ղարաբաղի) հարցը լուծելու խնդիրը»։

Մեր հերթին հարց ենք տալիս, թէ ինչո՞ւ հենց մեր սերնդի ժամանակ պիտի չլուծուի Ղարաբաղի հարցը։ Այստեղ «մեր սերունդ» ասելով հասկանում ենք վերակառուցման ժամանակաշրջանը, երբ ամբողջ Խորհրդային Միութիւնում վերանայւում են անցեալի սխալները, երկրին մէջ սկսել են թեւածել հրապարակայնութիւնն ու ժողովրդավարութիւնը, որոնք լայն հնարաւորութիւններ են ստեղծել արդարացիօրէն լուծելու նոյնիսկ ամենաբարդ հարցերը։ Ամբողջ աշխարհն է հետեւում խորհրդային ղեկավարութեան վերցրած նոր «քուրսին» եւ ընդառաջ գնում նրա առաջադրած նոր առաջարկութիւններին ու մտքերին։ Մի պահ պատկերացնենք, թէ ի՞նչ կը ստացուէր, եթէ իւրաքանչիւր մարդ մտածէր, թէ զինաթափման հարցը իր սերնդի հարցը չէ, իրաւազրկուած ժողովուրդները ձեռնածալ նստէին ու մտածէին, թէ իմփերիալիզմից ազատագրուելու գործը իրենց պարտքը չէ եւ այլն։ Սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ լճացման հոգեբանութիւն եւ մտածողութիւն, այն էլ վերակառուցման ժամանակներում։

Սփիւռքահայ ուսանողութիւնը հաւատում է աշխարհի պատմութեան համար նոր ուղի բացող ժամանակաշրջանին, նրանով պայմանաւորուած նոր մտածողութեանը։ Ամբողջովին համակարծիք ենք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հարցի կորպաչովեան գնահատականին. «Ոչ մէկը հարց չի դրել ո՛չ խորհրդային իշխանութեան մասին, ո՛չ խորհրդային պետութիւնից դուրս գալու մասին, ո՛չ սոցիալիզմի մասին։ Ո՛չ։ Ճանաչւում էր եւ կուսակցութեան դերը, եւ այն քաղաքականութեան դերը, որ նա վարում է ազգային յարաբերութիւնների ոլորտում Լենինից յետոյ։ Խօսքը գնում է այն մասին, որ կան մշակութային ու էթնիկական բնոյթի հարցեր, որոնք մինչեւ վերջերս դուրս էին մնում մեր տեսադաշտից։ Կուտակուել են խնդիրներ» («Սովետական Հայաստան», 1988 Մարտի 26)։

Մենք չենք մոռանում, որ ե՛ւ արտասահմանում, ե՛ւ մեր վերածնուած հայրենիքում դժբախտաբար կան կեանքի նոր ընթացքին հակառակող անհատներ եւ ույժեր, որոնք ղարաբաղեան իրադարձութիւնները այլ կերպ են մեկնաբանում ու փորձում են դրանք չարաշահել իրենց նեղ հատուածային շահերի համար։ Բայց դա երբեք պէտք չէ դառնայ առիթ՝ ժողովրդային արդար պահանջները ծուռ հայելու մէջ ներկայացնելու...»

Ի դէպ, արցախեան պահանջատիրութեան «անժամանակութեան» պնդումը («Թայմինկը ճիշտ չէր»), որը լաւագոյն դէպքում վերածւում է հարցադրման («Թայմինկը ճի՞շտ էր»), սփիւռքում շրջում է յատկապէս այն «մտաւորականների» միջավայրում, որոնք առաւել յաճախ հիւրն են հայրենիքի։ Եւ այդ՝ կրկնում ենք՝ զզուելի՛ պնդում-հարցադրումը, այնքան յամառ ու նպատակաւոր, որ սկսել է թափանցել նաեւ ազնիւ, ու իրա՛ւ, մտաւորականների միջավայր,

«ընդյատակեայ» յատուկ շրջափերականով հենց Երեւանից էլ ներշնչուած պէտք է լինի։

«Թայմինկ»ն արցախահայը չորոշեց. նա պարզապէս «գտաւ»՝ երբ դանակը հասաւ ոսկորին եւ այլեւս հնարաւոր չէր չգտնել։ Մի փոքր էլ (հի՞նգ տարի, տա՞ս) եւ Արցախում հայկական ժամանակը կանգ էր առնելու, արդէն «գտնացող» չէր մնալու։ Իսահակեանի մատնանշած թաթարական «սիստեմ-քաղաքականութեան» որպէս հետեւանք։ Նախիջեւա՛նը վկայ։

«Թայմինկ»ն, ուրեմն, արցախահայը չորոշեց։ Որոշողը Պաքուի գաղափարակենտրոնն էր, իր երկարամեայ հայակերական քաղաքականութեամբ, որին արցախահայոց հակազդեցութեան բոլոր տարատեսակները համաթիւրքական-թուրանական թաթարութիւնը կանխատեսել էր, բացի խորհրդային-համայնավար առօրեայում անկանխատեսելի «գտնող»ից՝ ինքնավար մարզի պետական բարձրագոյն իշխանութիւն հանդիսացող մարզային խորհրդի հայկական-ազգային որոշումից (որի հնարաւորութիւնն էլ անհնարին էին համարում՝ Փետրուարի 20-ին, ինչպէս դեռ առջեւում կը տեսնենք, Ստեփանակերտը պաշարման անանցանելի օղակի մէջ առնելը բաւարար հակամիջոցառում համարելով)։

«Թայմինկ»ը Պաքուի գաղափարակենտրոնի հետ եթէ համատեղ չորոշեց էլ, ապա այն անպայման փութացրեց հենց ինքը՝ Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը։ Մի անգամ եւս ձայնը տանք արցախահայ պատասխանատու գործիչ Լ. Մկրտչեանի հրապարակային մեղադրականին.

«Վերջերս մի զրոյցում լռանցու շիտակութեամբ խօսուեց այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան ազգային հոգեւոր մշակոյթի վատթար վիճակի համար զգալի մեղք ունեն նաեւ Հայկական Հանրապետութեան մտաւորականութիւնը, արուեստի եւ մշակոյթի աշխատողները եւ, ի հարկէ, Հանրապետութեան նախկին ղեկավարութիւնը (որի աւելի քան 90 տոկոսը տուեալ պահին «նոր» ղեկավարութեան բաղադրամասն էր,– Ե.Ն.), որոնք ձեռքները ծալել, մի կողմ էին կանգնել։ Նրանց չէր անհանգստացնում Արցախ աշխարհի կործանման վտանգը։ Նոյնիսկ գտնուեցին մարդիկ, որոնք իրենց «փոխլաք» կարգադրութիւններով արագացնում էին այդ կործանումը։ Խօսեմ թէկուզ մի փաստի մասին»...

Այդպիսի փաստեր (իսկ խնդրոյ առարկայ փաստը վերաբերում է Հայաստանի Մշակոյթի նախարարութեան ուղղակի մեղսակցութեանը թաթարական նախարարութեան, աւելի շուտ հայ-թաթարական համատեղ միջոցառմանը՝ Արցախը մշակութայնօրէն անապատի վերածելու) կարելի է անվերջ թուարկել։

Եւ ահա, Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան 1988 թուի յուլիսեան բախտորոշ նիստին, որտեղ լսուելու էին արցախահայութեան «գտնող»ն ու հայրենահայութեան տուած արձագանքը, ինչո՞վ էր գնում եւ ինչպէ՞ս հանդէս եկաւ Մայր Հայրենիքի ղեկավարութիւնը։ Փորձենք պատասխանել հանգուցային այս հարցին։



Մատենադարանի շէնքի առաջ Հայոց Մեծաց արժանաւոր յետնորդների ուխտը

Խորհրդային սահմանադրութեան մէջ արդէն քաջածանօթ 78-րդ յօդուածը հայոց պատմութեան էջերում պիտի արձանագրուի ոչ միայն որպէս Մայր Հայրենիքի հետ Արցախի վերամիաւորման հակառակորդների, ընդհանրապէս հայ ժողովրդի թշնամիների հեշտ յաջողութիւնը պայմանաւորող գործօն, այլեւ որպէս խորհրդահայ կուսակցական-պետական գործիչների առնուազն անվճռականութեան եւ անհեռատեսութեան դատակնիք։

Բաւ լիցի. մենք հեռու ենք Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի նախօրէին թէ բուն իսկ այդ նիստի ընթացքում Խորհրդային Հայաստանի նոր (հոգ չէ թէ արմատաւորման կարիք ունեցող նորաբոյսների նկատմամբ այդպիսի որոշ զիջողականութիւնը քաջալերող) ղեկավարի՝ իր նախորդի համեմատութեամբ յարաբերաբար անկաշկանդ ընթացքը, յատկապէս Կրեմլի հաւաքոյթում հայկական պատուիրակութեան միւս անդամների յանդգնութեան որոշակի տարր պարունակող ելոյթները թերագնահատելու մտքից։ Նրանք արեցին այն առաւելագոյնը, ինչը թոյլատրւում էր համայնավար-խորհրդային քաղաքական կենցաղում, որոշ պահերի մինչեւ իսկ դուրս գալով կանոնակարգի սրբագործուած սահմաններից։ Մենք նկատի ունենք մասամբ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Յունիսի 15-ի գումարման եւ ծանօթ որոշման ընդունման խիզախութիւնը, որը, լինելով հանդերձ Ղարաբաղեան համահայկական պահանջատիրական շարժման անուրանալի արգասիքը, կարող է որոշ առումով արձանագրուել նորընտիր առաջին քարտուղար Սուրէն Յարութիւնեանի «նախաձեռնութիւններ» տոմարում, առանձնապէս Կրեմլի կամարների ներքոյ հայութեան պատուիրակների կողմից ընդհանրապէս, մասնաւորապէս ակադեմիկոս Ս. Համբարձումեանի ու գրող Վ. Պետրոսեանի կողմից կուսակցութեան գլխաւոր քարտուղարի խոյահարման աննախադէպ փաստը։

Այդ ամէնն անուրանալի ճշմարտութիւն է, անշուշտ։ Եւ սակայն նոյնքան անուրանալի ճշմարտութիւն է եւ այն, որ բուն իսկ խորհրդահայ ղեկավարութիւնը մի ակնթարթ իսկ չմոռացաւ, որ մի մասնիկն է համայնավար-խորհրդային համակարգի, հետեւաբար եւ բոլոր նեարդներով չկարողացաւ համաձուլուել Հայկական դատի հետ։ Դատապաշտպանը, նոյնիսկ եթէ իրեն ապաւինածը քրէական անուղղելի յանցագործ է եւ նրա փրկութիւնն էլ՝ անյուսալի, ի սպառ մոռանում է դատաւորի, ատենակալների ու դատախազի հետ իր մասնագիտական-արհեստակցական բոլոր աղերսները, նրանց բոլորին դիտում է որպէս իր պաշտպանեալի, հետեւաբար եւ իր երդուեալ հակառակորդ, ու մարտի է նետւում փակ աչքերով։ Այս իմաստով էլ խորհրդահայ ղեկավարութիւնը, յանձինս յատկապէս նորընտիր առաջին քարտուղարի, համոզուած լինելով հանդերձ ի տարաժամի իր յանձն առած Դատի բացարձակ արդարացիութեանն ու վեհութեանը, չկարողացաւ լինել իսկական դատապաշտպան։ Եւ չէր էլ կարող լինել, քանի որ չէր կարող փոքր ինչ թօթափուել դատարանի հետ իր գաղափարական արիւնակցութեան անդամալուծող հրահանգից, գլխաւոր ատենակալի պաշտօնի թէ անձի կաշկանդիչ ճնշումից։ Այստեղից էլ՝ ինչպէս Հայկական ԽՍՀ Գերագոյն

Խորհրդի Նախագահութեան նախագահի, այնպէս էլ յատկապէս Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարի բացորոշ անվճռականութիւնն այնտեղ, որտեղ անտեղիտալիութիւնը հրամայական էր, փոխ հասկացողութեան բացայայտ պատրաստականութիւնն այնտեղ, որտեղ անզիջում պահանջատիրութիւնը կենսական էր։ Հրամայականօրէն կենսական էր, մանաւանդ, գիտակցումն այն բանի, որ ակներեւ անվճռականութիւնն ու բացայայտ զիջողականութիւնը, որոնք դրսեւորուեցին, փաստօրէն նշանակում էին գիտակցաբար կանխորոշել Ղարաբաղեան հարցում հայկական կողմի դիրքորոշման խախուտութիւնը, ուրեմն եւ պարտութիւնը։

Առաջին հայեացքով կարող է թուալ, որ հակասութեան մէջ ենք. մի կողմից կարծես թէ շեշտում ենք ու դրուատում խորհրդահայ ղեկավարութեան անկաշկանդութիւնը, միւս կողմից ընդգծում ենք ու պարսաւում նրա անվճռականութիւնը։ Իրականում ոչ մի հակասութիւն էլ չկայ։ Իսկ դա՝ թէկուզ ելնելով այն իրողութիւնից, որ Հայաստանի պատուիրակութիւնը Մոսկուա էր գնում Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի շատ որոշակի եւ փոխզիջման ակնարկ իսկ չպարունակող որոշումը պաշտպանելու, այլ խօսքով՝ հայ ժողովրդի ճշտորոշ մի պահանջ հետապնդելու, սակայն ղեկավարութիւնն առաջին իսկ պահից հանդէս էր բերում այդ որոշումը մոռանալով որեւէ մի այլ, միայն թէ «փոխզիջողական» որոշում ընդունելու պատրաստակամութիւն։

Փոխզիջողական (կոմպրոմիսային) լուծման իր պատրաստակամութիւնը Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը դրսեւորեց իր առաջին իսկ ներկայացուցչի՝ Հանրապետութեան նախագահ Հ. Ոսկանեանի ելոյթում, որում, ինչքան էլ զարմանալի թուայ, թէ՛ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միաւորելու պահանջն էր հաստատակամօրէն հնչում, թէ՛ այդ պահանջի բաւարարման փոխարէն որեւէ այլ լուծման Հայաստանի համաձայնութիւնն էր բացայայտօրէն հռչակւում։ Հրանդ Ոսկանեանը իրօք էլ մի կողմից շեշտում էր, որ «ո՛չ մարզի բնակչութիւնը, ո՛չ Հայկական ԽՍՀ-ի բնակչութիւնը չհաշտուեցին այդ աղաղակող անարդարութեան հետ», այլ խօսքով Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մէջ մտցնելու 1921 թուի չարաբաստիկ որոշման հետ եւ որ «Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը, արտայայտելով հայ ժողովրդի միահամուռ կամքը, համաձայնութիւն տուեց Հայկական ԽՍՀ կազմի մէջ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մտնելուն եւ դիմեց ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդին, խնդրելով քննարկել եւ դրականօրէն լուծել այդ հարցը»։ Միւս կողմից, սակայն, Հրանդ Ոսկանեանը անմիջապէս էլ իր համար նահանջի, նշանակում է՝ Հայկական դատի հակառակորդների համար գրոհի հող էր նախապատրաստում, յայտարարելով. «Մենք հասկանում ենք, որ այսքան բարդ հարցը քննարկելիս անհրաժեշտ է հաշուի առնել երկու հանրապետութիւններում տիրող չափազանց լարուած իրավիճակը։ ... Լեռնային Ղարաբաղի բացառիկ բարդ հարցը ... պէտք է լուծել հանգիստ, անչափ պատասխանատու կերպով, սոցիալիստական դեմոկրատիայի եւ օրինականութեան շրջանակներում, նախ եւ առաջ միմեանց ընդառաջ արուող քայլերի միջոցով»։ Եւ հանդիսաւորապէս սեղանի վրայ

էր գնում փոխզիջողական լուծման յանգելու հարցը. «Ինչո՞ւ միմեանց ընդառաջ չգնանք, չգտնենք փոխզիջում, այլընտրանք»։

Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նիստին հեռուստատեսային ուղղակի հաղորդմամբ հետեւած եւ այդ նիստի սղագրական արձանագրութիւնն ու ընդունած որոշումը մամուլում ընթերցած ամէն մի դիտորդ չի կարող սահմանադրական-օրինական համարել պարոն Ոսկանեանի «փոխզիջում-այլընտրանքի» հետամուտ ելոյթը, քանի որ այդ հետամտումը տրամագծօրէն հակառակ էր հայկական խորհրդարանի օրէնքի ոյժ ունեցող եւ առաջին հերթին հանրապետութեան նախագահի համար անխախտելի յանձնարարականի բնոյթ կրող որոշման։ Հենց այդ իրողութիւնն էլ չի կարող ամէն մի անկողմնակալ դիտորդի չհակել այն մտքին, որ Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը, կա՛մ հարկադրեալ գումարելով Գերագոյն Խորհրդի յունիսեան նիստը, հարկադրեալ էլ համաձայնել էր Լեռնային Ղարաբաղը Մայր Հայրենիքի հետ վերամիաւորելու գաղափարի իրականացումը հետապնդելու որոշման հետ, առանց սակայն, այդ որոշումը համարելու միակ եւ կամ առաւել խելամիտ լուծումը, կամ էլ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Յունիսի 15-ի եւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Յուլիսի 18-ի նիստերի միջեւ ընկած միամսեայ ժամանակաշրջանում ինչ-ինչ հանգամանքների, աւելի հաւանաբար՝ բարձր ոլորտներից հասնող ինչ-ինչ թելադրանքների ներգործութեամբ համաձայնել էր Կրեմլի հաւաքոյթում ձեւացնելով, որ հայկական խորհրդարանի որոշումն է հետապնդում, իրականում ցոյց տալ, որ այդ որոշման ձախորդութեանը համոզուած լինելով, հակուած է մի այլ՝ «փոխզիջում-այլընտրանք» որոնելու եւ այն ընդունելու մտքին։

Իր տեղում դեռ կը տեսնենք, որ փոխզիջողական այդ այլընտրանքի հայրը եւ այն Գերագոյն Խորհրդի Նախագահութեան մկրտութեան աւազանին հայկական պատուիրակութեան գրկում մատուցողը միայն ու միայն գլխաւոր քարտուղար Մ. Կորպաչովը կարող էր լինել։ Այլ խօսքով որպէս ոչ թէ հաւանականութիւն, այլ որպէս հաստատման կարիք չունեցող իրողութիւն ընդունում ենք երկրորդ վարկածը։ Եւ սակայն դա չի նշանակում, բնաւ, որ հակուած չենք նաեւ առաջին վարկածի բացարձակ իրողութիւն լինելու մտքին։ Եւ հենց այդ պատճառով էլ ոչ թէ հակասական, այլ բնականոն ու տրամաբանական ենք համարում Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում Հայաստանի պատուիրակութեան դրսեւորած յանդգնութեան հետ Երեւանի կուսակցական-պետական ղեկավարութեան ընդհանուր վարքագծի պարտուողական անվճռականութեան շեշտումը։ Եւ մեր եզրայանգման հիմնաւորութեան օգտին կարեւոր ապացոյց ենք համարում այն, որ քաղաքական մարտադաշտում երեւութապէս ու թատերականօրէն ինչքան էլ յանդգնութիւն եւ ինչպիսի խիզախութիւն էլ որ դրսեւորէր, խորհրդահայ ղեկավարութիւնը գիտակցաբար մարտի էր նետուել վառօդագուրկ մի զէնքով՝ խորհրդային սահմանադրութեան 70-րդ կոպեկ չարժող յօդուածով, այն դէպքում, երբ տուեալ պարագային ամենապատշաճ, նաեւ ահեղագոյն զէնքը 78-րդ յօդուածը կարող էր լինել։

Փորձենք պարզաբանել մեր միտքը, ըստ կարգի սկսելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների

խորհրդի Փետրուարի 20-ի արտահերթ նիստի որոշումից։

Միաձայն ընդունուած այդ որոշման պատճէնը այսպիսին էր.

«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ Ադրբէյճանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդների առաջ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմը փոխանցելու վերաբերեալ միջնորդութեան մասին.

Լսելով եւ քննարկելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի դեպուտատների ելոյթները՝ Ադրբէյճանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդների առաջ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմը փոխադրելու վերաբերեալ միջնորդութեան շուրջ, Լեռնային Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց.

Ընդառաջ գնալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատաւորների ցանկութիւններին, Ադրբէյճանական ԽՍՀ Գերագոյն Խորհրդից եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդից խնդրել Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան ակնկալութիւնների նկատմամբ խորը հասկացողութեան զգացմունք դրսեւորել եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմը փոխադրելու հարցը լուծել, միաժամանակ միջնորդելով ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի առաջ դրականօրէն լուծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմը փոխանցելու հարցը»։

«Սովետական Ղարաբաղ» թերթի ռուսական հրատարակութեան Փետրուարի 21-ի համարից թարգմանուած այս որոշման պատճէնից պարզորոշ երեւում է, որ այն բացարձակօրէն համահունչ էր Խորհրդային Միութիւնում սրբազան համարուող ազգերի ինքնորոշման սկզբունքին եւ հենց այդ սկզբունքի իրականացման ձեւը (Ռուսաստանի պոլշեւիկեան կուսակցութեան Կովկասեան բիւրոյի կողմից 1921 թուին իրեն պարտադրուած գոյավիճակի շրջանակներում մնալու հարկադրուած արցախահայութեան՝ 1923 թուի Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմում ինքնավարութիւն ունենալու որոշումը) նոր պայմաններում մի այլ ու նոր կերպ լուծելու (Ադրբէյճանական ԽՍՀ-ի կազմում ինքնավարական իրավիճակը թօթափելով Հայկական ԽՍՀ-ի կազմի մէջ մտնելու) համաժողովրդական ցանկութեան, այլ խօսքով միայն իրեն պատկանող ինքնորոշման իրաւունքն իրականացնելու արցախահայութեան կամքի դրսեւումն էր։

Եւ սակայն ինչքան էլ որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգութեամբ հայ տեղաբնիկ ժողովուրդն իր միակ լիիրաւ պետական մարմնի՝ ժողովրդական երեսփոխանների մարզային խորհրդի որոշմամբ իր ազատ կամայայտութիւնն էր դրսեւում, ինչքան էլ որ մարզային խորհուրդն էլ իր որոշմամբ շեշտում էր ժողովրդի ցանկութեանն ու կամայայտութեանը ընդառաջելու, այլ խօսքով ազգերի ինքնորոշման իրաւունքից ելնելու իրողութիւնը, արցախահայութեան

ազատ կամայայտութեան եւ մարզային խորհրդի կողմից այդ կամայայտութիւնը նուիրագործող որոշման գործնականացման համար անհրաժեշտ համարուեց սահմանադրական հիմք ու ելակէտ վկայակոչել։

Հենց այստեղ էլ պարզուեց մի անբնականոն իրողութիւն. ազգերի ինքնորոշման լենինեան սկզբունքը խորհրդային սահմանադրութեան յօդուածներից եւ ոչ մէկով հիմնական օրէնքի գործող սկզբունքի չէր վերածուել։ Միակ յօդուածը, որում ակնարկ կար ազգերի ինքնորոշման իրաւունքի կենսագործմանը, սահմանադրութեան 70-րդ յօդուածն էր, որն ասում էր. «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնը միասնական բազմազգ պետութիւն է՝ կազմաւորուած սոցիալիստական դաշնակցային սկզբունքի հիման վրայ՝ ազգերի ազատ ինքնորոշման եւ իրաւահաւասար խորհրդային սոցիալիստական հանրապետութիւնների կամաւոր միաւորման հետեւանքով»։

Դժուար չէ նկատել, որ 70-րդ յօդուածը չէր կարող որեւէ կերպ առնչուել արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի կենսագործման հետ։ Իսկ դա՝ այն պարզ պատճառով, որ յօդուածում «ազգերի ազատ ինքնորոշումը» վերաբերում էր այդ իրաւունքն ունեցած եւ այն անցեալում օգտագործելով որպէս «խորհրդային սոցիալիստական հանրապետութիւն» Խ. Միութիւն անուանուող «սոցիալիստական դաշնակցային» միասնական պետութեան մէջ «կամաւոր միաւորման հետեւանքով» համախմբուած 15 ազգերի։ Ուրիշ խօսքով 70-րդ յօդուածը ազգերի ինքնորոշման իրաւունքն արձանագրում էր ոչ թէ որպէս մշտապէս եւ ամէն մի ժողովրդի կողմից ցանկացած ժամանակ գործադրելի յաւերժական մի սկզբունք, այլ՝ Խ. Միութիւնը կազմաւորող 15 հանրապետութիւնների 15 հիմնական ազգերի կողմից համախմբման ակտի ընթացքում արդէն իսկ գործադրուած եւ կարծէք թէ մէկ էլ այդ համախմբումից դուրս գալու որոշման դէպքում գործադրելի մի սկզբունք։ Աւելին. յօդուածում ազգերի ինքնորոշման իրաւունքի յիշատակումն ունէր խիստ տեսանելի քարոզչական-յայտարարական հանդիսաւորութիւն, որոշ իմաստով հակասութիւն-հերքում էր Խ. Միութեան գլխաւոր ազգերի անազատ-բռնազատ համախմբման վերաբերեալ մեղադրանքների։

Մի խօսքով 70-րդ յօդուածում ինչ էլ որ կար, չկար էականը՝ ազգերի ինքնորոշման իրաւունքի որպէս սրբազան սկզբունք հռչակումը։ Հետեւաբար տուեալ յօդուածը չէր եւ ուրեմն չէր էլ կարող լինել սահմանադրական այն հիմքը, որի վրայ ամրանիստ խարսխուէր Լեռնային Ղարաբաղի ժողովրդական երեսփոխանների խորհրդի որոշումը։ Վերջին հաշուով այդ որոշման հզօր յենարանը, պատմական արդարութեան վերականգնումից անկախաբար, ոչ թէ սահմանադրութեան սովորական մի յօդուած էր, այլ՝ քաղաքակիրթ աշխարհի եւ ոչ մի անկիւնում չառարկուող մի սկզբունք. ազգերի ինքնորոշման իրաւունքի սրբազնագոյն սկզբունքը։

Բուրժուական լուսաւորիչների, հետեւաբար եւ նորանուաճ իշխանութեան գլուխ անցած բուրժուազիայի կողմից հռչակուած իւրաքանչիւր ազգի գերիշխանութեան, որ եւ նոյն է՝ ազգերի ինքնորոշման իրաւունքի վերաբերեալ սկզբունքը, որը իւրացուեց եւ իւրովի

զարգացուեց նաեւ մարքսիզմի դասականների, յատկապէս Լենինի կողմից, սովորութեան վարակիչ ուժով, սակայն ոչ երբեք անիրաւամբ, Խորհրդային Միութիւնում համարեա համընդհանրօրէն բնութագրւում է որպէս «Ազգերի Ինքնորոշման Լենինեան Սկզբունք»: Այդպիսի բնութագրման իրաւացիութեան հիմք կարող է դառնալ թէկուզ միայն այն իրողութիւնը, որ Լենինը, անշուշտ աչքի առաջ ունենալով ռուսական կայսրութեան տարածքային, վարչակառուցուածքային, բազմազգային եւ այլ առանձնայատկութիւնները, յամառ յարատեւութեամբ հիմնաւորել է այն, որ «անջատման իրավունքը» հանդիսանում է «ազգերի ինքնորոշման իրավունքի» կենտրոնակորիզը:

Տակաւին 1913–1914 թուականներին, «Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բոլշեւիկեան Կուսակցութեան Ազգային Ծրագրի Մասին», «Քննադատական Դիտողութիւններ Ազգային Հարցի Վերաբերեալ» եւ «Ազգերի Ինքնորոշման Իրաւունքի Մասին» յօդուածներում, Լենինը շեշտում էր. «Բայց կայ մի դէպք, երբ մարքսիստները, եթէ չեն ուզում դաւաճանած լինել դեմոկրատիային ու պրոլետարիատին, պարտաւոր են պաշտպանել մի յատուկ պահանջ ազգային հարցում, այն է՝ ազգերի ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ քաղաքական անջատման իրավունքը»: Նա առանձին կարեւորութեամբ նշում էր, որ ինքնորոշման իրաւունքը նշանակում է «հարցի լուծումը ոչ թէ կենտրոնական խորհրդարանի կողմից, այլ՝ անջատվող փոքրամասնության խորհրդարանի, ...հանրաքուէի միջոցով»: Լենինը զգուշացնում էր, որ «պրոլետարիատը պահանջում է այնպիսի դեմոկրատիա, որը բացառում է պետութեան շրջանակներում որեւէ ազգի բռնութեամբ պահպանումը: Հենց այդ պատճառով էլ,– ասում էր նա,– որպէսզի չխախտենք ինքնորոշման իրաւունքը, մենք պարտաւոր ենք ոչ թէ քուէարկել յօգուտ անջատման..., այլ քուէարկել, որպէսզի իրեն՝ անջատուող մարզին թողնուի այդ հարցի լուծումը»: «Մենք ուզում ենք ազատ միացում եւ այդ պատճառով էլ մենք պարտաւոր ենք ճանաչել անջատման ազատութիւնը (առանց անջատման ազատութեան միացումը չի կարող ազատ կոչուել)»,– գրում էր Լենինը:

Այս ամէնը նշանակում է, որ Լենինն ու նրա հիմնադրած ու ղեկավարած կուսակցութիւնը դեռ մինչեւ հակամիապետական-հակաբուրժուական յեղափոխութիւնն ու իշխանութեան նուաճումը, ոչ թէ ազգային հարցի լուծման առիկ յատուկ մի տեսութիւն էին մշակում եւ որոշակի մի դիրքորոշում էին ճշգրտում, այլեւ յստակօրէն ու որոշակիօրէն ստանձնում էին աւելի քան մի յանձնառութիւն, կայսրութեան գաղութային շղթաներով կաշկանդուած ոչ-ռուս մեծ թէ փոքր բոլոր ազգերի եւ ազգութիւնների նկատմամբ ուղղակի մի պարտաւորութիւն. յաղթանակի դէպքում սրբութեամբ յարգել նրանց ազգային-քաղաքական ըղձանքն ու կամայայտութիւնը, այդ թւում յատկապէս եւ առաջին հերթին՝ անջատման իրաւունքը:

Այդ ազգերի եւ ազգութիւններից աւելի քան մէկ տասնեակի՝ ռուսական կայսրութեան հիւսիս-արեւմտեան ծայրամասային լեհերի եւ ֆինների, ուկրաինացիների եւ պելոռուսների, լատիշների եւ լիտուացիների, էստոնացիների եւ կարելների, մոլդաւների ու միւսների, նաեւ

հարավ-արևմտյան ծայրամասային հայերի ու վրացիների, առանց բացառության քրիստոնեայ և սոցիալ-տնտեսական ու ազգային, նույնիսկ պատմաքաղաքական զարգացման իրենց մակարդակով ռուս ժողովրդի հիմնական զանգվածին ոչնչով չզիջող, որոշ դեպքերում նույնիսկ նրանից բարձր կանգնած այդ ժողովուրդների 20-րդ դարասկզբին իսկ ռուսական մեծապետական ազգայնականության ինքնաբավարարման և գաղութային-կայսերապաշտական հավակնությունների հագեցման առարկան ու զոհը մնալը ուղղակի փարատոքս էր և անախրոնիզմ։ Այդ ժողովուրդների ցարական կայսրությունից անջատման և ինքնուրույնացման այլ խոսքով ազգային անկախ պետականության ստեղծելու իրավունքը օրակարգի գերհասունացած խնդիր էր, ըստ որում անկախ այն հանգամանքից, թե ռուսական ազգային պետականության հետ նրանցից յուրաքանչյուրի փոխհարաբերությունը հետագային ջերմ, գաղջ թե սառը բնույթ ու հուն կը ստանար։ Եվ թեկուզ Լենինի ու նրա կուսակցության յանձնառությունը դեռ աննախապայման ու հարյուր տոկոսով երաշխավորված ինքնուրույնացման հեռանկար չէր, այլ որպես խոստում պարփակում էր նաև ու մի քիչ էլ մտնում նոր պայմաններում ու նոր դրոշի ներքո ռուսական կայսրությունից առավելագույնը պահպանելու յույսի մի նշույլ, յամենայն դեպս ընկալվելով որպես անխախտելի պարտավորություն, վերոյիշյալ ազգերի և ազգությունների առաջ առաջին անգամ լինելով պարզում էր ցարական խավարամած փակուղուց դուրս գալու լույսի մի շող։

Այդ շողը այն կարևոր ազդակն էր, որ բացառապես ընկերային ազատագրության քարոզով գերխանդավառ ռուս, մասամբ նաև ռուսականացված հրեա և տարազգի սոցիալ-դեմոկրատների (բոլշևիկների) շուրջ համախմբում էր ոչ-ռուս ժողովուրդների մեծաթիվ մտավորական զանգվածների, գաղափարական համոզմունքներով տարադավան յեղափոխականների (հայերից, օրինակ, սոցիալ-յեղափոխականների, հնչակյանների, դաշնակցականների), որոնք ընկերային ազատագրության առաջնայնության բոլշևիկյան դրույթը ընդունում էին հարկադրաբար, որպես ազգային ազատագրության առարկայական թե ենթակայական նախապայման։ Այլ խոսքով ոչ-ռուս ժողովուրդների զգալի թվով զանգվածների զինվորագրումը սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների ղեկավարած շարժմանը և գործուն ու նշանակալից մասնակցությունը լենինեան-սոցիալիստական յեղափոխությանը՝ պայմանավորված էր այն իրողությամբ, որ իրենց ազգային ազատագրության և անկախ պետականության հայրենիքի հեռանկարն էլ պայմանավորում էր համառուսաստանեան ընկերային յեղաշրջմամբ։

Ռուսական գաղութային լծին ենթակա այլ «ժողովուրդներ», ինչպես ցարական կայսրության «ներքին», այնպես էլ յատկապես հարավային ծայրամասերի մահմեդական և գերակշռապես թյուրքալեզու՝ կազմավորման հարցում դեռ տհաս ազգությունները, այդ թվում նաև ադրբեջանական թաթարները, որոնք սոցիալ-տնտեսական զարգացման անհամեմատ ցածր մակարդակի վրա էին և հենց այդ մակարդակի, խավարամտության ու մոլեռանդության ներգործությամբ էին խիստ ետ մնացել ազգային կազմավորման գործընթացում, հասկանալիորէն չու-

ունենալով իսկապես ազգային ազատագրության միևնույն խթանն ու նույնատիպ շահագրգռությունը, ռուսական գերիշխանության կործանման հեռանկարին մտածում էին բոլորովին այլ՝ հակաքրիստոնեական միջնադարամետ նկատառումներով և ծայրահեղ հետադիմական (համաթյուրքական, համաիսլամական և այլ) վարդապետությունների հաղթանակի ակնկալությամբ։ Միայն դրանով պիտի բացատրել առաջին հայացքով «արտառոց», այլ պատմականորեն խիստ բնական և բոլորովին օրինաչափ այն իրողությունը, որ առանց այդ էլ թվաքանակով աննշան, ռուսաստանյան հեղափոխական շարժումներին մասնակից թաթարների մի որոշակի խավ հակացարական իր եռանդի ետին թաքցնում էր նույնպես հակառուսական-հակաքրիստոնեական միտում։ Հարկ է կարևորությամբ շեշտել, նաև, որ 1918 թվականի Ապրիլից մինչև Սեպտեմբեր գոյատևած Բաքուի կոմունայի ինչպես ստեղծող-ղեկավարողների, այնպես էլ ընկերային ու մարտական հենարանների շարքում թաթարներին մատների վրա կարելի էր հաշվել, որ Սեպտեմբերի 26-ին անդրկասպյան ավազուտներում գնդակահարված 26 կոմունարներից 8-ը հայեր, 6-ը ռուսներ, 6-ը հրեաներ, 2-ը վրացիներ, մեկը լատիշ և մեկը հույն էին, այլ խոսքով 26-ից 24-ը թաթար չէին և միայն երկուսն էին թաթար…

Բոլոր դեպքերում փաստ է (և այդ փաստը հարկ է ընդունել առանց վեճի ու առարկության), որ խորհրդային կառավարությունն իր նախասկզբնական քայլերում հավատարիմ մնաց ազգային հարցում լենինյան հանձնառություններին։

Լենինի կողմից շարադրված և համառուսաստանյան խորհուրդների երկրորդ համագումարի կողմից 1917 թվի Նոյեմբերի 3-ին ընդունված «Խաղաղության մասին» հրամանագիրն իրոք էլ ասում էր. «Մեծ կամ ուժեղ պետության հետ փոքր կամ թույլ ժողովրդի ամեն մի միավորում առանց այդ ժողովրդի կողմից պարզորոշ կերպով արտահայտված կամքի համաձայնության ու ցանկության, անկախ այն բանից, թե այդ ուժեղ պետությանը միացված կամ դրա սահմաններում բռնությամբ պահված ազգը կամ ազգությունը ինչքանով է զարգացած կամ հետամնաց, և վերջապես, անկախ այն բանից, թե տվյալ ազգը Եվրոպայում է, թե հեռավոր անդրօվկիանոսյան երկրներում է ապրում, խորհրդային կառավարությունը, ելնելով դեմոկրատական իրավագիտակցությունից ընդհանրապես և աշխատավոր դասակարգերի իրավագիտակցությունից մասնավորապես, դիտում է որպես բռնի նվաճում (անեքսիա)»։ Խորհրդային կառավարությունը նույն 1917 թվի Նոյեմբերին ընդունում էր նաև «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հայտարարությունը», որով հռչակվում էին բոլոր ազգերի ու ազգությունների ինքնորոշման իրավունքը, նրանց լիակատար հավասարության սկզբունքը և այլն։ Այդ հայտարարության հիմամբ է, փաստորեն, որ ճանաչվում էին Ֆինլանդիայի, Լեհաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի անկախությունը, Ռուսաստանի «ներքին» մի շարք ազգային տարածքների ազգությունների ինքնավարությունը։

Ինչքան էլ զարմանալի թվա, Ղարաբաղի մարզային խորհրդի բոլոր դեպքերում ազգերի ինքնորոշման իրավունքի վրա հենվող

որոշումից անակնկալի եկած, Խ. Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը, Կրեմլի ցուցմունքով անշուշտ, միաժամանակ խուլ ու համր ձեւացաւ եւ Արցախի կանչը քամահրելով, փորձեց ահաբեկել հայրենի հայութիւնը։ Ապարդիւն։ Դեմիրճեանին փոխարինելու եկած Ս. Յարութիւնեանի «նոր» ղեկավարութիւնը, ժողովրդական ահագնացող ճնշման ներքոյ անխուսափելիօրէն հարկադրուելու էր դիրքորոշուել, ըստ որում եթէ չէր ուզում աղիտալիօրէն թաւալգլոր լինել՝ դիրքորոշուել դրականօրէն։ Այդ դիրքորոշումը պէտք է գոհացնէր հայութիւնը, սակայն եւ բաւարարէր Կրեմլը ու չվրդովէր Պաքուն։ Եւ ահա պաշտօնական Երեւանը յանկարծօրէն վարակուեց տարօրինակ մի սահմանադրական-յօդուածասիրութեամբ եւ պաշտեցուցիչ սիրահարուածութեամբ էլ կառչեց հենց 70-րդ յօդուածից։ Աւելին. գիտական կոչումներով ու տիտղոսներով զարդարուն «մասնագէտների» ի տարաժամու, համաժողովրդական շարժման երրորդ-չորրորդ ամսին ասպարէզի վրայ յայտնուած խմբի օգնութեամբ, որոնց ու նոյնիսկ «յաղթականօրէն» յայտնաբերեց այն, ինչ այնտեղ չկար ու չէր էլ կարող լինել։ Ըստ որում Երեւանի ղեկավարութեան 70-րդ յօդուածից եւ բացառապէս այդ յօդուածից կառչելը, հեռու ինքնախաբէութիւն լինելուց, հաստատապէս, բացայայտօրէն, անկասկածելիօրէն ու անհերքելիօրէն գիտակցական մի «մոլորութիւն» էր, որը ծառայելու էր Արցախի համար հայ ժողովրդի պայքարի առանց այդ էլ կանխորոշուած անյաջող ելքին։

Մանրացուցիչ դէպք յանցանաց պիտի համարել այն, որ Խ. Հայաստանի կուսակցական-պետական «նոր» ղեկավարութիւնը աններելի այդ «մոլորութեան» մէջ գիտակցաբար ու կամովին էր ընկնում ոչ թէ այլընտրանք չունենալու հետեւանքով, այլ՝ պարզապէս գոյութիւն ունեցող այլընտրանքից ամէն գնով խուսափելու տենդից բռնկուած։ Այլընտրանքը, այն էլ գործող հիմնական օրէնքի շրջանակներում միակ ճիշտ ընտրանքը 78-րդ յօդուածի երկրորդ, հանրապետութիւնների միջեւ առկայ սահմանների փոփոխութեան վերաբերեալ դրոյթն էր, որից, ինչպէս ժանտախտից, հեռու էին փախչում Հայաստանի ղեկավարները։ Չէ՞ որ 78-րդ յօդուածը հիմք դարձնելը անխուսափելիօրէն պիտի նշանակէր Ատրպէյճանական ԽՍՀ-ին առաջադրել սահմանային վերափոխութեան խնդիր, այլ խօսքով՝ հողատարածքային պահանջի հարց, որը խորհրդային պետական-քաղաքական եօթանասնամեայ կենցաղում աննախադէպ, պարզապէս աներեւակայելի մի յանդգնութիւն կը լինէր եւ բնականաբար կ՚արժանանար կենտրոնական ղեկավարութեան չանթ ու կայծակին։ Եւ ահա, կարողանալու համար խուսափել 78-րդ յօդուածից բխող հողատարածքային պահանջի մահացու մեղքից, Հայաստանի ղեկավարները գիտակցաբար դիմեցին ինքնախաբէութեան եւ փրկութեան լաստը գտան յանձին 70-րդ յօդուածից իբր թէ բխող ազգերի ինքնորոշման իրաւունքի։

Խորհրդային պետութեան ձեւի զովերգական չարադրանք եւ ոչ թէ ազգերի ինքնորոշման սկզբունքի բացարձակ հռչակում հանդիսացող այդ յօդուածից կառչելու փորձ անել՝ նշանակում էր ձեռք նետել փրփուրին։

Մի պահ ենթադրենք, սակայն, որ մենք սխալվում ենք և որ հենց այդ յօդուածն էր պաշտպանում արցախահայութեան կամարտայայտութեան հիմնաւորումը։ Բայց չէ՞ որ արցախահայութեան կամարտայայտութիւնը, ուրեմն և Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը անիմաստ կը դառնային, եթէ չարժանանային Մայր Հայութեան պատասխան կամարտայայտութեան և ուրեմն Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի հանդիպակաց որոշման։ Հանդիպակաց այդ որոշման և արցախահայութեան կամարտայայտութեան Պաքւում յարգանքի արժանանալու դէպքում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ատրպէյճանական ԽՍՀ-ի կազմից հաւանականօրէն պիտի փոխադրուէր Հայկական ԽՍՀ-ի կազմը։ Այդ տեղափոխութիւնը, թո՛ղ որ ըստ ինքեան էլ ատրպէյճանա-հայկական սահմանի փոփոխութեան համազօր, այնպէս էլ անհրաժեշտ պիտի դարձնէր սահմանի գործնական փոփոխութիւնը, քանի որ Լեռնային Ղարաբաղն ու Հայաստանը ընդհանուր սահման չունենալով, ստիպողաբար պիտի ծագէր հայկական պետական երկու հողատարածքների միաչաղկապման համար անհրաժեշտ մի պարանոցի յորդորման հարցը։ Վերջ ի վերջոյ Լեռնային Ղարաբաղը գալու էր ոչ թէ Հայաստանի կազմում նրանից իր տարածքով տարանջատ ինքնավար մի մարզ կազմելու, ուրիշ խօսքով ոչ թէ Նախիջեւան-Ատրպէյճան անհեթեթ կապի մի կրկնօրինակի վերածուելու, այլ՝ ուղղակի վերամիաւորուելու իր մայր հողատարածքին։ Նշանակում է, որ անխուսափելի էր դառնալու ատրպէյճանա-հայկական սահմանի իսկական փոփոխութիւնը, ուրեմն և անպայման ծագելու էր 78-րդ յօդուածի գործադրման անհրաժեշտութիւնը։ Այդ յօդուածն անխուսափելիօրէն սեղանի վրայ պիտի յայտնուէր նաև այն դէպքում, եթէ Պաքուն (ինչը որ միակ ակնկալելին էր) մերժէր ընթացք տալ արցախահայութեան կամարտայայտութեանը, քանի որ այդ պարագային Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի դիմումին դրական արձագանգելու թէկուզ սոսկ փաստովն իսկ, պիտի դրսեւորէր ատրպէյճանա-հայկական սահմանը փոփոխուած տեսնելու իր տրամադրութիւնը։ Այլ խօսքով Հայաստանի ղեկավարութիւնը որ կողմ էլ որ շուռ գալու լինէր, անպայման դէմ պիտի առնէր 78-րդ յօդուածին և ուրեմն դրանից խուսափանքի փորձը չի կարող դիտուել որպէս ինքնախաբէութիւն, քանի որ ակնյայտօրէն առկայ են գիտակցական «մոլորութեան» բոլոր յանցանշանները։

Եւ մի՞թէ Խորհրդային Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը 78-րդ յօդուածից իր խուսափանքով չընկաւ ծիծաղելի դրութեանը մէջ գլուխն աւազի (70-րդ յօդուածի) մէջ խրած այն «մուլտիկ»ային ջայլամի, որի պոչից (78-րդ յօդուածից) քաշելով հասկացնում են խուսափանքի իր ոգորումների անիմաստութիւնը։ Եւ մի՞թէ Երեւանի կառավարողների 78-րդ յօդուածից խուսափանքի անիմաստութեան դատակնիքը չեղաւ այն իրողութիւնը, որ Թաթար Թաթլիեւը շատ բնականօրէն (և ցաւօք՝ իրաւացիօրէն) առաւել սրութեամբ մեղադրեց ոչ թէ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն իր «փախուստի» փորձի համար, այլ՝ Խորհրդային Հայաստանը, և հենց այն քանի համար, որ ոտնձգութիւն է կատարել 78-րդ յօդուածի դէմ, դրսեւորել

«մէկ այլ խորհրդային միութենական հանրապետութեան տարածքի՝ Ատրպէյճանական ԽՍՀ-ի վարչատարածքային կառուցուածքի վերաձեւման յատկութիւն»։

Հայ ժողովրդի ըստ էութեան առնական հարցադրման ոչ թէ ուղղակի պատասխան, այլ՝ այդ հարցադրումը նենգափոխելու առաւել նե՞նգ եղանակ...։ Եղանակ, որի անիւ ակունքը, սակայն, պէտք որոնել ըստ էութեան առնական հարցադրումը ըստ ձեւի ծեքծեքանքով սեղանին դնելու մեր ղեկավարութեան ընթացքի մէջ։ Տուեալ խնդրի հետ անկապակից 70-րդ յօդուածը իր ազգային արդարացի իրաւունքը նուաճելու ճանապարհին հայ ժողովրդի պահանջատիրական կեցուածքը դարձնում էր աղերսական։ Եւ հենց դա էլ բաւական էր, որպէսզի բորենիները փքուելով վագրակերպուէին։ Եթէ անպայման հայոց պահանջատիրութեանը յօդուած էր անհրաժեշտ, ապա խորհրդային սահմանադրութեան յօդուածների դարան-դարակներում միայն ու միայն 78-րդն էր խնդրի ե՛ւ էութեան, ե՛ւ արծարծմանը առաւելագոյնս ոչ թէ միայն պատշաճողը, այլեւ՝ սազականը։ Այդ յօդուածը տեղից չէր թողնի «յաւակնութեան» վերաբերեալ նենգամիտ մեղադրանքին եւ առնական պահանջի առաջ կանգնեցուած հակառակորդին ու Պրիմակովների տիպի նրա փաստաբաններին կը հարկադրէր չշրջանցել պատմական իրողութիւնները, որոնցից նրանք այնպէ՜ս զարհուրում էին։

Մի պահ ենթադրենք, դարձեալ, որ ի չգոյէ լաւագոյնի, ազգերի ինքնորոշման իրաւունքը որպէս սկզբունք անհրաժեշտութեան դէպքում պէտք է որոնուէր հենց 70-րդ, թէկուզ յոռեգոյն, սակայն խնդրոյ առարկայ իրաւունքը գոնէ յիշատակող յօդուածում։ Ենթադրենք, որ վերջին հաշուով ի հարկին հնարաւոր էր այդ յօդուածից մի կերպ կորզել ինքնորոշման իրաւունքը գործնականացնելու համար անհրաժեշտ ոսկու հատիկը։ Բայց չէ՞ որ ատրպատականեան թաթարների միջավայրում ընթացող եւ Բաքուի մամուլի հրապարակումներով բացայայտուող «նախապատրաստութիւնները» աւելի քան պարզորոշօրէն ակնյայտ էին դարձնում թաթլիեւների նախապատրաստ առարկութիւնը. «ազգերի» եւ ոչ թէ նրանց մի բեկորի ինքնորոշմանը ակնարկող 70-րդ յօդուածը չի կարող պատշաճել արցախահայութեանը, որը հանդիսանալով «հարեւան» Հայկական հանրապետութեան հիմնական ազգաբնակչութեան՝ իր ազգային հողատարածքի վրայ արդէն իսկ ինքնորոշուած հայ ժողովրդի մի բեկորը, իր բնակութեան տարածքի ազգային իրաւատէրը չի հանդիսանում...

Ինչքան էլ որ գռեհիկ լինէր թաթար թաթլիեւների ու նրանց մոսկովեան համակիր-հովանաւորների տրամաբանութիւնը, Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը պարտաւոր էր արթնամտօրէն հաշուի նստել հայ ժողովրդի համար ստեղծուած փաստաքային վիճակի իրականութեան հետ. Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Միութեան միակ ազգային (հայկական) ինքնավար մարզն է, որի հայ ազգաբնակչութեան գերիշխանական իրաւունքը սեփական հողատարածքի նկատմամբ՝ տեւապէս առարկուել է ոչ միայն այն պատճառով, որ մարզը գտնուում է իր ամբողջ հողատարածքի նկատմամբ տեսականօրէն անառարկելի սեփականատիրական իրաւունք ունեցող մի ազգային (ատրպէյ-

ճանական եւ ոչ թէ Ադրբեջանի) Հանրապետութեան կազմում, այլեւ մանաւանդ այն պատճառով, որ նրա հիմնական ազգաբնակչութիւնը ազգայնօրէն նոյնական է գոյութիւն ունեցող ազգային մի այլ (Հայկական) Հանրապետութեան ինքնորոշուած ժողովրդի հետ։

Բաց թողնելով այդ կանխապատրաստ առարկութեան մասին, Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստին նախապատրաստուելիս թէ բուն իսկ այդ նիստում հայկական պատուիրակութիւնը հիմնովին ու հանգամանօրէն չարծարծեց փարատոքսային այդ վիճակի առաջացման եղերական արմատները, խուսափեց հարցի պատմական ներքնածալքերը քրքրելուց մահու չափ վախեցող իր ընդդիմախօսներին անկիւն կոխելուց, քանի որ հակառակ դէպքում պիտի հարկադրուէր նախ՝ անպայման յիշեցնել ատրպատականեան թաթարների կողմից հայ ժողովրդի առանձին բեկորների, առաջին հերթին Արցախի եւ յատկապէս Շուշիի հայութեան նկատմամբ անցեալում կիրառուած ցեղասպանութեան քստմնելի արարքները, ապա եւ՝ անպայման առաջադրել Նախիջեւանի հայապատկանութեան, հետեւաբար ինքնավար այդ Հանրապետութեան լուծարքի ու նրա հողատարածքի Հայաստանի հետ վերամիաւորման հարցը եւս։

Պատմական, յատկապէս մինչխորհրդային իրողութիւնների չարծարծման հարցում հայկական պատուիրակութեան ապշեցուցիչ զգուշութիւնը, կարեւորագոյն փաստարկներն իսկ արծարծելուց զարմանալի ձեռնպահութիւնը մի՞թէ յայտանշանները չեն այն իրողութեան, որ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան մրցաբեմում յայտնուած երկու հակամարտ կողմերի՝ հայերի ու ադրբեջանցիների եւ «չէզոք» դատակազմի միջեւ ընդհանուր, առնուազն մեծազդեցիկ մոսկովեան դատակազմի ու հակամարտ կողմերից իւրաքանչիւրի միջեւ առանձնակի պայմանաւորուածութիւն էր ձեռք բերուել ընդունելիք մարտական տեսքի, օգտագործուելիք զինատեսակների, հասցուելիք հարուածների ուժգնութեան եւ համանման այլ հարցերում։ Հակառակ դէպքում հասկնալի չի դառնայ այն իրողութիւնը, որ հայկական պատուիրակութիւնը չկատարեց տարրական-տրամաբանական, այլ անհրաժեշտագոյն քայլը՝ Ղարաբաղի «հայկական փարատոքսին» չհակադրեց Նախիջեւանի «ադրբեջանական գեր-փարատոքսը»։ Եւ իրօք, Նախիջեւանը Խորհրդային Միութեան միակ ազգային (ադրբեջանական) ինքնավար Հանրապետութիւնն է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում իր ինքնավար գոյավիճակը ձեռք է բերել իբր թէ երկու յատկանիշների շնորհիւ. ազգաբնակչութեան մեծամասնութեան էթնիկապէս ադրբեջանական ազգութեան պատկանելը եւ ինքնորոշուած այդ ադրբեջանական ազգաբնակչութեան հողատարածքի պատմականօրէն Ադրբեջանական ԽՍՀ-ին պատկանելիութիւնը։ Այդ դէպքում ինչպէ՞ս է պատահել, որ հակառակ կարեւորագոյն այդ երկու յատկանիշների «ադրբեջանական» լինելուն, Նախիջեւանը ոչ թէ յայտարարուել է Ադրբեջանական ԽՍՀ-ի անմիջական-անբաժանելի հողատարածք, այլ հռչակուել է նրա կազմում ինքնավար հողատարածք, այն էլ՝ Հանրապետութիւն։ Ոչ թէ սովորական փարատոքս, այլ ուղղակի անհեթեթութիւն չէ՞, միթէ, ադրբեջանական ազգային միութենական Հանրա-

պետութեան կազմում ատրպէյճանական ինքնավար մի ՙՀանրապետութեան գոյութիւնը...

Եզրակացնենք։

1918 Թուից, հայկական պետականութեան վերածնունդից յետոյ անցած եօթանասուն տարիներին առաջին անգամ լինելով, այն էլ հայ ժողովրդի եւ միայն նրա (ու ոչ երբեք նրա «ղեկավարութեան») խիզախման շնորհիւ, հայկական արդարացի պահանջատիրութեան առջեւ բացուեց պետական-պաշտօնական դառնալու հնարաւորութիւնը (որը եւ «ղեկավարութեանը» հնարաւորութիւն կը տար դուրս գալ չակերտներից)։

Խորհրդային Հայաստանի պետական ղեկի մօտ կանգնած գործիչներն սկզբնական հանգրուանում, Դեմիրճեանի օրօք, կանգնեցին ժողովրդական (ըստ էութեան համահայկական) պահանջատիրութեան հակառակորդների բազմազգ ճակատում, իսկ այնուհետեւ, Յարութիւնեանի օրօք, հարկադրաբար ձեւացնելով, որ պետականացնում-պաշտօնականացնում են հայկական-ժողովրդական պահանջատիրութիւնը, իրականում այն ճապաղեցրին ու չեզոքեցին։ Եւ արդէն այլ բան չէին կարող անել, քանզի Կրեմլը հենց այդ առաքելութեան համար էր Խորհրդային Հայաստանին «նոր» ղեկավարութիւն տուել։ Դեմիրճեանին ճանապարհ դրեցին՝ երբ անհնարին դարձաւ հայ ժողովրդի հեղեղը դիմագրաւել «հին» եղանակով։ Անհրաժեշտ էին «նոր» ղեկավարութիւն եւ «նոր» եղանակ՝ հայկական պահանջատիրութեան աւելի ու աւելի ահագնացող հեղեղը դիմագրաւելու եւ այն ցանկալի հունով անապատային աւազուտ հասցնելու համար։

«Նոր» ղեկավարութեան բերած «նոր» եղանակը չէր կարող լինել ու չեղաւ էլ հայ ժողովրդի ակնկալած միակը, միակ արդարն ու օրինականը. «Հայաստանի բռնախլուած գաւառներից արցախականն աղերսում է իրեն իր Մօր գիրկը վերադարձնել եւ Մայր Հայաստանն անզիջում պահանջում է առեւանգողից՝ առ այժմ գոնէ այդ մէկի վերադարձումը, առանց սակայն հրաժարուելու միւսների նկատմամբ իր մայրական պահանջատիրական իրաւունքից»։

Այո, դառնալի է հաստատել, որ Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութիւնը, որ միշտ էլ երկնչել է հայ ժողովրդի հողային արդարացի պահանջներն արծարծելուց, ղարաբաղեան տագնապի պատեհագոյն ժամին եւս մահու չափ վախեցաւ ոչ միայն Հայկական դատի մի մասնիկին տէր կանգնելու հնարաւորութիւնից, այլեւ՝ հողային պահանջ առաջադրելու գծով մեղադրուելու հեռանկարից իսկ։

Դրանով իսկ նա փաստօրէն գործակիցն ու աջակիցը դարձաւ հայ ժողովրդի արդարագոյն եւ ազնուագոյն ըղձանքների համար գերեզմանափոս փորող շրջանների, որոնց այստեղ փոքր ինչ պարզացած հասցէները էլ աւելի կը ճշտորոշուեն յաջորդ պրակներում։

## Երկրորդ պրակ

- ԹԱԹԱՐ ԽԱԺԱՄՈՒԺԻ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԴԻՄԱՑ՝ ՀԱՅՐԵՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՊԱՌԱԿՈՒԱԾ
- ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏ ԴԷՄԻՐՃԵԱՆՆ ԱՐՏԱՍԱՆՈՒՄ Է ԹԱՍՍ-Ի ՍՈՒՄԿԱՅԻԹԵԱՆ ՀԵՔԻԱԹԸ
- ԱՂԴԱՄ-ԱՍԿԵՐԱՆԵԱՆ «ՋԻՆԱԲԱԽՈՒՄԸ» ԹԱԹԱՐԱԿԱՆ ԴԱՒԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՕՂԱԿ
- ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿՈՐՊԱՉՈՎԸ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ՄԷ՞Ջ Է, ԹԷ՝ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ Է ԳՑՈՒՄ
- ՍՈՒՄԿԱՅԻԹԸ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ «ԳԵՆՈՎ» ՑԵՂԵՐԻ «ՄԻՆՉ-ԻՄԲԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ» ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Է
- ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԻՆՉՈՒ ԵՒ ԻՆՉՊԷ՞Ս ՏՕՆԱԿԱՆԱՑՐԵՑ ԱՊՐԻԼԻ 24-Ը

Զոհ՝

Բոլոր Նրանց, ովքեր նահատակուեցին, սակայն անթեղեցին հայկականութեան կայծերը Հայաստանի վերջին պատառիկ Խորհրդային Հայաստանում եւ նրա հոգեհատոր Արցախում

եւ

Բոլոր Նրանց, ովքեր վերջին քառորդ դարում, զրկուելով, զարկուելով, կարողացան այդ կայծերից հայրենի հայութեան հոգում բորբոքել պահանջատիրութեան հուրը։

# ՈՐՊԷՍ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՊՐԱԿԻՍ

Փետրուարի 20–29…

Տաս օրեր, որոնք ցնցեցին Խորհրդային Հայաստանը։ Եւ նշեցին մի նոր վերսկիզբը Խորհրդային Հայաստանի ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ վերածման։

Եւ լաւ որ։

Քանզի որպէսզի լինի Խորհրդային Հայաստան, ի սկզբան պէտք է ՀԱՅԱՍՏԱՆ լինի։ Թէ չէ՝ կը ստացուի ազգայնօրէն անդէմ ու փոքրատառով խորհրդային մի երկրիկ, որին «Հայկական նահանգապետութեան» կամ «Հայկական մարզի» փոխարէն կոչում են Հայաստան, որպէսզի միւսը՝ Երկիրը, «Խորհրդային կայսրութիւնից», ինչպէս որ անուանակոչում են բազումք, փոխակերպուի «Միութեան»։

Եւ քանզի որպէսզի լինի ՀԱՅԱՍՏԱՆ, ի սկզբան պէտք է Խորհրդային ՀԱՅԱՍՏԱՆ լինի։ Որպէս ոչ միայն իրաւատու ժառանգորդը մեր երջանկայիշատակ բոլոր պետականութիւննե՛րի, այլեւ վերջին խրամատը, որտեղից է պոռթկալու իրաւատիրական Մեծ Հայաշարժը, ուրեմն եւ՝ մագնիսը, որի շուրջ են համախմբուելու հայոց գերեվարեալ հողերն արեւելքից եւ արեւմուտքից, հիւսիսից եւ հարաւից, վերջապէս՝ թթխմորը, որից վերստին ու նորովի հայութիւն է հունձուելու։

Փետրուարի 20-ին արցախահայութիւնը գոռաց. «Մենք ենք, մեր սարերը»…

Փետրուարի 29-ին, «ազերի» (բառացի՝ «ատրպէյճանցի», այսինքն «ատրպատականցի») թաթարութիւնը, որ եւ նոյն է՝ թուրքութեան տարատեսակութիւնը, իր առհաւական գործն աւարտած, արձագանքեց. «Մենք ենք, մեր Սումգայիթը»…

Փետրուարի 20–29…

Տաս օրեր, որոնք ցնցեցին հայ ժողովրդին։ Զորահամախմբեալ, բոլոր հատուածները մէկիկ-մէկիկ, իւրաքանչիւրն իր ժամանակին ապրած, վարչակարգի բոլոր տեսակները ճաշակած, բայց եւ ամէն ինչում իրե՛նն արարած ժողովրդին։

Ափերի երկանում փշրտուած ապառաժից ծնուած Հողը՝ իրե՛նը։ Հող, որի վրայ որպէս հայ (ուրիշներից «արմէն-այլ մարդ» անուանեալ) ժողովուրդ կազմաւորուել է ա՛յն ժամանակ, երբ թաթար թիւրքը նախնադարեան համայնական հօտ էր դեռ եւ չէր տիրապետում ոչխարի սեւն սպիտակից ջոկելով հօտ կազմելու «գերբնական» արուեստին, որպէսզի արածեցրած անասունի գոյնով ցեղանուն վերցնէր։

Լեզուն՝ ոսկեղէնիկը, իրե՛նը։ Լեզուն, որով իր բոլոր զաւակները միմեանց ու աշխարհի, միայն աշխարհի թանգարաններում պահպանուած հի՛ն աշխարհի հետ գեղահիւս բանիւ խօսք ու զրոյցի են բռնուել ա՛յն ժամանակ, երբ ուրիշներ վռնչաձայն կափկափիւնով են իրար գլխի կուտակուել եւ խառնիճաղանճ յորդա կազմել՝ վասն աւարի եւ աւերի։

Այբուբենը, գրի տեսականիով՝ երկաթագիր, բոլորգիր, շղագիր, նոտրգիր. միայն իրե՛նը։ Հաւատն ու եկեղեցին, ընդհանրականից մասնաւորուած՝ իրե՛նը։ Նաեւ գիրքը, երգը, ճարտարապետութիւնը, խաչքարը, աղբիւր յուշարձանը. բոլորն իրե՛նը։

Եւ կենցաղն ու բարքերը, որքան տոհմիկ, նոյնքա՛ն ազնիւ, որքան սեփական, նոյնքա՛ն օրինակելի, հռչակուած դեռ ա՛յն ժամանակ, երբ ուրիշներ անցորդ օտարականների մանկատի որդիներին խլել (եւ որպէսզի չփախչեն՝ ներբանները թունաւորելով թարախել) եւ իրենց անձաւ-բնակարաններում պահել են որպէս… կին։

Վերջապէս բախտն ու ճակատագիրը՝ միայն իրե՛նը, մինչեւ այն սեւ օրը, երբ քոչելով-քոչուորելով որտեղերի՛ց եկած վռնչաձայն խառնակենցաղ վաչկատուն անասնատուն վերջին «հարեւանի» չարագոյժ ստուերը հարաւից եւ արեւելքից փլուել է ոչ միայն իր հողի, այլեւ հենց իր բախտի ու ճակատագրի վրայ։ «Հարեւան», ոչ թէ «ժողովուրդ, որ նստէր ի խաւարի եւ ետես զլոյս մեծ» Հայաստան աշխարհում, ուրեմն ոչ թէ քաղաքակրթութեան լոյսին հետամուտ թափառիկ թիթեռ, այլ՝ խաւարասուն բու, գիշակեր ագռաւ, որ «նստի-մնայ ու կռնչայ գուժաձայն»։ «Հարեւան», երկուորեակ եղբայրը արեւմտակողմն ամայացրածի, նոյնքան ճարակաւէ՛ր, որ Արցախն ու Ուտիքը յայտարարել է «վաթան», «քանզի արտօք մեր զալարանէտ՝ հիւթալի խոտօք» էին։ «Վաթան» յայտարարել է յետոյ, շատ յետոյ, երբ տեսել է, բոլորն ունեն Հայր-նախնի եւ ունեն հայրենիք, մինչ ինքը չունի ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը։ Եւ չունենալով հայրենիքի գիտակցութիւն ու գաղափար, հետեւաբար չունենալով «հայրենիք» բառը, մինչեւ արաբերէնում «վաթան»ը ճարելը, ասել է. այստեղը՝ Դաշտային Արցախը «դըշլաղ» Ղարաբաղ, այնտեղը՝ Լեռնային Արցախը «եայլաղ» Ղարաբաղ։ Ձմեռանոց եւ ամառանոց անասուններիս։ Եւ անասուններիս պատշաճը՝ ինձ փէշքէշ-պարգեւ, ինձ «վաթան» – «հայրենիք»։

Փետրուարի 20–29…

Տաս օրեր, որոնք ցնցեցին հայ ժողովրդի պատմական յիշողութիւնը։ Եւ նրա Յիշողութեան Գեթսեմանիում բացեցին աղջամուղջոտ յիշատակի մի այր։ 67 տարի հիմնայատակ պեղուած եւ դեռ շատ գաղտնարաններով չբացուած մի այր։

Ամէն ինչում իրե՛նն արարած, երբ կարգը հասաւ խորհրդային կարգին, հայ ժողովուրդն այն էլ իրենն արեց, միա՛յն իրենը այնպէս, ինչպէս ուրիշ ոչ մէկինը. «հարեւանի» ստուերից ի փրկութիւն, արեւմտակողմից յետոյ արեւելակողմից էլ նոյն թանձրութեամբ նստող ստուերի դէմ երաշխաւոր ապահովանի։ Թէ չէ՝ ընկերային ազատագրութեան առասպելն իր համար չէր։ Եղեռնից մազապուրծ, նոր

Եղեռնի առաջ, իրեն լոկ ազգային գոյութիւնն էր պէտք։ Ամպհովանին Հայաստանի վերջին պատառիկին։ Եւ այդ պատառիկի մէջ՝ Նախիջեւանը, Զանգեզուրը, Ղարաբաղը։ Նախիջեւանը օրը ցերեկով տարա՞ն, այն էլ ինչպիսի լկտիութեամբ. ամպհովանին խոնարհուեց սուսերի առաջ։ Յետոյ անցան Ղարաբաղին, ոչ նոյն լկտիութեամբ, այնուամենայնիւ համարեա։ Ամպհովանին կիսախոնարհուեց սուսերի առաջ։ Հողը ձեզ, կարգը ժողովրդին։ Յաւերժականը՝ թաթարին, անցողիկը՝ հային։ Եւ անցողիկը հաւեցին, եղծեցին, օրըստօրէ դանակը աւելի ու աւելի դէմ անելով անցողիկը «վայելող» ժողովրդի բկին։

Եւ Արցախը, երազում թէ յարթմնի, գոռաց։ Հաւատացած, որ լսող կը լինի։ Ջէ՞ որ ասում ու պնդում էին՝ վերադառնում ենք ակունքին, վերակառուցում ենք Լենինի նախագծին համապատասխան։ 1921 թիւն է, ուրեմն։ Ուրեմն Լենինը վերադարձել է, կը լսի։ Եթէ նորօրեայ Լենինը չլսի էլ, կը լսի հնօրեայ հարազատ ժողովուրդը։ Քամակ կը կանգնի. «Մե՛նք ենք, մեր սարերը»։

Եւ ... ահա՛ քեզ Սումկայիթ։

Ուրեմն ի՞նչ։ Իրօք ետ գնալ մինչեւ 1921 թիւ եւ փնտռտո՞ւքը վերսկսել։ Սպասե՞լ, եւ մինչեւ ե՞րբ, որ Լենինն իրօք կը վերադառնայ, այս անգամ հաստատապէս այնպիսի՛ն, ինչպիսին ասւում է, որ իրօք խորհրդայինը կը գայ ու կը լինի այնպիսի՛ն, ինչպիսին երգւում է, որ իրօ՛ք կը լինի Միութիւն՝ մօտաւորապէս ինչպէս աղօթքում է. բազմազգեան մի տէրութիւն, միով բնութեամբ աստուածութիւն։

Միութիւնը՝ պա՛ր, ինչպէս հայերէն «լեռնապար» բառում է. ուս ուսի տուած՝ ապարով ու բարձրութեամբ համաչափ լեռներ, նմաններին գտած նմաններ։ Միութիւնը՝ պա՛ր, այն իմաստով, ինչ հայերէն «կաքաւել» բայում է։ Կաքաւիւն։ Ոչ թէ այնպէս, ինչպէս լինում է, երբ արջն արջապար է բռնում ու տրորում պարընկերոջ կոշտուկը, երբ գայլը գայլապար է պտտւում եւ յօշոտում-լափում քայլընկերոջ մարմնամասը։

Միութիւն, իսկական, ինչպէս որ պարն է ու պատշաճ։ Որպէսզի ուրիշներն ասեն՝ «արժան», իսկ մենք յաւելենք՝ «իրաւ»։

Եւ ոչ թէ անիսկական, արհեստական. ինչպէս թութակային ճառերում, անիմաստ փչացուած մեռաքապատառների սիրտ խառնող կարգախօսներում։

Թէ չէ՝ ինչի՞ է նման։

Մէկ եմ, բայց մի ու Միութիւն եմ յաւերժական թշնամութեամբ երկփեղկուած։

Մէկ եմ, բայց ես ինձ իմը չեմ տալիս ու չտալու համար ազատօրէն նենգափոխում եմ էութիւնս եւ ես ինձ չեմ ասում. «կա՛ց»։

Մէկ եմ, բայց ես ինձ մորթում եմ ու հրկիզում, եւ քանի որ Միութեան մէջ եմ մորթում ու հրկիզում, ցեղասպան չեմ, բնաւ, այլ պարզապէս ինքնազրկութեան զոհ։

Մէկ եմ, բայց մի՝ հայի աչքս բաց եմ քնում, որպէսզի հետեւեմ, թէ միւս՝ թաթարական աչքի մէջ սատայելական ի՞նչ կրակ է վառւում։

Մէկ եմ, բայց ես իմ հայի հասցէին ռուսաբան զազրախօսութեամբս ինքս ինձ կաթուածի եմ հասցնում՝ յանուն թաթարիս չարա-

*խնդութեան...*

*...Եւ ինձ մղում ուրանալու ինքս ինձ, իմ խորհրդաւորապէս խորհրդային էութիւնն ուրանալու։*



Աշխարհահաւաքներում ելոյթ են ունենում պահանջատէր արի արանց առաջատարներից Աշոտ Մանուչարեանը, Լեւոն Տէր Պետրոսեանը, Խաչիկ Ստամպուլցեանը եւ Համբարձում Գալստեանը։
Կենտրոնում՝ լսում է եւ մտորում պահանջատիրական շարժման կենտրոնական սիւն Հենրիկ Պօղոսեանը

# Ա.

Հանրայայտ է Խորհրդային Հայաստանի դէմիրճեանական ղեկավարութեան աւելի քան եռամսեայ շփոթահարութիւնը Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի 1988 թուի Փետրուարի 20-ի իր համար ե՛ւ անակնկալելի, ե՛ւ անցանկալի որոշմանը (աւելի ճիշտ կը լինի ասել՝ Մայր Հայրենիքին ուղղուած արցախահայութեան կոչին) տրուելիք արձագանքի հարցում։ Դրական արձագանքի դէպքում ի վերուստ արձակուած հրահանգը անտեսնելու եւ Կրեմլը զայրացնելու, իսկ ժխտականի դէպքում հայ ժողովրդին եւս առաւել բորբոքելու երկսայրի սուրը դէմիրճեանական կառավարող վերնախաւին շատ բնականօրէն գլխակորոյս էր դարձրել։ Հենց այդ՝ Երեւանի Բարեկամութեան փողոցի երկու շքեղ պալատների ժամանակաւոր տէրերի, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան անդամների աւելի քան եռամսեայ երկփեղկուածութիւնը՝ մի կողմից Արցախի հայութեան ազգային վաթսունհինգամեայ ըղձանքների եւ ամբողջ հայութեան ազնուագոյն երազանքի, ու միւս կողմից սեփական շահերի եւ կուսակցական-պետական ուղղափառ աւանդոյթների ու սրբազան կարգապահութեան միջեւ, տուեալ պահին կարեւորագոյնն էր այն ազդակների, որոնք անխուսափելիօրէն պիտի խորացնէին հայ ժողովրդի հիմնական կորիզ հայրենահայութեան եւ Դէմիրճեանով ու Ոսկանեանով մարմնաւորուող կուսակցական ու պետական փճացած վերնախաւի միջեւ առանց այդ էլ առկայ խանդակը։

Այդ խանդակի մինչեւ իսկ համարեա անանցանելի անդունդի վերածման գլխաւոր յայտարարը Արցախի խիզախ ոգորման հետ միասնութեան Երեւանում ծայր առած ժողովրդական ինքնաբուխ շարժման տարերայնօրէն ահագնանալով բառիս բուն իմաստով համաժողովրդականի վերածուելն էր նախ եւ առաջ։ Ապա՝ եւ այն, որ համաժողովրդական որքան հզօր, նոյնքան եւ զուլալ այդ շարժումը, աւանդական-պաշտօնական առաջնորդների անվայելուչ եւ անփառունակ զառալքութեան, իսկ գերագոյն առաջնորդների՝ հակառակորդ ճամբարի հետ զինակցման պայմաններում, բնականաբար իր ծոցից պիտի առաջադրէր նոր ու նորատիպ տրիբուն-առաջնորդներ. սկզբնական հանդրուանում իր արմատներով արցախահայ, Հայաստանի Պետական փլանին առընթեր Տնտեսութեան եւ փլանաւորման գիտահետազօտական հիմնարկի աւագ գիտական աշխատող, տնտեսական գիտութիւնների թեկնածու Իգոր Մուրադեանի, իսկ այնուհետեւ՝ իր արմատներով արեւմտահայ, Հայաստանի Մատենադարանի՝ Մաշտոցի անուան գիտահետազօտական

հիմնարկի աւագ գիտական աշխատող, բանասիրական գիտութիւնների դոկտոր Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորութեամբ։

Փետրուարի 20-ին Երեւանում ծայր առած աշխարհահաւաքներն առաջին օրերին ղեկավարում էին արցախահայութեան հետ միասնութեան շարժման հնօրեայ առաջնորդ Իգոր Մուրադեանը* եւ Ստեփանակերտի հայկական թատրոնի պատասխանատուներից, հայրենահայութեան թեւարկութիւնն ապահովելու համար Երեւան եկած Վ. Սարուխանեանը։ Նրանց շուրջ համախմբուած մտաւորականների մասնակցութեամբ էլ մի քանի օր անց անհրաժեշտաբար ստեղծուեց աշխարհահաւաքը ղեկավարելու եւ ի հարկին ժողովրդի անունից հանրապետութեան մեծամեծների հետ բանակցութիւններ վարելու կոչուած մի մարմին՝ Կազմակերպական կոմիտէ, որին անդամակցում էին ինչպէս աւագ սերնդի երեւելիներ (գրողներ Ս. Խանզադեան, Ս. Կապուտիկեան, Ռ. Դաւոյեան, խմբավար Յ. Չեքիճեան, դերասան Ս. Սարգսեան, պատմաբան Վ. Բարխուդարեան եւ այլք), այնպէս էլ երիտասարդ մտաւորականներ։

Փետրուարի 24-ին Կազմկոմիտէին պաշտօնական գոյավիճակ շնորհող աշխարհահաւաքը նրա ղեկավար Ս. Կապուտիկեանին ընտրեց պատուոյ նախագահ, գործնական ղեկավարութիւնը վստահելով Ի. Մուրադեանին։ Վերջինիս շուրջ, որպէս կոմիտէական, ժողովրդի համամտութեամբ համախմբուեցին յարաբերաբար երիտասարդ մտաւորականներ՝ արեւելագէտ Ա. Յակոբեանը, գրող Ա. Յովհաննիսեանը, ճարտարապետ Ռ. Այգինեանը, պատմաբան Հ. Գալստեանը, մանկավարժ Ա. Մանուչարեանը եւ ուրիշներ, այդ թւում արցախահայ «Կռունկ»ականներ։ Տարբեր «կոմիտէականներից» կազմուեց «Աւագների խորհուրդ», որում, բացի Կազմկոմիտէի վերոյիշեալ երէցներից, ընդգրկուեցին ակադեմիկոսներ Վ. Համբարձումեանը (նախագահ) եւ Գ. Սարգսեանը, պատմաբան Բ. Ուլուբաբեանը եւ ուրիշներ։

Փետրուարի 26-ին արդէն «Ղարաբաղ կոմիտէ» անունն ստացած Կազմկոմիտէի նախաձեռնութեամբ, Փետրուարի 28-ին եւ Մարտի 9-ին գրողների տանը, իսկ Մարտի 19-ին կինոաշխատողների տանը գումարուեցին հիմնարկ-ձեռնարկութիւնների տեղական կոմիտէների ներկայացուցիչների համահայաստանեան ընդհանուր ժողովներ։ Մարտի 19-ից յետոյ դէմիրճեանական ղեկավարութեանը յաջողուեց քայքայել «Աւագների խորհուրդը» եւ միայն առաւել բոցաշունչ երէցները մնացին «Ղարաբաղ»ի շուրջ։

Յունիսեան վճռական մարտերի օրերին «Ղարաբաղ»ը փաստօրէն վերանորոգուեց եւ այնուհետեւ գործեց հետեւեալ կազմով. արեւելագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր Լեւոն Յակոբի Տէր

---

(*) Ի. Մուրադեանը ծնուել է 1957 թուին։ 1979-ին աւարտել է Մոսկուայի Պլեխանովի անուան ժողովրդային տնտեսութեան բարձրագոյն դպրոցը, ապա՝ Երեւանի համապատասխան կենտրոնի ասպիրանտուրան եւ ստացել տնտեսական գիտութիւնների թեկնածուի աստիճան։ 1987 թուի Յունիսից գլխաւորել է «Միացում» խումբը, որը Ատրպէյճանական ԽՍՀ-ում բնակուող հայերի ազատութեան կոմիտէն էր։ Հեղինակ է տնտեսագիտական հետազօտութիւնների։

Պետրոսեան*, ակադեմիայի թղթակից անդամ Ռաֆայէլ Աւետիսի Ղազարեան, պատմաբան, գիտութիւնների թեկնածու Համբարձում Փայլակի Գալստեան, Երեւանի համալսարանի դոցենտ Վազգէն Մինասի Մանուկեան, համալսարանի գիտական աշխատանոցի վարիչ Դաւիթ Մանուկի Վարդանեան, գրող Վանօ Սմբատի Սիրադեղեան, համալսարանի դոցենտ Բաբգէն Գուրգէնի Արարքցեան, արեւելագէտ Ա-Յակոբեան, մանկավարժ Աշոտ Գառնիկի Մանուչարեան, մանկավարժ Սամսոն Սերգէյի Ղազարեան եւ հրապարակախօս Սամուէլ Վլադիմիրի Գէորգեան։

Հայ ժողովրդի Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի ստեղծումը եւ անառարկ հեղինակութեամբ համակողմանի գործունէութիւնը, խորհրդային հասարակարգում աննախադէպ երեւոյթներ, ըստ ինքեան նշանակում էին Հայաստանի համայնավար կուսակցութեան շուրջ եօթանասուն տարի չփոփոխուած եւ, գուցէ թէ բացառութեամբ Աղասի Խանճեանի տարիների, իրականութեանը չհամապատասխանելով հանդերձ, տարբեր ժամանակաշրջաններում տարբեր ազդակներից հրամանագրուելով ձեւականօրէն յարգուած առաջատար դերի առասպելի յանկարծական եթէ ոչ հիմնայատակ փլուզումը, ապա առնուազն մերկապարանոց բացայայտութեամբ թէականացումը։

Իսկ դա նախադրեալն էր մի իսկական աղէտի՝ ոչ թէ ընդհանրապէս, այլ յատկապէս տուեալ պահին, ոչ թէ ընդհանրապէս հայութեան, այլ յատկապէս արցախական պահանջատիրութեան համար։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման բանալին գտնւում էր համայնավար-խորհրդային բարձրագոյն ղեկավարութեան ձեռին, հետեւաբար հրամայական անհրաժեշտութիւն էր Հայրենահայութեան եւ Երեւանի համայնավար-խորհրդային ղեկավարութեան միասնութիւնը, առնուազն համերաշխ համագործակցութիւնը. չէ՞ որ ոչ թէ ակնկալելի, այլ երեւակայելի իսկ հաւանականութիւն չէր Կրեմլի կողմից թէկուզ զրուցակցի հանգամանքի շնորհումը մի ինչ որ ինքնածին-նորելուկ կոմիտէի եւ ուրեմն հայ ժողովրդի համար կենսական ու անզանցառելի էր դառնում մոսկովեան կուսակցական-պետական այլապէս անմատչելի լաբիւրինթոսում կողմնորոշուելու առակ իր «դասական» ղեկավարների հետ ներդաշնակութիւնը։

Դա մի իսկական աղէտի նախադրեալն էր հիմնականում այն պատճառով, որ մոլեկրոն-ցեղապաշտ կրքերի ճահճուտում յարատեւօրէն միասնական եւ ալիեւական յելուզակախմբի ջանքերով եւս առաւել

(*) Լ. Տէր Պետրոսեանը ծնուել է 1945 թուին, Սիրիայի համայնավար կուսակցութեան ղեկավարներից Յակոբ Տէր Պետրոսեանի ընտանիքում։ Հայրենադարձուելով, աւարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքը, իսկ 1972 եւ 1987 թուականներին Լենինգրադի համալսարանում պաշտպանել է թեկնածուական եւ դոկտորական դիսերտացիա։ Աշխատել է Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի գրականութեան հիմնարկում, ապա՝ հին ձեռագրերի կենտրոն Մաշտոցի անուան Մատենադարանում, որտեղ մինչեւ 1985 զբաղեցրել է գիտական քարտուղարի պաշտօնը։ Հայ-ասորական բանասիրական առնչումների խոշոր մասնագէտ, հեղինակ է աւելի քան յիսուն անուն գիտական աշխատութիւնների, այդ թւում չորս մենագրութիւնների։

միասնականացած թաթարական Յորդան (Օրտուն) փաստօրէն ողնէկծիկ կրանիթացել էր հայութիւնից բռնախլուած արցախական աւարի չմարսուած վերջին պատառը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ամէն գնով պահպանելու ոգորումներում, մինչդեռ իր ազգային սրբազան իրաւունքի համար դժուարին մարտի վեր կացած հայրենահայութիւնը յանկարծօրէն երկպառակւում էր։ Ըստ որում բնաւ էլ բացառուած չէր, որ առանց այդ էլ շփոթահար-գլխակորոյս կուսակցապետերը, բախտի բերմամբ թէ պատահմամբ ժողովրդապետ կարգուած գեղի-քաղքեցուկի աչքառաց («չուստրի») ողերք, ժողովրդական զանգուածին գտնելով իրենց հանդիպակայ, խելաթափուելով բացորոշապէս դէմընթաց գնային համահայկական սրբազնագոյն ըղձանքներին, նոյնիսկ փորձէին հետեւել իրենց հոգեւոր հայրերի աշխարհահռչակ, ու շատ տխրահռչակ աւանդոյթին եւ բռնամիջոցներով իր սաղմում արեան մէջ խեղդէին ժողովրդական շարժումը···

···Մանաւանդ որ կուսակցական-պետական յղփացած աւագանու, նաեւ աստիճանաւոր մտաւորականութեան սողուկուն ընտրանու միջավայրում չկար ու չէր էլ կարող լինել թէկուզ մէկ շնչաւոր, որը այդ դէպքում խիզախէր բողոքի ծպտուն հանել։

Արդարամտութիւնը պահանջում է խոստովանել, որ ճիշտ է, իր օրին Դէմիրճեանի թէ նրա սպասակոյտի հասցէին քննադատական ելոյթներ, թէկուզ հազուադէպ, այնուամենայնիւ եղել էին, հատկանշականօրէն միայն ներսից, ներփակ ներքնաբակից։ Եւ դրանց թւում, իրենց անզիջում սկզբունքայնութեամբ առանձնացողները՝ Հրազդանի կուսակցապետ Ֆոթանջեանինը եւ Կենտկոմի կուսակցական վերահսկողութեան մարմնի պետ Խաչատրեանինը։ Այդ ելոյթները, սակայն, լաւագոյն դէպքում տիրական կանոնը հաստատող բացառութիւն, ժողովրդական յենարանից զուրկ անյոյս մենամարտեր էին պարզապէս։ Եւ յետոյ այդպիսի դէպքերում, ինչպէս գրում էր Կենտկոմի պաշտօնաթերթ «Սովետական Հայաստան»ը, դէմիրճեանականները անմիջապէս «ճնշում, խեղճացնում, հեղինակազրկում էին» ելոյթ ունեցողին, «ձեռն ու ոտը ամուր կապկպելով՝ խաղից դուրս էին նետում անցանկալի անձը, ենթարկում բարոյական խեղման»։ Ինչ վերաբերում է այլ «ելոյթների», դրանք ըստ էութեան յարգալիր-փափկանկատ ընկեր-համախոհների կամ շատ բանով «կախեալ» մարդկանց դիտողութիւնների բնոյթ են կրել։ Եւ հաւաստի չեն Ս. Յարութիւնեանի կուսակցապետութեան օրօք յանկարծօրէն (եւ օրինաչափօրէն) նախորդ ղեկավարութեան հասցէին սրալեզու դարձած երբեմնի մունջերի այն ժիր անդումները, թէ իրենք իբր հենց ժամանակին բանաւոր հանդէս են եկել այն նոյն քննադատութեամբ, ինչ ներկայումս գրաւոր շարադրում են։ Գիտութիւնների ակադեմիայի թղթակից անդամ Վ. Խոջաբեկեանը, օրինակ, Նոյեմբերի 18-ին «Երեկոյեան Երեւան» թերթում գրել է. «Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի հասցէին այստեղ ակնարկուող քննադատութեամբ ես հանդէս եմ եկել երեւանեան հաւաքների առնչութեամբ Կենտկոմում 1988 թուի Մարտի 21-ին հրաւիրուած խորհրդակցութիւնում»։ Խոջաբեկեանը նկատի ունի «Ճշմարտութիւնը բացարձակ է, այն չի կարող լինել փուլային, ընթացիկ,

այսրոպչական» այլապէս ուշադրաւ իր յօդուածի առօրեւ մէջբերուող այն հատուածը, որից ի յայտ է գալիս մի իրողութիւն. այն, որ դեռ այն ժամանակ, երբ Կենտկոմ ազատ ելք ու մուտք ունեցող պաշտօնատար-աստիճանաւոր առանձնաշնորհեալ մտաւորականներն իրենց հասարակ մահկանացու պաշտօնակիցներին եւ ընդհանրապէս ժողովրդի զաւակ-ներին փորձում էին համոզեցնել, որ «վերեւում» բնաւ էլ սառը չեն ազգի պահանջատիրութեան նկատմամբ եւ որ լոյսն ի վերջոյ «վերեւից» է ծագելու, նրանց համար արեւելեան պազարում բոլորի բերանն ընկած «գաղտնիքի» նման հանրայայտ են եղել ժողովրդային շարժումն իր սաղմի մէջ խեղդելու Դեմիրճեանի ե՛ւ ցանկութիւնը, ե՛ւ որոշակի գործողութիւնները.

«Դասը, որ մենք քաղեցինք փետրուար-մարտեան օրերին, վերաբերում է ժողովրդական զանգուածներից Հայաստանի կուսակ-ցական կազմակերպութեան նախկին ղեկավարութեան կտրուածութեանը: Նրա դիրքի անորոշութիւնը, հարցը ժամանակին գիտականօրէն չմշա-կելու հետեւանքով սեփական ծրագրադրոյթի անգոյութիւնը, ծայրայեղ երկչոտութիւնը, տարրկայական տեղեկութիւն հաղորդելու ձեւեր ու եղանակներ մշակելու ու կիրառելու անկարողութիւնը, եւ ընդհանրապէս՝ ժողովրդի ձայնի նկատմամբ ցուցաբերած անտարբերութիւնը յանգեցրին ինքնամեկուսացման: Հայաստանի ղեկավարութիւնը վերից վար, վարից վեր ոչ մի կերպ չկարողացաւ ներազդել իրադարձութիւնների ընթացքի վրայ: Նա այդպէս էլ մտածուած եւ լուրջ փորձ անգամ չկարողացաւ ձեռնարկել: Այդ ինքնամեկուսացումը արտայայտուեց ոչ միայն նրա-նում, որ Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոն չկարողացաւ գլխաւորել զանգուածների շարժումը, այլեւ հանրապետութիւնում բախտի քմահաճոյքին թողնուեցին մամուլը, տեղեկատուութեան բոլոր ձեւերը: Կենտրոնական կոմիտէի յատուկ հսկողութեամբ մամուլը երկար ժամանակ լուռ ու մունջ էր իր շուրջը կատարուող քաղաքական կենսական նշանակութիւն ունեցող իրադար-ձութիւնների նկատմամբ: ...Նախկին ղեկավարութեան օրօք ներքին անսկզբունքային պայքարում խորացող երկչոտութիւնը, հրապարա-կայնութեան դարում տեղի տուեց ժողովրդական զանգուածներին գլխաւորելու, նրանց ընթացքը ցանկալի հունով տանելու փոխարէն ծայրայեղ զգուշաւորութեան՝ իրենց իսկ ճօճուող աթոռների նկատմամբ: ... Հին ղեկավարներին անհրաժեշտ էր «լուռ» ու լճացած իրավիճակ՝ միլիոններ շորթելու, իրենց շուրջ համախմբուած պաշտօնատար անձանց կաշառակերութիւնը հովանաւորելու, անհատական արժանիքներ չու-նեցող մարդկանց պաշտօններում պահելու եւ նոր աթոռներ շնորհելու համար: Նրանց բնաւ էլ արտակարգ իրավիճակ պէտք չէր: Հենց ինքը՝ նրա ղեկավարութիւնը, այնքան էր սարսափած ազգային զարթօնք ապրող՝ Լեռնային Ղարաբաղի առնչութեամբ հանրապետութիւնում ծնունդ առած շարժումից, որ ամէն գնով այն խեղդելու փորձ էր անում»:

Նշանակում է՝ որ հայրենահայկական ճակատի երկփեղկումն անխուսափելի էր, քանի որ Մոսկուայից մինչեւ միութենական հանրապետութիւնների մայրաքաղաքներ ձգուող տարատեսակ ու տարանուն (իւզպեքական-ռաշիտովեան, թաթարական-ալիեւական եւ

այլ) մաֆիաների հայկական մանրանկար տարբերակը՝ դչմիրճեան-ռուկաննեանական ոռից գլուխ կեղտի մէջ խրուած աւազանին, չէր կարող կանգնել բուն հայրենահայութեան հետ միեւնոյն եզերքում։ Հայրենահայութեան համաժողովրդական գերարդար ու գերազնիւ Ղարաբաղեան շարժման մէջ չէր կարող տեղ ունենալ այդ շարժման մահացու թշնամի Դէմիրճեանով խորհրդանշուող ազգադաւ աւազանին, ինչպէս թարախակալած կոյր աղիքը՝ առողջ մարմնում։ Վերջին հաշուով Ղարաբաղեան ըստ էութեան պահանջատիրական շարժումը,- ինչպէս շեշտել է բանաստեղծուհի Ս. Կապուտիկեանը «Երեկոյեան Երեւանի» աշխատակցի հետ Հոկտեմբերի 29-ի իր հարցազրոյցում, որից առորեւ մի քաղուածք է տրուելու,- նաեւ հենց Ի՛ր՝ կառավարող յելուզակային խմբակի դէմ ուղղուած պոռթկում էր։

«Մեր ժողովրդի այն մեծ պոռթկումը, որ կնքուեց «Ղարաբաղեան շարժում» անունով, կը մտնի մեր բազմադարեան պատմութեան մէջ, ինչպէս օրինակ, Աւարայրի ճակատամարտը, Անիի պատերի տակ մղուող կռիւները, Սարդարապատեան հերոսապատումը եւ մեր պատմութեան ուրիշ այդպիսի բախտորոշ յեղաբեկումներ։ Նրա արձագանգները կը մնան գալիք ժամանակներում, կ'անցնեն սերնդէ սերունդ...։ Մի երկուօրեայ ընթացքում մեր՝ թւում էր ընդարմացած, առօրեայ հոգսերի ու հաշիւների մէջ մխրճուած եւ ինչ որ տեղ իր առհմիկ առաքինութիւնները խաթարած ժողովրդի մէջ միանգամից զարթնեց, թափ առաւ ազատասիրութեան եւ ազգային արժանապատուութեան ոգին, արեան մէջ խլրտացին դարաւոր ազնուականութեան գեները*, հարկաւոր ժամին ի մի գալու, անարդարութեան դէմ ընդվզելու եւ իր արդարութեանը հասնելու անխափանելի տենչը։

... Ղարաբաղեան շարժումը իր մէջ ունի շատ շերտեր ու խորքեր։ Դեռեւս Փետրուարի վերջին ընկեր Մ.Ս. Գորբաչովի հետ ունեցած հանդիպման ժամանակ մենք ասացինք, որ մեր ժողովուրդը շատ վէրքեր ունեցող, սիրտը կոտրուած ժողովուրդ է։ Ղարաբաղի առիթով դուրս պոռթկացին այդ սրտում կուտակուած համաժողովրդական վիրաւորուածութիւնն ու դժգոհութիւնը՝ 1915 թուականի ցեղասպանութեան ու իր դարաւոր հայրենիքի բռնագրաւման նկատմամբ մեծ տէրութիւնների թուրքանպաստ ու հաշուենկատ վերաբերմունքի դէմ, Հայաստանը, մանաւանդ Երեւանը քիմիախեղդ անող գործարանների դէմ, հայ ժողովրդի գոյութեանը ուղղակիօրէն սպառնացող ատոմակայանի դէմ, ընկերային անարդարութիւնների, աշխատաւոր մարդկանց՝ ճիրանների մէջ առնող, ճզմող-շնչահեղձ անող փտածութեան, կաշառակերութեան, յուսալիօրէն պարսպապատուած դիւանակալութեան դէմ»։

Բնականաբար հարցազրոյցում Կապուտիկեանը իրողութիւնների մէկ տոկոսը պարզելու իսկ հնարաւորութիւն չունէր։ Եւ որպէսզի սփիւռքահայ ընթերցողին հասկանալի դարձնենք սոցիալ-տնտեսական եւ

(*) Գեն— Երկրագնդի վրայ գոյութիւն ունեցող կենդանի բոլոր էակները (վիրուս-մանրէներից մինչեւ մարդ արարածը) որպէս որոշակի տեսակ եւ որոշակի անհատ, ունեն իրենց առանձնայատկութիւնները, որոնք բխում են գեներից՝ ժառանգականութեան տարրական միաւորներից։ Գեների գումարով ստեղծւում է ուրոյն տիպ, որի ժառանգական յատկանիշները ծածկագրուած են գենի նուկլէոթիդներում։

հոգեւոր-բարոյական ու մասամբ քաղաքական այն կլիման, որում ապրում էր Հայրենահայութիւնը՝ տեղաբնիկ ժողովրդի, ետ-եղեռնեան արեւմտահայ «գաղթականութեան» եւ Հայրենադարձուած սփիւռքահայերի այդ շաղախը Հայրենի երկրում, աւելի շուտ՝ թէ խորհրդային-համայնավար իշխանութեան աւելի քան յիսնամեայ ժամանակաշրջանում կառուցուած «դրախտ» երկիրը շուրջ տասնամեայ դէմիրճեանական կառավարմամբ ինչպիսի՛ ճահճուտի էր վերածուել, այստեղ խօսքը տալու ենք խորհրդահայ պաշտօնական հրապարակախօսութեան երեւելիներից Ս. Յովակիմեանին։ «Սովետական Հայաստան» օրաթերթում 1988 թուի աշնանամուտքին նրա ստորագրած «Ո՞ր ժառանգութիւնից ենք Մենք Հրաժարւում» յօդուածը, որում առկայ եւ Դէմիրճեանի ժամանակաշրջանին վերաբերող ախտորոշումները խստիւ պատշաճում են նաեւ Յարութիւնեանի իշխանութեան գոնէ առաջին կիսամեակին, թոյլ կը տայ հասկանալ, թէ արցախական պահանջատիրութեան պոռթկման օրերին ինչպիսին էր Հայաստանը, հետեւաբար եւ պահանջատիրական հրաբուխի հիմնական լաւային ջերմային ինչպիսի վտանգներ կարող էին անխուսափելիօրէն մխախտնուել.

«Ժողովրդական տնտեսութեան բազմաթիւ ճիւղեր, գիտատնտեսական- արդիւնաբերական համալիրի, շինարարական, սպասարկման ոլորտի կազմակերպութիւնները չապահովեցին հնգամեակի անցած տարիների ծրագրերի կատարումը։ Եւ դա՝ այն դէպքում, երբ ընկերային զարգացման մի շարք կարեւոր ցուցանիշների գծով՝ բնակարաններով, մանկապարտէզներով, հիւանդանոցային մահճակալներով, փոլիկլինիկներով, առեւտրի ու կապի կէտերով, մշակոյթի հիմնարկներով ապահովուածութեամբ Խորհրդային Միութեան մէջ (հայերս) գրաւում ենք վերջին տեղերից մէկը։

Մեր (հայ) աշխատաւորներին ամենից շատ վրդովմունք են պատճառում համատարած ընկերային անարդարութիւնը, խորթ բարքերն ու ապօրինութիւնները։ Բոլոր անարդար, խարդախ գործերը, այլանդակութիւնները կատարւում են իրաւապահ մարմինների աչքի առջեւ, շատ դէպքերում էլ դրանց աշխատողներն են յանցաւոր գործարքների մէջ մտնում, դրամաշորթութեամբ զբաղւում, աջ ու ձախ խախտում խորհրդային օրէնքները, խուսափում ե՛ւ պատժելուց, ե՛ւ պատժուելուց։

Այսօրուայ չբացայայտուած ամենափոքր զանցանքից վաղը ծնւում է մեծ յանցագործութիւն։ Այլապէս ինչո՞վ բացատրել պետական դրամատան, հանրախանութի կողոպուտը, կօշիկի, հիւսուածեղէնի թալանը, համակցուած կերերի, ծխախոտի ու հացի միլիոնների հասնող վատնում-յափշտակումները, օրինապահ մարմինների աշխատողների ատոր արարքների դէմ ընդվզող բանտարկեալների գնդակահարումը, անմեղ երեխաների մորթազերծ անելը, օրը ցերեկով մարդկանց առեւանգումը եւ ոչնչացումը։

Տարէցտարի աւելանում են բացասական երեւոյթները, կաշառակերութիւնն ու հովանաւորչութիւնը, յափշտակութիւններն ու յաւելագրումները, տարածում են գտել «ստուերային տնտեսութիւնը», թմրամոլութիւնը, կրօնական աղանդները, աւելացել են ամուսնալու-

ծությունները, նկատելի աշխուժացում է զգացվում երիտասարդության որոշ մասի բարոյական վարքագծի շեղումների մեջ։ Հանրապետությունում 340 հազար աշխատունակ մարդիկ զբաղված չեն։ Մեզ մոտ շատ է խոսվում շրջակա միջավայրի պահպանման և առողջացման մասին։ Ցավոք, գործը բնապահպանական իրադրությունը բարելավելու համապարփակ երկարաժամկետ ծրագրի մշակման և իրականացման մասին անվերջ խոսակցություններից այն կողմ չի անցնում։

Ամենալուրջ հարցերից մեկն էլ արտագաղթն է, հազարավոր մարդիկ դիմում են տալիս՝ արտասահման բնակության մեկնելու համար։

... Օրինականացվել է տարբեր մակարդակների ղեկավար պաշտոններում առաջադրվելու, կրթական օջախ ընդունվելու, պատժից խուսափելու, բժշկական օգնություն ստանալու, նույնիսկ կուսակցության շարքերն ընդունվելու համար գումարների շորթումը։

Մեծ Հայրենականի փառապանծ հերոս, հայ ժողովրդի դյուցազն զավակ Նվեր Սաֆարյանին մերժեցին իր ծննդավայրում ամառանոցային տնակ կառուցելու համար հող հատկացնել, մինչդեռ մայրաքաղաքի շրջակայքում, մերձակա գյուղերում վեր խոյացան հաճախ անաշխատ եկամուտներով, գողացած միջոցներով կառուցված, ուրիշների անուններով ձևակերպված առանձնատներն ու դղյակները։ Տարիներ շարունակ պետական առևտրի կետերում գրեթե չեն երևում Արարատյան հարթավայրի, Աշտարակի, Նայիրիի, Աբովյանի շրջանների հավաքական և պետական տնտեսություններում աճեցրած ընտիր խնձորը, խաղողը, ձմերուկը, բանջարեղենը, մինչդեռ շուկայում մասնավոր մարդկանց ձեռքում է գտնվում ամենաորակյալ մթերքների վաճառքը, որ արտադրվել են ոչ միայն անձնական տնամերձում, այլև հանրային դաշտերում ու ջերմատներում։ Իսկ գնե՞րը... շարիք են բնակչության մեծամասնության համար։

Ինչքան կարելի է հանդուրժել այս անտերությունը։

Սրանք հարցեր են, որ հուզում են մեր հասարակությանը, շոշափում մարդկանց տրամադրությունը, պետության նկատմամբ ունեցած վերաբերմունքը, հավատը։

... Հանրապետության կյանքին մեծ վնաս հասցրին հատկապես քադրային քաղաքականության խեղաթյուրումները։ ...Ղեկավար աշխատանքի ցանկապատը «չյուրայինների» համար դարձավ երկնահաս թռիչքների մրցապարեզ, «յուրայինները», որոնք համեստ չէին անում պատկառազդու պաշտոնները, արագորեն փոխում աթոռները, օգտվելով հովանավորությունից՝ գործում էին ցանկացած ձևով, խախտում մեր համակեցության կանոնները, ոտնահարում սկզբունքները, առաջ բերելով աշխատանքային հավաքականության, ենթակաների, աշխատավորական զանգվածների դժգոհությունն ու զայրույթը։

Մեզ մոտ արդեն սովորություն է դարձել երկու-երեք տարին մեկ «թարմացնել» կամ «ամրապնդել» տարբեր ոլորտների և հատկապես շրջանային կուսակցական ղեկավար աշխատողների կազմը։ Ընտրվել է շրջկոմի առաջին քարտուղար, պետական կոմիտեի նախագահ կամ առևտրի նախարար, ...դեռ աշխատավորներին հուզող ոչ մի հարց չի լուծել, շրջանը կամ նախարարությունը որևէ նշանակալի ներդրում,

առաջընթաց չունեն, իսկ նա… արդէն մտածում է նոր, աւելի հեռանկարային շրջան տեղափոխուելու կամ բարձր, եկամտաբեր պաշտօն ստանալու մասին։ Եւ շատերին դա յաջողւում է։ Թաղային նման արագ «շրջապտոյտից» աւելի շատ տուժել են Մեղրու, Արագածի, Հոկտեմբերեանի, Բաղրամեանի, Շամշադինի, Ամասիայի, Կալինինոյի, Սեւանի, Վարդենիսի, Ղուկասեանի շրջանները»։

Մի խօսքով, առանց համայնավար հրապարակախօսից դեռ էջեր ու էջեր արտագրելու էլ պարզից պարզ է. տուժել է ամբողջ Խորհրդային Հայաստանը։ Եւ կուսակցական-պետական այսօրինա՛կ կառավարման հրէշային պայմաններում ազգային-քաղաքական «մտահոգութիւններին», առաւել եւս պահանջատիրական «գլխացաւանքին» բացարձակապէս տեղ մնացած չլինելով, տուժել է ամբողջ Հայաստանը, Խորհրդայինի հետ նաեւ նրանից օրը ցերեկով բռնախլուած հողատարածքների, ինչպէս եւ մինչխորհրդային ժամանակաշրջանում բռնախլուած հողատարածքների ճակատագիրը, տուժել են հայ ժողովրդի ազգային ընդհանրական շահերը, նրա պահանջատիրութեան սրբազան գործը։

Եւ խորհրդահայ յանդուգն լրագրողն ինքը եւս իրաւամբ է հաստատել, որ այս պայմաններում «գնալով խորացաւ… ժողովրդից ղեկավարութեան անջատուածութեան վիհը»։ Բոլոր դէպքերում 1988 թուի Փետրուարի երրորդ տասնօրեակի սկզբներին աղէտալի անդունդը իւրաքանչիւր օր ոչ միայն խորանում էր, այլեւ առանց այդ էլ միմեանցից վաղուց օտարացած ժողովուրդն ու «իր» (այսինքն իր գլխին կարգուած) ղեկավարութիւնը լարւում ու կանգնում էին միմեանց դիմաց։ Համոզուելու համար հետեւէք հետագայ օրագրային տողերում թիւերի երկրաչափական աճին։

Շաբաթ, Փետրուարի 20. Երեւանի օփերային թատրոնի անուան հրապարակում (որը շուտով վերամկրտուելու էր՝ Ազատութեան) աշխարհահաւաք ի պաշտպանութիւն Արցախի Հայաստանի հետ վերամիաւորման պահանջի։ Տասից քսան հազար մասնակից։ Ընդունւում է որոշում՝ հեռագրով դիմելու Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէին եւ Գերագոյն Խորհրդին, նաեւ Հայկական ԽՍՀ ղեկավար մարմիններին։ Վերջիններիս կողմից քար անտարբերութիւն, հակառակ այն իրողութեան, որ արցախահայութեան պատուիրակ, Ստեփանակերտի թատրոնի վարիչ Վաչէ Սարուխանեանը, Իգոր Մուրադեանի եւ Սիլվա Կապուտիկեանի հետ անձամբ Կ. Դէմիրճեանին երկար ժամեր պարզաբանել էր ինքնավար մարզում տիրող ողբերգական իրավիճակն ու հայրենահայութեան բարոյական աջակցութեան կենսականութիւնը։ Որոշուած է յաջորդ հաւաքը կայացնել Փետրուարի 27-ին։

Կիրակի, Փետրուարի 21. Հաւաքը տարերայնօրէն շարունակւում է շուրջ քսանեւհինգ հազար հոգով։ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշման լուրն ստացուած լինելով, ցուցարարները օրինական ճանապարհով Հայկական ԽՍՀ ղեկավար մարմիններից խնդրում են Գերագոյն Խորհրդի արտահերթ նստաշրջան գումարել եւ դրական ընթացք տալ արցախահայութեան դիմումին։ Հայաստանի բարձրաստի-

ճանաւորների կողմից մեռելային անտարբերութիւն։ Գերագոյն Խորհրդի խամաճիկ երեսփոխանները անգամանելի են դարձել։

Ի դէպ, այսօրուայ աշխարհահաւաքը գումարուել էր «ծրագրից» դուրս. Ատրպէյճանի տեղեկատու գրասենեակը (Ազերին-ֆորմբիւրօ) գիշերը ձայնասփիւռ (եւ հեռուստատեսային) մի հաղորդմամբ հակահայկական գրգռիչ ելոյթ էր ունեցել։ Նշենք, նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի հարցի «տուեալ պահին քննարկումը հայ եւ ատրպէյճանական ժողովրդի շահերին հակասող» որակելով, Կրեմլը դէմիրճեանական ղեկավարներին կարգադրել էր անմիջապէս դադարեցնել հայրենահայութեան ներկայացուցիչների հետ ամէն մի շփում եւ կանխարգիլել հետագայ մանր ու մեծ հաւաքները։

Երկուշաբթի, Փետրուարի 22. Երեւանեան հաւաքին արդէն շուրջ յիսուն հազար մարդ է մասնակցում։ Ցուցարարները արժանապատուութեամբ բողոքում են Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի քարտուղարութեան որոշման եւ Պաքուից ծայր առած ու կենտրոնից ուղղեգրուած այն գնահատականի դէմ, որում Ղարաբաղեան շարժումը յայտարարուել է «մի խումբ ծայրայեղականների գործը»։ Ժողովուրդը տեղեակ է Կրեմլի լիազօրներ Թագումովսկու եւ Դեմիչեւի Ստեփանակերտում հակահայկական ընթացքի, Աղդամի շրջանի թաթար ջոլիրի բռնամիջոցների, արցախահայութեան համաժողովային գործադուլ յայտարարելու որոշման մասին։ Գիշերը Երեւանում տասնեւհինգ հազար ցուցարարներ 30 քիլոմեթրանոց երթով ժողովրդին զարթնելու կոչ են անում, վանկարկում բացարձակապէս օրինական լոզունգներ եւ այցելում Ծիծեռնակաբերդի յուշակոթող։ Երեւանը մինչեւ լոյս զարթուն է, ղեկավարութիւնը՝ հանգիստ քնած։ Եւ ոչ առանց պատճառի. նախօրեակին հայաստանեան Կենտկոմի լիագումար ժողովը, փաստօրէն հաւանութիւն տալով մոսկովեան Կենտրոնական կոմիտէի հակահայկական անարգ որոշման, ապահովել է Կրեմլի բարեացակամութիւնը Դէմիրճեան Ալի պապայի ու նրա մանկլաւիկ-պնակալէզ քառասուն գողերի նկատմամբ։ Պլենումում ընդամէնը չորս մարդ համարձակուել է զգուշութեամբ հանդէս գալ մոսկովեան ղեկավարների «անհասկացող» դիրքորոշման դէմ (արտաքին գործերի նախարար Թ. Մկրտչեանը, Մարքսիզմ-լենինիզմի հիմնարկի տնօրէն Հ. Սիմոնեանը, Ռադիօ-հեռուստատեսային հաղորդումների պետկոմի նախագահ Ս. Պօղոսեանը եւ Երեւանի կուսակցապետերից Ա. Յովհաննիսեանը)։

Երեքշաբթի, Փետրուարի 23. Օփերայի հրապարակում համահաւաքի մասնակիցների թիւը քառորդ միլիոն է։ Երեւան են ժամանել Քաղաքական բիւրոյի անդամութեան թեկնածու եւ Կենտրոնական կոմիտէի քարտուղար Վ. Դոլգիխը եւ Կենտրոնական կոմիտէի քարտուղար Ա. Լուկեանովը։ Հայաստանի ղեկավարները նրանց ուղեկցութեամբ աստղի նման հրապարակում երեւում են ու անյայտանում։ Ցուցարարներին հանդարտեցնելու համար Դոլգիխն է դիմում նրանց, նշելով, որ երկիրն անցեալից ժառանգել է չլուծուած շատ հարցեր, այդ թւում ազգային քաղաքականութեան ասպարէզում եւ որ դրանք գտնւում են ղեկավարութեան ուշադրութեան կենտրոնում։

Երեկոյեան Կենտկոմը գումարել է Հանրապետութեան «կուսակցական ակտիւի»՝ առաւել ազդեցիկ ու գործունեայ տարրերի ժողով։ «Ակտիւի ժողովը,– ինչպէս հաղորդուեց յաջորդ օր,– հաւանութիւն է տալիս եւ ի ղեկավարումն ու անշեղ կատարումն է ընդունում ԽՄԿԿ Կենտկոմի Փետրուարի 21-ի որոշումը՝ որպէս ստեղծուած պայմաններում միակ ճիշտ որոշումը»։ Ուրիշ խօսքով՝ Հայաստանի համայնավարական կազմակերպութիւնը անտեղի է գտնում Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը եւ հայրենահայութեան համերաշխութեան շարժումը։ Որպէս իր «հայկականութեան» դրսեւորում, ակտիւը որոշել է միութենական Կենտկոմից «խնդրել», որ ազգային հարցին նուիրուելիք եւ չգիտես ե՞րբ գումարուելիք «պլէնումը նախապատրաստելիս, միւս հարցերի համալիրում, բազմակողմանիօրէն քննութեան առնուի Լեռնային Ղարաբաղի հարցը»։

Գիշերը համամիութենական հեռուստատեսութիւնը պաշտօնականացնում է «մի խումբ ծայրայեղական-ազգայնական տարրերի» Երեւանում ասպարէզը գրաւած լինելու վերաբերեալ թաթարական «տեսակէտը»։ Այն արդէն ԹԱՍՍ-ի խողովակով հասցւում է ամբողջ աշխարհին...

Չորեքշաբթի, Փետրուարի 24. Աշխարհահաւաքում շուրջ կէս միլիոն հոգի։ Եւ ոչ առանց պատճառի։ Հաւաքը ղեկավարողների խմբի հետ հանդիպման ժամանակ Դոլգիխն առաւօտեան հաղորդել էր, որ հեռախօսով Լիգաչովից երաշխիք է ստացել այն մասին, որ կենտրոնական մամուլն ու հեռուստատեսութիւնը կարգի կը հրաւիրուեն եւ հակահայկական խեղաթիւրումներին վերջ տալով՝ ճշմարտացի եւ արդարամտօրէն կը լուսաբանեն իրադարձութիւնները։ Հակառակ այդ հաւաստիքին, մոսկովեան թերթերը եւ յատկապէս հեռուստատեսութիւնը շարունակում են չարամիտ յերիւրանքները, ինչը որ ընդվզման նոր ալիք է բարձրացնում։ Հայկական հեռուստատեսութիւնն էլ իրեն անվայելուչ է պահում։ Երկու օր առաջ երեւանեան հատուկէնտ ձեռնարկութիւններում սկսած գործադուլի շարժումը լայնանում է եւ տարածւում դէպի շրջանները։ Ուսումնական հաստատութիւնները փակ են։

Աշխարհահաւաքներում Ս. Խանզադեանի ու Ս. Կապուտիկեանի կողքին են խմբավար Յ. Չեքիջեանը, նկարիչ Սարգիս Մուրադեանը, բանաստեղծ Ռ. Դաւոյեանը եւ մտաւորականութեան ու արուեստի աշխարհի այլ ներկայացուցիչներ։ Ժողովուրդը սուլոցներով հրապարակից վանում է կուսակցութեան եւ կառավարութեան անունից «անդորրութեան» կոչ անող Ռ. Արզումանեանին եւ Լ. Ղարիբջանեանին։

Հինգշաբթի, Փետրուարի 25. Հաւաքում դարձեալ շուրջ կէս միլիոն մարդ։ Գործադուլն ամբողջ Հայաստանում համարեա համընդհանուր է։ Ժողովուրդը պահանջում է Լեռնային Ղարաբաղի հարցի արագ եւ սահմանադրական լուծում։ Հաղորդւում է, որ Վազգէն Ա. Կաթողիկոսը խնդրագիր է ուղարկել գլխաւոր քարտուղար Մ. Գորբաչովին։ Աննախադէպ երեւոյթ՝ ժողովրդական զանգուածի յուզմունքն ու վրդովմունքը մեղմելու համար Հանրապետութեան ղեկավարութիւնը Ամենայն Հայոց Հայրապետից խնդրել է հեռուստատեսութեամբ կոչ անել

ժողովրդին։ Վեհափառն ընդառաջում է՝ ընթերցելով ոչ-իր անով շարադրուած մի ընդարձակ «դիմում»...։ Մոսկովեան մամուլն ու հեռուստատեսութիւնը շարունակում են իրենց հակահայկական արշաւը, իսկ հայկական լրատուական միջոցները կարծէք լուսնի վրայ են։ Պետական մշտադոյ խիստ գրաքննութեանը աւելացել է կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի խստագոյն գրաքննութիւնը. Դեմիրճեանի կարգադրութեամբ Կենտկոմի քարտուղար Ռ. Արզումանեանն անձամբ հսկում է, որ հայ ժողովրդի ազգային շարժման օգտին մի բառ իսկ չսպրդի եթեր կամ մամուլի էջերը։

Աշխարհահաւաքին մասնակցում են ոչ միայն Հայաստանի բոլոր շրջաններից, մեծ մասամբ ոտով ու նոյնիսկ 100–150 քիլոմեթր ճանապարհ կտրած բազմութիւններ, այլեւ հոծ խմբեր Վրաստանի հայաբնակ վայրերից, Մոսկուայից, Լենինկրատից, Ուկրաինայից։ Ցնցիչ տպաւորութիւն գործեց այն հաղորդումը, որ բանակային ոյժեր Թալինի շրջանում փակել են ճանապարհը Լենինականից ոտով դուրս եկած բազմատասնեակ հազար հայերի առաջ...

Ուրբաթ, Փետրուարի 26. Միթինկի է հաւաքուել շուրջ մէկ միլիոն մարդ։ Հայկական հեռուստատեսութեան աշխատակիցները Ռադիո-հեռուստատեսային հաղորդումների պետական կոմիտէի նախագահ Ս. Պօղոսեանին խիստ վերջնագիր են տուել, պահանջելով, որ եթէ ոչ հայավարի, գոնէ տարրական առարկայականութեամբ լուսաբանուեն իրադարձութիւնները։ Ժամը 20։00-ին «Լրաբեր» ծրագիրն առաջին անգամ լինելով մի քանի պատկերով ու նախադասութեամբ վերջապէս արձագանգում է ցոյցերին ու հաւաքներին։

Ցերեկը տեղի է ունեցել Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի լիագումար ժողով, որտեղ Դոլգիխը հրապարակել է Մ. Կորպաչովի «Դիմումը Ատրպէյճանի եւ Հայաստանի աշխատաւորներին, ժողովուրդներին»։ Ժողովուրդը ոչինչ չգիտի պլենումի մասին, իսկ «Դիմում»ին ծանօթանում է հեռուստատեսութեամբ։

Կորպաչովի դիմումի հիմնական բովանդակութիւնն այսպիսին էր.

«Թանկագին ընկերներ.

Դիմում եմ ձեզ Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ ստեղծուած իրադարձութիւնների կապակցութեամբ։

Բարձրացուել է այդ ինքնավար մարզը Ատրպէյճանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ-ի կազմի մէջ անցնելու հարցը։ Դրան հաղորդուել է սրութիւն ու դրամատիկութիւն, որոնք յանգեցրել են լարուածութեան եւ անգամ օրէնքի շրջանակներից դուրս եկող գործողութիւնների։

Անկեղծ ասեմ. ԽՄԿԿ Կենտկոմն անհանգստացած է իրադարձութիւնների նման զարգացումից, այն յղի է ամենալուրջ հետեւանքներով։

Մենք կողմնակից չենք այն բանին, որ խուսափենք տարբեր գաղափարների ու առաջարկութիւնների բացայայտ քննարկումից, բայց դա հարկաւոր է անել հանգիստ, դեմոկրատական գործընթացի եւ օրինականութեան շրջանակներում, թոյլ չտալով, որ նուազագոյն իսկ

չափով վնասում մեր ժողովուրդների միջազգայնական համախմբուածութիւնը։ Չի կարելի ժողովրդի ճակատագրի անչափ լուրջ հարցերը ենթարկել տարերքի եւ յոյզերի կամքին։

Շատ կարեւոր է սեփական հոգսերը գնահատել ոչ միայն տեղական պայմանների առումով, այլեւ հաշուի առնելով երկրում ծաւալուած յեղափոխական նորացման գործընթացները։

Այո, մեր կեանքում չլուծուած հարցեր կան, բայց երկպառակութիւնների եւ միմեանց նկատմամբ ժողովուրդների անվստահութեան բորբոքումը միայն կը խանգարի դրանց լուծմանը։ Դա կը հակասէր մեր սոցիալիստական սկզբունքներին եւ մեր բարոյականութեանը, խորհրդային մարդկանց բարեկամութեան ու եղբայրութեան աւանդոյթներին։

Մենք ապրում ենք բազմազգ երկրում, աւելին, բոլոր հանրապետութիւնները, բոլոր մարզերը, անգամ քաղաքներն ու աւանները մեզանում բազմազգ են։ Եւ լենինեան ազգային քաղաքականութեան իմաստն այն է, որ իւրաքանչիւր մարդ, իւրաքանչիւր ազգ կարողանայ ազատօրէն զարգանալ, որ իւրաքանչիւր ժողովուրդ կարողանայ բաւարարել իր պահանջմունքները հասարակական-քաղաքական կեանքի բոլոր ոլորտներում, մայրենի լեզուում ու մշակոյթում, սովորոյթներում ու հաւատալիքներում։

Սոցիալիստական միջազգայնականութիւնը մեր հսկայական ուժի աղբիւրն է։ Ժողովուրդների իսկական եղբայրութիւն ու միաբանութիւն՝ ահա սա է մեր ուղին։

Ոչ մի մայր չի համաձայնի, որ իր զաւակներին ազգային գժտութիւններ սպառնան բարեկամութեան, հաւասարութեան, փոխօգնութեան ամրակուռ կապերի՝ սոցիալիզմի յիրաւի մեծ նուաճման փոխարէն։

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում քիչ թերութիւններ ու դժուարութիւններ չեն կուտակուել։ Մարզի նոր ղեկավարութիւնը պէտք է շատ միջոցներ ձեռնարկի վիճակը շտկելու համար։ ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտէն այս առումով յստակ յանձնարարականներ է տուել եւ անմիջականօրէն կը հետեւի դրանց կատարմանը։

Այժմ ամենագլխաւորն է՝ կենտրոնանալ առեղծուած իրավիճակի յաղթահարման, Ատրպէյճանում եւ Հայաստանում կուտակուած որոշակի տնտեսական, ընկերային, բնապահպանական եւ այլ խնդիրների լուծման վրայ, մեր ամբողջ երկրում իրականացուող վերակառուցման ու նորացման քաղաքականութեան ոգով։

Հարկաւոր է թանկ գնահատել եւ ըստ ամենայնի ամրապնդել ատրպէյճանական ու հայ ժողովուրդների բարեկամութեան աւանդոյթները, որոնք ձեռք են բերուել խորհրդային իշխանութեան տարիներին։ Միայն այսպիսի մօտեցումն է համապատասխանում ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների իսկական շահերին։

Դուք գիտէք, որ մտադրութիւն կայ մեր կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի յատուկ պլէնում նուիրել ազգային յարաբերութիւնների զարգացմանը։ Քննարկուելու են այդ կարեւորագոյն հասարակական ոլորտի բազմաթիւ հարցեր եւ լենինեան ազգային

քաղաքականութեան սկզբունքային նուաճումների հիմքի վրայ նշուելու են ընկերային, տնտեսական, մշակութային եւ այլ խնդիրների որոշակի լուծման ուղիները։

Մենք բոլորս միասին խորհրդային քաղաքացիներ ենք, մենք ունենք ընդհանուր պատմութիւն, ընդհանուր յաղթանակներ, տեսել ենք թողել մեծ աշխատանք, դառնութիւններ ու կորուստներ։ Մենք զբաղուած ենք վերակառուցման մեծ գործով, որի յաջողութիւնից է կախուած սոցիալիզմի մեր հայրենիքի, մեզանից իւրաքանչիւրի ճակատագիրը։

Ես դիմում եմ ձեզ, ընկերներ, ձեր գիտակցականութեանն ու պատասխանատուութեանը, ձեր ողջամտութեանը։ Այս փորձութեան ժամին էլ պաշտպանենք մեր խորհրդային միջազգայնականութիւնը, այն բանի անսասան հաւատը, որ միայն մեր բոլոր ժողովուրդների համերաշխ ընտանիքում մենք կարող ենք ապահովել մեր հասարակութեան առաջադիմութիւնը, նրա բոլոր քաղաքացիների բարօրութիւնը։

Ես ձեզ կոչ եմ անում հանդէս բերել քաղաքացիական հասունութիւն ու համբերութիւն, վերադառնալ բնականոն կեանքի ու աշխատանքի, պահպանել հասարակական կարգը։

Ժամն է ողջախոհութեան ու սթափ վճիռների»։

Խորհրդային Միութեան մէջ աննախադէպ երեւոյթ՝ գլխաւոր քարտուղարի այս դիմումը լոյս տեսաւ միայն Հայկական ԽՍՀ-ի եւ Ատրպէյճանական ԽՍՀ-ի թերթերում։ Կենտրոնական հեռուստատեսութիւնն ու մամուլը այն նոյնիսկ չյիշատակեցին։ Մի՞թէ դա չի խօսում այն մասին, որ ղարաբաղեան տագնապը թաքցւում էր ամբողջ երկրից։

Շաբաթ, Փետրուարի 27։ Աշխարհահաւաքում դարձել մէկ միլիոն մարդ։ Հաւանութիւն է տրւում Կորպաչովի դիմումին եւ վստահութիւն յայտնւում, որ Լեռնային Ղարաբաղի հարցն արդարացի լուծում կը գտնի։ Որոշւում է գործադուլին ու ցոյցերին վերջ տալ եւ միամսեայ դադարով սպասել երկրի ղեկավարների միջոցառումներին։

Անհրաժեշտ է շեշտել, որ հայրենահայութեան ողջմիտ որոշման հարցում, բացի գլխաւոր քարտուղարի «դիմումից» (որի ամպհովանու ներքոյ նախօրեակին Դէմիրճեանը մի կերպ հանդուրժուել էր ժողովրդից եւ թոյլտուութիւն ստացել մի քանի րոպէ ելոյթ ունենալու) իր կարեւոր դերն ունեցաւ հետեւեալ իրողութիւնը. նախորդ օր յատուկ հրաւէրով Մոսկուա թռնելով, Ս. Կապուտիկեանը եւ Զ. Բալայեանը շուրջ երեք ժամ Քաղբիւրոյի անդամ եւ Կենտկոմի քարտուղար Եակովլեւի եւ աւելի քան մէկ ժամ Մ.Ս. Կորպաչովի կողմից ընդունուել էին «սրտաբաց զրոյցի»։ Կապուտիկեանի հեռուստատեսային եւ Բալայեանի աշխարհահաւաքում ունեցած ելոյթները այնպիսի յուսադրիչ մանրամասներով էին համեմուած, որ հայրենահայութեան թւաց, թէ Արցախի հարցը ուղղակի եւ շատ արագ գնում է դէպի... հանդուցալուծում։ Բալայեանը հաղորդեց, օրինակ, որ գլխաւոր քարտուղարը «երեք օր շարունակ ուսումնասիրել է հարցի պատմութիւնը» եւ քաջ գիտի, որ «Ղարաբաղի բուն հայկական անունը Արցախ է», որ նա «շնորհակալութիւն» է յայտնել հայ ժողովրդի «կարգապահութեան» համար եւ տարեկէսին «Հայաստան է այցելելու», որ նա «չի ակնկալել» իր

«վերակառուցողական» շարժմանը հայ ժողովրդի կողմից «առաջին հարուածը» եւ այլն...

Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի Փետրուարի 26-ի պլէնումի մասին «Լրատուական Հաղորդագրութիւնը» թերթերում լոյս տեսաւ Շաբաթ օր, Փետրուարի 27-ին։ Հաղորդագրութեան մէջ բացի այն երկու տողից, որ «պլէնումը լիովին եւ ամբողջովին հաւանութիւն է տուել Կորպաչովի դիմումին», բառացիօրէն ոչինչ չկար, եթէ հաշուի չառնենք 27 ելոյթ ունեցողների ազգանունների եւ պաշտոնների թուարկումը։ Երկու օր անց միայն մամուլում հրատարակուեց «պլէնումի որոշման շարադրանքը», որում առկայ էին հինգ պահեր.

1) Գրեժնեւեան ճահճային ժամանակաշրջանի աւանդոյթով շողոմ փառաբանանքը Կորպաչովի դիմումի եւ մաշուած կաղապարով սնամէջ քարոզախօսական գովքը ժողովուրդների բարեկամութեան. «Պլէնումը այդ դիմումը համարում է ԽՍՀ մեծ Միութեան իւրաքանչիւր ժողովրդի ճակատագրի, սոցիալիզմի ճակատագրի նկատմամբ մեր կուսակցութեան հսկայական հոգատարութեան դրսեւորում։ Պլէնումը ամբողջովին ու լիովին պաշտպանեց ընկեր Մ. Կորպաչովի դիմումի պարունակած գնահատականներն ու հետեւութիւնները, նրա ընդգծած խնդիրը՝ ըստ ամենայնի ամրապնդելու խորհրդային ժողովուրդների միջազգայնական բարեկամութիւնը, որը եղել է, կայ եւ կը մնայ մեր հարազատ պետութեան ամրապնդման հիմքը»։

2) Հայ ժողովրդին ուղղուած հնամաշ ճոռոմաբանութեամբ մի կոչ, որը, չգիտես ինչու", պլէնումից անմիջապէս յետոյ չէր հրապարակուել. «Պլէնումը հանրապետութեան բոլոր աշխատաւորներին, իւրաքանչիւր տղամարդու եւ կնոջ, իւրաքանչիւր պատանու եւ աղջկայ, իւրաքանչիւր բանուորի ու կոլտնտեսականի, իւրաքանչիւր մասնագէտի, գիտնականի, ստեղծագործական աշխատողի, իւրաքանչիւր ուսանողի ու սովորողի կոչ արեց ամբողջ սրտով արձագանգել Ադրպէյճանի ու Հայաստանի աշխատաւորներին, ժողովուրդներին ընկեր Մ. Կորպաչովի յղած դիմումին, հանդէս բերել ողջամտութիւն, հաստունութիւն ու պատասխանատուութիւն։ Հարկաւոր է ազգային-հողատարածքային բարդ հարցի քննարկումն ու լուծումը յոյզերի եւ կրքերի հունից փոխադրել հանդարտութեան ու սոցիալիստական դեմոկրատիայի հուն։ Պլէնումը դիմեց Հայաստանի աշխատաւորներին, ջերմօրէն կոչ անելով ամրապնդել ԽՍՀՄ ժողովուրդների, հայ ու ադրպէյճանական ժողովուրդների բարեկամութիւնը։ Նա Հայաստանի բանուորներին, կոլտնտեսականներին, ծառայողներին ու սովորողներին, բոլոր քաղաքացիներին կոչ է անում վերադառնալ բնականոն աշխատանքի եւ ուսման, ըստ արժանւոյն կատարել իւրաքանչիւրի վրայ դրուած պարտականութիւնները»։

3) Յոյսի ու խնդրանքի ձեւակերպում. «Պլէնումը յոյս ունի, որ Լեռնային Ղարաբաղի հարցը կ'ուսումնասիրուի եւ քննութեան կ'առնուի այլ հարցերի համալիրում, որոնք կը դառնան ազգային քաղաքականութեան հարցերին նուիրուելիք ԽՄԿԿ Կենտկոմի պլէնումի քննարկման առարկայ եւ ԽՄԿԿ Կենտկոմին խնդրում է այս կապակցութեամբ ստեղծել համապատասխան յանձնաժողով»։

Դժուար չէ նկատել, որ գէմիրճեանական քարոզիչների կողմից որպէս խիզախութեան գերագոյն ապացոյց եւ Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ խորը հետաքրքրութեան դրսեւորում շարադրուած այս տողերն, իրականում, Հայաստանի կուսակցապետերի կողմից ճազարային ահով կիսաբերան ներկայացուած եւ ըստ էութեան ամօթալիօրէն տարտամ «պահանջներ» էին։

4) Բացայայտ սպառնալիք հայրենասէր զանգուածներին. «Պլէնումը ժողովրդական երեսփոխանների բոլոր խորհուրդների գործադիր կոմիտէների եւ վարչական մարմինների ղեկավարներին պարտաւորեցրեց անհրաժեշտութեան դէպքում օգտագործել հանրապետութեան տարածքում օրինականութեան ու հասարակական կարգի խստագոյն պահպանումն ապահովելու իրենց լիազօրութիւնները»։

5) Յանձնարարութիւն կուսակցականներին. «Պլէնումը վստահութիւն յայտնեց, որ կուսակցական գործուն կորիզը, բոլոր համայնավարները ամէն ինչ կ'անեն հանրապետութիւնում իրադրութիւնը առողջացնելու, ԽՄԿԿ Կենտկոմի գլխաւոր քարտուղար ընկեր Մ. Գորբաչովի դիմումից բխող խնդիրները անվերապահօրէն կատարելու համար»։

Մարտի 2-ին լոյս էր ընծայւում նաեւ Հայաստանի համայնավար երիտասարդութեան կազմակերպութեան կենտրոնական կոմիտէի չգիտես ե՞րբ տեղի ունեցած պլէնումի «որոշման շարադրանքը», որում հիմնականը «կոմերիտականներին, հանրապետութեան ողջ երիտասարդութեան» ուղղուած կոչն էր՝ «ցուցաբերել քաղաքացիական եւ քաղաքական բարձր հասունութիւն եւ սոցիալիզմի ու հայրենիքի ճակատագրի հանդէպ ողջ պատասխանատուութեամբ է՛լ աւելի ամրապնդել ադրպէյճանցի եւ հայ ժողովուրդների դարաւոր բարեկամութիւնը»։

Երեւանեան կենտկոմը, նաեւ, ըստ որում Սումկայիթի հենց վաղորդայնին, Պաքուի կենտկոմի հետ համատեղ որոշում էր «ընդլայնել երիտասարդութեան երկակողմ շփումները, նրա մօտ ազգամիջեան յարաբերութիւնների կուլտուրա կազմաւորելու նպատակով»։ Եւ ուրեմն բնաւ էլ պատահական չէր, որ հայ կոմերիտական «ակտիւիստները» այնքան էին վարկաբեկուած յաչս հայ երիտասարդութեան, որ մոսկովեան «Կոմսոմոլսկայա Պրաւդա»ի Մարտի 27-ի համարում նրանց պատասխանատու քարտուղարները խոստովանում էին, որ համարեա «ընդյատակային» են դարձել եւ Ազատութեան հրապարակում յայտնըւելիս, ճանաչուելով հայհոյի ենթարկուելու ահից, հեռատեսօրէն թաքցնում են իրենց կրծքանշանները։

Թաթար երիտասարդութեան «ծաղիկը», որի հետ Հայաստանի կոմերիտական «ծաղիկ»ն ուզում էր «երկակողմ շփումներ» հաստատել, այսպէս էր բնութագրւում Երեւանի «Գրական Թերթ»ում, ի պատասխան սումկայիթեան ճիւաղների մոսկովեան դատավարութիւնում թաթար վկայ Աթիլովի՝ «Սումկայիթում ո՞ւր էր կոմերիտմիութիւնը» զարմացական հարցին.

«Երեք օր հայերին կոտորող յէլուզակախմբերի բացարձակ մեծամասնութիւնը կազմել են 18-ից 25 տարեկան կոմերիտականները։ Շատ ուրախ եւ հնարամիտ տղաներ են եղել, խօսք չկայ. դաշնամուր են

նուագել ակերուած մի բնակարանում, որի պատերը ներկուած էին Պետեանի արիւնով, նորահարսին հօր տնից ճամբայ դնելու երգն են երգել, երբ երիտասարդ հայ աղջկան պոկել են արիւնլուայ ծնողների գրկից եւ ծեծելով, չորսը վրայից պոկելով, իջեցրել բակ (հաւաքաբար իրենց անասնական կրքերը բացօդեայ յագեցնելու,- Ռ.Ն.), «դատեր» են կազմակերպել՝ որոշելով, թէ ինչ մահով պէտք է սպանենել հերթական զոհին։ Ու տեսէք, նաեւ, թէ ինչ «կիրթ» տղաներ են եղել. Աւազակների դուռը ջարդելիս ահաւոր հայհոյանք է բարձրանում չքամուսթում, քանի որ Կամօ Աւագեանը մահճակալի մետաղեայ ցանցը դէմ էր տուել դռանը եւ ցանցին էլեկտրականութիւն միացրել։ Եւ ահա ջարդողներից մէկը վրդովւում է. «Տղերք, ամօթ է, ուղղակի մի տուէք, հարեւան բնակարանում միայնակ ադրպէյճանուհի է ապրում, կը լսի...»։

Վերադառնանք, սակայն, Հայաստանի Կենտկոմի Փետրուարի 26-ի պլենումին, որի վերաբերեալ հաղորդագրութիւնից բաւականին ընդարձակ մէջբերումներն, այստեղ, աննպատակ չէին։ Այդ մէջբերումները ցոյց պէտք է տան, նախ, որ Հայաստանի կուսակցապետերը պարզապէս անամէջ բռնատիրական գիջութեամբ էին զբաղուած հայ ժողովրդի համար այնքան ճակատագրական մի պահի, երբ ատրպատականեան թաթար կուսակցապետերն իրենց վերջին հրահանգներն էին տալիս յաջորդ օր ցեղասպանական եղեռնագործութեան ձեռնարկելիք սումկայիթեան ջոկերին։ Այդ մէջբերումները ցոյց պէտք է տան, ապա, որ Հայաստանի կուսակցապետերը ի՞նչ աստիճանի անբարոյական պէտք է եղած լինէին, որպէսզի ինքնապահովագրման համար թխուած իրենց որոշումը հրապարակ հանէին երեք օր անց, երբ սումկայիթեան եղեռնն արդէն հանրայայտ էր, ըստ որում այդ որոշմամբ ոչ միայն սգաւոր հայ ժողովրդին «ջերմօրէն» քարոզէին «ամրապնդել հայ ու ադրպէյճանական ժողովուրդների բարեկամութիւնը», այլեւ սպառնային բողոքի ամէն մի շարժում ճնշել «խստագոյն» միջոցներով։

Եւ մի՞թէ կուսակցապետերի անբարոյութեան, նաեւ հայկականութիւնից ի սպառ դատարկուած լինելուն ապացոյցը չէր այն, որ Հայաստանի կուսակցական-կառավարական կենտրոնական պաշտօնաթերթ «Սովետական Հայաստան»ը Սումկայիթի ցեղասպանութեան յաջորդող օրերին տեղ էր տալիս հաստատապէս թաթարացած մի «հայուհու»՝ պաքուեցի Ռ. Պօղոսովայի հետեւեալ ելոյթին. «Ինձ, ազգութեամբ հայուհուս համար ցաւալի էր իմանալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձութիւնների մասին։ Դա անհասկանալի է»։ Մի՞թէ Սումկայիթի զոհերի անթաղ աճիւնների համար թաթարական յաթաղանից աւելի ցաւոտ չէին «Սովետական Հայաստան»ի էջերում լորձնաշուրթ գովերգը հայ-ադրպէյճանական «բարեկամութեան». «Ազգերի բարեկամութիւնը մեղրի պէս քաղցր է եւ դրանով հպարտանում ենք բոլորս, դա մեր հարստութիւնն է, մեր բոլոր յաջողութիւնների երաշխիքը, մեր ոյժն ու կորովը»։

Բոլոր դէպքերում մի կողմից Հայաստանի կուսակցական-պետական ղեկավարութեան եւ առաջին հերթին կուսակցապետ Դէմիրճեանի ու միւս կողմից հայրենահայութեան միջեւ անդունդի անանցանելիօրէն խորացման գլխաւոր յայտարարն այն էր, որ Սումկայիթի

*եղեռնագործութեան գնահատականի եւ ցեղասպանական այդ արարքի նկատմամբ դիրքորոշման հարցում նրանք տրամագծօրէն հակոտնեայ տեսակէտներ ունէին:*

*Եւ սակայն մի՞թէ անտեղի շռայլաբանութիւն չի լինի անկախ հայեացք, ինքնուրոյն դիրքորոշում եւ սեփական խօսք ենթադրող «տեսակէտ» բառը կապակցել «Հայաստանի դէմոկրատական ղեկավարութիւն» հասկացողութեան: Եւ մի՞թէ սումկայիթեան եղեռնագործութեան նման ծանրակշիռ մի իրադարձութեան վերաբերմամբ «տեսակէտ» դէմոկրատական վերնախաւը կարող էր ունենալ, իսկ սուրբ հոգու հրաշագործ ինչ որ ներշնչանքով ունենալու դէպքում էլ՝ այն բացայայտել:*

*Փորձենք պատասխանել այս հարցին:*

*Սումկայիթի նախճիրի մասին հայ ժողովուրդը պաշտօնապէս իմացաւ Երկուշաբթի, Փետրուարի 29-ի երեկոյեան, Հայաստանի կուսակցապետ Դէմիրճեանի հայկական հեռուստատեսութեամբ ունեցած ելոյթից: Ճիշդ է, դեռ ցերեկը, տարպատականեան թարմ ցեղասպանների նախօրէին ծաւալուել սկսած գազանութիւններից ճողոպրած եւ մի կերպ Երեւան ապաստանած առանձին հայերի միջոցով քաղաքում արդէն որոշ բան իմացուել էր մարդախողխողութեան սկզբնական հանգրուանի՝ «եղբայրութեան ոստանի» գանթէական անցուդարձերի մասին, սակայն պաշտօնական առաջին հաղորդումը Դէմիրճեանի ելոյթի հետեւեալ հատուածն էր.*

*«Այժմ ես ուզում եմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել մեզ տագնապ յարուցող մի հանգամանքի վրայ: Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնների կապակցութեամբ մեզանում ստեղծուած իրադրութիւնը, ինչպէս հաւանաբար արդէն յայտնի է ձեզ, ադրբեջանական բնակչութեան որոշ մասի անհանգստութիւնն է յարուցել: Մի շարք ադրբեջանական ընտանիքներ մեկնել են հանրապետութեան սահմաններից դուրս: Դա հետեւանք է ինչպէս մի շարք շրջաններում տարածուած ամէն տեսակ լուրերի, այնպէս եւ մարդկանց պահանջմունքների, նրանց յուզող հարցերի նկատմամբ անուշադրութեան: Ի հարկէ, հեռացել են ոչ այնքան շատ մարդիկ: Եւ այնուամենայնիւ այդ փաստը չի կարող ցաւագին արձագանգ չունենալ մեր սրտերում, չի կարող անհաղորդ թողնել մեզ: Ձեռնարկուած միջոցների շնորհիւ այդ ընտանիքների մի մասը արդէն վերադառնում է հարազատ օճախները:*

*Սակայն Ղարաբաղի իրադարձութիւնները, բնակչութեան նշուած տեղաշարժը, զանազան լուրերի տարածումը չէին կարող իրենց հերթին չներազդել Ադրբեջանի իրադրութեան վրայ: Մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, բախումներ են եղել: Մասնաւորապէս,* **Փետրուար 28-ին Սումկայիթում, մի խումբ խուլիգանական տարրեր անկարգութիւններ են սարքել: Տեղ են գտել սանձարձակութեան եւ բռնութեան դէպքեր:**

*Ներկայումս այնտեղ իրադրութիւնը վերահսկւում է:* **Միջոցներ են ձեռնարկուած քաղաքում կեանքը բնականոնացնելու, կարգապահութիւնն ու հասարակական կարգը ապահովելու համար: Քննչական մարմինները կատարում են հետաքննութիւն:**

Երեքշաբթի, Մարտի 1-ի առաւօտեան, խորհրդային մամուլում, այդ թւում հայկական թերթերում (Դէմիրճեանի ելոյթի հետ միաժամանակ), լոյս տեսաւ Խորհրդային Միութեան Հեռագրական գործակալութեան (ԹԱՍՍ) հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը.

«Փետրուարի 28-ին Սումկայիթում (Ադրբեջանական ԽՍՀ) մի խումբ խուլիգանական տարրեր անկարգութիւններ են հրահրել։ Տեղ են գտել սպանութեան ու բռնութեան դէպքեր։ Միջոցներ են ձեռնարկուած քաղաքում կեանքը բնականոնացնելու, կարգապահութիւն ու հասարակական կարգը ապահովելու համար։ Քննչական մարմինները հետաքննութիւն են կատարում»։

Առաջին բանը, որ աչքի է զարնում, հետեւեալն է. Սումկայիթեան իրադարձութիւնների վերաբերեալ Հայաստանի Համայնավարների կուսակցապետի հաղորդումը բառը բառին կրկնութիւնն է ԹԱՍՍ-ի հաղորդագրութեան։ Միայն հեքիաթներում է, որ թագաւորները ունենում են սեփական լրաբեր-սուրհանդակներ եւ իրենց ստացած հաղորդումները էլ ազատօրէն ձեւակերպում հարազատ բառ ու բանով։ Իրական կեանքում, այն էլ դեռ ստալինեան-բերիական ժամանակաշրջանի սարսուռները ի սպառ չթօթափած եւ շատ բանով բրեժնեւեան-սուսլովեան ժամանակաշրջանի տագնապներով ապրող խորհրդային իրականութեան մէջ, հեքիաթների այդ տարրը հեքիաթ էլ մնում էր։ Հայաստանի նոյնիսկ այնպիսի մի «թագաւոր», ինչպիսին Դէմիրճեանն էր, հարկադրուած էր երկիւղած ունկնդիր լինել կայսերական մեծ ու մանր լիազօրներին եւ հանդէս գալ նրանց պատրաստի շարադրանքներով, ըստ որում, քանի խօսքը ոչ թէ գնում էր «արքայական» ձեռնհասութեանը անմիջականօրէն վերաբերող ներտեղական, յատկապէս «տնտեսական» (անասնակերի կուտակման, կովերի կթի եւ այլ նմանատիպ) հարցերի մասին, այլ վերաբերում էր ազգամիջեան յարաբերութիւններին առնչուող, ուրեմն քաղաքական ծանրակշիռ իրադարձութեան, ապա նա պարտաւոր էր վերածուել բնագրին ստրուկ ասմունքողի։ Աւելին. եթէ մոռանանք այն, որ Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի ապարատի համապատասխան գրասենեակներում կային, թէկուզ փոքրաթիւ, մայրենի լեզուին պարկեշտ մակարդակով տիրապետողներ, միաժամանակ եթէ աչքի առաջ ունենանք Դէմիրճեանի ելոյթի ծակոտկէն-կարկատանուած հայերէնը («մեզ տագնապահարող»-ի փոխարէն՝ «մեզ տագնապ յարուցող», «անտարբեր թողնել մեզ»-ի փոխարէն՝ «անհաղորդ թողնել մեզ» եւայլն), ապա կարող ենք պնդել, որ Հայաստանի թիւ մէկ՝ առաւել առանձնաշնորհեալ բնակչի ելոյթը շարադրուած է եղել ռուսերէն եւ թարգմանուել է ոչ թէ մշտական-մասնագէտ աշխատակցի, այլ՝ «պատահական» մարդու կողմից։

Կուսակցապետ Դէմիրճեանի՝ Երեւանում իրեն անշուշտ «թագաւոր», իսկ Մոսկուայում թէ ընդհանրապէս Կրեմլի ղեկավարների առաջ իրեն բնականաբար գաղութական երկիւղած աշակերտ զգացող մարդու ողբալի ու ողորմելի վիճակը պէտք է անպայման դաս ու խրատ լինի նրան յաջորդած ու յաջորդին յաջորդելիք բոլոր կուսակցապետերին եւ յուշի նրանց Մոսկուայի ամէն մի խօսք որպէս աստուածա-

չնչական պատգամ խոնարհաբար ընդունելուն աղէտալի հետեւանքները։ Դեռ կը տեսնենք, որ Խորհրդային Միութեան գլխաւոր դատախազի օգնականը Օգոստոսի 20-ին իսկ չէր կարմրելու յայտարարելով, որ սումկայիթեան նախճիրն իր գագաթնակէտին է հասել իրր Փետրուարի 28-ին, իսկ այնուհետեւ սկսել է «կատուցումը»։ Թեդն Դէմիրճեանն ի՞նչ իմանար, որ Փետրուարի 29-ին, երբ իրեն իր հեռուստատեսային ելոյթն էին թելադրում Մոսկուայից եւ իրեն կարգադրում ի լուր աշխարհի յայտարարել, որ Սումկայիթում «բռնութեան դէպքերն» արդէն վերջ են գտել եւ «իրադրութիւնը վերահսկւում է», այդ նոյն օրն ու նոյն ժամին էր փաստօրէն թափ առնում եւ իր գագաթնակէտին հասնում հայասպանութիւնը։ Դէմիրճեանը կարող է մխիթարուել միայն այն բանով, որ հայկական հեռուստատեսութեան հաղորդումները Սումկայիթ չէին հասնում։ Սակայն եթէ հեռուստատեսային ելոյթը հաղորդուել է միաժամանակ նաեւ ձայնասփիւռով, ապա բացառուած չէ, որ սումկայիթաբնակ որոշ հայրենակարօտ հայեր մորթոտուած լինեն Հայաստանի «Թագաւորի» հանգստացուցիչ ճառի քնարեր հնչիւններին ունկնդիր...

Անհրաժեշտ է տեղն ու տեղը ասել նաեւ հետեւեալը. կարելի էր արդահատելի համարել «կլասնոստ» – բացախօսութիւնը պաշտօնական քաղաքականութիւն յայտարարած ԹԱՍՍ-ի հաղորդագրութեան՝ երեւութապէս սակաւարար թափանցիկութեան բնոյթ կրող, այլ իրականում նողկալի իրադարձութիւնների պատկերը հնարաւորին չափ «բարեզարդելու» միտող այդ գեղծարարութիւնը, արդահատելի համարել ու գէն չպրտել՝ եթէ չլինէին մի քանի իրողութիւններ։

Առաջին իրողութիւնը, տուեալ դէպքում ոչ-անպայման փոքր չարիքը, հետեւեալն է. հայ ժողովրդի «առաջամարտիկ» յայտարարուող համայնավարների, ուրեմն եւ ամբողջ Խորհրդային Հայաստանի փաստական ղեկավարը, հարկադրուած լինելով իւրացնել եւ անգիր անելով որպէս սեփական խօսք արտասանել ԹԱՍՍ-ի հաղորդագրութիւնը, գիտութեամբ թէ անգիտութեամբ տէ փաէթօ հայ ժողովրդի տեսակէտի էր վերածում հակահայկական եղեռնագործութիւնը որպէս անդէմ ու անհասցէ «մի խումբ խուլիգանական տարրերի անկարգութիւններ» բնութագրելու անամօթ նենգութիւնը։

Բոլոր դէպքերում առաւել մեծ չարիքը, աւելի շուտ՝ Դէմիրճեանի չարագործութիւնը հետեւեալ իրողութիւնն էր. նա իր ելոյթում որդեգրում եւ որպէս հայ ժողովրդի տեսակէտ ընդհանրացնում էր տարպատականեան թաթարների եւ նրանց մոսկովեան սիրահար-հովանաւորների այն չարամիտ գեղծարարութիւնը, որը թէպէտ ԹԱՍՍ-ի խնդրոյ առարկայ առաջին հաղորդագրութեան մէջ դեռ աներեւոյթ էր, սակայն հետագայ շաբաթներին սումկայիթեան եղեռնագործութիւնը հնարաւորին չափ չքմեղելու փորձերում Բաքուի թէ Մոսկուայի «բացատրական» բոլոր հաղորդումների գլխաւոր լծակն էր դառնալու. այն, որ Սումկայիթի իրադարձութիւններն իրր սոսկ բնական հետեւանք էին, իսկ ամէն ինչի գլխաւոր պատճառը Լեռնային Ղարաբաղի, ա՛յո եւ ամբողջ Խորհրդային Հայաստանի հայութեան շարժումն էր։ «Մոսկովեան Լուրեր» բազմալեզու շաբաթաթերթի Ապրիլի 17-ի ֆրանսիական հրատարակութիւնն, օրինակ, շեշտելու էր. «Լեռնային Ղարա-

բաղի ազգայնականութիւնն այստեղ, Սումկայիթում, պայթիւն առաջ բերեց։ «Փրաւտան» Յունիսի 2-ին, Պաքուի իր թաթար հայատեաց թղթակից Զաուր Կասիմզէյտովի գրչով, նոյն յանկերգն էր կրկնելու. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում սկսած իրադարձութիւնները ծանր արձագանգ տուեցին Սումկայիթում»։ Թաթարական հանրապետութեան նախագահը ինքը եւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում Սումկայիթը չկարարար անուանելու էր «Ղարաբաղի իրադարձութիւնների ողբերգական արձագանգ»։

Ոչ թէ միայն հայրենահայութեան գլխաւոր ղեկավարը լինել յաւակնող որպէս մարդու, այլեւ թէկուզ որպէս շարքային հայի՝ մեր պատմութիւնը պէտք չէ ների Դեմիրճեանի հենց այդ արարքը նախ եւ առաջ, շրջանցելով նրա միւս բաղում, Հայաստանի նախորդ համարեա բոլոր կուսակցապետերի համար ընդհանրական եւ օրինաչափ մեղքերը, անկախ այն բանից, թէ ինչքան ծանր էին դրանք հայ ժողովրդի համար եւ ինչքան ծանր հետեւանքներ էլ ունեցան։ Եւ ոչ մի դէպքում մեղմացուցիչ տարր պէտք չէ որոնել այն անկասկածելի իրողութեան մէջ, որ Դեմիրճեանի արարքը՝ նրա այն պնդումը, որ իբր Լեռնային Ղարաբաղի «իրադարձութիւնները», դրանց «կապակցութեամբ» Հայաստանում «ստեղծուած իրադրութիւնը», այդ «իրադրութեան», նաեւ իրենց մարդկային թէ ազգային «պահանջմունքների» ու «յուզող հարցերի» նկատմամբ հայրենահայութեան ոտնձգութիւններից զժգոհ եւ «ամէն տեսակ լուրերից» ահաբեկ հայաստանաբնակ թաթարների արտահոսքն են ատրպատականեան անատամ գառներին վերածել գիշատիչ գայլերի (այդ բոլորը, իբր, Դեմիրճեանի բառերով ասած, «չէին կարող իրենց հերթին չներազդել Ատրպէյճանի իրադրութեան վրայ»), ներշնչուած-թելադրուած կամ պարտադրուած էր հակահայկական մեծաթմբուկ աղմըկարարութեան պատրաստուող արտահայաստանեան-խորհրդային քաղաքական-հասարակական-մտաւորական շրջանների կողմից։

Հակահայկական այդ աղմկարարութիւնը փաստօրէն սկսուել էր, թէկուզ մանրաթմբուկ, դեռ մինչեւ Սումկայիթը։ ԹԱՍՍ-ը մինչ այդ, ձայնափիւռով եւ հեռուստատեսութեամբ տարածուած մի հաղորդագրութեամբ, անշուշտ արձագանգելով Կենտրոնական կոմիտէի քարտուղարութեան գնահատականին, Երեւանում տեղի ունեցած խաղաղ ցոյցերն ու հաւաքները որակել էր «մի խումբ ծայրայեղականների» կողմից կազմակերպուած «անկարգութիւններ»։ Եւ քանի որ խորհրդային ամէն մի ռատիոլսողի ու հեռուստադիտողի համար, Միութեան որ ծագում էլ լինի, Երեւանը հայութիւնն էր խորհրդանշում, ապա եւ «մի խումբ ծայրայեղականները» հաւանականօրէն «հայ ծայրայեղականներ» էին։ Սա՝ մէկ։ Եւ ապա, քանի որ «Լեռնային Ղարաբաղ» տեղանուան մշտապէս փակագծերի մէջ ուղեկցել է «Ատրպէյճանական ԽՍՀ» ճշգրտում-տեղայնացումը, իսկ երեւանեան «հայ ծայրայեղականների» «անկարգութիւններն» էլ կապակցուել են ղարաբաղեան իրադարձութիւններին, ապա ԹԱՍՍ-ի Մարտի 1-ի հաղորդագրութեան փակագծերով նոյնպէս ատրպէյճանական ճշգրտում-տեղայնացում ստացող Սումկայիթն իր «անկարգութիւններով»՝ ջախջախիչ մեծամասնութեամբ աշխարհագրագիտութեան դոկտոր կամ թեկնածու չեղող խորհրդային քաղաքացիների

մոտապատկերում հեշտութեամբ կարող էր կապակցուել ղարաբաղեան իրադարձութիւններին, հետեւաբար եւ սումկայիթեան «մի խումբ խուլիգանական տարրերն» էլ նոյնացուել երեւանեան «մի խումբ ծայրայեղականներին» հետ, այլ խօսքով դուրս գալ··· ազգութեամբ հայ։

Ի դէպ, կողմնակի ապացոյցներ էլ ունենք յօգուտ այն վարկածի, որ ոչ թէ սոսկ ԹԱՍՍ-ի կենտրոնական խմբագրութիւնում լինի թէ ատրպատականեան-թաթարական բաժանմունքում, այլեւ նրանց տեղեկութիւն հայթայթող մոսկովեան թէ ատրպատականեան պատասխանատու շրջաններում, հեռու չեն եղել անորոշ ու անկերպարան սադրատացութիւններով սումկայիթեան նախճիրը որպէս ազգամիջեան բախում մատուցելու, նոյնիսկ այդ բախման գործում մեղքի հիմնական բաժինը հայ «տաքարիւն երիտասարդութեան» վրայ բարդելու նենգութիւնից։

Առաջին ապացոյցը Հայաստանի համայնավարների կուսակցապետի հենց խնդրոյ առարկայ ելոյթի այն հատուածն է, որ «մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն բախումներ են եղել», բախումներ, որոնց «մասնաւորապէս» բառով շաղկապուած են սումկայիթեան իրադարձութիւնները։ Չենք բացառում, որ Դեմիրճեանի թաքնասացութեան մէջ «բախումների» ենթապատճենը Աղդամից դէպի Ասկերան թաթարական-ջարդարարական կասեցուած գինարշաւը եղած լինի։ Բայց չէ՞ որ ԹԱՍՍ-ից կամ աւելի բարձր ոլորտներից պարտադրուած այդ թաքնասացութեան ենթապատճենը տուեալ պահին հասկանալի էր միայն փոքրաթիւ լաւատեղեակ հայերի, իսկ Դեմիրճեանի հեռուստատեսային ելոյթն անմիջականօրէն մատչելի էր ոչ միայն Հայաստանի բնակիչ քիչ թէ շատ հայախօս թաթարների, այլեւ՝ հաւանաբար Արաքսի միւս ափի տեսագրելու պատրաստ թուրքական սարքերին, դեռ չխօսելով այն մասին, որ ռուսալեզու մամուլի միջոցով յաջորդ առաւօտ տարածուելու էր Խորհրդային Միութեամբ մէկ։

ԹԱՍՍ-ի հաղորդագրութիւնից եւ Դեմիրճեանի ելոյթից տասնմէկ օր անց, Մարտի 12-ին, մինչ այդ սեփական ամէն մի խօսք «մոռացած» թաթարական-կենտրոնական «Բաքինսկի Ռաբոչի» («Բաքուի Բանուոր») ռուսալեզու թերթում լոյս տեսաւ «Միասնական Խորհրդային Ընտանիքում» վերնագրուած մի բաց նամակ, որի «հեղինակը» սումկայիթցի հայ բանուոր Ն. Համբարձումեանն էր։ Մարգարէ լինելու կարիք չկար իմանալու համար, որ Փետրուարի վերջի դժոխային երեք-չորս օրերին այդ հայի բախտը բերել էր եւ նա չէր ընկել «ազգի բարեկամների» ձեռը։ Չէ՞ որ հակառակ դէպքում նա կը հարկադրուէր Բաքուի մամուլին նամակ յղել անդէնականից, եթէ, անշուշտ, ջախջախուած եւ ապա հրկիզուած գանգով հնարաւոր լինէր որեւէ բան յօրինել թէկուզ հայր Աբրահամի գրկում բազմած։ Ղարաբաղի «բաժանման», այլ խօսքով Հայաստանին վերամիաւորման հարցադրումը «անիմաստ խօսակցութիւն» յայտարարելով եւ պահանջելով, որ հայաստանեան ախորժակների դէմ Ղարաբաղը «պէտք է պահպանել ղարաբաղցիների», առաջին հերթին ատրպատականեան թաթարների ու նոր միայն հայերի ու «միւս ազգերի ներկայացուցիչների համար», Համբարձումեանը գրում էր. «Նրանք, ովքեր յօրինելով Ղարաբաղի հարցը, ճշմարիտ ճանապարհից շեղել են տաքարիւն երիտասարդութիւնը, ազգի բարեկամներ չեն,

այլ՝ մարզիկ, որոնք ջուր են լցնում թշնամու ջրաղացին։

Մենք հեռու ենք այն մտքից, որ սումգայիթցի հայ բանուորը, ինչպէս եւ ուրիշ հայեր Շուշիից լինի թէ Պաքուից ու թաթարներից վերահսկուող այլ բնակավայրերից, հայկական ազգային արդարացի պահանջի նկատմամբ թշնամական տրամադրութիւններից դրդուած են մամուլում հանդէս եկել նմանօրինակ գրութիւններով։ Առանց մեծ ճիգերի մենք մեզանից վանում ենք նաեւ այն միտքը, որ խնդրոյ առարկայ հայերը ապազգայնացած, ինչպէս Հայաստանում սիրում են ասել՝ «շուռ տուած» հայեր են, թէպէտ քաջ գիտենք, որ փոքրաթիւ չեն ապազգայնացած արեւելահայերի առնուազն երկու շերտեր (շրջանցելով երրորդ՝ յանուն ազդեցիկ ու շահութաբեր կուսակցական-պետական ասպարէզի այլասերուածների խաւին) - ուղղափառ կուսակցական համոզմունքներից թէ միջազգայնականութեան վերաբերեալ պարզունակ պատկերացումներից ազգային ամէն մի, նոյնիսկ արդարացի հարցադրում «խորհրդային հայրենասիրութեան» դէմընթաց «նեղ-ազգայնական» դատապարտելի հակում համարողներ, ապա եւ՝ թաթարական թէ այլ համանման մի միջավայրում բազմամեայ բնակութեան հետեւանքով իրենց հայեցի դիմագիծը համարեա ի սպառ կորցրած խորհրդային սփիւռքահայեր, որոնց պարագան արեւելահայութեան ամենաթարախոտ վէրքերից մէկն է։

Արդ, եթէ առնուազն այդ երկու շերտերի առկայութիւնն ընդունում ենք, ապա ինչո՞վ ենք բացատրում թաթարական թէ ռուսական մամուլում մոլոր ու դատապարտելի դիրքերից հանդէս եկած հայերին ապազգայնացածների այդ շերտերին միախառնելուց մեր ձեռնպահութիւնը։ Նախ՝ այն փաստով, որ ինչպէս ղարաբաղեան իրադարձութիւնները, այնպէս էլ ու մանաւանդ Սումգայիթի նախճիրը բառիս բուն իմաստով ցնցեցին այդ երկու շերտերին էլ, նրանց շրջանում առաջ բերեցին ազգային ինքնագիտակցութեան ընդոստ զարթնում։ Ապա եւ՝ յատկապէս այն փաստով, որ ի տարբերութիւն Հայաստանի կուսակցական եւ պետական ղեկավարների, որոնք չողոմ ստորաքարշութեամբ խոնարհումներ արեցին հայաստանաբնակ թաթարների նոյնիսկ ծայրայեղական դիրքորոշումների ու դաւադրական գործունէութեան առաջ եւ աններելի ներողամտութիւն ցուցաբերեցին նրանց զզուելի, անգամ ոճրային արարքների նկատմամբ, Պաքուի ղեկավարները, օգտուելով Սումգայիթի սահմռկեցուցիչ-ահաբեկիչ տպաւորութիւնից եւ տեղերում թաթար ջոլիրի սպառնալի խրոխտանքից բխող մտավախութիւններից, բացայայտ թէ քողարկուած ճնշմամբ, մինչեւ իսկ շանթաժով, իրենց հանրապետութիւնում ապրող հայերի զգալի մասին «դիրքորոշեցին» համահայկական ազգային շարժման դէմ, առնուազն հարկադրեցին թաթարական միջավայրում կազմուած հանրագրութիւնների ներքոյ ստորագրել։ Եւ Սումգայիթում գոյութիւնը քարշ տալու դատապարտուած Համբարձումեանները, մանաւանդ եղեռնագործութեանը յաջորդող տասնօրեակում (երբ Երեւանի կուսակցական-պետական ղեկավարները, ընթացք տալով Մոսկուայի թէ Պաքուի պահանջկոտ «խնդրանքին», ամէն ինչ անում էին, նոյնիսկ նողկալի ճնշման դիմում, որպէսզի ջարդերից մազապուրծ եւ բառիս բուն իմաստով կիսամերկ

Հայաստան ապաստանած հայերին հարկադրէին վերադառնալու Սումկայիթ), հաւանականօրէն պիտի ընդառաջէին թաթար խորհրդա-տուների թելադրանքներին, որպէսզի փոխարէնը ապահովուէին նրանց ողորմած հովանաւորութեամբ։ Եւ հենց այդ պատճառով է, որ Համբարձումեանի «Բաց Նամակ»ի ակնարկը՝ արձանագրուած «անկարգութիւնների» ակունքի մօտ հայ «տաքարիւն երիտասարդու-թեան» ներկայութեան վերաբերեալ, մենք համարում ենք սումկայիթեան եղեռնագործութեան հարցում թաթար չարագործներին հնարաւորին չափ չքմեղելու եւ հայերի մեղաւորութեան գծով թիւրիմացութիւն ստեղծելու Բաքուի եռանդագին աշխատանքի բաղկացուցիչ մի մասը։

Ի միջի այլոց մեզ քաջ է յայտնի, որ արցախահայութեան ազգային զարթումը խեղաթիւրելու նպատակով Բաքուի գաղափարա-կենտրոնը յաճախ է դիմել հայերի անունից թխուած կեղծ նամակների օգնութեանը եւս։ Թաթարների հանրապետութեան նախագահ Թաթլիեւը, օրինակ, Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում առանց կարմրելու պնդում էր, որ իր դիւանատունն իբր ամէն օր հազարաւոր նամակներ է ստանում հայ քաղաքացիներից, որոնք դատապարտում են Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը։ Մի՞թէ թաթարական պետականութեան գլխին բազմեցուած մարդն այնքան ոչխարամիտ էր, որ գլխի չէր ընկնում մի պարզ բանում. եթէ «հազարաւորի» նուազագոյն քանակը երկու հազար ենթադրենք եւ այդ թիւն էլ բազմապատկենք Փետրուարի 20-ից մինչեւ Յուլիսի 18 ձգուող օրերի շուրջ 150 թուաքանակով, ապա դուրս կը գայ 300 հազար նամակների մի զանգուած, հետեւաբար, իւրաքանչիւր նամակի ետին 5–6 հոգուց բաղկացած մի ընտանիք տեսնելու դէպքում, կ'ունենանք մէկուկէսից մինչեւ շուրջ երկու միլիոն··· թաթարասէր հայ քաղաքացի։

Թաթլիեւի թուրքաոճ կեղծիքը ինքնըստինքեան առաջ է բերում այսպիսի հարցադրում. թաթարական պետութեան ղեկավարը կա՛մ այնքան էր հաւատացած Կրեմլի կամարների ներքոյ իր աստղի զօրու-թեանը, որ շրջապատի բարեացակամութիւնն անկասկածելի էր համարում նոյնիսկ իր ոչխարամտային յօրինուածքի նկատմամբ, կամ էլ պարզապէս օրը ցերեկով Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստի մասնակից-ներին էր ոչխարամիտ համարում ու ենթադրում, որ նրանք մոռացած կը լինեն իրենց կենտրոնական պաշտօնաթերթ «Իզվեստիա»ի Ապրիլի 6-ի համարում լրագրող Գ. Գուսեյնովի հետեւեալ մեղադրականը թաթար կեղծարար քաղաքական-մտաւորական գործիչների հասցէին. «Յարմար չէ խօսել գործընկերների (թաթար մտաւորականների,– Ե.Ն.) աշխատանքի մասին, բայց, իմ կարծիքով, Լեռնային Ղարաբաղի Մար-տունու շրջանի Գիշիի միջնակարգ դպրոցի տնօրէն Վ. Յակոբեանը իրաւացիօրէն է վրդովւում, որ Բաքուի հանրապետական ռուսալեզու «Կոմունիստ» թերթում իր ստորագրութեամբ (այն էլ բոլոր ղարաբաղ-ցիների անունից) հրապարակուած է մի գրութիւն, որը նրան նախապէս ընթերցել էին հեռախօսով եւ որից նա, անմիջապէս եւ միանշանակ, հրաժարուել էր։ Դժուար է չհաւատալ հայրենական պատերազմի վաս-տակաշատ մասնակից Ս. Գէորգեանի զգացումը, որը զարմանքով իմացել էր, որ իր ստորագրութիւնը երեւացել է Ազերինֆորմի միջոցով

տարածուած մի յօդուածի տակ»։

Թաթարական կեղծագրերի մասին խօսելիս եւ յատկապէս սումկայիթեան եղեռնագործութեան իսկական պատկերի խեղաթիւրման փորձերին, առաւել եւս Փետրուարի վերջին օրերի ցեղասպանական նախճիրը արցախահայերի «դրդռութեանց» ու «ոճիրներին» հակազդեցութիւն-հատուցում ներկայացնելու նենգամիտ ջանքերին անդրադառնալիս, չի կարելի աչքաթող անել Աղդամ-Ասկերանի արիւնալի անցուդարձերի խեղաթիւրումը ոչ-այնքան թաթարական միջավայրում, որքան մոսկովեան-կենտրոնական մամուլի էջերում, մանաւանդ որ հենց այդ անցուդարձերն են բանալի տալիս բացելու ադրբէյճանական ոճրային կանխածրագրեալ դաւի մի շատ կարեւոր ներքնածալք։

## Բ.

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմանին կից-կպած, մարզ մտնող գլխաւոր ճանապարհի սկզբնակէտին որպէս պահակակէտ յղացուած եւ թաթար ցեղերի առաւել զաւանաբարոյ տարրերով բնակեցուած Աղդամի շրջանի համայնավար կազմակերպութեան առաջին քարտուղար Ս. Մուրթուզաեւը 1988 թ. Մարտի 28-ին մոսկովեան «Թրուդ» («Աշխատանք») թերթի միջոցով յայտարարում էր. «Ստեփանակերտում իրադարձութիւնների սկզբի հետ (այլ խօսքով Փետրուարի 20-ին,- Ե.Ն.) մեզ մօտ, քաղաքի գլխաւոր հրապարակում, քաղաքային կոմիտէի շէնքի առաջ սկսեցին հաւաքուել գերագրգռուած խմբեր, իսկ մենք չկարողացանք զգօնութիւնը մեր ձեռքում պահել։ Օրերից մի օր (Փետրուարի 22-ին,- Ե.Ն.) յարձակողականօրէն տրամադրուած ամբոխը, ազգայնական տարրերից հրահրուած, շարժուեց Ինքնավար Մարզի ուղղութեամբ, իր իմացած ձեւի (ուրիշ խօսքով թուրքավայել ջարդարարութեամբ,- Ե.Ն.) «կարգուկանոն» հաստատելու։ Միայն իշխանութիւնների՝ եւ բնակչութեան միջամտութիւնը թոյլ տուեց խուսափել աւելի ծանր հետեւանքներից։ Յամենայն դէպս բախումը երկու երիտասարդների կեանքը խլեց եւ երկու կողմերից վիրաւորներ եղան»։

Աղդամի կուսակցապետ Մուրթուզաեւը մէկ օր անց, Մարտի 27-ին, նոյնպէս մոսկովեան «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա» («Սոցիալիստական Ճարտարարուեստ») թերթի միջոցով էլ հաստատում էր. «Անհրաժեշտ էր մարդկանց հարցերին պատասխանել։ (Փետրուարի 21-ին) հրապարակում հաւաքուածների առաջ ելոյթ ունեցող... մօտ եօթանասուն հոգիներ այդ օր խօսեցին մեր ժողովուրդների բարեկամութեան մասին, կոչ արեցին խելամիտ լինել։ Սրտից բխող խօսքերը հասան մարդկանց սրտերին։ Թւում էր, թէ սրուածութիւնն սկսում է վերանալ։ Եւ յանկարծ յաջորդ առաւօտ (Փետրուարի 22-ին,- Ե.Ն.) իմանում ենք, որ երիտասարդների մի խումբ, ընկնելով ազգայնական տարրերի ազդեցութեան տակ, քարերով եւ մահակներով զինուած շարժուել է դէպի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ասկերանի շրջանը։ Բախման ընթացքում Աղդամից երկու երիտասարդներ սպաննուեցին, մի քանիսը վիրաւորուեցին»։

Եթէ Մուրթուզաեւը, որ իրադարձութիւնները թէկուզ եւ

ներկայացնում էր ոչ այնպէս, ինչպէս իրականում եղել էին, այլ՝ այնպէս, ինչպէս որ թաթարական գաղափարակենտրոնում մշակել էին, այստեղ կանգ առած լինէր, կարելի էր առանձնապէս չվրդովուել: Վերջ ի վերջոյ առ այստեղ եղած-չեղածը ատրպատականեան գրոհայիններին ազգամ-ակերանեան «արիւնայեղութիւնից» մեղադրելու եւ թաթարներին, ժողովուրդով ու ղեկավարութեամբ, ինքնագլուխ ու խաղաղասէր ներկայացնելու պարզունակ մի փորձ էր, միայն: Վրդովեցուցիչը չարունակութիւնն էր, որը չէր կարող գլուխ գալ առանց կենտրոնական ռուսալեզու մամուլի թեւարկութեան: Որովհետեւ չարունակութիւնը Ասկերանի արցախահայերի «ոճրագործութեան» շեշտադրումն էր, ադրբեջանական ղեկավար գործիչների՝ ժողովրդին իրենց խաղաղասիրական եռանդից վարակելու ջանքերի գովքը, թաթարական միջավայրում ասպետական բարքերի առկայութեան թմբկահարումը, վերջապէս՝ սումգայիթեան եղեռնագործներին պարզապէս առարկայական պատճառներով բորբոքուած ու մոլորուած գազանների վերածելու ճիգը: Եւ նորից, կարելի էր չվրդովուել, եթէ այդ չարունակութիւնն էլ շրջափակուած մնար Բաքուի պարբերական մամուլի սիւնակներով: Վրդովեցուցիչն այն էր, որ ռուսալեզու կենտրոնական մամուլը, որ իր կենտրոնականութեամբ տեսականօրէն բոլորինը պէտք է լինէր, թաթարների հետ նաեւ հայերինը, չէզոք ու հաւասարակշռեալ դիրքորոշման փոխարէն հանդէս էր բերում եպերելի թաթարամոլութիւն, սիրայօժար իւրացնելով ու տարածելով ադրբեջանական հակահայկական հեքիաթը, ըստ որում մինչեւ իսկ ուշադրութիւնից բաց թողնելով իրեն մատուցուած նիւթերի աղաղակող հակասականութիւնը, ինչպէս որ դեռ ցոյց ենք տալու: Եւ սակայն մոսկովեան թերթերի առաջատար գլխակների համար կարեւորն ու որոշիչը թաթարական հեքիաթին ընդառաջելու համար ստացած պարգեւագումարն էր, նախ, ապա՝ արեան մէջ առկայ թէ ոսկով ներարկուած իրենց թաթարամոլութեան յագուրդ տալը, վերջապէս՝ մոսկովեան աշխարհի թաթարապաշտ հզօրների կարգադրութիւններին անսալը:

Ի դէպ, արժի յատուկ լուսարձակի տակ առնել թաթարապաշտ բարձրաստիճանաւորների կարգադրութիւնների վերաբերեալ վարկածը: Իրականում այն մեզ համար ոչ այնքան վարկած է, որքան՝ փաստերի եւ տրամաբանութեան վրայ յենուող համոզմունք: Եւ ահա, թէ ինչո՛ւ...

...Մարտի 26-ին, երբ աւարտուելու է կորպաչովեան «Դիմում»ին ի պատասխան հայ ժողովրդի յայտարարած «միամսեայ դադարի» ժամկէտը, Երեւանը «մեռեալ քաղաք» է դառնալու: Որովհետեւ այնտեղ, առանց հիմքի, ուղղակի սադրական-գրգռիչ ձեւով ու նպատակներով, պատժական զօրամասեր են մտցուած: Ոչ թէ սոսկ հնարաւոր, այլ ուղղակի հաւանական են միջադէպերը: Ուրեմն Մարտի 26-ին, յոռեգոյն դէպքում 27-ին, Մոսկուայում ապահովաբար բազում նիւթեր կը ստացուեն հայ «ծայրայեղականների» անկարգութիւնների, գուցէ թէ նոյնիսկ զոհերի հետ բախումների վերաբերեալ: Հետեւաբար անհրաժեշտ է Մարտի 26–27-ի համար կանխապատրաստ ունենալ ադրբեջանական «ասպետութեան» շուրջ յօրինուած նիւթեր, որոնց ետնապատկերի վրայ առաւել ցցուն կը դառնան հայոց «յելուզակային»

վարքն ու բարքը։ Ատրպէյճանական նիւթերը, ահա, առատութեան ինչ որ աղբիւրից յորդել են դէպի մոսկովեան տարբեր թերթերի Մարտի 26-ի եւ 27-ի համարների էջերը (պատկերացնո՞ւմ էք, իբր պատահմամբ եւ ոչ թէ յատուկ յորդոր-պատուէրով, տարբեր թերթեր միեւնոյն օրը միմեանցից «բեխապար» գրում են աւելի քան մէկ ամսուայ վաղեմութիւն ունեցող եւ փաստորէն միութենական ընթերցողին այնքան էլ չյուզող դէպքերի մասին...)։ Թաթար խաժամուժի հասցէին լորձնաշուրթն գեղումներով յօղուածները յորդել են, իսկ հակահայկական նիւթերը, ի մեծ դժբախտութիւն թաթարապաշտների, այնպէս էլ չեն ստացուել։ Եւ գիտէ՞ք ինչու. պարզապէս հայ ժողովրդի՝ իր քաղաքակրթական մակարդակից թելադրուող ինքնազսպութեան ու ողջամտութեան, նաեւ ու ոչ պակաս չափով՝ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի արթնամտութեան եւ քաղաքացիական բարձր գիտակցութեան, հայ ժողովրդին հերթական սադրանքից զերծելու վճռական գործողութիւնների պատճառով։

Եւ ահա, որպէս այդ բոլորի հետեւանք, մոսկովեան քանի՛ թերթեր, արհմիութենական-կենտրոնական «Թրուդ»ից մինչեւ համամիութենական-կոմերիտական «Կոմսոմոլսկայա», մնացել են սուտ ատրպէյճանական նիւթերով։ Մնացել են կիսավարտիքով, աւելի ճիշտը՝ կիսամերկ...։

Վերադառնանք, սակայն, առատութեան աղբիւրից յորդող թաթարասիրական թխուածքներին։ Եւ ասենք, որ բոլոր դէպքերում յիշատակուած եւ այլ թերթերի, նաեւ ԹԱՍՍ-ի, կենտրոնական հեռուստատեսութեան թէ լրատուական միւս միջոցների օգնութեամբ ստեղծուել էր «ասկերանեան արիւնալի միջադէպի» եւ «ծայրայեղական ազգայնական» արցախահայերի «ոճրագործութեան» վերաբերեալ մի առասպել։ Մնում էր այն կատարել. դարձնել՝ թաթարական խաժամուժի միջավայրում տապետական բարքերի եւ սովորոյթների առկայութեան վերաբերեալ լրացուցիչ մանրամասներով։ Այդ աշխատանքին էր լծուել, ահա, «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա»ն, շարունակելով.

«(Ասկերանի) ողբերգութեան լուրը բոցկտաղ տարածուեց հարեւան շրջաններում։ Տասնեակ հազարաւոր գերագրգռուած բնակիչներ շարժուեցին Ասկերանի ուղղութեամբ։ ...Դա կուսակցական, խորհրդային աշխատողների համար փորձութեան ժամ եղաւ։ Այդտեղ երեւացին մարդկանց նկարագիրը, կամքի եւ համոզուածութեան ուժը։ Մի ահեղ ամբոխին կարողացաւ կանգնեցնել հանրապետութեան համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի քարտուղար Հ. Հասանովը։ Այդ տարիքն առած մարդը մի քանի քիլոմեթր վազեց, մինչեւ որ հասաւ աղդամցիններին։ Երբ վազեց-հասաւ, զարմացաւ. ո՛չ յոգնածութիւն, ոչ էլ շնչասպառութիւն զգաց եւ ձայնն էլ հաստատ էր. «Եղբայրներ»...Բոլորի յիշողութեան մէջ է նաեւ հանրապետական երեսփոխան, սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինի անուան կոլտնտեսութեան նախագահ Հուրաման Աբբասովան։ Նա բազմահազարանոց ամբոխի առաջ լաչակը գետին գցեց եւ ասաց. «Եթէ ուզում էք մեր մայրերի եւ հայրերի աւանդոյթները խախտել, կարող էք ոտնատակ տալ նրանց պատիւը՝ ոտնատակ տալով այս լաչակը»։ Ոչ ոք չհամար-

ժակուց խախտել ադրբեջանական սովորոյթը։ Եւ այն լռութիւնը, որով մարդիկ կանգնած մնացին պատու կնոջ առաջ, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ իրադարձութիւնների բեկումը։ Հնարաւոր բարդացումները կանխատեսելով, Բաքուից Ազգամ եկան կուսակցութեան տասնեակ աշխատողներ, հեղինակաւոր ուրիշ մարդիկ։ Բանաստեղծներ Ֆազիլ Մեհտին եւ Բախտիար Վահապզադէն, ակադեմիկոսներ Միթհատ Ապպասովը, Ճեմիլ Կուլիեւը, Յուսուֆ Մամէտովը, գիտնականներ Սուլէյման Ալիեարովը, Թամալ Ապտուլլաեւը, հանրապետութեան կանանց խորհրդի նախագահ Ազիզա Ճաֆարզադէն... Հանրապետութեան անուանի մարդկանց հանգիստ, ծանրակշիռ խօսքն իր դերը խաղաց»։

Թաթարասիրական հեքիաթն ունի եւ ուրիշ տարբերակներ, ըստ որում բոլորը, հրաշալիօրէն համակարգուած, Մարտի 26–27-ի հրատարակութեամբ։ Ահա, օրինակ, «Կոմսոմոլսքայա Փրաւտա»ի պատումը.

«Ազգամում յայտնուեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից ադրբեջանական ընտանիքներ։ Այստեղ նրանց յայտնուելը իրավիճակը սրեց։ Սկսեցին հաւաքները։ Ադրբեջանական ԽՍՀ Ազգամի շրջան։ Փետրուարի 22։ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մէջ մտնող Ասկերանի շրջանի սահմանի վրայ բախման ընթացքում սպաննուեցին Ազգամի բնակիչ երկու երիտասարդներ։ Ինչպէ՞ս։ Ինչո՞ւ։ Ո՞վ է մեղաւոր։ Ինչո՞ւ ազգամցի երիտասարդների մի խումբ ընդհանրապէս գնաց։ Մի՞թէ իրօք Ստեփանակերտի ցոյցը դիտելու հետաքրքրութիւնից դրդուած, թէ՝ ուրիշ, նուազ անմեղ մտադրութիւններով։ Որտեղի՞ց յայտնուեց միւս խումբը Ասկերանի մօտ։ Այս հարցերին կը պատասխանի հետաքննութիւնը։ Սակայն այն ժամանակ, Փետրուարի 22-ին, հազարաւոր բորբոքուած մարդիկ դուրս եկան Ազգամից եւ շարժուեցին Ասկերանի վրայ։ Թէ ինչո՞վ կ'աւարտուէր ինքնադատաստանը՝ դժուար է կռահել։ Ճանապարհի երկայնքին տեղադրուած ոստիկանական պահակակէտերը ճնշուեցին, կուսակցական-կոմերիտական-խորհրդային աշխատողների պահակակէտերը եւս։ Մինչեւ միջշրջանային սահմանը բառացիօրէն մի քանի րոպէի քայլքի ճանապարհ էր մնացել։ 91–34 համարանիշի փոքրիկ ինքնաշարժը, ճանապարհեզրից ընթանալով, առաջ անցաւ եւ կանգ առաւ ճանապարհի կենտրոնում։ Շարասիւնը շարունակեց շարժուել եւ կից հասաւ մեքենային, երբ վերջինիս վրայ բարձրացաւ ցածրահասակ մի կին։ Նրան ճանաչեցին. Լենինի անուան կոլտնտեսութեան նախագահ Հուրաման Ապպասովա, սոցիալիստական աշխատանքի հերոս։ Այն, ինչ յետոյ տեղի ունեցաւ, տառապելի է նման։ Հուրաման խանումը գլխից քանդեց ու վեր պարզեց պայծառագոյն, ոսկեթել ասեղնագործուած լաչակը։ Հին սովորոյթով կանացի լաչակը՝ մայրական պատուի խորհրդանշանը, տղամարդկանց առաջ նետուելով կանխարգելում էր արիւնայեղութիւնը։ Հուրաման խանումը հիմա բառացի չի յիշում, թէ այն ժամանակ ի՞նչ ասաց։ Յիշում են ուրիշներ։ Մենք գրառեցինք շատերի ասածով. «Սպաննեցէք ինձ,– գոռաց նա, ոտների տակ տրորեցէք լաչակը եւ միայն այն ատեն գնացէք ու կռուեցէք։ Եթէ կարող էք տրորել ու անցնել՝ գնացէք»։ Ամբոխը ետ դարձաւ։ Պատմում են, որ տղամարդիկ արտասւում էին։ Ինչ որ երիտասարդ փորձեց

կողքովն անցնել եւ նա մի ապտակ հասցրեց նրան։ Յետոյ, շրջանային կոմիտէի նիստերի դահլիճում, Հուրաման խանումը ուշաթափուեց...։ Իսկ միւս ճանապարհի վրայ, որ մեքենաներով Ստեփանակերտ էր տանում, դուրս եկաւ ու կանգնեց Ազգամի կուսակցական շրջանային կոմիտէի քարտուղար Մուրթուզաեւը։ Բաքւում առասպել էր շրջում, որ նա մեքենաների առաջ ծունկի է եկել եւ վերջին ակնթարթին ինքնաշարժները կանգ են առել։ Մուրթուզաեւը առասպելը փարատեց։ Ծունր չի դրել։ Ոչինչ չի խնդրել։ Դուրս է եկել։ Կանգնել է։ Կանգ են առել»։

Այս ամբողջ, Հուրաման խանումին ռուս բանաստեղծի ձօնած գեղանով ուղեկցուած հեքիաթասացութեան կարեւոր նպատակներից մէկն էլ հեռուեւայն էր. ոչ միայն ի վնաս «չարամիտ» հայութեան բարեզարդել թաթար խաժամուժի դէմքը, այլեւ ու մանաւանդ թաքցնել Ազգամ-Ասկերանից մինչեւ Սումգայիթ ձգուող թաթարական ջարդերի մի դաւադրութեան գոյութիւնը։ Այդ դաւադրութեան էութիւնն ու մանրամասնութիւնները պարզ դարձնելու համար անհրաժեշտ է այստեղ ծանրանալ մի քանի «մանրուքների» վրայ։

Առաջինը մի բազմահանգոյց «մանրուք» է։

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհրդի Փետրուարի 20-ի որոշման վաղորդայնին Ազգամում հաւաքուած «գերագրգռուած խմբերը», համաձայն «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա»-ի յատուկ թղթակիցներ Օ. Կուլիշի եւ Դ. Մելիքովի վկայութեան, եկել էին Բաքուից, Կիրովաբադից, Լենքորանից եւ այլ քաղաքներից։ Նրանց համախմբումն, անշուշտ, հնարաւոր էր ե՛ւ ժամանակի, ե՛ւ տարածութեան տեսակէտից, մանաւանդ որ թաթար գերագոյն կուսակցապետ Բաղիրովը նախօրէին ցուցադրաբար եւ սպառնալից հեռացել էր մարզային խորհրդի Ստեփանակերտի պատմական նիստից եւ հենց Ազգամից կապուելով Մոսկուայի հետ, աղաւաղուած ներկայացրել անցուդարձերը, արցախահայութեան օրինական ներկայացուցիչներին բնութագրելով որպէս «ծայրայեղական ազգայնականների», իսկ նրանց որոշումը՝ որպէս «ապօրինի»։ Եւ սակայն թէ՛ ժամանակի, թէ՛ տարածութեան տեսակէտից անհասկանալի է մնում թղթակիցներից վկայուած այն իրողութիւնը, որ Փետրուարի 20-ի գիշերը Ազգամում «Թիւրիմացութեամբ» ձերբակալուել էր շուրջ մէկ տասնամեակ առաջ Լեռնային Ղարաբաղից Սիբիրի հեռաւոր Խաբարովսք քաղաքը տեղափոխուած մի թաթար, որ «իր յայտնուելը բացատրեց Ստեփանակերտի իրադարձութիւնների կապակցութեամբ իր անհանգստութեամբ»։ Այդ իրողութիւնը կարող է նոյնպէս հասկանալի դառնալ այն դէպքում միայն, եթէ վարկածենք, որ դեռ մի շաբաթ առաջ, Փետրուարի 12–13-ին Ստեփանակերտում կազմակերպուած հայկական թէկուզ դեռ ոչ-զանգուածային պահանջատիրական ցոյցերից ահաբեկուած, թաթարական գաղափարակենտրոնը միայն իրեն ու մէկ էլ սատանային յայտնի ճանապարհներով ահազանգ էր հնչեցրել եւ զօրաշարժ յայտարարել ոչ թէ միայն իր հանրապետութիւնում, այլեւ՝ Խորհրդային Միութեամբ մէկ։

Այդ զօրաշարժի շրջանակներում որոշակի, նոյնիսկ հանգուցային տեղ ու դեր վերապահուած էր Խորհրդային Հայաստանի թաթարներին։

Ընթերցողը պետք է լինի Դեմիրճյանի անհարկի ու սրտաճմլիկ ափսոսանքը հայաստանաբնակ թաթարների որոշ շերտերի արտագաղթի հարցում։ Այդ արտագաղթը հետևանք չէր այն «անհանգստության», որ իբր առաջացել էր ղարաբաղյան «իրադարձությունների կապակցությամբ մեզանում ստեղծված իրադրությունից», քանի որ և՛ Դեմիրճյանն ինքը, և՛ թաթարներն իրենք՝ առաջինը ու լավագույնս իմանում էին, որ հայ ժողովուրդն իր պահանջատիրական երթում իրեն ատելավառ խոտորումներ թույլ չի տա։ Ինչ վերաբերում է այդ «անհանգստությունը» հայաստանաբնակ թաթարների «պահանջմունքների, նրանց հուզող հարցերի նկատմամբ անուշադրությամբ» բացատրելու փորձերին, ապա դրանք ևս նենգություն էին։ Եվ ոչ միայն այն պատճառով, որ Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության մեջ կարևոր, որոշ մարզերում նույնիսկ առանձնաշնորհյալ դիրքեր գրավող թաթարներն արտագաղթելու դեպքում անպայման տուժելու էին՝ իրենց «բնօրրան» Ադրբեջանի տարածքում չկարողանալով նվաճել մոտավորապես համաստիճան բարեկեցիկ կյանք ու դիրք, այլև այն պատճառով, որ հայկական միջավայրին սերտորեն շաղկապված և մեծամասնությամբ հայերենին էլ առավել կամ նվազ տիրապետող երբեմնի վաչկատունները հոգևոր-մշակութային իրենց պահանջմունքների հողի վրա ևս լիովին բավարարված էին։

Այդ հարցում միանգամընդմիշտ պարզություն մտցնելու համար և Ադրբեջանական ԽՍՀ-ում հայության անտանելի դրության ու Հայկական ԽՍՀ-ում թաթարների երանելի վիճակի միմյանց հակապատկերը լինելը հաստատելու նպատակով, այստեղ ընդարձակ մեջբերելու ենք Հայաստանի լուսավորության (կրթական) նախարարի տեղակալ, ազգությամբ թաթար Իսրաֆիլ Մամեդովի Երևանի ռուսալեզու «Կոմունիստ» թերթի 1988 թվի մարտի 24-ի համարում լույս ընծայած վկայություն-հոդվածը.

«Ցանկանում եմ նշել այն մեծ ուշադրությունը, որ Հայկական ԽՍՀ-ում ընծայվում է ադրբեջանական բնակչության մշակութային և հոգևոր պահանջմունքների մշտական բավարարմանը։ 1925–1988 թվականներին ադրբեջաներեն լեզվով լույս են տեսել շուրջ 500 անուն գիրք ու գրքույկ։ Միայն վերջին տարիներին հանրապետությունում թարգմանվել և հայերեն հրատարակվել են ադրբեջանական հեղինակների 10 գրքեր՝ 60 հազար ընդհանուր տպաքանակով։

Ամասիայի, Վարդենիսի, Ղափանի, Կրասնոսելսկի, Մեղրիի և այլ շրջանների ակումբների և մշակութային տների գրադարանները հետևողականորեն լրացվում են գեղարվեստական, քաղաքական և այլ բնույթի ադրբեջաներեն գրքերով։ 1986 թվին այդ հիմնարկներին են ուղարկվել 261 անուն գրքեր (5683 օրինակ), 1987 թվին և 1988 թվի հունվար-փետրվար ամիսներին՝ 429 անուն գրքեր (25113 օրինակ)։

Ակումբներին և մշակույթի տներին կից ստեղծված են ազգագրական համույթներ, ազգային կիրառական արվեստների խմբակներ, գեղարվեստական դաստիարակության կենտրոններ։ Ներկայումս հանրապետությունում այդպիսի հավաքականությունների թիվը 91 է։

Հայաստանում մեծ ուշադրություն է ընծայվում ազգային

դպրոցներին։ Որպէս ասածի հաստատում բերենք թիւեր. Հանրապետութիւնում գործում են 148 ատրպէյճանալեզու եւ 37 խառն դպրոցներ, որտեղ գիտելիք են ստանում 34735 ատրպէյճանցի երեխաներ։ Եւ նրանց թիւն անշեղօրէն աճում է. 1976–1987 թուերին ատրպէյճանական 17 ութամեայ դպրոցներ վերակազմակերպուել են միջնակարգի։ Ատրպէյճանալեզու դպրոցներում աշխատում են 4246 դասատուներ, որոնցից 3590-ը ունեն բարձրագոյն կրթութիւն, 7-ը գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան ունեն։ Վերջին տաս տարիներին շահագործման են յանձնուել 39 դպրոցական շէնքեր։ Ծրագրուած է ընթացիկ հնգամեակում կառուցել եւս 39 դպրոց՝ 12512 աշակերտական տեղով, ըստ որում դրանցից 7-ը արդէն շահագործման են յանձնուել։

Բնականաբար դժուարութիւններ ունենք դպրոցների նիւթատեխնիկական զինման հարցում։ Առ այժմ բաւարար չէ ատրպէյճանական դպրոցները լրացնող մասնագէտների նախապատրաստման գործը։ Եւ թէկուզ վկայուած մասնագէտների թիւն աճել է (եթէ 1975–1976 ուսումնական տարում բարձրագոյն կրթութիւն ունէին ուսուցիչների 68,3 տոկոսը, ապա 1986 թուին այդ տոկոսն արդէն 84,3 էր) մինչեւ հիմա զգացւում է ատրպէյճանական դպրոցների համար մանկավարժ մասնագէտների անբաւարարութիւնը յատկապէս հանրապետութեան գիւղական շրջաններում։ Եւ ամենամեծ հարցը՝ ռուսերէն եւ հայերէն լեզուների դասատուների եւ նախադպրոցական հիմնարկների դաստիարակների պակասն է։

Հայաստանի ատրպէյճանական դպրոցները ունեն իրենց առանձնայատուկ խնդիրները։ Այնպէս է ստացուել, որ այդ դպրոցներում չեն ուսումնասիրել հայոց լեզուն, Հայաստանի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, գոյութիւն չի ունեցել մինչեւ իսկ համապատասխան ուսումնական գրականութիւն՝ դասագիրք։ Բնականաբար լեզուի հարցում անթոյլատրելի են ամէն տեսակի առանձնաշնորհները կամ սահմանափակումները, առաւել եւս՝ հարկադրանքը։ Սակայն ես մտածում եմ, որ դրա հետ մէկտեղ անհրաժեշտ է ամէն կերպ քաջալերել տեղական լեզուի ուսումնասիրումը միւս ազգութիւնների ներկայացուցիչների կողմից, որոնք ապրում են այս կամ այն հողատարածքում։ Այդ սկզբունքներով առաջնորդուելով եւ ընթացք տալով ծնողների բազմաթիւ ցանկութիւններին, մենք պատրաստեցինք հայոց լեզուի դասագրքեր ատրպէյճանական դպրոցների 5–10-րդ դասարանների համար եւ յուսով ենք, որ առաջիկայ տարուան՝ 1989 թուի Սեպտեմբերի 1-ից հայոց լեզուի ուսուցումը կ'ընդգրկուի ատրպէյճաներէն լեզուով ուսուցմամբ դպրոցների ուսումնական ծրագրերում։ Ես ինքս ներկայումս աշխատում եմ Հայաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան դասագրքերը ատրպէյճաներէնի թարգմանելու գործի վրայ։ Դա շատ կարեւոր եմ համարում թէկուզ այն պատճառով, որ չի կարելի հողի նկատմամբ սէր յարուցել՝ չիմանալով նրա անցեալը, պատմական ամբողջ ճանապարհը»։

Եւ ահա Հայկական ԽՍՀ հողատարածքում ապրող տնտեսապէս բարեկեցիկ եւ ազգային-մշակութային հողի վրայ բացառիկ առանձնաշնորհեալ վիճակում գտնուող թաթարները. Փետրուարի երկրորդ տաս-

նօրեակին, նշանակում է՝ Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշման նախօրէին, անսալով Պաքուի գաղափարակիցներունի սադրիչ ձայնին, նախանձելի համախմբուածութեամբ ստանձնեցին այն դերը, որը հակահայկական «խաղում» իրենց վերապահուած էր: Ադրպէյճանի ղեկավարների կողմից ուղարկուած լիազօր-պատուիրակների, այդ թւում հոգեւոր բազմատասնեակ ընդյատակեայ կենտրոններից գործուղուած մթին քարոզիչ-մոլլաների խլրդային, այլ ներգործուն աշխատանքի որպէս հետեւանք, մի քանի հազար թաթարներ սկսեցին հանդերձ ընտանեօք «փախչել» Հայաստանից եւ զանգուածայնօրէն քոչել դէպի Ադրպէյճանական ԽՍՀ, պատրուակելով անգոյ ինչ որ խտրականութիւնից իրենց դժգոհանքը:

«Կոմսոմոլսքայա Պրաւտա»ի թաթարների նկատմամբ ակներեւօրէն կողմնակալ աշխատակիցը այդ օրերի Պաքուի իրադրութեան մասին Մարտի 27-ին գրել է. «Առաջին հաւաքներում դրուեցին հանրապետութեան ղեկավարութեանն ուղղուած հարցումներ: Միտքն այն էր, որ ոչ մի տեղեկատուութիւն չկայ: Պատասխանէք՝ ի՞նչ է ձեր դիրքը Լեռնային Ղարաբաղի հարցում: Ինչո՞ւ էք լռում: Տրամաբանական է. խօսքը գնում է հանրապետութեան գերիշխանութեան մասին: Փոքր ինչ անց տրամադրութիւնները փոխուեցին: Զրոյցներ: Իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից հասնող զրոյցների ետեւից՝ Հայաստանից փախստական-գաղթականներ: Անակնկալօրէն, երեխաների եւ կապուած հակերի հետ յայտնուած,– դա հարկ է նշել,– նրանք իրադրութիւնը լարուած դարձրեցին: Ժամանածներին փորձեցին համոզել, որ վերադառնան, տեղաւորեցին ձմռանը դատարկ սանատորիաներում եւ պրոֆիլակտորիաներում, հասկանալով, որ ստեղծուած իրադրութեան մէջ նրանք կարող են իրադարձութիւնների քաթալիզաթէօր դառնալ»:

Փաստօրէն այդ պահից սկսեց գործնականացուել թուրքական արիւնալի մի մեքենայութիւն, քանի որ Հայաստանից արտագաղթողները, ե՛ւ ըստ ոսկու փայլով իրենց շլացնող բարձրաստիճան պաշտօնեաների պատուէրի, ե՛ւ ի հաճոյս ցեղայնական կրքերից կուրացած այն խաժամուժի, որի միջավայրն էին տեղափոխւում, պիտի սկսէին յօրինել ու պատմել հայկական միջավայրում իրենց ենթարկուած տնտեսական եւ ազգային-մշակութային «ճնշումների», Լեռնային Ղարաբաղի եւ «ադրպէյճանական» այլ հողատարածքների նկատմամբ ախորժակներ սրած հայ «ծայրայեղական ազգայնականների»ի կողմից իրենց դէմ շղթայազերծուած «հալածանքների», նոյնիսկ ի գործ դրուած «բռնութիւնների» հեքիաթը: Մտորումների տեղիք տալու նպատակով է հենց, որ այստեղ արձանագրելու ենք Ամասիայի համայնավարների շրջանային կոմիտէի առաջին քարտուղար, ազգութեամբ թաթար Ն. Հասանովի հետեւեալ յայտարարութիւնը Հայաստանի Կենտրոնական կոմիտէի լիագումար ժողովում. «Անկեղծօրէն ուզում եմ նշել, որ ղարաբաղեան իրադարձութիւնների օրերին հանրապետութիւնում չեղաւ որեւէ սպառնալիք ադրպէյճանցի ազգաբնակչութեան նկատմամբ, որը երբեմն փորձում էին ներկայացնել... Ցաւալին այն է, որ մեկնեցին հենց համայնավարները, ղեկավար աշխատողները (տնտեսական ճակատի,– Ե.Ն.), նաեւ՝ կուսակցական ղեկավարները»:

Ի դէպ, խորհրդահայ գրող Դեւրիկեանը իր յօդուածներից մէկում իրաւամբ այսպիսի հարցադրում էր կատարում. «Եւ ինչո՞ւ այսօր նաեւ չպարզել, թէ կա՞ր, արդեօք, որեւէ պատճառ, որ Հայաստանից փախչէին ատրպէյճանցիները եւ Պաքւում էլ նրանց տեղաւորման եւ օգնութեան յանձնախմբեր ստեղծէին։ Չէ՞ որ նրանք (խօսքն անշուշտ ընդհանրապէս թաթարների մասին է, արտագաղթածների Հայաստանում մնացած ցեղակիցների.– Ե.Ն.) փետրուարեան չիկացած օրերին եւ Սումկայիթից էլ յետոյ շա՛տ անվրդով ապրում էին մեզ մօտ եւ շուկաներում առեւտուր անում ու իրենց հանդէպ շատ լաւ վերաբերմունքի մասին ամէն օր պատմում «Լրաբեր» ծրագրով՝ երկու ժողովուրդների բարեկամութիւնն իջեցնելով մինչեւ կանաչին յաջողութեամբ վաճառելու մակարդակը։ Ուրեմն ումի՞ց էին փախչում, թէ՞ հրահանգ կար, եւ նրանք ճշտօրէն այդ էին կատարում։ Ի հարկէ՝ վերջինը, եւ կատարեցին բաւական յաջող»։

«Բաւական յաջող», այլ՝ զառնաղէտ հետեւանքներով, որովհետեւ Պաքուի թաթարական գաղափարակիցներոնը, անշուշտ որ տարիներ չարունակ որոճացուած իր ծրագրերը կենսագործելով, Հայաստանից իր խակ հրահրած արտահոսքն ուղղում էր գլխաւորաբար Շուշի, Աղդամ եւ Սումկայիթ, այն կէտերը, որոնք վաղուց էին կանխանշուած որպէս հակահայկական պայթիւնի օճախներ։ Եւ մի՞թէ ըստ ինքեան խոստովանութեան համարժէք չէ Սումկայիթի համայնավարների քաղաքային կոմիտէի երկրորդ քարտուղար, եղեռնագործութիւնից յետոյ «պատժուած» Բայրամովայի հետեւեալ յայտարարութիւնը. «Անհրաժեշտ ուշադրութիւն չդարձրեցինք Ղափան հայկական քաղաքից եկած ատրպէյճանցի գաղթականներին. հենց նրանք էլ պայթիւնի պատճառ դարձան»։

Միայն Բայրամովան չէր, որ յանկերգում էր այդպիսի չքմեղանք։ Եղեռնագործութեան մէջ դրսեկ տարրերի որոշիչ դերի հեքիաթը փաստօրէն կարգախօսի էր վերածուած։ Ահա, թէ ի՛նչ էր գրում «Կոմսոմոլսքայա Փրաւտա»ի աշխատակիցը Մարտի 27-ին. «–Մենք մարտնչեցինք քրէական յանցագործների կազմակերպեալ խմբերի դէմ,– այսպիսի տեսակէտային բացատրութիւն մի անգամ չէ, որ առաջ քաշուեց Սումկայիթի նախկին ղեկավարութեան կողմից։ Դա հաւանաբար թոյլ տուեց օձիքը պրծացնել պատահածից. տեսէ՛ք, այդ բոլորը դրսից եկածների ձեռքի գործն էր։ Այո, եղան աւազակներ, ամէն ինչից զատելով եղաւ ջարդերի նախնական պատրաստութիւն։ Սակայն այդ հարցերին վստահութեամբ կը պատասխանեն միայն հետաքննութիւնն ու դատարանը։ Դա առ այժմ ենթադրութիւն է։ Ճշգրիտ կարելի է մէկ բան ասել. անկարգութիւններին, խոշտանգումներին, թալանին մասնակցեցին նաեւ տեղի բնակիչները»։

«Կոմսոմոլսքայա Փրաւտա»ն յաղթականի խրոխտանքով աւելացնում էր, որ Ատրպէյճանի համայնավար երիտասարդութեան լենինեան միութեան կենտկոմի առաջին քարտուղար Սահիբ Ալեքպերովը «վճռականօրէն բաժանում է այս կարծիքը»։ Իսկ ինչո՞ւ չբաժանէր, երբ մոսկովեան թերթը, իբր թէ թաթարական հեքիաթին հակադրուելով, այն էլ աւելի էր ամրապնդում. ծանրագոյն յանցագործութիւնները, այդ

թւում յատկապէս սպանութիւնները, կանխածրագրել եւ գործադրել են դրսից, այլ խօսքով Հայաստանից եկած աւազակները, իսկ յարաբերաբար «թեթեւ» յանցագործութիւններին՝ «անկարգութիւններին, խոշտանգումներին ու թալանին» եկուոր այդ տարրերի հետ «մասնակցել են նաեւ տեղի բնակիչները»։

Բայրամովան իր չցմեզանքում անամօթաբար ստում էր, անշուշտ։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ Սումգայիթում իրենց ձեռները հայկական արեան մէջ թաթախած բորենիների շարքում, գոնէ մեր ունեցած տուեալներով, Հայաստանից «փախած» թաթարներ կային ոչ թէ Ղափանից, այլ՝ Գուգարքից։ Կարեւորն այդ չէ, սակայն։ Այլ նաեւ այն, որ «փախստականներն» իրենց սադրամէտ քարոզչութիւնը կատարում էին տեղական ղեկավարների թողտուութեամբ, նշանակում է՝ նաեւ պատուէրով։ Ահա եւ այն, որ գլխաւոր սադրիչները հենց տեղացիների թւից հաւաքագրուածներն էին։ Թաթար վկաներ Թէյմուրովայի, Իլիասովի, Ապասովայի եւ Ամիլովի կողմից մոսկովեան դատարանին ներկայացուած ցուցմունքների հիման վրա կարելի է կազմել այն կոչը, որ «Քառասունմէկ-Ա թաղամասի» ջարդարարների ղեկավար, բնիկ սումգայիթցի Ահմէտ Ահմէտովը բարձրախօսով ուղղում էր իր վոհմակին. «Մուսուլմաններ, ցոյց տուէք հայերի բնակարանները։ Մենք եկել ենք հայերին սպանելու։ Մա՛հ հայերին, հայերն այստեղ չեն ապրելու։ Դուք չգիտէք, թէ նրանք ի՞նչ են անում մեր եղբայրների եւ քոյրերի հետ Ղարաբաղում։ Եղբայրներ, մեր եղբայրներին ու քոյրերին սպանում են Ղարաբաղում, ձեզ էլ են սպանելու։ Այն, ինչ մենք ենք անում դատարկ բան է։ Կեցցէ Ադրբէյճանը»։

Տուեալ պահի ելեկտրականացած մթնոլորտի, Մոսկուայի թաթարասէրների օրհնութեամբ եւ աջակցութեամբ Բաքուի գաղափարակիցներոնի դաւադրութեան ընթացքի եւ հայկական հակազդեցութեան եղանակի մասին պատկերացում տալու համար թարգմանաբար այստեղ ամբողջութեամբ տալու ենք Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի փիլիսոփայութեան եւ իրաւունքի հիմնարկի աշխատակից գիտնականների ընդհանուր ժողովում 1988 թուի Մարտի 11-ին ընդունուած մի «Դիմում գիտնականներին, ստեղծագործական աշխատողներին եւ լրագրողներին»։ Անհրաժեշտ ենք համարում միայն յիշեցնել, որ թէպէտ Ազատութեան հրապարակի բազմամարդ հաւաքներում Փետրուարի 23-24-ին արդէն հրապարակայնօրէն ստեղծուել եւ համաժողովրդական բաց (ձեռամբարձ) քուէարկութեամբ հաւանութեան արժանացած գործում էր Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէն, սակայն նրա կողքին ու զուգահեռ, որպէս նրա հզօր աջակից ու անբաժանելի բաղադրամաս, գործում էին նաեւ ակադեմիական մտքի կենտրոնների՝ Մատենադարանի, Արուեստագիտութեան հիմնարկի, Գրականութեան հիմնարկի, Փիլիսոփայութեան եւ Իրաւունքի հիմնարկի ու այլոց, նաեւ բարձրագոյն կրթական հաստատութիւնների, ստեղծագործական մի շարք միութիւնների «Ղարաբաղեան բջիջները»։ Տուեալ հիմնարկների եւ կազմակերպութիւնների աշխատողների կամ անդամների զգալի մասին, առաջին հերթին պաշտօնների եւ բարձր աստիճանների կաշկանդումներից զերծ

անպական երիտասարդներին ու նրանց հետ կուսակցական միջավայրում ազգայնօրէն չայլասերուած երէցներին համախմբող այդ «րջիկները», որոնց ամէնուր ու միշտ չէ, որ հաշտ աչքով էին դիտում կամ չէին ճնշում-հալածում իրենց ղեկավարութեան (անօրէնութեան, կուսակցական կոմիտէների եւ այլ «լիազօրների») կողմից, հսկայական դեր խաղացին ոչ միայն ամենօրեայ թռուցիկներով ու կոչերով հայ ժողովրդին ճիշտ կողմնորոշելու-դիրքորոշելու տեսակէտից, այլեւ, ռուսերէն լեզուով շարադրուած եւ Խորհրդային Միութեան չորս ծագերն ուղարկուող դիմումներով, բացատրագրերով ու նոյնիսկ մեքենագիր-լուսատիպ գրքոյկներով, միութենական հասարակական կարծիքը հնարաւոր չափով լուսաբանելու տեսակէտից։

Փիլիսոփայութեան եւ Իրաւունքի հիմնարկի գիտնականները, ահա, Մարտի 11-ի իրենց ռուսերէն եւ խորհրդային մտքի ու գրչի բոլոր մշակներին ուղղուած «Դիմումի» մէջ ասում էին.

«Ստեղծուած իրադրութեան մէջ ամէն մի ողջամիտ մարդու պարտքն է սթափութիւն եւ ոգու արիութիւն պահպանել, իսկ դա նշանակում է՝ հանգցնել իր մէջ աւերիչ յուզումների եւ ենթակայական կիրքերի բոցը, տեղ ազատելով բուն իսկ փաստերին, ինչպէս որ դրանք կան։ Թո՛ղ խօսեն ուրեմն հենց փաստերն իրենք։

Առաջին. Երեւանում տեղի ունեցան բազմօրեայ զանգուածային ցոյցեր, որոնց մասնակցեցին շուրջ մէկ միլիոն բնակիչներ հայոց մայրաքաղաքի եւ հանրապետութեան միւս քաղաքների ու բնակավայրերի։ Ցոյցերին առիթ տուեց Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի որոշումը՝ մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիաւորելու վերաբերեալ։ Ցոյցերն անցան բացախօսութեան եւ ժողովրդավարականացման ոգով։ Իրաւապահպան մարմինները ցնցուած էին զարմանքից, որ քաղաքի փողոցներում ժողովրդի աննախադէպ ութնօրեայ կուտակումների պայմաններում չարձանագրուեց անկարգութեան նուազագոյն իսկ դէպք, ինչը ըստ ինքեան զարմացրեց ոչ միայն տեղական իշխանութիւններին, այլեւ եւրոպական երկրներում ցոյցերի բոլոր տեսակները տեսած զբօսաշրջիկների առանձին խմբերի։

Երկրորդ. Ցոյցերի խաղաղ եւ ամբասիրօրէն զուսպ բնոյթը առաջին փորձութեան ենթարկուեց այն բանից յետոյ, երբ ԹԱՍՍ-ը հաղորդեց այն մասին, որ Երեւանում մի խումբ ծայրայեղականներ կազմակերպել են փողոցային անկարգութիւններ։ Զարմանք է մնում, թէ պատասխանատու աշխատողներից ո՞ւմ մտքով անցաւ խաղալ կրակի հետ, քանի որ զանգուածների համարեա միլիոնանոց թափօրն ի՞նչ կարելի է անուանել, եթէ ոչ՝ հնարաւոր հեղեղ։ Բոլոր դէպքերում բանականութիւնն ու ինքնազսպութիւնը յաղթանակ տարան, «մի խումբ ծայրայեղականներ» յորջորջուած ժողովուրդը չենթարկուեց այդ սադրալիր գրգռութեան, հաւատալով բարձրաստիճան անձնաւորութիւնների այն բացատրութիւններին, որ ԹԱՍՍ-ի հաղորդագրութեան մէջ թոյլ են տրուած «խմբագրական անճշտութիւններ»։

Երրորդ. Ցոյցերը շարունակուեցին։ Հետաքրքրական է, որ դրանց հենց սկզբից հանրապետութեան ղեկավարութիւնն ընկաւ ուժասպառ յուսալքութեան կամ մի տեսակ մահաքունի մէջ, որում էլ

չարունակում է մնալ առ այսօր։ Դրան հակառակ իրեն խիստ գործունեայ դրսեւորեց հարեւան ատրպէյճանական հանրապետութեան ղեկավարութիւնը, տեղական մամուլի եւ հեռուստատեսութեան միջոցով լուսանցքներ տեղալով «հայ ծայրայեղականների» նոյն այդ խմբի հասցէին։ Հայկական մամուլն ու հեռուստատեսութիւնը լռում էին։

Չորրորդ. Հայկական ԽՍՀ-ի հողատարածքում ապրող ատրպէյճանցիները, անսալով իրենց պաքուեցի ղեկավարների ձայնին եւ նախանձելի համախմբուածութեամբ, մտան խաղի մէջ։ Սկսեց ընտանիքների զանգուածային արտահոսք դէպի Ատրպէյճան՝ իբր թէ խտրականութիւններից դժգոհ։ Հիւսուել սկսեց արիւնալի մի մեքենայութիւն, որը դեռ կարելի էր կանխել եւ կանխարգելել։ Դրա փոխարէն, հանրապետութեան ղեկավարութիւնը շարունակեց մնալ քնի մէջ, իսկ կենտրոնական մամուլն ու հեռուստատեսութիւնը սահմանափակուեցին ճահճացման ժամանակաշրջանի լաւագոյն աւանդոյթներով բովանդակազուրկ ակնարկներով, որոնք, ի դէպ, ինչպէս պարզուեց, այնքան էլ բովանդակազուրկ չէին, մի բան, որի հաստատումն եղան մոտալուտ քստմնելի իրադարձութիւնները։

Հինգերորդ. Կենտրոնական մամուլի եւ հեռուստատեսութեան իրաւականօրէն պատասխանատու, այլ փաստականօրէն անպատասխանատու աշխատողների կամքով հարցը տեղափոխուեց այլ հողի վրայ եւ աւելի յաճախ հարկադրուեցինք լսել ժողովուրդների բարեկամութեան եւ միջազգայնականութեան մասին խրատական ընդհանուր խօսքեր։ Սակայն փաստը մնում է փաստ, որ երեւանեան ցոյցերի բոլոր ութ օրերի ընթացքում ժողովուրդների բարեկամութեան սկզբունքը ոչ իսկ մէկ անգամ կասկածի ներքոյ չդրուեց ո՛չ խօսքով, ոչ էլ գործով։ Խօսքը գնում էր պատմական արդարութիւնը վերականգնելու մասին, արդարութիւն, որի ստալինականութեան տարիներին խախտուելու մէջ ատրպէյճանական ժողովուրդը (մենք կը նախընտրէինք ասել՝ ատրպատականեան թաթարների խաժամուժը,- Ե.Ն.) որեւէ (գուցէ ուղղակի՞,- Ե.Ն.) պատասխանատուութիւն չի կրում, եւ այդ հարցը ժողովուրդների բարեկամութեան վերաբերեալ ակնարկներով փոխարինելը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ երկու բարեկամ, դա շեշտում ենք՝ երկու բարեկամ (ի՞նչ բարեկամ, պարզապէս ակամայ հարեւան,- Ե.Ն.) ժողովուրդներին արհեստականօրէն հունից հանելու լրջագոյն փորձ։

Վեցերորդ. Դժուար է կանխատեսել, թէ այդ բոլորը ինչո՞վ կարող էր վերջանալ նոյն ինքն Երեւանում, եթէ չլինէր Մ.Ս. Գորբաչովի դիմումը երկու ժողովուրդներին՝ բանականութեան ձայնին անսալու կոչով։ Հայ ժողովուրդն անսաց այդ ձայնին եւ ցոյցերին վերջ տուեց այն հաստատ համոզմունքով, որ բանականութիւնը յաղթանակ կը տանի նաեւ Ղարաբաղեան հարցի լուծման ընթացքում։

Եօթներորդ. Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ցոյցերի դադարեցման ի պատասխան՝ յաջորդեց Ատրպէյճանում հայերի արիւնալի ջարդը։ Այնտեղ այդպէս ընկալուեց Մ.Ս. Գորբաչովի բանականութեան ձայնին անսալու կոչը։ Բանականութիւնը տեղիք տուեց դիւական մեքենայութեան, քանի որ Հայաստանից իբր թէ փախած ատրպէյճանական ընտանիքները, խորհրդային իշխանութեան եօթանա-

սուն տարիների ընթացքում չլսուած ցեղային արիւնայեղութիւնից յետոյ, ինքնակամօրէն, կարծես թէ ոչինչ էլ պատահած չլինէր, սկսեցին վերադառնալ իրենց երկրորդ «Հայրենիքը», որտեղ նրանց – իսկ դա ծաղր չէ, այլ պետութեան փաստ – ընդունում են համարեա խնդութեամբ եւ ողողում անվերջ հոգատարութեամբ. այսպիսին էր հանրապետութեան ղեկավարութեան լեթարգիական մահացունից լուսնոտաբար զարթնումը:

Ութերորդ. կոտորածը պատահական չէր: Հետաքննութիւնը դեռ աշխատելու է նրա կազմակերպական նրբին թելերը բացայայտելու համար: Սակայն մինչեւ հետաքննութիւնն էլ բացարձակապէս ակնբախ ի յայտ է գալիս մի շարք փաստերի շղթայակցուածութիւնը: Այսպէս, ԹԱՍՍ-ը խօսում է հայ ծայրայեղականների մասին: Այդ նոյնն է յայտարարում Ադրբէջանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարը: Այնուհետեւ Խորհրդային Միութեան գլխաւոր դատախազի տեղակալը Բաքուի հեռուստատեսութեամբ իր ելոյթում ադրբէջանական ժողովրդին հաղորդում է «դառը ճշմարտութիւնը», այն, որ Լեռնային Ղարաբաղում անկարգութիւնների ընթացքում սպաննուել են երկու... ադրբէջանցիներ, չբացատրելով, թէ ի՞նչ պատճառով եւ ո՞ւմ ձեռքով են սպաննուել (եւս ամբողջ եօթ ամիս խորհրդային դատախազութիւնից բացի ոչ ոք չէր իմանալու, որ թաթարներն իրենք են սպաննել իրենց ցեղակիցներին, բայց այդ մասին՝ քիչ յետոյ,– Ե.Ն.): Ամէն ինչ ընթացաւ կարծես թէ սցենարով. սկզբում գառներին ծայրայեղականներ յօշոտեցին, ապա զրոյց տարածեցին, որ գառների ծայրայեղականութեան զոհ են գնացել երկու գայլեր: Խե՜ղճ գայլեր...: Էլ ինչպէ՞ս կարող ես բանականութեան կոչին անսալ, եթէ հարկ է «պաշտպանուել»:

Իններորդ. Սումգայիթի ջարդը ցնցեց բոլորին, նոյնիսկ ԹԱՍՍ-ին, ցնցեց այն պատճառի, որ հետեւելով անպատասխանատուութեան ժամանակների դեռ մօտիկ աւանդոյթներին, ԹԱՍՍ-ը կարծես թէ կորցրեց առողջամտութեան կողմնացոյցը: Մենք դեռ յիշում ենք, թէ ինչպէս մեզանում բնական աղէտների ժամանակ ամբողջ քաղաքներ կարող էին աւերուել, իսկ զոհեր՝ չլինել: Ճիշտ է, այս անգամ հաղորդագրութիւնների վրայ կարծես թէ բացախօսութեան ինչ որ միջանցահովիկ փչել էր, սակայն այնքան թոյլ ու աննշան, որ համընդհանուր արգահատանքի է արժանի: Խորհրդային մարդիկ իմացան, որ հանրապետութիւններից մէկի Սումգայիթ քաղաքում մի խումբ խուլիգանացող տարրեր կատարել են անկարգութիւններ եւ բռնութիւններ, որոնց զոհ են գնացել տարբեր ազգութիւնների պատկանող 31 հոգիներ: Սակայն չէ՞ որ մեր երկրի ցանկացած բնակիչ, որը պատահածի վերաբերեալ չունի անմիջական ու կենդանի տեղեկութիւն, սակայն ունի դպրոցական տրամաբանութեան վերաբերեալ տարրական պատկերացում, այստեղից պէտք է եզրակացնի. սկզբում Երեւանում հանդէս եկան ծայրայեղականներ, այնուհետեւ Լեռնային Ղարաբաղում սպաննեցին երկու ադրբէջանցիների, այժմ էլ շարունակում են նրանց մորթել Սումգայիթում: Եւ ովքե՞ր: Խուլիգանացող տարրեր, այլ խօսքով նոյն այդ ծայրայեղականները, որոնց գործունէութիւնը խափանելու գործը վստահուած է Ադրբէջանական ԽՍՀ Նախարարաց խորհրդի

նախագահ ընկեր Սախառովի հեղինակաւոր ձեռներին: Սակայն մենք Ֆրանց-Յոսիֆի երկրամասում չենք ապրում, մենք ապրում ենք հենց կողքին ու մենք հենց սումկայիթեան գաղթականներից գիտենք, որ հազարաւոր աւազակներ, զինուած հրացաններով եւ սուր զէնքերով, ինչպէս նաեւ տնային կառավարչութիւնների բնակիչների ցուցակներով, որպէսզի դրանց նայելով սխալմամբ չմորթեն «ուղղահաւատներին», խուժեցին բնակարանները եւ հարիւրաւոր անզէն ու ոչ մի բանի չկասկածող մարդկանց ենթարկեցին այն անթոյլատրելիին, որը երբեւէ ի վիճակի պիտի չլինի հասկանալ մարդկային սեռի եւ ոչ մի ներկայացուցիչ: Մենք գիտենք, նաեւ, թէ ինչպէս թաղեցին նրանց, այդ «քրիստոնեայ շներին», որոնք Ալլահին զոհաբերուեցին Օսմանեան Թուրքիայում հայերի հսկայածաւալ ցեղասպանութիւնից ուղիղ 73 տարի անց. ընդհանուր փոսերի մէջ, ինչպէս ժանտախտի տարիներին, ամէն մի զոհուած ընտանիքի համար մէկ-երկու ազգականի սգոյ թափօրով, որին ուղեկցում էին աւտոմատաւոր զինուորներ, որպէսզի յանկարծ հրաշքով մազապուրծ սգաւոր ազգականներին էլ փոսը չգցեն:

Տասներորդ. Կեղծիքը թող չմթագնի բանականութիւնը: Բանականութիւնը յամենայն դէպս շարունակում է սթափ հայեացք գցել փաստերին: Դեռ մինչեւ այսօր գոյութիւն չունի ոչ իսկ մէկ գրաւոր պաշտօնական փաստաթուղթ, որը դատապարտէր սումկայիթեան դէպքերը: Անցել է արդէն 12 օր, կենտրոնական հեռուստատեսութիւնը կանոնաւորաբար հաղորդում է իր ունկնդիրներին այն մասին, որ Պաղեստինում սպաննուել են եւս երկու երեխաներ եւ որ Լեռնային Ղարաբաղում ամրապնդւում է ադրբէջանցի եւ հայ աշխատաւորների բարեկամութիւնը:

Այսպիսին են փաստերը: Միայն այժմ թոյլատրելի է լրացնել դրանք՝ դրանց նկատմամբ հայ ժողովրդի եւ, համարձակւում ենք յուսալ, մեր երկրի բոլոր ողջամիտ եւ քաղաքակիրթ բնակիչների վերաբերմունքով:

Սումկայիթեան կոտորածը, որը հարկադրուած ենք գնահատել ոչ այլ կերպ, քան համաթիւրքականութեան նուէրը Ռուսաստանի քրիստոնէութեան դարձի հազարամեակին, մեր ժողովրդին գցեց խորագոյն սուգի մէջ, որը լրջագոյն փորձութիւն է մեր ամբողջ երկրի ապրած ժողովրդավարականացման եւ վերակառուցման դժուարին ու մերթ տանջալի գործընթացում: Հաստատ համոզուած լինելով, որ ամբողջ վերոշարադրեալի պատասխանատուութիւնն ընկնում է վերակառուցման բացայայտ կամ թաքուն թշնամիների վրայ, որտեղ էլ որ որջացած լինեն նրանք՝ Մոսկուայում, Բաքւում թէ Երեւանում, մենք յանուն բացախօսութեան, բացախօսութեան անունից եւ բացախօսութեան անուան իսկ համար մեր պարտքն ենք համարում զոհուածների եւ ողջ մնացածների առաջ՝ յայտարարել.

1) Մենք պահանջում ենք, որ կենտրոնական մամուլում եւ հեռուստատեսութեան մէջ վերջապէս յայտնուեն ճշմարտութիւնը իրադարձութիւնների մասին, ինչպէս երեւանեան եւ ստեփանակերտեան ցոյցերի, այնպէս էլ դրանց սումկայիթեան «հակազդեցութեան» մասին:

2) Մենք պահանջում ենք, որ սահմանուի այդ հրէշային չարա-

գործունեության հետաքննության կառավարական նոր հանձնաժողով և որ նրա գլխին կանգնի ոչ թե Ադրբեջանական ԽՍՀ-ի Նախարարաց խորհրդի նախագահը, որի նկատմամբ մենք՝ տուժող կողմս, ոչ մի վստահություն չունենք, այլ գոնե Նախարարաց խորհրդի նախագահը ցանկացած մի այլ, սակայն ոչ-մահմեդական հանրապետության։

3) Մենք պահանջում ենք ցուցադրական դատ սումգայիթյան ջարդի կազմակերպիչների և մասնակիցների նկատմամբ։ Պատահածի աննախադեպությունը պարտադրում է պատահածի նկատմամբ աննախադեպ հակազդեցություն։

4) Մենք պահանջում ենք այս իրադարձությունների լույսի ներքո լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը։ Երևանյան ցույցը խնդրարկուական բնույթ էր կրում, անմեղ զոհերի արյունը այդ խնդրանքին տալիս է արդեն պահանջքի բնույթ։

Մենք դա պահանջում ենք ոչ միայն յանուն ժողովրդավարական սկզբունքների, այլև որպեսզի խուսափենք անկանխատեսելի և անհակակշռելի հետևանքներից բուն իսկ Հայաստանում։ Ժողովուրդը պետք է հանգստացնել և դա հարկ է անել անհապաղ, մինչև նոր ցույցերի համար նշանակված օրը՝ Մարտի 26-ը։ Ինչո՞ւ զորքերին յանձնարարել այն, ինչին կարելի է հասնել պարզապես ճշմարիտ խոսքով։ Դա ոչ մի կերպ չի շոշափում միջազգայնականության և ժողովուրդների բարեկամության սկզբունքները. խոսքը գնում է ոչ թե ադրբեջանական ժողովրդի մասին, այլ այս անգամ արդէն իսկական ծայրահեղականների խմբի մասին, որոնք իրադարձությունները բոցավառել են թիւրքակրոնական գաղափարախոսության ցուցմունքով և ի շահ դրա։ Պատահական չէ բացարձակ նույնությունը երիտթուրքերի և սումգայիթյան ջարդերի նախաձեռնողների ձեռագրերի. երկու դէպքում էլ մորթոտեցին «կեավուրներին»՝ երկնային դրախտում իրենց համար տեղ ապահովելու համար։ Պատահածը մի ահեղ դաս է ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև ամբողջ երկրին. Մ.Ս. Գորբաչովի բանականության կոչին ի պատասխան Թիւրքությունը պատասխանեց կոտորածով։ Սակայն խողխողուեցին ոչ միայն հարիւրաւոր մարդիկ, այլև՝ բուն իսկ վերակառուցման ջիլերը»։

Եթե հայ հայրենասէր մտաւորականութիւնը հարկադրուած էր ճշմարտությունը այսպիսի «Դիմում»ներով հասցնել խորհրդային հասարակությանը (իսկ դա չափազանց դժուար էր, որովհետև առանց այդ էլ ներքին գործերի մարմինների վերահսկողության ներքո գտնուող լրատվական միջոցները վերցուել էին խստագոյն հսկողության տակ և թղթատարական բաժանմունքներն էլ, կառավարական կարգադրութեամբ, կա՛մ չէին ստանում «կասկածելի» առաքումները, կամ էլ, եթե ժողովրդական ճնշման առաջ տեղի տալով ստանում էին, ապա յաճախ ջանում էին ծրարները հասցէատէրերին հասցնելու փոխարէն ոչնչացնել), ապա թաթարական ցեղակրոն «մտաւորականութիւնը», ինչպէս տեսանք Ազգամի իրադարձությունների «Թրուդ» և մի շարք այլ մոսկովեան թերթերում «լուսաբանման» օրինակով, անարգել ու անսահմանափակ մուտք ունէր կենտրոնական ռուսալեզու լրատուական միջոցների կենտրոնները, որոնք հասարակաց տների նման գիշեր ու

ցերեկ բաց էին ալիեւական-բաղիրովեան մաֆիայի մեծաքանակ աւազակ-ների առաջ։

Աղդամ-Ասկերանի միջադէպերից մինչեւ Սումգայիթի ցեղաս-պանական ջարդարարութիւնը ձգուող թաթարական զարշելի դաւադրու-թեան էութիւնն ու մանրամասնութիւնները պարզ դարձնելուն նպաստող երկրորդ «մանրուքը» հետեւեալն է։

«Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա» թերթի աշխատակիցներ Կուլիչի եւ Մելիքովի մեզ արդէն ծանօթ վկայութեան համաձայն, թաթարական հանրապետութեան թէ Խորհրդային Միութեան տարբեր անկիւններից յատուկ զօրակոչով համախմբուած «գերագրգռուած խմբերը... Աղդամի հրապարակներում, փողոցներում եւ զբօսայգինե-րում հաւաքւում էին ու կազմակերպում տարերային միթինգներ»։ Փետրուարի 21-ին օր ու գիշեր հակահայ կոչերից բորբոքուող Աղդամում «իրադրութիւնը եւս առաւել սրուեց, երբ շրջանում յայտնուեցին ազերիներ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից», քանի որ «նրանք առանց այդ էլ առաջ զրոյցների ջերմաստիճանը բարձրացրեցին շշուկ տարածելով այն ճնշումների մասին, որոնց (իբր թէ,- Ե.Ն.) ենթարկուել էին Լեռնային Ղարաբաղում»։ Հասկանալիօրէն Աղդամում «զգացմունքների ալիքի վրայ բարձրացան եւ ուժ առացան ծայրա-յեղական տրամադրութիւններ ունեցող առանձին մարդկանց լօզունգ-ները, որոնք կոչ էին անում պաշտպանել հայրենի հողը եւ ուժի օգնու-թեամբ պահպանել Ղարաբաղը»։

Այս ամէնը կարելի է թաթարական միջավայրին բնորոշ, ուրեմն եւ «բնականոն» համարել։ Սակայն կարելի՞ է «բնականոն» համարել այն, որ նոյն Փետրուարի 21-ին Աղդամ էին ժամանել եւ գլխաւոր հաւաքին մասնակցում էին, ի շարս այլոց, թաթարական հանրապետութեան կենտրոնական կոմիտէի քարտուղար Հասանովը եւ ներքին գործերի նախարարը, իբր թէ «պարզաբանելու համար, թէ ինչպէ՞ս է լուծւում Լեռնային Ղարաբաղի հարցը» եւ իբր թէ «խելամիտ լինելու» կոչ ուղղելու համար։ Հասկանալի է, որ լոկ երեւութապէս (եւ աւելի քան) «բնականոն» այդ ներկայութիւնն ըստ էութեան բնականոն չէր, բնաւ։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ նրանց գերագրգռուած գերագոյն մեծաւոր Բաղիրովը բացայայտօրէն կողմ լինելով «ծայրա-յեղական-ազգայնական» արցախահայերին դաս տալու գաղափարին, նրանք չէին կարող եկած լինել խաղաղասիրական նպատակներով եւ խելամտութեան կոչող քարոզախօսութիւններ կատարելու համար, քանի որ այդ դէպքում, որպէս Բաքուի անթագակիր արքային հակառակա-մտողներ, կ'արժանանային նրա շանթ ու կայծակին։ Կայ շատ աւելի ուշագրաւ մի հանգամանք եւս։

«Հետաքննութիւնը մինչեւ վերջ կը բացայայտի, թէ դա (Աղդամի երկու թաթարների կեանքն արժեցած «արիւնայեղութիւնը»,- Ե.Ն.) ինչպէս օգտագործուեց հակահասարակական ուժերի կողմից, որոնք հրահրեցին Սումգայիթի ողբերգութիւնը»,- գրում էր «Թրուդ» թերթն իր կողմից՝ Մուրթուզաեւի յայտարարութիւնն արձանագրելուց անմիջապէս յետոյ։

Թո՛ղ որ խորհրդային հետաքննութիւնը ոչ թէ «մինչեւ վերջ»,

այլ, հաստատապէս, գոնէ արդարադատութեան անհրաժեշտ նուազագոյն իսկ չափով չբացայայտեց, իսկ եթէ նոյնիսկ «բացայայտեց» էլ, ապա բացայայտումը խառիւ իրեն եւ իր վերադասներին պահեց, իսկ խորհրդային (թաթարական չլինի թէ մոսկովեան, յամենայն դէպս երկու դէպքում էլ Գերագոյն) դատարանը, հետեւելով հետաքննութեան վարակիչ օրինակին, ոչ թէ «մինչեւ վերջ», այլ դոյզն չափով իսկ չքրքրեց, առանց ձեւացնելու փորձի իսկ՝ պարզապէս չքրքրեց եւ չցանկացաւ հրապարակային դարձնել Ազգամի «արիւնալեղութեան» ներքնածալքերը, ընդհանրապէս սերտագոյն աղերսը Սումկայիթի եղեռնագործութեան հետ։ Ոչ թէ հետաքննութեան ու դատարանի, այլ՝ որոշ հոտառու լրագրողների կ-ղմից «բացայայտուածն» ու թլիկ-թլիկ հրապարակային դարձուածը միայն ու միայն այն էր, որ «հակահասարակական» ինչ որ տարրեր, որոնց իրր հնարաւոր չի եղել յականէ-յանուանէ դիմակազերծել, Սումկայիթում հակահայկական կրքերը հրահրելու համար բեմերից թուականօրէն բազմապատիկ են ներկայացրել Ազգամում «հայերի ձեռքով սպանուած» թաթարներին, յօրինելով նաեւ Ղափանի շրջանում իրր թէ հայերի կողմից գործուած դաժանութիւնների վերաբերեալ «մանրամասնութիւններ»։

Բաքւում հիւսուած հակահայկական դաւադիր ծաւալուն ձեռնարկման չվնասելու նպատակով, եւ Մոսկուայի առանցքային մեղսակցութեամբ, ոչ միայն միտումնաւոր կերպով չբացայայտուած (աւելի ճիշտը՝ չհրապարակուած) մնաց, այլեւ ամէն կերպ խառնակուեց ու խորախոր խաւար խրուելով հետքակորոյս արուեց ու թաքցուեց այն, որ Ազգամում «գերազրգռուած խմբերը» որոշակի առաջադրանքով էին կուտակուել թաթար համայնավարների Կենտրոնական կոմիտէի նախաձեռնութեամբ եւ առնուազն (ու հաստատապէս) Կենտկոմի բաժնի վարիչ Ասադովի գլխավորութեամբ, որ այդ խմբերը «գազազած ամբոխի» վերածուելով դէպի Ասկերան առաջին մի զինարշաւով ու «զոհ» տալով իրենց հիմնական առաքելութիւնը կատարել էին արդէն. հետեւաբար երկու չարաաբիւնով իրր թէ փորձուած հետագայ զինարշաւը պարզապէս թատերական բնոյթ էր կրում՝ Սումկայիթի նախճիրի կանխատեսութեամբ։

Ո՞րն էր այստեղ թաքցուող առաջնայնօրէն էական-հանգուցային մանրամասնութիւնը։ Այն, որ Ստեփանակերտում մարզային խորհրդի պատմական որոշումից երկու օր անց Ազգամից Ասկերանի վրայ արձակուած թաթար խաժամուժը պէտք է անպայման «զոհեր» տար, որպէսզի սրամտած ամբոխի լրացուցիչ խառնակութիւններով («զանգուածային անկարգութիւններով», այդ թւում Սումկայիթի եղեռնագործութեամբ) եւ ընդհանրապէս, բարձրացած վայնասունի եւ խուճապի մթնոլորտում, հնարաւոր դառնար հակահարուածել եւ չէզոքացնել «ոճրագործ» արցախահայերի խորհրդարանի աննախընթացօրէն խիզախ վճռականութիւնը։ Եւ քանի որ Ասկերանի հայերը ինքնապաշտպանուելիս կարող էին ձեռնպահ մնալ (ինչպէս որ մնացին էլ) հրազէնի օգտագործումից եւ իրենք զոհեր տային, այն էլ այն դէպքում, երբ անհրաժեշտ էր, որ գրոհի դուրս եկած թաթար խուժանն ինքը կորուստներ կրէր, ապա ատրպատականեան խաժամուժին միախառնուած

կուսակցական-պետական բարձրաստիճանաւորները իրենց գործակալներից մէկին՝ շարքային միլիցիոներ-ոստիկանի կարգադրեցին կողքանց կրակելով դիտապաստ գետին փռել մի քանի ցեղակիցների···

Անհաւատալի հեքիա՞թ է թւում։ Եւ ինչո՞ւ չթուայ։ Դժբախտաբար իրականութիւնն այդպիսին է։ Սպաննուած ադրբեջանցիներից գոնէ մէկի վերաբերեալ կան անկասկածելի, թարմ ականատեսների վկայութիւններ, նաեւ այլ տուեալներ, որոնք, ինչքան էլ զարմանալի, «վրիպեցին» կամաւորապէս կուրացած ու խլացած խորհրդային հետաքննիչների եւ դատաւորների այլ պարագաներում եւ «անհրաժեշտութեան» դէպքում այնպէ՛ս սրատես աչքից եւ այնպէ՛ս նրբընկալ ունկից, աւելի շուտ նրանց կողմից թաքցուեցին այնպէս, ինչպէս կատուն է հորում սեփական կղկղանքը····։

Լենինկրատում լոյս տեսնող «Աւրորա» գրական-հասարակական հանդէսը, որ Խորհրդային Միութեան լրջագոյն պարբերականներից մէկն է, 1988 թ. հոկտեմբերեան համարում լոյս ընծայեց գարնանը երկու անգամ Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ գործուղուած լրագրող Ալեքսանդր Վասիլեւսկու «Ամպ է Լեռներում» ընդարձակ ակնարկը, որում հեղինակը քաղաքացիական արիութեամբ անդրադառնալով ազգամ-ասկերանեան իրադարձութիւններին, առաջին անգամ լինելով տալիս էր դրանց ստոյգ «ծննդոցը»։ Ստորեւ, ինչքան էլ որ ընդարձակ, տալիս ենք այդ ստուգապատում շարադրանքը.

«Փետրուարի լոյս 14-ի գիշերը, երբ Ստեփանակերտում տեղի ունեցաւ առաջին ցոյցը, Ադրբեջանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բաժնի վարիչ Ասադովը կուսակցութեան Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտէի բիւրոյի նիստում յայտարարեց, որ «հարիւր հազարաւոր ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած ժամանակ ներխուժել Ղարաբաղ եւ սպանդ սարքել»։ Փետրուարի 15-ի գիշերուայ ժամը 1-ին Ստեփանակերտի քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար Մովսիսեանը կուսակցութեան քաղկոմում այդ մասին իրազեկ դարձրեց բոլոր խոշոր ձեռնարկութիւնների ղեկավարներին, բայց կտրականապէս հրաժարուեց իրավիճակի մասին տեղեակ պահող հեռագիր ուղարկել Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէ։ Հեռագիրն ուղարկուեց միայն չորս օր յետոյ»։

Այստեղ ընդմիջենք Վասիլեւսկուն եւ արձանագրենք, որ նա սխալւում է մի շատ կարեւոր մանրամասնութեան մէջ, երբ հաստատում է. Ասադովի Փետրուարի 13-ից 14 լուսացող գիշերուան ընթացքում կատարած սպառնալիքի մասին Մովսիսեանը թէպէտ արցախահայ երեւելիներին տեղեակ է պահել Փետրուար 14-ից 15 լուսացող գիշերը, աւելի ճշգրիտ՝ Փետրուարի 15-ի առաւօտեան ժամը 1-ին, սակայն իբր Կրեմլ հեռագրուել է «չորս օր յետոյ», այլ խօսքով կա՛մ Փետրուարի 18-ի գիշերը, կամ էլ Փետրուարի 19-ի առաւօտեան։ Իրականում Ասադովի սպառնալիքի մասին համայնավար-խորհրդային ղեկավարներին տեղեակ պահող հեռագիրը Ստեփանակերտից Կրեմլ է ուղարկուել ոչ թէ Փետրուարի 15-ի առաւօտեան ժամը 1-ից «չորս օր յետոյ», այլ՝ Փետրուարի 15-ի առաւօտեան ժամը չորսին։ Այս չափազանց կարեւոր

ճշտումը կատարում ենք յենուելով Ստեփանակերտի քաղաքային կոմիտէի երկրորդ քարտուղար Մելքումեանի մի յայտարարութեան վրայ, որը լոյս է տեսել «Իզվեստիա» թերթի 1988 թ. Յուլիսի 13-ի համարում։

Մելքումեանը յայտարարել է. «(Ստեփանակերտում արցախահայերի) առաջին (Փետրուարի 12-ի,- Ե.Ն.) ցոյցից յետոյ, որն անակնկալի բերեց ղեկավարների մեծամասնութեանը, սկսեցին ծանր կացութիւնից ելքի տենդագին որոնումները։ Ամբողջ օրը (Փետրուարի 13-ին, Ե.Ն.) տեղի ունեցան քննարկում-վիճաբանութիւններ, իսկ ուշ երեկոյեան Գէորգովի եւ ուրիշ անձնաւորութիւնների բերանից լսուեցին բացայայտ սպառնալիքներ.- Եթէ վաղը յուզումները կրկնուեն, ապա հետեւանքները կանխատեսել հնարաւոր պիտի չլինի։ Նոյնիսկ ակնարկուեց, որ «հարիւր հազար մոլեռանդներ» կարող են քաղաք ներխուժել եւ այլն։ Ի՞նչ անել։ Գիշերը (Փետրուարի 14-ին,- Ե.Ն.) քաղկոմ կանչուեց շուրջ 750 մարդ՝ գլխաւոր տնօրէններից մինչեւ տնային կոմիտէների նախագահները։ Ուրիշների հետ ես ինքս էլ մէկիկ-մէկիկ տները շրջելով մարդկանց հրաւիրեցի։ Իսկ (Փետրուարի 15-ին,- Ե.Ն.), մօտաւորապէս առաւօտեան ժամը չորսին, յոգնութիւնից ջարդուած, մենք հաւաքական հեռագիր ուղարկեցինք Մոսկուա։ Ինչպիսի՞ հեռագիր։ Հեռագիր այն մասին, որ Ստեփանակերտին սպառնում է քաղաքական սպանդ»։

«Իզվեստիա»ի այս կարեւոր ճշտումից յետոյ խօսքը վերստին տանք «Աւրորա» հանդէսի Վասիլեւսկուն.

«Փետրուարի 20-ին, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանի անցկացման օրը, որտեղ որոշուելու էր Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերամիաւորման հարցը, պետաւտոտեսչութեան աշխատողները, միլիցիան, ներքին գործերի նախարարութեան յատուկ ծառայութիւնները, ադրպէյճանական բնակչութեան թուից կամաւորները շրջափակեցին Ստեփանակերտը շրջանների հետ կապող բոլոր ճանապարհները, որպէսզի թոյլ չտային, որ շրջաններից հայ պատգամաւորները գային մասնակցելու նստաշրջանին։

Փետրուարի 21-ին Ադրպէյճանի հանրապետական ձայնասփիւռը եւ հեռուստատեսութիւնը հաղորդեցին, թէ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի ունեցող յուզումները առանձին ծայրայեղական խմբաւորումների ձեռքի գործն են։

Փետրուարի 22։ Ադրպէյճանական Աղդամ քաղաքի բնակիչների բազմահազարանոց ամբոխը, սեղմելով միլիցիայի պահակակէտերը, ջարդուփշուր անելով իր ճանապարհին հանդիպող ամէն ինչ, շարժուեց դէպի մօտակայ՝ Լեռնային Ղարաբաղի Ասկերան աւանը։ Օրուայ կէսին ամբոխը միլիցիայի քսան ջոկատների (գրեթէ հազար մարդ) օգնութեամբ կանգնեցուեց աւանի մատոյցներում ու ցրուեց։ Անկարգութիւնների ժամանակ չպարզուած հանգամանքներում սպանուեց երկու երիտասարդ աղդամցի (թաթար), վիրաւորուեց ու հիւանդանոց փոխադրուեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի շուրջ յիսուն (հայ) բնակիչ։

Յաջորդ օրերին ադրպէյճանական հեռագրական գործա-

կալությունը, իսկ դրա հետևից ԹԱՍՍ-ը, համամիութենական ռադիոն և կենտրոնական հեռուստատեսությունը հաղորդում տվեցին «Աղդամի և Ասկերանի բնակիչների ընդհարման հետևանքով» երկու ադրբեջանցիների սպանության մասին։ Այդ սպանությունը կատարվել է մինչև օրս չպարզված պարագաներում։ Համենայն դեպս անկասկած է, որ դրանցից մեկի՝ Աղդամի հաստոցաշինական գործարանի ֆրեզերագործ, քառասներկուամյա Ալի Հաջիևի սպանությանը Լեռնային Ղարաբաղի հայերը ոչ մի առնչություն չունեն։ Ալիի զոհվելու հանգամանքների մասին ահա, թե ի՞նչ է ինձ պատմել նրա հարազատ եղբայրը, քսանինը տարեկան ճարտարագետ-շինարար Արիֆ Հաջիևը։

— Ալիի վրայ կրակողը ադրբեջանցի միլիցիոներ է եղել։ Եղբայրս մահացել է վայրկենապէս. նրա վրայ կրակել են դիմահար, գնդակը միջաթափանց ծակել, անցել է սիրտը։ Նրա և սպայի միջև վէճ է տեղի ունեցել։ Հետո Ալին Ուլվի Վախրամովի՝ իր ընկերոջ ձեռքն է բռնել և ասել. «Բռնիր ինձ, ինձ վրայ կրակեցին»։ Եվ ընկել է։ Ուլվին տեսել է այն միլիցիոներին, որը կրակել է։ Դրան ինքը չի ճանաչում, բայց լաւ գիտի աղդամցի միւս սպային, որը կրակողին անմիջապէս մեքենայ է նստեցրել և մեկնել։ Վերջերս մոսկուացի փոխ գնդապետ Նիկոլաեւն ասաց, որ հիմա նոր հետաքննութիւն է սկսուել։ Հայտարարութիւն է տրուած թերթում սպանութեան վկաներին ուղղուած՝ միլիցիա գալու խնդրանքով...»։

Խորհրդային Միութեան դատախազութեան ներկայացուցիչ Վալերի Վլադիմիրովիչ Վասիլենկոն, որը ժամանակաւորապէս կատարում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դատախազի պարտականութիւնները, ինձ հետ համաձայնեց, որ այն պայթիւնավտանգ իրադրութեան մէջ առանց լրացուցիչ պարզաբանումների Աղդամի և Ասկերանի բնակիչների ընդհարման ժամանակ երկու ադրբեջանցիների սպանութեան մասին մամուլում հաղորդումը տպագրելը տեղին չի եղել։

Շատերն են գտնում, որ հենց այդ հաղորդումն է վառօդի տակառին մօտեցուած լուցկու դեր կատարել, վառօդի տակառ, որը պայթեց Սումգայիթում»։

Լենինկրատցի լրագրողի անկողմնակալ վկայութիւնն էլ հիմք ընդունելով ամենից պարզամիտ մարդն իսկ կարող է հարց տալ, թէ թաթարական վերնախաւից բացի էլ ո՞վ էր շահագրգռուած փոթորիկի հրահրմամբ, թէ ինչո՞ւ մինչև Սումգայիթը չոչնչացուեց աղդամեան լուցկին ինքը։ Չէ՞ որ Կրեմլում դեռ Փետրուարի 15-ին լոյսը բացուելուն պէս արդէն գիտէին (ըստ «Իզվեստիա»ի), առնուազն Փետրուարի 18-ին հաստատապէս նախազգուշացուած էին (ըստ «Աւրորա»ի), որ ադրպատականեան թաթար համայնավարների գլխաւորագոյն ղեկավարները արդէն իսկ ճիհատ են յայտարարել արցախահայութեան և նախապատրաստում են սանձարձակ ջոլիրն արշաւանքի հանելու։ Չէ՞ որ Կրեմլում Ստեփանակերտից հասած հեռագրից ստուգապէս գիտէին նաև անունն այն մարդու՝ Բաքուի Կենտրոնական կոմիտէի բաժնի վարիչ Ասադովի, որ յատուկ առաքելութեամբ ուղարկուել էր որպէս ճիհատի հրամանատար ձեռնոցը նետելու արցախահայ ղեկավարների առաջ։ Չէ՞ որ ոչ ոքի

համար գաղտնիք չէր, որ, ինչպէս Մարտի 27-ի իր համարում վկայելու էր յամառօրէն հակահայկական գիծ վարող լրագիրներից մէկը՝ «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիան», թաթար խաժամուժը, ինչպէս որ հարիւր ու հազար տարի առաջ, արեան ու աւարի հոտն առած, Աղդամում համախմբւում էր գալով ոչ միայն Ադրբէյճանական ԽՍՀ-ի չորս ծագերից՝ Բաքուից, Լենկորանից ու Կիրովաբադից, այլեւ մինչեւ իսկ սիպիրեան տափաստաններից։

Այս բոլորը նշանակում է, որ եթէ Մոսկուայի վերին ոլորտներում ցանկացած լինէին, ապա կանխած կը լինէին Աղդամը եւ Աղդամի ճանապարհով էլ Սումգայիթը։ Սակայն «անկանխատեսելի հետեւանքների» սպառնալիքով եւ ի սէր հոգեհարազատ Ալիեւի ցեղակիցների ցանկանալով նահանջի մատնել արցախահայերին՝ թոյլ են տուել, որ Աղդամում իրադարձութիւնները ծաւալուեն Բաքւում համայնավարմուսաւաթական կուսակցապետ Բաղիրովի կազմած եւ ի կատար ածելու համար Ասադովի ձեռքը տրուած յայտագրով։

Այդ յայտագրի հիմնական բաղադրամասը, ինչպէս ասել ենք, պէտք է լինէր Աղդամից դէպի Ասկերան Փետրուարի 22-ի գիշերային եւ «զոհեր» տալով նահանջը։ Ըստ որում կարեւոր է նշել՝ մէկ ու միակ գիշերայինը, որը եւ տեղի է ունեցել ըստ յայտագրի, հետեւեալ ձեւով.- Համաձայն վաւերական աղբիւրների՝ Աղդամի շրջանային կոմիտէի առաջին քարտուղար Մուրթուզաեւի («Թրուդ», Մարտի 26) եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գլխաւոր դատախազի ժամանակաւոր պաշտօնակատար Վասիլենկոյի (որին է յղում կատարում լրագրող Վասիլեւսկին «Աւրորա» հանդէսում), բազմահազարանոց աղդամեան ամբոխը, հեղեղի նման ճանապարհին ամէն մի պատուար դէն շպրտելով, հասել է մինչեւ հայկական Ասկերանի մատոյցները, որտեղ շուրջ հազար ոստիկանների յաջողուել է այն կասեցնել։ Խառնաշփոթի մէջ սպանուել են երկու թաթարներ, որոնցից գոնէ մէկի ցեղակից միլիցիոների կրակոցից տապալուած լինելն ստոյգ իրողութիւն է։ Վիրաւորուել են շուրջ յիսուն հոգիներ, ըստ Մուրթուզաեւի՝ «երկու կողմերից», սակայն միայն «մի քանիսը» թաթար («Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա», Մարտի 27), իսկ ըստ Վասիլեւսկու՝ հիմնականում արցախահայեր։ Ռուս գրագիտուհի Ն. Կրիմնեւայի տուեալներով («Երեկոյեան Երեւան», Նոյեմբերի 11) «Ասկերանի վրայ մարդասպանների 15 հազարանոց ամբոխի յարձակման ժամանակ շուրջ 50 մարդ (հայերից,- Ե.Ն.) խեղանդամ է դարձել, 350 մեքենայ ջարդուփշուր եղել, ոչ մի քրէական գործ չի յարուցուել»։

Բաքուի գաղափարակիցներոնի հակահայկական լայնածաւալ եւ արցախահայերին ահաբեկելու ու Ստեփանակերտի մարզային խորհրդի որոշումը խափանելու միտող դաւադրութեան յայտագրի աղդամասկերանեան դրուագը հաստատապէս պէտք է լինէր այսքանը. այն, ինչ իրապէս տեղի է ունեցել։ Զմոռանանք, որ Փետրուարի 22-ին Աղդամում ներկայ էին առնուազն Կենտկոմի քարտուղար Հասանովը, Կենտկոմի բաժնի վարիչ Ասադովը, շրջանային կոմիտէի առաջին քարտուղար Մուրթուզաեւը եւ ներքին գործերի նախարարը, հաւանաբար՝ նաեւ ուրիշ բարձրաստիճանաւորներ։ Նրանք խելքները հացի հետ չէին կերել,

որպեսզի թույլ տային թաթար մասնագետ ջարդարարներին՝ իրենց ներկայութեան հայերի կոտորել: Նրանց անհրաժեշտ էին թաթար «զոհեր», որպեսզի հնարաւոր լինէր չորս-հինգ օր անց բոցավառել Սումգայիթի վառոդի տակառը: Այդ «զոհերը» ձեռք էին բերուել մէկ ու միակ գինարշաւով: Ասկերանի մատոյցներում Աղդամն իր առաքելու-թիւնը կատարել էր եւ այնուհետեւ, յիշելով իր «զոհերին», պարզապէս աւելի ջերմեռանդ կը նուիրուէր Լեռնային Ղարաբաղի գլխաւոր դարպասի մօտ պահապան գամփռի իր դերին:

Միջանկեալ նշենք, որ պէտք չէ բացառել հաւանական մի վարկած. Ասկերանի վրայ արշաւող աղդամցիների խաժամուժի ներսում պատեհ ժամի իր ցեղակիցների վրայ կրակելու պաշտօնի համար էր թերեւս հրաւիրուել այն խապարովացի թաթարը, որին առեղծուա-ծային պայմաններում Փետրուարի 20-ի գիշերը ձերբակալել էին (արդեօ՞ք ազգութեամբ ռուս ոստիկաններն են նրան ձերբակալել՝ նրա մօտ նախ. զէնք յայտնաբերելով): Վերջին հաշուով հեշտ չէր լինի տեղացի թաթարի համոզել, որ կրակի իր ցեղակիցների վրայ: Եթէ այդպէս է, ապա ձերբակալուածի առաքելութիւնն է փոխանցուել թաթար չարքային ոստիկանի: Նոյնիսկ եթէ այդպէս չէ, ապա որպէս «պրովոկատոր» էլ ամենայարմար թեկնածուն միլիցիոներն էր մնում. ոստիկանը, յատ-կապէս այսրկովկասեանը, յաճախ առաւել բազմամեղ քաղաքացիներից մէկն է եւ պետերն էլ, որպէս կանոն, լինելով շահակից ու հովանաւոր, տեղեակ են ստորադասների յանցագործութիւններին, ուրեմն եւ հեշտութեամբ կարող են նրանց շանթաժի ենթարկել ու ծանրագոյն յանցագործութեան մղել: Եւ յետոյ միլիցիոները, որ ինչե՛ր ասես չի կոծկում ու թաքցնում յանուն կաշառքի, ընդհանրապէս գաղտնապա-հութեան մարմնացումն իսկ է:

Կարող է հարց ծագել. եթէ աղդամ-ասկերանեան անհրաժեշտ «արիւնայեղութիւնը» (թէկուզ եւ լուցկու դեր էր կատարելու սում-գայիթեան վառօդատակառի համար) մէկ ու միակ գինարշաւով գլուխ էր բերուել արդէն, ապա ինչի՞ համար էին յօրինում միւս՝ «ասպետական» գրուագները: Հարցին պատասխանելը հեշտ կը լինի, եթէ ուշադիր քննենք, թէ Մարտի 27-ին, առանց ճշտորոշ աղբիւր մատնանշելու, մոս-կովեան մամուլն ինչպէ՞ս էր գեղազարդում Պաքւում կազմուած յայտա-գրի մեջ արդէն ծանօթ գրուագի առոյգ պատումը:

«Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա» թերթը, միայն այս դէպքում վկայակոչելով Մուրթուզաեւին, վերապատկերել գլխաւոր գինարշաւի բազմահազարանոց ամբոխը փոքրացնելով վեր էր ածում աղդամցի «երիտասարդների մի խումբի»: Եթէ արհմիութենական պաշտօնաթերթն այնուամենայնիւ ընդունում էր, որ «ազգայնական տարրերի ազդեցութեան տակ ընկած» գրոհայինները «զինուած էին քարերով ու մահակներով», ապա «Կոմսոմոլսկայա Պրավդան», որը ամբոխին նոյնպէս վերածել էր «երիտասարդների մի խումբի», միամիտ ընթերցողներ էր փնտրում համոզելու համար, որ Աղդամից շարժուող գրոհայինները պարզապէս եղել են Ստեփանակերտի ցոյցը դիտելու գնացող անզէն հետաքրքրասէրներ, որոնց հայերը դարանակալել են Ասկերանի մատոյցներում:

Սա՛ դեռ ոչինչ։ Կարեւորն այն է, որ ե՛ւ «Սոցիալիստիչեսկա-յա Ինդուստրիա»ն, ե՛ւ «Կոմսոմոլսկայա Պրավդա»ն անակնկալօրէն հրապարակ էին նետում Աղդամից Ասկերան մի երկրորդ զինարշաւի պատմութիւնը։

Ըստ արհմիութենական պաշտոնաթերթի, առաջին զինարշաւի մասնակից «մի խումբ երիտասարդներ»ից երկուսի «զոհուելու» լուրն իմանալով, «տասնեակ հազարաւոր գերագրգռուած բնակիչներ» (ուշադրութիւն դարձրէք. թաթար գրոհայինները եթէ փոքրաթիւ «մի խումբ» են, ապա ազգայնական հակումներ կարող են ունենալ, իսկ եթէ «տասնեակ հազարաւոր են», ապա միջազգայնական-ազնիւ, այլ պարզապէս «գերագրգռուած բնակիչներ» են) շարժւում են դէպի Ասկերան, ըստ որում երկու շարասիւնով եւ երկու տարբեր ճանապարհներով։ Առաջին շարասիւնը կասեցւում է վազքով մի քանի քիլոմեթր ճանապարհ կտրած Կենտկոմի ալեհեր քարտուղար Հասանովի, իսկ երկրորդը՝ նոյնպէս հետիոտն վրայ հասած եւ «լաչակը գետին նետած» Զուրաման խանումի կողմից։

Ըստ «Կոմսոմոլսկայա Պրավդա»յի, Ստեփանակերտ զբօսա-պտոյտի գնացող «մի խումբ երիտասարդներ»ից երկուսի «զոհուելու» լուրն իմանալով, «հազարաւոր բորբոքած մարդիկ» շարժւում են դէպի Ասկերան, ըստ որում նոյնպէս երկու շարասիւնով եւ երկու տարբեր ճանապարհներով։ Առաջին շարասիւնը, որը հետիոտն է եւ սակայն կարողանում է միլիցիայի, նաեւ կուսակցական-խորհրդային-կոմերիտական պահակակէտերը տրորել-անցնել, կասեցւում է ոչ թէ հետիոտն, այլ ինքնաշարժով վրայ հասած եւ ինքնաշարժի կտուրի վրայ բարձրանալով լաչակը «վեր պարզած» Զուրաման խանումի կողմից, իսկ երկրորդ շարասիւնը, որ մեքե-նայացուած է, կասեցւում է պարզ չէ թէ որտեղի՞ց եւ ինչպէ՞ս յայտնուած ու մեքենաների առաջ ծնկի իջած Մուրթուզաեւի կողմից...

Արդ, հարց տանք մոսկովեան թաթարամոլ լրագրողներին, թէ ինչպէ՞ս այս ամէնի մէջ սուտն ու ճշմարիտը միմեանցից ջոկենք։ Եւ որպէսզի գոնէ փոքր ինչ հեշտանայ մեր կողմնորոշումը, տանք այսպիսի պարզորոշ «պարոնեանական» հարցեր.

— Աղդամից Ասկերան վերջ ի վերջոյ միայն մէ՞կ, թէ երկու զինարշաւ է ուղարկուել։

— Առաջին զինարշաւի մասնակիցները «ամբո՞խ» էին, թէ՝ «մի խումբ երիտասարդներ», «զինուա՞ծ» էին, թէ՝ դատարկաձեռն։

— Երկրորդ զինարշաւի մասնակիցները թուաքանակով «հազարաւո՞ր» էին, թէ՝ «տասնեակ հազարաւոր»։

— Երկրորդ զինարշաւի առաջին շարասիւնը կասեցնող Զուրաման խանումը հետիո՞տն էր հասել, թէ՝ մեքենայով, շարասեան դիմելիս նրա ոտները հողի՞ վրայ էին, թէ՝ մեքենայի ծածկի թիթեղի վրայ, վերջապէս՝ նա լաչակը գետի՞ն է նետել, թէ՝ գլխավերեւում թափ տուել։

— Երկրորդ զինարշաւի երկրորդ շարասիւնը կասեցնողը Կենտկոմի վազորդ քարտուղար Հասանո՞վն է եղել, թէ՝ ինքնաշարժով արշաւող շրջկոմի քարտուղար Մուրթուզաեւը։

Երկրորդ գինարշաւը եւ նրա զոյգ շարասիւները յօրինովի մի հեքիաթ են, որն առեղծուել է թաթար բարձրաստիճան «կուսակցական-խորհրդային աշխատողների համար փորձութեան ժամ» հնչեցնելու («Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա») եւ այդ ժամից նրանց յաղթական դուրս բերելու համար։ Հեքիաթը յօրինուել է աղդամ-ասկերանեան «արիւնայեղութիւնից» յետոյ հասկանալիօրէն անմիջապէս ծագամուտ չեղած խաժամուժի հոծամբոխ զումարման փաստի վրայ եւ պարզապէս չեզոքելու համար այն, որ ադրբէջանական կուսակցական բարձրաստիճանաւորներն իբր կտրականապէս դէմ են եղել հակահայկական բռնամիջոցների եւ գերմարդկային ջանքերով կանխել են իրենց վրդոված ցեղակիցների անհեղ պոռթկումը։

Հէնց այդ հեքիաթով էլ հող է նախապատրաստուած չեզոքելու եւ համոզիչ դարձնելու այն «իրողութիւնը», որ իբր ասկերանցի հայերի «ոճրագործութիւնից», նաեւ հայաստանաբնակ թաթարների դէմ գործուած բռնամիջոցներից ցասկոտած եւ փողոց թափուած սումկայիթցիների «պոռթկումը» հնարաւոր չի եղել խափանել այն պարզ պատճառով, որ Սումկայիթի կուսակցապետ Մուսլիմզադէն իրադարձութիւնների հէնց սկզբին քաղաքից բացակայել է... արձակուրդով։

Մոսկովեան մամուլի նպատակալաց այս ամբողջ հեքիաթասացութիւնն ըստ ինքեան համարելով Բաքուի գաղափարակեդրոնի հակահայկական լայնածաւալ դաւադրութեան խեղութեան ապացոյցներից մէկը, պէտք չմոռանալ էականը․ ատրպատականեան թաթարութեան եւ հայութեան փոխյարաբերութիւնները արեան դրոշմանիշով իրենց եղման դիրքերը վերադարձնելու, ադրբէջանական խաժամուժի հայատեաց կրքերը անհանդուրժելիօրէն վերարտադրելով նրա ջարդարարական առհաւական մանրէչալաւան վերաշխուժացնելու եւ այսրկուրեան (պատմականօրէն հայկական) թէ անդրկուրեան (պատմականօրէն ադուանական) հողատարածքների հայահոծ վերջին օճախների կործանմանը նպաստելու համար, Բաքուի նոր-մուսաւաթական (լոկ անուամբ համայնավարական) գաղափարակեդրոնը չի խորշել ազգամցի մի թաթար ցեղակցի, եւ ինչո՞ւ ոչ՝ նաեւ երկրորդին դիտապաստ գետին փռելուց, որպէսզի այնուհետեւ նրանց արեան մեղքը դցի ինքնապաշտպանութեան դուրս եկած ասկերանցի հայերի վրայ։ Պէտք յիշել այս էականը ու մտորել նաեւ այն տպաւորիչ յամառութեան շուրջ, որով մոսկովեան թաթարապաշտ գրչակներն ու ատենաւորները ազգամցի երկու երիտասարդներին երկար ամիսներ եւ ընդհուպ մինչեւ մեր օրերը ներկայացրել են որպէս ոչ թէ Բաքուի գործակալների կողմից դիմահար գնդակահարուած, այլ՝ «հայ-ադրբէջանական զինաբախման ընթացքում սպաննուած»։ Այդպէս է պնդել «Փրաւտա»ն Մարտի 21-ի համարում, «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա»ն՝ Մարտի 27-ի համարում, նաեւ՝ Խորհրդային Միութեան գլխաւոր դատախազի առաջին տեղակալը Օգոստոսին։ Վերջինս ԹԱՍՍ-ի թղթակցի հետ պաշտօնական հարցազրոյցում շեշտել է․ «Անկասկած, այն, ինչ տեղի ունեցաւ Սումկայիթում, ամենասերտ կերպով կապուած է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձութիւնների հետ։ Զանգուածային անկար-

ղութիւնները Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, որոնք սկսուեցին Փետրուարի 22-ին, հրահրուած՝ ազգայնականօրէն տրամադրուած տարրերի կողմից, շիկացրին իրադրութիւնը Սումկայիթում։

Ի դէպ, գլխաւոր դատախազի առաջին տեղակալը, իբր «լուսաբանութիւն» տալու եւ հասարակական կարծիքի կրքոտումը կանխելու նպատակով, մինչ այդ էլ հեռուստատեսութեամբ ելոյթ էր ունեցել ու խօսել Աղդամի եւ Ասկերանի բնակիչների ընդհարման եւ երկու թաթարների սպանութեան մասին։ Արդ, խորհրդային արդարադատութեան մեծատիտղոս ներկայացուցիչը, չնշելով, որ աղդամցի թաթարները սպաննուել են հրազէնի կրակոցով, ինչո՞ւ ձեռնպահ էր մնում չնշելուց, որ նրանք չեն ընկել հայերի կրակոցով, այն էլ այն դէպքում, երբ քաջատեղեակ էր այդ իրողութեան։ Մի՞թէ նա իրեն հաշիւ չէր տալիս, որ թաթար գազազած խուժանն ինչպէ՛ս կը հասկանար ու կ'ընկալէր իր հաղորդումը։ Եւ ո՞ւմ էր արդեօք անհրաժեշտ գլխաւոր դատախազի առաջին տեղակալի անորոշ երկդիմութիւնը եւ մի՞թէ նրա երկդիմութեան ետին որոշակի միտում չէր թաքցուած...

Ցամենայն դէպս, Աղդամով կանխորոշուած Սումկայիթը, երկար տարիներ, դեռ Ալիեւի օրերից կանխապատրաստուած հակահայկական արիւնալեղութեան այդ օճախը օրինաչափօրէն բռնկուեց։ Բռնկուեց եւ իր դանթէական բոցերով լուսաւորեց մի իրողութիւն. Հայոց Ցեղասպանութիւնը պատմութեան սեփականութիւնը դարձած անցեալ չէ, բնաւ, այլ՝ յարատեւող ներկայ։

Որովհետեւ այն, ինչ կատարուեց Սումկայիթում, ցեղասպանական ոճիր էր, պարզապէս մերօրեայ մի դրուագը վաղուց սկսած եւ ընդմիջումներով յարատեւող Հայոց Ցեղասպանութեան, հերթական ապացոյց ու յիշեցում այն իրողութեան, որ թիւրք ցեղի առհաւական յիշողութեան մէջ անմեռ խլրտում է ու պատեհ ամէն մի առիթով արտավիժում Հայոց ազգի նկատմամբ բնաջնջողական մանրէալուսան։ Եւ ոչ թէ լոկ մեր ժողովրդի, այլեւ մարդկութեան առաջ իրենց խղճի վրայ ծանրագոյն մեղք են վերցնում բոլոր նրանք, ովքեր գիտութեամբ կամ անգիտութեամբ ուրանում են այդ իրողութիւնը եւ ճշմարտութիւնից ահարեկուելով մեզ արթնութեան կոչելու փոխարէն՝ փաստօրէն ջանում են բթացնել մեր արթնամտութիւնը։ Նրանց շարքին եւ Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան գլխաւոր քարտուղար, այժմ նաեւ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահ Մ. Գորբաչովը։

## Գ.

Ընդմիջելով գրող Վ. Պետրոսեանին, որ խօսում էր այն մասին, որ «Սումկայիթում ցեղասպանութեան փորձ է կատարուել», Գերագոյն Խորհրդի Նախագահութեան Յուլիսի 18-ի չարայիշատակ նիստում Մ. Գորբաչովը յայտարարեց. «Ցեղասպանութիւնը որոշակի քաղաքականութիւն է, ցեղային, կազմակերպուած եւ ոչ տարերային։ Իսկ Սումկայիթում վայրագութիւններ են արել հասարակութեան թափթփուկները։ Պարզուել է, թէ ովքեր են դրանք։ Իսկ ցեղասպանու-

թիւնը որեւէ ժողովրդի կամ փոքրամասնութեան նկատմամբ գիտակցաբար վարուող ոչնչացման քաղաքականութիւն է։ Ինչո՞ւ էք դուք ուզում աւազակների արարմունքը վերագրել ամբողջ Ատրպէյճանին։ Ի՞նչ ցեղասպանութեան մասին կարելի է խօսել։ Չէ՞ որ դուք գիտէք, թէ ինչ բան է խօսքը, նրա կշիռը։ Դուք այնպիսի մեղադրանքներ էք նետում, որ յետոյ կ'ափսոսաք ձեր ամբողջ կեանքում»։

Անհրաժեշտ է առաջին հերթին ասել, որ ցեղասպանութեան կորպաչովեան բնութագրականը ոչ այնքան ճիշտ, որքան սխալ է, այն իմաստով, որ անթոյլատրելիօրէն սեղմում է ցեղասպանութեան սահմանները, որպէս ցեղասպանութիւն ընդունում միայն ցեղասպանութեան «դասականը», աւելի պարզ՝ մտայղացմամբ թէ գործնականացմամբ մեծամասշտաբ ու լայնածաւալ օրինակ-տարբերակները։

Մի պահ ընդունենք, սակայն, որ ցեղասպանութեան կորպաչովեան բնութագրականն անթերի է, որպէսզի մեզ իրաւունք վերապահենք հարց տալու, թէ այդ դէպքում ինչո՞ւ առ այսօր գլխաւոր քարտուղարն ու իր ղեկավարած համայնավար կուսակցութիւնը եւ այդ կուսակցութիւնից ղեկավարուող խորհրդային կառավարութիւնը պաշտօնապէս որպէս ցեղասպանութիւն չեն ճանաչել ու դատապարտել Հայկական Եղեռնը, դրանով իսկ տասնամեակներ շարունակ խոչընդոտելով ոչ թէ սեփական կամքով, այլ իրենց տիրական կարգադրութեամբ գործող Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ հայաստանեան կառավարութեան կողմից Եղեռնի պաշտօնապէս որպէս ցեղասպանութիւն բնութագրումն ու դատապարտումը։ Չէ՞ որ տասնամեակներ շարունակ ամբողջ քաղաքակիրթ աշխարհն իր լաւագոյն զաւակների խօսքով եւ գրչով ընդունում էր, որ ցեղասպանութեան առաջին եւ ամենից դասական օրինակը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին Օսմանեան կայսրութիւնում թուրքերի կողմից կազմակերպուած Եղեռնն էր, որին զոհ էին գնացել մեր ժողովրդի շուրջ երկու միլիոն զաւակներ։ Չէ՞ որ քաղաքակիրթ աշխարհում, այն բոլոր հասարակական, քաղաքական, գիտական ու մտաւոր-մշակութային շրջաններում, որտեղ Անգարայի կողմից երեսուն արծաթով կամ թրքուհիների պորտի խորութեամբ գնուած թուրքասէրների հոսանքը չէր գերակշիռը, հայոց Եղեռնը ընդունուած էր ու ճանաչուած որպէս նոր ժամանակների առաջին ծրագրուած-կազմակերպուած եւ պետականօրէն կիրառուած ցեղասպանութիւնը, որը որոշ իմաստով նախօրինակ հանդիսացաւ համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին հիթլերական նացիզմի հիմնականում հրեաների, գնչուների եւ այլոց դէմ կիրառուած դասական երկրորդ ցեղասպանութեան համար։ Վերջապէս, չէ՞ որ ի տարբերութիւն իր ուղեծրում Խորհրդային Հայաստան ունեցող Կրեմլի եւ իր կազմում հայաստանեան երեսփոխանների մի ամբողջ փաղանգ ունեցող Խորհրդային Գերագոյն Խորհրդի, իր քաղաքական ընդհանուր կողմնորոշման ուղեգծում եւ ուղղակի իր դռանը որպէս խնդրարկու նստած Թուրքիա ունեցող Ստրասպուրկի Եւրոպական խորհրդարանը 1987 թուի Յունիսի 18-ի նիստում ընդունել էր յայտնի «Հայկական Բանաձեւը», որում ասուած էր. «Եւրոպական խորհրդարանն այն կարծիքին է, որ Օսմանեան կայսրութեան տարածքում հաստատուած հայերի հետ

1915–1917 *թուականներին կատարուած ողբերգական դէպքերը իրենցից ներկայացնում են ցեղասպանութիւն՝ Միացեալ Ազգերի Կազմակերպութեան գլխաւոր ժողովի կողմից* 1948 *թուի Դեկտեմբերի* 9-*ին հաստատութեան արժանացած «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ այն պատժելու» վերաբերեալ Համաձայնագրի իմաստով։*

*Վերադառնանք, սակայն, Սումկայիթի կոտորածը ցեղասպանութեան հետ չառնչելու կորպաչովեան տեսակէտին։ Այդ տեսակէտի սխալականութիւնը, ինչպէս գիտել տուեցինք, հիմնականում կայանում է այն բանում, որ ցեղասպանութիւն է համարում միայն ու միայն որեւէ ժողովրդի կամ ազգային փոքրամասնութեան նկատմամբ գիտակցաբար վարուող ցեղային ոչնչացման կազմակերպուած քաղաքականութիւնը, այն դէպքում, երբ Սումկայիթում իրր թէ տարերային վայրագութիւններ են կատարուել հասարակական թափթփուկների կողմից եւ հայութիւնն էլ անիրաւամբ է աւազակների արարմունքը վերագրում «ամբողջ Ադրբեջանին»։*

*Ճիշտ է, նախ եւ առաջ որպէս ցեղասպանութիւն, որպէս մարդկութեան դէմ քրէական ծանրագոյն եւ վաղեմութեան ժամկէտ չունեցող յանցագործութիւն պէտք է նկատի ունենալ որոշակի քաղաքականութիւնը, աւելի չուտ՝ այն բոլոր գործողութիւնները, որոնք մշակւում են եւ ի կատար ածւում էթնիկական (ցեղային, ազգային) որեւէ միաւոր կամ կրօնադաւանական որեւէ համայնք ամբողջովին կամ մասամբ ոչնչացնել-վերացնելու նպատակով։ Եւ սակայն անպայման որպէս ցեղասպանութիւն պէտք է որակուեն նաեւ էթնիկական տուեալ միաւորի կամ կրօնադաւանական տուեալ համայնքի բաղադրամաս հանդիսացող առանձին, թէկուզ փոքր խմբերի սպանութիւն-ոչնչացումը, մինչեւ իսկ դրանց առանձին ներկայացուցիչներին մարմնական խեղումներ եւ հոգեկան ու մտաւոր խանգարումներ պատճառելը։ Վերջապէս որպէս ցեղասպանութիւն պէտք է որակուեն նաեւ էթնիկական տուեալ միաւորի կամ կրօնադաւանական տուեալ համայնքի ամբողջութեան կամ նրա տեղական թէկուզ փոքր մի միաւորի ոչնչացմանն ու վերացմանը միտող նոյնիսկ «խաղաղ» միջոցառումները. անտանելի կենսապայմանների ստեղծումը եւ իր բնօրրանից դուրս մղումը դէպի սպիտակ ջարդի հորիզոնները, արական կամ իգական սեռի ներկայացուցիչների բռնի ամլացումը, երեխաների բռնախլումը եւ այլասերումն ու ապազգայնացում-ազգափոխումը եւ այլն։ Թո՛ղ արտասահմանեան հեղինակաւոր մասնագէտներին, խորհրդային մարքսիստ պատմաբանները, ընկերաբանները, փիլիսոփաներն ու իրաւագէտներն իրենք էլ հենց մեր վերոշարադրեալ սահմանման շրջանակներում են տեղադրում ցեղասպանութիւնը։ Եւ եթէ Մ.Ս. Գորբաչովը գիտած լինէր նրանց, ապա նրանք անմիջապէս իրեն կը տրամադրէին Մոսկուայի «Պրոգրես» հրատարակչութեան կողմից հենց նոյն օրերին հրապարակ հանուած «Ինչը Ինչ է Համաշխարհային Քաղաքականութեան Մէջ» ռուսերէն ուղեցոյց-բառարանը, որի* 91-*րդ էջի չարադրանքը կասկած չէր թողնի, որ Սումկայիթի կոտորածը խորհրդային գիտական մտքի բնութագրմամբ եւս ոչ այլ ինչ էր, եթէ ոչ՝ ցեղասպանութիւն։*

*Եւ իրօք, ի չարս այլոց ոչ-անյայտ Եւգենի Պրիմակովի,*

թաթարական «նոր» գաղափարախօսութեան գլխաւոր սիւն Զիա Բունիաթովի դասընկեր-հոգեհարազատ ղեկավարած հեղինակների խումբը ցեղասպանութիւնն այսպէս է բնութագրել. «Ցեղասպանութիւն-գործողութիւններ, որոնք կատարուել են որեւէ ազգային, էթնիկական, ցեղային կամ կրօնական խումբը ամբողջութեամբ կամ մասնակիօրէն ոչնչացնելու նպատակով: Մանրագոյն քրէական յանցագործութիւն: Որպէս ցեղասպանութիւն են բնորոշւում հետեւեալ գործողութիւնները. նմանօրինակ մի խմբի անդամների սպանութիւնը, այդպիսի խմբի անդամներին լուրջ մարմնական վնասուածքներ հասցնելը կամ մտաւոր խեղումներ պատճառելը, որեւէ խմբի համար կեանքի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք նպատակամղուած են նրա լիովին կամ մասնակի ֆիզիքական ոչնչացմանը, այդ խմբի միջավայրում ծնունդների կանխարգելմանը նպատակամղուած միջոցները, մարդկային մէկ խմբից միւսը երեխաների բռնի փոխանցումը»:

Եւ սակայն Աստծունը Աստծուն տալուց յետոյ իրաւունք չունենք այստեղ կայսրինն էլ չտալ կայսերը, արդարամիտ չլինել գլխաւոր քարտուղարի գիտելիքների պատշաճութեան հարցում եւ նրա ելոյթի մէջ թիւրիմացութիւն որոնել այնտեղ, որտեղ անշուշտ որ քաղաքական-դիւանագիտական անխուսափելի հաշուարկներ էին թաքնուած:

Եւ իրօք, պէտք չէ բացառել մի հաւանականութիւն. այն, որ գլխաւոր քարտուղարը գիտակցաբար է հրաժարուել ցեղասպանութեան վերաբերեալ գիտականօրէն մշակուած եւ հանրայնօրէն ընդունուած ճշգրիտ ու անսխալական տեսակէտից, աւելի շուտ՝ որոշակի միտումով է բացառապէս որպէս ցեղասպանութիւն ընդունել ցեղասպանութեան դասական տարատեսակը, որպէսզի արեան ճապաղիքներով յայտանշուող այդ տարատեսակի դժոխային ետնապատկերի վրայ էլ տարտամացնի Սումկայիթի թուրքավարի-թուրքավայել կոտորածը, կարողանայ այն ներկայացնել որպէս ազգայնօրէն անդէմ հասարակական թափթփուկների եւ ամէն մի կրօնից ու հաւատից զուրկ աւազակների տարերային արարմունք-վայրագութիւններ: Այդ հաւանականութիւնը յուշող մի կարեւոր կռուան էլ ունենք: Դա Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում գլխաւոր քարտուղարի երկարաշունչ ճառի հետեւեալ հատուածն է. «Երբ իրավիճակը սկսեց բարդանալ, եւ մենք տեսանք, որ կանգնած ենք ծանր փորձութեան, նոյնիսկ արիւնայեղութեան առջեւ, միլիցիայի ուժեր եւ զօրքեր մտցրինք իրավիճակը վերահսկելու համար: Մենք գտել ենք եւ գտնում ենք, որ դա մեր պարտքն է՝ կենտրոնական կառավարութեան, կենտրոնական իշխանութեան պարտքը եւ տեսէք, թէ մենք որքան իրաւացի էինք: Չէ՞ որ բառացիօրէն կէս գիշերուայ չափով, մի քանի ժամով ուշացանք (իսկ այդ ամէնը սկսուեց գիշերը) եւ ամէնը ինչպիսի ողբերգական հետեւանքներ ունեցաւ Սումկայիթում: Ես պէտք է ասեմ. դա մեր ընդհանուր ցաւն է, դա շատ մթագնեց մեր այսօրուայ կեանքը, որ լի է մեծ գաղափարներով, յոյսերով: Դա մենք մարդկայնօրէն ըմբռնում ենք. տեղի ունեցաւ մեծ աղէտ եւ այն յուզեց բոլոր մարդկանց»:

Այս ամբողջ հատուածում ուշագրաւը նախ եւ առաջ այն է, որ գլխաւոր քարտուղարը հրապարակաւ, փաստօրէն մեղքի ամբողջ բաժինը,

այդ թվում եւ թաթարական իշխանութիւնների աւելի քան առաջնային բաժինը վերցնում է իր իսկ ղեկավարած կենտրոնական մոսկովեան իշխանութիւնների վրայ։ Թաթարական-կենտրոնական՝ Բաքուի իշխանութիւններին եւ նրանց սումկայիթեան ներկայացուցիչներին մոռացութեան տալու փաստը ակներեւօրէն մատնում է հակահայկական բռնութիւնների թաթար ատրճանաւորների միջավայրում կանխորոք յղացուած ու կազմակերպուած լինելու վերաբերեալ ամէն մի կասկածի բացառում, ըստ որում նաեւ բացառում՝ մի այլ, ասենք՝ թափթփուկ-աւազակային միջավայրում յղացուած ու կազմակերպուած վայրա-գութիւնների հարցում թաթար ատրճանաւորների մինչեւ իսկ թող-տուութեան, ուրիշ խօսքով կրաւորական քաջալերանքի վերաբերեալ ամէն մի կասկածի։ Եթէ տարպատականեան թաթար ղեկավարութեան մեղսազերծման անուղղակի փորձը տուեալ պահին, երբ հասարակայ-նութիւնը շատ ու շատ զարհուրելի փաստերի տակաւին անտեղեակ էր, ըստ էութեան խարէութիւն լինելով հանդերձ, դեռ ճշմարտութեանը, չեշտենք՝ միայն ու միայն անյայտ մնացող ճշմարտութեանը հրապա-րակայնօրէն ու բացայայտօրէն դէմընթաց գնալ չէր, ապա ոչ միայն մերկապարանոց խարէութիւն, այլեւ արդէն իսկ յայտնի դարձած ճշմարտութեանը հրապարակայնօրէն ու բացայայտօրէն դէմընթաց գնալ էր գլխաւոր քարտուղարի այն պնդումը, որ իբր կենտրոնական իշխա-նութիւնները «բառացիօրէն կէս գիշերուայ չափով, մի քանի ժամով» են ուշացել Սումկայիթ զօրք մտցնելու գործում, քանի որ իրականում զօրքը մտաւորապէս ժամանակին, յամենայն դէպս գլխաւոր քարտուղարի մատնանշած պահից շատ ու շատ առաջ մտցուել էր քաղաք, սակայն հայերին պաշտպանելու ուղղութեամբ է, որ ոչ մի միջոցի չէր ձեռնարկել։ Այլ խօսքով վճռական գործողութիւնների ձեռնարկելու եւ սկզբում հայերի կոտորածը կանխելու, իսկ կոտորածի ծաւալումից յետոյ այն սահմանափակելու հարցում էր պարզապէս ուշացել, եւ ի՛նչ ուշացել՝ պարզապէս ձեռնպահ էր մնացել շուրջ երկու ցերեկ ու մէկ գիշեր։

Եւ իրօք, այսօր դոնէ հայ ժողովուրդն ու Հայաստանի ռուսալեզու թերթերի ընթերցող օտարազգիները քաջ գիտեն, որ սում-կայիթեան նախճիրի հայ զոհերի պաշտօնապէս ընդունուած (այլ իրա-կանում խիստ նուազեցուած) թուաքանակի լուսանցքի վրայ են մնում նրանք, ովքեր կոտորուեցին հենց այն օրուայ՝ Փետրուարի 29-ի ե-րեկոյեան, երբ, ըստ գլխաւոր քարտուղարի, կենտրոնական կառավա-րութիւնն իբր իր «պարտքը» կատարել էր արդէն։ Ի դէպ լենինկրա-տեան «Աւրորա» հանդէսի 1988 թ. հոկտեմբերեան համարում, հրա-պարակագիր Ա. Վասիլեւսկին դառնագոյն հումորով կարծես գլխաւոր քարտուղարին էր այպանելով պատասխանում. «Անգլիացիները երեք օրում հասան Ֆոլկլենդեան կղզիներ։ Գրեթէ նոյնքան ժամանակ պահանջուեց, որ մեր զօրքերը Սումկայիթ հասնէին»։ Ըստ երեւոյթին Վասիլեւսկին ուզում էր ասել. ի՞նչ նշանակութիւն ունի՝ հասե՞լ էին, արդեօք, թէ՝ ոչ, քանի որ նրանց ներկայութիւնը չէր խանգարել դահ-ճական դժոխքին վայել այն տեսարաններին, որոնք նկարագրուած են հրապարակագրի «Ամպ է Լեռներում» ակնարկում։

Ինչքան էլ դառնացի լինի, այնուամենայնիւ պիտի ասել

հետեւեալը․ Յուլիսի 18-ին, Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում, այլ խօսքով արիւնալի դէպքերից 140 օր անց, Խորհրդային Միութեան առաջին անձնաւորութիւնը կա՛մ թիւրիմացութեան մէջ էր, ինչ որ աներեւակայելի է եւ ծաղր կը լինէր խորհրդային իրականութեան գերմիապետական աւանդոյթի հաշւին, կամ էլ ինչ-ինչ նկատառումներով ցանկանում էր թիւրիմացութեան մէջ պահել իր ունկնդիրներին, ինչ որ դժուարըմբռնելի է եւ ծաղր կը լինէր խորհրդային ամբողջ ժողովրդի հաշւին։

Ամէն մի այլ տարբերակ բացառուած լինելով, պարտաւոր ենք պարզացմամբ բացառել նախ երկու տարբերակներից մէկն ու մէկը եւ ուրեմն անմիջապէս հակուելու ենք դէպի գլխաւոր քարտուղարին առաւել պատշաճողը․ այստեղ մի պահ ենթադրելու ենք, որ Մ.Ս. Գորբաչովը խաբէութեան զոհ էր, առնուազն թիւրիմացութեան մէջ էր եւ ուղղակի չգիտէր, որ Սումգայիթում առաւել անմարդկային ոճիրները գործուել են Փետրուարի 28-ի երեկոյեան, յատուկ զօրամասերի ժամանումից ու «միջամտութիւնից» մօտաւորապէս 40 ժամ յետոյ։ Այդ դէպքում պարտաւոր ենք որոնել-գտնել ու ճշգրտօրէն մատնանշել, թէ ո՞վ էր թիւրիմացութեան մէջ գցել գլխաւոր քարտուղարին։ Տարրական տրամաբանութիւնը յուշում է, որ գլխաւոր քարտուղարին թիւրիմացութեան մէջ գցողը չէր կարող լինել այլ ոք, քան՝ Խորհրդային Միութեան Գլխաւոր դատախազութիւնը։ Այս պնդման համար աւելի քան լուրջ հիմք էլ կարծես թէ առկայ է։

Յայտնի է, որ դէպքերից երկուսուկէս ամիս անց, Մայիսի 11-16 Սումգայիթում վերջապէս տեղի ունեցաւ առաջին դատախաղը։ Ադրբէջանական ԽՍՀ Գերագոյն դատարանի քրէական գործերի դատական մարմինը, Գերագոյն դատարանի անդամ Ա.Կ. Կլոկովի նախագահութեամբ, խողովակագլանման գործարանի փականագործ Թալէ Սալեհօղլի Իսմայիլովին մեղաւոր ճանաչեց «զանգուածային անկարգութիւնների անմիջական մասնակցութեան եւ խուլիգանական մղումներից ծանրացուցիչ հանգամանքներում կանխամտածուած սպանութեան համար» (Ադրբէջանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 94-րդ յօդուածի 2-րդ կէտ)։ Մեղաւոր ճանաչեց եւ առնուազն մի հայի՝ 62-ամեայ հիւսն Շահէն Սարգսեանի գանկը ջախջախող այդ հրէշին դատապարտեց 15 տարուայ ազատազրկման, որից միայն 5 տարին նա հաստատապէս պէտք է անցկացնի բանտում․ մնացած 10 տարին կարող է դուրս գալ եւ անցկացնել... ազատ աքսորում։ «Մոսկովսկիէ Նովոսթի» շաբաթաթերթի Մայիսի 22-ի համարում Վ. Լոշակը, դատական նիստի տպաւորութիւններով շարադրած «Սումգայիթի Ողբերգութեան Վերջաբանը» յօդուածում, Սարգսեանի սպանութեան հանգամանքներն այսպէս էր ներկայացնում․ «Մոլեգնած ամբոխի կողմից նա դուրս է շպրտուել իր մեքենայից Սումգայիթի Խաղաղութեան փողոցում, դաժանօրէն ծեծուել է, որի հետեւանքով ստացել է ծնօտոսկրի ճառագայթանման կոտրուածք, կրծքոսկրի եւ վեց կողերի կոտրուածք։ Թալէ Իսմայիլովը ծեծուած, ասֆալտի վրայ նետուած Սարգսեանի գլխին երկու սարսափելի հարուած է հասցրել մետաղաձողով։ Դատական արձանագրութիւնը վաւերացրել է, որ մահը վրայ է հասել գանկուղեղի ծանր

վնասուածքի հետեւանքով... Մահացողին վառել են։ Վկաները պատմել են, որ սպանութիւն գործելիս Իսմայիլովը «ուրախ էր»։

Իսկ ո՞վ էր Իսմայիլովի նման ճիւաղին խնայող դատաւորը՝ Կլոկովը։ Ինքն իր մասին նա «Փրաւտայի թղթակցին (Մայիսի 11-ին) յայտնել է հետեւեալը. «Ծնուել եմ պատերազմից մի տարի յետոյ։ Սովորել եմ գիւղում։ Գործարանում խառատ եմ աշխատել։ Ապա որպէս նաւաստի ծառայել եմ Սեւծովեան նաւատորմում։ Բանակից պահեստ արձակուելուց յետոյ նորից եմ բանուորութիւն արել։ Աւարտել եմ Պաքուի համալսարանը։ Մի քիչ փաստաբան եմ աշխատել։ Այնուհետեւ անցել եմ ժողովրդական դատաւորից մինչեւ ատրպէյճանական հանրապետութեան Գերագոյն դատարանի անդամի ճանապարհը»։

Նախկին բանուոր-նաւաստի դատաւոր Կլոկովի դատավճիռը, ահա, նաեւ այնուհետեւ չգիտես երբ եւ որտեղ կայացած յաջորդ դատավարութիւնների վերաբերեալ պաշտօնական «գաղտնապահութիւնը» եւ ընդհանրապէս սումկայիթեան մարդախողխողներին առանձին-առանձին ու կիսագաղտնի դատելու անամօթութիւնը հայ ժողովրդի պայքարը փոթորկոտ դարձրեցին։ Սակայն Մոսկուայի թէ Պաքուի բարձրաստիճանաւորները ցուցադրաբար քամահրեցին այդ պայքարը։

Առաջին դատավարութիւնից յետոյ անցաւ երեք ամիս։ Եւ ահա Օգոստոսի 20-ին, երբ ընդհանրապէս խորհրդային եւ առանձնապէս հայաստանեան հասարակական կարծիքն անդորրացնելու նպատակով, ԹԱՍՍ-ի նախաձեռնութեամբ մոսկովեան եւ երեւանեան թերթերում կազմակերպուեց Խորհրդային Միութեան գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի մի հարցազրոյցի հրապարակութիւնը, այն նոյն Կատուսեւի, որի կենտրոնական հեռուստատեսութեամբ ելոյթները մի անգամ չէ, որ իրենց անառարկայականութեամբ կատաղանքից կանչացրել էին ունկնդիր հայերին։ Հարցազրոյցի նախաբանում անվայել չնականութեամբ ի լուր ամէնքի հաղորդւում էր, որ «արդէն տեղի են ունեցել դատավարութիւններ, որոնք որոշել են, թէ ո՛վ ինչքան է մեղաւոր, կայացրել են արդարացի դատավճիռներ», սակայն «քննութիւնը դեռ շարունակւում է» եւ «մի խումբ փորձառու քննիչներ, քրէագէտներ, բժիշկներ, հոգեբաններ այժմ գտնւում են Սումկայիթում եւ մանրազնին վերլուծում այն, ինչ տեղի էր ունեցել Փետրուարին»։

Կատուսեւի հարցազրոյցում բազմաթիւ ուղղակի առեղծուածային գլուխ-կոտրուկներ կային։ Առեղծուածների առեղծուածը դեռ այն չէր, որ «Սումկայիթ-դատախազութիւնը շարունակում է հետաքննութիւնը» հարցազրոյցային յօդուածի ռուսերէն բնագրի մոսկովեան «Իզվեստիայում (Օգոստոսի 20, համար 233) եւ երեւանեան «Կոմունիստում (Օգոստոսի 20, համար 198, նոյնը հայերէն՝ «Սովետական Հայաստան», Օգոստոսի 20, համար 200) լոյս տեսած տարբերակներն զգալիօրէն շեղւում էին միմեանցից։ Երեւան փոխանցըւած տարբերակում զգալի տեղ էր յատկացուած Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնների եւ Սումկայիթի արիւնալի չարագործութեան պատճառահետեւանքային կապին։ Հայ ժողովրդի խորհրդային ժամանակաշրջանի ազնուագոյն շարժման համար խիստ վիրաւորական,

հետեւաբար եւ հասկանալի զայրոյթ առաջացնող այդ ճամարտակութիւնն ասես գիտամամբ պարտադրուել էր հայաստանեան մամուլին, մինչդեռ «Իզվեստիա»յի ընթերցողները փափկանկատօրէն նրանից զերծ էին պահուել: Եթէ հարցազրոյցի ակունքների մօտ տարրական բարեմտութիւն առկայ լինէր, ապա պարոն Կատուսեւի գրասենեակը հոգ տարած կը լինէր, որ խնդրոյ առարկայ հակահայկական դատողութիւնները տեղ չգտնէին հայ ընթերցողներին հասցէագրուած տարբերակում: Նշանակում է, որ կա՛մ գլխաւոր դատախազի օգնականն ու նրա դիւանը, կամ էլ հարցազրոյցը կազմակերպողներն ու հրապարակողները՝ ԹԱՍՍ-ի երդուեալ հայատեաց ղեկավարը, հենց իր՝ Կատուսեւի գիտութեամբ կամ անգիտութեամբ, հետապնդել էին հայ ժողովրդին աչքերից դուրս հանելու նպատակ:

Եւ իրօք, մեծ վարպետութեամբ համակարգուած հարցն ու պատասխանը հայաստանեան տարբերակում այսպիսին էին.

«— Ձեր կարծիքով, ի՞նչը նախորդեց Սումկայիթի իրադարձութիւններին: Դրանք առնչւո՞ւմ են արդեօք Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնների հետ:

— Անկասկած, այն, ինչ տեղի ունեցաւ Սումկայիթում, շատ սերտօրէն կապուած է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձութիւնների հետ: Փետրուարի 22-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում սկսուած անկարգութիւնները (այլ խօսքով աղդամցի թաթար գրոհայինների դիմագրաւումը ասկերանցի հայերի կողմից,- Ե.Ն.), որոնք հրահրուել էին ազգայնական տրամադրութիւններ ունեցող տարրերի կողմից, շիկացրին մթնոլորտը Սումկայիթում, որը Ադրպէյճանի ամենախոշոր արդիւնաբերական կենտրոններից մէկն է: Հիմա մենք ստոյգ պարզել ենք, որ քաղաքում խժդժութիւնները սանձազերծել էին խուլիգան տարրերը, օգտուելով ծայրաստիճան լարուած իրադրութիւնից, յոյզերի ու կրքերի բորբոքումից, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ-ի մէջ մտցնելու պահանջների առնչութեամբ ամէն կարգի յերիւրանքներից: Հակաիրաւական գործողութիւնների մէջ ներքաշուած են եղել անկայուն, ոչ հասուն մարդիկ, դեռահասներ»:

Ուշադրութիւն ենք հրաւիրում Կատուսեւի պատասխանի վերջին պարբերութեան վրայ, որն սկսում է «Հիմա ՄԵՆՔ ստոյգ պարզել ԵՆՔ» բառերով: «Հիմա»՝ այսինքն Օգոստոսի կէսերին, «ՄԵՆՔ»՝ այսինքն խորհրդային Գլխաւոր դատախազութիւնը: Այժմ ընթերցենք Մարտ ամսի կէսերին Ադրպէյճանի Կենտրոնական կոմիտէի ընդունած որոշման ստորեւ մէջբերուող հատուածը, որը ադրպէյճանական եւ հայկական հանրապետական թերթերում լոյս է տեսել Մարտի 20-ին. «Մի խումբ խուլիգան տարրեր Սումկայիթում անկարգութիւններ հրահրեցին: Հակաիրաւական գործողութիւնների մէջ ներքաշուեցին անկայուն, ոչ հասուն մարդիկ, որոնք ընկել էին ստայօդ լուրերի, հրահրիչ զրոյցների ազդեցութեան տակ: Օգտուելով յոյզերի մոլեգնման մթնոլորտից, քրէական տարրերը կատարեցին աւազակային գործողութիւններ, որոնք յանգեցրին մարդկային զոհերի, որոնց թւում կան տարբեր ազգութիւնների պատկանող անձինք»:

Այս երկու հատուածներն ընթերցելուց յետոյ եկէք հարց

յուանք գլխաւոր դատախազի առաջին տեղակալին·

— Չէ՞ք կարծում, երբ յաւակնում էք «Հիմա», այն էլ «առոյգ» պարզած լինել այն, ինչ Թաթարական կենտրոնը հինգ ամիս առաջ պարզել եւ ի լուր աշխարհի հաղորդել էր։ Չէ՞ք կարծում, երբ «Հիմա» բառով «Թարմացնում» էք Թաթարական որոշման հնգամսեայ հնութեամբ գործունէութիւնները, որոնք նոյնութեամբ արտագրել էք։

Հարց չտանք, քանի որ պատասխանը պարզից էլ պարզ է. Կատուսեւն այն մարդն է, որ յաչս հայ ժողովրդի առաւելագոյնս վարկաբեկեց խորհրդային Գլխաւոր դատախազութիւնը՝ բերանից բաց յայտնելով Թաթարական փողը, մինչեւ վերջ եղծել-կեղծել-ենթափոխելով իրականութիւնը յանուն այն բանի, որ յագեցնի իր Թաթարամոլութիւնը։ Եւ, այստեղ էլ, Թութակի նման կրկնելով Պաքուի որոշման գործունէութիւնները, միաժամանակ հանդէս է գալիս Թաթարից աւելի Թաթարական.– Պաքուն ասում է՝ «ստայօդ լուր» եւ «հրահրիչ զրոյց» էր արցախահայութեան վերաբերեալ տարաձայնուածը, իսկ Կատուսեւն ասում է՝ ո՛չ, ամէն ինչ ճիշտ էր արցախահայ «ազգայնականութեան» վերաբերեալ հաստատումներում։

Սակայն, այնուամենայնիւ, մի հարց տանք.– Պաքուի գաղափարակիցներոնի ցեղասպաններն ու Սումգայիթի մարդախողխողները կը կորսուէի՞ն, երբ ունէին Կատուսեւի նման... գերհաւատարիմ քեռի-քիրվա։

Տուեալ դէպքում մեզ համար էականը նոյնիսկ Ղարաբաղ-Սումգայիթ պատճառահետեւանքային կապի վերաբերեալ չարամիտ դատողութիւնը չէ, քանի որ այն Մարտի սկզբներից գարշալուրծ թերթերում որակակորոյս ծամոնի էր վերածուած։ Էականը «Փետրուարեան օրերի խրոնիկան յիշեցնելու» խնդրանքին Կատուսեւի հետեւեալ պատասխանն է. «Փետրուարի 27-ին Վ.Ի. Լենինի հրապարակում հոծ ամբոխ է հաւաքուել, հիմնականում՝ երիտասարդներ։ Սկսել են հնչել հայազգի անձանց վրայ յարձակուելու կոչեր։ Ի հարկէ, նաեւ եղել են բռնի, ֆիզիքական գործողութիւնների դէմ առարկողներ։ Բայց յաղթել են սանձազերծ ճառախօսների ազգայնական լոզունգները։ Երիտասարդների խմբերը քաղաքի տարբեր շրջաններում սկսել են ջարդել խանութների ցուցափեղկերը, ծեծել հայազգի քաղաքացիներին։ Խուլիգանութիւնը դադարեցնելու միլիցիայի աշխատողների պահանջը մնացել է անպատասխան։ Յաջորդ օրը, Փետրուարի 28-ին, իրադարձութիւնները հասել են իրենց գագաթնակէտին։ Հասարակական կարգի խախտումներն առանձնապէս չարամիտ բնոյթ են ընդունել։ Ազրպէյճանցիների խմբերը՝ մահակներով, քարերով, այլ առարկաներով զինուած, սկսել են յարձակուել հայերի թաղամասերի վրայ, բռնութեան դաժան արարքներ կատարել, ոչնչացնել ունեցուածքը։ Ինչպէս յաջողուել է պարզել քննութեան ընթացքում, հրահրիչների մէջ եղել են նաեւ քանիցս դատուած անձինք։ Հետեւանքները յայտնի են. զոհուել է 32 մարդ, այդ թւում 26 հայ։ Տակնուվրայ է արուել մօտ 200 բնակարան, աւերուել ու հրկիզուել է 50-ից աւելի կենցաղային սպասարկման կէտ, վնասուել են մի քանի աւտոպուս եւ ինքնաշարժ։ Սանձարձակ ամբոխը, խանգարելով քաղաքում հասարակական կարգի պահպանութեան ծառայութեանը,

քարկոծել է զինծառայողներին, միլիցիոներներին։ Այդ իրավիճակում զոհուել է վեց ատրպէյճանցի։ Ներքին գործերի մարմինների աւելի քան հարիւր աշխատակիցներ եւ զինուորական ծառայողներ տարբեր աստիճանների ծանրութեան մարմնական վնասուածքներ են ստացել։ Մինչեւ Մարտի 1-ը յաջողուեց կասեցնել անկարգութիւնները։ Իրադարձութիւնների շատ մանրակրկիտ հետաքննութեան շնորհիւ ձերբակալուած են 94 հրահրիչներ ու մասնակիցներ, բոլոր միջոցները ձեռնարկւում են պարզելու յանցաւոր դրսեւորումների պատճառներն ու պայմանները»։

Կատուսեւի կեղծ պատումից պարզւում է, որ հակահայկական բռնութիւնները շղթայազերծուել են Փետրուարի 27-ին եւ իրենց գագաթնակէտին հասել Փետրուարի 28-ին, երբ տեղի են ունեցել հայասպանական բոլոր գործողութիւնները։ Այնուհետեւ սկսուել են «անկարգութիւնները կասեցնելու» միջոցառումները, որոնք Մարտի 1-ին արդէն յաջողութեամբ աւարտուած են եղել։

Գլխաւոր դատախազի առաջին տեղակալը, իրականում, օգոստոսեան իր հարցազրոյցում կոպտօրէն եղծել է ճշմարտութիւնը, քանի որ ներկայումս արդէն հանրայայտ է, որ սումգայիթեան ցեղասպան յանցագործութիւնը՝ ծաւալուել սկսելով Փետրուարի 28-ին, հիմնականում տեղի է ունեցել Փետրուարի 29-ի երեկոյեան եւ հաւանաբար նոյն Փետրուարի 29-ի գիշերն էլ զորքին յաջողուել է առանց ծաւալուն արիւնայեղութեան քաղաքում դրութեան տէրը դառնալ։

Սակայն հենց գլխաւոր դատախազի առաջին տեղակալի պատումի լոյսի ներքոյ էլ միաժամանակ պարզւում է, որ Մ.Ս. Կորպաչովի յայտարարութիւնն էլ չի համապատասխանում ճշմարտութեանը, քանի որ ըստ հարցազրոյցի տուեալների եթէ Փետրուարի 27-ին քաղաքում միայն թաթարական միլիցիան է ներկայ եղել, ապա Փետրուարի 28-ին, երբ հակահայկական բռնութիւնները իբր թէ հասել են իրենց գագաթնակէտին, թաթար ոստիկանների կողքին արդէն իսկ ներկայ են եղել յատուկ առաջադրանքով քաղաք մտցուած զօրամասերը եւ կենտրոնական իշխանութիւններին ենթակայ դրսեկ զօրքն էլ միլիցիայի հետ համատեղ ջանքերով իբր նոյն օրը, աւելի քան հարիւր վիրաւոր տալով եւ սպաննելով վեց թաթարների, ձեռնարկել է «կասեցման»։ Նշանակում է, որ բացարձակապէս իրականութեան չեն համապատասխանում Մ.Ս. Կորպաչովի «կէս գիշերուայ չափով, մի քանի ժամով ուշացանք» խօսքերը, նաեւ նրա այն պնդումը, որ իբր զօրքերի այդպիսի աննշան ուշացման հետեւանքով են արձանագրուել «ողբերգական հետեւանքները»։ Առաւել կարեւորն այն բնական եզրակացութիւնն է, որ Մ.Ս. Կորպաչովի Յուլիսի 18-ի խօսքերը ոչ միայն իրականութեան չէին համապատասխանում, ուրիշ խօսքով թիւրիմացութիւն էին, այլեւ այդ թիւրիմացութիւնն էլ չէր կարող բխած լինել Գլխաւոր դատախազութեան տուեալներից։ Ուրիշ հարց, որ Գլխաւոր դատախազութեան՝ հետաքննութեան գլխին կանգնած միակ իրաւասու եւ պատասխանատու այդ պաշտօնական մարմնի ունեցած անկասկածելիօրէն հաւաստի տուեալներն էլ ստորան Կատուսեւի կողմից հարցազրոյցի ընթացքում ներկայացուել էին խեղաթիւրուած, թիւրիմացութեան տեսք ստացած,

տնտեսական ազատախոհային խորամանկութեամբ ձեւակերպուած, ինչպէ՞ս որ իր տեղում դեռ տեսնելու ենք։

Եթէ եզրակացնելու լինենք, որ գլխաւոր քարտուղարի թիւրիմացութիւնը, հակառակ տարրական տրամաբանութիւնից բխող մեր նախասկզբնական վարկածի, չէր բխում գլխաւոր դատախազի տեղակալի թիւրիմացութիւնից, ապա պարտաւոր ենք նաեւ մի բոլորովին այլ եզրայանգում կատարել. Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում Մ.Ս. Գորբաչովն իր յայտարարութիւնը կատարում էր ոչ թէ այլոց կողմից թիւրիմացութեան մէջ գցուած, այլ՝ ինչ-ինչ նկատառումներով թիւրիմացութեան մէջ էր ուզում գցել իր ունկնդիրներին։

Ինչո՞ւ։ Սա մի հարց է, որն անպատասխան մնալու իրաւունք չունի։

Բնականաբար նախճիրից 140 օր անց, ոչ թէ արդէն հանրայայտ մանրամասնութիւնների անճարակ սրբագրման, այլ՝ նոյնքան հանրայայտ ամբողջական ճշմարտութեան ձախորդ քողարկման պայմաններում չէր կարող խօսք լինել հայ ժողովրդի ջիղերին խնայելու կրեմլեան փափկանկատութեան առաւելի մասին, քանի որ այդ ջղերը հենց կուսակցական-պետական բարձրաստիճանաւորների յամառ եւ անվայելուչ թիւրատացութիւններով արդէն բազմիցս ոզոցուել էին։ Չէր կարող խօսք լինել նաեւ իրենց պատմական նախասկզբնական բնականոն իրավիճակին վերադարձած հայ-թաթարական զոհազահճային փոխյարաբերութիւնները վերստին «եղբայրականացնելու» բարեմիտ եռանդի մասին, որի անմտութեան հետ նաեւ տխմարութիւնը չուրջ եօթանասնամեայ ժամանակահատուածում ամենամեայ վաւերումներով ստուգուած էր։ Վերջապէս, չէր կարող խօսք լինել «վերակառուցման» մեր կարծիքով խիստ սակաւապտուղ ոգորումները տաժանելի փորձերով փոքր ինչ արագընթաց դարձնելու գործի ճանապարհին յանկարծօրէն փլուած ազգամիջեան փոխյարաբերութիւնների աւերակոյտը մասնակիօրէն յարդարելու ցանկութեան մասին, քանի որ արհեստական յարդարման ամէն մի փորձ ներպահում էր առաւել շոնդալից փլուզման սպառնալիք։

Այդ դէպքում ինչի՞ մասին էր խօսքը։

Ոչ թէ մենք, այլ չէզոք մի դիտորդ՝ տնտեսագիտութեան մոսկովեան անուանի դոկտոր Վ. Շէյնիսն է, որ «Դվացատի Վեկ Ի Միր» կենտրոնական ամսագրի 1988 թուի հոկտեմբերեան համարում հարց է տուել. «Մինչեւ հիմա ըմբռնելի պատասխան չի տրուել, թէ ո՞վ պէտք է պատասխան տայ եւ ինչպէ՞ս կարող էր լինել, որ ատրպէյճանական մայրաքաղաքի մօտակայքում ծաւալուած ջարդերի միայն երրորդ օրը վճռական միջոցներ ձեռնարկուեցին»։

Գերագոյն Խորհրդի նախագահութեան նիստից բազում ամիսներ անց էլ այդ հարցը յամառօրէն տուողը, նշանակում է՝ գլխաւոր քարտուղարի խօսքերի բացարձակ անհաւաստիութիւնը թէկուզ քաղաքավարօրէն, այլ դառնաւարտօրէն շեշտողը Շէյնիսի հետ միասին եղել են տարբեր ազգի խորհրդային շատ ու շատ վաւերականօրէն ազնիւ մտաւորականներ։ Նրանց բոլորի համար մարդկայնօրէն հասկանալի չի եղել ու մինչեւ վերջ էլ հասկանալի չի լինելու այն հարցը, թէ ինչո՞ւ Սում-

կայիթի հայերին Փետրուարի 27-ին օրուայ երկրորդ կէսին ու գիշերին թաթար կուսակցական-կառավարական ղեկավարութեան, նրա մասի շարժմանը շան նման աչալուրջ հետեւող ոստիկանական եւ պետական անվտանգութեան ցեղակից ուժերի, վերջապէս կոմերիտական մերօրեայ սոֆթաների առաջնորդութեամբ գործող ջարդարարների ողորմածութեանը լքած խորհրդային ահաւորապէս մեծազօր եւ պողպատասիրտ զօրքը, մոսկովեան կենտրոնական իշխանութիւններից բացի այլ տէր ու Աստուած չճանաչող այդ զինական բազմազգ հեղեղը. Փետրուարի 28-ին արդէն իսկ Սումկայիթում լինելով հանդերձ, ամբողջ ցերեկն ու ամբողջ գիշերը, նաեւ Փետրուարի 29-ի ամբողջ ցերեկն ու երեկոն հիմնականում անց է կացրել հայերին պաշտպանելու հարցում խստիւ ձեռնածալ, բաւարարուելով տեղում մեխուած կամ ձեւական երթուղարձով «ինքնապաշտպանական» գործողութիւններ վարելով։ Եւ կարո՞ղ էր մարդկային ուղեղին հասկանալի լինել այն իրողութիւնը, որ ցանկութեան դէպքում եւրոպական ցանկացած երկրի, օրինակ՝ Հունգարիայի, յատկապէս Չեխոսլովակիայի մի ծայրից միւսը տրորելով կարող, սումկայիթեան թաթար խուժանից հազարապատիկ հոծամբոխ եւ հարիւրապատիկ սրտոտ ու հարիւրապատիկ էլ լաւ կազմակերպուած ու զինուած ապստամբներին մի գիշերում ջախջախող խորհրդային միեւնոյն զնդերը երկու ցերեկ ու մէկուկէս գիշեր ի վիճակի չեն եղել սանձահարելու տորպատականեան մարդակերպ ճիւաղներին, ի բնէ երկչոտ այդ անասնական տականքին, որը սրտապնդւում է միայն ու միայն թուլութեան ի տես։ Վերջին իրողութեանը քաղաքիտակութիւնից չէ՞, միթէ, որ հրամանատարութիւնը կարգադրել է դիմահար չկրակել թէկուզ մէկ փամփուշտ, ըստ որում այնքան խիստ, որ զօրքը չի կրակել նոյնիսկ այն դէպքում, երբ իր աչքերի առաջ ռուս շարքայիններից մէկը ջախջախուած գլխով հոգեվարքի ցնցումների մէջ ընկնելիս է եղել։

Այս պայմաններում ո՞վ կարող է եւ ո՞վ իրաւունք ունի հասկացողութիւն ակնկալել հայորդիներից։

Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նիստում գլխաւոր քարտուղարն ինչո՞ւ համար էր գիտակցաբար քօղածածկում նախ Պաքուի տորպատականեան թաթար ղեկավարների եւ սումկայիթեան տեղական իշխանութիւնների ու նրանց ոստիկանական ուժերի բացայայտ մեղսակցութեան իրողութիւնը, ապա եւ՝ կենտրոնական-մոսկովեան իշխանութիւններին ենթակայ յատուկ զօրամասերի նոյնքան բացայայտ կրաւորականութեամբ հակահայկական բռնութիւններին մեղսակցելու իրողութիւնը։ Փորձենք պատասխանել այդ հարցին, ինչքան էլ դժուարին ու պատասխանատու գործ լինի դա։

Առաջին հարցում գուշակ լինելու կարիք չկայ պնդելու համար, որ Սումկայիթը իրօք էլ արժանի էր գլխաւոր քարտուղարի «մեծ ալէկոծ» որակականին։ Այդ «մեծ ալէկոծը» պարզապէս խորհրդային իշխանութեան ամօթն էր ու խայտառակութիւնը, քանի որ խայտառակ փլուզումն էր այն առասպելի, որ սոցիալիստական հասարակարգին իբր յաջողուել է ցարական Ռուսաստանի ծայրամասային երբեմնի յետամնաց ու կիսաբարբարոս ցեղերին ու ազգութիւններին բարձրացնել քաղաքակիրթ ազգերի մակարդակին, օրինակ ամաչելուց ազերի վերան-

ուանուած թաթարական ցեղերին՝ հայ ժողովրդի մակարդակին։ Դա՝ դեռ ոչինչ. վերջին հաշուով չէ՞ որ հնարաւոր էր փլուզուող առասպելը գէթ մասամբ փրկել փորձել՝ հակահայկական նախճիրը մի կերպ ծուռ հայելու մէջ արտացոլելով ու ներկայացնելով որպէս թրքական տարրերի, պաշտօնական յեղուով ասած՝ «մի խումբ խուլիգանացող տարրերի» ու նրանց ետեւից գնացող սոցիալապէս յեղյեղուկ աղբակոյտի յանցագործութիւն։ Ատրպատականեան թաթարների տեղական, առաւել եւս կենտրոնական ղեկավարութեան մեղսակցութեան վարկածը վտանգաւոր էր ոչ միայն խորհրդային հանրապետութիւններից մէկում համայնավարների «առաջամարտիկային» դերի, այլեւ ընդհանրապէս համայնավար, ուրեմն եւ բազում այլ բարեմասնութիւնների հետ նաեւ միջազգայնական գաղափարներով տոգորուն ղեկավարութեան առկայութեան հեքիաթի որպէս հերքում։ Այդ վարկածի հետ հաշտուել՝ պիտի նշանակէր ընդունել, որ հիմնականում ոչ-թաթար ազգաբնակչութեան, առաջին հերթին տեղի հայութեան գերմարդկային ճիգերով Բաքւում ստեղծուած Կոմունայի ջախջախումից վրդով Խորհրդային Ռուսաստանի կարմիր զօրամասերի կողմից Ատրպէյճանում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, նրա հողատարածքում ոչ մի ըստ էութեան թաթարական խորհրդային-սոցիալիստական վարչակարգ էլ գոյութիւն չի ունեցել, աւելի ճիշտը՝ երեւութապէս այդպիսի վարչակարգը պահպանուել-գոյատեւել է Կրեմլի բռունցքի գերհզօրութեան պայմաններում, այն դէպքում, երբ խորհրդային վարչակարգի ատրպատականեան թաթարութեան միջավայրում սոցիալական-քաղաքացիական լուրջ հիմք եւ ամուր յենարան ունենալն իրականում հեքիաթ է եղել պարզապէս եւ այդ հեքիաթն էլ Սումկայիթում դրսեւորել է ու դեռ ամէն մի պատեհ առիթի պայթիւնով անպայման դրսեւորելու է իր հեքիաթայնութիւնը։

«Ատրպէյճանական քաղաքակիրթ ազգութեան» եւ «ատրպէյճանական համայնավար-միջազգայնական ղեկավարութեան» անգոյութեան իրողութիւնից էլ իւրաքանչիւր խելամիտ մարդու դժուար չի լինի մի հասարակ եզրայանգում կատարել. մարքսիստ տեսաբանները կա՛մ մոլորութեան մէջ են եւ կամ էլ ստում են պնդելով, որ իսկական ցեղասպանութիւնն իբր իմպերիալիզմի դարաշրջանում եւ իմպերիալիզմի պայմաններում է միայն, որ դրսեւորւում է, ընդունելով կանխամտածուած ու կազմակերպուած լայնածաւալ յանցագործութեան բնոյթ, յանցագործութիւն, որը քաղաքական նպատակներով իրականացւում է պետական վարչամեքենայի գլխին կանգնած մարդկանց կողմից։ Ցեղասպանութիւնն այդ բնոյթի եղել է նաեւ մինչիմպերիալիստական ժամանակաշրջանում եւ այդ բնոյթի էլ լինելու է նաեւ ետիմպերիալիստական ժամանակաշրջանում, այդ թւում եւ սոցիալիզմի օրօք։ Ցեղասպանութիւնը որպէս այդպիսին եղել է, կայ եւ լինելու է, քանի դեռ երկրի երեսին կան ժողովուրդներ, որոնց արեան մէջ խլրտում են ցեղասպանութեան առհաւական մանրէները։ Ցեղասպանութիւնը նախ եւ առաջ պայմանաւորուած է այս կամ այն ժողովրդի արեան մէջ խլրտացող գեներով, հրահանգաւորւում է դրանցից։ Գեների առկայութեան-նոյնականութեան պայմաններում մի ցեղասպանութիւն միւսից տարբերւում է միայն ու միայն իր «մակարդակով», այն բանով, թէ արեան մէջ ցեղասպանութեան

ծնիչ մանրէ ունեցող ժողովուրդը «քաղաքակրթական» ի՞նչ մակարդակի վրայ է կանգնած, իր զոհերին յատկապէս սարքուած գազախցիկներո՞ւմ է մոխրացնում, թէ՝ գործարանային պատրաստի հնաոճ հնոցներում կամ մայթերի վրայ, վառելանիւթով ցօղուած փայտաների ներքոյ։ Եթէ մարքսիստական լեզուով խօսելու լինենք, ապա սումգայիթեան ցեղասպանական յանցագործութիւնը պիտի գնահատել որպէս մինչիմպերիալիստական «մակարդակի» ցեղասպանութիւն, «յետամնացածրամակարդակ» ցեղասպանութիւն, ճշտենք՝ թիւրքացեղական բարբարոսական ցեղասպանութիւն։ Եւ հասկանալի է մի հայ լրագրողի գրառումը սումգայիթեան ճիւաղներից Ահմէտովի մոսկովեան դատավարութեան դահլիճում, այն մասին, որ յայտնի են դառնում «հոգին սարսափեցնող փաստեր, որոնք ասես այստեղ են բերուած մէկ ուրիշ, քաղաքակրթութիւնից հեռու գտնուող աշխարհից, վանդալիզմ ու ճիւաղութիւն, որոնք մեզ են հասել ինչ որ հեռաւոր ժամանակներից» («Երեկոյեան Երեւան», Նոյեմբերի 17)։

Նշանակում է՝ ատրպատականեան թաթարութիւնը, որ 1905–1920 թուականներին, ուրիշ խօսքով նոր ժամանակների վերջին ցեղասպանական յանցագործութիւնը գլուխ էր բերում հին ժամանակների մակարդակով, այն մակարդակով, ինչով որ գլուխ էր բերել՝ երբ դեռ մարդկութեանը յայտնի էր որպէս ագգոյունլու եւ ղարագոյունլու ցեղերի վայրենաբարոյ հայակեր խաժամուժ, աւելի պարզ ասած՝ միջնադարեան խուժանական պայմաններում, շուրջ եօթ տասնամեակ սոցիալիստական հասարակարգի ներքոյ ապրելուց յետոյ էլ, 1988 թուին, հակահայկական ցեղասպանական յանցագործութիւնը գլուխ էր բերում այն նոյն մակարդակով, ինչով որ գլուխ էր բերել նախորդ հասարակարգերի ժամանակ։ Սա մի ահազդու իրողութիւն է, որը Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան գլխաւոր քարտուղարը քաջ գիտի (վկայ՝ «անկանխատեսելի հետեւանքների» վերաբերեալ հայ ժողովրդին բազմիցս հասցէագրուած ահաբեկիչ նախազգուշացումը), սակայն գիտակցաբար փորձում է շրջանցել ու անգիտանալ եւ որը հայ ժողովուրդը պարտաւոր է ոչ միայն պարզապէս խորախոր գիտակցել, այլեւ իր գիտակցութեան կենտրոնակէտում որպէս հրաշէկ ահազանգ մեխել-կախել, ուրեմն եւ որոնել կենսականօրէն հրամայական հակաթոյնը։

Եւ մի՞թէ կենսականօրէն հրամայական հակաթոյնի որոնման տաժանելի գործընթացի դրսեւորումները չէին արցախական պահանջատիրական շարժման անապականօրէն հայրենասէր ղեկավարութեան միջավայրում, այդ թւում եւ Երեւանի Ազատութեան հրապարակում ի լուր ամէնքի եւ ոչ երբեք թաքնասացութեամբ հնչած «Բարեկամների թէ թշնամիների անյաւերժութեան» վերաբերեալ եւ այլ համանման՝ հայ ժողովրդի չարակամների կողմից նենգ վարպետութեամբ, սակայն անպայման անճապարարօրէն մատի փաթաթան դարձուած յայտարարութիւնները։ Անճապարարօրէն, քանի որ եթէ որպէս բարեկամ իրօք էլ Ռուսաստանին էր ակնարկւում, ապա որպէս թշնամի խօսքը ո՛չ մի դէպքում Թուրքիային չէր վերաբերում։ Եւ յետոյ ո՞վ է ասել, որ «Ռուսաստանն» անպայման «Կրեմլիջօ եւ ընկերք» ցուցանակով ու

«Օվչարենքօ, Մինիցին եւ ընկերակիցներ» վաճառանիշով հանդէս եկող Ռուսաստանն էր, յետնորդները Դնեպր գետից արեւելք սփռուած այն ուլուսների, որոնք թիւրքական ցեղերի (եօրդների) սերկահոգի գաղնակիցները դարձած, ի տարբերութիւն «իրենց իսկական անունը պահպանած» ուլուսների, հաճոյքով ընդունել էին թիւրքերի կողմից իրենց տրուած «անուն» ու բառացի «հլու հաւատարմութիւն երդուած ֆիրվա» նշանակող անուանումը եւ այն վերածել էին իրենց սեփական էթնիկական անուան: Չէ՞ որ ո՛վ-ո՛վ, հայ ժողովուրդը քաջ գիտի, որ ինչպէս վաղ միջնադարում, այնպէս էլ մեր օրերում Ռուսաստանն ու ռուս ժողովուրդը միայն թիւրքական «եօրդ» ցեղերի «հաւատարիմ ֆիրվա»ները չեն, որ կայ մի երկրորդ Ռուսաստան եւ կան ուրիշ ռուսներ, նրանք, ովքեր ինչպէս վաղ միջնադարում, «պահպանել են իրենց անունը» եւ իսկական անուան հետ նաեւ բազում առաքինութիւններ, այդ թւում եւ ցանկացած ժողովրդին պատիւ բերող հայասիրութեան առաքինութիւնը:

Եւ հայ ժողովուրդը չի կասկածում, որ «իրենց իսկական անունը պահպանած» ուլուս-ռուսները սրտի կսկիծով, բայց անպայման կը հասկանան, որ մինչեւ իսկ անուանափոխուելով թիւրքերի «հաւատարիմ ֆիրվա» դառնալու եւ «անուն» կոչուելու հակուող մերօրեայ ռուսների յամառօրէն յարատեւող թշնամական գործողութիւններից դառնանալով գերլարուած հայորդիներին վերջ ի վերջոյ կարող էր հիմնաւոր ու անգին թուալ մի զուգադիպական միտք. այն, որ նոյնիսկ այն ժամանակ, երբ դեռ զուրկ էր Ե՛ւ Ամերիկայի Միացեալ Նահանգների անվերապահ ու վճռորոշ պաշտպանութիւնից, Ե՛ւ Դիմոնի դեմոնական գերարդիական զէնքերից, Իսրայէլին յաջողւում էր մարդկութեան կողմից ոչ երբեք կոնսենսուսով (միաձայն համախոհութեամբ) իրեն տրուած հողատարածքն ըստ կամս եւ պատմական իրողութիւնների բռնաբարմամբ ընդարձակել ու ընդարձակել, ըստ որում ոչ միայն գերծ մնալով իր իսկ արարքներից առաջացող ցեղասպանութեան ենթարկուելու վտանգից, այլեւ ինքն իսկ ձեռնպահ չմնալով թուաքանակով աւելի քան հազարապատիկ արաբների դէմ բացայայտօրէն ցեղասպանական արարքներից, մինչդեռ հայ ժողովուրդը, խորհրդային մէկ ու միակ ժողովուրդը, որ իր ժամանակին կամովին մի մարդու նման էր յարել ռուսական կողմնորոշմանը, ըստ որում «իրենց իսկական անունը պահպանած ուլուսների» յետնորդ ռուսների կողմնորոշմանը՝ ընդդէմ ուլուսների մի մասի նման իրեն եւս սերկահոգի «անուն» դարձնել փորձող տարպատականեան թաթար թէ անատոլուական թուրք «եօրդ»ների, ոչ միայն չի կարողանում բոլոր ժամանակների եւ բոլոր ժողովուրդների պատմական սկզբնաղբիւրների եւ առաջաւոր մտաւորականների կոնսենսուսով որպէս իրը ճանաչուած, այլ իրենից բռնախլուած հողատարածքների մի պատառիկն իսկ վերստին ձեռք բերել, այլեւ իր օրինական պահանջների մի մասնիկը, միայն մի՛ մասնիկը օրինաւորապէս Գերագոյն Խորհրդի ատեանին ներկայացնելու «մեղքի» համար անօգ ու անպաշտպան կանգնում է մի նոր՝ իր անուամբ «ռուսկայութեան» եւ հաւանաբար չարունակելի ցեղասպանութեան յանցագործութեան դէմ յանդիման: Եւ մի՞թէ գերլարուած հայորդիների համար մահացու մեղքի

համազօր էր «Ինչո՞ւմն է գաղտնիքը» հարցը տալ ու մոռանալ.– Եթէ, ինչպէս պնդում են խորհրդային ըստ էութեան հակասեմական եւ ոչ թէ հակասիոնական «բանգէտներն» իրենք իսկ, գաղտնիքը համաշխարհային սիոնիզմի ֆենոմենալ ամենազօրութեան մէջ է, ապա թո՛ղ կեցցէ միջազգային սիոնիզմը, եթէ այն իր ամբողջ զարշելիութեամբ հանդերձ աւելի է գործուն ու արդիւնաւէտ, քան՝ աշխարհի երկու հզօրագոյն պետութիւններից մէկը հանդիսացող եւ երկուսից առաւել արդարը, աւելին՝ աշխարհում արդարագոյնը լինել յաւակնող Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան գլխին կանգնած համայնավար ղեկավարութեան արդարութեան եւ արժանապատուութեան զգացմունքը, որի իրողականութիւնն իսկ յամառ փաստերի ճնշման ներքոյ թէական է թւում։

Եւ մի՞թէ տարրական արդարութեան իրենց ակնկալիքում չարաչար խաբուելուց եւ իրենց ազգային արժանապատուութեանը մեծազգեցիկ իշխանաւորներից անակնկալելի յամառութեամբ հասցուող վիրաւորանքներից գերլարուած հայորդիներն իրենք են մեղաւոր այն բանի համար, որ խախտուել է մինչեւ իսկ հաւատը «Ջրանցման ժամանակ չի կարելի ձին փոխել» առոյթի իմաստութեան նկատմամբ։ Չէ՞ որ արդարութիւն հայցող, ո՛չ՝ արդարութիւն պահանջող եւ այդ պաշտօնական արդարութեանը, աւա՜ղ, հաստատապէս չհասնելիք սումգայիթեան զոհերի հրկէզ մարմինների ուրուականները, նաեւ աշխարհ մարդակերպ եկած ատրպատականեան թաթար անասունների բացօթեայ խմբական լլկմանը ենթարկուած հայ կանանց հատուցում պահանջող եւ այդ հատուցմանը, թէկուզ ուշացումով, անպայման հասնելիք հեծիւնները հայերիս պատմական յիշողութիւնում զարթնեցնում են հիւսիսային հաւատարմագոյն ենթադրուած վարգաձիու կողմից անցեալ մէկուկէս դարեայ ժամանակաշրջանում, իսկական ցարերի թէ խորհրդային ցարիկների օրօք դաւաճանաբար յաճախ արուած ուշաթափող քացիների արձագանքը, Հայաստանն առանց հայի թողնելու ցանկութեան վերաբերեալ զառանցանքներից մինչեւ հայ միտքն ու մշակոյթը խեղդամահելու գործնական արարքների եւ մինչեւ Արեւելեան Հայաստանի ահաւոր խեղանդամման հաշուին թուրք-թաթարական յորդաների հետ կենակցութեան արձագանքը, որը մեր օրերում առանձնապէս ուժգնանում է Կրեմլի թաթարասէր բոյարներից թէ նրանց ծառայագրուած թաթարավճար գրչակներից հասցուող քացիների յաճախականանալով համարեա ամենօրեայ դառնալու պայմաններում։

Իսկ այդպիսի քացիները, յաճախականանալուց անկախաբար, անմարդկային, նոյնիսկ հակամարդկային որակ ստացան։ Ապացո՞յց է պէտք. խնդրեմ։

Թուրքիայում երկրաշարժ… զոհեր… եւ Կրեմլից հեռագիր Անգարա. «Խնդրում ենք ընդունել մեր ցաւակցութիւնները ձեզ եւ զոհերի հարազատներին»։ Հնդկաստանում երկաթուղային կամ նաւային աղէտ… զոհեր… եւ Կրեմլից հեռագիր Նոր Տելհի. «Խնդրում ենք ընդունել…»։ Հարաւսլաւիայում կամ Լեհաստանում ածխահանքի պայթիւն… զոհեր… եւ Կրեմլից հեռագիր. «Խնդրում ենք…»։ Սուդանում կամ Չինաստանում ջրհեղեղ… զոհեր… եւ Կրեմլից հեռագիր։

Նոյնիսկ մեզ մոտ, Խորհրդային Միութիւնում ինքնաթիռի ջախջախում, շոգենաւի ընկղմում, գնացքի խորտակում ու զոհեր... եւ Կրեմլից պաշտօնական յայտարարութիւն. «Ցաւակցում ենք հարազատներին»։

Ինչքա՜ն բնական ու մարդկային, ինչքա՜ն ազնիւ ու յուզիչ են արտասահման թռչող այդ հեռագրերը, որոնք խօսում են մեր մոլորակի ու մարդկութեան միասնութեան, մարդկային ցաւի համամարդկայնութեան մասին, նաեւ՝ մեր երկրի եթերով մէկ տարածուող յայտարարութիւնները, որոնք խորհրդային երկրի իւրաքանչիւր անկեան, խորհրդային ոչ թէ միայն այս կամ այն ժողովրդի, այլ իւրաքանչիւր ընտանիքի կսկիծն ու սուգն անգամ դարձնում են համախորհրդային։

Իսկ Սումկայի՞թը, Մ.Ս. Գորբաչովի բառերով ասած՝ «Մեծ աղէ՞տը», որ «յուզեց բոլոր մարդկանց», ըստ որում, քանի գլխաւոր քարտուղարի ելոյթում չի մասնաւորուած՝ «խորհրդային բոլոր մարդկանց», ապա կարելի է կռահել՝ «աշխարհի բոլոր մարդկանց»։ Ինչո՞ւ Կրեմլի եւ ոչ մի գրասենեակից, ո՛չ համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի, ո՛չ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան, ոչ էլ խորհրդային կառավարութեան դիւանից ոչ մի ցաւակցութիւն չյայտնուեց այդ «մեծ աղէտի» զոհերի հարազատներին, նոյնիսկ հեռախօսային մի զնգոցով Բաքուի ղեկավար սաղիներին չկարգադրուեց՝ գոնէ թաթարական իշխանութիւնների անունից հրապարակել այդպիսի մի ցաւակցական յայտարարութիւն։ Ի՞նչ է, Սումկայիթի հայերը եթէ հեռատեսօրէն հասցրած լինէին իրենց խորհրդային անձնագրերը փոխանակել անգլիականի կամ հնդկականի հետ եւ գնային մարթուելու Բելֆասթում բողոքական կամ Փենճապում սիգխ ծայրայեղականների դանակով, նո՞ր միայն ցաւակցութեան արժանի զոհերի կը վերածուէին։ Եւ կամ, գուցէ, կանխազգալով վտանգը եւ փախչելով թաթարական կեռ դաշոյններից, կացիններից ու քլունգներից, նրանք պէտք է փութային «Ծովակալ Նախիմովի» ուղեւորների կամ Արզամասի պայթիւնի ունկնդիրների շարքը մտնել, որպէսզի իրենց հարազատներին պաշտօնական ցաւակցութեան մխիթարութիւնը պարգեւէին։ Իսկ կարելի՞ է նողկալիից բացի այլ որակական տալ այն փաստին, որ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդն էլ Յունիսի 15-ին, նշանակում է՝ աւելի քան հարիւր օրուայ վարանքից յետոյ, միայն, այն էլ հարկադրեալ, հայ ժողովրդի Ղարաբաղեան շարժման հուժկու ճնշման ներքոյ, համարձակուեց դատապարտել «Սումկայիթ քաղաքում հայ բնակչութեան նկատմամբ կատարուած ոճրագործութիւնները», միաժամանակ հաւաստելով, որ «խոր ցաւակցութիւն է յայտնում զոհուածների ընտանիքներին ու հարազատներին եւ կարեկցում անմեղ տուժածներին»։

Այս պայմաններում բնակա՞ն, թէ՝ արտառոցութիւն համարենք, աւելի շուտ՝ ինչպէ՞ս բնականոն-արտառոցութիւն չհամարենք հետեւեալ իրողութիւնը.- խորհրդային (այդ թւում առաջին հերթին բոլոր հայ, նաեւ զգալի թիւով ռուս ու օտարազգի) պատմաբանների եւ ընդհանրապէս մտաւորական աշխարհի կողմից վաղուց գիտականօրէն որպէս ցեղասպանութիւն հիմնաւորուած ու նոյնիսկ համաժողովրդական ջանքերով յատուկ յուշակոթողով Ծիծեռնակաբերդում յաւերժացուած Հայոց Եղեռնը իր յիսնամեակից սկսած Խորհըր-

գային Հայաստանի մայրաքաղաքում աւելի քան մէկ միլիոն հայերի սգոյ երթին էր արժանանում, ըստ որում այդ երթերին (եւ հոգ չէ թէ շուրջ տասնամեայ յապաղմամբ, այն էլ անկասկած ժողովրդին սիրաշահելու մարմաջից) միախառնւում էին կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարները, սակայն յուշանշման-տօնակատարման իրաւունք ստացաւ միայն 1988 թուի Նոյեմբերի 22-ին, Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի որոշմամբ։ *

Բոլոր դէպքերում պէտք չտարակուսել, որ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նոյեմբերեան նիստում Եղեռնի եւ ցեղասպանութեան հարցերի սեղան բերուելը հերթական արդասիքն էր համահայաստանեան ժողովրդական պայքարի ու ճնշման, այդ թւում Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի գոյութեան եւ գործունէութեան, միաժամանակ անտարակոյս արտացոլելով «Դէմիրճեան-Դալլաքեան-Արզումանեան-Մանդալեան-Մուրատեան եւ ընկերք» անուան ընկերութեան մեղքով խռոված հայրենահայութեան մտքերին ու տրամադրութիւններին վերատիրելու խորհրդահայ ղեկավարների, առաջին հերթին Արտաւազդ արքայի նման անապատային ամայքին իշխելու տհաճ գրութեան մատնուած նոր կուսակցապետի ողորումները։ Թէ չէ՝ անընկալելի ու հաւատալի էլ չէ «Օսմանեան Թուրքիայում հայերի 1915 թուականի ցեղասպանութեան դատապարտման մասին» Որոշում-Օրէնքի ինքնաբուխ ու անհաշուենկատ հաւատաւորութեամբ ընդունումն այն մարդկանց կողմից, որոնք, երկարամեայ գործունէութեան ընթացքում, առաւել հարցում հանդէս են բերել քար անտարբերութիւն, նոյնիսկ հակառակամտութիւն։

Եւ յետոյ մոռանալու բա՞ն են հայոց խորհրդարան լինել յաւակնող Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի 1988 թուի Յունիսի 15-ի պատմական նիստի անվայելուչ այն հարայհրոցն ու հայհոյը, որոնցում նոյն այդ մարդկանց ունքի մէկ ազդանշանով խեղդամահւում Եղեռնը պաշտօնապէս որպէս Ցեղասպանութիւն ճանաչել առաջարկող երեսփոխան Ա.Մ. Կիրակոսեանի հայրենասիրական բողոքում ճառը, որն անշուշտ

---

(*) Ի դէպ, այդ որոշման մասին (եւ հոգ չէ թէ անդէտ մնալով նրա ընդունման ճշգրիտ օրուան եւ այլ էական հանգամանքների հարցում) լիբանանահայութիւնն իմացաւ Էջմիածնի, այլ ոչ թէ ուրիշ պարագաներում այնպէ՛ս չսիրուող Արամէնփրեսի կամ Սփիւռքահայութեան հետ կապի կոմիտէի հաղորդմամբ։ Թռուցիկ նշենք, որ վերջինիս նախագահ Կարլեն Դալլաքեանը, ըստ երեւոյթին արտերկրի հայութեան հաճոյանալու տենդից, «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթի Հոկտեմբերի 5-ի համարում քննադատում էր ԱՄՆ-ի ղեկավարներին այն բանի համար, որ ձախողեցրել են Կոնգրեսում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը։ Կարլեն Դալլաքեանն իրեն հաշիւ չէր տալիս, որ ԱՄՆ-ում փոխադարձաբար կարող էին ոչ թէ սոսկ քննադատել, այլ ուղղակի այպանել ԽՍՀՄ-ի ղեկավարներին այն բանի համար, որ Հայաստանի ներկայացուցիչներին էլ ընդգրկող իրենց Գերագոյն Խորհրդում այդպիսի բանաձեւ քննարկելու մասին երբեւէ չեն մտածել իսկ եւ որ եթէ որեւէ հայ խորհրդարանական խիզախի նման մի բանաձեւ ներկայացնել, ապա նրան կը խարանեն «ծայրայեղական-ազգայնական» պիտակով։ Կարլեն Դալլաքեանն իրեն հաշիւ չէր տալիս, մանաւանդ, որ իր յօդուածի հրապարակման օրերին Հայաստանի Գերագոյն Խորհուրդն իսկ այդպիսի բանաձեւ չէր քննարկել եւ ընդունել, այն էլ առաւելապէս այն բանի հետեւանքով, որ Դէմիրճեանն ու նրա երկարամեայ փոխարքայ ամ՛ն Դալլաքեան եւ ընկերք, ոգի ի բռին խուսափում էին Եղեռնի՝ հայոց հայրենիքում իսկ որպէս ցեղասպանութիւն ճանաչումը։

վարակիչ պիտի լինէր եւ կարող էր յանգեցնել ի վերուստ կանխագծուած սահմանազանցման։

Արդ, այդ ի՞նչ փոխուեց հինգ ամսում՝ Յունիսից Նոյեմբեր։ Պարզ է՝ միայն ու միայն մի բան. Հայաստանում օր-աւուր մթնոլորտի գերլարման եւ ժողովրդական խռովքի ու ճնշման յարաճման համատեքստում՝ Երեւանի «նոր» ղեկավարութեան ընթացիկ ռազմավարութիւնը, տակտիկա՛ն, նաեւ՝ նրա տակտիկական այս կամ այն նախաձեռնութեան ներառմամբ կրեմլեան վերադասների բարեհաճական հասկացողութիւնը։

Մենք հեռու ենք այն մտքից, որ պէտք չէ կարեւորել ու ողջունել կուսակցական-պետական ղեկավարութեան թէկուզ տակտիկական նկատառումներով տրուած՝ ազգային նպատակամղուածութեան պաշտօնական քայլերն ու մանաւանդ որոշումները, ինչպէս ուշագրաւ-տարողունակները, այնպէս էլ նոյնիսկ մանր ու պճեղները եւ կիսատ ու պռատները, եթէ նրանք արձագանգում են կամ ընդառաջում համաժողովրդական-համազգային որեւէ իղձի ու պահանջի, նոյնիսկ եթէ պարզապէս հռչակում-օրինականացնում են ժողովրդի կողմից արդէն իսկ, այլ անպաշտօնապէս նուաճուած համաժողովրդական-համազգային որեւէ ձեռքբերում։ Վերջ ի վերջոյ համաժողովրդական-համազգային ուղղութեան միտող տակտիկական նման քայլերի յաճախականացման ու որոշումների բազմացման քանակական գումարից միայն կարող է աւելի ու աւելի ուրուանկարուել եւ կեանք մտնող սովորոյթ, գուցէ նոյնիսկ բնաւորութիւն դառնալ ազգային-տեղական հարցերում վերադասներից որոշակի հեռաւորութիւն պահպանելու պրակտիկան։ Միայն այդ, մերձբալթեան հանրապետութիւնների ղեկավար շրջաններին հրապուրել սկսած, իսկ մեզանում հեռաւոր հորիզոնում իսկ չերեւակայուող պրակտիկան է, որ թոյլ կը տայ երազել համաժողովրդական-համազգային նպատակամղուածութեան քայլերի բացառիկ-պարագայական եւ տանօրէնական բնոյթից ձերբազատումը, ուրեմն եւ տակտիկայի աստիճանական փոխակերպումը ստրատեգիայի։ Այդ դէպքում եւ միայն ու միայն այդ դէպքում հայ ժողովրդի համար գալիք օրը կը դադարի լինել երէկ եւ կամ, լաւագոյն դէպքում, այսօր։ Այդ դէպքում եւ միայն ու միայն այդ դէպքում հայ ժողովրդի համար գալիք օրերը կը վերածուեն Նոր ժամանակների։

Իսկ Եղեռնի վերաբերեալ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի որոշումն ընդունուեց ոչ թէ յուսացուող Նոր ժամանակներում, այլ՝ չմոռանա՛նք՝ պարզապէս 1988 թուի աշնանը, նշանակում է՝ անպայման ռազմավարական նկատառումներով, հետեւաբար եւ՝ տակտիկայի կանոններից ու պահանջներից թելադրուող նրբին բոլոր խորամանկումների գործով։ Սկսենք թէկուզ այն իրողութիւնից, որ թէ՛ հայ համայնավարների Կենտկոմի սեպտեմբերեան պլենումում, թէ՛ Կենտկոմի եւ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նոյեմբերեան համատեղ նիստում, երբ կանխորոշւում էին հարցի Գերագոյն Խորհրդի նստաշրջանում արծարծման սահմանները, ցեղասպանութեան դատապարտման վերաբերեալ ակնարկ իսկ չկար։

Յամենայն դէպս Նոյեմբերի 22-ին ընդունուած որոշման բնագիրը, որը, հակառակ ընդունուած կարգի, մամուլում ոչ թէ յաջորդ

օրն իսկ, այլ միայն ու միայն հինգ ամիս անց, 1989 թուի Ապրիլի 23-ին (ո՞վ գիտի, այդ ընթացքում գուցէ թէ «վերամշակուելուց» յետոյ) լոյս տեսաւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (ըստ «Զարթօնք»ի Ապրիլի 28-ի համարի հաղորդման), այսպիսին էր.

«Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Օրէնքը Օսմանեան Թուրքիայում (***) հայերի 1915 թուականի ցեղասպանութեան դատապարտման մասին.

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդը որոշում է.

1) Դատապարտելով 1915 թուականին Օսմանեան Թուրքիայում հայերի ցեղասպանութիւնը, որպէս մարդկութեան դէմ ուղղուած ծանրագոյն յանցագործութիւն, Ապրիլի 24-ը յայտարարել հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր։

2) Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Նախագահութեան առաջարկութիւն ներկայացնել հայերի 1915 թուականի ցեղասպանութիւնը ճանաչելու եւ դատապարտելու մասին։

3) Յանձնարարել Հայկական ԽՍՀ Նախարարաց խորհրդին Հայաստանի արհմիութիւնների խորհրդի հետ համատեղ քննութեան առնել եւ լուծել Ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր յայտարարելու հարցը, հանգստեան օրերից մէկը տեղափոխելով այդ օրը։

Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան նախագահ՝ Հ. Ոսկանեան, քարտուղար՝ Ն. Ստեփանեան

Երեւան, 1988 թուականի Նոյեմբերի 22»։

Դժուար չէ նկատել, որ Երեւանի ղեկավարութիւնը, ի տարաժամու, բնականաբար տակտիկական նկատառումներով, դուրս է եկել իր կանխագծման սահմաններից եւ դատապարտել է նաեւ ցեղասպանութիւնը։ Եւ սակայն ցեղասպանութիւնը դատապարտելով հանդերձ, Որոշում-Օրէնքն այնուամենայնիւ չի ստացել ցեղասպանութեան հետ ըստ էութեան նաեւ նրա հետեւանքները, այդ թւում Արեւմտեան Հայաստանի (եւ Կիլիկիայի) բռնախլումն ու Թուրքիայի հանրապետութեան հողատարածքի հետ նոյնականացումը ապօրինի եւ անընդունելի յայտարարող ակտի բնոյթ, ակտ, որը Հայկական ԽՍՀ կառավարութեան համար դառնար դիրքորոշումների ու գործողութիւնների պարտադիր ուղեցոյց եւ որը, տարրական դատողութեամբ իսկ, գերիշխան հանրապետութիւնների միութեան ձեւի ներքոյ մէկ-միասնական պետութիւն հանդիսացող, ուրեմն եւ իր բաղադրամաս Հայկական հանրապետութեան իրողութիւններն էլ հաշուի առնելու պարտաւոր ԽՍՀՄ-ի համար եւս պէտք է նշանակութիւն ունենար։

Այստեղ անհրաժեշտ է մատնանշել ոչ-անկարեւոր երկու «մանրուք»։

Վերեւում ակնարկեցինք, որ Ապրիլի 24-ի վերաբերեալ նոյեմբերեան որոշումը բնաւ էլ յայտանիշը չէր այն բանի, որ «նոր» ղեկավարութեան հետ Նոր ժամանակներն էին թափանցել Հայաստան։ Մեր ակնարկը թելադրուած էր այն համոզմունքից, որ ընդունուած որոշման մոտաւորապէս նոյնատիպ, երկուորեակ եղբօր նման նրանից քիչ բանով տարբերակուող մի որոշում Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը

կարող էր ընդունել «հին»՝ դէմիրճեանական ղեկավարութեան օրօք. 1988 թուին նախորդող շուրջ մէկ տասնեակ աշուններից որեւէ մէկում. ժողովրդի համար թամաշա կազմակերպել սիրող գահընկէց կուսակցապետին սրտամօտ «Ոսկէ Աշուն» արքայահանդէսներից որեւէ մէկի ժամանակ։ Հայկական խորհրդարանը մտաւորապէս նոյնատիպ որոշում կարող էր ընդունել եւ աւելի վաղ, Ա. Քոչինեանի կուսակցապետութեան օրօք, դեռ 1960-ական թուականների վերջերին։ Եթէ արդար լինենք, պէտք պիտի ասենք. ոչ թէ միայն կարող էր, այլեւ պարտաւոր իսկ էր։ Քանզի 1960-ականների երկրորդ կէսին, արդէն, օրացոյցով ըստ օրինի աշխատանքային եղող Ապրիլի 24-ը վեր էր ածուել արձակուրդային օրուայ. հայրենահայութեան մեծամասնութիւնն այդ օր աշխատատեղի չէր ներկայանում ու ոչինչ չէր արտադրում, սակայն աշխատավարձ ստանում էր։ Իսկ փլանային տնտեսութեամբ խորհրդային հասարակարգում, որում ամէն ինչ մինչեւ վերջին կրամն ու սանթիմեթրը իր արժէքի վերջին կոպեկով հաշուառման է ենթակայ, տեսականօրէն աշխատանքային-արտադրողական եղող եւ որպէս այդպիսին էլ գրանցուելով հաշուառման ենթարկուող, իսկ գործնականում անաշխատ-անարտադրողական մնացող Ապրիլի 24-ը բնականաբար պատճառ էր դառնում տարեկան հաշուեկշռի երեւի 0.25 տոկոսի, կամ մի այլ տոկոսի սահմաններում խեղաթիւրման (խորհրդային տնտեսագէտները միայն կարող են ակնարկս ճշգրիտ ձեւակերպել), ինչը որ քրէական օրէնսգրքով պատժելի յանցագործութիւն էր։ Ե՛ւ Քոչինեանը, ե՛ւ Դէմիրճեանը, Ապրիլի 24-ը տօնականացնելուց հրաժարուելիս եւ տնտեսական յանցագործութիւնը չարեաց փոքրագոյնը համարելիս անշուշտ որ ռազմավարական նկատառումներից էին ելնում (Կրեմլում նախագահներ Պոդկոռնին թէ Կրոմիկոն թոյլ չէին տայ փետուրի ծայրով իսկ դիպչել թուրքերի խաթրին, հարեւան թաթարութեան հաւանական վրդովմունքի հարցը կար եւ այլն)։ Իսկ Ցարութիւնեանն, ահա, տօնականացնում էր եւ անկասկած նոյնպէս ելնելով ռազմավարական նկատառումներից։ Իսկ հարցի «սեփական» լուծումը, թէկուզ սոսկ տնտեսական ներքնածալքի պարզաբանումը եւ նախորդ կամ յաջորդ կիրակին աշխատանքային վերածելով ապօրինութիւնը վերացնելը (մի քարով... երկու թռչուն), թո՛ղ այլ հանգամանքներ, բաւական կը լինէր «վերակառուցողական» Կրեմլի հաւանութիւնն ստանալու։

Ոչ-անկարեւոր երկրորդ «մանրուքը» հետեւեալն է։

Հայաստանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի 1988 թուի Սեպտեմբերի 13-ի լիագումար ժողովում կուսակցապետ Ցարութիւնեանը յայտարարում էր. «Մեր հանրապետութեան աշխատաւորները ամէն տարի Ապրիլի 24-ը նշում են որպէս սգոյ օր։ Ըստ երեւոյթին, ժամանակն է քննելու հանրապետութիւնում Ապրիլի 24-ը 1915 թուականի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր պաշտօնապէս յայտարարելու հարցը»։

Ամէն ինչ ասուած էր պարկեշտօրէն. Հայաստանի աշխատաւորները վաղուց են Ապրիլի 24-ը նշում որպէս սգոյ օր, հետեւաբար այդ օր չեն աշխատում եւ ուրեմն երեւի ժամանակն է քննելու այն հարցը, թէ չհաշտուե՞լ, արդեօք, կատարուած իրողութեան հետ եւ պետական որոշ-

ժամը չէ՞ չպաշտօնականացնե՞լ սգոյ օրն ու նրա ոչ-աշխատանքային լինելը։ Այս եւ միայն այս է ասել Հայաստանի նոր կուսակցապետը «ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»ուան մասին։

Նոյեմբերի մօտաւորապէս 10-ին, Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէն եւ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նախագահութիւնը, համատեղ նիստ գումարելով, «Նպատակայարմար գտան ՀԽՍՀ 11-րդ գումարման առաջիկայ 8-րդ նստաշրջանի քննարկմանը առաջարկութիւն մտցնել Ապրիլի 24-ը յայտարարելու 1915 թուականի հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր»։

Այստեղ, արդէն, նրբերանգային տարբերութիւն կայ։ Սակայն կարելի է բարեմտութիւն հանդէս բերել եւ յետին միտք չորոնել, տարբերութիւնը բացատրելով այն իրողութեամբ, որ կուսակցապետի խօսքերից հասկանալիօրէն զեղչուած են սկզբի «մեր Հանրապետութեան աշխատաւորները ամէն տարի Ապրիլի 24-ը նշում են որպէս սգոյ օր» դարձուածքն ու վերջաւորութեան «պաշտօնապէս» բառը։ Բայց ահա ասելիքի տեղիք է տալիս համատեղ որոշումն արձանագրող հաղորդագրութեան այն մասը, որտեղ պարզաբանւում է, թէ ինչի՞ց ելնելով են Կենտրոնական կոմիտէն եւ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնն ընդունել նման որոշում. «Հանրապետութեան աշխատաւորների, աշխատաւորական հաւաքականութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների հաւանութեանն արժանացաւ Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի 1988 թուի սեպտեմբերեան լիագումար ժողովին տրուած զեկուցման մէջ արուած առաջարկութիւնը Ապրիլի 24-ը 1915 թուականի հայերի ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր յայտարարելու մասին»։

Թո՛ղ որ Հայաստանի կուսակցապետը ոչ թէ առաջարկութիւն էր արել Ապրիլի 24-ը «Ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր» յայտարարելու, այլ պարզապէս ասել ու հասկացրել էր հետեւեալը. շուրջ երեք քառորդ դար առաջ հայ ժողովրդի կողմից արդէն իսկ պաշտօնապէս տօնականացուած, ի սփիւռս աշխարհի մինչ եւ ամենուրեք սրբութեամբ նշուած եւ միայն Խորհրդային Հայաստանում (ընդհանրապէս Միութիւնում) խստագոյնս արգելուած (չյիշե՞նք այն փաստը, որ էջմիածնի Մայր Աթոռն իր «Օրացոյց»ում Ապրիլի 24-ը յիշատակել կարենալու համար հարկադրաբար յօրինել էր համաշխարհային երկու պատերազմներում զոհուած հայերի յիշատակի օր) Ապրիլի 24-ը քանի որ վերջին շուրջ քսան տարիներին հայրենահայութեան կողմից այսպէս թէ այնպէս անպաշտօնապէս նշւում է, ապա «ըստ երևույթին ժամանակն է ճանաչելու Հանրապետութիւնում... յիշատակի օր պաշտօնապէս յայտարարելու հարցը»։ «Ըստ երեւոյթին»․ ուրիշ խօսքով՝ ո՛չ ըստ էութեան, ո՛չ անպայման...

Հաղորդագրութեան Կենտրոնական կոմիտէում եւ Գերագոյն Խորհրդում բազմած հեղինակներն իրենց նենգափոխութեան յաջողութեան յոյսը կապել են, ըստ երեւոյթին, այն իրողութեան հետ, որ կուսակցապետի ծաւալուն ելոյթի մէջ կորած-մոլորուած տուեալ տողերը երկու ամիս անց ոչ ոք ճշգրիտ չէր յիշի։ Եւ ուրեմն, ծիծաղելիութիւնից չվախենալու մի երկրորդ ապացոյցը տալով, կուսակցապետի իրենց

կողմից բարեգործուած առաջարկութիւնն էլ յայտարարել են հայրենահայութեան բուռն հաւանութեանն արժանացած, հետեւաբար եւ հայ ժողովրդի խղճերն ու կամքը ներկայացնող Գերագոյն Խորհրդի նիստերին դրուելու արժանի: Մէկ խօսքով, Հայաստանի կառավարող խմբակը, կուսակցապետի գլխաւորութեամբ, դուրս է բերուել Ապրիլի 24-ը ցեղասպանութեան զոհերի յիշատակի օր յայտարարելու գործի նախակարապետը...

Գաղտնիք բացած չենք լինի եթէ յայտնենք, որ հաղորդագրութեան մէջ ճշմարտութիւնը գլխիվայր շրջուած է: Իսկ ճշմարտութիւնն այն է, որ հայրենահայութեան ազնիւ ու քաջարի զաւակները՝ մտաւորականներ, արուեստագէտներ, յառաջադէմ ուսանողներ, նաեւ բանուորներ ու գիւղացիներ եւ այլք, ընդ որում անկուսակցականների հետ նաեւ համարձակ կուսակցականներ, մանաւանդ ասպարէզի ու բարեկեցութեան հարցում ճղճիմ հաշիւները արհամարհող եւ կուսակցական տոյժ ու պատժից չվախեցողները, Հայկական ԽՍՀ խորհրդային իշխանութիւնների ճնշման ու հետապնդումների պայմաններում, բանտին ու աքսորին էլ յանձնառու, նոյնիսկ աշխատանքի թէ ուսման վայրում ղեկավար անձնաւորութիւնների կամայականութիւններին ենթակայ, Հայաստանի համայնավար կուսակցութեան ղեկավարութեան որդեգրած ընթացքի դէմ չուրջ տասնամեակ անդուլ պայքարով են, որպէս նախակարապետներ, նուաճել Ապրիլի 24-ին Հայոց Եղեռնը սգալու եւ Թուրքերի գործած Ցեղասպանութիւնը խարանելու իրաւունքը: Եւ այդ իրաւունքն էլ իրենց անզիջում ու աննահանջ դիրքորոշմամբ 1965 թուին պարտադրել կուսակցական-պետական աւագանուն: Եւ մի՞թէ այդ իրողութեանն քաջատեղեակ չէին Հայաստանի համայնավար կուսակցութեան կենտկոմի քարտուղար Գ. Գալոյեանը, որ նախորդ կուսակցապետի ու նախանախորդի եւ սրա էլ նախորդի օրօք, որպէս հայ ժողովրդի պատմութեան գծով խորհրդատուներից մէկը, իր էլ «ոչ»ով խրախուսում էր պետական-կուսակցական աւագանու ժխտական դիրքորոշումը Եղեռնը ցեղասպանութիւն եւ Ապրիլի 24-ը սգոյ օր յայտարարելու հարցում, նաեւ առաջին քարտուղար Ս. Յարութիւնեանը, որ որպէս կոմերիտմիութեան կենտկոմի առաջին քարտուղար հաւանաբար իր կարմիր թեւկապաւոր ակտիւիստներին չարում էր՝ դիմակայելու սգոյ երթերի շարասիւներին:

Ինչ խօսք, որ կուսակցական-պետական աւագանին, 1970-ական թուականների երկրորդ կէսին, արդէն, ժողովրդական անհագնացող ճնշմանը բռնամիջոցների ճնշմամբ պատասխանելուց ձեռք քաշելու համար ունեցել է ռազմավարական նկատառումներ, որոնց անդրադառնալը յամենայն դէպս, մեր խնդրից դուրս է: Եղեռնի զոհերի յիշատակի յարգման շարժումը նախաձեռնող հայրենահայերը, Ապրիլի 24-ի յուշաթափօրների հրապարակային երթի իրաւունքը, նաեւ Լռութեան րոպէի կարգը պարտադրելուց յետոյ, չարունակել են պայքարը՝ ձեռք բերելու համար նաեւ Եղեռնի զոհերի յիշատակի օրուան տրամաբանօրէն յաջորդելիք քայլերի իրագործումը, սակայն հաստատապէս պահանջելով ոչ այն եւ ոչ այնպէս, ինչը Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը 1988 թուի Նոյեմբերին տակտիկական նկատառումներով եւ անշուշտ տարատեսակ խուսանաւումներից յետոյ, ընդունել է վերջապէս:

Յամենայն դէպս, եթէ Խորհրդային Հայաստանի նոր կուսակցապետը Սեպտեմբերի 13-ին էր վերջապէս յայտարարում, որ «ըստ երեւոյթի ժամանակն է քննելու» Ապրիլի 24-ի տօնակատարման եւ միայն ու միայն տօնակատարման այդ հարցը, ապա, թո՛ղ նախորդ՝ ժողովրդական բազմամեայ պահանջները, նաեւ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի անցած եօթ ամիսների հարցադրումները, կոմիտէն Օգոստոսի 13-ին, ուրեմն Ս. Յարութիւնեանի «ըստ երեւոյթին»ից մի ամիս առաջ, իր «Ղարաբաղեան շարժումը դուրս եկաւ նոր բնագիծ» բազմատիպ յայտարարութեան մէջ մի անգամ եւս շեշտում էր.

«...Հայերի ցեղասպանութիւնը Ադրպէյճանում հնարաւոր դարձաւ այն բանի հետեւանքով, որ ԽՍՀՄ կառավարութիւնն առ այսօր չի ճանաչել 1915 թուականին Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան փաստը։ Հասնել նրան, որ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհուրդը ճանաչի 1915 թուականի ցեղասպանութեան փաստը եւ այն ներկայացնի ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի՝ ճանաչմանը։

Հասնել նրան, որ ԽՍՀՄ Գերագոյն Խորհուրդը ճանաչի.

Ա) 1915 թուականին Արեւմտեան Հայաստանում եւ ընդհանրապէս Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութեան փաստը։

Բ) 1920–1988 թուականներին հայերի ցեղասպանութիւնը Ադրպէյճանի տարածքում, Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւնում եւ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում»։

Հայ ժողովրդի համապարփակ պահանջի մասին պատկերացում տալու համար այստեղ նոյնութեամբ ներկայացնելու ենք «Հայոց համազգային շարժման», ասել է թէ՝ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի 1915 թուականի Ցեղասպանութեան ճանաչման խորհրդի «Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը հայոց իրաւունքների ճանաչումն է» պերճախօս խորագրով Օգոստոսի 19-ի կոչը.

«Ցեղասպանութիւնը միջազգային հանրութեան կողմից ընկալւում եւ դիտւում է որպէս մարդկութեան դէմ կատարուած ծանրագոյն ոճիր։ Դժբախտաբար, չնայած նրան, որ 1948 թուի Դեկտեմբերի 9-ին Միաւորուած Ազգերի Կազմակերպութիւնն ընդունեց «Ցեղասպանութեան յանցագործութեան կանխման եւ նրա համար պատժի մասին» համաձայնագիրը, չնայած նրան, որ յատկապէս վերջին երկու տասնամեակներում 1915 թուի հայոց ցեղասպանութեան հարցը միջազգային զանազան ատեանների քննութեան առարկայ է դարձել, այնուամենայնիւ, առ այսօր այդ ցեղասպանութիւնը միջազգային լայն աստիճանաչափով պաշտօնական ճանաչում չի ստացել։ Ճիշտ է, անցեալ տարի՝ 1987 թուի Յունիսի 18-ին Եւրոպական խորհրդարանը ճանաչեց 1915 թուի հայոց ցեղասպանութեան փաստը, սակայն դա կարելի է գնահատել միայն որպէս առաջին քայլ այդ ցեղասպանութեան միջազգային պաշտօնական ճանաչման ուղղութեամբ։ Հայ ժողովրդի ներկայի եւ ապագայի շահերը պահանջում են, որ այն պաշտօնապէս ճանաչուի Միաւորուած Ազգերի Կազմակերպութեան եւ նրա անդամ երկրների կողմից։

1915 թուի հայոց ցեղասպանութեան միջազգային պաշտօնական ճանաչման հարցի լուծումը, ինչպէս ցոյց են տուել անցեալ տարիները, բախւում է երկու գլխաւոր խոչընդոտների։ Առաջին.

թուրքական կառավարութիւնը եւ նրա հովանաւորները միջազգային ատեաններում ամէն միջոցով աշխատում են ժխտել այդ հարցի դրական լուծումը։ Սա ինքնըստինքեան հասկանալի է. յանցագործութեան հեղինակների ժառանգորդները պատմական ճշմարտութեան եւ արդարութեան հարցերում չեն կարող իրենց նախորդներից հեռու գնացած լինել։ Իսկ նրանց հովանաւորները, որ ամենուրեք խօսում են մարդու իրաւունքների մասին, այս հարցում մի կողմ են դնում ե՛ւ մարդասիրութիւնը, ե՛ւ բարոյականութիւնը, ղեկավարւում են միայն իրենց ռազմավարական շահերով։ Երկրորդ, եւ թերեւս ամենակարեւորը. 1915 թուի հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման հարցը չի դրուել նրա գլխաւոր պահանջատիրոջ՝ հայկական պետութեան կողմից։ Չի դրուել եւ չի դրւում։ Սա ի հարկէ իր պատճառներն ունի, բայց դրանք չեն կարող արդարացնել մանաւորապէս վերջին երեսուն տարիներին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան ղեկավարութեան, մեղմ ասած, տարօրինակ վարքագիծը այս հարցի նկատմամբ։

1922 թուից յետոյ, երբ կազմուեց ԽՍՀ Միութիւնը, կենտրոնական կառավարութիւնը միութենական հանրապետութիւնների շահերը միջազգային ասպարէզում ներկայացնելու իրաւունքը փաստօրէն իրեն վերապահեց։ Շուտով, մեր երկրում հաստատուած ստալինեան բռնակալութեան պայմաններում հայոց ցեղասպանութեան հարցը ոչ միայն մոռացութեան մատնուեց, այլ նրա յիշատակումն իսկ դիտւում էր իբրեւ ազգայնական ծանրագոյն յանցագործութիւն։ Դեռ աւելին. Ստալինն եւ Բերիայի յանցագործ խումբը մտադրուել էր ընդհանրապէս վերացնել հայկական խորհրդանշական պետականութիւնը։ Պարզ է, որ այդ պայմաններում հայոց ցեղասպանութեան հարցը չէր կարող քննութեան առարկայ դառնալ։ Բայց արդէն 1950-ականների վերջից եւ 1960-ականների սկզբից ԽՍՀՄ-ում առաջ եկան քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններ այդ հարցի առաջ քաշման համար։ Սակայն այդ ժամանակներից Հայաստանում իրար յաջորդած ոչ մի ղեկավարութիւն զարմանալի կերպով ԽՍՀՄ-ի բարձրագոյն մարմնի՝ Գերագոյն Խորհրդի առջեւ հարց չի բարձրացրել հայոց ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման վերաբերեալ։ Եւ ինչպէ՞ս կարելի է պահանջել, որ ԽՍՀՄ-ի Գերագոյն խորհուրդը պաշտօնապէս ճանաչի ցեղասպանութիւնը, երբ Հայաստանի Գերագոյն խորհուրդն ինքը դեռ ոչ մի անգամ չի անդրադարձել այդ հարցին։

Ողջ աշխարհին յայտնի է, որ հայ ժողովուրդը Մեծ Եղեռնին յաջորդած տարիներին մշտապէս ձգտել է միջազգային հասարակայնութեան դատին ներկայացնել հայոց ցեղասպանութեան հարցը։ ԽՍՀՄ-ի կազմում առաջին անգամ այդ ձգտումը հնարաւոր եղաւ արտայայտել 1965 թուի Ապրիլի 24-ին, երբ այն ժամանակուայ հայ երիտասարդութիւնն ու մտաւորականութիւնը ցոյցի ելան Հանրապետութեան մայրաքաղաքի փողոցներում՝ նշելով Մեծ Եղեռնի յիսնամեակը։ Դրանով հայրենաբնակ հայ ժողովուրդը բարձրաձայն՝ ի լուր աշխարհի յայտարարեց, որ, չնայած իրեն պարտադրուած լռութեան քաղաքականութեան, ինքը չի հրաժարուել Եղեռնի պահանջատիրոջ իր իրաւունքից։ Շուտով սակայն վրայ հասան բրեժնեւ-սուսլովեան յետադիմութեան եւ լճացման

տարիները։ Եւ եթէ 1965 թուի ապրիլեան ցոյցի մասնակիցները ընդհանուր առմամբ խուսափեցին բռնութիւններից Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի այն ժամանակուայ առաջին քարտուղար Եակով Զարոբեանի անձնական առողջ եւ սկզբունքային դիրքորոշման շնորհիւ, ապա 1966-ից մեր ժողովրդի շահերին հետամուտ մարդկանց նկատմամբ սկսեցին կիրառուել բռնութեան միջոցներ, բանտարկութիւն եւ աքսոր։ Հանրապետութեան ողջ հասարակայնութեան մեծ ջանքերի շնորհիւ միայն յաջողուեց Երեւանում կառուցել Եղեռնի զոհերի յուշարձանը։ Սակայն Եղեռնի տարեդարձներին իշխանութիւնները ամէն կերպ աշխատում էին խոչընդոտել զանգուածային երթերը դէպի յուշարձան։ Եւ, այնուամենայնիւ, իր զոհերի յիշատակը սրբագործելուն եւ իր շահերին հետամուտ մեր ժողովրդի վճռականութիւնը ստիպեց Հայաստանի իշխանութիւններին սկսած 1975-ից մասամբ հրաժարուել բռնութիւնների գործելակերպից եւ կիսապաշտօնական բնոյթ հաղորդել այդ տարեդարձերին։ Դա արտայայտւում էր ապրիլեան տարեդարձի օրերին իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչների Եղեռնի զոհերի յուշարձան կատարած այցելութեամբ եւ լռութեան րոպէի սահմանումով։ Եւ միայն այդքանը։ Մինչեւ այժմ Հայաստանի ղեկավարութեան մտքով իսկ չի անցնում պաշտօնապէս ճանաչել հայոց ցեղասպանութիւնը։ Անտարակոյս դա հետեւանք է Մոսկուայի ոչ քաջալերիչ դիրքի։ Դժուար է ժխտել, որ կենտրոնական իշխանութիւնները, որոնք իրենց վրայ են վերցրել մեր ժողովրդի շահերը արտաքին աշխարհում ներկայացնելու իրաւունքը, անցած վաթսուն տարիների ընթացքում հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան նկատմամբ որդեգրել են անտարբեր եւ ժխտողական դիրք։ Դրա ապացոյցն է այն, որ հայոց ցեղասպանութեան միջազգային պաշտօնական ճանաչման հարցը, որ 1970-ական թուականներից առ այսօր ժամանակ առ ժամանակ դառնում է միջազգային զանազան ատեանների քննութեան առարկայ, դեռ երբեք չի արժանացել ԽՍՀՄ-ի կառավարութեան վճռական պաշտպանութեանը, ինչը որոշակիօրէն պայմանաւորել է այդ հարցի ձախողումը։ Ի հարկէ, վերջին ժամանակներս, կապուած ղարաբաղեան իրադարձութիւնների հետ, կենտրոնական իշխանութիւններն ու մամուլը առանձին դէպքերում «ռեւերանս» են կատարում հայ ժողովրդի առջեւ, ինչպէս օրինակ բարձրաստիճան կուսակցական գործիչների այցելութիւնները Եղեռնի յուշարձան, կամ հեռուստատեսութեամբ հայոց ցեղասպանութեան մասին հակիրճ տեղեկութիւնների հաղորդումը, սակայն, ընդհանուր առմամբ, խորհրդային ղեկավարութիւնը հայոց ցեղասպանութեան հարցի պաշտօնական ընդունումը միշտ էլ ստորադասել է խորհրդային-թուրքական յարաբերութիւնների շահերին։ Սեփական երկրի ժողովուրդներից մէկի շահերի այդպիսի քամահրումը կասկածի տակ է դնում ԽՍՀՄ-ի ժողովուրդների իրաւահաւասարութեան մասին ամենօրեայ պնդումները։

Ելնելով վերոյիշեալից՝ մենք պահանջում ենք.

Ա) Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի առաջիկայ հերթական նստաշրջանի օրակարգի մէջ մտցնել 1915 թուի թուրքական կառավարութեան կողմից կազմա-

կիրարուած Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիայի այլ շրջանների հայ ազգաբնակչութեան զանգուածային կոտորածի, տեղահանութեան եւ աքսորի գործողութիւնները որպէս ցեղասպանութիւն ճանաչելու, Ապրիլի 24-ը սգոյ եւ ոչ աշխատանքային օր հաստատելու հարցերը:

Բ) Հայկական ԽՍՀ-ի Գերագոյն Խորհրդի կողմից պաշտօնական դիմում ներկայացնել ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի Ազգութիւնների խորհրդին, պահանջելով վերջինիցս, որ նա իր հերթական նստաշրջանի օրակարգի մէջ մտցնի 1915 թուի հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու հարցը:

Գ) ՀԽՍՀ-ի եւ ԽՍՀՄ-ի կառավարութիւնների կողմից պաշտօնական դիմում ներկայացնել Միաւորուած Ազգերի Կազմակերպութեանը՝ 1915 թուի հայոց ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչելու պահանջով»:

Դժուար չէ նկատել, որ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի նոյեմբերեան որոշումը ամբողջովին այն չէր, ինչ պահանջում էր հայ ժողովուրդը: Բոլոր դէպքերում, ընդունելով հանդերձ, որ իրադարձութիւն էր համր ու մունջի բերանից թէկուզ կակազանքով արտաբերուած անհրաժեշտ կիսաքառը, հարց տանք նաեւ. արժի՞, արդեօք, ձեռք բերուած սակաւով փոքր ինչ մխիթարուել ու հրճուել, գոնէ՝ այն համարել տեւական: Հազիւ թէ: Նախ՝ ոչ թէ միայն Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութիւնը, այլեւ Նախարարաց խորհուրդն իսկ ցանկացած պահի կարող է Ապրիլի 24-ը վերստին աշխատանքային օր յայտարարել: Այնուհետեւ չմոռանանք. դեռ գո՞յ է Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդը, ամենազօ՛րը, որը կարող է, երբ ուզենայ, ի չիք դարձնել երեւանեան որոշումը, որն ընդունող հայ երեսփոխանների խորհրդարանական անձեռնմխելիութիւնն իսկ, ինչպէս ցոյց տուեցին հայոց մայրաքաղաքի դեկտեմբերեան կամայական բռնամիջոցները, պայմանաւորուած է Մոսկուայի կամքով ու քմայքով:

Եւ, վերջապէս, յիշելով յիշենք երկու իրողութիւն:

Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդում Ապրիլի 24-ի տօնակատարման պլպլան փաստաբանի դերով հանդէս են եկել ստալինեան ժամանակաշրջանում ոգեկոչուած եւ բրեժնեւեան ժամանակաշրջանը ճահճի վերածած գործիչներն իրենք, այն մարդիկ, որոնք մինչեւ երէկ, ընդհուպ մինչեւ Դեմիրճեանի իշխանութեան վերջին օրը, հաստատապէս կանգնած են եղել անդունդի հանդիպակաց եզերքին: «Անշուշտ մեզ այսպիսի ուշացումը պատիւ չի բերում»,- Գերագոյն Խորհրդի ամպիոնից իր մեղայականում յայտարարել է երեսփոխան Դալլաքեանը, աւելացնելով. «Աւելի լաւ է ուշ, քան երբեք»: Ո՛չ, պարոնայք, «աւելի ուշը» չի կարող լաւ ու բարին լինել, քանի որ այն ժամանակ, երբ Մոսկուայում ձեր «բարեյուսութեան» առհաւատչեանները բազմացնելու մարմաջից՝ ուղղակի առհաւատչեայ էիք տալիս նաեւ Բաքուին, Ապրիլի 24-ի դէմ ձեր դիրքորոշմամբ աւելի ու աւելի բորբոքուն հայ ժողովրդին եւս առաւել էիք դիրքորոշում ձեր՝ կուսակցական-պետական «մեր» ատագանու դէմ:

Եւ Փետրուարից սկսած մինչեւ Յունիս ձեր ընթացքով անդարմանելի դարձնելով այդ երկփեղկումը, հեշտացրեցիք արցախական պահանջա-

տիրութեանը հասցուած ծանրագոյն հարուածները, որոնց հետեւանքով է երեւանում այսօր այն իրավիճակը, որը տիրում է։ Եթէ այնքան կարիճն էինք, որ Սումկայիթի ցեղասպանութեան հարցում կորպաչովեան տեսակէտը կարող էինք «մի ուրիշ յանցագործութիւն» յայտարարել Նոյեմբերին, ապա որտե՞ղ էինք Յուլիսին, որտե՞ղ՝ Յունիսին, որտե՞ղ՝ նախընթաց ամիսներին...

Այստեղ չենք կարող հարց չտալ.– 1989 թուի Ապրիլի 24-ին որտե՞ղ էին այն արի տղանց մանկունք, որոնք խորհրդահայ ղեկավարներին հրել ու մղելով, նշանակում է՝ քար ու ժայռը շարժելով, նախապատրաստեցին, հասունացրեցին եւ անխուսափելի դարձրեցին Նոյեմբերի 22-ը։ Նրանք բանտի ցուրտ մենախցերում էին, մինչ Ապրիլի 24-ի բազմամասնամեայ երդուեալ հակառակորդները, կոկոզավիզ «տիրոջ» իրաւունքով կանգնած էին Ծիծեռնակաբերդի Յուշակոթողի մօտ...

Ապրիլի 24-ը տօնական-արձակուրդային, այն էլ նախորդ կամ յաջորդ Կիրակի օրուան հաշուին տօնական-արձակուրդային օր է յայտարարուել այն մարդկանց նախաձեռնութեամբ, ովքեր աշխարհում նուազագոյն ազատ օրեր ունեցող խորհրդային ժողովուրդներից մէկին՝ հայրենահայութեանը, շուրջ եօթանասուն տարի զլացել են տալ թէկուզ մէկ ազգային տօնական-արձակուրդային օր. չէ՞ որ Խորհրդային Հայաստանում տօնական-արձակուրդային օր չէ նոյնիսկ... Նոյեմբերի 29-ը, հայ ժողովրդի համար իրօք շատ մեծ խորհուրդ պարունակող այն օրը, որի «խորհուրդը» բոլորովին այլ է ու այլապէս մեծ Ապրիլի 24-ի սիրահարներ դարձած շատ բարձրաստիճանաւորների համար։ Չէ՞ որ նրանք իշխանիկներ են ու իշխանավարի, աւելի ճիշտը՝ սատրապետավարի ապրում են՝ շնորհիւ... Նոյեմբերի 29-ի։

Նշանակում է՝ Ապրիլի 24-ի տօնականացումը կրկնակի արժէք է ստանում։

Դա՝ մարտնչող հայրենահայութեան համար հպարտանքի առիթ է, նաեւ քաջալերիչ՝ նոր նուաճումների համար պայքարի ճանապարհին։

Բայց եւ, միաժամանակ, դա մտորումների ծնիչ է ու սնիչ, ուրեմն եւ սթափութեան խթան...

## Երրորդ պրակ

- ԱՀՄԵՏՈՎԻ ՄԱՀԱՎՃՌԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
- ՍՈՒՄԿԱՅԻԹԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԱՆԻՑ ՓՐԿԵԼՈՒ ՈԳՈՐՈՒՄՆԵՐԸ
- ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՕՐԷՆՍԳԷՏՆԵՐԻ ՈԳՈՐՄԱՆ ԱՆԽՈՍՏՈՎԱՆԵԼԻ ՆԵՐՔՆԱԾԱԼՔԸ
- ՄՈՍԿՈՒԱՆ ԹԱԹԱՐՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ Է «ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ» ՎԵՐԱԾԵԼ «ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ» ԽՌՈՎՔԻ
- ԳԼԽԱՒՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹԵԱՆ ԱՉՔԱԿԱՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅՕԳՈՒՏ ՑԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ
- ԻՇԽԱՆԱՒՈՐՆԵՐԻ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՕՐՔԻ ԴԵՐԸ ՍՈՒՄԿԱՅԻԹՈՒՄ

Զօն՝

Հայոց նոր վկաներին, Սումկայիթի անուն առ անուն յայտնի, բայց եւ-թուահամարով տասնապատիկ՝ անյայտ ու անշիրիմ մեր զոհերին, որոնք մի անգամ եւս յիշեցնում են ու ազդարարում. Եղեռն է նաեւ Արեւելեան կողմն աշխարհիս...

# ՈՐՊԷՍ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ՊՐԱԿԻՍ

1988 թուի Նոյեմբերի 18-ին, Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի քրէական ատեանը պատժի առաւելագոյն չափի՝ գնդակահարութեան դատապարտեց Ահմէտ Իմանիշօղլի Ահմէտովին, սումկայիթեան ցեղասպանների յորդայի՝ նողկալի նկատառումներով լոկ փոքրամասնութեամբ, ու դժկամութեա՛մբ, կալանքի տակ առնուած (մեծամասնութեամբ ի՛սկ չբացայայտուած) ենիչերիներից մէկին։ Կալանաւորուած փոքրամասնութեան կարծես թէ ակամայ հրապարակայնացուած սակաւաթիւ եղեռնագործների ամենազարշելին՝ Ահմէտովը, եղել էր ղեկավարն ու գլխաւոր կատարող-մասնակիցը սումկայիթեան ոճրերգութեան առ այժմ յայտնի դրուագներից առաւել քստմնելիի՝ «Քառասունմէկ—Ա թաղամասում եօթ հայերի գազանավարի սպանութեան ու հրկիզման։ Նրա եւ փափկանկատօրէն խնայուած նրա վերադաների թէ դաշնաւորուած ղղիրզով դաժանի տրուած սորարաղաների զոհերը՝ Արտաշէս Առաքելեանը, Միքայէլ Համբարձումեանը, Սողոմոն Մելքումեանն ու կողակիցը՝ Ռաիսան, եւ նրանց երեք երիտասարդ զաւակները՝ Իգորը, Եդուարդն ու Իրինան, իրենց ազգային-կրօնական պատկանելիութեան համար այս բազմամեայ աշխարհում 1988 թուին մահացուած մարդկանց չարքում որպէս դաժանագոյն Գողգոթան բարձրացած նահատակներ, ամենայն իրաւամբ եւ արդարութեամբ պէտք է արժանագրուեն Հայաստանեայց եկեղեցու, նշանակում է՝ հայ ժողովրդի նոր վկաների դասում։

Թւում է՝ Նոյեմբերի 18-ին Արդարութիւնը, վերջապէ՛ս, ընկաւ դէպի յաղթանակ տանող կածանի վրայ ու եռադարձ քայլ էր կատարի, արդարացի պատիժն անպայման ի կատար կ'ածուի։ Ալիեւի մաֆիային իր ամբողջ գանձարանով եւ Վեզիրովի կուսակցական-պետական գործարար համքարութեանն իր բոլոր լծակներով, այդ թւում՝ Կրեմլի չուրջ հիւսուած թիւրք-թաթարական լայնացանց ու խորարմատ հլոպգինով, չի յաջողուի Գերագոյն Խորհրդի եսկրոմիքայական Նախագահութիւնից մահապարտի համար թողութիւն կորզել։

Հարկ է, սակայն, անպայման չեշտել, որ Պաքուի գաղափարակեդրոնի հայասպանական դաւադրութեան սումկայիթեան կատարածուների վոհմակի երկրորդակարգ չնիկ, կուսակցապետ Մուսլիմզադէի եւ ոստիկանապետ Ճաֆարովի տիպի գամփռներին ինչքան էլ հլու անսացող եւ աչխոյժ հեռեւող՝ այնուամենայնիւ հաստատապէս հասարակ չնիկ, Ահմէտովը, ըստ էութեան դատախազ յիշեցնող մեկնաբան դատավարութեան գլխաւոր մեղադրեալի, ուրեմն եւ աղմկոտ իրադարձութեան կենտրոնական դէմքի իր հանգամանքով, առաւել եւս դատա-

վճռից յետոյ, վերածուեց խորհրդանիշի։

Ցաւս որքան բարեմիտ, նոյնքան եւ աւելի միամիտ պատկերացումների գերի մնացող հայրենահայերի թէ սփիւռքահայերի որոշակի մի զանգուածի՝ հայասպանութեան խորհրդանիշի, յանձին որի դատուել ու դատապարտուել էր եւ հրացանազարկ էր լինելու թիւրքթաթարական ցեղասպանութեան ոչ միայն Սումկայիթում դրսեւորուած բռնագործութիւնը, այլեւ՝ Բաքուի գաղափարակենտրոնի թէ նրա կառաբածուների հեռագայ արկածախնդրութիւնների ջերմն ու ախորժակը։ Մոլորական այդ պատկերացումը իրականանման աննշան մի հունից գերաճել եւ իրականութիւնն ստուերող հաստաբուն ծառի էր վերածուել արհեստական հողի վրայ, խորհրդային Գլխաւոր դատախազութեան եւ լրատուական կենտրոնական միջոցների վարպետօրէն համակարգուած ապակողմնորոշիչ հաղորդումների ու հրապարակումների, տագնապահարող անորոշութիւնների ու ձգձգումների, նոյնիսկ ընդվզեցուցիչ խեղաթիւրումների ու նենգափոխումների օգնութեամբ։ Անշուշտ, նաեւ, Մոսկուայի ուղղակի (ու Բաքուի թէկուզ անուղղակի) պատուէրին ընդառաջող երեւանեան դիւանատներից զօրաշարժուած խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների հրապարակային նպատակասլաց մտորումների նպաստով։ Ոչ թէ միայն բրեժնեւեան, այլեւ նոյնիսկ շատ աւելի վաղ ժամանակների աւանդոյթի փոքր ինչ, եւ վա՛տ, չսպառուած կրկնօրինակի պայմաններում եւ «բացախօսութեան» անունից հաստատուած նորօրինակ լռութեան մթնոլորտում Ահմէտովի դատավճիռը բարեմիտ-միամիտների համար բնականօրէն ստանալու էր որոտի հնչեղութիւն…

Ցաւս ադրպատականեան թաթար խաւարամիտ ու վայրենաբարոյ խաժամուժի՝ Ահմէտովը վերածուեց ցեղային ու կրօնական նախանձախնդրութեան խորհրդանիշի, «անհաւատ-կեավուրների անպատկառ (կուսակցապետ Վեզիրովի լկտի արտայայտութեամբ՝ «բենամուս») ոտնձգութիւնների» դէմ մղուող սրբազան մարտի խորհրդանիշի, որի, Ադրբէյջանի համար վիրաւորական, գնդակահարութեան պատասխանն են լինելու մի նոր ուխտավայր-դամբարանի կառուցումը եւ վերերկրեայ թէ ընդյատակեայ մոլեկրօն քարոզութեան հակահայկական նպատակամղուածութեան հեռագայ սրումը։

Ի միջի այլոց, անակնկալի պէտք չէ գալ, բնաւ, եթէ սրումը չսահմանափակուի քարոզի մարզով եւ արձանագրուի նաեւ գործնական հողի վրայ, Սումկայիթի մանր թէ մեծ տարբերակներով, քանի որ Ահմէտովի մահավճիռը, ինչպէս էլ որ խորհրդային Գերագոյն դատարանի կամքով եւ բազմափորձ դատաւոր Բրիզէի ջանքերով վերածուեց քրէական աննշան անցուդարձի (այն դէպքում, երբ կարող էր ու պարտաւո՛ր էլ էր դառնալ քաղաքական նշանակալից իրադարձութիւն), թաթարական միջավայրում ունենալու է բոլորովին այլ մի անդրադարձ եւս։ Խօսքն այն երկմիտանական կարեւորագոյն նշանակութեան մասին է, որ Ահմէտովի գնդակահարութիւնն անպայման ունենալու է թաթար խաժամուժի գլխին կանգնած Բաքուի գաղափարակենտրոնի բարձրոլորտ դիտանկիւնից։

Այն, նախ, այս կամ այն աստիճանի աղետալի իրողութիւն է լինելու՝ հաւանաբար դառնալով եղեռնագործների վոհմակի հասարակ,

այլ բո՛ւն կեան չնիկների զգայի մի խուին ահաբեկող, հետեւաբար ցեղասպանութեան կատարածուների առաջինկային էլ կենսականօրէն պիտանի եւ արիւնռուշտութիւնը որը ցերեկով դրսեւորելու աստիճան լիովի սանձարձակութիւնն արգելակող ազդակ։

Բանն այն է, որ ի տարբերութիւն դարի առաջին քառորդի ցեղասպան իրենց նախնիների, որոնց շարքերում, Պաքւում լինի թէ Շուշիում կամ այլուր (ինչպէս եւ Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածքում), գերակշռում էին ասպ եւ միջին տարիքի մարդախողողները, դարի վերջին քառորդի թաթար ցեղասպանների հարուածային ոյժը, յատկապէս Սումգայիթում, դարձան հիմնականում կրտսեր սերնդի մարդախողողները, պատանիներն ու երիտասարդները։ Այդ իրողութիւնն այնքան ակնբախ էր, որ խորհրդային դատախազութիւնը, գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի խմբավարութեամբ, մի ամբողջ հեքիաթաձայն յանկերգ յօրինեց Սումգայիթում «դեռահասների» գլխաւոր դերակատարման վերաբերեալ, հեքիաթ, որի ծայր աստիճանի ծիծաղաշարժ տարբերակը քաղաքի զինուորական կոմիսարիատի աշխատակից, պահեստի թաթար սպայ Մուրատովի հեռուեալ «վկայութիւնն» էր Գերագոյն դատարանի առաջ. «Ամբոխը ի՞նչ տարիքի մարդկանցից էր բաղկացած,– հարցնում էք։ Ասեմ. մեծ մասը փոքրիկներ էին, երեք-չորս տարեկան երեխաներ»...։ Բոլոր դէպքերում, եղեռնագործութեան հարուածային ոյժը կազմող պատանիներն ու երիտասարդները, ինչքան էլ որ հակահայկական առհաւական կրքերից եւ մոլեկրօն քարոզից կուրօրէն կայտառացած լինէին, եռման գալու եւ հայի արեան մէջ թաթախուելու աստիճան յորդելու համար կարիքն ունէին եւ մի երրորդ խթանի. հարբեցուցիչ-թմրեցուցիչի։ Ականատեսներից մէկը վկայել է. «Փետրուարի 27-ին կուսակցութեան քաղաքային կոմիտէի շէնքի առջեւի հրապարակում հաւաքի ժամանակ ես տեսայ, թէ ինչպէս մօտեցաւ մի բեռնատար մեքենայ, որտեղից սկսեցին հանել օղիով եւ հաշիշի բռնցքաչափ գնդիկներով լի արկղեր եւ դրանք ձրի բաժանել մարդկանց»։ Եղեռնագործութեանը մասնակցելուց յետոյ տուն գնալով արնաշաղախ ձեռները լուացող եւ հեռուստացոյցի առջեւ նստող, կամ էլ ձայնարկիչը միացնելով ընկերներով թղթախաղի տրուող այդ անասնաբարոյ պատանիներն ու երիտասարդները, մանր ու երկչոտ բորենիներ, ոգելից խմիչքի կամ թմրեցուցիչի ներգործութիւնից սթափուելուց յետոյ «գաղափարական» նոյն կոփուածութիւնը չեն դրսեւորի, անշուշտ, որպէսզի մահապարտ Ահմէտովին դիտապաստ գետին փռող հրաձգութեան արձագանգն արհամարհեն ու հերթական եւ, չենք կասկածում, չուշանալիք առաջին իսկ կոչին վերստին կացինը ձեռք առնեն։

Ահմէտովի մահապատիժը, սակայն, բարձրոլորտ ցեղասպանների համար միաժամանակ եւ բերկրալի հեռանկար ունի. որպէս վերջին հաշուով մոլեկրօն-ցեղապաշտ կրքերը թաթարների խաւար հոգիներում բորբոքող ազդակ, կարող է նպաստել «անկայուն» եւ հեշտութեամբ ահաբեկուող տարրերի փոխարէն (կամ նրանց կողքին՝ որպէս արիացնող գործօն) նոր եւ բուռն ոյժերի, «գաղափարապէս» կոփուած տարրերի անվերապահ համախմբմանը ցարդ իբրեւ համայ-

նավար-խորհրդային իշխանութեան խորհրդանիշ արհամարհուած Բաքուի գաղափարակիցներոնի շուրջ, նշանակում է՝ նախ. դուրս բերմանը թաթար կուսակցական-պետական ղեկավարութեան կանխագծած (եւ ոչ թէ ինքնաբուխ ընտրուած) սրբազան մարտի ցանկացած եռուն տեղամասւ: Թուրքական ռատիոձայների, նոյնքան եւ աւելի Թուրքական պատմագրութեան ու նրա ատրպէյճանական մասնաճիւղ բունիաթովական դպրոցի քարոզով շաղախուած այդ տարրերը, որոնք համաթիւրքական-թուրանական «աշխարհիկ-ազգայնական» կիսամտաւորական երիտասարդութիւնն են կազմում, ի հակադրութիւն եկամտաբեր ասպարէզի ու աթոռների հետամուտ փողապաշտ իրենց սերնդակիցների եւ արեւելեան աւանդոյթով իշխանութեան ու իշխանաւորների առաջ ստորաքարշօրէն կորաքամակ երէցների, «անխառն գաղափարական» են, հետեւաբար՝ անիշխանականօրէն յանդուգն: Թաթարական ցեղային «ազգայնականութեան» աւանդոյթներին հաւատարիմ հետեւորդ, ուրեմն ի բնէ նախ ռուսատեաց, հետեւաբար հակահամայնավար-հակախորհրդային, այդ երիտասարդութիւնն առ այսօր, հակառակ բոլոր երեւոյթներին, իրականում խորշել է ցեղակից կուսակցական-պետական վերնախաւից՝ «ռուսական անհաւատ կայսերականութեան գործակալներից»:

Եւ ահա Սումկայիթը: Իսկ Սումկայիթն արդէն, պէտք չէ մոռանալ, միայն բուն իսկ հայասպան եղեռնագործութիւնը չէր, այլեւ ու մանաւանդ յաջորդող ոդորումները վասն հետաքննական-դատաքննական «գործողութիւնների» բարեյաջող ելքի, յաչս համամիութենական հասարակական կարծիքի թաթարների բարեզարդման, հայութեան եւ առանձնապէս արցախահայութեան վարկաբեկման եւ այլն: Ահա ա՛յդ Սումկայիթը Ահմէտովի մահավճռով վերածւում է խորհրդանիշի: Եւ որպէս խորհրդանիշ էլ իր արարողների՝ կուսակցական-պետական վերնախաւի նկատմամբ «աշխարհիկ-ազգայնական» տարրերի երբեմնի վերապահութեան զգալի թուլացմամբ, եթէ ոչ ի սպառ փարատմամբ, անպայման նշանաւորելու է «համայնավար-խորհրդային» ճամբարի դիմակաւոր-զգուշաւոր համաթիւրքական-թուրանական թաթարութեան եւ «աշխարհիկ-ազգայնական» ճամբարի բացաղէմ-յանդուգն համաթիւրքական-թուրանական թաթարութեան անքակտելի միաշաղախումը:

Որպէս շաղախող օղակ (բացի Զիա Բունիաթովից ու նրա սերնդի միւս ծերակուտական գաղչանքներից, որոնց մասին դեռ շատ է խօսուելու) եւ այն էլ աշխոյժ յարաբերուտուող օղակ, տուեալ դէպքում հանդէս է գալիս Ատրպէյճանի գրողների միութեան առաջին քարտուղար Անարը: Պերճախօս է մոսկովեան «Կոմսոմոլսկայա Պրաւդա»-ի Մարտի 27-ի սա հարցազրոյցը. «Բաքուում ուսանողական հաւաքում ելոյթ ունեցան կուսակցական, խորհրդային կոմերիտական աշխատողներ: Սակայն նրանց ելոյթները ազդեցութիւն չգործեցին: Վիճակը շտկեց հեղինակաւոր մի մարդ՝ բանաստեղծ Անարը: «Թող Անարը խօսի, նրան հաւատում ենք»:

Իսկ Անարն այդ օրերին կա՛մ նոր էր վերադարձել դէպի Անգարա ձգուող իր հերթական ուղեւորութիւնից, կա՛մ պատրաստւում էր դէպի Անգարա իր հերթական ուխտագնացութեան...

«Համայնավար-խորհրդային» եւ «աշխարհիկ-ազգայնական»

համաթիւրքական-թուրանական թաթարական զոյգ համբարների դեռ քանդական թուականներից, չարանուն Նարիմանների արերից, տարբեր պահերի խիստ ակներեւ այդ բնականոն միաշղաղախումը՝ մի կողմից...

...Ու միւս կողմից իրադարձութիւններլ կենտրոնակէտ բացայայտօրէն իինող «աշխարհիկ-ազգայնական» (այլ սուննի հոգեւորականութեան հետ տեւապէս ներդաշն) տարրերի՝ ընթացիկ պահի յահերի թելադրանքով անբնականոն միախառնում-միաւորումը տարարէզում արդէն իսկ յայտնուել սկսած եւ շատ կարճ ժամանակամիջոցում խուռներամ դառնալու գաղտնիքին տիրող «հոգեւոր-արմատական» շիի «ֆունտամենտալիստների» հետ.

Թաթարական խառնամուժի միջավայրում անխուսափելիօրէն քաոս են առաջացնելու։ Քաոս, որում անհնարին է դառնալու նոյնիսկ որոշել, թէ օձագալար ամբողջական-միասնական շրջանակի վերածուած եւ աւերիչ ալեկոծմամբ տեղապտոյտ տուող թաթարական իժի գլուխը որտե՞ղ է, որտե՞ղ՝ իրանը, եւ պոչը՝ որտե՞ղ...

Հակահայկական մոլեկրոն ցեղապաշտական դրդումներից այդ քաոսի նախատարերքը սերմանող թաթար նոր կուսակցապետերը, սկսած Բաղիրովից մինչեւ Ալիեւի ու կրտսեր Բաղիրովի նմանները չարժող իրենց անունով, կարող են վերահսկել քաոսի սկզբնամասը միայն, իսկ այնուհետեւ այն կասեցնելն ապահովաբար նրանց ուժերից գերիվեր անկարելիութիւն է լինելու։ Եւ այդ քաոսում Պարսի գաղափարակենտրոնի մէջ ու միակ, եւ թաթարական միջավայրում համայնավարութեան առկայութեան առասպելի յօդս ցնդման եւ այսօրուայ թաթար բարձրաստիճանաւոր համայնավարների հատուտ դիմակաթափման պայմաններում անկասկած վերջին, բաւականութիւնն է լինելու հայութիւնից բռնախլուած այսրկուրեան, թէ պատմականօրէն աղուանական անդրկուրեան հողատարածքներում հակահայ նոր արիւնահեղութիւնը։

Զենք ցանկանում, եւ մեր կանխագծուած առաջադրանքների շրջանակից դուրս ենք համարում յամենալ լղրծուն մի հարցի վրայ ու մանաւանդ չար գուշակի դեր ստանձնել։ Հարցի համախորհրդային պարունակի վրայ հակուելը Խորհրդային Միութեան կենտրոնական շատ բարձրադիր աստիճանաւորների պարտքն է, թէպէտ եւ, քանի տուեալ հարցում նրանց խորհրդականները եղել ու մնում են պատմութեան դասերի չինիչ չլինելու քողի տակ պատմութիւն չունեցող ցեղերին նպաստաւորելու գործին ծառայագրուած Պրիմակովները, նրանց ճշտատեսութեան հետ յայտնի կապելը ինքնախաբէութիւն կը լինի։ Մեր պարտքը լինելով հակուել հարցի այսրկովկասեան, հիմնականում հայկական պարունակի վրայ, հարկ ենք համարում ասել, որ մեր դատողութեամբ, Ահմէտովի գառավճռի եւ արդարութեան տարրական ակնկալիքից յուշարարուող առաջիկայ եւս մէկ-երկու մահավճիռների խորհրդանշականութիւնը ինչպէս հայութեան, այնպէս էլ թաթարութեան համար, նշանակում է՝ հայ-թաթարական անպայման սահմանափոխելի (այլ բոլոր դէպքերում թէկուզ նոր սահմանի վրայ անխուսափելի) փոխյարաբերութիւնների համար իմաստ կը ստանայ ու բարին կը բերի, եթէ Սումկայիթով դեռ մինչեւ վերջերս անյայտ կորած ենթագրուող իր պապերի հետ պորտակապով վերադզուելուց, դիւրին-եր-

կունքով վերածնուած իր ցեղային-առհաւական աւանդոյթների հետ վերագուցուելուց եւ միջնադարից մինչեւ նորագոյն ժամանակների սկիզբը յարատեւած անպատժելի իր սանձարձակութեան ազատ վերասկզբնաւորումից գերբերքլիտ թաթարութիւնն սկսի փոքր ինչ սթափուել եւ մտորել։

Մտորել ոչ թէ այնպէս, ինչպէս մեծով ու փոքրով մտորում է այսօր՝ միջնադարեան բրածոյ գանկատուփի մէջ խլրտացող քոչուո-րական մտայնութեամբ. նետ ու աղեղով եւ խաթագանով բռնախլուած արօտավայրերը կացին ու դանակով պահել-չայնածաւալելով «հայրենիք» արարել՝ տարբեր յաճախականութեան ու ծաւալի ցեղասպանական բռնարարքներով բնաջնջելով կամ արտագաղթի հարկադրելով տեղաբնիկ ժողովուրդին։

Այդպէս են հրեաները հայրենիք արարել փորձում չուրջ երեք հազարամեակ, այն օրից, երբ Աստուածաշնչում գլուխգովանութեամբ պատմագրուած ցեղասպանական արարքներով ջանացին վերացնել փղշտացի-ֆիլիստիմ-պաղեստինցիներին՝ պաղեստինեան մերօրեայ արաբների նախնիներից մէկին։ Այդպէս են հայրենիք արարել փորձում մէկ էլ թուրքերը չուրջ մէկ հազարամեակ, այն օրից, երբ Ֆաթիհ հռչա-կեցին հայերի, յոյների, պուլկարների, արաբների ու քրդերի կոտորելով՝ նրանց հողատարածքները իւրացնողներին։

Եւ յայտնի է, թէ այդ փորձերում հրեաները, անցնելով քանի՛ անգամ կոտրած տաշտակի առաջ յայտնուած, այսօր յայտնուել են Ինթիֆատայի՝ ժողովրդական պոռթկման հրաբուխի վրայ։ Իսկ վա՞ղը, վաղայաջորդ օ՞րը. Թէ ինչի՞ առաջ են յայտնուելու հրեաները՝ միայն Եհովային է յայտնի, մէկ էլ պաղեստինցի այն արաբներին, որոնք ծնուելու են դեռ...

Եւ յայտնի է, նաեւ, թէ այդ փորձերում ի՞նչ վիճակի մէջ յայտնուեցին (թէկուզ՝ ի՞նչ վիճակի մէջ կարող էին յայտնուել) թուրքերը համաշխարհային առաջին պատերազմի աւարտին, վիճակ, որից նրանց փրկեցին մի կողմից Ռուսաստանի անանկնկալ խորհրդայ-նացումը, միւս կողմից արեւմտեան (ոչ-աննշան չափով հրէական) դրամագլուխների մրցամարտը։ Իսկ վա՞ղը, վաղայաջորդ օ՞րը...

Կարո՞ղ է գողն իր գլուխը հանգիստ դնել բարձին ու գողօնը յաւերժ վայելել՝ ի ցոյց թալանուածների։

Ու հենց այստեղ էլ ծագում է թաթարների համար հրամա-յական անհրաժեշտութիւնը՝ մտորել նորովի. 20-րդ դարավերջի եւ 21-րդ դարասկզբի գո՛յ եւ անպայման գոյատեւելի իրողութիւնների, նաեւ ու մանաւանդ հնարաւորութիւնների եւ հաւանականութիւնների, այդ թւում գիտական-տեխնիկականների հաշուառմամբ։

Սակայն մի՞թէ նոր մտածողութիւն յանձնարարելով շատ ու անկարելի բան չենք ակնկալում կոմերիտմիութեան ու դիւանագիտու-թեան արհեստանոցներում չփայլած եւ իշխանութիւնը, փառքն ու հարստութիւնը կուսակցապետութեան մէջ որոնող Վեզիրովներից. պատմագրական արհեստանոցներում մոլեկրօն խաժամուժի հակահայ-կական կրքերի արտաթորանքը հաւաքելու գործելի գրքանօթներ սարքող Բունիաթովներից, գեղարուեստական խօսքի ասպարէզում թէլիկ եւ

անտառոյական հոգեհարազատ արուների միջավայրում գեղգեղուն Անարներից, հողով փաչկառուն «ժողովրդական բանաստեղծներից», կուսակցական-պետական մարդակեր գործիչներից, միւսներից։

Եւ սակայն թաթարներին մենակ թողնենք իրենց մտորումների հետ եւ հարցը դիտարկենք հայ զանգուածների դիրքերից. թւում է, թէ Սումկայիթի արիւնոտ ցնցումով յանկարծօրէն դէպի ետ, մինչեւ 1915 թուի Եղեռնը շպրտուած եւ իր պատմական յիշողութիւնը կրակների մէջ պահող այրների շարքին սումկայիթեանի յաւելմամբ վերստին հրդեհուած հայ ժողովուրդը, որի անհանգչելի բռնկման ջերմաստիճանի վերահսկումը կարող էր եւ անհնարին դառնալ, եթէ չլինէր Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի որպէս սերունդների սերունդ արժանապրուելիք գործունէութիւնը, մոսկովեան դատավարութիւնից յետոյ, Ահմէտով կոչեցեալ բորենու մահավճռով դէթ մի փշուր արդարութիւն գտած լինելու պատրանքով դոյզն ինչ խաղաղած, կը սկսի թօթափել սումկայիթեան իր անթաղ ու նոյնիսկ անյայտ (եւ խորհրդային թաթարասէր արդարադա՛տների քմայքով նոյնիսկ զոհերի թուաքանակի մէջ չընդգրկուած) նահատակների ուրուականների յաճախանքը։

Բարեբախտաբար (այո՛ ճիշտ ենք գրում-բարեբախտաբար) այս անգամ եւս հայ զանգուածը հիմնականում խուսափեց յուզական թակարդից, գլխի ընկաւ, որ յաղթանակի եւ ուրախութեան ծնծղան թաթարական եուրտ-ում պէտք է հնչի, իսկ հայկական օճախը սրտմութեան հերթական պահն ապրի։

Որովհետեւ, իրականում, մէկ ու միակ՝ Ահմէտովի մահավճռով երեւութապէս արդարութիւնը բաւարարելով, եթէ ճիշտը կ'ուզէք՝ աճպարարօրէն արդարութիւն գործել ձեւացնելով, խորհրդային Գերագոյն դատարանի քրէական դատատեանը Արդարութիւնը ոտքի տակ էր տալիս։

## Ա.

Խորհրդային Միութեան արդարադատական մարմինները ընդհանրապէս, գլխաւոր դատախազութիւնը մասնաւորապէս, առաջին իսկ օրից պատից պատ խփուեցին, որպէսզի սումկայիթեան եղեռնագործութիւնը հնարաւորին չափ հեռու պահէին հայասպանութեան, աւելի պարզորոշ՝ ցեղասպանութեան ոլորտից։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ ցեղասպանութիւնը խորհրդային քրէական կոդեքսով նախատեսուած յանցակազմ չէր, քանի որ իրօք էլ Խորհրդային Միութիւնը, ստորագրած եւ Գերագոյն Խորհրդի 1954 թուի Մայիսի 3-ի որոշմամբ վաւերացրած լինելով հանդերձ 1948 թուի Դեկտեմբերի 9-ի միջազգային համաձայնագիրը, հարկ չէր համարել ներպետական

իր օրէնսդրութեան մէջ մուծել ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն սահմանող յատուկ իրաւանորմ, հանգամանք, որը, ցեղասպանութեան յանցակազմի բոլոր բաղադրամասերի առկայութեան հակառակ, ձեւականօրէն թոյլ չէր տալիս սումկայիթեան եղեռնը կոչել (աւելի շատ հնարաւորութիւն էր տալիս այդ եղեռնը չկոչել) իր իսկական անունով՝ հայերի դէմ ուղղուած ցեղասպանութիւն։

Եւ իրօք, խորհրդային սահմանադրութիւնն ունի մի յօդուած, 36-րդը, որն ասում է. «Քաղաքացիների իրաւունքների որեւէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, ուղղակի կամ անուղղակի առաւելութիւնների սահմանում ըստ ցեղային եւ ազգային յատկանիշների, ինչպէս նաեւ ցեղային կամ ազգային բացառիկութեան, թշնամանքի կամ արհամարհանքի ամէն մի քարոզ պատժւում են օրէնքով»։ Այս յօդուածին համապատասխան էլ միութենական հանրապետութիւնների քրէական օրէնսգրքերը լրացուել են պատշաճ մի յօդուածով (ռուսաստանեանում 74-րդ, հայկականում 69-րդ, ադրբէյջանականում 67-րդ եւ այլն), որը քրէական պատասխանատուութիւն է սահմանում ցեղային եւ ազգային իրաւահաւասարութիւնը խախտելու յանցանքի համար, ըստ որում տուեալ յանցակազմն էլ ընդգրկում է ինչպէս ցեղային կամ ազգային թշնամութիւն կամ պառակտում առաջ բերելու նպատակամղուած տարբեր տիպի քարոզչութիւնը (պրոպագանդա, ագիտացիա), այնպէս էլ ցեղային կամ ազգային պատկանելիութեան հիմամբ քաղաքացիների իրաւունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը եւ ուղղակի կամ անուղղակի առաւելութիւնների սահմանումը։ Ի դէպ, հենց այս յանցակազմի առաջին մասն է, որ Հայաստանի դէմիրճեանական (եւ Ադրբէյճանի բաղիրովեան) ղեկավարները Փետրուար ամսից Դամոկլեան սրի նման ճօճում էին հայ ժողովրդի արցախական պահանջատիրական

յարժման առաջնորդների գլխին, սուր, որն ի վերջոյ, ինչպէս յայտնի է, գործարկուեց յարութիւնեանական (եւ վեզիրովեան) իշխանութիւնների կողմից։

Խորհրդահայ ժամանակում, ահա, ցեղասպանութեան յանցակազմի համար որեւէ մի այլ սահմանադրական յենարանի անգոյութեան պայմաններում, առաջարկութիւններ եղան կառչել սահմանադրութեան 36-րդ յօդուածից, սակայն դրանից բխող քրէական յօդուածը անպայման լրացնելով ցեղապաշտ քարոզի հետ նաեւ ցեղասպանութեան պատժելիութեան վերաբերեալ մի դրոյթով։ Ուրիշ խօսքով գոնէ Երեւանում պարզորոշապէս ընդունուեց, որ իրականում ոչ թէ ցեղասպանութեան վերաբերեալ 1948 թուի համաձայնագրին, այլ՝ ցեղային խտրականութեան վերաբերեալ 1965 թուի պայմանագրին արձագանգող 36-րդ յօդուածում եւս չկար այն, ինչ հրամայականօրէն անհրաժեշտ էր Սումգայիթի վերաբերմամբ, բառ որում անհրաժեշտ էր անմիջականօրէն, հենց տուեալ պահին։ «Երեկոյեան Երեւան» օրաթերթի քաղաքական մեկնաբան Ե. Ցակորեանն, օրինակ, գրում էր. «Այսպէս, ուրեմն, պատժւում է քարոզը։ Իսկ յանցա՞նքը։ Ըստ երեւոյթին ԽՍՀՄ-ում ազգային հարցի վերջնական լուծման պատրանքով շլացած եւ ազգամիջեան յարաբերութիւններում սոսկ եղբայրական ողջագուրանքներ տեսնող «սահմանադրութեան հայրերի» մտքով իսկ չի անցել, թէ սոցիալիզմի պայմաններում հնարաւոր են նաեւ ցեղասպանութեան արարքներ։ ...Այսօր շատ աւելի խոհեմ կը լինի ընդունել չգրուած ճշմարտութիւնը, տալ երեւոյթի ճիշտ գնահատականը, եւ քանի որ դրուած է սահմանադրութիւնը փոփոխելու ու լրացնելու հարցը, 36-րդ յօդուածը լրացնել ազգային, ցեղային, էթնիկական եւ կրօնական հողի վրայ կատարուող յանցագործութիւնների կամ ցեղասպանութեան ոճիրի պատժելիութեան վերաբերեալ դրոյթով եւ նախատեսել դրանից բխող խստագոյն պատիժներ քրէական օրէնսգրքութեան մէջ։ Դժբախտաբար, այն Սումգայիթի գործին չի օգնի, որովհետեւ օրէնքը յետադարձ ուժ չունի»։

«Սումգայիթի գործին օգնելու» անմիջական հնարի անգոյութեան վերաբերեալ միտքը եւ Սումգայիթի եղեռնագործութիւնը անմիջականօրէն որպէս ցեղասպանութիւն գնահատելու ու պատժելու պահանջի անիրականանալիութեան վերաբերեալ քարոզը, որոնք անշուշտ որ պաշտօնական մեկնաբաններին ի վերուստ յանձնարարուած Կառախիզիոից («Թրիստոնէական»ից) էին բխում, մի նպատակ էին հետապնդում. ցեղասպանութեան յանցագործութեան հետ դէմ յանդիման կանգնած խորհրդային արդարադատութեանը՝ թոյլ տալ ազատօրէն ու հանգիստ օգտուել քրէական օրէնսգրքում այդօրինակ յանցակազմի բացակայութեան սողանցքից եւ ս.-անց հայրենահայութեան չլկացած յոյզերը բռնկեցնելու՝ շրջանցել ցեղասպանութեան փաստը։

Խորհրդային արդարադատութիւնն ուզում էր այդ սողանցքից օգտուել ոչ միայն այն պատճառով, որ այն առարկայականօրէն առկայ էր։ Վերջին հաշուով իրաւագէտ լինելու կարիք չկայ պնդելու համար, որ եթէ արդարութիւնը ծայր աստիճանի չահագրգռուած չլինէր թաթարների եղեռնագործութեան իրաւական ու քաղաքական գնահատականի

հնարաւորի առաւելագոյն չափով մեղմացմամբ, ապա համապատասխան յանցակազմի քրէական օրէնսգրքում անգոյութիւնն անյաղթահարելի խոչընդոտ չէր հանդիսանայ սումկայիթեան եղեռնագործութեան հենց ցեղասպանութիւն էլ որակման։ Վերջին հաշուով Գերագոյն դատարանն իրաւասու էր եւ ի վիճակի, ինչպէս որ նախկինում յաճախ էր արել նմանօրինակ իրավիճակներում, արտահերթ մի պլենումով յատուկ որոշում ընդունելու եւ իր սահմանած յանցակազմն էլ օրինական-իրաւական ոյժ կը ստանար։

Խորհրդային արդարադատութիւնն ուզում էր այդ սողանցքից օգտուել՝ որովհետեւ ամենայն հաւանականութեամբ այդպէս էին կամեցել կուսակցական-պետական բարձրաստիճանաւորները, որոնց հեռախօսային ծլնգոցով փոխանցուող կարգադրութիւնը, կենտրոնական մամուլի բոլոր օրգանների խոստովանութեամբ, արդարադատական մարմինների համար վաղուց էր վերածուել երկնային արդարութեան գերհզօր ձայնի, իրողութիւն, որը ինչպէս ստալինեան, այնպէս էլ հետագայ տասնամեակներում խորհրդային պետութիւնը անիրաւապօրէն հասարակարգի վերածող կարեւոր նախադրեալներից մէկն էր եղել։

Սումկայիթն ամէն գնով եւ անպայման ցեղասպանութեան ոլորտից դուրս բերելու կուսակցական-պետական բարձրաստիճանաւորների եռանդը, որում անկարեւոր չէր, անշուշտ, Ալիեւի մաֆիայից սիրաշահուած-վարձատրուողների բաժինը, ընդհանուր առմամբ լռելեայն չքմեղւում էր որպէս խորհրդային հասարակարգի միջազգային վարկն ու հեղինակութիւնը նուազագոյն բիծ ու արատով փրկելու եռանդ։ Վերջինիս հիմնականում պատրուակ ու ծխածածկոյթ լինելու մասին էր վկայում թէկուզ միայն այն փաստը, որ սումկայիթեան հայասպանների յանցագործութիւնը, աղաղակող փաստերի եւ ապառաժն աւազի վերածելու ընդունակ փաստարկներին հակառակ, Նոյի հետ տապան բարձրացած արարածներից համեստագոյնի նախանձը շարժող յամառութեամբ պաշտպանւեց «խուլիգանական դրդումներով ծանրացուցիչ հանգամանքներում կատարուած դիտաւորեալ սպանութիւնների» եւ «զանգուածային անկարգութիւնների» յանցակազմերի շրջանակներում։ Վարդապետն ասաց եւ վե՛րջ...

Ինչո՞ւ խորհրդային արդարադատութեան կողմից, այն էլ հետաքննութեան դեռ վաղագոյն-նախնական փուլում, միանգամընդմիշտ սահմանուեցին այդ յանցակազմերը (ըստ որում «խուլիգանամէտ տարրերի գործողութիւններ» գնահատականը թաթարաւէր բարձրաստիճանաւորների կողմից ի վերուստ կարգադրուել էր դեռ մինչեւ հետաքննութեան ղեկավարների «պաշտօնական» գնահատականը) եւ ինչո՞ւ այնուհետեւ, բազմամսեայ ու համարեա մինչեւ երէկ շարունակուած հետաքննութեան ի յայտ բերած, նաեւ կողմնակի, այլ հաւաստի աղբիւրներից, այդ թւում եւ մամուլից մատուցուած փաստերին ու ապացուցումներին հակառակ, եւ հակառակ նոյնիսկ տարրական տրամաբանութեան, անփոփոխ պահպանուեցին։ Պահպանուեցին որպէս անվերաքննելի բանաձեւեր՝ ինչպէս Հնգամատեանի, Ս. Գրքի կամ Ղուրանի սրբազան պատգամները։ Եթէ փորձենք պատասխանել այդ կարեւոր հար-

ցին, ապա պիտի տեսնենք. պարզապէս այն պատճառով, որ խնդրոյ առարկայ յանցակազմերը այն գլխաւոր լծակներն էին, որոնց օգնութեամբ հնարաւոր էր Սումկայիթեան եղեռնագործութիւնը հեռացնել ցեղասպանութեան վտանգաւոր ոլորտից, վտանգաւոր՝ առաջին հերթին անշուշտ որ քաղաքակիրթ ժողովուրդների մերօրեայ երթին միախառնուած թաթարական ցեղային անկիրթ խաժամուժի անհիմն վարկի ու համբաւի համար, այնուհետեւ վտանգաւոր՝ անշուշտ որ քաղաքակիրթ եւ իրաւական պետութիւնների մերօրեայ համագումարին միախառնուած դեռ սակաւակիրթ եւ ըստ էութեան եթէ ոչ անիրաւական, ապա անպայման թերիրաւ խորհրդային-համայնավար հասարակարգի արհեստականօրէն ունեցուած միջազգային հռչակի ու հեղինակութեան համար:

Մանրանալով վերոյիշեալ երկու յանցակազմերը ցեղասպանութեան վտանգաւոր ոլորտից փախուստ տալու գլխաւոր հնարի վերածելու նկրտումների վրայ, որպէս պարզաբանում մատնացոյց անենք երկու կարեւոր իրողութիւններ:

Առաջին իրողութիւնը հետեւեալն է:

Քրէական օրէնսգրքով եւ Գերագոյն դատարանի պլէնումի որոշումներով խորհրդային իրաւագիտական առօրեայում խուլիգանական դրդումներով կատարուած դիտաւորեալ (կամ կանխամտածուած) սպանութիւն է համարւում այն ոճիրը, որը գործուել է հասարակութեան նկատմամբ բացայայտ անյարգալից վերաբերմունքի, համակեցութեան կանոնների եւ սոցիալիստական բարոյականութեան նորմերի նկատմամբ արհամարհանքի հողի վրայ, առկայն առանց որոշակի առիթի, յարձակման եւ սպանութեան շարժառիթների բացակայութեամբ, պարզապէս աննշան ու կողմնակի մի առիթ սպանութեան որպէս պատրուակ օգտագործելով:

Ուշադրութիւն ենք հրաւիրում. նախ՝ հակահասարակական (հակասոցիալիստական), այլ խօսքով ոչ երբեք հակահայկական (ցեղասպանական), ապա՝ առանց որոշակի շարժառիթի, այլ խօսքով ոչ երբեք բռնախլուած մի հողատարածքի հրապարակ իջած պատմական իրաւատիրոջը (կամ թէկուզ նրա առանձին ներկայացուցիչների) կործանման մատնելու մտադրութեամբ (դրդապատճառով):

Սա՝ «խուլիգանական դրդումներով կատարուած դիտաւորեալ սպանութիւնների» յանցակազմի կապակցութեամբ: Սակայն «զանգուածային անկարգութիւնների» յանցակազմը եւս իր գաղտնարանն ունէր: Այդ յանցակազմի Սումկայիթի վերաբերմամբ արձանագրումն ինչքան էլ որ անխուսափելի-անշրջանցելի անհրաժեշտութիւն լինէր, այնուամենայնիւ նոյնպէս հեռապնդում էր խնդրոյ առարկայ եղեռնագործութիւնը, հոգ չէ թէ հակախորհրդային (հակապետական) որակելու գնով, հակահայկական (ցեղասպանական) յանցագործութեան ոլորտից հեռացնելու նպատակ:

Եւ ուրեմն ոչ միայն զարմանալի չէր լինի, այլեւ տրամաբանօրէն ակնկալելի էր, որ խորհրդահայ իրաւագէտները առաւել կամ նուազ համարձակ ելոյթներով հանդէս գային այդ նպատակադրման դէմ, որը, որքան եւ ծանրագոյն մեղանչում իրաւագիտութեան տարրական նորմերի դէմ, նոյնքան եւ աւելի՝ բիրտ ոտնձգութիւն էր իրենց իսկ

ժողովրդի տարրական շահերի դէմ։ Եթէ մեր ակնկալիքը զիջումով նուազագոյնի հասցնենք, ապա պէտք է ասենք. բնաւ երբեք զարմանալի չէր լինի, եթէ Խորհրդային Միութեան հայազգի ստուարաթիւ օրէնսդէտ-իրաւաբանների գոնէ մէկ տոկոսը հանդէս եկած լինէր այդ նպատակադրման դէմ եւ, անսալով «սահման քաշող զէնն իւրեանց» ասոյթին, բնականաբար ազգային ոգով շաղախուած իրաւագիտական հմտութիւնը զէնքի վերածած, գէթ նուազագոյն խիզախութեամբ խախտած լինէր ալիեւականներից սիրաշահուած-վարձատրուող թէ խորհրդային «հայրենասիրութեան» չքմեղական հովանոցի տակ գիտակցաբար մոլորուած բարձրաստիճանաւոր «արդարադատների» գծած յանցակազմային խարդախ շրջագծերը։

Ցաւ ի սիրտ ու դառնագին յուսախաբութեամբ պիտի ասել, որ անզարմանալի տարրականն իսկ տեղի չունեցաւ. խորհրդային բարձրաստիճանաւոր «արդարադատների» դատապարտելի նպատակադրման դէմ շուրջ տասը ամսում խորհրդահայ օրէնսդէտ-իրաւաբանները հանդէս եկան (ի՛բր) երկու կամ երեք գերզգոյշ գրութիւններով, որոնք յօդուած կոչուել չեն կարող եւ որոնց գլխաւորն էր Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական ֆակուլտետում կազմուած եւ (ի՛բր) սումկայիթեան եղեռնագործութեան դատավարման հարցում որդեգրուած բացայայտօրէն ու միտումնաւոր կերպով սխալ դիրքորոշման դէմ ուղղուած «Անկանխակալ հայեացքով» տեղեկանքը։

Եւ ահա «անկանխակալ հայեացքով» վերլուծելով խորհրդային արդարադատութեան մոսկովեան կենտրոնի իրոք էլ կանխակալ հայեացքով ճշտորոշուած յանցակազմերը, Երեւանի պետական համալսարանի հայ օրէնսդէտ-իրաւաբանների համախմբումը խոնարհաբար համաձայնում էր երկրորդի՝ «զանգուածային անկարգութիւնների» յանցակազմի հետ, քաշքշաբար առարկելով միայն առաջինին՝ «խուլիգանական դրդումներով կատարուած սպանութիւնների» յանցակազմին եւ առաջարկելով այն պարզապէս ծանրացնել, փոխարինել «աւազակութեամբ»։

Մէջբերենք այստեղ խորհրդահայ օրէնսդէտ-իրաւաբանների համալսարանական ծաղիկի կողմից վերջին առաջարկի բանաձեւումը.

«1988 թուի Փետրուարի 27-29-ին Սումկայիթում կատարուած յանցագործութիւնների պարզապէս առարկայական վերլուծութիւնը միանգամայն բաւական է հեշտութեամբ համոզուելու համար, որ տուեալ դէպքում խօսքը պէտք է գնայ աւազակութեան (Ադրբէջանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 70-րդ յօդուած) եւ զանգուածային անկարգութիւնների (նոյնի 72-րդ յօդուած) մասին։ Յօդուածներից առաջինում բացայայտւում է աւազակութեան բովանդակութիւնը։ Դրանում ասուած է. «Պետական կամ հասարակական ձեռնարկութիւնների, հիմնարկների, կազմակերպութիւնների կամ առանձին անձանց վրայ յարձակուելու նպատակով զինուած բանդաներ կազմակերպելը, այլեւ այդպիսի բանդաներին եւ դրանց կողմից կատարուող յարձակումներին մասնակցելը...»։ ՌՍՖՍՀ քրէական օրէնսգրքի մեկնաբանութիւններում (էջ 166) քննարկուող հարցի կապակցութեամբ ասուած է. «1. Բանդան յանցաւոր համագործակցութեան տարատեսակ է։ Անձանց խումբը բանդա

ճանաչելու համար բաւական է, եթէ դրան մասնակցում են երկու անձ։ 2. Բանդայի համար բնութագրական են այնպիսի որակական ցուցանիշներ, ինչպիսիք են կայունութիւնը եւ դրա անդամների համախմբուածութիւնը, զինուածութիւնը. նպատակը յարձակումներ կատարելն է»։ Եւ այնուհետեւ. «Անձանց խումբը կարող է բանդա ճանաչուել... եթէ այն զինուած է։ Տուեալ դէպքում զէնք ասելով պէտք է հասկանալ այն առարկաները, որոնք յատկապէս պատրաստուած կամ յարմարեցուած են կենդանի նշանակէտ խոցելու համար եւ չունեն այլ, մասնաւոր տնտեսական նշանակութիւն»։ Ընդ որում մեկնաբանութիւններում (էջ 167) նշւում է, որ «բանդիտական յարձակման ժամանակ կարող են կատարուել քրէական օրէնսգրքի ուրիշ յօդուածներում նախատեսուած յանցագործութիւններ. սպանութիւն, պետական կամ հանրային գոյքի խոշոր եւ առանձնապէս խոշոր չափերով յափշտակութիւն, բռնաբարութիւն եւ այլն։ Բոլոր այդ յանցագործութիւններն ընդգրկւում են բանդիտիզմի յանցակազմով եւ լրացուցիչ որակում չեն պահանջում»։

Մարդ ոչ թէ իրաւաբան, այլ բարապան պէտք է եղած լինի, որպէսզի ընկնի վերոշարադրեալի տիպի սահմանումների ետեւից եւ ամենայն լրջութեամբ փորձի փաստարկել, որ իր ազգակիցներին նահատակողները պէտք է որակուեն ոչ թէ «խուլիգաններ», այլ՝ «բանդիտներ»։ Խօսքն այնքան ողբերգական անցուդարձերի մասին է, որ չենք ուզում ընթերցողներին ծիծաղի հրաւիրել՝ մատնանշելով ռուս եւ նրանց հետեւողութեամբ Երեւանի պետական համալսարանի խորհրդահայ իրաւագէտների «գիտական» այն սահմանումը, ըստ որի մարդիկ ուսպակային բանդա են դառնում՝ եթէ զինուած են, պայմանաւ որ իրենց ձեռին որպէս մարդասպանութեան գործիք եղող առարկաները չունենան «ուրիշ, տնտեսական մասնաւոր նշանակութիւն»։ Եւ սակայն խորհրդահայ իրաւագէտներն իրենք այդ տողերը շարադրելիս ծիծաղելիութիւնից չեն վախեցել, մոռանալով, որ Սումգայիթում թաթար մարդակերպ ճիւաղները մեր ազգակիցներին կոտորել են համարեա բացառապէս «տնտեսական նշանակութիւն» ունեցող առարկաներով. խորովածի շամփուրով, միս կտրատելու դանակով ու կացինով, այգեպանի բահով, ջրատար խողովակով, ընկոյզ ջարդելու քարով, նոյնիսկ... մանկական հեծանիւով։ Համոզուելու համար լսենք թաթար մի քանի «վկաների»։

Մահմէտով. «Մի երիտասարդ մարդու էին ծեծում, քարերով խփում էին, յետոյ գցեցին խարոյկի մէջ»։

Ջաբրայլեւ. «Դուրս բերեցին մէկին, ծեծեցին, դանակով խփեցին... Սպանուած կնոջ մարմնի մէջ խրուած շամփուրի պէս բաներ կային»։

Քերիմով. «Ահմէտովը կոչ էր անում սպանել հայերին, կտրել նրանց գլուխները եւ տանել դէպի կուսակցութեան քաղաքային կոմիտէ։ Յետոյ... դուրս բերեցին մի ծեր կնոջ եւ սկսեցին ծեծել, մերկացնել։ Կինը մնաց միայն վարտիքով։ Խփում էին տարբեր առարկաներով՝ փայտով, խողովակի կտորներով, շամփուրով։ ...Դուրս բերեցին նաեւ մի տղամարդու եւ աղջկայ։ Մի տղայ զինուորական բահով խփեց տղամարդուն։ ...Յետոյ մի տասը հոգի սկսեցին փայտերով ծեծել տղամարդուն։ Ծեծում էին նաեւ կնոջը»։

Ալիսե. «Տեսայ, թէ ինչպէս էին ծեծում, մերկացնում կնոջը։ Մի պահ նա փորձեց վեր կենալ, բայց ճահճիններից մէկը բահով հարուածեց նրա գլխին ու նա կրկին վայր ընկաւ։ Բարձրանալու նրա միւս փորձին վրայ հասաւ մէկ ուրիշը, որը մանկական հեծանիւով հարուածեց դարձեալ կնոջ գլխին ու նա նորից ընկաւ»։

Ռզաեւ. «Ահմէջտովը վերջինը խփեց տղամարդու մէջքին։ Դրանից յետոյ նա այլեւս չշարժուեց։ Ահմէջտովը տապարի վրայի արիւնը սրբեց խալու վրայ, որով ծածկեցին տղամարդուն մինչեւ հրկիզելը։ Մինչ այդ տղամարդուն ծեծում էին խողովակի կտորներով, մահակներով»։

Արիւնը սրտից միանուագ դէպի ուղեղ յորդեցնող եւ դատարկուած տարածութիւնն ամբողջովին ցաւկոտ վրէժի լաւայով հեղեղող այս վկայութիւններից ի՞նչ է ստացւում։ Ստացւում է այն, որ թաթար մարդակերպ ճիւաղներն աւելի սրտոտ իրաւագէտներ են եղել, քան՝ խորհրդահայ օրէնսգէտները ու կանխել են նրանց. ոչ թէ որպէս բանդիտ, այլ որպէս խուլիգան դատուել կարողանալու համար, նրանք իրենց եղեռնագործութեան իբրեւ զէնք մանկական հեծանիւը նախընտրել են գրահապատ հրասայլից, ջրատար խողովակը՝ գնդացիրի փողից, փոցրակոթ բահը՝ պայթենական եաթաղանից...

Մեր պարզաբանած առաջին իրողութեան անխուսափելիօրէն հետեւում է երկրորդը, աւելի չուտ տրամաբանօրէն դրանից ծագում է սա հարցը. այդ ինչո՞ւ էին խորհրդահայ իրաւագէտները ոգորում այնպէս, ինչպէս ժամկէտանց փեսացուն դեռահաս հարսնացուի անկողնում։ Պարզապէս թաթար յանցագործների քրէականութիւնը մի աստիճանով բարձրացնել–ծանրացնելո՞ւ նախանձախնդրութիւնից։ Բայց արժէ՞ր դրա համար մամուլում հրապարակայնօրէն ոգորել՝ քաջ իմանալով ապարդիւնութեան կանխորոշուածութիւնը (վերջին հաշուով հայալեզու կոպեկանոց թերթը մոսկովեան «աշխարհի հզօրներից» ո՞վ է ընթերցում) եւ ընկնել խայտառակ տեսարանի մէջ, այն դէպքում, երբ Խորհրդային Միութիւնում ընդունուած աւանդական գործելակերպով հարկ էր, ըստ որում յաջողութեան (հոգ չէ թէ աննշան) յոյսով, կուսակցական-պետական կամ մտաւորական-արհեստակցական ուղիներով դիմել իրաւասու եւ խոնարհանքը սիրող վերադասներին, շարադրել «գործի շահերից ելնող» նկատառումները եւ համեստօրէն սպասել յամենայն դէպս ոչ-հրապարակային մեծահոգի հաւանութեան կամ նուաստացուցիչ այպանքի։ Հեղինակների կարծիքով, բնականաբար նաեւ նրանց գործարկողների ու նրանց թխուածքը մամուլով մատուցողների հաշուարկներով՝ անշուշտ որ արժէր, քանի որ տեղեկանքն էլ հենց միտում էր հասարակական կարծիքի շրջանում շփոթութիւն ստեղծել, մոլորութիւն առաջ բերել։ Իրօք էլ, բանդիտիզմի յանցակազմի ջատագովմամբ խորհրդահայ իրաւագէտները վերջին հաշուով որեւէ կերպ չխոչընդոտելով, ընդհակառակը պարզապէս ու գիտակցաբար ջուր էին լցնում սումկայիթեան եղեռնագործութիւնը ցեղասպանութեան ոլորտից դուրս բերել ջանացող մարդկանց ջրաղացին։ Չէ՞ որ հանրայայտ է, որ բանդիտն ու նրա զոհը համարեա որպէս կանոն լինում են հայրենակից ու ազգակից։ Չէ՞ որ ո՛վ ո՛վ, գոնէ խորհրդահայ իրաւագէտներն իրենք քաջ գիտէին, որ Հայաստանում տարեկան քանի՞ հայ է դատարանի առաջ



Վերեւում՝ շամփրահար ու երկիզեալ Լոլա Գաւելի Աւագեանը (ծնուած՝ 1961 թ.) եւ կացնահար Արթուր Արմոյի Աւագեանը (1963 թ.)
Ներքեւում՝ Նահատակ Աւանեսեան եղբայրները – Վալերի (1957 թ.) եւ Ալպերտ (1955 թ.)

կանգնում՝ ազգութեամբ նույնպէս հայ զոհի դէմ բանդիտիզմ գործելու յանցանքով։ Իմանալով այդ, նաեւ այն, որ որեւէ կերպ չեն դժուարացնում ցեղասպանութեան յանցակազմը շրջանցելու սողանցք որոնողների գործը, նրանք հայրենահայ ընթերցողների առաջ պարզապէս ընդունում էին եղեռնագործների դէմ աւելի խիստ ու նույնիսկ խստագոյն պատիժների ջատագով ազգասէր դատախազների տպաւորիչ կեցուածքը։

Իսկ նրանց համար կարեւորը հենց այդ բեմական կեցուածքը որպէս բնական հայրենահայ զանգուածներին ծախելն էր։

Թէ չէ, կրկնում ենք, մարդ ոչ թէ իրաւաբան, այլ՝ բարապան պէտք է եղած լինի, որպէսզի «չնշմարի» ու շրջանցի խնդրի ոչ միայն մարդկային եւ ազգային, այլեւ իրաւական կողմը՝ սումկայիթեան եղեռնագործութեան բացառապէս եւ անկասկածելիօրէն ցեղասպանութեան յանցակազմին վերաբերուելը, սիրայօժար ընկնելու համար սահմանումների չորրորդակարգ եւ ըստ ամենայնի անիմաստ մի բանավէճի փրփրաշատ յորձանքի մէջ։ Իսկ ինչպէս պարզորոշ ի ցոյց էր դրուելու Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժնի դոցենտ Մ. Գրիգորեանի Նոյեմբերի 4-ին «Աւանգարդ» թերթին կատարած մի յայտարարութիւնից, խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները շատ լաւ էին ընկալել խնդրի կենտրոնակորիզը, սակայն նույնիսկ աշնանը, արցախական պահանջատիրական շարժման շուրջ դասաւորուած գոնէ երեւութապէս բարենպաստ նոր պայմաններում, խուսափում էին հրապարակով գետին տալ ցուլը, որի կոտոշներից պինդ բռնել էին։

Եւ իրօք, թերթի աշխատակցի այն հարցադրման, թէ «այս օրերին Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի նիստերի դահլիճում եւ սրահներում ամենից յաճախ հոլովուող բառը, թերեւս, ցեղասպանութիւնն է», խորհրդահայ իրաւաբանն շտապում էր յայտարարել. «Դատավարութեան ընթացքը աստիճանաբար, բայց յամառօրէն վեր է հանում փաստեր, որոնք անառարկելիօրէն վկայում են այն մասին, թէ սումկայիթեան եղեռնագործութիւնները կատարուել են միայն եւ բացառապէս ազգամիջեան հողի վրայ։ Դատավարութեանը ներկայ անձանցից եւ ոչ մէկի մօտ այդ հանգամանքը, մեր համոզմամբ, տարակուսելու կամ երկընտրանքի տեղիք չի տալիս։ Հարկ է խօսել Սումկայիթի հայ ազգաբնակչութեան նկատմամբ ցեղասպանութեան կազմակերպուած արարքի մասին»։ Եւ սակայն, աւելացնում էր Գրիգորեանը, խորհրդային «քրէական օրէնսդրութեան մէջ բացակայում է ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն նախատեսող յատուկ իրաւանորմը, եւ այդ հանգամանքը Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի քրէական գործերով դատական մարմնին ձեւականօրէն հնարաւորութիւն չի տալիս կատարուած յանցագործութիւնը որակել այդ դիտանկիւնով, թէեւ ցեղասպանութեան յանցակազմի բոլոր բաղադրամասերի առկայութիւնը կասկած չի յարուցում, մեր կարծիքով, բոլորի, այդ թւում նաեւ դատավարութեան մասնակիցների ու հենց դատարանի մօտ»։

Եւ ահա հենց այստեղ, երբ անհրաժեշտ էր առնավարի սկզբունքայնութեամբ պինդ կանգնել եղեռնագործութեան որպէս ցեղասպանութիւն, հետեւաբար մարդկութեան դէմ ոճիր գնահատման հիմնաւոր պահանջի վրայ ու չնահանջել եւ չճապաղել ինքնապաշ-

հովազդրական «մտորումներում», Գրիգորեանը պարզապէս պահանջում էր «կատարուած հասարակական վտանգաւորութեան ընդհանրական գնահատականի» հետ կատարել նաեւ «երեւոյթների քաղաքական արժէքաւորում»՝ հաշուի առնելով «յանցագործութեան վտանգաւորութիւնը սոցիալիստական հասարակական յարաբերութիւնների համար»։

Եթէ Երեւանի պետական համալսարանի օրէնսգէտ-իրաւաբան «քաջերի սահմանն» այս էր աշնանը, ապա աւելի վաղ շարադրուած տեղեկանքի հեղինակները հասկանալիօրէն պիտի երկիւղած հետեւէին մոլլա Նասրէտտինի, որ եւ նոյն է՝ պետական կառոյցի բարձրաստիճանաւորների խորհրդին. «Թող չըխապատում ձեզ գործի վրայ տեսնեն», ուրեմն եւ գրչաշարժային բառագիտութեամբ պիտի ջանային թաթար եղեռնագործների իսկական դէմքը մերկացնողների հովեր առնել, մարգարէ ձեւանալ եւ ունկնդրութիւն որոնել Ազատութեան մշտազգաստ հրապարակում, որպէսզի այնուհետեւ կարողանային հայրենահայ քնկոտացուած զանգուածներին հեշտութեամբ իրենց ետեւից տանել այն հունով, որը ի վերուստ գծւում էր։

Ի դէպ, երեւի հենց տեղն է պարզաբանօրէն զարմանալու, աւելի շուտ՝ տարրական իրատեսութեամբ պարզապէս չզարմանալու խորհրդահայ իրաւագէտ, իրաւաբանական գիտութիւնների դոկտոր Վլադիմիր Նազարեանի պարագայի վրայ։ Համեստ մանկավարժ, արցախական պահանջատիրութեան որպէս բոցաբորբ առաջամարտիկ ամիսներ շարունակ մամուլի էջերում թէ հեռուստատեսութեան պաստառի վրայ նա այնպէ՜ս էր կուրծք ծեծում, պահանջատիրական փաստարկների որպէս իրաւագիտական շտեմարան այնպէ՜ս էր իրեն թափ տալիս ու խորհուրդներ շաղ տալիս, նոյնիսկ (ինչպէս հաղորդուեց սփիւռքահայ մամուլում) Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի յունիսեան պատմական նիստի օրը, Երեւան ներխուժած պատժիչ զօրամասերի բռնութեան դէմ իբր բողոքելու նպատակով՝ այնպէ՜ս փորձեց Համագումարների պալատի բարձունքից ցած նետուել ու ջախջախուել, որ հայ պրոլետարիատն ու կոլտնտեսային գիւղացիութիւնը բարեմտօրէն հարց էին տալիս, թէ ինչո՞ւ հենց նրան չեն կանգնեցնում Ազատութեան հրապարակի կենտրոնակէտում, Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէի գլխին։ Եւ ինչպէ՜ս էր նա, սրտի կսկիծով այլ վեհոգութեամբ, ներողամտութիւն բաշխում Ղարաբաղեան «իշխանատենչ» կոմիտէին, որը փորձել էր իրեն բարձրախօսը գլանել, նաեւ ժողովրդական «Թերահաւատ» զանգուածին, որը մոլորամտութեամբ հրաժարուել էր իրեն ունկնդրելուց եւ թոյլ չէր տուել իր ազգօգուտ ճառը շարունակել. Հեռուստատեսային նրա ելոյթը տեսնող-լսողի ուղղակի լացն էր գալիս եւ սիրտը լցւում դառնութեամբ, որ ժողովուրդը չի ճանաչում «իր» մարդուն, որ «երախտամոռ» ժողովրդի անգիտակցութիւնից հերթական մարգարէն իր միջավայրում տեղ չի գտնում։ Եւ ի՞նչ. արտասահմանում իմացանք, որ Վ. Նազարեանը վերջապէս առաջ է խաղացել, եթէ ոչ ձախ, ապա պատշաճագոյն աջ ուղղութեամբ, ու նուաճել այն բարձունքը, որին ըստ երեւոյթին ձգտում էր եւ որին հաւանաբար կանխորոշուած էր. նշանակուել է Հայկական ԽՍՀ գլխաւոր դատախազ։ Դեհ ի՞նչ. օրինաչափ չհամարե՞լ այն, որ Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժնի պետական,

վարչական և միջազգային իրաւունքի ամպիոնի վարիչը, եթէ որպէս ժողովրդական տրիբուն չի գործել Ղարաբաղեան կոմիտէի նախագահը, ապա կոմիտէի ջախջախման նախօրեակին նշանակուել է գլխաւոր դատախազը մի հանրապետութեան, որում յանցագործութիւնները ճնշիչ մեծամասնութեամբ վերաբերում են ոչ թէ իր նեղ մասնագիտութեան, այլ՝ պետական ունեցուածքի թալանման, պաշտօնի տարատեսակ չարաշահումների, յատկապէս կաշառակերութեան, այդ թւում ընդհանրապէս բարձրագոյն կրթութեան համակարգում թէ մասնաւորապէս բժշկականի հետ ամենաթանկը եղող իրաւաբանական մասնագիտութեամբ սովորելու իրաւունքի վաճառքին, բանդիտիզմի տարատեսակներին, մարդասպանութեան, բռնաբարութեան, գողութեան, թմրամոլութեան, խուլիգանութեան և մասամբ նորին ու մասամբ սորին...

Բոլոր դէպքերում վերադառնանք խորհրդահայ օրէնսդէտ-իրաւաբանների «Անկանխակալ հայեացքով» տեղեկանքին և պարզաբանենք, թէ ինչո՞ւ էր «զանգուածային անկարգութիւնների» յանցակազմը առանց առարկութեան արժանացել խանդավառ ու անվերապահ հաւանութեան։ Տեղեկանքում ասուած էր.

«Ադրպէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 72-րդ յօդուածում զանգուածային անկարգութիւնների կազմակերպում ասածը զուգորդւում է ջարդերի, աւերածութիւնների, հրկիզումների և նման այլ գործողութիւնների, ինչպէս նաև դրանց մասնակիցների կողմից վերը մատնանշուած յանցագործութիւններն անմիջականօրէն կատարելու կամ նրանց կողմից իշխանութեանը զինուած դիմադրութիւն ցոյց տալու հետ։ ՌՍՖՍՀ քրէական օրէնսգրքի մեկնաբանութիւններն այդ յանցագործութեան առթիւ մատնանշում են (էջ 170). «1. Անկարգութիւնները պէտք է զանգուածային ճանաչուեն այն ժամանակ, երբ սանձարձակ ամբոխը ժամանակաւորապէս դառնում է դրութեան տէրը, երբ իշխանութեան տեղական մարմինները անդամալուծւում են և խախտուած կարգը վերահաստատելու համար հարկ է լինում դիմել արտակարգ միջոցների. ձեռնարկութիւններում բանուորների զորաշարժմանը, հրշէջների ներգրաւմանը, միլիցիայի պահակախմբերի ուժեղացմանը և այլն։ 2. Զանգուածային անկարգութիւնների առարկայական վերլուծութիւնը թոյլ է տալիս եզրակացնելու, որ դրանք պետական իշխանութեան և կառավարման տեղական մարմինների գործունէութիւնից դժգոհութեան արտայայտութեան յանցաւոր ձև են և ուղղուած են դրանց դէմ։ 3. Զանգուածային անկարգութիւնների կազմակերպման տակ հասկացւում են անձի կամ մի քանի անձանց գործունէութիւնը, ովքեր դիտաւորութեամբ ամբոխին հրահրում են ջարդեր, աւերածութիւններ, հրկիզումներ կատարելու կամ նմանօրինակ այլ գործողութիւնների, ինչպէս նաև նշուած գործողութիւնները։ «Նման այլ գործողութիւնների» տակ հասկացւում են մարդկանց կամ գոյքի դէմ ուղղուած նախայարձակողական բռնի գործողութիւնները. կալանաւորներին ազատելը, նրանց հարկադրական փախուստը, փոխադրամիջոցների, արդիւնաբերական և այլ ձեռնարկութիւնների ու հիմնարկների հարկադրական կանգառը և այլն։ 4. Ջարդերի, աւերածութիւնների,

հրկիզումների եւ նման այլ գործողութիւնների անմիջական կատարում նշանակում է, որ անձը հանդէս է եկել իբրեւ այդ յանցագործութիւնները կատարող։ Ե. Իշխանութեանը զինուած դիմադրութիւն ցոյց տալը նշանակում է, որ զանգուածային անկարգութեան մասնակիցն այդ նպատակի համար օգտագործել է զէնք՝ տուեալ բառի նեղ իմաստով։ Ըստ որում, իշխանութեան ներկայացուցիչներ ասելով, պէտք է հասկանալ նաեւ այն անձանց, որոնց իրաւասու իշխանութիւնները յանձնարարել են վերականգնել խախտուած կարգը՝ ժողովրդական դրուժիննիկներին, զինուորներին եւ այլն»։

Սումկայիթի եղեռնագործութեան էութիւնը աւելի նենգօրէն եւ առաւել խայտառակօրէն խեղաթիւրող յանցակազմ, քան՝ «զանգուածային անկարգութիւնների» յանցակազմը, հնարաւոր չէր գտնել։ Եւ անկախ այն հանգամանքից, թէ սումկայիթեան մարդախողխողները ի վերջոյ «խուլիգա՞ն» կ'որակուեն, թէ՝ «բանդիտ», այս յանցակազմով եւ իրենց լրիւ կազմով սովորական մահապատժի՞ կը դատապարտուեն, թէ՝ աւազակների նման սատակուելով հրկիզուելու, թաթար ցեղասպանները պարտաւոր են մինչեւ խոր երկինք շնորհակալ լինել տուեալ յանցակազմը յայտնաբերող խորհրդային արդարադատական մարմիններին եւ այն ջատագովող խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբաններին։ Որովհետեւ Սումկայիթում տեղի ունեցածին լոկ երեւութապէս պատշաճող այս յանցակազմն ըստ էութեան նշանակում էր կտրուկ հերքումը ցեղասպանութեան յանցակազմին, աւելին՝ այն ոչ միայն բացառելով բացառում էր ցեղասպանական (ի՞նչ ցեղասպանական՝ անգամ հակահայկական նուազագոյն իսկ) տրամադրութեան առկայութիւնը թաթար մարդակերպ ճիւաղների մօտ, այլեւ որոշ իմաստով «բացատրում», հետեւաբար եթէ ոչ արդարացնում, ապա գոնէ մեղմացուցիչ դէպք յանցանաց ապահովում հայասպանների համար։ Անհաւատալի՞ է։ Վերընթերցէք ուրեմն, նորովի, յանցակազմի «մեկնաբանութեան» երկրորդ կէտը. Սումկայիթի «զանգուածային անկարգութիւնների առարկայական վերլուծութիւնը թոյլ է տալիս եզրակացնելու», որ թաթար խաժամուժի եղեռնագործութիւնը պարզապէս «պետական իշխանութեան» (այլ խօսքով խորհրդային կառավարութեան) եւ «կառավարման տեղական մարմինների» (այլ խօսքով Սումկայիթի թաթար իշխանութիւնների) «գործունէութիւնից դժգոհութեան արտայայտութեան... ձեւ» էին (հօդ չէ թէ՝ «յանցաւոր ձեւ») եւ «ուղղուած էին դրանց դէմ», այլ խօսքով՝ ոչ թէ ընդհանրապէս հայ ժողովրդի, մասնաւորապէս արցախահայութեան եւ տեղի հայ գաղթօճախի դէմ, այլ՝ միայն ու միայն մուսկովեան եւ տեղական իշխանութիւնների գործունէութեան դէմ...

Ի դէպ, մեր կողմից իր տեղում բացատրուած պատճառներով եթէ զարմանալի չէր խնդրոյ առարկայ յանցակազմերի ջատագովումը, յատկապէս «զանգուածային անկարգութիւնների» անվերապահ ընդունումը Երեւանի պետական համալսարանի խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների կողմից, ապա աւելի քան զարմանալի կարող է թուալ այն փաստը, որ դոցենտ Մ. Գրիգորեանը նոյեմբերեան իր «Մասնագէտի Մտորումներ»ի շարքում «Աւանգարդ» թերթին յայտարարում էր բառացիօրէն հետեւեալը. «Հարկ ենք համարում... անդրադառնալ

յանցագործութիւնների շարժառիթների հարցին։ Սումկայիթում կատարուած չարագործութիւնները (մոսկովեան դատարանում) քննարկուող դրուագներով որակուել են իբրեւ ծանրացնող հանգամանքներում կատարուած դիտաւորեալ սպանութիւններ (զանգուածային անկարգութիւնների հետ համակցութեամբ)։ Ծանրացնող հանգամանքների թւում առանձնացուած են նաեւ խուլիգանական դրդումները։ Դրանք, ի հարկէ, յայտնի չափով կան, բայց որոշիչ չեն, չեն բնութագրում կատարուած գործողութիւնների իմաստն ու բովանդակութիւնը։ Վերջիններիս գերում հանդէս են գալիս ազգամիջեան յարաբերութիւնները»։

Այս յայտարարութիւնը կարող է աւելի քան զարմանալի թուալ այն պատճառով, որ Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքի որպէս երկրորդ դէմքը՝ դեկանի տեղակալը, Գրիգորեանը չէր կարող անմասն լինել ամօթապարտ տեղեկանքի շարադրմանը։ «Անկանխակալ հայեացքով» տեղեկանքի եւ «Մասնագէտի մտորումների» միջեւ ընկած ժամանակաշրջանում խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների հայեացքների բարեկրջեալ զարգացումը պիտի վերագրել Ղարաբաղեան շարժման արմատականացման համատեքստում նրանց առաջադրուող ռազմավարական ազգասիրութեան մակընթացութեան։ Թէպէտ, եւ սա էլ անկարեւոր չէ, ազգասիրական մակընթացութեան նոր մակարդակում իսկ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների «մտորումների» շրջագծում ցեղասպանութեան յանցակազմի պահանջը տեղ չէր ունենալու։ Գրիգորեանը բաւարարուելու էր մատնանշելով, որ «մասսայական անկարգութիւնների եւ ջարդարարութեան ընթացքում» սումկայիթեան եղեռնագործները պարզապէս կատարել են «գործողութիւններ», որոնք համընկնում են Ադրբէջանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 67-րդ յօդուածով նախատեսուած յանցակազմի յատկանիշներին (ազգային եւ ցեղային իրաւահաւասարութիւնը խախտելը)»։ Այլ խօսքով կոտոշներից երեւութապէս պինդ բռնուած ցուլը փոխանակ ցեղասպանութեան հրապարակում գետին տալու, այն քարշում-քշում էին դէպի ցեղային խտրականութեան գոմը՝ սահմանադրութեան 36-րդ յօդուածը...

Մի՞թէ չենք մեղանչում ճշմարտութեան եւ արդարութեան դէմ՝ այսքան խիստ այպանելով խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբաններին։ Մի՞թէ նրանք իրենց գոյութիւնն ուրիշ շեշտով ու եղանակով չեն զգացրել։ Զգացրել են, այն էլ ինչպէ՜ս։ Ամբողջ հարցն այն է, միայն, թէ ե՞րբ՝ շա՜տ ուշ, եւ ինչո՞ւ՝ մեզ ծանօ՛թ նպատակով։ Վկա՛յ, օրինակ, Հայկական ԽՍՀ վաստակաւոր իրաւաբան, իրաւաբանական գիտութիւնների թեկնածու եւ համալսարանի դոցենտ Ի. Արաբեանի «Պահանջում ենք Վարուել Սահմանադրօրէն» կոկոզավիզ խորագրով յօդուածը «Սովետական Հայաստան» օրաթերթի Նոյեմբերի 13-ի համարում։ Դրանից իմանում ենք, որ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները վերջապէս կուռ շարքերով եւ զէն ու զրահով մարտի են նետուել, քանի որ «Փրկէք մեր հոգիները» (ՍՕՍ) ազդանշանն են ստացել։

«Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի դահլիճում ընթանում է սումկայիթեան մի խումբ ոճրագործների դատը,– գրում է

Արաբեանը։– Նրանք հիմա հրաժարւում են նոյնիսկ նախաքննութեան ժամանակ տուած իրենց ցուցմունքների կարեւոր մասերից։ Եւ փաստաբանները, որոնց թւում նաեւ Երեւանից Մոսկուա գնացածները, ծանր կացութեան մէջ են։ Հարկաւոր է նրանց ցոյց տալ թէ՛ իրաւական, թէ բարոյական օգնութիւն»։

«Բայց ինչպէ՞ս,– հարց է տալիս Արաբեանը եւ անմիջապէս էլ հաղորդում, որ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները վերջապէս գտել են օգնութեան հասնելու ուղին։– Խորհրդային սահմանադրութեան փոփոխութիւնների ու լրացումների մասին օրէնքի նախագիծը չի անդրադարձել 162-րդ յօդուածին։ Դա նշանակում է, որ այն մնալու է նոյնը, հետեւապէս, նոր ոյժ է ստանալու նրա հիմնական դրոյթը, որի համաձայն քաղաքացիական եւ քրէական գործերով դատավարութեանը թոյլատրւում է հասարակական կազմակերպութիւնների եւ աշխատաւորական հաւաքականութիւնների ներկայացուցիչների մասնակցութիւնը»։

Արաբեանը ի լուր ամէնքի հաղորդում է, նաեւ, որ սառցալեռը չուտ տուող լեակն առաջինը ինքն է ձեռ առել. «Շահումեանի շրջանի ընտրողների հետ Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի երեսփոխանների վերջերս տեղի ունեցած հանդիպման ժամանակ մենք առաջարկեցինք հասարակական մեղադրողներ եւ դատապաշտպաններ ընտրել՝ տեղի ունեցող դատաքննութեանը մասնակցելու, կատարուած յանցագործութեան բոլոր կողմերը խորութեամբ ու լայնութեամբ բացայայտելու, հայ ժողովրդի դէմ ուղղուած ոճիրը հիմնովին մերկացնելու համար։ Հասարակական կազմակերպութիւնների ու հաւաքականութիւնների ընտրած հասարակական մեղադրողները պէտք է մասնակցեն Սումկայիթում, Շուշիում ու Խոճալուում ջարդարարների կողմից հայերի սպանութիւնների, բռնաբարութիւնների, աւազակութեան եւ այլ հրէշաւոր գործողութիւնների վերաբերեալ դատավարութիւններին։ Այս առաջարկութիւնը հաւանութեամբ ընդունուեց հանդիպման մասնակիցների կողմից»։

Ուրախալի է, անշուշտ, որ Դէմիրճեանի ազդանշանով ծակամուտ եղած հայ երեսփոխանները, Յարութիւնեանի թոյլտուութեամբ Յունիսի 15-ին ընդյատակից դուրս գալուց յետոյ, սկսել են հանդիպել իրենց ընտրողների հետ եւ Շահումեանի շրջանի հանդիպման մասնակիցներն էլ ծափողջունել են դոցենտ Արաբեանի ազդափրկիչ առաջարկութիւնը։ Առաւել կարեւորը, ծափերի դղրդիւնն ու նրա հետ դոցենտի կոչը հասել են մինչեւ համալսարան, որտեղ էլ կրակ կտրած զօրաշարժուել են խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները։ Լսենք Արաբեանին.

«Օրերս տեղի ունեցաւ Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքի կուսակցական, արհմիութենական եւ կոմերիտական կազմակերպութիւնների միացեալ ժողով։ Հաստատութեան պրոֆեսորներն ու դասախօսները, ուսանողներն իրենց ելոյթներում խիստ ընդգծեցին սումկայիթեան դատաքննութեանը հասարակական մեղադրողների ու պաշտպանների մասնակցութեան անհրաժեշտութիւնը։ Նրանք դատապարտեցին նաեւ սումկայիթեան ցեղասպանութեան, որպէս ընդհանուր, միասնական յանցագործութեան վերա-

բերեալ քրէական գործի անդամահատումը։ Հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները պէտք է ուսումնասիրեն ամբողջ գործը, թափանցեն նրա մշուշապատ ծալքերը, դրանով իսկ բացայայտեն նոր եղեռնի կազմակերպիչներին, նրանց հիմնական ղեկավարներին, որոնց մեղադրանքը ծածկուած է թանձր մշուշով։ Պէտք է փաստերի ճնշման տակ ընդունել տալ այն անհերքելի ճշմարտութիւնը, որ առանց հմուտ կազմակերպուածութեան ու հեռագնայ ծրագրի «խուլիգանները» չէին կարող երեք օր շարունակ արիւնարբու վայրագութիւններ անել քաղաքում։ Այդպէս կարող էին նրանք վարուել միայն Լենկթիմուրի ու սուլթան Համիտի ժամանակներում։ Պէտք է հասնել այն բանին, որ դատավճռում յստակ ձեւակերպուի հետեւեալ միտքը. մարդասպանները ոճիր են կատարել ոչ թէ խուլիգանական դրդումներից ելնելով, այլ ցեղասպանութեան նպատակներով։ Իսկ սումգայիթեան գործի անդամահատումը հետապնդում է միայն մի նպատակ. գլխաւոր յանցագործներ դարձնել միայն ոճիրը կատարողներին, իսկ ոճրագործութիւնը չընդունել որպէս ցեղասպանութեան փորձ։ Զարմանալի չէ՞ր լինի, եթէ Նիւրեմբերգի դատավարութեան փոխարէն պատերազմի յանցագործներին վեց միլիոն հրեաների ոչնչացման կազմակերպման համար դատէին որպէս պատերազմական մղումներից յանցանք կատարածների, ընդ որում, դատավարութիւնը ցրելով աշխարհով մէկ։ Չէ՞ որ Սումգայիթում հայերին սպաննել են միայն նրանց ազգային յատկանիշի համար։ Ուրիշ էլ ի՞նչ գործոններ ու ապացոյցներ են պէտք սումգայիթեան եղեռնը ցեղասպանութեան կոչելու համար։ Ի վերջոյ, յանցագործների հարազատներն անգամ, ինչպէս, օրինակ, Ճաֆարովի մայրը, յայտարարում են, որ իրենց արիւնռուշտ զաւակները սոսկ գործիք են եղել։ Չէ՞ որ քաղաքի կուսակցական, խորհրդային, իրաւապահ մարմինների ղեկավարների ներկայութեամբ հնչել են «մահ հայերին» կոչերը, նրանց առաջնորդութեամբ է գազազած ամբոխը կոտորել հայերին»։

Բաւ լիցի. մենք հեռու ենք այն մտքից, որ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների, այդ թւում եւ ապագայ իրաւաբան ուսանողների մէջ չկային այնպիսիք, որոնց սրտից արիւն էր գնում ի տես թաթարամոլ բարձրաստիճանաւորների, այդ թւում «արդարադատների» ամենազօրութեան եւ ցեղասպանների անպատժելիութիւնը անուրանալի դարձնող իրադրութեան։ Անշուշտ որ կային։ Եւ նրանք բեմերից իրենց ցասումը կը պոռթկային, եթէ կուսակցական-վարչական աստիճանի ցածրագոյն հարթակում նստած փոքր մարդիկ չլինէին ու նաեւ չսարսափէին, որ անժամանակ եւ առանց վերուստ տրուած ազդանշանի փոքրագոյն ճիչն էլ կը խորտակէր խորհրդային իրաւաբանի իրենց ամբողջ, ու բազմախոստում, հեռանկարը։ Ահարեկ այդ անհատների միակ մխիթարութիւնն այն էր, որ իրենց զգացմունքներն ու մտքերը պոռթկում էին ուրիշներ, արի այրեր՝ Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէից ղեկավարուող Ազատութեան հրապարակում, նորածին ու նորատիպ Հայաստանի Հանրապետութեան այդ նոր խորհրդարանում, այն էլ վաղո՛ւց, դեռ ո՛ր ամսից...։

Այդ իրողութիւնը, սակայն, մեզ մխիթարել չի կարող։

Որովհետեւ Արաքեանի գրքով խորհրդահայ օրէնսգէտ-իրա-

ւարանների Նոյեմբերի երկրորդ տասնօրեակին շեփորած տագնապալի իրողութիւնը Ղարաբաղեան շարժման Հայաստանեան կոմիտէն նախատեսել էր եւ նրանց ձեւակերպած պահանջներն էլ թնդացրել աւելի քան ութ ամիսէ ի վեր, համարեա հանապազօր՝ բեմերից, հաւաքներում, կոչերով, թռուցիկներով։ Եւ... ձայն բարբառոյ յանապատի։ Աւելին. այդ ամէնի համար նրան բաժին էին հասել տարատեսակ մեղադրանքներ, ճնշում, հետապնդում ու հալածանք։ Եւ ահա այդ ամէնը, նո՛յնը, լրիւ իւրացուած, իւրացնելով նաեւ հեղինակային իրաւունքը, Նոյեմբերի երկրորդ տասնօրեակի սկզբին շեփորում էին խորհրդահայ օրէնսդիր-իրաւարարների առաջադէմ մարմինները՝ ի կոչ խառնածին խայտաբղէտ ուղիկների, այն էլ՝ իբր մոսկովեան դատավարութեան ընթացքից տագնապահարուած, առնուազն իր հասարակածը հատած ու դէպի սառը գնացող եւ իր ելքով էլ կանխորոշուած այդ դատավարութեան վրայ իբր ներազդելու տենդից վառուած։ Նրանց ռազմավարութեան նպատակը նոյնն էր ու հինը՝ տիրել հայրենահայութեան զգացմունքներին ու տրամադրութիւններին, ինչպէս որ նոյնն էր ու հինը նրանց ռազմավարութեան եղանակը. եթէ Գերագոյն դատարանում լեռը մուկ ծնի, ապա՝ «Հազա՛ր ափսոս, ի՛նչ արած, յամենայն դէպս մենք ողորմեցինք», իսկ եթէ մի ինչ որ հրաշքով արդիւնքում դրական մի պճեղ բան լինի, ապա՝ «Տեսա՞ք, թէ ինչպիսի հայրենասէր կարիճ ենք մենք, ահա՛ մեր ողորման արդիւնքը»...

Զմոռանանք. Նոյեմբեր ամսուան երկրորդ տասնօրեակի սկիզբն ենք։ Իսկ մի՞նչ այդ...

Մոսկուայում, Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի քրէական դատատեսի առաջ սումկայիթեան եղեռնագործութեան քննութիւնը սկսել է Հոկտեմբերի 18-ին, այլ խօսքով Արցախեանի կոչից երկու երկուտասնեակ օր առաջ, եւ վերջ է գտնելու Նոյեմբերի 18-ին, ուրիշ խօսքով մէկ շաբաթ յետոյ։ Արցախեանի Նոյեմբերի 13-ի յօդուածի «օրերս» բառը նոյնիսկ եթէ հասկանալու լինենք «Սրանից տաս օր առաջ», ապա զարմանալ կը ստացուի այն, որ ամբողջ երկու շաբաթ խորհրդահայ օրէնսդիր-իրաւարարների լեզուն կապ էր ընկած, առնուազն թոթովացած։ Ինչո՞ւ. ոչ թէ որովհետեւ Մոսկուայից Երեւան տագնապի ազդանշանը մէկ ականթարթի փոխարէն հասել էր երկու միլիոն ականթարթում, այլ որովհետեւ խօսկանին լռեցնող խարազանի ու համրին խօսեցնող գաւազանի կախարդական ուժը որպէս մենաշնորհ իրենց ձեռքում պահող բարձրաստիճանաւորները դեռ ազդանշան չէին տուել։ Եւ յետոյ ինչո՞ւ խորհրդահայ օրէնսդիր-իրաւարարների շարժման անցնելու մեկնակէտը անպայման դատավճիռը պէտք է սահմանուի։ Ի՞նչ է, նրանք ամիսներ առաջ գոնէ մօտաւորապէս տեղեակ չէի՞ն, թէ սումկայիթեան եղեռնագործութեան դատավարման ինչպիսի օրացոյց է նախապատրաստուած։

Ի միջի այլոց, տակաւին Հոկտեմբերի 21-ին, դատավարութեան չորրորդ օրը, Երեւանի «Գրական Թերթ»ը լոյս էր ընծայել իր յատուկ թղթակից Ս. Շահմուրատեանի գառնազի հաստատումը. «Դատավարութիւնը բաց է։ Առաջին օրը դահլիճում ներկայ էին շուրջ 10 (հայ) լրագրողներ, սակայն երկրորդ օրը մնացինք երկու հոգի։ Մոսկուայի հայ

համայնքը, ուսանողութիւնը լարուած ուշադրութեամբ էին հետեւում դատավարութեան ընթացքին: Սակայն շատ քիչ էին դահլիճում Հայաստանի ներկայացուցիչները, մինչդեռ մեր հանրապետության իրավաբանների, լրագրողների, հոգեբանների եւ այլ մասնագէտների ներկայությունը կը նպաստէր հասարակական կարծիքի ճիշտ եւ հիմնաւորուած կողմնորոշմանը սումկայիթեան դատավարութեան հարցում»: Սա՝ Հոկտեմբերի 21-ին: Իսկ Նոյեմբերի 11-ի համարում, Երեւանի «Աւանգարդ»ի աշխատակիցներից մէկը գրում էր. անկախ ինչ որ սատարիչ մասի կարգադրութեան անտալով, «դատարանի դահլիճում չէին երեւում նաեւ (տարօրինակ է, ցաւալի ու զայրացուցիչ) մոսկովեան հայ մտաւորականութեան շատ ու շատ ներկայացուցիչներ, որոնց անունները մենք առանձին ակնածանքով ենք արտաբերում: Ինչո՞ւ այստեղ չէին նրանք: Չէ՞ որ խօսքը մեր ողջ ազգին ու նրա արժանապատուութեան է վերաբերում»: Աւելին. «Աւանգարդ»ի աշխատակիցը զայրացած հարց էր տալիս. «Ո՞ւր է մեր հանրապետության պետական-մտավորական ծանրակշիռ պատուիրակությունը, որն այս դատական գործընթացում ոչ թէ սոսկ որպէս դիտորդ պէտք է հանդէս գար, այլ որպէս հասարակական մեղադրող»:

«Աւանգարդ»ի հարցադրումը հայոց մայրաքաղաքում կարող էր զայթակղութեան մի ամբողջ քարի վերածուել: Եւ ահա Հայկական ԽՍՀ-ի «պետական-մտաւորականներ»ը՝ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները, որոնք «Գրական Թերթ»ի յանդիմանական կոչին թէկուզ շուրջ երկշաբաթեայ ուշացումով յամենայն դէպս արձագանգել էին կուսակցական-արհմիութենական-կոմերիտական (այդ հանգամանքով էլ բացատրուած չէ, որ «ներքեւից»՝ ստորադասների զանգուածից պարտադրուած) ժողովով, շտապում էին զայթակղութեան, իսկական «սքանտալ»ի առաջքն առնել, երեւի որ անց Արտաքեանի կոկորդից յօդուածով հասարակութեանն իմացնելով, որ «օրերս» որոշում են ընդունել որպէս «հասարակական մեղադրող» Մոսկուա ուղարկել մի ամբողջ պատուիրակութիւն: Եւ ոչ միայն ու պարզապէս իմաց, այլեւ ու մանաւանդ հայութեանը ուղղակի աչքալուսանք-աւետիս էին տալիս. «Երեւանի պետական համալսարանի իրաւաբանական բաժանմունքի կուսակցական, արհմիութենական եւ կոմերիտական միացեալ ժողովը... Մ. Գրիգորեանին, Մ. Բաղալեանին, Գ. Ղազինեանին եւ Վ. Ցովհաննիսեանին ընտրեց հասարակական մեղադրողներ: Նրանց մի մասն արդէն մեկնել է Մոսկուա՝ դատավարութեանը մասնակցելու, կրկնում ենք՝ ոչ թէ ներկայ լինելու, այլ մասնակցելու: Մեր հանրապետութեան հասարակական կազմակերպութիւնները՝ գրողների, լրագրողների, կինեմատոգրաֆիստների, ճարտարապետների միութիւնները, գիտութիւնների ակադեմիան, պէտք է հասարակական մեղադրողներ ընտրեն եւ ուղարկեն Մոսկուա, որոնք լինեն ոչ միայն իրաւաբաններ, այլեւ ընկերաբաններ, հոգեբաններ, բժիշկներ, հրապարակախօս-լրագրողներ: Այսպիսով, մեր պահանջը սահմանադրական է եւ բխում է ինչպէս ՌԽՖՍՀ քրէական դատավարանագրքի 250-րդ յօդուածի, այնպէս էլ ՀԽՍՀ քրէական դատավարանագրքի 241-րդ յօդուածի պահանջներից: Միայն անհրաժեշտ է արագացնել հասարակական մեղադրողների եւ պաշտպանների ընտրութիւնները»:

Բնականաբար Գերագոյն դատարանի նիստերի դահլիճում հայութեան ներկայացուցիչները մինչ այդ մշտական բացակայ չէին եղել։ Նոյեմբերի 2–5 այնտեղ էին եղել, օրինակ, Գրողների միութեան պատուիրակները՝ Ս. Կապուտիկեանը, Մ. Մարգարեանը, Ա. Սահինեանը եւ ուրիշներ, իրաւաբան Զ. Մաժինեանի ուղեկցութեամբ։ Սակայն նրանք հասարակական մեղադրողի հանգամանք չէին ունեցել։ Եւ ահա խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանները կոչ էին անում. «Անհրաժեշտ է արագացնել»։ Ամենաարագ կշռոյթը, որ Հայաստանում կարելի էր տալ, հետեւեալը կարող էր լինել.

Նոյեմբերի 14-ին. կազմակերպութիւնների անօրէն-ղեկավարների ժողովներ, որոնցում՝ ընդհանուր ժողով հրաւիրելու եւ այդ մասին ուղղակի հեռախօսային հարիւրաւոր զանգերով հաղորդում բոլոր անդամներին (այն ժամանակ, երբ Մոսկուայում տուժած կողմը՝ հայերը իրենց փաստաբաններով, ի նշան բողոքի, վերջնականապէս հեռանում էին դահլիճից ու դատավարութիւնից)։

Նոյեմբերի 15-ին. Երեւանի տարբեր անկիւններում ընդհանուր ժողովներ եւ հասարակական մեղադրողների ընտրութիւններ (այն ժամանակ, երբ Մոսկուայում Գերագոյն դատարանի քրէական դատախազն արդէն անցել էր մտքերի ամփոփիչ փոխանակմանը, իսկ դատարանի դահլիճում, նոյնիսկ որպէս հանդիսատես, ոչ մի հայ չկար)։

Նոյեմբերի 16-ին. ընտրեալ հասարակական մեղադրողների լիազօրագրերի ու միւս փաստաթղթերի ձեւակերպում եւ Երեւան–Մոսկուա ինքնաթիռի տոմսերի որոնում ու յաւելավճարով գնում։

Նոյեմբերի 17-ին. թռիչք Մոսկուա եւ ինչ որ հրաշքով հիւրանոցում տեղաւորում, իմանալու համար, որ նոյն օրը Գերագոյն դատարանի առաջ մեղադրեալ Ահմէդովն իր վերջին խօսքն է ասել։

Նոյեմբերի 18-ին. արարշաւ վազք դէպի Գերագոյն դատարան՝ «ոչ թէ ներկայ լինելու, այլ մասնակցելու»։ Իսկ այդ օր դատարանն իր վճիռն էր արձակում ու նիստը փակում…

Լաւ էր, կ'ասէք, որ խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբաններից լիազօրուած չորս «հասարակական մեղադրողներից երկուսը՝ Մ. Գրիգորեանն ու Գ. Ղազինեանը, գոնէ, մինչ այդ ժամանել էին Մոսկուա։ Սակայն նրանք էլ այլ բան չէին անելու (չէին էլ կարող անել), քան «ներկայ լինել» եւ այնուհետեւ իրենց տպաւորութիւնները հաղորդել… լրագրողներին. «Դատական քննութիւնը ոչ միշտ է ընթանում անհրաժեշտ խորութեամբ։ Դատարանին ոչ միշտ է յաջողւում լրացնել նախաքննութեան ընթացքում թոյլ տրուած բացերը» եւ այլն։ Կարճ ասած՝ դոցենտ Արաքելեանի հաւաստմամբ իրենց տրուած յանձնարարականներին ոչ միշտ համապատասխանող տպաւորութիւններ շռայլել աջ ու ձախ…

## Բ.

Սումգայիթի ցեղասպաններին, ձեւականօրէն մանր-պճեղ մարդախողխողներին, այլ իրականում նրանց գործարկող մուսաւաթական-համայնավար կուսակցապետերին Մոսկուայից շնորհ տրուած զոյգ յանցակազմերի՝ հայկական իրականութեան հետ առնչակցման վերաքն-

րող երկու իրողութիւնները պարզաբանելուց յետոյ, անդրադառնանք նաեւ ատրպէյճանական իրականութեան հետ կապակցման խնդրին։

Բնաւ էլ տարօրինակ չէ այն, որ սումկայիթեան եղեռնագործութեան ոչ թէ հայատեաց թաթարական մոլեկրօն շովինիզմի ցեղասպանական յանցագործութիւն, այլ՝ քաղաքի ընկերային-տնտեսական առարկայական իրավիճակից բխող եւ տեղական իշխանութիւնների դէմ ուղղուած դժգոհանքի ու բողոքի շարժում («զանգուածային անկարգութիւններ») լինելու վերաբերեալ չքնաղագիւտ միտքը, դեռ սաղմնային վիճակում լոյս աշխարհ է հանուել նոյն ինքն սումկայիթեան կուսակցական ջոջերի միջավայրում։ Սակայն այն մի պահ, որպէս անկենսունակ սաղմի շուրջ հիւսուած, Պաքուի թաթարական գաղափարակենտրոնում չիւրացուելուց յետոյ, ըստ երեւոյթին մոսկովեան թաթարասէրների ներշնչանքով արագօրէն վեր է ածուել «անկարգութիւնները պայմանաւորած պատճառների ու հանգամանքների» որոնման ու բացայայտման գլխաւոր բանալու։

Եւ իրօք, եղեռնագործութեան վաղորդայնին, ըստ երեւոյթին կանխազգալով, որ առաջիկայ օրերին քաւութեան գլխաւոր նոխազն է դառնալու, Սումկայիթի կուսակցապետ Մուսլիմզադէն ինքնարդարացման այսպիսի մի տարբերակ էր հրապարակ նետում. «Ես պէտք է խօսեմ եւ դիալեկտիկօրէն գիտեմ ամէն ինչ... Սումկայիթն ընդամէնը քառասուն տարեկան է եւ ուրեմն իր մէջ կրում է սոցիալիզմի աճի դժուարութիւնների բոլոր հակասականութիւնները... 250 հազար բնակչութեան դէպքում մեզ մօտ 55 հանրակացարան կայ... Աւելի քան 20 հազար մարդ ապրում է ինքնագլուխ կառուցուած «նախալատրոյկա»ներում (իշխանութիւնների արգելքին հակառակ կառուցուած «լկտիաշէն» հիւղակներում, որոնք Թուրքիայում կոչւում են «կեճեկոնտու»,– Ե.Ն.)։ Եւ սակայն հակառակ այդ ամէնի, Սումկայիթի նման քաղաքներ պատասխանատուութիւն են կրում (կորպաչովեան) վերակառուցման համար... Նրանք բերում են նորը»։

Մուսլիմզադէի «բացատրութիւնը» մամուլում տեղ էր գտնելու աւելի քան երկու շաբաթ անց, երբ նա պաշտօնազրկուած ու կուսակցութիւնից հեռացուած էր արդէն։ Տուեալ պահին կուսակցական բարձր ոլորտներում եւ անկասկած խուճապային մթնոլորտում հրապարակ նետուած այդ «բացատրութիւնը», ըստ երեւոյթին, որպէս եփած հաւի ծիծաղը բերող, ընդունելութիւն չէր գտնում։ Եւ Պաքուի թաթարական գաղափարակենտրոնը հարկադրւում էր ընդունել եղեռնագործութիւնը «պայմանաւորած պատճառներն ու հանգամանքները» ազգամիջեան փոխյարաբերութիւնների ջրապտոյտի մէջ որոնելու հրամայական անհրաժեշտութիւնը։

Ուշադիր ընթերցենք թաթարական համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի՝ «Բնակչութեան շրջանում տարուող կազմակերպչական աշխատանքում տեղ գտած խոշոր թերութիւնների, քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնների կանխման գործում կուսակցութեան Սումկայիթի քաղկոմի բիւրոյի ցուցաբերած քաղաքական կարճատեսութեան ու անգործունէութեան մասին» որոշումը, որն ընդունուել է Մարտի երկրորդ կէսի սկզբներին եւ որում

կայ այսպիսի մի հաղորդում. «Սումկայիթում տեղի ունեցած անկարգութիւնները պայմանաւորած պատճառների ու հանգամանքների քննարկման ու խոր ուսումնասիրման համար ստեղծուել է յանձնաժողով՝ Ադրպէյճանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի երկրորդ քարտուղար ընկեր Վ.Ն. Կոնովալովի գլխաւորութեամբ։ Յանձնաժողովի աշխատանքի արդիւնքները կը քննարկուեն Ադրպէյճանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէում։ Ի գիտութիւն է ընդունուել, որ Խորհրդային Միութեան դատախազութիւնը Հանրապետութեան դատախազութեան մասնակցութեամբ հետաքննութիւն է անցկացնում տեղի ունեցած իրադարձութիւնների առնչութեամբ, դրանց մասնակից մի շարք մեղաւոր անձինք ձերբակալւած են եւ ենթարկւում են քրէական պատասխանատուութեան»։ Այս հաղորդումը կարեւոր է այն իմաստով, որ նրանում խօսքը գնում է ոչ թէ «անկարգութիւնները պայմանաւորած պատճառների ու հանգամանքների» որոնման ու բացայայտման մասին, այլ՝ «քննարկման ու խոր ուսումնասիրման» մասին, այլ խօսքով հաւաստում է, որ թաթար գերագոյն ղեկավարութեան համար եղեռնի զպանակի հարցում մութ կէտեր չկան եւ որ եղեռնագործութեան պարզից էլ պարզ ու ըստ ինքեան յայտնի «պատճառը» պարզապէս կարիք ունի հետագայ խորը քննարկման-ուսումնասիրման։

Այդ պարզից էլ պարզ եւ ըստինքեան շատ հասկանալի «պատճառը», եղեռնագործութեան շարժիչ ուժը՝ ազգային հողի վրայ հայութեան նկատմամբ թշնամանքի, հակահայկական կրքի մոլեգնումպոռթկումն է։ Ճիշտ է, թաթարական համայնավար գաղափարակենտրոնի Մարտի 20-ին մամուլում լոյս ընծայած «Որոշումը» բացայայտօրէն չի խօսում հակահայկական տեւական-մշտակայ տրամադրութիւնների մասին ու վերջիններիս անցողիկ-պարագայական բնոյթն է շեշտում, այնուամենայնիւ կամայ թէ ակամայ ընդունում է, որ այդ տրամադրութիւնները եղել են եղեռնագործութիւնը փաստ դարձնող ոչ թէ սոսկ գլխաւոր-հիմնական, այլ՝ համարեա միակ պատճառը։

Եւ իրօք, հայեացքը բեւեռելով իրադարձութիւնների նախօրեակին «Հանրապետութիւնում ստեղծուած բարդ իրադրութեան» եւ «յոյզերի մոլեգնման մթնոլորտի» վրայ, եղեռնագործութիւնը համարելով «աշխատաւորների եւ յատկապէս երիտասարդութեան գաղափարաքաղաքական, միջազգայնական դաստիարակութեան ուղղութեամբ կուսակցութեան Սումկայիթի քաղկոմի աշխատանքում տեղ գտած խոշոր սխալների արդիւնք», յանձնարարելով «Ադրպէյճանի եւ Հայաստանի աշխատաւորներին, ժողովուրդներին» Մ. Գորբաչովի դիմումի «առաջացած խնդիրներից ու դրոյթներից ելնելով ճշտորոշ միջոցառումներ իրականացնել, աշխատաւորների միջազգայնական դաստիարակութիւնը··· արմատապէս բարելաւելու, այդ գործում եղած լուրջ թերութիւններն ու վրիպումները վերացնելու ուղղութեամբ», «Որոշումը» պարզորոշօրէն յուշում է, թէ որո՞նք են «անկարգութիւնները պայմանաւորած պատճառներն ու հանգամանքները»։ Եւ մի՞թէ պերճախօս չէ «Որոշման» հետեւեալ յանձնարարականը. «Առանձնակի ուշադրութիւն է հարկաւոր նուիրել աշխատաւորների մէջ ազգամիջեան

յարաբերութիւնների բարձր կուլտուրայի, կայուն միջազգայնական համոզմունքների ձեւաւորմանը, խորապէս վերլուծել ազգային յարաբերութիւնների ոլորտում տեղի ունեցող գործընթացներն ու միտումները, ...ժամանակին նկատել եւ վճռական հակահարուած տալ ազգային քաղաքականութեան լենինեան սկզբունքներից ամէն մի շեղման»։

Միով բանիւ, լոկ ի միջի այլոց ու հպանցիկ յանձնարարելով «մշտական հոգատարութիւն ցուցաբերել մարդկանց կենցաղային ու կուլտուրական պահանջմունքների նկատմամբ» եւ ընդհակառակը յանկերգային յաճախականութեամբ արծարծելով ազգամիջեան յարաբերութիւնների եւ միջազգայնականութեան հարցերը, «Որոշումն» աներկիմաստ պահանջ է դնում. Սումկայիթի «ողբերգական իրադարձութիւններից» խրատուած, «կուսակցութեան քաղաքային կոմիտէն, քաղաքի գործադիր կոմիտէն, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպութիւնները, ժողովրդական կրթութեան մարմինները պէտք է բարձրացնեն ժողովուրդների բարեկամութեան ու եղբայրութեան ոգով երիտասարդութեան դաստիարակութեան ուղղութեամբ տարուող աշխատանքի արդիւնաւէտութիւնը, վառ եւ համոզիչ կերպով ցոյց տան ադրպէյճանական ու հայ ժողովուրդների... բազմադարեան բարեկամութեան օրինակները»։ Աւելին. «Որոշումը» կուսակցական բոլոր մարմիններին մատնացոյց է անում «քաղաքական ու գաղափարախօսական ազդեցութեան բոլոր միջոցները լենինեան ազգային քաղաքականութեան, արդի փուլում նրա էութեան պարզաբանմանը նպատակամղելու անհրաժեշտութիւնը», խորհուրդ է տալիս «չենթարկուել անպատասխանատու տարրերի գրգռութիւններին, հանդէս բերել ողջամտութիւն, հանդարտութիւն, ինքնազսպում, կասեցնել մարդկանց անառողջ յոյզերն ու պոռթկումները, թոյլ չտալ անխոհեմ արարքներ, ... ըստ ամենայնի ամրապնդել սոցիալիզմի մեծ սեփականութիւնը՝ խորհրդային ժողովուրդների եղբայրական բարեկամութիւնը»։

Դժուար չէ համոզուել, որ Պաքուի գաղափարակենտրոնի «Որոշումը», խորհրդային-համայնավար համանման բոլոր փաստաթղթերի համար ընդհանրական լոզունգային իր պճնանքից, նաեւ տագնապահարուած բաղիրովեան ղեկավարութեան պարագայական մեղայականից բեռնաթափուած, որպէս տարրական ճշմարտութեան հարիկ բացայայտում էր սումկայիթեան եղեռնագործութիւնը «պայմանաւորած պատճառների եւ հանգամանքների» հանգուցակապը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ազգային-պատմական պատկանելիութեան շուրջ կծիկուած հայ-թաթարական մերօրեայ փոխյարաբերութիւնների հետ, միաժամանակ ակնարկելով այդ փոխյարաբերութիւնների ասպարէզում թաթար «անպատասխանատու տարրերի գրգռութիւնների» հետեւանքով հենց թաթարական միջավայրում «անառողջ յոյզերի եւ պոռթկումների» փաստին, ըստ որում այդ փաստի համար էլ առաջնային պատասխանատուութեան բեռը ծանրացնելով Սումկայիթի ղեկավարութեան, առաջին հերթին կուսակցապետ Մուսլիմզադէի վրայ։

Այդօրինակ «Որոշումը» հասկանալիօրէն չէր կարող Մուսլիմզադէի եւ գոնէ տուեալ դէպքում նրանով խորհրդանշուող թաթար

մոլեկրոն ցեղայնութեան սրտով լինել։ Առաջին հայեացքով ինչքան էլ զարմանալի թուայ, Բաքուի թաթարական գաղափարակիցներին այդօրինակ դիրքորոշումը ոչ-պակաս չափով սրտովը չէր նաեւ մոսկովեան բարձրոլորտ շրջանների, ըստ որում ոչ միայն ալիեւական մաֆիայից սնուցանուած-վարձատրուող թաթարասէրների, այլեւ՝ խորհրդային «հայրենասիրութեան» գրգռմամբ սումկայիթեան եղեռնագործութիւնը ազգամիջեան փոխյարաբերութիւնների ոլորտից անպայման հեռացնելու եւ գռեհիկ սոցիոլոգիական պատճառով պարուրելու կողմնակիցների։ Բնութագրական է այն, որ «Որոշման» հրապարակման յաջորդ օրն իսկ, Մարտի 21-ին, «Փրաւդա»ն ոչ միայն կտրուկ հերքում էր եղեռնագործութեան ազգամիջեան փոխյարաբերութիւնների հողի վրայ գործուած լինելը (Սումկայիթում «տուժել են ոչ միայն հայերը, այլեւ ուրիշ ազգութիւնների պատկանող մարդիկ»), այլեւ առաջ էր քաշում «սոցիալական» մի չքնաղագիւտ «պատճառ» («օգտուելով պայթիւնալի իրավիճակից, քրէական տարրերը կողոպուտի նպատակով մտել են մի քանի բնակարաններ, որտեղ ապրել են հայեր»)···

«Որոշման» հրապարակումից ուղիղ մի շաբաթ անց, Մարտի 27-ին, մոսկովեան «Կոմսոմոլսկայա Պրաւդա» թերթում լոյս տեսած «Տագնապով ու յոյսով մտածում ենք այսօր Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ տեղի ունեցող իրադարձութիւնների մասին» յօդուածի հեղինակները, մէջբերելով Մուսլիմզադէի հրապարակ նետած ինքնարդարացման տարբերակը, հարկ չէին համարում պարզաբանել, թէ Սումկայիթի ջարդարարների չարաշահան գլխին կանգնած կուսակցապետն իր քաղաքի օրինակով «դիալեկտիկօրէն» ինչպէ՞ս էր կապակցում եղեռնագործութիւնը··· կորպաչովեան «վերակառուցման» երթին մասնակցութեան հետ։ Այնուամենայնիւ իրենց յօդուածում նրանք փաստօրէն ներբողում էին կատարում արդէն իսկ պաշտօնանկուած կուսակցապետի սաղմնային վիճակում առաջ քաշած տեսակէտին, այն փաստօրէն վերածելով եղեռնագործութիւնը «պայմանաւորած պատճառների ու հանգամանքների» համակարգի հիմքի։ Նրանք գրում էին. «Մեր զրուցակիցը (Մուսլիմզադէն,- Ե.Ն.) խօսում էր այնպէս, կարծես առաջին հերթին ինքը չէր, որ պարտաւոր էր լուծել այդ հարցերը։ Ջէ՞ որ լաւ էր իմանում, թէ իրականութիւնն ինչքանո՞վ էր համապատասխանում «բարեկարգ» քաղաքի յօրինեալ պատկերին, քաղաք, որը լիքը լցուած էր գլխացաւանք հարցերով. բնակարանային անբաւարարութիւնից մինչեւ մթնոլորտի կազակեղտոտութիւնն ու քիմիական ձեռնարկութիւնների մեծաթուութիւնը՝ դրանից բխող սոցիալական իւրայատկութեամբ։ Տրամաբանօրէն ճիշտ նոյնատիպ մի հարց էլ պէտք է ուղղել հանրապետութեան ղեկավարութեան, որը քաղկոմի նախկին առաջին քարտուղարին արդէն իսկ տուել է արդարացի գնահատական. քաղաքական անհոգութիւն։ Դա ճիշտ է։ Սակայն ղեկավարութիւնն ինքը ո՞ւր էր նայում։ Ինչո՞ւ պատահածն անսպասելի եղաւ նրանց համար, ովքեր պարզապէս ի պաշտօնէ պարտաւոր էին իմանալ»։

Առանց հիմքի չէ, որ «համակարգի» որպէս ծննդավայր Մոսկուան մատնանշեցինք եւ առանց պատճառի չէ, որ «Կոմսոմոլսկայա Պրաւդայի» երեւութապէս քիչ բան ասող հատուածը մէջբերեցինք։

Որովհետեւ նոյն օրը, Մարտի 27-ին, «Սոցիալիստիչեսկայա ինդուստրիա» թերթի աշխատակիցները, նոր երանգներով հարստացնելով «համակարգը», իրենց հերթին գրում էին. «Մեր օրերում միայն ալարկոտն է, որ չի երգում միջազգայնականութեան անունով։ Լենինի այս դիտողութիւնը կարծես թէ մեր հասցեին է նետուած։ Առօրեկյանում տեսանք ոչ-քիչ թիւով մոնումենտալ քարոզչական պաստառ-պատկերներ՝ ժողովուրդների բարեկամութեան նուիրուած։ Նոյն այդ Սումգայիթն սկսում է մի հոյակապ որմապատկերով, որը բոլորին հաղորդում է, թէ մտնում ենք ոչ աւելի ու ոչ պակաս՝ Լենինի գաղափարների կենդանի մարմնաւորումը հանդիսացող մի քաղաք։ Իսկ ամպագորգոռ լոզունգից յետոյ տաս քայլ անց (քանդուած ասֆալտով պարզապէս աւելի արագ չես ընթանայ) սկսում են ձգուել իրենց ողորմելիութեամբ ճնշող թաղամասերը, այսպէս կոչուած «նախալստրոյկա»ները՝ թիթեղից, փայտեայ ջարդուած վահանակներից եւ ժանգոտ ցանցաթելերից սարքուած հիւղաւանները։ Այստեղ մի քանի տարի ապրում են մարդիկ, այդ թւում եւ բազմազգ քաղաքի երիտասարդութիւնը։ Քաղաքում կան 55 հանրակացարաններ, որոնց չի կարելի անտարբերութեամբ նայել. ամենուր կիսաքանդ վիճակ, կեղտ ու անկարգութիւն։ Սումգայիթը «փայլում» է նաեւ բնապահպանական սարսափելի դրութեամբ, սոցիալ-կենցաղային մարզի թողքուածութեամբ, երիտասարդ բնակիչների ժամանցի կազմակերպման հարցերի նկատմամբ անտարբերութեամբ։ Զարմանալի չէ, որ ողբերգական խանգարում-խախտումը տեղի ունեցաւ հենց այստեղ, չլուծուած հարցերի ծայր աստիճանի անբարեյաջող ետնապաստառի վրայ։ Միջազգայնականութեան մասին առատ խօսքերի եւ մարդկանց կարիքների ու պահանջների, տրամադրութիւնների ու շահերի նկատմամբ իսկական կուսակցական ուշադրութեան բացակայութեան խորքի վրայ»։

Մարտի կէսերին Սումգայիթի քաղաքային խորհրդի նախագահ նշանակուած Էմինբեյլին, աթոռը զբաղեցնելուց 22 օր անց, «Իզվեստիա» թերթին (Ապրիլի 9) յայտարարում էր. «Դեռ հարկ է պատահածը վերլուծել ու վերլուծել։ Առ այժմ բացայայտուած է պատահածի լոկ մակերեսային շերտը։ Հետաքննութիւնը կը պարզի, թէ ի՞նչ է թաքնուած այդ շերտի ներքոյ»։ Էմինբեյլիի խօսքերը պարզապէս ներածութիւն էին կանխօրոք ճշտորոշուած այն հարցազրոյցին, որ նա անցկացնում էր թերթի աշխատակցի հետ։

«Իզվեստիա»յի հարցադրումն այսպիսին էր. «Երկար ժամանակ ընդունուած էր Սումգայիթի մասին խօսել վերամբարձ շեշտով։ Այն կոչում էին ոչ այլ կերպ, քան՝ Կասպիականի վրայ երիտասարդութեան քաղաք։ Այդ առողջ ու բարի տրամադրութիւնը, սակայն, ժամանակի հետ վերածուեց ինքնաքաջալերանքի. չլուծուած հարցեր կան, սակայն կարծես թէ դրանք չեն նկատում։ Վերցնենք, օրինակ, այսպէս կոչուած «նախալստրոյկա»ները՝ ինքնագլուխ, ձեռն անցած ինչով ասես կառուցուած տնակների այդ ամբողջ հիւղաւանները»։ Էմինբեյլիի պատասխանը կանխապատրաստ էր. «Այդ պայմաններում ապրում են աւելի քան տաս հազար հոգիներ։ Առանց ջրի, կոյուղու, կազի, չափով թէ որակով տարրական պահանջները չբաւարարող բնակարանութեամբ։

Այդ մարդիկ ինչպե՞ս յայտնուեցին այնտեղ. երիտասարդը Սումգայիթ եկաւ, աշխատանքի տեղաւորուեց՝ քանի որ աշխատող ձեռների մեծ կարիք կար, հանրակացարանում գրանցուեց, մէկ-երկու տարի անց ամուսնացաւ, բնակարանային հերթի վերցուեց: Սակայն հիմա էլ Սումգայիթում բնակարանի համար հերթի է կանգնած 18 հազար մարդ: Եթէ բախտը բերի՝ տաս տարուց բնակարան կը ստանայ, իսկ եթէ բախտը չբերի՝ տասնըհինգ տարուց: Ո՞ւր գնայ երիտասարդ ընտանիքը: Նա իրեն տնակ է կառուցում տախտակից եւ թիթեղից, իսկ այդ ժամանակ, քանի դեռ տնակում է ապրում, յաջողացնում է երեխաներ անեցնել, որոնք բացի այդ տնակից ոչինչ չեն տեսել: Ներկայումս «նախալսարոյկա»ներում ապրում են շուրջ երկու հազար ընտանիքներ: ...Քաղաքում, մեղմ ասած, բնապահպանական լարուած վիճակ է: Միայն խոշոր, միութենական նշանակութեան եօթ ձեռնարկութիւն կայ: Եւ դերակշռում է քիմիական արդիւնաբերութիւնը, սեւ ու գունաւոր մետաղարտադրութիւնը»: Ու դեռ փոխադրամիջոցների, հանրային սպասարկութիւնների, ճանապարհների տագնապալի վիճակը եւ այլն:

Եւ այսպէս, ուրեմն, Մոսկուայում տաս ճանկով կառչեցին եղեռնագործութեան հենց վաղորդայնին Մուալիմզադէի Սումգայիթը «բացատրող» ընկերային-կենցաղային գլխաւոր երկմիասնական «պատճառից». բնակարանային տագնապի պայմաններում «նախալսարոյկա»-հիւղաւանի առկայութիւնը եւ ամէն մի յարմարութիւնից զուրկ հանրակացարանների մեծաթիւութիւնը: Դիտել տանք, միայն, որ եթէ վերջիններիս թուաքանակի (55) հարցում միաբանութիւն էր տիրում, ապա էմինպէյլին հարկադրուած էր կրկնակի փոքրացնել «նախալսարոյկա»ների Մուալիմզադէի կողմից ուռճացուած թուաքանակը (ոչ թէ քսան հազար բնակչով շուրջ չորս հազար հիւղ, այլ՝ երկու հազար հիւղ ու տաս հազար բնակիչ):

Մոսկուայում ոչ միայն կառչեցին, այլեւ Սումգայիթի նոր «հայրերից» էմինպէյլիի օգնութեամբ ճոխացրեցին եղեռնագործութեան տուն տուած «պատճառը», չեչտակի դարձնելով «մթնոլորտի կազակեղտոտութիւնը» կամ բնապահպանական «լարուած վիճակն» ու «սարսափելի կացութիւնը» եւ այդ հիմամբ էլ եզրակացնելով, որ քաղաքն իբր ունէր «սոցիալական իւրայատկութիւն» եւ որ «սոցիալ-կենցաղային թողլքուած» վիճակն էլ «բնականաբար» յանգեցնելու էր արիւնալի իրադարձութիւնների:

Հենց այստեղ էլ վերյիշենք, որ էմինպէյլին հաստատաբանօրէն ըստ էութեան հակախօսում էր թաթարական գաղափարակենտրոնի կողմից եղեռնագործութեան հակահայկական նպատակամղուածութիւնն ընդունելու տեսակէտին ու պնդում. դա «պատահածի լոկ մակերեսային չերտն է» եւ հետաքննութեանն է պատկանում իրաւունքը պարզելու, թէ «ի՞նչ է թաքնուած այդ չերտի ներքոյ»: էմինպէյլին լաւ էր իմանում, թէ ի՛նչ էր ասում, քանի որ գիտէր, թէ Մոսկուայում արդէն հակուած են դէպի սոցիալ-կենցաղային դաժհիկ բացատրութիւնը: Բոլոր դէպքերում հետաքննութիւնը, յանձին իր վերադաս Գլխաւոր դատախազութեան, շուտով «հաստատեց», որ իր համար եւս սումգայիթեան եղեռնագործութիւնը եղած-չեղած եւ առ առաւելն «զանգուածային անկարգու-

թիւն» էր։

Չենք կասկածում, որ ընթերցողը կը հասկանայ, թէ ինչո՞ւ ընդարձակ մէջ ենք բերելու ՏԱՍՍ-ի ղեկավարութեան ԽՍՀՄ գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի հետ Օգոստոսի 20-ին անցկացրած հարցազրոյցից։ Մարտի 27-ից անցել է հինգ ամիս եւ սակայն այդ հարցազրոյցն այնպէ՛ս է յիշեցնում այն ամէնը, պարզապէս փոքր ինչ խմբագրուած տարբերակն է այն ամէնի, ինչ մենք ընթերցել ենք կենտրոնական մամուլում, լսել եղեռնագործութեան միջավայրի պատասխանատուներից։

Ահա ՏԱՍՍ-ի կողմից յետին մտքով ծամուած հարցազրուցը․ «Երկու հարիւր հազարանոց քաղաքը մեծ, չխնամուած աւանի տպաւորութիւն է թողնում։ Պարզւում է, որ այնտեղ լրիւ անուշադրութեան էին մատնուած սոցիալ-տնտեսական շատ խնդիրներ։ Առաւօտից մինչեւ երեկոյ փողոցների տէրերը երեխաներն էին, որոնք իրենց անզուսպ եռանդը գործադրելու միջոցներ էին փնտրում։ Խժդժութիւնների ժամանակ իրադարձութիւնների շրջապտոյտի մէջ ներքաշուել էին հենց դեռահասները, որոնք իրենց տարիքով դատի ենթակայ չեն։ Ձեր կարծիքով, արդեօ՞ք քաղաքի նման իրադրութիւնը անկարգութիւնների պատճառ դարձաւ, իսկ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձութիւնը՝ հրդեհ առաջացրած ջահ»։

Եւ ծամուելով իր բերանը դրուած հարցադրման Կատուսեւը բնականաբար տալու է կանխամշակուած պատասխանը․ «Այո, իհարկէ, սումկայիթցիների դժգոհութեան համար բաւականաչափ պատճառներ էին կուտակուել։ Քաղաքում աղիտալի չափերով չէր բաւականացնում բնակարանային մակերեսը։ Դրա հետեւանքով սկսել էր արագօրէն զարգանալ տարրական յարմարութիւններից զուրկ ինքնագլուխ կառուցապատումը։ Մարդկային արժանապատուութեան համար ստորացուցիչ այդպիսի պայմաններում մարդիկ ոչ թէ սոսկ ժամանակաւորապէս էին ապրում, այլ այդտեղ էր անցնում նրանց ամբողջ կեանքը։ Սումկայիթցիներին արդարացի զայրոյթ է պատճառում քաղաքի բնապահպանական իրադրութիւնը։ Սումկայիթում մթնոլորտի կազաղտոտուածութիւնը անչափ բարձր է բոլոր թոյլատրելի նորմաներից։ Մարդիկ իրաւացիօրէն դրա հետ են կապում շատ հիւանդութիւնների, առանձնապէս մանկական հիւանդութիւնների տարածման պատճառները։ Անտարակոյս, այս ամէնը չէր կարող չանդրադառնալ մարդկանց տրամադրութիւնների վրայ եւ պատրուակներից մէկը եղաւ, որ նրանք փողոց դուրս գան։ Իսկ այնտեղ արդէն գործում էին հրահրիչները, որոնք ազգայնական կարգախօսներն օգտագործել են ջարդի, կողոպուտների, սպանութիւնների կոչերի համար»։

Խե՛ղճ Սումկայիթ՝ դժբախտների դժբախտը խորհրդային բոլոր քաղաքների։ Խե՛ղճ սումկայիթցի թաթարներ՝ դժբախտագոյնները խորհրդային քաղաքացիների։ Կոկորդիլոսի առատ արցունք ձեզ՝ ձեր հարազատ այր-տայրերից, որոնք թաթարամոլական ջերմախտով ոգորել են, ոգորում են եւ պիտի ոգորեն՝ ձեր սեւ դէմքն ու արնոտ ձեռները ձիւնապիտակելու։

Նրանք ձեզ համար մնում են «հաւատարիմ քիրվա» ճիշտ

այնպես, ինչպես նրանց ապուպապ «անտա»երը՝ ձեր «եօրր» ապուպապերի համար։ Նրանք կորցրել են իրենց պատմական յիշողութիւնը, որովհետեւ ձեւացնելով ընթերցել Մարքս ու Լենին, չեն ընթերցում իրենց իսկ պատմական մատեանները, առաջին հերթին իրենց մատենագրութեան առաջնեկ «Պատում Անցած-գնացած ժամանակների» գիրքը։ Եթէ ընթերցէին, ապա դաս ու խրատ կը քաղէին եւ իրենց հոգուց թափ կը տային թիւրքերի պարտադրած «ֆիրվա»յութեան լուծը։ Անպատմելիօրէն այլանդակ դրուագները եթէ մուսանային իսկ, ապա կը յիշէին, որ «մարմնեղ ու ամբարտաւան» թիւրքը երբ պատրաստւում էր ճանապարհորդել ռուսական տափաստաններում, ապա խնայում էր ձիուն եւ «լծելով երեք, չորս կամ հինգ սլաւոնուհիների», այլ խօսքով իրենց մայրերի ու կանանց նախամայրերին, «նրանց հրամայում էր քարշ տալ իր սայլը»։

Ո՛չ, նրանք պարզապէս պատմական յիշողութիւն չունեն։ Եւ հենց այդ պատճառով է, որ կուսակցական-պետական, այդ թւում արդարադատական իրենց արհեստի բերումով քաջ իմանալով հանդերձ այն, որ Սումկայիթի «18 հազար հայերի մեծամասնութիւնը 1940-ական թուականների վերջին ախրահոչակ Բաղիրովի կարգադրութեամբ Լեռնային Ղարաբաղի գիւղերից բռնի կերպով բեռնատարներով այստեղ էին բերուած քաղաքը կառուցելու համար» («Աւանգարդ», Նոյեմբեր 4), նրանք իրենք իրենց հարց չեն տալիս, հետեւաբար եւ չեն հանդուրժում, երբ ուրիշներ հարց են տալիս.

— Թաթարներից առաջ Սումկայիթ եկած եւ նրանցից երկար հանրակացարաններում ու հիւղակներում գոյութիւն քարշ տուած եւ կազակեղտոտ օդը շնչած, աւելին՝ թաթարների կողմից մշտապէս արհամարհուած ու նսեմացուած հայերն ինչո՞ւ չեն վարակուել այն ախտով, որ թիւրքութեան յատկանիշն է եւ որի յայտանշաններն են բարբարոսական բարքերը, գազանաբարոյ հակումներն ու արիւնռուշտ մարդակերութիւնը, հայերն ինչո՞ւ իրենք կացին ի ձեռին որպէս խաժամուժ չեն գրոհել յօշոտելու թաթար համաքաղաքացիներին, այն բորենիներին, որոնցից յօշոտուելու մտայուզութիւնը իրենցից երբեք չէր հեռացել։

Նրանք իրենք իրենց այդպիսի հարց չեն տալիս եւ չեն էլ հանդուրժում, երբ ուրիշներ հարց են տալիս, որովհետեւ պատասխանը լաւ գիտեն եւ այդ պատասխանի դաժան ճշմարտութիւնն ստում է իրենց.

— Որովհետեւ այդ ախտը առհաւական է ու բնածին։ Որովհետեւ հայերը հայ են, իսկ թաթարները՝ թաթար։ Որովհետեւ հայերն ունեն հայկական գեն ու սերել են Հայկից, իսկ թաթարները՝ թաթարական գեն ու սերել են մի նախահօրից, որի թաթահետքերին ի տես Հիւկոն գոռացել է. «Թուրքն է անցել այստեղից»...

Ի դէպ, ցեղապաշտութեան ոստանի «սոցիալական իւրայատկութեան» վերաբերեալ առկայ են փիլիսոփայական գիտութիւնների դոկտոր Լ. Ցարութիւնեանի ընկերաբանական հետազօտութիւնները, որոնց շնորհիւ պարզուած են հետեւեալ ուշագրաւ իրողութիւնները.

1) Սումկայիթի բնապահպանական, ընկերային-կենցաղային անբարենպաստ պայմաններից հայերը շատ աւելի դժգոհ են եղել, քան՝ թաթարները։ Եւ դա հասկանալի է։ Առնուազն երեք հազարամեակ նստակեաց ու քաղաքակիրթ կեանք վարող ժողովրդի զաւակ, դրախտային

լեռնաստանի ծնունդ, հայերը բնականաբար աւելի ծանր պիտի տանէին այդ պայմանները, քան անապատային տափաստաններում վաչկատուն կեանքի սովոր ու նոր-նոր նստակեացութեան անցնող թաթարները։ Աւելին. վերջիններս, որպէս «տանուտէր», առաւել անբարենպաստ պայմանները պիտի վերապահէին դրսեկ հայերին։

2) Սումկայիթում հիմնադրման օրից չեչտակի աճել ու ծաղկել են տարատեսակ ախտերն ու յանցագործութիւնները. հարբեցողութիւնն ու հաշիշամոլութիւնը, պոռնկութիւնն ու միասեռականութիւնը, պաշտօնի չարաշահումներն ու կաշառակերութիւնը եւ այլն։ Այդ բոլոր ախտաւոր երեւոյթները եթէ ոչ բացառապէս, ապա գոնէ հիմնականում, առնուազն բազմակի անգամ աւելի տարածուած են եղել թաթարների միջավայրում։ Նշանակում է, որ այդ բոլոր ախտերի «բարիքներն» ու «հաճոյքները» գերակշռաբար թաթարների, իսկ չարիքներն ու տհաճութիւնները առաւելաբար հայերի բաժինն են եղել։

3) Սումկայիթում ազգամիջեան յարաբերութիւնները միշտ էլ լարման բարձր աստիճանի վրայ են եղել՝ տնտեսական, ընկերային, այդ թւում կենցաղային ու մասնագիտական ոլորտներում հայերի իրաւունքների ոտնահարման հողի վրայ։ Հայերին միշտ էլ յուզել է իրենց նկատմամբ կիրառուող ընկերային-մասնագիտական խտրականութիւնը, սակայն նրանց առանձնապէս տագնապահարել է մոլեկրօն ու խուժադուժ թաթարների տհաս ու բութ ցեղապաշտութիւնը։

Այդ բոլորի հետեւանքով հայերը ոչ միայն դժգոհ են եղել, այլեւ՝ մեծամասնութեամբ մտայոյզ, քանի որ տեւապէս իրենց ու իրենց հարազատների կեանքի համար մշտագոյ մի վտանգի զգացողութիւնն են ունեցել։ Հենց դրանից դրդուած էլ հայերի երեք քառորդը հաստատապէս մտադրութիւն է ունեցել քաղաքից հեռանալու, այդ ուղղութեամբ քայլերի է դիմել եւ հնարաւորութիւններ որոնել, սակայն կանգնել է անելի առաջ, յատկապէս բախուել Հայկական ԽՍՀ պատկան իշխանութիւնների քար անտարբերութեանը։

Ի դէպ, դարձեալ, եւ ի դիտութիւն «դժբախտ» Սումկայիթի իբր թէ բացառիկ անտանելի պայմանների համար կոկորդիլոսի արցունք թափող, այդ պայմանները որպէս սումկայիթեան «ընկերային իւրայատկութիւն» կլլեցնել փորձող եւ ցեղասպաններին փաստօրէն փրկութեան օղակ նետող բարձրաստիճանաւոր Կատուսեւների. ոչ միայն իր պատմական յուշարձաններով եւ արուեստի գանձերով, այլեւ իր բազմամիլիոն ազգաբնակչութեան մարդկային ու քաղաքակրթական բարձր մակարդակով համբաւուած Լենինկրատում, դեռ զանց առած բազմահարիւր հանրակացարանների հոծամբոխ ու բազմազգ բնակիչներին, նաեւ ինքնագլուխ կառուցուած հիւղերի մէջ տասնամեակներ շարունակ օր մթնացնողներին, մէկուկէս միլիոն մարդ, ուրիշ խօսքով շուրջ 350-400 հազար ընտանիք առ այսօր ապրում է ընդհանուր բնակարաններում («կոմունալկաներում»), ըստ որում կենտրոնական հեռուստատեսութիւնն ի տես համայն աշխարհի ցոյց է տուել վեց սենեականոց այդպիսի մի բնակարան, որում ապրում էր... ինը ընտանիք։ Եւ ի՞նչ. լենինկրատցիները երբեւէ մորթե՞լ են ոչ-սլաւոն

չԹնիկ որեւէ միաւորի ներկայացուցիչներին։ Իսկ եթէ մորթած լինէին, Կատուսեւների կարծիքով դա բացառիկ ու համարեա արդարանալի՞ պիտի լինէր···

Այնուհետեւ, նոյնիսկ եթէ ընդունենք, որ Սումկայիթում երկար տարիներ կուտակուած ընկերային-անտեսական դժգոհանքն էր պայթիւնի ու բռնկման դրդապատճառը, ապա ինչո՞ւ եղեռնագործութիւնն ուղղուեց հայերի դէմ։ Մի՞թէ նրանք էին քաղաքի անլոյծ մնացած հարցերի պատասխանատուն ու մեղաւորը, մի՞թէ հայերը էին քաղաքի հայրերը։ Եթէ եղեռնագործութիւնն իրօք «զանգուածային անկարգութիւն» էր, այլ խօսքով՝ ընկերային բողոքի յանցագործ դրսեւորում, ապա այդ բողոքն ինչո՞ւ չուղղուեց ընկերային անարդարութեան իսկական խորհրդանշանների՝ քաղաքապետ Մամէտովի եւ կուսակցապետ Մուսլիմզադէի, սրանց պետերի՝ Հանրապետական կուսակցապետ Բաղիրովի, Հանրապետութեան նախագահ Թաթլիեւի ու վարչապետ Սէիտովի, ու դեռ՝ այդ պետերի պետ գլխաւոր քարտուղար Կորպաչովի եւ նախագահ Կրոմիքոյի դէմ։ Թէ՝ իրաւազրկուած ու տնանկոխուած սումկայիթցիների զայրոյթին զոհ չգնալու համար, նրանք պայթիւնն ուղղեցին հայերի դէմ···

Որոնէք գէները, պարոնայք խորհրդային բարձրաստիճանաւորներ, եւ տարրալուծէք արիւնը։ Գէնն ու արիւնն են պղտոր, թիւրքական, թուրքական։ Որոնէք այդ պղտոր գէներն ու արիւնը հրահանգաւորող-գործարկողներին, պարոնայք, եւ բացայայտէք նրանց։ Հրահանգաւորող-գործարկողները, պաքուեցիները, երիտթուրքական-քեմալական եւ մուսավաթական համայնավարներն են, իսկ սրանց մոսկովեան հովանաւորները՝ ժառանգորդները մեծապետական շովինիստ այն ռուսների, որոնք դեռ ցարերի օրօք երազում էին Հայաստանը տեսնել··· առանց հայի։

## Գ.

Տարբեր աղբիւրներ Սումկայիթի բնակչութեան համար առաջադրում են տարբեր թիւեր՝ 200-ից մինչեւ 250 հազար, իսկ քաղաքի հայերին հաշւում են շուրջ 8–10 տոկոս, քանակապէս՝ 18–20 հազար մարդ։

Խորհրդային Միութեան գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի հաւատամամբ, փետրուարեան արիւնալի իրադարձութիւնները համատարած էին. «Դէպքի վայր էր դարձել ամբողջ քաղաքը, իր միկրոշրջաններով, թաղամասերով, շատ բնակարաններով»։

«Դէպքը» հաստատապէս տեւել է երեք ցերեկ ու երեք գիշեր։

Արդ, այդ պայմաններում կորուստների հաշուեկշիռը ինչպիսի՞ն կարող էր լինել։

Խորհրդային Միութեան դատախազութեան Մարտի 22-ի հաղորդագրութիւնը, որը յարաբերաբար ծաւալուն եւ մանրամասն առաջին պաշտօնական տեղեկատուութիւնն էր պարունակում, այսպիսին էր.

«Ինչպէս արդէն հաղորդուել է, սոյն թուի Փետրուարի 28-ին Սումկայիթում (Ադրբէյջանական ԽՍՀ) մի խումբ խուլիգանացած տարրեր գործել են անկարգութիւններ, որոնք ուղեկցուել են բռնութիւններով եւ այլ օրինախախտումներով։ Խորհրդային Միութեան դատախազութեան քննչական յատուկ խմբի կողմից այդ յանցագործութիւնների եւ խախտումների իւրաքանչիւրի վերաբերեալ մանրազնին քննութիւն է կատարւում։ Հաստատուած է, որ յանցապարտ գործողութիւնների հետեւանքով զոհուել են տարբեր ազգութիւնների պատկանող 32 մարդիկ։ Տուժել են 197 քաղաքացիներ, այդ թւում շուրջ 100 միլիցիայի աշխատողներ։ Կատարուել է 12 բռնաբարութիւն։ Թալանուել են աւելի քան 100 բնակարաններ։ Վնասուել են կենցաղային սպասարկման 26 կէտեր եւ աւելի քան 20 մեքենաներ։ Սպանութիւններին, բռնաբարութիւններին, անկարգութիւններին եւ թալանին մասնակցութիւն բերած անձինք ներկայումս հիմնականում հաստատուել են։ Ձերբակալուած է 92 մարդ, որոնցից ոմանք քրէական յանցագործութեան համար նախկինում դատուածներ են։ Հասարակական կարգի խախտման համար վարչական պատասխանատուութեան են ենթարկուել շուրջ 400 հոգիներ։

Նոյնպէս հետաքննութիւն է կատարւում օրինախախտման այն փաստերի վերաբերեալ, որոնք Փետրուարի վերջերին տեղի են ունեցել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, որտեղ բախման հետեւանքով սպանուել են երկու քաղաքացիներ եւ շուրջ 50 հոգի մարմնական վնասուածք ստացել։

Շարունակւում են աշխատանքները՝ բացայայտելու բռնութեան եւ անկարգութեան արարքների հրահրիչներին եւ կազմակերպիչներին։ Մօտ ժամանակներս յանցաւորները կը կանգնեն դատարանի առաջ»։

Եկէք, նախ, որպէս օրինաչափութիւն, զանց առնենք Սումկայիթի եղեռնագործութիւնը ազգամ-ակերանեան (հոգ չէ թէ ե՛ւ ճութեամբ, ե՛ւ թուագրմամբ, ե՛ւ տեղայնացմամբ չարամտօրէն խեղաթիւրուած) մեզ քաջածանօթ միջադէպին յարադրելու մեզ նոյնքան քաջածանօթ անամօթ նենգութիւնը։

Եկէք, ապա, խելամտօրէն անսանք «կուզիկին գերեզմանը կ'ուղղի» առոյթին եւ, որպէս բնաւորութեան գծի, ներենք նաեւ արիւնալի իրադարձութիւններից աւելի քան երկու տասնօրեակ անց Սումկայիթի եռօրեայ եղեռնագործութեան տեւողութիւնը Փետրուարի 28-ով սահմանափակելով միօրեայի վերածելու աւելի քան անամօթ, որպէս հարիւր միլիոնաւոր մարդկանց խաբելու փորձ քրէականօրէն պատժելի զեղծարարութիւնը, որը անպատիժ չմնաց։ «Արկումենտի Ի Ֆակտի» շաբաթաթերթը (Ապրիլի 2–8, թիւ 14), պատասխանելով «իրականութիւնը խեղաթիւրող չար ձայներ»ին՝ «զանգուածային լրատուութեան արեւմտեան միջոցներին» ու հերքելով Պի·Պի·Սի·ից ու «Նիուզուիք»ից մինչեւ «Տեր Շպիկել» ձգուող «չարամտութիւնը», պնդում էր, որ Սումկայիթում «յանցագործութիւններ եւ իրաւախախտումներ» տեղի են ունեցել միայն ու միայն Փետրուարի 28-ին (չմոռանալով, ի յարգանս թաթարների, նաեւ «Լեռնային Ղարաբաղի իրաւախախտումները», որոնք տեղի են

ունեցել Փետրուարի վերջերին»...)։ Փաստօրէն հաղորդագրութեան գեղծարարութիւնն էր բառացի կրկնելու նաեւ Խորհրդային Միութեան Արտաքին գործերի նախարարութեան պաշտօնական բանբեր Կեննատի Գերասիմովը, մոլորութեան մէջ գցելով ոչ միայն խորհրդային, այլեւ համաշխարհային հասարակական կարծիքը։

Եկէք, այնուհետեւ, հաշտուենք այն մտքի հետ, որ թէկուզ կորպաչովեան ժամանակներն են եւ բացախօսութիւնն էլ իբր գերիշխում է, խորհրդային դատախազութիւնն այնուամենայնիւ դեռ մնում է ստալինեան եւ իր էութեանն ու գործելակերպին հաւատարիմ, հետեւաբար մի փոքր հաղորդագրութեան մէջ տարրական փաստերի մասին խօսելիս տուեալները հինգ անգամ պիտի ուղեկցի «շուրջ» ու «աւելի քան» դարձուածքներով (խօսքը կարծես թէ անճշտորոշելի երկնային մարմինների կամ վտառի ձկների գլխաքանակի մասին է գնում)։

Եկէք, վերջապէս, որպէս ամէնօրեայ անպարարութեան հերթական դրսեւորում, չընկնենք նաեւ այնպիսի մանրուքների ետեւից, ինչպիսիք են «մի խումբ խուլիկանացող տարրեր» (քիչ ներքեւում պարզւում է, որ «մի խումբ»ի միայն ձերբակալուած անդամների թիւը... 92 է), «տարբեր ազգութիւնների պատկանող մարդիկ» (երբ խօսքն իրականում երկու ազգութիւնների մասին է) եւ համանման միւս դարձուածքները։

Եկէք մեր ուշադրութիւնը բեւեռենք դատախազութեան Մարտի 22-ին առաջադրած թիւերի վրայ, դրանք համեմատելով նոյն դատախազութեան երկրորդ անձնաւորութեան՝ Կատուսեւի Օգոստոսի 20-ի մեզ ծանօթ նոյնքան պաշտօնական հարցազրոյցի (հնարաւորութեան դէպքում՝ նաեւ մոսկովեան դատավարութեան ընթացքում Նոյեմբերին բացայայտուած) տուեալների հետ։

Դատախազութեան հաղորդագրութեան եւ Կատուսեւի հարցազրոյցի համապատասխան մասերն ուշադիր ընթերցող իւրաքանչիւր ոք անպայման կը համոզուի, որ ըստ առաջինի միայն ու միայն մէկ օրուան՝ Փետրուարի 28-ի ընթացքում է, իսկ ըստ երկրորդի՝ մինչեւ Փետրուարի 28-ի կէս գիշերն է, որ զոհուել են այն 26 հայերը եւ սատկամահ արուել այն 6 ջարդարար թաթարները, որոնց գումարով առաջացած 32 մեռեալների թիւը առ այսօր զարմանալի մի թիւրիմացութեամբ ընդունւում է որպէս Սումկայիթի արիւնայեղութեան ընդհանուր հաշուեկշիռ։ Իրականում խորհրդային դատախազութեան կողմից հրապարակուած հաղորդագրութիւններից-յայտարարութիւններից եւ ոչ մէկում յստակօրէն ու ճշտորոշօրէն չի ասուած, որ 32-ը սումկայիթեան ընդհանուր հաշուեկշիռն է, ըստ որում ամէն ինչ արուած է այնպիսի աղուիսային երկիմաստութեամբ, որ եթէ օրերից մի օր ինչ որ հրաշքով մեռեալների ընդհանուր թիւի շուրջ ճշմարտութիւնը յանկարծ ի յայտ գայ, ապա դատախազութիւնը հնարաւորութիւն ունի արդարանալու. «Մենք երբեք էլ չենք չեշտել, թէ 32-ը Սումկայիթի բոլոր մեռեալների թիւն է։ Մենք տուել ենք ոչ թէ ընդհանուր հաշուեկշիռը, այլ՝ տուեալները Փետրուարի 28-ի կէս գիշերուան դրութեամբ»։

Արդ, քանի որ ե՛ւ դատախազութեան մարտեան հաղորդագրու-

թեամբ, ե՛ւ գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի օգոստոսեան հարցազրոյցով շեշտուած է, որ 26 հայեր զոհուել են մինչեւ Փետրուարի 28-ի կէս գիշեր ձգուող ժամանակամիջոցին, ապա ինչո՞ւ հաշուառման չեն ենթարկուել եւ ճշգրտապէս քանի՞ հոգի էին Փետրուարի 29-ին զոհուած հայերը, որոնցից գոնէ շուրջ մէկ տասնեակի վերաբերեալ դատախազութիւնն ինքն իսկ պատառ-պատառ հաղորդել է հասարակայն տուեալներ՝ համապատասխան գործերը յանձնելով դատավարման։ Ինչո՞ւ, ի՞նչ նկատառումով եւ ո՞ր տրամաբանութեամբ մինչեւ Փետրուարի 28-ը ներառեալ հայ զոհերի թիւը 26 ցոյց տուող դատախազութիւնն ու Կատուսեւը, ընդունելով հանդերձ Փետրուարի 29-ի օրը ջարդերի նոր ու կատաղած թափով շարունակուած եւ նորանոր հայ զոհեր խլած լինելու իրողութիւնը, 26 թիւն անփոփոխելի են հռչակել։ Մենք դեռ կ՚որոնենք այդ հարցերի պատասխանը, այստեղ պարզապէս հաստատելով, որ 26 թիւը առանց առարկութեան պէտք է դարձուի 33, քանի որ Փետրուարի 29-ին միայն երկու շէնքերի առաջ հաստատապէս զոհուած 7 հայերի սպանութեան գործը Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներին գտնւում էր Մոսկուայում գումարուած Գերագոյն դատարանի քրէական գործերի մարմնի ատեանին։ Հայ զոհերի նուազագոյն թիւը, ուրեմն, անառարկելիօրէն 33 լինելով եւ ստուգապէս սատակամահ արուած 6 թաթարներին էլ ընդգրկելով՝ մեռեալների ընդհանուր թիւը կը դառնայ 39։ Երեւոյթ-ները, եթէ···

···Եթէ ընդունենք, որ Փետրուարի 29-ի գիշերը, երբ վերջնապէս կասեցուել են «անեղծուածային» պայմաններում շատ երկար հանդուրժուած «զանգուածային անկարգութիւնները», թաթարները ոչ մի դիմադրութիւն ցոյց չեն տուել (իսկ ցուցմունքներն ասում են, որ նրանք պատին դէմ արուած աննչանների նման դիմադրութիւն են ցոյց տուել), ուրեմն եւ մինչ այդ մահացուած 6-ից յետոյ լրացուցիչ սատակամահ արուածներ չեն ունեցել (իսկ ականատեսները պնդում են, որ ունեցել են, այն էլ՝ ոչ քիչ թիւով, գրահամեքենաների տակ ճզմուած)։

Արդ, Փետրուարի 29-ին սատակուած թաթարների թիւն ինչքա՞ն կարող էր լինել։ Հոգ չէ թէ այդ դէպքում չունենք այնպիսի ամուր կռուան, ինչպիսին առկայ է Փետրուարի 28-ի անուն առ անուն յայտնի գոնէ շուրջ մէկ տասնեակ հայ զոհերի պարագային, այնուամենայնիւ կարող ենք կռահել նաեւ 6 թիւին աւելացուելիք թաթարների գլխաքանակը։ Եւ ահա, թէ ինչպէս։

Դատախազութեան մարտեան հաղորդագրութեան համաձայն Փետրուարի 28-ին «տուժել են շուրջ 100 միլիցիայի աշխատողներ», իսկ ըստ Կատուսեւի օգոստոսեան հարցազրոյցի՝ մինչեւ Փետրուարի 28-ը ներառեալ «ներքին գործերի մարմինների աւելի քան 100 աշխատակիցներ եւ զինուորական ծառայողներ տարբեր աստիճանների ծանրութեան մարմնական վնասուածքներ են ստացել»։ Հեշտ է նկատել, որ այստեղ եւս գործ ունենք խորհրդային դատախազութեան հերթական աչքակապութեան հետ. Մարտ ամսին հարիւրից մի քանի հատ աւելի կամ պակաս վիրաւորները բոլորն անխտիր ոստիկաններ են, իսկ ահա Օգոստոսին հարիւրից մի քանի հատ աւելի եղող վիրաւորների շարքում ոստիկանների կողքին յայտնւում են նաեւ բանակայիններ, ըստ որում

Կառուսեփ յայտարարութիւնն այնպիսի խորամանկութեամբ է ձեւակերպուած, որ այս դէպքում եւս «աւելի քան 100»ը հնարաւոր է առնչել բացառապէս ոստիկանների հետ եւ հինգ ամիս խառնի. որպէս «ռազմական գաղտնիք» թաքուն պահուած վիրաւոր բանակայինների թուաքանակն անյայտ համարել։ Բոլոր դէպքերում ոչ թէ պարզապէս անհաւանական, այլ ուղղակի անհաւատալի, ուրեմն պոչաւոր սուտ է այն, որ իբր «շուրջ» կամ «աւելի քան» հարիւր սումկայիթցի հիմնականում թաթար ոստիկաններ վիրաւորուել են առ 28 Փետրուարի, քանի որ տեղական ոստիկանութիւնը, ինչպէս հաստատուած է ե՛ւ պաշտօնական փաստաթղթերով, ե՛ւ ռուս ու թաթար ականատեսների վկայութեամբ, եղել է ջարդարարների դաշնակիցն ու հովանաւորը, առնուազն եղեռնագործութեան անզգայ դիտորդը։ Համենայն դէպս եթէ նոյնիսկ մի պահ հակուենք այն մտքին, որ հարիւրից մի քանի հատ աւելի կամ պակաս ոստիկաններ կարող են գերբնական ինչ որ հրաշքով վիրաւորուած լինել, ապա պիտի դառնանք ու ասենք, որ դատախազութեան մարտեան հաղորդագրութեան բանակայինների տուժելու հարցում լռութեան՝ դատապարտելի խարէութիւն լինելու պայմաններում, գլխաւոր դատախազի առաջին տեղակալի յայտարարութիւնն էլ արդէն լկտիութեան սահմանակցւող նենգափոխում է։ Այն պարզ պատճառով, որ «տուժած կողմի»՝ նահատակուած հայերի հարազատների շահերի պաշտպան փաստաբան Ռշտունին Նոյեմբերի 3-ին Մոսկուայում Գերագոյն դատարանի առաջ յարուցուած միջնորդութեան երկրորդ կէտում շեշտում էր հետեւեալը.– Դատական գործի նիւթերից պարզւում է, որ Սումկայիթում կարգ ու կանոն հաստատելու նպատակով Փետրուարի 28–29-ին քաղաք մտցուած զինուորական 9 ստորաբաժանումները (շուրջ 20 հազար զինուոր եւ սպայ) անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել կատարուող յանցագործութիւնները կանխելու եւ բնակչութեան անվտանգութիւնն ապահովելու համար, հիմնականում զբաղուած են եղել ինքնապաշտպանութեամբ, որի հետեւանքով, ինչպէս արձանագրուած է դատական գործի երկրորդ հատորի 33-րդ թերթում, տուժել է 276 բանակային։

Արդ, բանակայինների հիմնականում «ինքնապաշտպանական» դիրքերում մնալու պայմաններում առ 28 Փետրուարի կէս գիշերը 6 թաթարների սատակամահ անելիս՝ կարգ ու կանոնի «պաշտպանները» տուել են «շուրջ» կամ «աւելի քան» 100 վիրաւոր։ Այդ 100-ը ոստիկանութեան վերապահելով ենթադրենք, որ Կառուսեփ թաքցրած «ռազմական գաղտնիքի»՝ ետին էլ կայ 100 վիրաւոր բանակային։ Եւ քանի որ դատական գործի հաղորդած 276 թիւը բացառապէս բանակայիններին է վերաբերում, նշանակում է, որ Փետրուարի 29-ին զորքն ունեցել է առնուազն 176 վիրաւոր։ Տարրական տրամաբանութիւնը յուշում է, որ կրաւորաբար ինքնապաշտպանուելիս 100 վիրաւոր տուած զորքը եթէ մինչ այդ սատկեցրել է 6 թաթարի, ապա Փետրուարի 29-ին թաթար ջարդարարներին վերջնապէս վճռականօրէն սանձահարելու գործողութիւնների ձեռնարկած բանակայինները շուրջ կրկնապատիկ (176) վիրաւոր տալու դէպքում պէտք է սատկեցրած լինեն շուրջ կրկնապատիկ էլ թաթար, գոնէ մի 10 գլուխ, թաթար մեռելների թիւը 6-ից բարձրացնելով 16-ի։ Իսկ դա նշանակում է, որ Սումկայիթի առնուազն 33 (26

գումարած 7) հայ զոհերի եւ տանուաղն 16 (6 գումարած 10) թաթար սատակեալների գումարով՝ մեռեալների ընդհանուր թիւը «սրբագործուած» 32-ից պէտք է բարձրացուի ու հասցուի 49-ի։ Քառասունըիննի, եթէ...

...Եթէ առկայ չլինէին դատախազական-կատուսեւեան այնպիսի այլ գլուխկոտրուկներ, որոնց առաջ թեւաթափ իր անզօրութիւնը կը խոստովանէր Ռոզեթի քարի առեղծուածն ընթերցած եգիպտագէտ Շամպոլիոնն անգամ։

Դատախազութեան մարտեան հաղորդագրութեան համաձայն «Թալանուել են աւելի քան 100 բնակարաններ, վնասուել են կենցաղային սպասարկման 26 կէտեր եւ աւելի քան 20 մեքենաներ»։ Կատուսեւի օգոստոսեան հաղորդման համաձայն «տակնուվրայ է արուել մօտ 200 բնակարան, աւերուել ու հրկիզուել է 50-ից աւելի կենցաղային կէտ, վնասուել է մի քանի աւտոբուս եւ ինքնաշարժ»։ Վերջիններիս թիւը նուազել է երեւի այն պատճառով, որ, ինչպէս դեռ կը տեսնենք, «ինքնաշարժային» կատակերգական դատախաղ էր գնում։ Սակայն այդ ի՞նչ հրաշքով է, որ հայերի աւերուած-հրկիզուած բնակարանների եւ աշխատատեղիների թիւը Մարտից մինչեւ Օգոստոս կրկնապատկուել է։ Ի՞նչ է, երկաթ ու պետոնից շինութիւնների մի մասը, սկզբում որպէս սովորական վիրաւոր բանակայինների հետ հաշուից դուրս թողնուելով, հետագայում մահանալով հաշուի մէ՞ջ է ընկել։ Եկէք, սակայն, դատախազութեան մարտեան տուեալը հերթական կեղծիք չհամարենք եւ բացատրութիւն որոնենք։

Սումկայիթի քաղաքային խորհրդի նոր նախագահ Էմինպէյլին Ապրիլի 9-ին «Իզվեստիա»յին հաղորդում էր. «Քաղաքի արտաքին վէրքերը բուժել ենք։ Վերականգնուած են յարձակման ենթարկուած բոլոր բնակարանները։ Եթէ բնակիչները դժգոհ եղան վերանորոգութիւնից, ապա վերստին վերանորոգեցինք։ Սակայն սպին հոգիներում բնականաբար երկար կը մնայ»։ Կուսակցութեան քաղաքային կոմիտէի նորընտիր առաջին քարտուղար Հաճիեւն էլ Մայիսի 11-ին «Փրաւդա»յին յայտնում էր. «Քաղաքային խորհրդի եւ քաղաքի ձեռնարկութիւնների հաշուին վերանորոգել ենք բոլոր տուժածների բնակարանները»։ Ե՛ւ Հաճիեւը, ե՛ւ Էմինպէյլին իրականում սուտ էին, քանի որ բնակարաններն իրենք չէին վերանորոգել։ Վերանորոգութիւնն արուել էր դեռ մինչեւ իրենց նշանակումը, եղեռնագործութեան վաղորդայնին իսկ. տուժածների դատապաշտպան Ռշտունին Գերագոյն դատարանի առաջ իր միջնորդութեամբ պահանջում էր վկայութեան կանչել Սումկայիթում Ադրբէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ Գանիֆաեւին, որը, տնային կառավարիչ Թահմազովի վկայութեամբ, Մարտի 1-ին բնակարանային շահագործման թիւ 12 գրասենեակի պետ Վելի Մամէտովին կարգադրել էր շտապ վերացնել ջարդարարութեան բոլոր հետքերը՝ թաղամասով մէկ թափուած, ջարդոտուած ու հրկիզուած կարասիներն ու այլ իրերը հաւաքել-տանել քաղաքային աղբանոց, լրիւ վառել եւ մոխիրն էլ թաղել, իսկ բնակարանները շտապ վերանորոգել։ Տուժած հայուհիներից Ի. Մելքումեանի վկայութեամբ քննիչ Սոսնինը անակնկալի էր եկել՝ երբ իրենց բնա-

կարանը մտնելով տեսել էր մաքրամաքուր յատակը, սպիտակեցրած պատերը, հենց նոր ներկած դուռն ու լուսամուտը···

Ուրեմն աւերուած-հրկիզուած բնակարանների եւ աշխատատեղերի թիւը Մարտի 22-ից մինչեւ Օգոստոսի 20 կրկնապատկուել, վերագրենք Սումկայիթ գործուղուած երկու հարիւր քննիչների խմբի ղեկավարներ Նենաշեւի եւ Գալկինի շերլոք-հոլմսեան հռետորութեան ու եռանդին եւ գովենք նրանց այն բանի համար, որ հինգ ամսում կարողացել են պարզել, թէ իրենց մոլորեցնելու նպատակով Պաքուի գաղափարակենտրոնի լիազոր Գանիֆաեւի ղեկավարութեամբ քաղաքի «հայրերը» քանի՞ բնակարանի պատ էին կիրով սպիտակացրել ու դուռ-լուսամուտ ներկել՝ նահատակ հայերի արիւնը ծածկելու, ոճրագործների հետքերը սրբելու եւ եղեռնագործութեան իրեղէն ապացոյցներն էլ վերացնելու մտահոգութեամբ։ Այդ դէպքում, սակայն (նոյնիսկ եթէ ներենք այն, որ նրանք, բացայայտելով պետական բազմայարկ շէնքերում «թաքցուած» 100 տուժած բնակարանները, չեն բացայայտել Կասուտեւի կողմից թաքցուած սեփական միյարկանի 100 տների աւերման-հրկիզման փաստը) ծագում է բնական եւ ըստ էութեան մարդկային մի հարց. քննիչներն այդ նոյն հռետորութիւնն ու եռանդը ինչո՞ւ ի գործ չեն դրել՝ տուժած հայերի ճշգրիտ թիւը պարզելու համար։

Եւ իրօք, խորհրդային դատախազութեան մարտեան հաղորդագրութեան համաձայն «տուժել են 197 քաղաքացիներ, այդ թւում շուրջ 100 միլիցիայի աշխատողներ», այլ խօսքով խոշտանգուած-վիրաւորուած ու չմահացած հայերի թիւը (ենթադրելով որ թաթար ոչ մի վիրաւոր չի եղել) մօտաւորապէս 97 է։ Թո՛ղ որ աղաղակող կեղծիք էր գազանաբարոյ խաժամուժից հալածուող սումկայիթահայերի վիրաւորներին դուրս բերել աւելի փոքրաթիւ, քան՝ այդ խաժամուժի դաշնակից ու հովանաւոր ոստիկանութեան «տուժածներին»։ Այս դէպքում կարեւորն այդ չէ, այլ՝ այն, որ Կասուտեւը օգոստոսեան հարցազրոյցում թաքցնում էր մի թիւ՝ վիրաւոր հայերի քանակը, աւելի շատ բանն այնպէս էր ներկայացնում, որ նահատակուած 26 հոգուց դուրս հայերից իբր ոչ ոք չի տուժել։ Իսկ մոսկովեան դատավարութեան նիւթերից մենք գիտենք, որ հակառակ դատախազութեան մարտեան կեղծագրի եւ Կասուտեւի օգոստոսեան կեղծարար լռութեան, հայերից «աւելի քան 400 հոգի ստացել են տարբեր ծանրութեան մարմնական վնասուածքներ» («Աւանգարդ», Նոյեմբերի 11)։

Արդ, երբ իրականութիւնն այսպիսին է, ծագում է հերթական հարցը, որը Հայաստանի Համայնավար երիտասարդութեան կազմակերպութեան կենտրոնական կոմիտէի պաշտօնաթերթ «Աւանգարդը», համարձակութեան հերթական մի նոպայի, այսպէս էր ձեւակերպում. «Մենք զրկուած ենք մեր այն 400 հայրենակիցների ճակատագրի մասին որեւէ տեղեկութիւն ունենալուց, որոնք այս կամ այն աստիճանի մարմնական վնասուածքներ են ստացել. որտե՞ղ են նրանք, ի՞նչ վիճակում, ի՞նչ են անում։ Չէ՞ որ (որքա՛ն կ'ուզենայինք սխալուել) եթէ մէկ այլ տեղ անգամ նրանք վախճանուել են Սումկայիթի վէրքերից, ապա նրանք եւս նոյն այդ ցեղասպանութեան զոհերն են եւ նրանց մահն էլ պէտք է գումարուի այն··· քանակի՛ն։ Բացի այդ՝ ինչի՞ հիման վրայ հաւատալ

նոյն այդ 400 թիւին։ Քանզի եթէ ընդունում ենք, որ փրոց, աւերուել, ոչնչացուել ու թալանուել է 200 բնակարան, 100-ից աւելի տուն, 40-ից աւելի աւտոփոխադրական միջոց, 50 մշակութա-կենցաղային կէտ, ապա, եթէ նաեւ բացառում ենք փողոցը, բակը, աշխատատեղը, խանութը եւ այլն, ստացւում է, որ ամէն մի բնակարան-տուն-փոխադրամիջոց-կենցաղակէտում զոհուել է ընդամէնը 1,01 հա՞յ...»

Այժմ արդէն վերադառնանք հայ նահատակների թուաքանակի խնդրին։

Խորհրդային դատախազութիւնը եթէ տուժած բնակարանների փաստը սկզբում կոծկել, իսկ ապա նենգափոխել է նրանց թիւը, եթէ յամառօրէն մինչեւ վերջ թաքցրել է աւերուած ու հրկիզուած տների փաստը եւ կեղծել տակնուվրայ արուած ու թալանուած բնակարանների թուաքանակը, եթէ սկզբում խարդախել է վիրաւոր հայերի թիւը, իսկ հետագային վարագուրել նրանց առկայութիւնն իսկ, եթէ հասարակայնութեան աչքերի մէջ նայելով ուրացել է Փետրուարի 29-ի հայ զոհերին ու մինչեւ վերջ ստել նահատակուած հայերի ճշգրիտ թիւի հարցում, ապա հնարաւո՞ր է հաւատալ յամառօրէն հոլովւող 26 թիւին, այն էլ այն դէպքում, երբ նոյն ինքն դատախազութեան պաշտօնական փաստաթղթերից ու տուեալներից իսկ բխում է առնուազն 33 նահատակների մի թուաքանակ եւ հնարաւո՞ր է բաւարարուել 33 թիւով, երբ սկզբից մինչեւ վերջ իր ամէն մի հաղորդման մէջ անպարկեշտօրէն եւ անամօթաբար սուտ այդ դատախազութեան նկատմամբ անվերականգնելի հաւատախախտումից անկախաբար, տարրական տրամաբանութիւնն իսկ այլ, շատ աւելի մեծ թիւ է յուշում․ Սումգայիթի 18 հազար հայերին հաշուելով 3600 տուն-ընտանիք եւ նկատի առնելով աւելի քան 300 տուն-ընտանիքի ջարդարարութեան թիրախ դառնալը, ուրիշ խօսքով հայի իւրաքանչիւր 12 տուն-ընտանիքից մէկի ամբողջութեամբ կամ մասնակի կործանումը, եղեռնագործութեան յորձանուտն ընկած հայերի թուաքանակը պիտի հաշուել նուազագոյն 1500 մարդ։ Այդ թուաքանակի կէսը տնից բացակայ, փախած կամ թաքնուած եւ հրաշքով փրկուած հայերի հաշուին գիջելու դէպքում իսկ կ'ունենանք հաւանական տուժածների 750 թուաքանակ։ Արդ, խորհրդային դատախազութիւնը յամառօրէն յանկերգել է 123 թուաքանակը (97 վիրաւոր եւ 26 զոհուած), իսկ պաշտօնական (այլ պաշտօնապէս եւ հրապարակայնօրէն չխոստովանուած) տուեալները յուշել են 433 թուաքանակը (առնուազն 400 վիրաւոր եւ 33 զոհուած), այլ խօսքով՝ 3,5 անգամ աւելի։ Հաշուառումից դուրս թողնուած 317 հոգիների հետ ո՞նց վարուել. նրանցից քանիսի՞ն հաշուել զոհուածների, քանիսի՞ն՝ վիրաւորների թւում...

Եւ յետոյ՝ հարցերի հարցը. որտե՞ղ են երեխաները, նահատակուած հայ երեխաները, որոնցից եւ ոչ մէկը, իբր, հետաքննութեան ղեկավարներ Նեննաշեւի եւ Գալկինի «հաստատապէս հաստատ» հաւաստիքով, «չի տուժել-տառապել»։ Ի դէպ, Մոսկուայի երեւելի այդ քննչապետերը, դատախազութեան մարտեան հաղորդագրութիւնից ութ օր անց, Մարտի 30-ին, ի պատասխան տարաձայնուող «զրոյցների» յայտարարում էին. «Զոհերի թիւը ոչ թէ չորս հարիւր էր կամ թէ հինգ հարիւր, այլ հենց երեսուներկու, ինչպէս որ տրուած է Խորհրդային

Միութեան գաղափարախօսութեան հրատարակած հաղորդագրութեան մէջ, ըստ որում քանիցս հայ եւ վեց ադրպէյճանցիք»։ Հատկանշալի է, որ հենց Գալկինի նախապատրաստած միջազգային եզրակացութեան հիմամբ երեք ջարդարարների գործը Մոսկուայում քննող Գերագոյն դատարանի քրէական դատա-կանի նախագահ Բրիզէն զարմանալի զարմանքով էր ընդունելու փաստաբան Ոչտունու վկաներից մէկին ուղղուած՝ «Ձեր կարծիքով միայն 32 մա՞րդ է սպանուել Սումկայիթում» հարցը, եւ իր թէ տարակուսած, իր հերթին հարց էր տալու. «Մի՞թէ դուք կասկածում էք պաշտօնական տուեալներին»։

Իսկ ո՞վ չէր կասկածել, արդեօք, այդ «պաշտօնական տուեալներին», բացի անշուշտ նրանցից, ովքեր պաշտօնական ոճով «հեղինակել» էին եղեռնագործութիւնը եւ նրանցից, ովքեր, անսալով իրենց արեան մէջ նստած «գիրվա»յութեան ձայնին, մէկանգամընդմիշտ յօրինել էին 32 թիւը։ Վերջինս այնպիսի կախարդական հմայք էր ստացել, որ յօրինողները հարկ չհամարեցին նոյնիսկ պարզել, թէ մոսկովեան «Արգումենտի Ի Ֆակտի» («Փաստարկներ եւ Փաստեր») շաբաթաթերթի 1988 թուի 16-րդ համարում որպէս 33-րդ յաւելուող «անհետ կորած մէկ հոգի»ն ո՞վ էր եւ ի՞նչ տուեալի հիմամբ էր սպառնալի եկել խախտելու իրենց ապառաժեայ տուեալը։ «Անյայտ» 33-րդ մեռեալի, աւելի ճիշտը 27-րդ հայ զոհի հարցի պարզաբանումը քննչապետեր Նենաշեւի եւ Գալկինի մասնագիտական պարտականութիւնը եւ արդարութեան որոնման ծառայազրուածի պարտքն էր, անշուշտ, մանաւանդ որ նրանք չէին կարող անգիտանալ, որ խնդրոյ առարկայ շաբաթաթերթը, սումկայիթեան թեմայի հնարաւորի չափ խորը քօղարկման ջատագով, պէտք է լուրջ հիմք ունենար արբագործուած թուաքանակի խախտումն առաջարկելու համար։ Չէ՞ որ «Արգումենտի Ի Ֆակտի»ն այդ նոյն համարում շեշտում էր, որ չարժի գրել սումկայիթեան նախճիրի մասին. «Սպանութիւնների, բռնաբարութիւնների, անարգանքների, ջարդերի մանրամասների վերաբերեալ ահասարսուռ պատմութիւններով կրքեր բորբոքելն անյարիր է խորհրդային մամուլի աւանդոյթներին։ Շիկացած իրադրութեան մէջ այդ կարգի տեղեկատուութիւնը վնասից բացի ոչինչ չի բերի»։

Սումկայիթի եղեռնագործութեան հետաքննութեան հարցում խորհրդային գաղափարախօսութեան կողմից հասարակայնութեան առաջադրուած ուրիշ շատ «խայծքաներ» էլ կան, տակաւին։

Մամլոյ բոլոր հաղորդագրութիւններում Փետրուարի 27-29 Սումկայիթում փողոց յորդած եւ ընդհուպ մինչեւ ամսի 29-ի գիշերը բացարձակապէս սանձարձակ ու անպատիժ, գորշ գայլերի նման հայերի հետապնդող խաժամուժը ներկայացուած է «ամբոխ» բառով։ Այդ «ամբոխը» թուաքանակով ինչքա՞ն էր։ Վկաներից մէկը եղեռնագործութեան դեռ նախաժամին խաժամուժին այսպիսին էր տեսել. «Փետրուարի 27-ին Նարիման Նարիմանովի արձանի մօտ ես տեսայ միթինգ վարող ամբոխի, թիւով 50 մարդու, իսկ շուրջը մարդկանց ծով էր. ոչ թէ հինգ, ոչ թէ եօթ հազար, այլ աւելի շատ էին, բոլորը կանգնած լռում էին»։ Թաթար մի ուրիշ ականատես յաջորդ օրը, Փետրուարի 28-ին քաղաքային կոմիտէի առաջ հաւաքուած ջոկերին նմանեցրել է «ծովի», որը

ալեկոծում էր»: «Ամենաքիչն այնտեղ 40–50 հազար մարդ կար», ասել է նա:

«Ամբոխն» իր երթերի ճանապարհին խժդժութիւններ գործել է: Խժդժութիւններ գործել են նախ երկու–երեք ու մինչեւ մէկ տասնեակ մարդակերպ ճիւաղ հաշուող բազմաթիւ խմբեր: Սակայն առաւել զազանային դաժանութիւնների անձնատուր են եղել երկու կամ երեք յորդաներ, վկաների ցուցմունքներով՝ իւրաքանչիւրը 200–300-ից մինչեւ 1000 անդամ ընդգրկող ջարդարարական խմբեր, որոնք, ներխուժելով հայաբնակ շրջաններ, գրոհել են հայերի բնակարանների վրայ, որպէսզի յագեցնեն արեան իրենց ծարաւը:

Ուրեմն եթէ հիմա ընդունենք առանձին յելուզակախմբերի համար առաջադրուող եւ ուղղակի «գործունեայ» բորենիներին ընդգրկող նուազագոյն՝ 200–300 թուաքանակը, ապա կը ստացուի 600–900 ուղղակի արնոտ ձեռներով յանցագործ, ցեղասպան հրէշ, թէպէտ պատճառ չունենք չհաւատալու Թաթար վկայ Ռ. Ատիլովի՝ խժդժութիւնների մասնակից միայն մէկ խմբի թուաքանակի վերաբերեալ հետեւեալ խօսքերին. «Չգիտեմ, թէ քանի՞ հոգի կար խմբում. հի՞նգ հարիւր, վե՞ց հարիւր»:

Նուազագոյն 600–900 ուղղակի արնածեռ ցեղասպաններից քանի՞սը ձերբակալուեցին: Խորհրդային դատախազութեան մարտեան հաղորդագրութեան համաձայն «սպանութիւններին, բռնաբարութիւններին, անկարգութիւններին եւ թալանին մասնակցութիւն բերած անձինք ներկայումս հիմնականում հաստատուել են» եւ «ձերբակալուած է 92 մարդ»:

Ուշադրութիւն դարձրէք դատախազութեան հերթական չքնաղագիւտ բառին, խելօքին խելագարեցնելու համար բաւական եղող «հիմնականում» բառին: Ի՞նչ է ստացւում. Թաթար Ատիլովը իրեն ցեղակից յանցագործների մէկ եւ միայն մէկ խմբի թուաքանակը հետաքննիչներին 500–600 է ցոյց տուել եւ իր տուեալը կրկնել դատարանի առաջ, իսկ խորհրդային դատախազութեան թաթարամոլ ղեկավարները, ամփոփելով նոյն հետաքննիչների տուեալները, բազմաթիւ խմբերի մանր ու մեծ («սպանութիւններին, բռնաբարութիւններին» մասնակցածների հետ նաեւ հասարակ «անկարգութիւններին եւ թալանին» մասնակցած) յանցագործներին «հիմնականում» բացայայտուած համարելով նրանց ընդհանուր թիւը 92 են ցոյց տուել:

Եթէ դատախազութեան մարտեան հաղորդագրութեան համաձայն 92 թիւը յանցագործների «հիմնական» մասն էր ընդգրկում, ապա հինգ ամսուան անխոնջ ջանքերով քննչական խումբը անկարելին կարելի էր դարձնում, բացայայտում եւս երկու յանցագործի եւ «հիմնականը» դարձնում աւարտուն-ամբողջական, քանի որ Օգոստոսի 20-ին գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւն ի լուր ամէնքի հաղորդում էր, որ «քրէական պատասխանատուութեան է կանչուած 94 մարդ»:

Եթէ, ուրեմն, դատախազութեան նոյն հաղորդագրութեան տուեալներով Սումգայիթում «զոհուած» թիւով վեց թաթարները իրենց ցեղակիցների կողմից թիւրիմացութեամբ որպէս «կեավուր» մորթոտուածներ չէին, այլ՝ քաղաք մտցուած զօրքի կողմից սատկեցուած

յանցագործներ, ապա քառորդ միլիոնանոց մի քաղաք երեք օր իրենց «իշխանութեան ներքոյ» վերցնելով դանթէական դժոխքի վերածած աւազակների թուաքանակը կը դառնայ ուղիղ հարիւր։ Խորհրդային Գլխաւոր դատախազութեան պնդմամբ՝ ոչ աւելի եւ ոչ պակաս. ուղիղ մէկ հարիւրեակ։ Ինչպէս բանակում։ Տնաշէնները գլխի չեն ընկել, որ հարիւրեակին մի հատ էլ հարիւրապետ էր անհրաժեշտ։ Ի՞նչ կը կորսնցնէին, եթէ հարիւրը հարիւրմէկ սարքէին։ Չէ՞ որ ժողովրդական իմաստութիւնն ասում է. «Որտեղ հարիւր, այնտեղ էլ հարիւրմէկ»...

Սակայն ընթերցողից խնդրում ենք զուարճանալով առաջ չընկնել, քանզի խօսքը շատ լուրջ խնդրի է վերաբերում։ Աւելի շուտ՝ հերթական առեղծուածը լուծելու անհրաժեշտութեանը։ Խորհրդային Գլխաւոր դատախազութիւնը, բնականաբար հիմնուելով Սումկայիթում գործող հետաքննիչների երկհարիւրանոց խմբի ղեկավարներ Նենաշեւի եւ Գալկինի հաղորդած տուեալների վրայ, Մոսկուայում Մարտ ամսին պաշտօնապէս հաղորդում էր, որ հաստատապէս բացայայտուած քրէական յանցագործների թիւը 92 է (որը երկու հոգու յաւելմամբ Օգոստոսին վեր էր ածուելու 94-ի)։ Բայց ահա Ադրբէյճանական ԽՍՀ Գերագոյն դատարանի նախագահ Թալիբովը, բնականաբար Սումկայիթում գործող նոյն հետաքննիչների կողմից տրուած եւ անգի իր լիազօրների կողմից հաստատուած տուեալների վրայ յենուելով, Մայիսի 11-ին «Փրաւտա»-ին յայտարարում էր. «Գործուած յանցագործութիւնների հետաքննութեան գործում ներգրաւուած են երկրի իրաւապահպան մարմինների առաւել փորձառու աշխատակիցները։ Նրանց ամբողջ մանրակրկիտ աշխատանքը ենթարկուած է մէկ նպատակի. չթողնել, որ պատասխանատուութիւնից խուսափի ոչ մի յանցագործ։ Գործ է յարուցուած աւելի քան 80 մարդու դէմ, որոնք մեղադրւում են քրէական յանցագործութեան մէջ»։

Ի՞նչ է նշանակում սա. արդեօք ա՞յն, որ Մարտին կալանաւորուած 92-ից 10 յանցագործներ մինչեւ Մայիսը բաց էին թողնուած («աւելի քան 80»-ը եթէ հաշուենք 82) եւ ապա մինչեւ Օգոստոսը վերստին բանտ հրաւիրուած...

Մի արտառոցութիւն եւս. մինչդեռ Գլխաւոր դատախազութիւնը Մարտին յաղթական շեփորում էր, որ յանցագործները «հիմնականում հաստատուել են», ապա նոյն այդ դատախազութեան քննչապետ Գալկինը, մոսկովեան դատավարութեան Հոկտեմբերի 18-ի նիստին մատուցած մեղադրականում, ագռաւի ձագուկի նման համեստացած, գրում էր, որ յանցագործների ի՛նչ հիմնական մաս, պարզապէս միայն ու միայն «մի մասը յայտնաբերուած է»...

Սումկայիթի ոստիկանութեան շարքերում ծառայող մի ռուս սպայ, որ ուրիշ ռուս միլիցիոներների հետ մասնակցել է հենց տեղում, եղեռնագործութեան ընթացքում ջարդարարների մի մասի ձերբակալութեանը, այսպէս է պատմել «Աւրորա» հանդէսի աշխատակցին. «Այդ երեք օրից յետոյ ձեռքերս մի շաբաթ դողում էին։ Օրուայ մէջ երկու-երեք ժամ էինք քնում։ Ամբոխի մէջ աշխատում էինք քաղաքացիական հագուստով եւ առանց զէնքի։ Զէնք չէին տալիս, վախենալով, որ դա կարող է աւազակների ձեռքն ընկնել։ Շրջում էինք ամբոխի մէջ։ Որպէսզի գլխի

չընկնէին, թէ ով ենք, ձեռքներիս քար կամ փայտէ ձողեր էինք կրում։ Ամենայայտնի յելուզակներին խորամանկութեամբ էինք վերցնում։ Կանչում էինք մի կողմ․ «Մի յարմար բնակարան կայ» (հայի,– Ե․Ն․)։ Տանում էինք մի խաղաղ տեղ ու խեղդում մեքենայի մէջ։ Բայց ի հարկէ վերցրեցինք ոչ ամենախոշոր ձկներին։ Ըստ իս այդ ամէնի գլխաւոր կազմակերպիչներն ու պարագլուխները հասցրին հեռանալ»։

Կարող ենք եւ շատ այս յայտարարութիւնից յուշարարուող բազմաթիւ հարցեր (օրինակ, հետեւեալը․ ո՞վ եւ իրականում ինչո՞ւ էր զինաթափել ոստիկանութեան ռուս սպային, երբ վկայութիւններից գիտենք, որ թաթար շրջքային ոստիկանները իսկ զինուած էին), բայց կայ մի հարց, աւելի շուտ թուաբանական մի խնդիր, որն այնուամենայնիւ չի կարելի սեղանի վրայ չդնել։ Խորհրդային դատախազութեան մարտեան հաղորդագրութեան «Հաստատուած» 92 յանցագործների մի զգալի մաս, դեռ մինչեւ Մարտի 1-ին մոսկովեան հեռաքննիչների երկհարիւրանոց գնդի Սումկայիթ ժամանումը, ձերբակալուած էր։ Արդ, 92-ից քանիսի՞ ձերբակալութիւնը պարտական ենք մոսկուացիներին, երբ յայտնի է, որ յաջորդող հինգ ամիսների ընթացքում ձերբակալուածների թիւը նրանք աւելացնելու էին ընդամէնը երկու հոգով․․․

Արդարադատութիւնը, առաւել եւս նրա բնականոն ընթացքին, բացարձակ արդարամտութեամբ գործելուն եւ միայն ու միայն արդարութեան հետամտելուն վերահսկողութիւնը կատարող Գլխաւոր դատախազութիւնը (որն ունի իր քննչական յատուկ խումբը) ենթադրում են մանաւանդ ճշգրտութիւն, յստակութիւն, որոշակիութիւն։ Իսկ, դատելով ամէն ինչից, Սումկայիթի հայասպան եղեռնագործութեան հետաքննութեան (հետեւաբար եւ անխուսափելիօրէն հետագային առաւել կամ նուազ չափով, դատավարման) հարցերում սկզբից մինչեւ վերջ տիրապետել են անճշգրտութիւնը, անյստակութիւնը, անորոշակիութիւնը, կարծես անտեսանելի ինչ որ կողմերի միջեւ ընթացել են տքնաջան բանակցութիւններ, կնքուել են դժուարին փոխհասկացողութիւններ եւ այնուամենայնիւ ընդհանուր յայտարարն էլ, որին հասել են, էլի մնացել է տարտամ։

Ինչի՞ց էր գրգռուած այդ բոլորը։ Ո՞ւմ շահերին էր համապատասխանում, հետեւաբար ո՞ւմ պահանջմունքները բաւարարելուն էր նպատակամղուած․․․

Ինչպիսին էլ որ լինեն մեր հենց նոր տուած հարցերի պատասխանները (թէպէտ միամտութիւն կը լինի պատասխան ակնկալել, քանի որ Խորհրդային Միութիւնում, որպէս կանոն, նման դէպքում միակ պատասխանը լինում է հարցախեղդ արուողին առօք ու փառօք հանգստեան կոչելը կամ այլ աթոռի տեղափոխելը), ամենայն հաստատակամութեամբ կարող ենք ասել․ սումկայիթեան բաբելոնական խառնակութեան գլխաւոր պատասխանատուի ազգանունը Կատուսեւ է եւ, եթէ ուզում ենք քանդել թաթարական հայասպան ցեղասպանութեան շուրջ խառնակուած կծիկը, ապա բոլոր թաքցուած թելերի սկիզբն ու վերջը պիտի որոնենք այդ ազգանունը կրող մարդու աչքերի մէջ։

## Դ.

Շաբաթ, Փետրուարի 27-ին, «Փրաւտա» օրաթերթում լոյս էր տեսնում Խորհրդային Միութեան Հեռագրական գործակալութեան Թղթակցի հարցազրոյցը երկրի գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Ա. Ֆ. Կատուսեւի հետ։ Սա, իրեն յատուկ ճոռոմ ու ծայրայեղ ինքնավստահ շեշտով, հաւաստիացնում էր. «Ամենայն պատասխանատուութեամբ կարող եմ յայտարարել, որ աշխատաւորների օրինական շահերն ու իրաւունքները յուսալիօրէն պաշտպանւում են»։

Նոյն օրն իսկ, Ադրբեջանական ԽՍՀ մայրաքաղաքից ոչ հեռու, յետպատերազմեան տարիներին ծնունդ առած Սումկայիթ արդիւնաբերական քաղաքի հայ «կամովին աքսորեալ» պանդուխտների համար պարզ էր դառնում, որ պարոն Կատուսեւի հաւաստիացումը սնամէջ ու խաբեպատիր խօսք էր լոկ, որ ոչ թէ նրա խօսքը, այլ նրա ու նրա ընկերների ղեկավարած իրաւապահպան մարմինների գոյութիւնն ու գործունէութիւնն անգամ երաշխիք չէին մարդ անհատի, հետեւաբար խորհրդային իւրաքանչիւր քաղաքացու թէկուզ միայն գլխաւորագոյն Իրաւունքի՝ կեանքի անվտանգութեան համար։

Որքան էլ որ ըստինքեան ահաբեկող իրողութիւն, դա այնքան էլ ճնշիչ չէր լինի, եւ ոչ միայն Սումկայիթի հայերի, առաջին հերթին կեանքից զրկուածների հարազատների ու բռնի խմատով արեան ու կրակների միջով անցնելով հրաշքով կենդանի մնացածների համար, եթէ շատ շուտով չպարզուէր մի այլ իրողութիւն եւս. Կատուսեւի ու նրա ընկերների գոյութեան ու գործունէութեան պայմաններում քաղաքացիների իրաւունքների ու շահերի հետ Օրէնքն ու Արդարութիւնը եւս փետրած հաւերի նման անպաշտպան էին տարատեսակ ոտնձգութիւնների դէմ։

Եւ ահա, Սումկայիթի եղեռնագործութեան հետաքննութեան եւ ընդհանրապէս Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծուած տագնապի, նշանակում է՝ հայ-թաթարական հակամարտութեան վերահսկման գործի մենիշխան պատասխանատուութիւնն ստանձնելով, նոյն Կատուսեւը, արդէն բացառապէս յաչս հայութեան, բացայայտեց իր մի այլ, եւ հաւանաբար ոչ միայն մեզ համար անսպասելի, յատկանիշ եւս. կոյր ու յամառ թաթարասիրութիւնը, որն ընդհուպ սահմանակցւում էր հայատեացութեանը եւ որի, իրենց յախուռնութեամբ դժուարըմբռնելի, դրսեւորումները կարեւոր չափով պայմանաւորեցին մեր ժողովրդի քաղաքակրթական մակարդակի հրահանգովն իսկ ընդհանրապէս զուսպ ու հաւասարակշիռ հայկական միջավայրում ճիշտ է բուռն, եւ չարամտօրէն «ծայրայեղական» մկրտուած, ինքնապաշտպանական բնական հակազդումները, մինչեւ իսկ՝ մեր ժողովրդի պատմական ճակատագրի վերիվայրումների ընթացքում բազում փորձութիւնների բովով անցած հայ-ռուսական յարաբերութիւնների ներկայի ու վաղուայ օրուան կայունութեան նկատմամբ հաւատախախտումը (չէ՞ որ Կատուսեւը եւ այլք, համանմանք, ընկալւում էին որպէս ռուս, թէեւ, որպէս ռուս հանդէս գալու դէպքում իսկ, կարող էին եւ ռուս չլինել, այլ պատկանել չեչեն, ինգուշ կամ որեւէ ուրիշ մի ազգութեան)։

Յամենայն դէպս եթէ ճիշտ է, որ դատախազն ըստ ինքեան պիտի լինի մարմնաւորումը Օրէնքի, ուրեմն Իրաւունքի եւ Արդարութեան, հետեւաբար մանաւանդ Ճշմարտութեան (քանի որ Օրէնքը, Իրաւունքը եւ Արդարութիւնը նախ եւ առաջ ճշմարտութիւն են ու ճշմարտութեամբ են), ապա նոյնքան ճիշտ է, որ խորհրդային դատախազութեան երկրորդ բարձրակէտում բազմեցուած Կատուսեւի համար ըստ երեւոյթին ոչինչ այնքան խորթ չէ, որքան՝ ճշմարտութիւնը։

Օգոստոսի 20-ն է։ Սումկայիթեան եղեռնագործութիւնն արդէն շուրջ վեցամսեայ վաղեմութիւն ունի։ Մարտի 1-ից Կատուսեւի աչալուրջ հսկողութեան ներքոյ գործում է քննչական մի ամբողջ գումարտակ։ Եւ գլխաւոր դատախազի առաջին տեղակալը ի լուր ամէնքի յայտարարում է. «Հաշուի առնելով գործի բնոյթը, նրա հասարակական-քաղաքական մեծ նշանակալիութիւնը եւ աշխատանքի ծաւալը, ստեղծուած է արագագործուն քննչական խումբ, որի կազմի մէջ մտցուած են ԽՍՀՄ դատախազութեան, պետական անվտանգութեան կոմիտէի ու ներքին գործերի նախարարութեան առաւել որակեալ քննիչներ։ Մենք աշխատանքի ընթացքում պէտք է ի յայտ բերենք զանգուածային անկարգութիւնների կազմակերպիչներին, գործուն մասնակիցներին, պարզենք յանցաւոր ոտնձգութիւնների հանգամանքը։ Բարդութիւններ շատ կան։ Անչափ դժուար է որոշել խժդժութիւնների մասնակիցների դերն ու գործողութիւնները, ողջ տեղի ունեցածը դասակարգել ըստ դրուագների»։

Թէկուզ եւ Օգոստոսի 20-ն է, եղեռնագործութիւնն արդէն շուրջ վեցամսեայ վաղեմութիւն ունի, սակայն եկէք «բարդութիւնների» վերաբերեալ դեռ հարց չտանք Կատուսեւին ու նրան մի նոր բարդութեան մէջ չգցենք եւ բաւարարուենք պարզ բաների շուրջ նրա յայտարարութեամբ. «Լուրեր են տարածւում այն մասին, թէ զանգուածային անկարգութիւնների նախօրէին քաղաքում հայազգի անձանց ցուցակներ էին կազմւում՝ նրանց ֆիզիքական ոչնչացման համար, թէ մի շարք ձեռնարկութիւններում յատկապէս պատրաստւում էին մետաղաձողեր եւ այլ առարկաներ, թէ կապի հանգոյցի աշխատողներ դիտաւորեալ կերպով անջատում էին հեռախօսները հայերի բնակարաններում եւ այլն։ ...Այդ յայտարարութիւններից ոչ մէկը չի հաստատուել»։

Այդ յայտարարութիւնները, ներքեւում կը տեսնենք, հաստատուել են։ Չի հաստատուել, չէր էլ կարող հաստատուել միայն Կատուսեւի յայտարարութիւնը ԹԱՍՍ-ի թղթակցին, որովհետեւ նա, իր սիրելի թաթարներին մեղսաթափելու նպատակով, օրը ցերեկով ստում էր, խաբում Խորհրդային Միութեան հեռագրական գործակալութեանը եւ նրա ճամբով ոչ միայն խորհրդային բոլոր քաղաքացիներին, այլեւ ամբողջ աշխարհին։ Վերջ ի վերջոյ նա իր յայտարարութիւնը կատարում էր ոչ թէ գաւառական քաղաքներից մէկի տեղական թերթին, այլ ԹԱՍՍ-ին։ Ըստ որում հետաքննութեան աւարտին ու դատարանի եզրակացութեանը չսպասելով «այդ յայտարարութիւններից ոչ մէկը չի հաստատուել» ասող Կատուսեւը քաջ գիտէր, որ եթէ հայերի ցուցակների եւ նրանց հեռախօսների անջատման վերաբերեալ վկաների պաշտօնական ցուցմունքները (եւ ոչ երբեք «լուրերը»), ի հարկին եւ իր ազիզ խաթեր, կարող էին դատարանի կողմից չնուիրագործուել որպէս իրո-

ղութիւն, ապա աշխարհում եւ ոչ մի ատեան, այդ թւում եւ խորհրդային Գերագոյն դատարանը չէր կարող շրջանցել սումկայիթեան ձեռնարկութիւններում կանխօրօք սառը զէնքերի կազմակերպուած ձեւով պատրաստուած լինելու իրողութիւնը։

Եւ իրօք, մի պահ ենթադրենք, որ անհիմն էր նահատակ հայերի հարազատների շահերի պաշտպան փաստաբաններ Շապոշնիկովայի եւ Ռշտունու միջնորդութիւնը՝ մոսկովեան դատարան կանչելու Սումկայիթի թեքնիք-մասնագիտական ուսումնարանների ընդհանուր տնօրէնին, որ եղեռնագործութեան նախօրէին իր հայ քարտուղարուհուն կարգադրել էր կազմել ուսումնարաններում սովորող հայ պատանիների եւ աղջիկների ցուցակները։ Ենթադրենք, որ դեռ դատարանով հաստատման կարիք ունէր վկաների այն ցուցմունքը, ըստ որի եղեռնագործութիւնից մի քանի օր առաջ բնակարանային շահագործման գրասենեակների տուեալների հիմամբ կազմակերպուած կարգով պատրաստուել էին հայերի բնակարանների ցուցակները։ Մի պահ ենթադրենք, թէպէտ եւ չեշտելով, որ ինքնին յարգող բարձրաստիճան որեւէ արդարադատ ձեռնպահ կը մնար խնդրոյ առարկայ պաշտօնական միջնորդութիւնն ու վկայութիւնը չարամտօրէն հայերի կողմից «տարածուող լուրեր» յօրինելուց։

Եւ իրօք, մի պահ ենթադրենք, դարձեալ, որ անհիմն էր նաեւ բազմաթիւ վկայութիւններից թելադրուած միջնորդութիւնն այն մասին, որ Փետրուարի 28-ին եւ 29-ին հայերի բնակարանների հեռախօսների անջատման փաստի կապակցութեամբ դատարան կանչուի Սումկայիթի հեռախօսակայանի պետ Օմարովը։ Ենթադրենք, որ ինչպէս դատարանի նախագահ Բրիզէն, որ ընդառաջեց այդ միջնորդութեան, այնպէս էլ Կատուսեւը լաւ էին իմանում, որ Օմարովն անգիր արած «բացատրութիւն» ունի հեռախօսների յանկարծական անջատման վերաբերեալ. «Փետրուարի 28-ի երեկոյեան, ժամը 7–8-ի կողմերը միանգամից աւելացել է հեռախօսազանգերի թիւը։ Չնախատեսուած գերբեռնուածութեան պատճառով քաղաքի երկու ինքնաշխատ հեռախօսակայաններից իւրաքանչիւրում շարքից դուրս են եկել 300–400 հեռախօսային գծեր։ Սարքաւորումները պարզապէս չեն դիմացել մեծաթիւ զանգերին եւ երկու կայաններում էլ ստեղծուել է վթարային վիճակ։ Բացի այդ, պետական հիմնարկների եւ ծառայութիւնների հեռախօսակապը, ինչպէս նաեւ կայանների սարքաւորումները չգերբեռնաւորելու եւ փճանալուց գերծ պահելու համար կայաններում լրացուցիչ անջատուել են բնակարանային մի շարք հեռախօսներ, ըստ որում անջատումը կատարուել է կապի հանգոյցի գլխաւոր ճարտարագէտ Ճաւադովի կարգադրութեամբ եւ ստեղծուած իրադրութեանն էլ իրազեկ է պահուել Ադրբեջանական ԽՍՀ կապի նախարարը»։ Եւ սակայն Օմարովի Նոյեմբերի 14-ին դատարանի առաջ կատարելիք ինքնարդարացումը ինքնիրեն փորձառու եւ լուրջ իրաւագէտ համարող որեւէ արդարադատի հիմք կը տա՞ր դեռ Օգոստոսի 20-ին յայտարարելու, որ հեռախօսների անջատման վերաբերեալ պաշտօնական հարցադրումը հայերի կողմից չարամտօրէն «տարածուող լուր» է լոկ։

Այդ դէպքում ի՞նչ անուն տալ Կատուսեւի այն պնդման, թէ «չի

հաստատուել» նաեւ հայերի կողմից չարամտօրէն «տարածուող լուրը», ըստ որի «մի շարք ձեռնարկութիւններում յանկարծ պատրաստւում էին մետաղաձողեր եւ այլ առարկաներ»։ Սումգայիթի համայնավար կազմակերպութեան քաղաքային բիւրոյի նիստում, որը գումարուել է Մայիսի երկրորդ տասնօրեակի սկզբներին, որպէս իրողութիւն արձանագրուել է եւ խստիւ դատապարտուել խողովակագլանման գործարանի անձնակազմի կողմից «այն բարդ իրադրութեան օրերին արտադրամասերում կացինների, դաշոյնների եւ այլ առարկաների պատրաստումը, որոնք կարող էին օգտագործուել խուլիգանացող տարրերի կողմից»։ Բիւրոյի նիստի եւ ընդունուած որոշման մասին իր ընթերցողներին Մայիսի 13-ին հաղորդել է «Կոմունիստ Սումգայիթա» («Սումգայիթի Համայնավար») ռուսալեզու օրաթերթը։

Ի դէպ, սառը զէնքի «արդիւնահանման» փաստն այնքան հանրայայտ էր, որ Սումգայիթի գաղափարակենտրոնում չէին կարող այն շրջանցել։ Հենց ինքը՝ Կատուսեւն էր մամուլին հաղորդել, որ բացի 15 տարի ազատազրկման դատապարտուած (ըստ որում իր հայ զոհի գանկը մետաղաձողով փշրած) Իսմայիլովի գործից, Սումգայիթում քննուել են եւս վեց գործեր, այդ թւում մեքենավարի օգնական Այաթին Իպիշովինը, որ «իր շուրջ էր հաւաքել խուլիգանների, նրանց կոչ էր անում հաշուեյարդար տեսնել հայերի հետ եւ մետաղաձողերով զինուած իր համախոհների գլուխն անցած յարձակւում էր բնակարանների վրայ»։ «Քառասունմէկ-Ա թաղամասում Ահմէտովի ջարդարարները Փետրուարի 29-ին նոյնպէս գործել էին համաչափ (60–70 սանթիմեթրանոց) մետաղաձողերով զինուած։ Արդ, մետաղաձողերի կանխապատրաստումը եթէ նոյնիսկ ոչ թէ փաստական իրողութիւն, այլ՝ թէկուզ սոսկ վարկած եղած լինէր, ապա Կատուսեւն այն կտրականապէս պէտք է հերքէ՞ր, թէ՝ ջանար պարզել ճշմարտութիւնը։

Այս կապակցութեամբ ասենք, որ ոչ միայն չենք բաժանում, այլեւ անտեղի ենք համարում «Գրական Թերթ»ի Նոյեմբերի 18-ի այն բարեացակամ ենթադրութիւնը, որ Կատուսեւը «ըստ երեւոյթին անտեղեակ» լինելով Սումգայիթի քաղաքային կոմիտէի բիւրոյի որոշմանն ու քաղաքային թերթի հաղորդմանը, «անզգուշօրէն է հերքել արդիւնաբերական ձեռնարկութիւններում սառը զէնքի կազմակերպուած պատրաստման» փաստը։ Թաթար ցեղասպանների յանցագործութիւնը հնարաւորի առաւելագոյն չափով չքմեղելու եռանդից է, եւ միայն այդ եռանդից, որ գլխաւոր դատախազի առաջին տեղակալը խաղասեղանին է նետել իր հեղինակաւոր անձնաւորութեան խօսքի ծանրութիւնը, յուսալով մոլորեցնել «Կոմունիստ Սումգայիթա» թերթի հաղորդումը չընթերցած խորհրդային տասնեակ միլիոնաւոր քաղաքացիներին։

Եւ քանի որ այսպիսին էր հետաքննութեան զօրապետը, ապա բնական էր, որ դատախազութեան կողմից Սումգայիթ գործուղուած բարձր աստիճանաւորները իրենք եւս ձեռնպահ չմնային փաստերը կոծկելու կամ խեղելու հաճոյքից։ Վերջ ի վերջոյ ինչպիսին զօրապետն է, այնպիսին սպաներն են ու զինուորները։

Յայտնի է, որ դժոխային երեք օրերից անմիջապէս յետոյ, Մարտի 1-ին, սումգայիթեան եղեռնագործութեան քննութիւնը վստահ-

ւեց Խորհրդային Միութեան դատախազութեան քննչական յատուկ խմբին, որը ղեկավարում էին ԽՍՀՄ դատախազութեան քննչական գլխաւոր վարչութեան պետ Ն. Նեմաչեւը եւ ԽՍՀՄ գլխաւոր դատախազին կից յոյժ կարեւոր գործերի քննիչ Վ. Գալկինը։ Մամուլի տուեալներով, տարբեր մասնագիտութիւնների շուրջ երկու հարիւր քննիչներից բաղկացած խումբը բազմազգ էր (հիմնականում ռուսներ, ուկրաինացիներ եւ բելոռուսներ)։

Այն բանից յետոյ, երբ դատախազութիւնը հրապարակեց իր թէ «որոշ մանրամասնութիւններ» պարունակող Մարտի 22-ի առաջին հաղորդագրութիւնը ու երբ պարզ դարձաւ, որ հասարակական կարծիքը այն անբաւարար ու անհամոզիչ է համարում, «հետաքննութեանը խանգարող զրոյցները» հերքելու առաջադրանքով Նեմաչեւն ու Գալկինը «Իզվեստիա»-ի Մարտի 30-ի համարում հանդէս եկան մի հարցազրոյցով, որում յայտարարելով, որ «քանի հետաքննութիւնը դեռ չի աւարտուել՝ աւելին ասել չենք կարող», այնուամենայնիւ հարկ համարեցին կտրականապէս պնդել. «Հետաքննութիւնը հաստատապէս հաստատել է, որ անկարգութիւնների ժամանակ Սումգայիթում չի տուժել—չի տառապել ոչ իսկ մէկ երեխայ»։

Նեմաչեւն ու Գալկինը կա՛մ պարզամիտ «Իվան»ներ էին ձեւանում, ինչը որ համոզիչ չէր իրենց զբաղեցրած պաշտօնի ենթադրած մասնագիտական պատրաստականութեան պայմաններում, կամ էլ որոշակի միտումով կրկնօրինակում էին իրենց վերադաս Կատուսեւին ու կոծկում ճշմարտութիւնը, ինչը որ վայել չէր իրենց յանձն առած առաքելութեան պահանջած մասնագիտական լրջութեան։

Եթէ նոյնիսկ մի պահ ենթադրենք, որ պարոնայք քննիչները գուցէ թէ իրօք տուժած-տառապած երեխաների վերաբերեալ անմիջական որեւէ տուեալ չէին յայտնաբերել ու չունէին, ապա կարո՞ղ ենք նրանց մասնագիտական պատրաստականութեան եւ ստանձնած պատասխանատու առաքելութեան հետ հաշտեցնել այն իրողութիւնը, որ նրանք ոչ թէ պարզապէս յայտարարում էին՝ «Մեր ձեռքի տակ առ այժմ այդպիսի փաստեր չկան», այլ պնդում էին՝ «Հաստատապէս հաստատել ենք», այլ խօսքով՝ «Հակառակը բացառելով բացառում է»։ Ի՞նչ է սա, եթէ ոչ՝ մարդկանց ջղերին խնայելու եւ աւելորդ կրքեր չբորբոքելու խաբեպատիր քօղի ներքոյ, մտայնութեամբ ու գործելով միջնադարեան պատկանող թաթար հայասպան ոճրագործների դիմապատկերը փոքր ինչ բարեզարդելու շահագրգիռ միտում։ Զէ՞ որ Նեմաչեւն ու Գալկինը, եթէ իրօք դատախազութեան քննիչներ էին եւ ոչ թէ, ասենք, քիսայի զօրութեամբ (ու յանուն քսակի) սեւամորթին սպիտակամաշկ դարձնելու ճգնող բաղնեպաններ, ապա չէին կարող չիմանալ, առնուազն չկռահել, որ աւելի քան եռօրեայ համատարած ջարդարարութիւնների ընթացքում թաթար գիշատիչ խուժանը չէր կարող իր զոհերին խտրել ըստ տարիքային յատկանիշի, ջախջախել հանդիպած Շահէն Սարգսեանի գանկուղեղը եւ խնայելով շոյել հանդիպած Շահէնիկ Սարգսեանի մանկական գլխի գանգուրները։ Անմիջական տուեալների անգոյութիւնը պէտք է քննիչներին ոչ միայն ետ պահէր եփած հաւի ծիծաղը շարժող հաստատումից, այլեւ էլ աւելի սրէր նրանց քննչական զգօնութիւնը, էլ աւելի

խթանէր նրանց հետաքննական բնազդը եւ առնուազն հակէր այն մտքին, որ իրենց ծնողների հետ տուժած-տառապած երեխաներից ոչ մէկն ըստ երեւոյթին կենդանի չի մնացել ու նրանց աճիւններն անգամ, մեծահասակների աճիւնների հետ, անհետացուել են Գաֆուր Կենտկոմի լիազօր Գանիֆաեւի «հաւաքարարների» ջանքերով, հետեւաբար զոհերի թիւն անպայման աւելի մեծ պիտի ենթադրել, քան՝ դիազննարանում առկայ յօշոտուած մարմինների գլխաքանակը։

Ի դէպ, դիազննարաններից մէկի մասին։ Պատմողը Մոսկուայի հայերից Շ. Մանուչեանն է. «Մեկնեցի Սումկայիթ եւ սկսեցի որոնել զարմուհուս։ Նա քաղաքում չէր։ Ազգականների մօտ էլ չկար։ Պահակախմբի հետ շրջեցի քաղաքի եւ նրա շրջակայքի դիազննարանները։ Դրանցից մէկում գտայ զարմուհուս. ճանաչեցի կտրուած ոտնաթաթի թերութիւնից։ Պատկերացնո՞ւմ էք, թէ ի՛նչ սարսափելի պէտք է ծաղր ու ծանակի ենթարկուէր յղի կինը, որ նրան յետոյ հնարաւոր լինէր ճանաչել միայն ֆիզիքական թերութեամբ՝ կտրուած ոտնաթաթով»։

Մտորութեան տանք Մանուչեանի անճանաչելի դառնալու աստիճան ջարդուած-ճզմուած ազգականուհուն։ Իսկ նրա որովայնի վեց ամսուայ պտո՞ւղը։ Ի՞նչ է, հայատյացներն իրենց սումկայիթեան Բարդողիմէոսեան գիշերը երեք ամսով պէտք է յետաձգա՞ծ լինէին, որպէսզի Նենաշեւն ու Գոլկինը գոնէ մէկ հատ, միայն մէկ հատիկ սպաննուած երեխայի փաստն ընդունէին։ Այդ ո՞ւմ են նրանք խաբում եւ ո՞ւմ հաշուին ու պատուէրով խաբում, երբ պնդում են, թէ վեց ամսուայ յղի կնոջը բզկտած եւ իր մօր որովայնում ապագայ հայորդուն կտրատած թաթար բարբարոսներն այնքան «փղճոտ» են եղել, որ ոչ մի հայ երեխայի ձեռ չեն տուել, ուղղակի զուրգուրանքով նրանց խանձարուրել ու մի կողմ են դրել, որպէսզի ոչ մի մանուկ «չտուժի-չտառապի»։

Նենաշեւն ու Գոլկինը, մեր համոզմամբ, յամենայն դէպս գիտակցօրէն նենգափոխում էին իրականութիւնը, քանի որ չէին կարող չիմանալ այն փաստերի մասին, որոնք առկայ են եւ որոնցից մէկի մասին լրագրող Ա. Վասիլեւսկին պատմել է լենինգրադեան «Աւրորա» հանդէսի 1988 թուի հոկտեմբերեան համարում։ Նա այսպէս է ներկայացրել սումկայիթեան դժոխքից հրաշքով փրկուած եւ քննչական մարմիններին համապատասխան ցուցմունք տուած մի հայ պատանու՝ Վ. Դանիէլեանի հետ իր հանդիպումը Ստեփանակերտի դպրոցներից մէկում.

«Վիտալիկ Դանիէլեան, 15 տարեկան։ Ներս մտաւ, ինչպէս ստուեր. ոչ մի կաթիլ արիւն չկար դէմքին։ Խօսում էր ցածրաձայն, դանդաղ։ Նա գրեթէ չի իմանում, որ անխուսափելի մահից իրեն մայրն է փրկել. երբ նրան սկսել են ծեծել, մայրը պառկել է երեխայի վրայ ու իր մարմնով ծածկել նրան։ Մայրը եւ հայրը զոհուել են։ ...Նրա կարճ խուզած մազերի միջից սպիներ էին երեւում։ ...Ահա, թէ ինչ պատմեց Վիտալիկը.

«— Փետրուարի 28-ին, երեկոյեան ժամը 9-ին... սկսեցինք կամաց-կամաց հաւաքուել, բայց մի 15–20 րոպէ յետոյ ներս մտան մեր բնակարանը։ ...Նրանք ներխուժեցին բնակարան, սկսեցին բղաւել, որ եկել են հայերի արիւնը խմելու։ Բղաւում էին, որ եկել են Ադրբէյճանն ազատելու հայերից, որ յետոյ Ղարաբաղի հերթն է գալու։ Փողո-

ցում, ուր մեզ դուրս բերեցին, նոյն բաներն էին գտնում: Շատ մարդ կար. Հարիսը, գուցէ երկու Հարիսը Հողի: Եւ իւրաքանչիւրը ծեծուեցաւ ու հարուածեց: Ծեծում էին մահակներով, ամրանաձողերով, քարերով, ցանկապատի սրածայր ճաղերով: ...Սկսեցին ինձանից: Ես անմիջապէս ուշակորոյս եղայ: Մի երկու անգամ ուշքի եկայ ու նորից կորցրի գիտակցութիւնս: Չեմ յիշում, թէ որքան ժամանակ անցաւ. ուշքի եկայ, մի կերպ բարձրացայ, փորձեցի մօրս բարձրացնել, յետոյ հօրս, նրանք դեռ կենդանի էին, բայց չկարողացայ. ձեռքս կոտրուած էր: ...Հարեւաններից շատերը նայում էին պատշգամբներից, լուսամուտներից: ...Ես փորձեցի բարձրանալ նրանց մօտ: Մի քանի անգամ ընկայ, ոչինչ չէի տեսնում: Սկսեցի դռները բախել: Ոչ մի տեղ չբացեցին: Երրորդ յարկում ինձ մի լաթ տուեցին գլխիցս արիւնը սրբելու եւ խոստացան «շտապ օգնութիւն» կանչել: Յետոյ ինձ ուղեկցեցին մեր բնակարանը: Այն կողոպտուած էր, յատակն ամբողջութեամբ ապակիների մէջ էր: Ես չէի իմանում, թէ ինչ անեմ. գլուխս լուացի սառը ջրով, իսկ դա չէր կարելի: Վեց-եօթ տեղից գլուխս բաց վէրքերի մէջ էր: Յետոյ ուշակորոյս եղայ...: Առաւօտեան ինչ որ մարդիկ եկան: Սկսեցին արձանագրութիւն կազմել, հարցափորձ էին անում, թէ ինչ եւ ինչպէս է եղել: ...Յետոյ ինձ «շտապ օգնութեան» մեքենայ դրեցին: Երեկոյեան ժամը 12-ն էր: Դա լաւ եմ յիշում, որովհետեւ մեքենայում ժամացոյց կար: Յետոյ իմացայ հօրս ու մօրս մասին: Նրանք պառկած մնացել էին մինչեւ առաւօտեան ժամը 8-ը: Նրանց տարել են արդէն մեռած, երեւի արիւնաքամ էին եղել կամ սառել: Եթէ անմիջապէս օգնէին, գուցէ կենդանի մնային»:

Ի՞նչ է դուրս գալիս ըստ Նենաշեւի եւ Գալկինի. քանի որ իրենց ղեկավարած «հետաքննութիւնը հաստատապէս հաստատել է, որ անկարգութիւնների ժամանակ Սումգայիթում չի տուժել–չի տառապել ոչ իսկ մէկ երեխայ», ապա Վիտալիկ Դանիէլեանը, որին, ծնողների հետ ու նրանց նման, մահացած ենթադրելով, թաթար ճիւաղները թողել են ու հեռացել, չի տուժել ու չի տառապել: Խորհրդային դատախազութեան պատասխանատու հետաքննիչների կարծիքով, երեւի, գլխի վեց-եօթ խորունկ սպիները բաւական չեն տուժած-տառապած յայտարարուելու համար...

Իսկ գուցէ խորհրդային դատախազութեան պատասխանատու հետաքննիչների համար տուժած-տառապած համարուելու չափանիշը մանկական հոգում բացուած եւ երբեւէ չսպիացող խորախոր վէրքե՞րն են: Այդ դէպքում Նենաշեւն ու Գալկինը տուժած-տառապած կը համարե՞ն նահատակ Իգոր Մելքումեանի չորսամեայ որդի Սողոմոն-Սերոժային եւ վեցամեայ դուստր Քրիստինէին, նաեւ նրանց հասակակից, նահատակ Եդուարդի դստրիկ Լիլիային, որոնք հրաշքով իրենց փրկութեան զարհուրելի գիշերուայ համանմանը երեւի այսուհետեւ միայն արկածային-սարսափազդու կինոֆիլմերում են տեսնելու: Ահա, թէ «Գրական Թերթի» աշխատակիցն ի՛նչ է պատմում.

«...Իրինան կարող էր փրկուել՝ չուզեց. ձեռքի դանակը դրեց մի կողմ, տենդագին արագութեամբ օգնեց, որ իր երկու հարսերը՝ Կարինէն եւ Իրան իրենց փոքրիկ երեխաների հետ անցնեն հարեւանի

պատշգամբը, և վերադարձաւ միջանցք, ուր ջարդուող դռան դիմաց, կացինն ու մուրճը ձեռքներին, գունատ ու լուռ կանգնած էին հայրը՝ Սողոմոն Մելքումեանը, եղբայրները՝ Իգորն ու Եդուարդը, և Միշա Համբարձումեանը։

Մելքումեանների հարևանները և Ժասմէն Համբարձումեանը ինձ շատ անգամ են պատմել պատշգամբից պատշգամբ անցնելու սարսափը, պատմեցին և դատարանում, ու նկատեցի, թէ ինչպէս են լցւում հազար ու մի դատ տեսած Ռայմոնտ Բրիգէի՝ Գերագոյն դատարանի քրէական դատաստանի նախագահի և ամբաստանեալներին հսկող զինուորների աչքերը։ Տղամարդու սիրտն էլ քարից չէ։ Միայն երեք ամբաստանեալներն ու հրոսակախմբի անդամ վկաներն են, որ այնպիսի հանգիստ ու անտարբեր տեսքով են պատմում իրենց արածն ու տեսածը, կարծես ոչ թէ մարդիկ են մորթել, այլ՝ ոչխարներ Նովրուզ բայրամ տօնի համար։

Ուրեմն, առաջինն անցաւ Ժասմէնը, դժուարը հարս Իրայինն էր, որի երեք տարեկան աղջիկը քիչ մնաց ցած գլորուէր երկրորդ յարկից, առաւել դժուար էր երկու երեխաներ ու յղի Կարինէի անցնելը։ Աւազակախումբը շէնքի առաջ էր լցուել բակի կողմից, իսկ բաց պատշգամբները, որտեղից փախչում էին, փողոցին էին նայում։ Կանանց ու երեխաների փախուստին ներքևից հետևող բազմաթիւ մարդիկ արագացնում էին քայլերը, երբ Իրան կամ Կարինէն աղաչում էին օգնութեան հասնել կամ փրկել գոնէ երեխաներին։ Հարևանուհին՝ Սեւիլ Միրզոեւան, մեծ դժկամութեամբ, պատշգամբի ապակին կոտրելու սպառնալիքից յետոյ միայն ներս թողեց նրանց և իսկոյն պահանջեց դուրս գալ իր բնակարանից։ Պաղատանքները չէին օգնում։ Ատամները կրճտացնելով վրայ հասան Միրզոեւայի երկու դեռահաս տղաները և երիտասարդ եղբայրը՝ դանակը ձեռքին. «Դուրս կորէք, թէ ոչ...»։

Բայց ահա այդ անմարդկայնութիւնը փրկարար դարձաւ, որովհետև որոշ ժամանակ անց չորս հոգի պիտի խուժէին Միրզոեւայի բնակարան և որսորդական շների պէս հոտոտէին ամէն մի անկիւն, չհաւատալով, որ այստեղ այլևս ոչ մի հայ չկայ։ Առաջինը շքամուտքում յայտնուել էր Ժասմէնը, յետոյ Կարինէն՝ երկու երեխաներով, Իրան իր Լիլիայի հետ փորձեց թաքնուել, յետոյ էլ մէկ անգամ ևս աղաչեց, բայց կոպտօրէն դուրս շպրտուեց շքամուտք։ Ժասմէնն ու Կարինէն արդէն չկային, բակում մոլեգնում էր ամբոխը։ Միակ ելքը վերև բարձրանալն էր։ Լացից կապտած երեխան գրկին՝ թակեց երրորդ յարկի դռները, չորրորդ յարկի դռները, պատասխանը նոյնն եղաւ՝ «Ծո՛խ, ծո՛խ»։ Հինգերորդ յարկում դուռը բացեց միջին տարիքի մի տղամարդ ու ձեռքը բռնելով լուռ տարաւ ներս։ Այդ տանն էին արդէն Կարինէն ու Ժասմէնը։ Տանտէրը բոլորին փակեց լոգարանում և հրամայեց ծպտուն չհանել։ Դա Նիյազալին էր, որը կցկտուր խօսակցութեան մէջ ներկայացաւ որպէս լեզգի (յետոյ պարզուեց, որ Նիյազալի Ծաախնովը ատրպէյճանցի է)։ Իր սեփական երեխաներին կորցնելու սարսափը և մահից կէս քայլ հեռու կանգնած հայերին փրկելու ձգտումը բախւում էին այդ մարդու հոգում. յաղթեց խիղճը, բարին, մարդկայինը, և նա մինչև գիշեր պահեց նրանց՝ չբացելով լոգարանը և անընդհատ պահանջելով-խնդրելով կանանցից լաց չլինել ու չթակել դուռը։ Բայց ո՞նց լաց չլինէին, ո՞նց



Վերեւում՝ հերոսական բազմաժամեայ ինքնապաշտպանութիւնից յետոյ զոհուած Գաբրիէլ Աբրահամի Տրդատեանը (ծնուած՝ 1925 թ․) եւ Ռաֆիկ Համբարձումի Թովմասեանը (1956 թ․)։
Ներքեւում՝ նահատակներ Միշա Արսէնի Համբարձումեանը (1941 թ․), Արշակ Ասլանի Պապեանը (1931 թ․) եւ Շահէն Գարեգինի Սարգսեանը (1927 թ․)

չթակէին դուռը, եթէ բակից՝ ճեղքելով ամբոխի ոռնոցն ու բարձրախօսի կոչերը՝ լսւում էին Իրինայի ճիչերը. «Մա-մա՛, մա-մա՛… փըր-կի՛ր»։

Նիյազալիի տանը թաքնուելուց քսան կամ երեսուն րոպէ անց կանայք աղմուկ ու գոռիւն լսեցին չքամուտքում. վերջ, գալիս են, իրենց բռնուած են։ Պինդ գրկեցին երեխաներին եւ վճռեցին նրա խուժելուն պէս ջարդել լողարանի դուռն ու ցած նետուել պատշգամբից՝ փոքրիկներին թողնելով իրենց բախտին ու Նիյազալիի պաշտպանութեանը։ Դաժանօրէն երկար ու ձիգ վայրկեաններից յետոյ աղմուկը չքամուտքում միանգամից վերացաւ։ Աւելի քան կէս տարի յետոյ, Գերագոյն դատարանի դահլիճում միայն իմացան կանայք, թէ դա ինչ աղմուկ ու գոռիւն է եղել։ Իմացան եւ վշտահար քարացան աթոռներում։ Եղելութիւնն այս է. երբ Համբարձումեանների ու Մելքումեանների իջեցնում են բակ եւ սկսում հաշուեյարդարը՝ Իգորը, Էդիկը եւ Իրինան կարողանում են զցել իրենց հարեւան չքամուտք։ Փախչելով, հասնում են հինգերորդ յարկ, ուր քիչ առաջ յայտնուել էին կանայք ու երեխաները եւ, բարեբախտաբար, թակում են ոչ թէ Նիյազալիի, այլ կողքի հարեւանի դուռը։ Հարեւանը ակամայից ներս է թողնում նրանց։ Հասնում են հետապնդողները, որոնց թւում էին Ահմէտ Ահմէտովը եւ Օսւար Ճաֆարովը։ Ահմէտովը կացնի մի քանի հարուած է իջեցնում դռանը, ադրբէյճանցի տանտէրը բացում է դուռը եւ Իգորին, Էդիկին, րոպէ անց նաեւ Իրինային, որի մասին յուշում է ինչ որ մէկը, իջեցնում են բակ…

— Իսկ եթէ մերոնք երեքով թակէին Նիյազալիի դուռը՝ ի՞նչ կը լինէր։ Եթէ միանգամից չգտնէին նրանց, ուրեմն կը լցուէին նաեւ Նիյազալիի տունը։ Ուրեմն մեզ իրենց մահով փրկել են Իգորը, Էդիկը եւ Իրինա՞ն. նրանցով տարուած՝ մոռացան մեզ,– հարցեր, հարցեր, որոնցով այժմ խոշտանգում են իրենց Ժասմենը, Իրան եւ Կարինէն»։

Հարկ է ասել, որ խորհրդային դատախազութեան աշխատողների համար Սումկայիթում կեանքից զրկուածները, ինչպէս նահատակուած հայերը, այնպէս էլ նրանց այն ջարդարարները, որոնք զօրքի հետ բախման ընթացքում սատակամահ էին արուել, սկզբից մինչեւ վերջ «զոհեր» մնացին։ Նենաշեւն ու Գալկինը, ինչպէս տեսել ենք, Մարտի 30-ին յայտարարում էին. «Զոհերի թիւը… հենց երեսուններկուս է»։ Ինչպէ՞ս հասկանանք «զոհ» բառը, որը աշխարհի արարչագործութեան յաջորդող երկրորդ տասնամեակից, երբ Աբէլը գանկափշրեալ ընկաւ Կայէնի հարուածից, ունեցել է եւ առ այսօր աշխարհի բոլոր լեզուներում ունի որոշակի՝ սրբազան իմաստ։ Ինչի՞ն վերագրել հրէշաւոր ջարդարարներին եւս իրենց զոհերի հետ ու նրանց համահաւասար «զոհ» համարելու դատախազական սրբապղծութիւնը, եթէ ոչ՝ թաթարների նկատմամբ գուրգուրալից փափկանկատութեան, նրանց դիւրազգածութեանը խնայելու մարմաջին։ Ինչո՞ւ այլ առիթներով դատախազութիւնը յանցանքի վայրում կամ դիմադրութիւն ցոյց տալիս սպաննուած քրէականի համար գործ է ածում պատշաճող միակ դարձուածքը՝ «աւազակը վնասազերծուած է», իսկ այս պարագային, սումկայիթեան սատակամահ արուած բորենիների կապակցութեամբ, կծում է լեզուն, դառնում քաղցրաբարբառ եւ սրբապղծութեան գնով գործ

է տեսում «զոհ» բառը։ Մի՞թէ խորհրդային դատախազութիւնը դրանով իսկ երկրորդ անգամ չի նահատակում մեր անմեղ զոհերին։

Այսպիսի մի առակ յօրինենք Կասուսեւի եւ ընկերների համար․

«Շների բազմաթիւրեան վոհմակն ընկել է ագռաւների ետեւից։ Եւ յաջողել է քանիվեց ագռաւի։ Եւս այդքան յաջողելու իրենց անասնական եռանդից կուրացած, վեց շներ ընկել են փոսը եւ սատկել։ Եւ ագռաւների մեծասուն ոէրը յանձնարարել է իր Կասուսեւ-Ննեռաչեւ-Գալկին կոչուած ծառաներին՝ կատաղած շանց յարատեւող շնութիւնը սանձահարել եւ ողջամնաց եղածներին յայտնաբերել եւ արդար մահակածեծի ենթարկել։ Իսկ ծառաները, յաջողուած ագռաւների հետ միեւնոյն սեղանին զարսելով սատկած շանց լէշերը, բոլորի վրայ, որպէս համատիճան սուժած-սատակած զոհերի, աղի արցունք են թափել․․․»։

Առակս զի՞նչ ցուցանէ։ Ցուցանէ այն, որ ծառաները եղել են չնաւէր, որ նրանք ագռաւների վրայ արտասուել են տիրոջ պատուէրով՝ ի պաշտօնէ, իսկ շանց վրայ ողբացել ու կոծել՝ ի խորոց սրտի, առաջին դէպքում որպէս մասնագիտութեամբ եղերամայր, երկրորդ դէպքում որպէս բնութեամբ եւ էութեամբ մայր։

Միայն մէկ բառ՝ «զոհ», սակայն շատ բան արտացոլող․ լեզուն սրտին հայելին է։ Զմոռանանք․ ի սկզբանէ էր բանն․․․

Միայն մէկ բառ՝ «զոհ»։ Եւ արդէն հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ երկիցս ու երիցս հեռասփռւում էր այն սուտը, թէ «զոհերի» թւում հայերի եւ ադրբէյճանցիների հետ կայ նաեւ լեզգի․— զոհերի բազմազգութեան վերաբերեալ աղմկարարութեան ներքոյ թաքցնել ջարդերի հակահայկական եւ էապէս հակահայկական նպատակադրուածութիւնը։

Միայն մէկ բառ՝ «զոհ»։ Եւ արդէն հասկանալի է դառնում, թէ ինչո՞ւ երկար ժամանակ հասարակայնութիւնից ջանասիրաբար սքօղւում էր այն իրողութիւնը, որ թաթարներն սպաննուել են զօրքի հետ մարտնչելիս․— հայասպան ջարդերը խեղաթիւրեալ՝ որպէս հայ-թաթարական բախումներ ներկայացնել։

Միայն մէկ բառ՝ «զոհ»։ Առանց այդ բառի անբացատրելի առեղծուած կը մնան, բարձր ու բարձրագոյն ոլորտներից թելադրուած-հրահանգուած լինելուն անկասկածելիութեան պայմաններում իսկ հասկանալի չեն լինի այն կամայական, հետաքննական թէ դատաիրաւական տեսակէտից անըմբռնելի եւ տրամաբանականութեան հողի վրայ գերտարօրինակ այն «նախաձեռնութիւնները», որոնք մինչեւ վերջ հանդէս բերուեցին Կասուսեւի, Ննեռաչեւի ու Գալկինի կողմից՝ անհնարինը հնարաւոր դարձնելու եւ թաթար յանցագործներին, ստորադաս քրէական մարդախողխող աւազակներից մինչեւ բարձրադաս գերքրէական, մարդկութեան դէմ ոճրագործ աւազակապետերին հնարաւորի առաւելագոյն չափովը չգմեղելու, նամանաւանդ նախճիրի ծաւալն ու տարողութիւնը մանրացոյցի տակ առնելու համար։

Միայն մէկ բառ՝ «զոհ»։ Եւ սակայն առանց այդ բառի անբացատրելի առեղծուած կը մնայ ու հասկանալի չի լինի այն, թէ ինչո՞ւ Սումգայիթի ծրագրեալ-կազմակերպեալ ցեղասպանական մէկ-միասնական յանցագործութիւն կազմող եղեռնը, ընդդէմ ամէն մի տրա-

մարանութեան եւ ի հեճուկս արդարադատական ամենատարրական հասկացութիւնների, յանցագործ պնդերեսութեամբ բառիս բուն իմաստով փոշիացուեց, փոխակերպուեց մանր-մանր եւ միմեանցից խզուած «խուլիկանական» արարքների մի շարանի:

Այս տեսակէտից չափազանց պերճախօս է Մեսքենէի, Զանգըրըի, Տէր Զօրի ու միւս դժոխային տեղավայրերի հոմանիշ դարձած եւ Ադանայի մի մանրանկար յիշեցնող Սումկայիթի գործելիութեան գլխաւոր վկայագիրը, օսմանեան թուրքերի եւ ատրպատականեան թաթարների (ատրպէյճանցիների, ազերիների) գեների նոյնականութեան առօյգ ախտանիշը եղող «Քառասունմէկ—Ա թաղամասի» ոճիրների պարագան:

## Ե.

Ընթերցողը բնականաբար կ՚ուզենայ իմանալ, թէ ովքե՞ր էին դեռ Մարտ ամսին թիւով 92 եղող եւ մինչեւ Օգոստոս, երկու հարիւր մոսկովեան-կենտրոնական (անշուշտ նաեւ Սումկայիթի թէ Պաքուի թաթար բազմահարիւր) քննիչների անխոնջ ջանքերով, 2 հոգով աւելացուած եւ թիւով 94-ի հասած յանցագործները եւ թէ ի՞նչ եղաւ նրանց ճակատագիրը:

Մենք էլ, նոյնքան բնականաբար, նոյնիսկ աւելի՝ քան ընթերցողը, ուզում ենք իմանալ:

Սակայն ո՞վ ենք մենք. սովորական հայ հեղինակ, սովորական հայ ընթերցող:

Հայոց թագաւորն իսկ ուզենար իմանալ, չէր կարողանայ:

Եւ իրօք, Հայաստանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Ս. Յարութիւնեանը, որ, թո՛ղ հայրենահայութեան «առաջամարտիկ»ների ղեկավար հայի իր բարոյական իրաւունքը, որպէս կուսակցական վստահելիագոյն ընկեր եւս իրաւունք ունէր ամէն ինչ իմանալու, բան էլ չգիտէր...: Եղեռնագործութիւնից օրը օրին ուղիղ եօթ ամիս անց մոսկովեան մամուլը մէջ էր բերում հայկական հեռուստատեսութեամբ նրա հեռուեալ յայտարարութիւնը. «Մարդկանց յուզում-մտահոգում է այն փաստը, որ դատաքննութիւնը տեղի է ունենում երկրի (Խորհրդային Միութեան,- Ե.Ն.) տարբեր քաղաքներում, իսկ հանրապետութիւն (Հայաստան,- Ե.Ն.) որեւէ տեղեկութիւն չի հասնում. ո՞վ է պատժուած, ի՞նչ պատիժ է ստացել, անհրաժեշտ քաղաքական եզրակացութիւն արուա՞ծ է դաժան, մեր հասարակութեան մէջ անհաւատալի, յանցագործութիւններից»:

Սակայն ինչպէս Հայաստանի կուսակցապետը, այնպէս էլ իր Սեպտեմբերի 30-ի համարում նրա յայտարարութեանը տեղ տուած «Մոսկովսկիէ Նովոսթի» շաբաթաթերթը չափազանցում էին: Որովհետեւ, գուցէ մարդկանց քթին խնդալու համար, բոլոր դէպքերում «տեղեկատուութիւն» կար եւ Հայաստան, գուցէ հայերին ձեռ առնելու նպատակով, «տեղեկութիւն» հասցւում էր: Ահա, օրինակ, թէ Սեպտեմբերի 25-ի իր համարում «Դատավճիռը կայացուած է» խորագրի ներքոյ «Սումկայիթի համայնավար» ռուսալեզու թերթն ի՛նչ էր հաղորդում



ՆԱՀԱՏԱԿ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ. վերեւում՝ ամուսիններ Սողոմոնը (1931 թուի ծնունդ) եւ Ռաիսան (1934 թ.)․ ներքեւում՝ նրանց զաւակներ Եդուարդը (1960 թ.), Իրինան (1962 թ.) եւ Իկօրը (1957 թ.)

յանցագործների հարիւրեակի ողջ–առողջ մնացած 94 անդամներից չորսի ողջութեան եւ առողջութեան մասին.

«Սեպտեմբերի 22-ին ատրպէյճանական ԽՍՀ Գերագոյն դատարանի քրէական գործերով դատատեանի նիստը, որին նախագահում էր Հանրապետութեան Գերագոյն դատարանի անդամ Ե. Ասկերովը, մասնակցում էին ժողովրդական ատենակալներ Դ. Աթաեւան ու Ա. Ասկերովը, քաղաքային առեւտրի բաժնի ինքնաշարժների կարաժի աշխատողներ Ե. Մամէտովի, Վ. Ճումշուտովի, Ա. Ալիեւի եւ Ռ. Մամէտովի գործով, որոնք մեղադրւում էին Ատրպէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 72-րդ յօդուածով (մասնակցութիւն զանգուածային անկարգութիւններին)։ Ինչպէս պարզուեց նախաքննութեամբ եւ դատավարութեամբ, մեղադրեալներն անմիջական մասնակցութիւն ունենալով զանգուածային անկարգութիւններին, որոնք տեղի են ունեցել սոյն թուի Փետրուարի 29-ին, իրար մէջ պայմանաւորուել են Ե. Գօզոսեանին պատկանող եւ քաղաքային առեւտրի բաժնի կարաժում գտնուող «ժիգուլի» ինքնաշարժի ոչնչացման մասին։ Նրանք քարերով վնասուածքներ են հասցրել մեքենային, ապա այն գլուխ են քշել փողոց եւ հրկիզել։ Դատարանը Ե. Մամէտովին, Վ. Ճումշուտովին, Ա. Ալիեւին եւ Ռ. Մամէտովին մեղաւոր ճանաչեց նշուած յանցագործութեան կատարման մէջ։ Սակայն հաշուի առնելով մեղադրեալների անկեղծ խոստովանութիւնն ու զղջումը, հասցուած վնասի լիարժէք հատուցումը եւ այն, որ նրանք ունեն բազմազաւակ ընտանիքներ, նրանցից իւրաքանչիւրին դատապարտեց երկու տարի եւ վեց ամիս ժամանակով պայմանական ազատազրկման»։

«Պայմանական ազատազրկման». ուրիշ խօսքով՝ ազատ էք, վեր կացէք եւ տուն գնացէք, որպէսզի եթէ յաջորդ անգամ ինքնաշարժի հետ իր հայ տիրոջն էլ վառէք, ապա այն ժամանակ ձեզ, գուցէ թէ, խստիւ ու յաւելեալ պատժենք...

Ընթերցողն իմացա՞ւ, ուրեմն, թէ ովքեր են 94 յանցագործները, կամ՝ այս չորսի ազատ արձակումից յետոյ՝ մնացած 90-ը։ Հազիւ թէ։ Բոլոր դէպքերում այն գաղտնապահութիւնը, որով շրջապատուեցին սումկայիթեան գործերը, ըստ ինքեան խօսում էր այն մասին, որ մանր-մունր մի քանի քօսոտ էին կանգնած դատատեանների առաջ եւ մեծամասամբ օծիքները պրծացնում էին թեթեւ պատիժներով։ Գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի Օգոստոսի 20-ի յայտարարութեան համաձայն, «29 մեղադրեալների վերաբերեալ 19 քրէական գործ արդէն դատարան է ուղարկուած», ըստ որում բացի Իսմայիլովի մեզ ծանօթ լոկ յարաբերաբար ծանր (անշուշտ հենց այդ պատճառով էլ թմբկահարուած) դատավճռից, ընդհանրապէս ոչինչ չի հաղորդուել 12 գործերի ընթացք ստանալու վերաբերեալ, ոչինչ չի հաղորդուել քննարկուած 4 գործերի ելքի մասին, վերջապէս հայերի հետ հաշուեյարդարի կոչով «մետաղաձողերով զինուած իր համախոհ խուլիգանների գլուխն անցած» Ա. Իբրիշովի եւ «քաղաքացի Վ. Սարգսեանին մարմնական վնասուածքներ պատճառած» Ե. Ղարիպովի դատավճիռներն էլ հանրութեան սեփականութիւնը չեն դարձուել։

Փոքր ինչ աւելի տեղեկութիւն հասել է Ալլահերտ եւ Վալերի

Աւանեսեան եղբայրների ոճրագործների՝ սումգայիթցի Ալամդար Հասանօղլի Մեհտիեւի եւ գուգարեցի «փախստականներ» Զ. Ռզաեւի ու Ա. Թուրապինեւի ջարդարարական խմբի խժդժութիւնների՝ սպանութիւնների, բռնաբարութիւնների, թալանի ու հրկիզումների վերաբերեալ։

Նրանց դատն սկսուեց Հոկտեմբերի 12-ին, Սումգայիթում, Ռուսաստանից հրաւիրուած եւ Վ. Կորոլկովայի նախագահութեամբ գումարուող Վորոնեժի մարզային դատարանի առաջ։ Զոհերի հարազատները եւ նրանց դատապաշտպան Ռ. Սահակեանը չկարողացան մինչեւ վերջ հետեւել դատավարութեան, որովհետեւ քաղաքի խուժանի յարաճող սպառնալիքի պայմաններում նրանց կեանքին իսկ վտանգ էր սպառնում։ Բոլոր դէպքերում փաստաբան Սահակեանը հենց սկզբից բողոքարկեց այն, որ քննչական Գալկինի խումբը գործի «նախնական քննութիւնը կատարել է չափազանց անկատար, ոչ համակողմանի եւ ոչ առարկայական»։ Բաւական է ասել, որ երկու հայ եղբայրների բարբարոսական սպանութեան ականատես եղած մարդկանցից ոմանց 90 ձերբակալուածներից առերեսման էին բերել միայն 5 հոգու, ուրիշների՝ 24 հոգու։ Ինչպէս հետաքննիչները, այնպէս էլ դատարանը շրջանցեցին յանցագործութեան ազգային բնոյթը, ի հաստատումն որի բաւական էր թէկուզ այն իրողութիւնը, որ բազմաթիւ, այդ թւում թաթար ականատեսների վկայութեամբ, ոճիրը գործելիս յանցակիցներին ոգեւորելու համար Մեհտիեւը բարբաջել էր այսպէս. «Մի՞թէ դուք մահմեդական չէք։ Հայաստանում սպանում են ադրբեջանցիներին, բռնաբարում ադրբեջանուհիներին, կտրում նրանց կրծքերը, խուզում մազերը, մերկացնում ու հանում փողոց, բերաններին խաչ կոխում ու վառում։ Այս բոլորի համար պէտք է սպանել ու ոչնչացնել հայերին»։ Եւ իրեն նոյնիսկ մեղաւոր չճանաչող 38-ամեայ այսպիսի մի հայասպանի փրկելու համար իր աշխատանքային վայրից՝ մեքենայացման յատուկ վարչութիւնից ուղարկել էին հասարակական դատապաշտպան, աշխատանքային մեծ հաւաքականութեան անունից խնդրելով չդատել «ազնիւ ու սիրելի պրիկատավարին» ու նրան թողնել իրենց ընկերական դատարանի անօրինութեանն ու իրենց միջավայրի դաստիարակութեանը։ Ուշագրաւ է նաեւ այն, որ երբ հայկական կողմը հարց բարձրացրեց հայասպանութեան համար պատասխանատուութեան կանչել Ադրբեջանական ԽՍՀ-ի կառավարութեանը, դատախազը մերժեց՝ բառացիօրէն յայտարարելով. «Գտնում են, որ ադրբեջանական կառավարութիւնը ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք չի առել, ինչը յանգեցրել է ողբերգական հետեւանքների։ Միջոցներ ձեռք առնուել են, բաւարար թէ անբաւարար, յամենայն դէպս միջոցներ ձեռք առնուել են»։

Այս պայմաններում դժուար չէ հասկանալ զայրոյթը, որ օրըստօրէ բորբոքւում էր հայկական միջավայրում։ «Երեկոյեան Երեւան» օրաթերթի մեկնաբանն, օրինակ, գրում էր. «Սումգայիթեան եղեռնի ոճրագործների դատավարութեան կազմակերպման սկզբունքները, ընթացքը եւ հրապարակայնութեան դրեթէ լիակատար բացակայութիւնը ոչ միայն մեզ չեն բաւարարում, այլեւ առաջ են բերում արդարացի վրդովմունք ու զայրոյթ։ Դա չի կարելի գնահատել այլ կերպ,

քան մեր նկատմամբ չարունակուող հետեւողական ու աննահանջ, սադրիչ ու զրպարիչ անիրաւութեան նոր դրսեւորում»։ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդի Կրեմլում գումարուած նստաշրջանի ամպիոնից, Հայաստանի պատգամաւորներից մէկը յայտարարում էր. «Սումկայիթը Հայաստանի աշխատաւորների սրտերում մնացել է որպէս չսպեղանուող վէրք։ Երկար ժամանակ, ասենք՝ հիմա էլ այդ վէրքը բորբոքում են բացայայտօրէն ձգձգուած հետաքննութիւնը, այն հանգամանքը, որ դատաքննութիւնը փոխադրուած է երկրի տարբեր քաղաքների վրայ, իսկ հանրապետութիւնում ոչ մի տեղեկութիւն չի ստացւում այն մասին, թէ ո՞վ եւ ինչպէ՞ս է պատժուած, թէ որտե՞ղ է արդեօք այդ ամէնի քաղաքական, հենց քաղաքական գնահատականը»։

Եւ ահա, զգալի չափով հայկական, եւ ոչ միայն հայկական հասարակական կարծիքը հանգստացնելու միտումով, նաեւ այլ՝ ոչ-այնքան խոստովանելի միտումներով, որոշուեց Մոսկուայում Գերագոյն դատարանի քրէական գործերի դատաստանի քննարկմանը յանձնել դատական տաս հատորանի մի գործ, որը կրում էր 18–60233–88 համարը։ Գործը վերաբերում էր Սումկայիթի «Քառասունմէկ-Ա թաղամասի երկու շէնքերում տեղի ունեցած բարբարոսութիւններին ու կոտորածին, որոնց մասնակցել էին առնուազն 200–300 ճիւաղներ, սակայն դատարանի առաջ հանուած էին նրանցից երեքը միայն։ Ինչո՞ւ. մեղադրական եզրակացութեան բացատրութեամբ՝ «քննչական նիւթի մեծ ծաւալի եւ զանգուածային անկարգութիւնների մասնակցածների մեծաթիւութեան պատճառով քրէական գործը բաժանւում է մի շարք ինքնուրոյն գործերի»։

Ի դէպ, սումկայիթեան «զանգուածային անկարգութիւնների, սպանութիւնների եւ բռնաբարութիւնների» վերաբերեալ նիւթերը համախմբուած էին մէկ գործի մէջ։ Եւ ահա, առանց գործին կցելու իր «նախաձեռնութեան» հիմնաւորութիւն-իրաւացիութիւնը հաստատող մի գրութիւն, ինչպէս որ օրէնքն ու կարգը պահանջում էին, քննչապետ Գալկինը, վերոյիշեալ ընդհանուր գործից անջատելով, առանձին ու մասնաւոր գործ էր սարքել Ահմեդով-Իսմայիլով-Ճաֆարով հրէշային եռեակի գործը։ Ասենք, որ ապարդիւն մնացին ե՛ւ հասարակայնութեան ու մամուլի, ե՛ւ զոհերի հարազատների փաստաբանների բազմապիսի բողոքներն ու տքնաջան աշխատանքը, որպէսզի եթէ ոչ սումկայիթեան ամբողջ եղեռնագործութեան համամիասնական, ապա գոնէ «Քառասուն-մէկ-Ա թաղամասի մէկ միասնական գործը չմասնատուէր։ Չէ՞ որ հրէշային եռեակի հետ նրանց զոհերից առնուազն երկուսին՝ Սողոմոն եւ Էդիկ Մելքումեաններին կացնահար նահատակել էին նաեւ թաթարներ Հասան Մամէդովը, Իսլամ Մամէդովը, Նիզամի Մահերամովն ու Ֆիզուլի Ֆաթալիեւը եւ ռուս Ալեքսանդր Դրաչը, «Հիթլեր» կոչեցեալը։ Ինչպէ՞ս կարելի էր հրէշային ութնեակը վերածել եռեակի, ոտի տակ տալով ոչ միայն հետաքննութեան նիւթերի իրողութիւնները, այլեւ՝ տարրական տրամաբանութիւնը։ Դրանից էլ անխուսափելի չի՞ դառնում հետեւեալ հարցադրումը. մի՞թէ Գալկինը եւ նրան անմիջականօրէն ղեկավարած Նենաշեւը կը համարձակուէին այդպիսի կամայական-հակաօրինական «նախաձեռնութիւն» հանդէս բերել, եթէ վերադասից,

տուեալ դէպքում Կասուսեւից իրենց կարգադրուած չլինէր հենց այդպէս էլ վարուել, գործել այնպէս, որ հնարաւորին չափ մանրացուէր-տարածանար ցեղասպանական եղեռնը։

Անտեղի չի լինի նշել, որ աղաղակող այդ արտառոցութիւնը բազմիցս ի ցոյց է դրուել։ Խորհրդահայ օրէնսգէտ-իրաւաբանների կողմից որպէս հասարակական մեղադրող Մոսկուա գործուղուած Գ. Ղազինեանն, օրինակ, «Աւանգարդ» թերթի Նոյեմբերի 11-ի համարում նշում է. «Փաստօրէն մէկ ամբողջութիւն կազմող քրէական գործը արհեստականօրէն բաժանուել է առանձին վարոյթների։ Այստեղից էլ՝ դատարանի առջեւ կանգնած խնդիրների բարդութիւնը գործի լրիւ եւ առարկայական քննութեան, բոլոր յանցագործներին մերկացնելու եւ նրանց արժանի պատիժ նշանակելու ուղղութեամբ։ Բանը նաեւ այն է, որ Սումգայիթի Քառասունմէկ-Ա թաղամասում կատարուած զանգուածային անկարգութիւններին, ջարդերին ու սպանութիւններին, որի վերաբերեալ գործը լսւում է ԽՍՀՄ Գերագոյն դատարանում, ըստ վկաների եւ տուժածների ցուցմունքների մասնակցել են 200–300 մարդ, նրանցից, նշուած յանցագործութիւնները անմիջականօրէն կատարել են 15–20 մարդ, մինչդեռ այսօր ամբաստանեալների աթոռին նստած են դրանցից ընդամէնը երեքը՝ 24-ամեայ Ահմէդովն ու Իսմայիլովը եւ անչափահաս Ճաֆարովը»։

Ե՛ւ տուժածների փաստաբաններ Ռշտունին ու Շապոշնիկովան, ե՛ւ դատախազ Կոզլովսկին դատաքննութեան ընթացքում հրապարակայնօրէն չնշելու էին, որ նախնական քննութեան մարմինները կոպտօրէն խախտել էին օրէնքի եւ մասնաւորապէս Ադրբէջանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 147-րդ յօդուածի պահանջները՝ հետաքննութեան ընթացքում ապօրինաբար առանձնացնելով դատարան ներկայացուած գործին անմիջականօրէն առնչուող նիւթերը։ Դատարանը մերժելու էր այդ դիտողութիւնը, պատճառաբանելով, որ ձերբակալուած ու քրէական պատասխանատուութեան են կանչուած հարիւրից աւելի թաթարներ, որոնցից շատերը մեղադրւում են սպանութիւնների եւ այլ հակահասարակական արարքների վերաբերեալ մի քանի գործով։ Ինչ վերաբերում է դատուող եռեակի յանցակիցներին, ապա նրանց ներկայացուած են համարեա համանման մեղադրանքներ եւ ուրեմն կարող են սպասել իրենց հերթին...

Ոչ-պակաս տարօրինակ էր եւ այն իրողութիւնը, որ երեք հայասպանների դէմ առանձնակի քրէական գործ էր յարուցուել դեռ Յունիսի 24-ին, իսկ դատավարութիւնն սկսւում էր շուրջ չորս ամիս անց։

Յամենայն դէպս վերադառնանք բուն իսկ դատավարութեան։

Դատաստանի կազմը հետեւեալն էր.

Նախագահ՝ Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի անդամ, ազգութեամբ լատիշ Ռայմոնտ Կազիմիրովիչ Բրիզէ (որ երկար տարիներ Լատվիայում եղել է ժողովրդական դատաւոր եւ դատախազութեան աշխատակից, դասախօսել է Ռիգայի պետական համալսարանում)։

Ժողովրդական ատենակալներ. Վալենտին Սերգէեւիչ Սմիրնով (Մոսկուայի էլեկտրասարքաւորումների աւտոտրակտորային

գործարանի բանվոր, ազգությամբ ռուս) և Վասիլի Ալեքսանդրովիչ Կուզնեցով (նույնպես մոսկվացի բանվոր և ազգությամբ ռուս)։

Պետական մեղադրողի դերով հանդես էր գալիս արդարադատության պետական խորհրդատու, Խորհրդային Միության գլխավոր դատախազի օգնական Վլադիմիր Կոզլովսկին։

Ամբաստանյալի աթոռին նստած էին սումգայիթյան եղեռնագործության երեք գործուն մասնակիցներ.

1) *Ցանցախմբի պարագլուխը՝ Ահմեդ Իմանիօղլի Ահմեդով։* Ծնվել է 1964 թվին, ավարտել է միջնակարգ դպրոցը, անդամ է համայնավար երիտասարդական միության, բանվոր է։ Ունի ծնողներ, չորս եղբայր և երեք քույր։ Մեղադրվում է Ադրբեջանական ԽՍՀ քրեական օրենսգրքի մի շարք յօդուածներով։ Մեղադրական եզրակացության մեջ Ահմեդովի գործողությունները բնութագրված են այսպես. «...Խոշտանգումներով, ավերածություններով, հրկիզումներով և նմանօրինակ այլ գործողություններով ուղեկցված զանգվածային անկարգությունների կազմակերպում և անմիջական մասնակցություն, խուլիգանական մղումներից կանխամտածված սպանության փորձ՝ մեկ անձնավորության (Ասյա Առաքելյանի,– Ե.Ն.) նկատմամբ, խուլիգանական մղումներից կանխամտածված սպանություն մեկ ուրիշ անձնավորության՝ (Արտաշ Առաքելյանի,– Ե.Ն.) առանձնայատուկ դաժանությամբ, խուլիգանական մղումներից կանխամտածված, առանձնայատուկ դաժանությամբ մի քանի անձանց (Մելքումյան ընտանիքի հինգ անդամների և Միշա Համբարձումյանի,– Ե.Ն.) սպանության կազմակերպում և աջակցություն նրանց սպանությանը, որպես մինչ այդ կանխամտածված սպանություն կատարած անձնավորություն»։ Հաստատված է, որ Ահմեդովը կացնահարել է Արտաշ Առաքելյանին և դանակահարել նրա կնոջը՝ Ասյային, խոշտանգել է Ռաիսա Մելքումյանին, մասնակցել Իգոր, Եդուարդ և Իրինա Մելքումյանների սպանությանը, ըստ որում կացինով խփել է Եդուարդի գլխին, որից յետոյ նրան նետել են խարույկի մեջ։

2) *Իլհամ Ազատօղլի Իսմայիլով։* Ծնվել է 1964 թվին։ Ունի միջնակարգ կրթություն։ Ամուսնացած է և ունի մեկ երեխա։ Կոմերիտական է և բանվոր։ Մեղադրական եզրակացության մեջ մոտավորապես նույն գործողությունների հետ է կապակցված, ինչ Ահմեդովը. անձամբ մասնակցել է ավերումներին և սպանություններին, ինչպես և յաջորդը՝

3) *Եավար Ճաֆարով։* Ծնվել է 1970 թվին։ Կոմերիտական, սովորում է մանկավարժական մի ուսումնարանում։

Մեղադրական եզրակացության մեջ այսպես են նկարագրված «Քառասունմեկ-Ա թաղամասում գործած ավազակախումբն ու նրա գործողությունները. «Ա.Ի. Ահմեդովի գլխավորած խուլիգանամետ անձանց խումբը, որի մեջ չբացահայտված այլ անձանց հետ մտնում են Ե.Գ. Ճաֆարովը և Ի.Ա. Իսմայիլովը, զինված դանակներով, կացիններով, մետաղյա խողովակներով, շինարարական մետաղաձողերով, քարերով և այլ առարկաներով, ներխուժել են բնակարաններ, որտեղ ապրում են հայազգի քաղաքացիներ, ջարդել են դռները, կահույքը, տնային օգտագործման այլ առարկաներ, փշրել են ամանեղենը, լուսա-

մուտների ապակիները, բնակարաններից դուրս են նետել, այրել ու թալանել նրանց ունեցվածքը, իրենց գործողություններով նյութական մեծ վնաս (215919 ռուբլի.– Ե.Ն.) հասցնելով հարձակման ենթարկված յուրաքանչյուր ընտանիքի: ....Հանցագործությունների կատարմանը մասնակցել են հարյուրավոր քաղաքացիներ, հիմնականում ադրբեջանցի ազգության պատկանող: Բնակարանների ավերումները, հրկիզումները, խոշտանգումները, բռնաբարությունները կատարել են սանձարձակ խուլիգանների խմբեր: Նրանց մի մասը հայտնաբերված է հետաքննության կողմից, ձերբակալված է և ենթակա է քրեական պատասխանատվության... մի քանիսը դատապարտված են: Այդ անձանց հանցավոր գործունեության հետաքննությունը շարունակվում է և կզբաղեցնի երկար ժամանակ»:

Ամբաստանյալների պաշտպաններն էին Ա. Արզումանը, Զ. Սադիխովան և Վ. Եաշինը: Տուժածների շահերը պաշտպանում էին Հայկական ԽՍՀ փաստաբանների միության անդամներ Ռուբեն Ռշտունին և Պոլինա Շապոշնիկովան:

Դատավարության առաջին իսկ օրը ավելի քան երեք ժամ տևողությամբ հրապարակուեց Վ.Ս. Գալկինի ստորագրությամբ հարյուր մեքենագիր էջից բաղկացած մեղադրական եզրակացությունը: Ռուս լրագրող Ս. Ժելտովը գրել է. «Ներկաները պատրաստ են դատարանում խորին լռություն պահպանել: Եթե այդ պահանջքը չլիներ, կարելի է պատկերացնել, թե մեղադրականը լսողները ցավից ու ցասումից դառնացած հոգեցունց ի՞նչ ճիչեր պիտի արձակեին»: Մի այլ լրագրող վկայել է. «Երեք ժամ դահլիճում ներկա գտնվողները ուղղակի ցնցված էին: Պատահական չէ, որ դատավարության ողջ ընթացքում այստեղ հերթապահում էր բժիշկների խումբը: Մեղադրական եզրակացության հարյուր էջերը իրենց մէջ ամփոփում էին հրեշավոր այն գործողությունների նկարագրությունը, որոնք տեղի են ունեցել 1988 թուի Փետրուարի 29-ին, ընդամէնը մէկ ժամուայ ընթացքում»: Մամուլից մի քաղուածք եւս. «Մեղադրական եզրակացության ընթերցման երեք ժամերը տանջալից, դժուարագոյն ժամեր էին: Մարդկային երևակայությունը չի կարող տեղավորել, որ այդ ամէնը տեղի է ունեցել մեր օրերում, երբ մարդկային դէմքը կորցրած արնախում ոճրագործների խմբերը Սումգայիթի տարբեր թաղամասերում դիմել են բռնարարական միջոցների հայ բնակչության նկատմամբ: Լսում ես մեղադրականը, նայում դահլիճում նստած երիտասարդ ոճրագործներին, փորձում ես հասկանալ, որտեղի՞ց նրանց մէջ այդքան դաժանություն, վայրագություն, ուզում ես հասկանալ, որտեղի՞ց են գալիս այդպիսի թշնամանքի ու դաժանության ակունքները»:

Ի՞նչ էր տեղի ունեցել «Քառասունմէկ-Ա թաղամասում»: Այն, ինչ տեղի էր ունեցել, իր ամբողջ դաժանությամբ չի պատկերուի երբեք: Անհրաժեշտ է ընթերցել դատական գործի նյութերն ու դատավարության արձանագրությունները, ընթերցել մանաւանդ վկայությունների այն ձեռագիր բազմահատորեակը, որ կազմուել է հայ մտաւորականների տքնաջան աշխատանքով և որը կարող է հրատարակուել մի օր, երբ ճշմարտությունից մահու չափ երկնչող թաթարապաշտ բարձրաստիճա-

նաւորները, ու նրանց հետ նաեւ երեւանեան չարագուշակ գրագննիչները, չքուած կը լինեն։ Այդ նիւթերի ընթերցումը միայն թոյլ կը տայ ամբողջական պատկերացում կազմել, թէ ի՞նչ է տեղի ունեցել, թէ ատրպատականեան թաթարը այն նո՛յն թուրքն է, որի մասին գիտի ամէն մի հայ դեռ մօր արգանդում սաղմնաւորուելիս։

Եւ ուրեմն, լրագրական գրառմամբ. «Մա՛հ հայերին»՝ բարձրախօսով գոռում էր Ահմէտովը։ «Մա՛հ հայերին»՝ արձագանգում էր առնուազն 300 հոգինոց նրա հայասպան ամբոխը, որը ադրբէջանական դրօշներ ծածանելով եւ կացիններով, դաշոյններով, մետաղաձողերով ու այլ սառը զէնքերով զինուած, ներխուժում էր «Քառասունմէկ-Ա թաղամաս»։ Բարձրախօսից Ահմէտովը դիմում էր իր ցեղակիցներին. «Մենք ոճրագործներ ու թալանարարներ չենք։ Մենք եկել ենք միայն հայերին կոտորելու։ Ադրբէջանցիներ, Հայաստանում մորթում են մեր քոյրերին ու եղբայրներին։ Կայարանում մի վագոն է կանգնած՝ բերել են մեր արիւնակիցների կտրուած գլուխներն ու ձեռքերը։ Հարիւրքսան ադրբէջանցի աղջիկ է միանգամից կորել Հայաստանում։ Մա՛հ հայերին։ Ղարաբաղը նրանց չենք տայ։ Կեցցէ Ադրբէջանը»։

Փետրուարի 29-ն է, Երկուշաբթի, երեկոյեան ժամը 5։

Երեւանում, Խորհրդային Հայաստանի կուսակցապետը հեռուստատեսային սարքերին գրանցել է տալիս Սումկայիթում հայ-ադրբէջանական «բախումների» վերջ գտած եւ «իրադրութեան վերահսկուած» լինելը հաղորդող իր մուղամը, որը քիչ անց Երեւանից հեռափոխուելու է...

...Մինչ Սումկայիթում, «Քառասունմէկ-Ա թաղամասի» թիւ 5-Ա շէնքի իրենց բնակարանի ամրափակ դռան ետին, ահից դողդողալով, Առաքելեան ամուսինները լսում են Ահմէտովի կաղկանձը. «Հայեր, վերջը վատ կը լինի, բաց արէք դուռը, յանուն օրէնքի ենք ասում՝ շուտ բացէք»։

Մի քանի րոպէ անց, կացինների եւ լինգերի հարուածներից ջարդուած ու տեղահանուած դռնից խոշտանգուելով դուրս են բերուելու Արտաշ եւ Ասյա Առաքելեանները։ Մնացածը Թուրքավարի-մասնագիտական հարց էր։ Մնացածի մասին մեղադրական եզրակացութեան մէջ ասուած էր.

«Ահմէտովը, միանալով Ճաֆարովին, Իսմայիլովին ու միւսներին, սկսեց ծեծել Արտաշ Լ. Առաքելեանին... Ահմէտովը, այդ պահին ձեռքին եղած տապարով, խուլիգանական մղումներից սպանութեան նպատակով, հարուածեց Առաքելեանի մէջքին։ Ճաֆարովը եւ Իսմայիլովը, իրենց ձեռքի կացիններով, նոյն նպատակով, մի քանի հարուածներ հասցրեցին Առաքելեանի գլխին եւ մարմնի այլ հատուածներին... Սպանութիւն կատարելուց յետոյ, հանդէս բերելով դաժանութիւն, խուլիգանամէտ անձինք այրեցին Առաքելեանի դիակը... Խուլիգանական մղումներից կանխամտածուած սպանութիւն կատարելու նպատակով, ձեռքի դանակով Ճաֆարովը մի քանի հարուած հասցրեց Ասյա Տ. Առաքելեանի մարմնի առանձին հատուածներին... Ենթադրելով, որ ստացուած վնասուածքներից Ասյան մահացել է, քանի որ

կենդանութեան նշաններ ցույց չի տալիս, նրա վրայ փալաս նետեցին, դիւրավառ հեղուկ ցօղեցին և վառեցին, որի հետևանքով Ասիային պատճառեցին ուսերի և մէջքի երկրորդ ու երրորդ աստիճանի այրուածքներ...»

Ասիա Առաքելեանի մասին խորհրդահայ մամուլում գրուել է այսպէս. «Իսկ Ասիա Առաքելեա՞նը: Արիւնս սառչում է երակներիս մէջ, երբ մտածում եմ այս կնոջ մասին, որը դեռ Փետրուարին, մինչև այդ չարաղէտ օրը, քառասուն տարեկան էր, իսկ այժմ եօթանասունամեայ կնոջ տեսք ունի: Նրան ենթարկել են անպատմելի կտտանքների, խոշտանգման, ամենավայրագ ձևով ծանակել են նրա կանացի ամօթխածութիւնը, հասցրել նրան անբուժելի վէրքեր և առաջին հերթին՝ հոգեկան: Եւ ամուսնու հետ այրել են իրենց իսկ կահկարասիների մէջ ու միայն պատահականութեամբ կենդանի մնացած այս կինը ինչպիսի՛ կամք էր դրսևորելու, որպէսզի չճչար անտանելի վէրքերի ցաւերից, լռէր, որպէսզի խուժանը նրան ևս մեռած կարծելով՝ հեռանար: Եւ այդպէս, նա մօտաւորապէս երեկոյեան ժամը հինգից մինչև գիշերուայ ժամը տասներկուսը մնացել է պառկած, ու երբ թուացել է՝ խաղաղուել է ամէն ինչ (քանի որ այլևս բնակարան չէր մնացել կողոպտելու և հայ չկար սպաննելու), քայլել է մի կերպ ու իրենց ջարդուփշուր եղած բնակարանը մտել: Այնքան անհաւանական է թւում այդ, որ երբ ամիսներ անց, այսինքն այժմ, նրա հարևանուհին՝ ադրբեջանուհի վկայ Թէյուբովան, որ պատշգամբից դիտել է այս ողբերգութիւնը սկզբից մինչև վերջ, կ'ասի, թէ ինքը յանկարծ տեսաւ, թէ ինչպէս այդ այրուած իրերի տակից դուրս եկաւ ու մի կերպ դէպի մուտքը շարժուեց մի կին» («Գրական Թերթ»):

«Ասիա Առաքելեանին կացնահարել էին, բզկտել երկաթէ սրածայր ձողերով, հարուածել բահերով՝ շէնքերով շրջափակուած հսկայական բակում, բազմաթիւ հարևանների աչքի առաջ, գրեթէ հազարանոց ամբոխի ներկայութեամբ, և ոչ ոք, բացարձակապէս ոչ ոք, պաշտպան չի կանգնել կնոջը, ոչ մէկը նրանցից, ովքեր այսօր դատարանի դահլիճում սարսուռով են լսում այս սահմռկեցուցիչ տեսարանը, օգնութեան չի հասել: Իսկ Ճաֆարովը... ասես խաղ անելով՝ կը ցցուի՞ թէ ոչ, նշան բռնելով, դանակը նետում էր գետնին փռուած կնոջ վրայ, որի ամուսնուն մի քանի րոպէ առաջ նա ինքը, մեղադրեալի աթոռին նստած ընկերակիցների՝ Ահմէդովի և Իսմայիլովի հետ դաժանաբար սպաննել էր ու այրել: Դա տեղի էր ունեցել ժամը 18-ին: Կնոջ անշունչ մարմնի վրայ նրանք ծխացող փալաս էին գցել, մինչդեռ կինը կենդանի էր: Նա վառւում էր, բայց ծպտուն չէր հանում, որ չմտածեն իրեն, որ չսպաննեն: Եւ միայն գիշերուայ ժամը մէկի մօտ, հարևանուհի Թէյուբովայի վկայութեամբ, նա յանկարծ ոտքի էր ելել և մի կերպ հեռացել» («Երեկոյեան Երևան»):

Թիւ 5-Ա շէնքի հետ հաշիւները մաքրած, և ճանապարհին մի քանի բնակարաններ էլ աւերելուց յետոյ, Ահմէդովի աւազակախումբը 2-Բ շէնքի բակում էր, որտեղ աներևակայելի, անպատմելի ու անհաւատալի դաժանութեամբ սպաննուելու էին չորս Մելքումեանները և Մ. Համբարձումեանը, որոնց հարսների ու սրանց երեք երեխաների

փախուստի ու փրկութեան ողբականը տալիս ենք այլուր։

Թաթար վկայ Սալամովի պատմածից. «Ես տեսայ, որ 2-րդ չէնքի երրորդ մուտքի մօտ, ուր հայեր են ապրում, ծեծում են մի կնոջ (Սողոմոն Մելքումեանի կնոջ՝ Թախսային,– Ե.Ն.)։ Տարեց, գէր կին էր։ Ես գիտէի, որ նա երկու եղբայրների (Իկորի եւ Եդուարդի,– Ե.Ն.) մայրն էր...։ Երրորդ մուտքից դուրս բերեցին երեսունին մօտ մի տղամարդու (Իկորին,– Ե.Ն.) եւ դուրս բերելուն պէս խփեցին։ Յետոյ տարան 5-րդ չէնքի առաջ եւ սկսեցին խոշտանգել... Դրանից յետոյ 25–28 տարեկան մի (թաթար) երիտասարդ մօտեցաւ ծեծուած ու գետին ընկած մարդուն եւ վառուող լաթ խցկեց նրա ծոցը։ Տղամարդը վեր թռաւ, բղաւեց ու վազից 2-րդ չէնքի ետեւը։ Այլեւս նրան չտեսայ... Յետոյ տեսայ, որ 2-րդ չէնքի երկրորդ մուտքից դուրս բերեցին Իրինային։ Ես նրան ճանաչում էի... Ամբոխը նրան տարաւ էլեկտրակարգաւորիչի խցիկի մօտ։ Թէ ի՞նչ էին անում նրա հետ, չէր երեւում։ Երբ ամբոխը ետ քաշուեց, տեսայ, որ նա մերկ պառկած է գետնին եւ 14–15 տարեկան մի տղայ բահով խփում է նրա մէջքին... մօտաւորապէս հինգ-վեց անգամ։ Իրինան բարձրացաւ տեղից, ձեռքերը թափահարեց... Նորից խփեցին... Իրինան նորից ընկաւ... Հայրս ինձ տուն կանչեց։ Ժամը քանիսն էր, չգիտեմ։ Բայց մութն ընկել էր... Երբ մօտեցայ մուտքին, տեսայ, որ Իրինան մահացած էր։ Այդպէս կարծեցի, քանի որ անշարժ էր։ Աչքերը բաց էին, արնաշաղախ։ Նա նստած դիրքում էր։ Մէջքով յենուած էր փայտեայ պահարանիկին, որ վառւում էր... Իրինայի մօտ արդէն ոչ ոք չկար...»

Թաթար Սարիր Ղուլիեւի վկայութիւնից. «Բակում տանջում էին մի կնոջ (Իրինա Մելքումեանին,– Ե.Ն.)։ Այդ պահին նա ծնկաչոք էր, ամբողջովին մերկ։ Շուրջ յիսուն տարեկան մի տղամարդ միս կտրատելու կացինով հարուածում էր նրա կողերին, իսկ դիմացը կանգնած էր 180 սանթիմեթր հասակով մօտ երեսուն տարեկան մի տղամարդ՝ ֆիննական դանակը ձեռքին»։

Խորհրդահայ մի լրագրողի գրառումից. «Մելքումեանների սպանութեան որոշ մանրամասներ արդէն յայտնի են հասարակութեանը։ Միայն թէ մի միտք է շարունակ տանջում ինձ, հաւանական մի ենթադրութիւն. թւում է, թէ Իկորն ու Էդիկը զոհուելուց առաջ մտածել են, որ իրենց կանայք ու երեխաներն էլ են ընկել մարդասպանների ճանկը, որ եթէ իրենք չկարողացան փրկուել՝ թաքնուելով հարեւան շքամուտքի բնակարաններից մէկում, ուրեմն՝ գտել են կամ գտնելու են նաեւ նրանց։ Պնդակազմ Իկորը, բռունցքներով պաշտպանուելով չորս կողմից հարուածող դանակներից ու մետաղեայ ձողերից, պոկւում է ամբոխից, յայտնւում չէնքի հակառակ կողմում, բայց յանկարծ կանգ է առնում, շրջւում դէպի հետապնդողները եւ կուրծքը բացելով բղաւում. «Սպանեցէ՛ք, ինչ ուզում էք արէք...»։ Մէկը վառելանիւթ է շփում նրա վրայ եւ նետում վառուող լուցկին։ Իսկ «սպիտակ» Ահմէտովը չի մոռանում բարձրանալ հինգերորդ յարկ, անհանգստութեան համար ներողութիւն խնդրել Իկորին, Էդիկին եւ Իրինային ակամայից ընդունած մարդկանցից եւ, ի միջի այլոց, ցոյց տալիս ձեռքերը. «Նայէք, սա հայկական արիւն է...»։ Իկորը տեսել էր, թէ ինչպէս են բզկտում քրոջն ու

եղբորը, տեսել էր չքամուտքի մօտ սպաննուող մօրը, չէնքի այն կողմ անցնելով՝ հաւանաբար տեսել էր նաեւ սպաննուած հօրը եւ... կանգ առել. «Սպաննէ՛ք, ինչ ուզում էք արէք»։

Թաթար վկայ Օզաեւայի պատմածից. «Յետոյ այն տղամարդը (Մելքումեան Էդիկը,- Ե.Ն.) բերանքսիվայր ընկաւ։ Այդ ժամանակ Ահմէդովը տապարով մի հարուած հասցրեց նրա մէջքին։ Տղամարդն այլեւս չէր շարժւում։ Ահմէդովը վերջինը հարուածեց նրան։ Տապարի վրայ արիւն կար եւ Ահմէդովը տապարը սրբեց գորգով, որը գցեցին տղամարդու վրայ, կրակ տալուց առաջ...»

Սումգայիթում ապա թրեւ եկող եւ որպէս «վկայ» Մոսկուա կանչուած թաթար Հ. Մամէդովի դատարանում հարցաքննութեան արձանագրութիւնից.

«Դատախազ— 2-Բ չէնքի մուտքից դուրս բերեցին տղամարդուն (Մելքումեան ընտանիքի հօր՝ Սողոմոնին,- Ե.Ն.), յետոյ ի՞նչ արեցին։

Մամէդով— Ծեծում էին։

Դատախազ— Ովքե՞ր։

Մամէդով— Ես։

Դատախազ— Քանի անգամ խփեցիք նրան։

Մամէդով— Երեք։

Դատախազ— Ինչո՞վ։

Մամէդով— Երկաթեայ ձողով։ Մէկ անգամ մէջքին խփեցի, երկու անգամ գլխին։

Դատախազ— Ինչո՞ւ, ի՞նչ նպատակով էիք խփում։

Մամէդով— Հենց այնպէս։ Ուղղակի ուզում էի խփել։ ...Մի երիտասարդ մարդու (Մելքումեան եղբայրներից մէկին,- Ե.Ն.) էին ծեծում, քարերով խփում էին, յետոյ գցեցին խարոյկի մէջ։ Տղամարդն ուզում էր դուրս գալ կրակից, բայց մէկը նրան մետաղի ձողով սեղմում էր կրակի մէջ, չէր թողնում դուրս գալ։ Ես սեղմողին լաւ եմ ճանաչում, թաքսու վարորդ է, անունը Մահերամ, մեքենայի համարը 93-10։

Փաստաբան Ռշտունի— Ալեքսանդր Գրաչը, որին փողոցում «Հիթլեր» էին կոչում (եւ որ ազատութեան մէջ էր,- Ե.Ն.), երկու-երեք անգամ ո՞ւմ է խփել կացնի սուր ծայրով։

Մամէդով— Նրան, ում ես էի ծեծում (Սողոմոն Մելքումեանին,- Ե.Ն.)։

Փաստաբան— Ո՞ւր գնացին այդ ամէնից յետոյ։

Մամէդով— գնացինք Ֆիզուլի Ֆաթալիեւի տուն, մագնիտոֆոն էինք լսում, թուղթ խաղում»։

Անհրաժեշտ է նշել, որ մոսկովեան դատավարութիւնը «բաց» եւ «հրապարակային» էր յայտարարուած։ Իսկ թէ իրականում այն ինչպէ՞ս էր ընթանում, թող վկայի խորհրդահայ մամուլը։

«Ինչո՞ւ... դատը բաց եւ հրապարակային չի ընթանում,- հարց էր տալիս խորհրդահայ լրագրողը։ -Եթէ այն Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանն է վարում, ուրեմն գործն ինքնին շատ կարեւոր է եւ առաւել առարկայականութիւն պահանջող։ Եւ այն ներկայումս՝ դեմոկրատացման ու հրապարակայնութեան հռչակուած

քաղաքականության պայմաններում միայն ու միայն բաց դռներով պետք է անցներ, անգամ ցուցադրվեր կենտրոնական հեռուստատեսությամբ, լիովին հանրության սեփականությունը դառնար՝ ի խրատ և ի զգուշացում այլոց»։

Առանց այդ էլ փոքր ու նեղ դահլիճում տեղերը ինչ որ մեկի կախարդական փայտիկով բաշխվում էին (իսկ գուցե և վաճառվում) թաթարների, նաև անյայտ գրասենյակներից գործուղված ռուսների, մինչ հայերն ընդհանրապես փողոցում էին թողնվում։ Նոյեմբերի 11-ի իր համարում «Ավանգարդ»ը գրում էր. «Սումգայիթյան հարյուրավոր ոճրագործներից ընդամենը երեք մարդակերպ խաժամաճիկների դատին մասնակցելու հնարավորություն են ստանում ոչ բոլորը՝ սակավաթիվ «ընտրյալները» միայն, քանզի դահլիճը (որքան ուզում ես շուտ արի, միևնույն է) նախապես համարյա կիսով չափ լիքն է կատարվածի ու դատի հետ հեռավոր կապ իսկ չունեցող երիտասարդներով։ Դրանում համոզվում ես նաև դատավարության ողջ ընթացքում՝ ոչ մի վերաբերմունք, մկանի ոչ մի խաղ, ոչ մի լարում և, անգամ, ոչ մի հետաքրքրություն պատմության իրադարձությունների նկատմամբ։ Նրանք պարզապես պարտքն են կատարում։ Իսկ դրսում, մոսկովյան սառնաշունչ ձմեռնամուտին, միմյանց մխիթարող բազմաթիվ հայեր սպասում են «երջանիկներին» դատարանի դահլիճից դուրս գալուն, որպեսզի գեթ մի լուր առնեն տեղի ունեցածի մասին»։

Մոսկովյան մամուլը, ինչպես ռուսաստանյան թե՛ քաղաքային, այնպես էլ հատկապես համամիութենական պատկանելիության թերթերը, այս դեպքում ևս արտակարգ համախոհությամբ (որի ետին անշուշտ որ դժվար պիտի տեսնել թաթարապաշտ բարձրաստիճանավորների յորդորը) հիմնականում անտեսում և անարձագանք էին թողնում իրենց խմբագրություններից երկու քայլի վրա ընթացող դատավարությունը։ Նրանք համարյա մեռելային այնպիսի լռություն էին պահպանում, որ ակամայ մտածում էիր. ռուսերեն լեզուն երևի դահլիճում նկարագրվող խժդժությունները բնութագրող բառեր չունի...։ Բացառություն էր կազմում արտասահմանյան մի շարք լեզուներով լույս տեսնող և հենց օտարերկրացիներին էլ հասցեագրված «Մոսկովսկիե Նովոստի» («Մոսկովյան Լուրեր») շաբաթաթերթը, որը Սեպտեմբերի 30-ի իր համարում գրում էր. «Գործը լսվում է դատական բաց նիստում, սակայն տեղերի փոքրաթվության պատճառով դահլիճ մուտքը սահմանափակված է անցագրերի խիստ դրությամբ։ Դատարանի նախագահը մերժեց տեսագրություն կատարելու խնդրանքը և նույնիսկ հեռուստատեսային նկարահանումները առաջին իսկ օրը արգելվեցին։ Բացատրությունը՝ նկարող սարքերը կարող են խանգարել մասնակիցներին։ Սակայն դատարանը հնարավորություն ունի նիստերը տեղափոխել մի այլ շենք։ Մի՞թե պետք չէ այդպես վարվել, հաշվի առնելով, որ ինչպիսի ուշադրությամբ միլիոնավոր մարդիկ տեղեկատվություն են սպասում»։

«Մոսկովսկիե Նովոստի»ի խմբագրությունում մի՞թե այնքան պարզամիտ էին, որ չէին զգում դատավարության շուրջ, հենց դատարանի նախագահի էլ աջակցությամբ, բարձրացված լռության պատի

չինանիւթի եւ նախագծման պաշտօնականութիւնը, ուրեմն եւ անխորտակելի ամրութիւնը։

Սակայն լռութեան պատն այնքան ուշադրաւ եւ նողկալի չէր լինի, եթէ միաժամանակ չմատնէր դատարանի դահլիճում թել-թել հիւսւելով կծիկուող տարօրինակութիւնները վարագուրելու միտումը։ Ե՛ւ մեղադրեալները, ե՛ւ թաթար վկաները, նոյնիսկ նրանք, ովքեր որպէս յանցագործ կալանքի տակ էին, դահլիճում իրենց զգում էին ինչպէս սեփական տանը կամ չայխանայում, իրենց պահում էին չափազանց լկտի ու անպատկառ։ «Վկաներն անընդհատ կրկնում են արդէն կաղապար դարձած ու բազմիցս ասուած յայտնի դարձուածքներ,– գրում էր «Սովետական Հայաստան»ը Նոյեմբերի 2-ին։ –Նրանց ցուցմունքները գրեթէ միշտ տարբերւում են նախնականից... Այնուամենայնիւ ովքե՞ր են կանգնած մեղադրեալների ետեւում»։ «Երեկոյեան Երեւան»ը Հոկտեմբերի 30-ին աւելացնում էր. «Եթէ անաչառ լինենք, ապա այն տպաւորութիւնն է ստեղծւում, թէ այս դատավարութեան քուլիսներում կանգնած է ինչ որ մէկը եւ փորձում է ղեկավարել վկաներին, նպատակ ունենալով պաշտպանել յանցագործ եռեակին»։ «Վկաները դատարան չներկայանալու տարբեր պատճառներ են նշել,– գրում էր Ն. Կրեմնեւան։ –Պարզորոշ այն զգացողութիւնն է մէջս ծնւում, որ վկաների կամքը ճնշուել է ազնիւ քննութեան հակառակորդների սպառնալիքներից»։

Դատաւորը ոչ միայն չէր հակւում տարօրինակութիւնների վրայ, այլեւ նոյնիսկ քամահրում էր տուժած կողմի պաշտօնապէս յայտարարուած անվստահութիւնը եւ պահում ու պահպանում թաթար թարգմանիչ Ռաճապովին, որ իբր չտպելուց էր սխալներ թոյլ տալիս եւ որ իրականում իր ցեղակիցների ելոյթները ռուսերէնի էր վերածում ըստ կամս, այնպիսի՛ վարպետութեամբ «խմբագրուած», անշուշտ սեւապէս յօգուտ Պաքուի գաղափարակիցների շահերի։ Ի զուր չէ, որ շատ պաշտօնական, նման հարցերում էլ խիստ ինքնազուսպ «Սովետական Հայաստան»ը Նոյեմբերի 2-ին գրում էր. «Ցաւօք, մինչեւ այժմ ճշմարտութիւնը չի հնչում դատարանի դահլիճում»։ Աւելի բացախօս էր «Գրական Թերթ»ի աշխատակիցը. «Երբեմն ինձ թւում էր, որ դատավարութիւնն էլ էր հարթեցնում, ներկում սումգայիթեան գործը։ Որքա՜ն անպատասխան հարցեր, մանրամասներ լոյս աշխարհ եկան, որոնցից դատավարութեան ընթացքում։ Եւ որքան հեշտ մատնուեցին դրանք անտարբերութեան։ Այդպէս էլ անհասկանալի մնաց, ասենք, Թոֆիկ Թահմազովի տարօրինակ պահուածքը, այդպէս էլ չհասկացանք, թէ ինչպէս է, որ շարունակում են ազատութիւն վայելել մարդիկ, որոնց դէմ ծանր ցուցմունքներ կան»։

Թահմազովը կարող էր բանալի դառնալ եղեռնագործութեան կազմակերպական խորշերը թափանցելու, սակայն դժբախտաբար, հակառակ տուժածների փաստաբանների բոլոր ջանքերին, դատարանի նախագահի, դատախազի եւ մեղադրեալների փաստաբանների համատեղ ճիգերով ոչ միայն իր օձիքն ազատեց, այլեւ այնպէս էլ խուսափում թողեց մի շարք կարեւոր հարցեր։

Բանն այն է, որ չարագուշակ «Քառասունմէկ-Ա թաղամաս»ի տնային կառավարիչ Թահմազովի «անուղղակի» մեղսակցութեամբ են

Ահմէտովն ու իր ճիւաղները նահատակել եօթ հայերի։ Թաղամասի 5-ի չէնքի բնակիչ Ալեքսանդր Ղուկասեանը վկայել է, թէ ինչպէս է ինքն իր ընտանիքով Փետրուարի 29-ին պատրաստուել տնից փախչելու, երբ յանկարծ յայտնուել է թաթար այդ պաշտօնատարը եւ յամառօրէն խորհուրդ տուել մնալ տանը, քանի որ «փողոցում վտանգաւոր է»։ Թահմազովի գնալուց կէս ժամ անց Ղուկասեանների բնակարանի վրայ գրոհել են տասնեակ ջարդարարներ, սակայն բարեբախտաբար հայ ընտանիքը մինչ այդ, կասկածամտելով, հասցրել էր թաքնուել հարեւանների մօտ։ Ղուկասեանի համոզմամբ, Թահմազովը միտումնաւոր է խորհուրդ տուել տանը մնալ, քանի որ հայերին անկեղծօրէն օգնել ցանկացողներն սակաւ են. «Թաքնուէք հարեւանների մօտ, թաքնուէք որտեղ ուզում էք, միայն թէ տանը մի մնացէք, քանի որ առաջին հերթին բնակարանների վրայ են յարձակւում»։ Թահմազովը փոքր ինչ անց գնացել է նաեւ Մելքումեանների տուն ու նոյն խորհուրդը տուել, համոզելով նրանց հրաժարուել Համբարձումեանների հետ ամառանոց գնալու եւ այնտեղ թաքնուելու մտքից։ Իսկ կէս ժամ անց ուղիղ Մելքումեանների բնակարան են ներխուժել հայասպանները։

«Մի՞թէ տնային կառավարիչը տեղեակ չէր,– գրել է մի հայ լրագրող,– որ անցած օրուայ ընթացքում քաղաքում աւերուել են հայերի տասնեակ ու տասնեակ բնակարաններ։ Մի՞թէ չէր տեսնում, որ իր թաղամասում կատարւում է նոյն բանը։ Համաձայնէք, մի քիչ տարօրինակ վարքագիծ է։ Կասկածներն աւելի են ուժեղանում, երբ պարզւում է, որ դատական գործում կայ Թահմազովի վկայութիւնը, որում նա չի ուրանում, որ Փետրուարի 29-ին այցելել է Մելքումեաններին, սակայն պնդում է, որ դա տեղի է ունեցել առաւօտեան։ Մելքումեաններ-Համբարձումեանների ընտանիքների ջարդից փրկուած անդամները եւ Ղուկասեանի ընտանիքը մէկը միւսից անկախ այլ բան են պնդում. Թահմազովը երեւացել է յարձակումներից անմիջապէս առաջ»։

Եւ ահա մոսկովեան դատարանը փաստօրէն Թահմազովին հնար տուեց ճողոպրել եւ հենց ճողոպրելու շնորհիւ էլ թաքուն պահել սումկայիթեան եղեռնագործութեան կարեւոր գաղտնարաններից մէկը։

Պէտք չկասկածել, որ կը գայ օրը, եւ ոչ շատ ուշ, ու Սումկայիթի եղեռնի մասին, եւ եղեռնագործների դատավարութիւնների, այդ թւում յատկապէս մոսկովեանի մասին կը գրուի ամբողջ ճշմարտութիւնը, ամբողջակա՛նը։ Մինչ այդ այստեղ նշենք, միայն, որ դատավարութեան վրայ առաջին օրից եւ մինչեւ վերջինը տեսանելիօրէն ընկած էր թաթար մեծազդեցիկ եղեռնագործների, ու նաեւ նրանց թաթարապաշտ հովանաւորների, չարագուշակ ստուերը։

Այդ ստուերը տեսանելի էր նոյնիսկ դեռ մինչեւ դատավարութեան սկզբնաւորումը։ Նահատակ Մելքումեան եղբայրների այրիները՝ Կարինէն եւ Իրինան, որոնք Ահմէտովի հայասպանական խմբի դէմ գլխաւոր վկաներն էին, դատավարութեան առաջին օրերին չկարողացան ժամանել Մոսկուա։ Ինչպէս գրեց ռուս լրագրող Ս. Ժելտովը, «դատավարութիւնը շարունակւում է հակառակ այն իրողութեան, որ որոշ մարդիկ ըստ երեւոյթի դէմ չեն խանգարելու, առնուազն դժուարացնելու դատարանի գործը»։ Զոհ ու վկայ Մելքումեանները Պաքւում չէին կարո-

ղացել յաղթահարել յարուցուած խոչընդոտները եւ ինքնաթիռի տոմս ճարել. Թաթարները պարզապէս մերժում էին նրանց տոմս վաճառել։ Հայաստանեան փաստաբանների աջակցութեամբ ի վերջոյ գործին խառնուեց Գերագոյն դատարանը՝ Պաքուից խստիւ պահանջելով վկաներին շուտափոյթ Մոսկուա հասցնել։

Ցամենայն դէպս դատավարութիւնը, գոնէ երեւութապէս, գնում էր իր «բնականոն» հունով. մեղադրական եզրակացութիւն, մեղադրեալների հարցաքննութիւն, վկաների ցուցմունքներ, երկու կողմերի փաստաբանների հարցապնդական մենամարտ եւ այլն։ Եւ սակայն այդ երեւութականի ետին, խորքին մէջ, հայկական կողմը գերմարդկային ճիգերով պայքարում էր դատավարութեան վրայ նստած ստուերի դէմ, որը ամէն ինչ անում էր, որպէսզի հնարաւորին չափ մեղմ դատապարտուեն գործուած վայրագութիւնները եւ որը, սակայն, դէմ չէր լինի նոյնիսկ խիստ ու խստագոյն դատավճիռների, պայմանաւ որ գլուխ բերէր ճակատը. չթողնել, որ Գերագոյն ատեանում Սումկայիթը դատապարտուի որպէս երեւոյթ, յատկապէս այն ճնող պահին ցեղասպանութեան ոլորտը ներքաշուելու վտանգից։

Այդ նպատակին հասնելու գլխաւոր սանդղահարթակը եղեռնագործութեան կազմակերպուած լինել-չլինելու, հետեւաբար, Սումկայիթի ղեկավարների եւ ընդհանրապէս պատասխանատու անձնաւորութիւնների թէկուզ որպէս վկայ դատարան հրաւիրել-չհրաւիրելու հարցի վճռումն էր։

Այն, որ Սումկայիթը կանխօրօք ծրագրուած ու կանխապատրաստուած էր, չի կարող առարկուել։ Ոչ միայն տրամաբանութիւնը, այլեւ փաստերն ու վկայութիւնները առարկութեան տեղիք չեն թողնում։ Եւ սումկայիթեան հարցում յամառ յարատեւութեամբ անառարկայական ԹԱՍՍ-ի Հոկտեմբերի 18-ի հաղորդագրութիւնն էլ, հօգ չէ, թէ շարունակելով ցեղասպանական յանցագործութիւնը բնութագրել որպէս ըստ էութեան կարծես թէ հակախորհրդային բնոյթի «զանգուածային անկարգութիւններ», հարկադրուած էր համաձայնել դրա «կազմակերպուած» լինելու իրողութեան հետ. «Խորհրդային ժողովրդի յիշողութեան մէջ ընդմիշտ կը մնան 1988 թուականի Փետրուարին Սումկայիթում տեղի ունեցած ողբերգական դէպքերը։ Այն ամէն լուսաւորի, բարու դէմ, ինչով հռչակուած է եղել մեր երկրում խորհրդային միջազգայնական ապրելակերպը, թշնամաբար տրամադրուած անձանց կողմից կազմակերպուած զանգուածային անկարգութիւնների ընթացքում զոհուեցին մարդիկ»։

«Սումկայիթեան ոճրագործութիւններն ու ջարդը կազմակերպուած էին… Դա արդէն ոչ մի կասկած ու տարակոյս չի յարուցում, քանզի օրէցօր հաստատւում են նորանոր փաստեր, ի յայտ են գալիս նորանոր փաստաթղթեր ու վկայութիւններ»,- գրում էր «Աւանգարդ» թերթը Նոյեմբերի 11-ին։ «Երեկոյեան Երեւան» թերթն, իր հերթին, Նոյեմբերի 18-ին մանրամասնում էր. «Այսօր տարակոյս չկայ, որ Սումկայիթը, Կոճալուն, Շուշին, Աղդամը, Ասկերանը, Ղազախը, Մասիսը նախապէս փլանաւորուել, կազմակերպուել եւ ղեկավարուել են մէկ կենտրոնից։ Մի պահ վերանանք մոսկովեան դատավարութեան

ընթացքում պարզուած եղելի, անմարդկային իրողութիւնից եւ դիմենք հասարակ տրամաբանութեանը. սումգայիթեան եղեռնը տեւել է երեք օր ու գիշեր՝ բոլորի աչքի առջեւ։ Եթէ դա կազմակերպուած չէր եւ չունէր ղեկավար կենտրոն, հապա ի՞նչ էին անում կուսակցական, պետական եւ իրաւապահ մարմինները Սումգայիթում, մէկ-երկու քայլի վրայ գտնուող Բաքւում։ Նրանք լոկ դիտողի դերո՞ւմ էին։ Ինչո՞ւ եւ ովքե՞ր են անջատել հայերի, միայն հայ բնակիչների հեռախօսները, ինչո՞ւ են նախապէս ճշգրտուել նրանց բնակարանների հասցէները, գործարաններում սառը զէնք պատրաստել եւ այլն, եւ այլն։ Ո՞ր «նախապէսը» թողնեմ, ո՞րը թուարկեմ։ Ադրբեջանի ղեկավարները Բաքւում անտեղեա՞կ էին այս բոլորից։ Դա գիտաւորեա՞լ «անտեղեակութիւն» էր, թէ՞ «մեղսակցութիւն»։ Հաւանաբար թէ՛ մէկը, թէ՛ միւսը»։

Ընդհանրացնելով եղեռնագործութեան ականատեսների վկայութիւնների եւ ցուցմունքների փաստերը, Ն. Կրեմնեւան կանխորոք կազմակերպուած լինելու տեսակէտի օգտին շարայարում էր հետեւեալ իրողութիւնները. «Ջարդից մի քանի օր առաջ, կազմակերպուած կարգով (բնակարանային շահագործման տեղամասի տուեալներով) կազմուել են այն բնակարանների ցուցակները, որոնցում հայեր են ապրել։ Պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանների ղեկավարը հրամայել է կազմել ուսումնարաններում սովորող հայերի ցուցակները։ Փետրուարի 28-29-ին հայերի բնակարաններում հեռախօսները անջատուել են։ Փողոցներում լցրել են գետաքարեր, որ քաղաք են բերուել մի քանի քիլոմեթր հեռուից։ Մարդասպանները զինուած են եղել գործարանային արտադրութեան միատեսակ լոմերով։ Ջարդարարների ամբոխի ետեւից գնալիս են եղել բեռնատար մեքենաներ, որոնց մէջ դիակներն են նետուել, եւ հրշէջ մեքենաներ, որոնց ջրափողրակներով լուացել են ասֆալտին յեղուած արիւնը։ Փետրուարի 29-ի առաւօտեան, արդէն ժամը 6-ին, սկսել են նորոգել աւերուած բնակարանները։ Եղեռնագործները կազմաւորել են հազարանոց ջոկատներ, որոնց հրամաններ են արձակել բարձրախօսով»։

«Մոսկովսկիէ Նովոսթի» շաբաթաթերթի Սեպտեմբերի 30-ի համարում լրագրող Ա. Փրալնիկովը դատարանի դահլիճից հաղորդում էր մեղադրեալներից մէկի մօր խօսքերը. «Ինչո՞ւ այստեղ մեղադրեալի աթոռին երեխաներն են նստած։ Մի՞թէ իմ տղան է ամէն ինչ կազմակերպել։ Այստեղ պէտք է նստած լինէին նրանք, պաշտօնատար այն անձինք, ովքեր նրան սովորեցրել են, ովքեր այս բոլորը թոյլատրել են եւ ովքեր չեն փորձել դրանք կանխել»։ Մեղադրեալ Ճաֆարովի մայրը՝ էլմիրան, նոյնպէս ասել է. «Այստեղ ոչ թէ իմ տղան, այլ պաշտօնատար անձինք պէտք է նստած լինէին. ամէն ինչ նրանց թոյլտուութեամբ է եղել»։ «Գրական Թերթ»ի աշխատակիցը, որ այս խօսքերին ականջալուր է եղել, շարունակել է.

«Միայն Ճաֆարովի մայրը չէ, որ մատնացոյց է անում ոճրագործութիւնը «թոյլ տուողներին»։ Գրեթէ նոյնը ասաց Ահմէդովի մայրը։ Նոյնը շարունակ յիշեցնում են տուժածները. «Այս երեք սրիկանե՞րն են սպաննել մերոնց, նրա՞նք են կազմակերպել ցեղասպանութիւնը, ո՞ւր են մնացածները, ո՞ւր են կազմակերպիչները»։

Չմոռանանք, որ եղեռնագործութեան իսկական կազմակերպիչը կացին-դանակ առած օրը ցերեկով փողոցները չի ընկնում եւ իր ձեռքով մարդ չի սպաննում. սա հին ճշմարտութիւն է։ Այսինքն՝ Ահմէտովն էլ է կազմակերպիչ, միայն թէ, այսպէս ասած, ստորին օղակի կազմակերպիչ. նա ո՛չ «գնդապետ» էր սումգայիթեան մեծաթիւ վոհմակ-բանակում, ոչ էլ, մանաւանդ, «գեներալ»։ Սումգայիթի «գեներալները» վճռական պահին դուրս չեն եկել իրենց ընդարձակ առանձնատներից։ Ուրեմն, թող դատուեն եւ հատուցումը ստանան այս երեքը։ Սակայն ինչո՞ւ չօգտագործել երկրի գերագոյն դատական մարմնի աշխատանքը սումգայիթեան ողբերգութեան խորհրդաւոր մնացած կարեւորագոյն հանգամանքները պարզելու, բուն ակունքը յայտնաբերելու համար։ Անպայման պէտք է օգտագործել այս եւ հետագա առիթները։ Հող պէտք է պատրաստել մեզ տանջող հարցերին պատասխաններ ստանալու համար. ո՞ւմ կամքը որոշեց այսպիսի միջոցի դիմել հայկական արդար ու խաղաղ պահանջին ընդդէմ, ո՞վ կազմակերպեց յանցագործութիւնը։ Սումգայիթեան դատավարութիւնները կարող են դառնալ այն թելը, որը թէկուզ մասամբ կը քանդի անյայտութեան մէջ խճճուած կծիկը»։

Գերագոյն դատարանում, սակայն, տրամադրութիւններն ու մտադրութիւնները բոլորովին այլ էին։ Եւ ուրեմն մերժուեց զոհերի հարազատների՝ տուժած կողմի փաստաբանների յարուցած միջնորդութիւնն այն մասին, որ դատարան կանչուեն Սումգայիթի նախկին կուսակցապետ Մուսլիմզադէն, Կենտկոմի ներկայացուցիչ Գանիեւը, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէի նախկին նախագահ Մամէտովը եւ քաղաք մտցուած զորքերի հրամանատար Կրաեւը։ Աւելին. երբ փաստաբան Ռշտունին, նորից ու նորից հիմնաւորելով Մուսլիմզադէին դատավարութեանը իբրեւ վկայ կանչելու անհրաժեշտութիւնը, ցանկաց հրապարակել Լեռնային Ղարաբաղի համայնավարների մարզային կոմիտէի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսեանի եւ կուսակցական այլ ղեկավար գործիչների հեռագիրը, որն ինքը՝ դատարանի նախագահը, ստացած պէտք է լինէր, դատաւոր Բրիզէն թոյլ չտուեց եւ առաջարկեց արտայայտուել «ըստ էութեան»։ Իսկ խնդրոյ առարկայ հեռագիրը հետեւեալն էր.

«Մոսկուա, Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանի նախագահ Վ.Ի. Թերեպիլովին եւ Գերագոյն դատարանի անդամ Ռ.Կ. Բրիզէին.

Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի 1988 թուի Մայիսի 21-ի լիագումար ժողովում Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Սումգայիթի քաղաքային կոմիտէի քարտուղար Գ.Մ. Մուսլիմզադէն Սումգայիթի ողբերգական իրադարձութիւնների համար մեղադրել է նաեւ հանրապետութեան ղեկավարներին։ Աւելի հանգամանալից այդ մասին նա արտայայտուել է Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի նախօրէին կայացած բիւրոյի նիստում, իր անձնական պատասխանատուութեան քննարկման ժամանակ։ Մենք, այդ լիագումար ժողովին մասնակիցներս, Ձեր ուշադրութիւնն ենք հրաւիրում Մուսլիմզադէի արտայայտութեան վրայ։ Խնդրում ենք դատական քննութեան ընթացքում պարզաբանել

նաեւ այդ հարցը։

Կուսակցութեան Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտէի առաջին քարտուղար Հ.Ա. Պողոսեան, Ստեփանակերտի քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար Զ.Մ. Մովսիսեան, Մարտունու շրջանի առաջին քարտուղար Վ.Ս. Գրիգորեան, Հադրութի շրջանային կոմիտէի առաջին քարտուղար Գ.Լ. Բաղեան, Մարտակերտի շրջանային կոմիտէի նախկին առաջին քարտուղար Է.Վ. Վարդանեան, Մարտունու շրջանային կոմիտէի նախկին առաջին քարտուղար Ս.Կ. Պետրոսեան»։

Գերագոյն դատարանը, մերժելով ընթացք տալ հայկական կողմի հիմնաւոր պահանջին, փաստօրէն արդարութեան ուռկանից բաց էր թողնում եղեռնագործութեան կէտ ձկներին։ «Եղեռնագործութիւնը՝ եղեռնագործութիւն, այնուամենայնիւ ինչո՞ւ է ձգձգւում դրան քաղաքական գնահատական տալը, ինչո՞ւ դատարանի առջեւ պատասխանատւութեան չեն կանչւում հենց իրենք՝ եղեռնի եղկելի կազմակերպիչները, եւ մի՞թէ դրա համար հիմնաւոր փաստեր չի տալիս մոսկովեան դատաւարութիւնը»,– «Երեկոյեան Երեւան» օրաթերթի Նոյեմբերի 18-ի համարում զարմացած հարց էր տալիս Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի թղթակից անդամ Վ. Խոջաբեկեանը։ «Ո՞ւր են, ինչո՞ւ այսօր մեղադրեալի աթոռին չեն Սումգայիթի կուսակցական քաղաքային կոմիտէի նախկին առաջին քարտուղար Մուսլիմզադէն, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէի նախկին նախագահ Մամէդովը, ինչպէս նաեւ այլ, մանր ու մեծ պաշտօնեայ յանցագործները», իր հերթին հարց էր տալիս «Աւանգարդը» Նոյեմբերի 11-ին։

Հարցերը տրւում էին, բայց պատասխանը չկար։ Եւ չէր կարող լինել։ Որովհետեւ եղեռնագործութեան հետ առնչել թաթարական բարձրաստիճանաւորներին, նշանակում էր արդէն հաստատապէս ընկնել Սումգայիթում կատարուածը որպէս հակահայ ցեղասպանական արարք գնահատելու ճամփի վրայ։ Իսկ դրանից, թաթար բարձրաստիճանաւորներից եւ նրանց մոսկովեան մեծատիտղոս հովանաւորներից կարծես վարակուած, Գերագոյն դատարանը մահու չափ վախենում էր։

Իսկ առարկայական փաստերը եւ վկաների ցուցմունքները խօսում էին այն մասին, որ Սումգայիթը որքան կազմակերպուած, նոյնքան եւ ազգային հողի վրայ նիւթուած ցեղասպանական մի դաւադրութիւն էր պարզապէս։ Նոյնիսկ եթէ չլինէին այլ տուեալներ, մոսկովեան դատաւարութեան վերջին վրայ Միխայիլ Իլիասովի ցուցմունքը բաւական էր այդ հարցում համոզուելու համար։

«Թառասունմէկ-Ա թաղամասի 4-Վ շէնքի բնակիչ, խողովակագլանման գործարանի երիտասարդ բանւոր Իլիասովը ոչ միայն պատուհանից ուշադիր հետեւել էր հայազգան Ահմէտովի աւազակախմբի խժդժութիւններին, այլեւ, խորը վերլուծելով տեսածը, յանգել էր որոշակի եզրակացութիւնների։

«Փետրուարի 28-ի առաւօտեան քաղաքից դուրս տանող ճանապարհին խոշոր քարեր էին թափուած, ըստ երեւոյթին մեքենաներն աւելի հեշտ կանգնեցնելու համար։ Մեքենաներն ստուգւում էին, տեսնելու համար, որ դրանց մէջ հայերի չէին տեղափոխւում։ Երբ սկըսւեցին մեր թաղամասի դէպքերը, առաջին զգացումս շփոթուածութիւնն

էր։ Թէկուզ յարձակւում էին միայն հայերի վրայ, սակայն ո՞վ կ'երաշխաւորէր, որ հինգ րոպէ յետոյ նոյնը չի վիճակուելու ռուսներին։ ...Թաղամասի մօտ երեւաց «Վոլգա-24» մակնիշի սեւ գոյնի մի մեքենայ։ Տպաւորութիւնս այնպիսին էր, որ ջարդարարները սպասում էին այդ մեքենային։ Մի քանի հոգի, ընդ որում ոչ պատանիներ, մօտեցան մեքենային եւ սկսեցին խօսել վարորդի կողքին նստածի հետ։ Յետոյ վերադարձան Թաղամաս եւ, ինձ թուաց, որ ջարդը միանգամից ընթացաւ աւելի եռանդուն ու նպատակալից։ ...Այդտեղ ոչ մի խուլիգանական արարք կամ միտում չկար, դա միայն ազգային հողի վրայ էր, քանի որ նրանց ոչ մի ազգ, բացի հայերից, չէր հետաքրքրում։ Ճիշտ է, նրանք բարձրախօսով Թաղի բնակիչներին դիմում էին՝ «Մուսուլմաններ, ցոյց տուէք հայերի բնակարանները», բայց քանի որ նրանք անսխալ գտնում էին հայերի բնակարանները, ապա ինձ թւում է, որ հարցը տալիս էին աւելի շատ հոգեբանական ճնշում բանեցնելու համար»։

Եւ անշուշտ որ իրաւացի էր «Մոսկովսկիէ Նովոսթի»-ի դիտողունակ թղթակիցը, երբ գրում էր. «Հաւանաբար այնքան էլ կոյր չէր իր զոհերին նպատակադրեալ որսացող ամբոխը»։

Վկայ Իվան Մալին, ի պատասխան դատաւորի խօսքերին՝ «Պատմեցէք այն ամէնը, ինչ յայտնի է ձեզ այս գործի մասին», յայտարարել է. «Ամէ՞նը։ Ամէնը պատմելու համար ժամանակը չի բաւարարի... Լուսամուտից տեսայ ամբոխը, տեսայ, թէ ինչպէս քարշ տուեցին մարդուն։ Մինչ այդ լսել էին ջարդերի մասին, սակայն չէի հաւատացել։ Չմիջամտեցի, քանի որ այլեւս որեւէ բանով օգնել հնարաւոր չէր։ Ես իմ կեանքի համար վախեցայ։ Դա բնական է. բնակարանում մի հայ կնոջ էի թաքցրել։ Ատրպէյճանցիներին, ռուսներին, ուրիշ ազգի մարդկանց վտանգ չէր սպառնում»։ Ռուս ուսուցչուհի Կոզուբենկոն եւս իր ցուցմունքում շեշտել է, որ բացի հայերից ուրիշ ոչ մի ազգութեան ներկայացուցչի վտանգ չէր սպառնում, թէպէտ շատերն են լսել հետեւեալ կոչը. «Հայերին կը վերացնենք, յետոյ էլ ռուսներին»։

Վկայ Ասկեար Սեյիդխանովը դատարանում պատմել է. «Աւտոկայանի մօտ Իլգար Իսմայիլովն ինձ ասաց.– Գնանք հայերին սպաննելու։ Զամբիւղը ձեռքին մի կին էր անցնում։ Իսմայիլովն ասաց նրան.– Մօրաքոյր, հայերի հասցէներ չգիտե՞ս։ Կինը պատասխանեց.– Որ իմանայի, ինքս կը խմէի նրանց արիւնը»։ Վկայ Մուրատովը տեսել է, թէ ինչպէս մի թաթար մօտենալով ջարդուած գլխով գետնատարած ու հոգեվարքի մէջ եղող մի հայ մամիկի, գլխարկը դցել է նրա դէմքին ու ոտքով ճզմել, ասելով. «Սրանց հետ պէտք է այսպէս վարուել»։ Թաթար Ազիմովը ցուցմունք է տուել, որ զոհուած հայերի հարեւաններից մէկն իրեն ասել է. «Լաւ էք անում, որ հայերին կոտորում էք»։ Դատաւորը շատ վկաների է հարց տուել, թէ «ի՞նչ սկզբունքով էին մարդկանց տանջամահ անում», իսկ պատասխանը միշտ կտրուկ եղել է. «Ազգային հողի վրայ»։ Եղեռնագործութիւնից մազապուրծ Լ. Յակոբեանը ցուցմունք է տուել, որ «կարմիր պաստառներից մէկի վրայ սեւով գրուած էր՝ Մա՛հ հայերին» եւ որ ինքը լսել է այսպիսի մի բացականչութիւն. «Մուսուլմանը, որ չի խմի հայի արիւն, մահմեդական չէ։ Ամէն մի մուսուլման պէտք է սպաննի եօթ հայի»։

Մի՞թէ եղեռնագործութեան ազգային բնոյթի հաստատումը չեն մեղադրական պաշտօնական եզրակացութեան հետեւեալ տողերն իսկ. «Ահմէդովը բարձրախօսի օգնութեամբ սկսեց ամբոխին կոչ անել՝ հաշուեհարդարի ենթարկել ազգութեամբ հայ քաղաքացիներին»։ Եզրակացութեան մէջ արձանագրուած է նաեւ հետաքննութեամբ հաստատուած այն իրողութիւնը, որ Ահմէդովը ամբոխին կոչել է «գնալ եւ սպանել հայերին, որպէսզի Սումգայիթը մաքրուի նրանցից»։ Թաթար վկաների ցուցմունքներով, նա յանցագործութեան վայրում բղաւել է. «Մա՛հ հայերին, կեցցէ Ադրբեջանը։ Սպանեցէք հայերին։ Եթէ նրանց թողնենք, վերջը վատ կը լինի»։ Այս բոլորից յետոյ հասկանալի էր տարակուսանքը, որ հայ լրագրողը դրսեւորում էր «Աւանգարդ»ի Նոյեմբերի 11-ի համարում. «... Ա՛յն դէպքում, երբ միջազգային համաձայնագրի տակ կայ նաեւ մեր երկրի վաւերացումը, ա՛յն դէպքում, երբ դժոխքի տիրակալներն անգամ ջարդարար ու ոճրագործ ատրպէյճանցի մեր «եղբայրներին» հազարների հասնող վոհմակից ու տասնեակների հասնող «գաղափարական» կազմակերպիչներից «տեխնիկական» բազում նորոյթներ իւրացնելու կարիքն ունեն, Սումգայիթը ինչո՞ւ ո՛չ որպէս կազմակերպուած ու ղեկավարուող եղեռն, ո՛չ որպէս կազմակերպուած ու կառավարուող ջարդ չի բնորոշւում»։ Իսկ ռուս լրագրող Ս. Դարտիկինը, եղեռնագործութեանը դէթ մի քանի տարրեկայական խօսքերով անդրադարձած հազուադէպներից մէկը, «Իզվեստիա»յի Մայիսի 14-ի համարում առանց տարակոյսի էր գրում. «Հարկ էր լինում ընդունել կենծալին, վայրենին, անբացատրելին. մարդկանց սպանում, ֆիզիքապէս եւ բարոյապէս հաշմում էին միայն այն բանի համար, որ նրանք ուրիշ ազգութեան էին պատկանում։ Այն իրադարձութիւնների պատճառով, որոնք տեղի էին ունենում Հարիւրաւոր քիլոմեթրեր հեռու եւ որոնց հետ զոհերը ոչ մի առնչութիւն չունէին»։

Հարիւրաւոր քիլոմեթրեր հեռու՝ Լեռնային Ղարաբաղում, Հայոց Արցախում։ Հետեւաբար զոհերն առնչութիւն ունէին. հա՛յ էին։ Եւ կոտորւում էին հենց հայ լինելու «յանցանքի» համար։ «Մոսկովսկիէ Նովոստի»ի թղթակիցը Սեպտեմբերի 30-ին դատարանի դահլիճից հաստատում էր, որ եղեռնագործները, ի պատասխան այն հարցի, թէ «ինչի՞ համար էին ուզում վրէժ լուծել հայերից», յայտարարում էին. «Ինչպէ՞ս թէ, Ղարաբաղի համար»...

Այս պայմաններում դժուար չէ հասկանալ մոսկովեան դատավարութիւնում հայկական կողմի նպատակամղուածութիւնը։ «Մենք, ինչ խօսք, պէտք է ձգտենք կատարուած վայրագութիւնների խստիւ դատապարտմանը,- գրում էր «Գրական Թերթը»։ -Բայց առաւել կարեւոր է դատապարտել Սումգայիթը որպէս երեւոյթ։ Սա է խնդիրը։ Այդ մղումով էր թելադրուած մեր փաստաբանների՝ գործը լրացուցիչ քննութեան ուղարկելու Նոյեմբերի 11-ի միջնորդութիւնը, բայց հենց այդ մղումն էլ պատճառ դարձաւ, որ միջնորդութիւնը սուիններով ընդունուի եւ, ըստ էութեան, մերժուի դատարանում»։

Դատավարութիւնն ընդհատելով եւ դատավճիռների արձակումը յետաձգելով գործը ՌՍՖՍՀ-ի քրէական օրէնսգրքի 258 եւ 232 յօդուածների հիման վրայ լրացուցիչ քննութեան ուղարկելու միջնոր-

գութեան հիմքերը երեքն էին։

Առաջին. «Հրի. հաստատուել են Ահմէտովին, Իսմայիլովին եւ Ճաֆարովին ներկայացուած մեղադրանքները, սակայն կատարուած ոչ բոլոր յանցագործութիւններն են ստացել իրաւաբանական ճիշտ որակաւորում։ Մինչեւ հիմա զանգուածային տեղեկատուութեան միջոցները, յատկապէս կենտրոնական մամուլն ու հեռուստատեսութիւնը, եւ, որ ամենակարեւորն է, տուեալ փուլում նաեւ նախնական քննութեան մարմինները ակներեւաբար չեն ուզում խոստովանել, որ Սումկայիթում հայերի զանգուածային սպանութիւնների հիմնական դրդապատճառը եղել է ազգային պատկանելիութիւնը։ Քննչական մարմինները, որոնք պարտաւոր էին սպառիչ լրիւութեամբ ճշտել յանցագործութեան շարժառիթը, չգիտես ինչո՞ւ ամէն ինչ յանգեցրել են խուլիգանական դրդումների։ Մինչդեռ նախնական եւ դատական քննութիւնների նիւթերը անվիճելիօրէն ապացուցում են, որ ջարդերին, աւերումներին, թալանին, բռնարարքութիւններին նախորդել են կոչեր, որոնց նպատակն է եղել ազգային թշնամանքի հրահրումը եւ հայերի ոչնչացումը։ Այդ հանգամանքի անտեսումը հանգեցրել է այն բանին, որ յանցագործութիւններն ամբողջութեամբ չեն արտացոլուել իրաւաբանական որակաւորման մէջ, թէպէտ մեր օրէնսդրութիւնը նախատեսում է պատասխանատուութիւն ազգային հողի վրայ կատարուած յանցագործութեան համար։ Այդպիսի պատասխանատուութիւն նախատեսուած է ԽՍՀՄ սահմանադրութեան 36-րդ յօդուածով, ինչպէս նաեւ Ադրբէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 67-րդ յօդուածով։ Այս բոլորից ելնելով գտնում ենք, որ Ահմէտովին պէտք է լրացուցիչ մեղադրանք յարուցել յիշեալ 67-րդ յօդուածով նախատեսուած այլ կարգի պետական յանցագործութիւնների համար, որոնց նպատակն էր ազգային թշնամանքի քարոզը»։

Դատախազ Վ. Կոզլովսկին, միջնորդութիւնը մերժելու համար, կառչեց խորհրդային քրէական օրէնսգրքում առկայ սողանցքից եւ յայտարարեց. «Ահմէտովի գործողութիւնները լիովին ընդգրկուած են Ադրբէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 94-րդ եւ 77-րդ յօդուածներով եւ ուրեմն 67-րդ յօդուածով լրացուցիչ որակաւորման կարիք չեն զգում։ Տուեալ դէպքում ազգային թշնամանքի հրահրումը վերաճել է առաւել ծանր յանցագործութիւնների եւ, ընդհանուր կարգի համաձայն, ամբաստանեալի գործողութիւնները պէտք է որակաւորուեն առաւել խիստ պատասխանատուութիւն նախատեսող քրէական օրէնքի նորմով։ Զանգուածային անկարգութիւններն ու կանխամտածուած սպանութիւնները ծանր մեղադրանքներ են, եւ նրանցով նախատեսուած պատասխանատուութիւնը անհամեմատ խիստ է, քան ըստ Ադրբէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 67-րդ յօդուածի։ Այսպիսով, Ահմէտովի հանդէպ այդ յօդուածով մեղադրանք յարուցելու հիմքեր չկան»։ Ցաւալի էր, այլ անողոք փաստ, որ նախագահ Բրիզէն, ըստ էութեան կրկնելով դատախազին, փաստօրէն համաձայնուեց նրա հետ։

Գործը լրացուցիչ քննութեան ուղարկելու պահանջի երրորդ պատճառը հանգուցակապուած էր առաջինի հետ. սպառիչ լրիւութեամբ չի անցկացուել գործի նախնական քննութիւնը, ի խախտումն Ադրբէյճանական ԽՍՀ քրէական օրէնսգրքի 14-րդ յօդուածի բացայայտուած չեն

յանցագործութիւնների կատարմանը նպաստած բոլոր պատճառներն ու պայմանները, չեն ճշտուել հրէշաւոր եղեռնագործութեան կազմակերպիչներն ու ոգեւորողները։ Միջնորդութեան մէջ այնուհետեւ ասուած էր. «Ներկայ քրէական գործի նիւթերում տեղեկութիւններ կան այն մասին, որ 1988 թուի Փետրուարի 27-ից մինչեւ 29-ը կատարուած յանցագործութիւններին օժանդակած պատճառներից ու պայմաններից մէկը եղել է միլիցիայի անգործութիւնը։ ...Բազմաթիւ վկաների ցուցմունքներով հաստատուած է, որ Փետրուարի 28-ին քաղաքում կարգուկանոն պահպանելու համար Սումգայիթ մտցուած բանակային իննը ստորաբաժանումները ոչ մի գործնական միջոցների չեն դիմել աւերումները, հրկիզումները եւ այդ օրերին քաղաքում կատարուող այլ յանցագործութիւնները կանխարգելելու համար, զբաղուել են ինքնապաշտպանութեամբ եւ զրահամեքենաներով քաղաքում երթեւեկելով։ Նոյեմբերի 10-ին հարցաքննուած վկայ Ա. Ղուկասեանը ցուցմունք տուեց, որ զորքերի ստորաբաժանումների մեծ կուտակումներ է տեսել քաղաքային կոմիտէի մօտ եւ նրան յարող փողոցներում, այն ժամանակ, երբ միկրոշրջաններում տեղի էր ունենում հայերի բնակարանների ջարդարարութիւնը։ Նա ցուցմունք տուեց, նաեւ, որ քաղկոմի շէնքի մօտ զինուորական ստորաբաժանումների հրամանատար Կրաեւը զրոյցի ժամանակ պատմել է, որ ինքը հազիւ փրկուել է ամբոխի յարձակումից։ Միջնորդութեան հեղինակները գտնում են, որ անհրաժեշտ է ճշտորոշել, թէ ի՞նչն էր Սումգայիթ մտցուած զինուորական ստորաբաժանումների անգործութեան պատճառը։ ...Ամբողջ շարադրանքը հիմք է տալիս ենթադրելու, որ հարցաքննութեամբ չյայտնաբերուած անձանց կողմից կազմակերպուել եւ պայմաններ են ստեղծուել Սումգայիթում, մասնաւորապէս Քառասունմէկ-Ա թաղամասում զանգուածային անկարգութիւններ կատարելու համար։ ....ԽՍՀՄ դատախազութիւնն իր տրամադրութեան տակ ունենալով թուարկուած տուեալները, հարկ եղած հետաքննութիւնը չի անցկացրել Փետրուարի 27-ից մինչեւ 29-ը ընկած ժամանակաշրջանում Սումգայիթում կատարուած յանցագործութիւններին օժանդակող պայմանները, ինչպէս նաեւ յանցագործներին յայտնաբերելու ուղղութեամբ»։

Անդրադառնալով եղեռնագործութեան կազմակերպիչների չբացայայտուած մնալու խնդրին, դատախազը գտաւ, որ միջնորդութիւնում նշուած հանգամանքներից շատերը դատական քննութեան ընթացքում հաստատում չեն գտել, մինչ որոշ հանգամանքներ էլ իբր միտումնաւոր ու կամայական մեկնաբանութիւն են գտել։ Կոզլովսկին յայտարարեց. «Կ'ուզենայի դատարանի ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալի վրայ. քննուող գործը սահմանափակուած է ամբաստանեալների յանցաւոր գործողութիւնների շրջանակներում։ Միաժամանակ, միջնորդութիւնում նկատուում է անընդհատ եւ ամէն կերպ այդ շրջանակներն ընդլայնելու ցանկութիւն»։

«Գրական Թերթ»ն իրաւամբ է նշել, որ տուժած կողմի փաստաբանների «միջնորդութեան թերեւս ամենագլխաւոր՝ յանցագործութիւնների կազմակերպուած բնոյթի վերաբերեալ կէտի վերլուծութիւնից Բրիզէն, ի հարկէ, խոյս տուեց»։

Զարմանալին այն էր, որ դատական ատեանը, հոգ չէ թէ ոչ միանգամից, այլ դատավարութեան ընթացքում եւ աստիճանաբար, ուշադրութեան էր առել տուժածների ցուցմունքներն ու պահանջներն այն մասին, որ Սումգայիթում սպանութիւնները կատարուել են ազգային հողի վրայ եւ ոչ թէ լոկ խուլիգանական մղումներով։ Այլ խօսքով ընդունել էր եղեռնագործութեան ազգային յենքը, բայց ահա վճռական պահին պատժաչափի վերաբերեալ յօդուածների սահմանումը տողանցք դարձնելով, փախչում էր այդ յենքը պաշտօնապէս հռչակելու իր պարտքից։ Եւ յետոյ դատական ատեանը հարցից անջատում էր գլխաւորը՝ քաղաքի հայ բնակչութեան նկատմամբ կազմակերպուած եւ ինչ որ մէկի կողմից ղեկավարուած եղեռնագործութեան վերաբերեալ տուժած կողմի վարկածը, որն իր ժամանակին, սկզբնական հանգրուանում, մշակուել էր նաեւ հետաքննութեան կողմից, հաւանականօրէն շուտով թողլքուելու համար։ Դատաստանի նմանօրինակ կեցուածքով, ըստ տուժածների կարծիքի, զանց էր առնւում եւ ընդհանրապէս մէջտեղից դուրս էր գալիս Սումգայիթի բոլոր աստիճանների ղեկավարների յանցապարտ դերը, սկսած քաղաքային կոմիտէի առաջին քարտուղար Մուսլիմզադէից մինչեւ հեռախօսային ցանցի պետ Օմարովն ու միւսները։

Կարեւոր էր նաեւ գործը լրացուցիչ քննութեան ուղարկելու պահանջի երկրորդ պատճառը, որ տուժած կողմն առաջ էր քաշում միջնորդութիւնում։ Դա, ըստ մամուլի տուեալների, հետեւեալն էր։

«Դատարանում քննուող գործը սումգայիթեան ընդհանուր գործից առանձնացուել է անհիմն կերպով։ Զանգուածային անկարգութիւնների յանցակազմն ըստ ինքեան ենթադրում է, որ յանցագործութիւններին մասնակցել են բազմաթիւ անձինք. այլապէս Ահմէդովի, Իսմայիլովի եւ Ճաֆարովի գործողութիւնները չէին գցուի քրէական օրէնսգրքի համապատասխան յօդուածի ներքոյ։ Դատաքննութեան ընթացքում պարզուեց, որ գործով իբրեւ վկայ կանչուած մի շարք յանցագործներ կալանաւորուած են կամ դատւում են յատկապէս Քառասունմէկ-Ա թաղամասում կատարուած զանգուածային անկարգութիւնների եւ այլ ոճիրների համար։ Տուժած կողմի համոզմամբ, ամբողջական, բազմակողմանի ու անաչառ դատաքննութեան անցկացման նպատակով անհրաժեշտ է դատուող եռեակի գործի հետ միաւորել քրէական գործերը այն բոլոր անձանց, ովքեր մասնակցել են տուեալ թաղամասում կատարուած զանգուածային անկարգութիւններին, անկախ այն բանից, որ նրանք դատական պատասխանատուութեան են կանչուած նաեւ այլ յանցագործութիւնների համար։ Յատկապէս պէտք է հաշուի առնուի այն, որ Սողոմոն Մելքումեանի սպանութեան համար հիմքեր կան քրէական գործ յարուցելու Հասան եւ Իսլամ Մամէդովների եւ Ալեքսանդր Դրալի նկատմամբ եւ որ որոշ ցուցմունքներ բաւարար հիմքեր են ընձեռում նաեւ դատական պատասխանատուութեան ենթարկելու Եդուարդ Մելքումեանին խարոյկի մէջ գցած Նիզամի Մահերամովին եւ Ֆիզուլի Ֆաթալիեւին»։

Դատախազը կարճ ու խիստ ընդհանուր ձեւակերպումներով մերժեց քրէական գործերը մէկ վարոյթի մէջ միաւորելու պահանջը։ Դատական ատեանի նախագահ Բրիզէն համաձայնեց, որ Ճաֆարովի եւ

Իսմայիլովի գործերի նախնական քննութիւնը կատարուել է անբաւարար մակարդակով, հետեւաբար եւ սահմանեց այսպէս. «Դատական ատեանը գտնում է, որ միջնորդութիւնը ենթակայ է մասնակի բաւարարման եւ ուրեմն Իսմայիլովի ու Ճաֆարովի գործերը անհրաժեշտ է վերադարձնել Խորհրդային Միութեան դատախազութիւն՝ լրացուցիչ քննութեան։ Նոր քննութեան ժամանակ հարկաւոր է մանրակրկիտ լուծել նաեւ Մելքում-եանների ու Համբարձումեանի սպանութիւնների բոլոր մասնակիցների գործերը մէկ վարոյթում միաւորելու հարցը»։

Դատական ատեանի Նոյեմբերի 14-ի որոշումը՝ մասնակի համաձայնութիւն տալ տուժած կողմի պահանջներին ու լրացուցիչ քննութեան ուղարկել Իսմայիլովի եւ Ճաֆարովի գործերը, փաստօրէն թաթար եղեռնագործների եւ յատկապէս նրանց գաղափարակենտրոնի հայատեաց-ցեղասպան բարձրաստիճանաւորների համար խոշոր յաղթանակ էր, քանի որ լոկ երեւութապէս տուժածների անունից յարուցուած միջնորդութիւնը՝ իր հիմնական հարցադրումներով եւ բովանդակութեամբ, մերժւում էր. նշանակում է, որ մերժւում էր Արդարութիւն պահանջող, եւ ակնկալող, հայ ժողովրդի հիմնաւոր հայցը։

«Ի նշան բողոքի, տուժածները (տուեալ դէպքում նահատակների հարազատները,– Ե.Ն.) հրաժարուեցին դատին մասնակցելուց, ապա նշելով, որ գնահատում են Թիշտունու եւ Շապոշնիկովայի բարեխիղճ աշխատանքն ու գործադրած ջանքերը, հրաժարւում են նաեւ փաստաբաններից եւ վրդովուած՝ լքեցին դահլիճը։

Յաջորդ պահին նրանց հետեւեցինք ներկայ բոլոր հայերս։ Իրեն չկորցնելով, նախագահողը իսկոյն եւեթ յայտարարեց, թէ դատական քննութիւնն աւարտուած է, մտքերի փոխանակութիւնը կը սկսուի յաջորդ օրը, ժամը...

Բայց նրան լսող չկար։

Ներքեւում, ուժեղ ձեան ու քամու տակ լուռ էին սպասում անցաթուղթ չունեցողները, իր հերթական բուռն բողոքի համար դատավարութեանը մասնակցելու իրաւունքից վաղուց զրկուած Դաւիթը՝ (նահատակուած) Միշա Համբարձումեանի տղան։ Յիսուն հոգի կը լինէին։ Վանկարկեցինք. «Ար-դա-րու-թիւն։ Պա-հան-ջում ենք»։

Թիկնեղ միլիցիոնները բարձրախօսով նախազգուշացրեց.

– Քաղաքացիներ, հանդարտուէք։ Անկարգութիւնների դէպքում օրէնքը կը կիրառուի ամբողջ խստութեամբ։

Օրէնքը կը կիրառուի ամբողջ խստութեամբ... Սումգայիթով խոր վիրաւորանք ստացած մի ողջ ժողովուրդ է ամիսներ շարունակ նոյն բանը պահանջում։ Այդ ժողովուրդը ուզում է հաւատալ, որ 1988 թուականին միջնադարեան բարբարոսութիւն կատարած ոյժերը մինչեւ վերջ կը բացայայտուեն եւ կը ստանան իրենց սկզբունքային քաղաքական գնահատականը, այսինքն այն խստագոյն հատուցումը, որը պարտաւոր է գործադրել իրօք առողջ, իրօք քաղաքակիրթ հասարակութիւնը։ Այն պետութիւնը, որի իրաւական դառնալու առաջին քայլերին տարաբախտաբար համընկաւ Սումգայիթի արհաւիրքը»։

Իր «Հատուցման Շեմին» յօդուածաշարքի աւարտական մասում, «Գրական Թերթ»ի գլխաւոր Ս. Շահմուրադեանն այսպէս է գրել

Նոյեմբերի 18-ին Մոսկուայից, դատավարութեան դահլիճից։ Եւ շաբաթաթերթի Նոյեմբերի 18-ի միեւնոյն համարում այսպէս է ներկայացրել յաջորդ նիստի պատկերը.

«Անսովոր պատկեր է ներկայացնում հիմա Գերագոյն դատարանի դահլիճը. դատարկուել է տուժածների նստարանը, չկան նաեւ նրանց փաստաբաններ Թշտունին եւ Շապոշնիկովան, իսկ մեղադրեալների աթոռին երեք յանցագործներից մնացել է միայն մէկը՝ Ահմէտովը։

Փոխելով առաջուայ լարուած, դժուար ու կարծես թէ խոստումնալից հունը, դատավարութիւնը միանգամից անհեռանկար դարձաւ, ազատեց իրեն եւ այժմ վստահ ու խոչընդոտներից ապահով ընթացքով մօտենում է գուշակելի աւարտին։

Մենք այլ աւարտ, կամ, աւելի ստոյգ ասած, արդար սկիզբ էինք սպասում, երբ (Նոյեմբերի 11-ին) միջնորդութիւն յարուցուեց գործը լրացուցիչ քննութեան ուղարկելու մասին։ Հիասթափութիւն պատճառած շրջադարձը տեղի ունեցաւ Նոյեմբերի 14-ին...»

Զոհերի հարազատների փաստաբանների Նոյեմբերի 11-ի միջնորդութեան մերժման կապակցութեամբ խորհրդահայ մամուլը դատարանի որոշումը քննադատում էր ոչ միայն այն հիմամբ, որ պետական մեղադրող Կոզլովսկին եւս Թշտունու եւ Շապոշնիկովային համակարծիք էր եղել նախաքննութեան ժամանակ Ադրբէյճանական ԽՍՀ-ի քրէական օրէնսգրքի մի շարք յօդուածների (19-րդ, 147-րդ եւ այլն) կոպիտ կերպով խախտուած լինելու հարցում, այլեւ այն հիմամբ, որ տուժածների փաստաբանների եւ պետական մեղադրողի հետ Ահմէտովի պաշտպան փաստաբանն էլ էր տարակուսանք յայտնել այն կապակցութեամբ, թէ ինչպէս էր պատահել, որ յանցագործութիւնների հետքերն ու գործիքները, ընդհանրապէս իրեղէն բոլոր ապացոյցները անհետացել էին, որ քննութեանը չէին ներկայացուած մարդասպանների օգտագործած սառը զէնքերը, մեղադրեալ միւս առարկաները։

Նոյեմբերի 15-ին Ա. Առաքելեանի, Մ. Համբարձումեանի եւ Մելքումեան ընտանիքի հինգ անդամների սպանութեան եւ նրանց մարմինների հրկիզման համար Ա. Ահմէտովին ներկայացուած մեղադրանքի չորս կէտերի մանրամասն վերլուծութեամբ հանդէս եկաւ դատախազ Վ. Կոզլովսկին։ Նա ընդգծեց, որ վայրագ սպանութիւնները կատարուել են ազգային հողի վրայ, քանի որ Ահմէտովը զոհերից ոչ մէկին չէր ճանաչում եւ անձնական վէճ ու վրէժ ունենալ չէր կարող։ Զոհուել են տարբեր սեռի ու տարիքի մարդիկ, պարկեշտ աշխատաւորներ, իսկ Եդուարդ Մելքումեանը եղել է Աֆղանստանում աչքի ընկած միջազգայնական մարտիկ, որի գազանային սպանութիւնից յետոյ որբեր են մնացել։ Դատախազի կարծիքով Ահմէտովի գործը թոյլ տալիս պարզել նաեւ մի շարք այլ հանգամանքներ, մասնաւորապէս այն, որ փետրուարեան դժոխային օրերին Սումգայիթում հասարակական կարգի պահպանութիւն առհասարակ գոյութիւն չի ունեցել։ Անհոգի են վարուել նաեւ սպիտակ խալաթաւոր մարդիկ՝ «շտապ օգնութեան» եւ արեան փոխներարկման կայանի բժիշկները, որոնց գործողութիւններին անհրաժեշտ է, որ իրաւաբանական գնահատական տրուի։ Վկայակոչելով խորհրդային

Գերագույն դատարանի պլենումներից մեկի որոշումը, Կոզլովսկին նշեց, որ զոհերի նկատմամբ Ահմեդովի գործողությունները պետք է համարել առանձնապես դաժան, քանի որ դրանք կատարվել են զոհերին ծանակելով, տանջելով, քաղաքի շատ բնակիչների աչքի առաջ։ Նա հասկանում էր, թե ինչ է անում, տների պատուհանները դուրս եկած թաթարուհիներին բարձրախոսով կոչ անելով չդիտել ամբոխի գործողությունները։ Դատարանում Ահմեդովի վարքագիծը ցույց տվեց, որ նա չի ընդունում իր յանցագործ մեղավորությունը։ Ընդհակառակը, նա փորձում էր զրպարտել քննիչներին։ Դատախազը դատարանից պահանջեց այդ բոլոր յանցագործությունների համար Ահմեդովի դատապարտել պատժի առավելագույն չափի՝ գնդակահարությամբ մահապատժի (ըստ «Երեկոյան Երեւան» թերթի Նոյեմբերի 17-ի համարի)։

Եւ, ինչպէս յայտնի է, դատարանը ընդառաջեց դատախազի պահանջին…

…Ահմեդովը գնդակահարուելու է։ Եթէ, անշուշտ, Ալիեւի մաֆիայի ու վեզիրովեան լոպպիի ներում ձեռք բերելու հարցում անզօրութեան վերաբերեալ մեր պնդումը անհիմն լաւատեսութիւն դուրս չգայ։

## Ձ.

Մարտի կէսերին, Թաթար համայնավարների Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղար Բագիրովի մասնակցութեամբ տեղի ունեցաւ Սումկայիթի կուսակցական քաղաքային կոմիտէի լիագումար ժողով, որը որոշեց քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմզադէին իր պաշտօնից ազատել՝ «ցուցաբերած քաղաքական անհոգութեան, կազմակերպչական ու քաղաքական աշխատանքում թոյլ տուած խոշոր թերութիւնների եւ ոչ-կուսակցական վարքագծի համար, որոնք քաղաքում յանգեցրին ողբերգական հետեւանքների» (քաղկոմի պաշտօնական հաղորդագրութիւնից, «Սովետական Հայաստան», Մարտի 18)։

Երկու օր անց, տեղի ունեցաւ Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի նիստ, որը որոշեց արդէն իսկ պաշտօնազրկուած Մուսլիմզադէին… պաշտօնից ազատել՝ «ցուցաբերած քաղաքական անհոգութեան, կազմակերպչական ու քաղաքական աշխատանքում թոյլ տուած խոշոր թերութիւնների եւ ոչ-կուսակցական վարքագծի համար, որոնք Սումկայիթում յանգեցրին ողբերգական հետեւանքների» (Կենտկոմի բիւրոյի որոշումից, «Սովետական Հայաստան», Մարտի 20)։

Պաշտօնական երկու հաղորդագրութիւններից մէջբերումներն ընթերցողը տարակուսանքի մէջ կ'ընկնի, հաստատելով դրանց բառացի նոյնականութեան փաստը։ Դա զաւեշտի կէսն է միայն։ Զաւեշտի միւս կէսը հետեւեալն է. Մուսլիմզադէին առաջին քարտուղար ընտրած քաղաքային կոմիտէի լիագումար ժողովը, լինելով նրան պաշտօնից ազատելու իրաւասու միակ մարմինը, իր իրաւասութիւնն օգտագործելով նրան պաշտօնանկել է։ Նշանակում է՝ այդ պահից Մուսլիմզադէն այլեւս շարքային ու հասարակ մահկանացու մի կուսակցական է։ Բայց ահա

Կենտկոմի բյուրոն, որը կարող էր առ առաւելն հաստատել քաղկոմի պլե-
նումի որոշումը, իր հերթին որոշել է պաշտոնանկել... արդէն իսկ
պաշտոնազրկուածին։ Նպատակը պարզ է. փոշի փչել հասարակական
կարծիքի աչքերին։

Ցանուն արդարամտութեան պիտի ասել, որ Կենտկոմի բյուրոն պաշտոնանկեալին պաշտոնազրկելու համար վերոշարադրեալ (երկիցս շարադրեալ) մեղքերից բացի աչքի առաջ ունեցել է եւ մի լրացուցիչ մեղք, որը համարելով ծանրացուցիչ դէպք յանցանաց՝ նշանակել է եւ մի յաւելեալ պատիժ։ Մուրադեանի լրացուցիչ մեղքն այն է եղել, որ «Կենտկոմի բյուրոյում հանդէս է բերել ոչ-ճիշտ վարքագիծ եւ անցի ունեցածի ոչ-ինքնաքննադատական գնահատում»։ Այս խօսքը հայավարիի վերածելու դէպքում, պիտի նշանակի, որ Մուրադեանն չի ընդունել Սումկայիթի եղեռնագործութեան հարցում իր անձնական պատասխանատուութիւնը եւ ընդհակառակը որպէս պատասխանատու մատնանշել է ուրիշների, պարզ չէ՝ Սումկայիթի իր ատրպատականների՞ն, թէ՝ Բաքուի իր վերադասներին։ Բոլոր դէպքերում լրացուցիչ այդ մեղքի համար որպէս յաւելեալ պատիժ Կենտկոմի բյուրոն Մուրադեանին վտարել է կուսակցութիւնից։

Ա՛յ չմեռնէք դուք, «խելօք» եւ «հնարամիտ» ղեկավարներ, որ այդպիսի պատիժ էք յօրինել. կուսակցութիւնից վտարում։ Ըստ որում այդ պատիժը, որպէս ծանրագոյն, յօրինել էք դուք ձեր իսկ փրկութեան համար. Մուրադեանի նման մի օր մի Սումկայիթ քաղաք հրի ու սրի կը մատնէք, ուզենաք՝ աշխարհը հրի ու սրի կը մատնէք եւ ... ա՛ռ քեզ ծանրագոյն պատիժ՝ կուսակցութիւնից վտարում։ Այն էլ՝ եթէ ինքնաքննադատութիւն հանդէս չբերէք։ Իսկ եթէ հանդէս բերէք՝ պարզապէս պաշտօնից ազատում։ Չի՞ ստացւում այնպէս, որ ինքներդ ընդունում էք. կուսակցութեան մէջ, այն էլ պատասխանատու աթոռի վրայ ընկնելը հաւասարազօր է դրախտ ընկնելուն, հետեւաբար կուսակցութիւնից վտարումը՝ դրախտից արտաքսման, ուրեմն եւ առաջին հերթին՝ եդեմական պարտէզի բարիքներից օգտուելու առանձնաշնորհից զրկման։

Ի դէպ, Թաթարական Կենտկոմի բյուրոյի որոշման մէջ փոքր ինչ մանրամասնուած էր Սումկայիթի նախճիրի գործում Մուրադեանի անձնական պատասխանատուութիւնը. «Տեղի ունեցած ողբերգական իրադարձութիւնների համար մեծ մեղք է ընկած անձամբ կուսակցութեան Սումկայիթի քաղկոմի առաջին քարտուղար ընկեր (ախր, եթէ լուրջ էք, էլ ի՞նչ «ընկեր». չէ՞ որ հաղորդագրութեան շարադրման պահին նա... վտարուած էր,– Ե.Ն.) Դ.Մ. Մուրադեանի վրայ։ Չնայած բազմաթիւ նախազգուշացումներին, նա չկատարեց արձակուրդից անյապաղ վերադառնալու ցուցումը, հաշուի չառաւ Խորհրդային Միութեան Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի պահանջների կատարման աշխատանքն իսկոյն եւեթ կազմակերպելու մասին Հանրապետական կուսակցական ակտիւի որոշումը։ Տագնապալից իրավիճակում ընկեր Մուրադեանն չկարողացաւ կուսակցական ակտիւը զօրաշարժել պայքարի՝ քաղաքում բնականոն իրադրութիւն ստեղծելու համար, դրսեւորեց աններելի ինքնավստահութիւն, չգտնուեց քաղաքական ղեկավարին ներկայացուող պահանջների բարձրութեան վրայ։ Ընկեր

Մուսլիմզադէի գործողություններում ու արարքներում առաջ էլ էին դրսեւորվում կենսական հարցերի լուծման նկատմամբ մակերեսային մոտեցման, անզսպության, հանդխամոլության տարրեր, իր վրայ առանձնահատուկ ուշադրություն հրավիրելու ձգտում: Քննադատական դիտողություններին ճիշտ չէր արձագանքում, իր գործողությունները համարելով անսխալ»:

Չենք ցանկանում խորանալ ու թեկուզ հարց տալ. եթե Մուսլիմզադէն այդպիսին էր դեռ մինչեւ Սումգայիթը, ապա ո՞վ, ինչո՞ւ եւ ինչպե՞ս Թաթարական համայնավար երիտասարդների միության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնից հեռացումից 1986 թուին առաջ քաշեց աւելի պատասխանատու պաշտոնի՝ նշանակեց եւ ընտրել տալով քաղաքային կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար ու թոյլ տալով նրան շուրջ երկու տարի բազմած մնալ իր աթոռին: Որովհետեւ պատասխանները կարելի է հեշտությամբ կռահել եւ որովհետեւ նոյնքան էական եւ արդէն փաստական այլ իրողություններ կան: Պարզւում է, որ վերեւում ամբողջական դարձած «պատմական» զաւեշտին հրաժեշտ տալու հարցում շտապել ենք եւ որ այն ունի մի... երրորդ կէս: Բանն այն է, որ Թաթար համայնավարների կուսակցական բարձր մարմնի՝ Կենտկոմի բիւրոյի կողմից Մարտի կէսերին կուսակցությունից վտարուած Մուսլիմզադէն ետ երկուքուկէս ամիս փաստօրէն մնացել է կուսակցական եւ մի անգամ ետ է վտարուել կուսակցությունից, այս հեղ արդէն Կենտկոմի պլենումի կողմից, Մայիսի 21-ին: Հաղորդումը, տասներկու օր ուշացումով տրուած, «Փրաւտա»ի Յունիսի 2-ի համարից է. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում սկսուած իրադարձությունները ծանր արձագանք տուեցին Սումգայիթում, որտեղ իր բարձրության վրայ չգտնուեց մի մարդ, որ այսօր պատասխան է տալիս պլենումի առջեւ: ...Նա դիւրագրգիռ է, դիւրաբորբոք, իր գործողություններում եւ արարքներում անհետեւողական: Իրաւունք ունի՞ նա սահմանազատուելու քաղաքի ողբերգական իրադարձություններից, իրեն յանցաւոր չզգալ այն բանի համար, որ դրանք չկանխարգիլեց: Մուսլիմզադէն սկզբում յանցանքն ուրացաւ, սակայն ըստ երեւոյթին պլենումի ամբողջ ընթացքը նրան համոզեց, որ անհնարին է ակնյայտնին հերքել. իմանալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի իրադարձությունների մասին, արձակուրդից չի վերադարձել, հանդէս է բերել քաղաքական կարճատեսություն եւ անհոգություն: ...Պլենումը որոշեց Խորհրդային Միության համայնավար կուսակցության շարքերից վտարել հանրապետական Կենտկոմի անդամ եւ քաղկոմի առաջին քարտուղար, Խորհրդային Միության եւ հանրապետության Գերագոյն Խորհուրդների անդամ Մուսլիմզադէին»:

«Պատմական» զաւեշտին վերաբերող մէջբերումներից դժուար, եթէ ոչ անհնարին է եզրակացնել, որ Մուսլիմզադէն անմիջական որեւէ կապ է ունեցել արիւնալի իրադարձությունների հետ: Ընդհակառակը: Այնքան, որքան առկայ բոլոր հաղորդումներն էլ շեշտը դնում են հակառակ վերադարձի «ցուցումին» արձակուրդից նրա վերադարձած չլինելու վրայ, այն տպաւորությունն է ստացւում, որ նա սումկայիթեան եղեռնագործության օրերին քաղաքից բացակայել է:

«Թրուդ» թերթը նոյն Մարտի 28-ին գրել է. «Եւ ինչքան թանկ նստեց Սումգայիթի ղեկավարների բարեհոգութիւնը. կուսակցութեան քաղկոմի առաջին քարտուղար Մուսլիմզադէն հանգիստ արձակուրդն էր վայելում. վստահ, որ միջազգայնական բարեկամութեան քաղաքում, ինչպէս սովոր էին անուանել Սումգայիթը, ոչինչ չի կարող պատահել»։

Բարեբախտաբար, ի ձեռին ունենք ճշմարտութիւնը փոքր ինչ մատչելի դարձնող գոնէ մէկ հաղորդում։ Եղեռնագործութիւնից մի քանի օր անց Մուսլիմզադէն գիշերային երկար զրոյցի է նստել «Կոմսոմոլսկայա Պրաւդա» թերթի թղթակցի հետ, որի յարաբերաբար ուշ, Մարտի 27-ին լոյս տեսած յօդուածում թէպէտ շատ բան զանց է առնուած (քանի որ թաթար կուսակցապետն այն ժամանակ արդէն «խստիւ պատժուած» էր), այնուամենայնիւ կայ այսպիսի մի հատուած.

«Միթինգներն սկսեցին Շաբաթ, Փետրուարի 27-ին։ Մուսլիմզադէն արձակուրդից վերադարձաւ միայն 28-ին, թէպէտ մինչ այդ, հանրապետութեան կուսակցական-տնտեսական ակտիւի ժողովում բոլորին զգուշացրել էին իրադրութեան արտակարգութեան վերաբերեալ։ Ժամը 13։30-ին նա չկարողացաւ մեքենայով հասնել քաղկոմի շէնքի մօտ. ամբոխ էր հաւաքուած։ Նա խօսում է կրկին.

– Եւ ես հասկացայ, որ դա ճակատագրի կարգադրութիւնն է։ Բարձրացայ ամպիոն, բարձրախօսի մօտ եւ սկսեցի աշխատել, ամբոխը զսպել։

Ապա, ինչպէս ինքն է պատմում, որոշելով «ցոյցին խաղաղ բնոյթ տալ», առաջին քարտուղարը կանգնեց ամբոխի գլխին եւ փորձեց նրան տանել դէպի ծովափ։

Դա սխալ էր։ Այն ժամանակ, երբ առաջին քարտուղարը քայլում էր շարասեան գլխամասում, թափօրից մի պոչ անջատուեց։ Այն րոպէներին, երբ քարտուղարը միթինգն էր վարում, պաշտօնական լեզուով ասած՝ քաղաքում արդէն առաջացել էր «վերահսկողութիւնից դուրս եկած իրավիճակ»։ Մի քանի խմբերի բաժանուելով, մարդկային դէմքը կորցրած մարդիկ, որոնց շարքին, ինչպէս աւելի ուշ պարզուեց, կային կրկնայանցագործներ, յանցագործութիւններ կատարեցին։ Այո, ոչ թէ խուլիգանութիւն, այլ՝ յանցագործութիւններ, որոնց համար մեղաւորները պէտք է ամենախիստ պատիժների արժանանան»։

«Կոմսոմոլսկայա Պրաւդա» թերթի (եւ ոչ միայն նրա) եւ անձամբ Մուսլիմզադէի հաղորդումից պարզւում է, որ Սումգայիթում հաւաքներն իբր սկսել են Փետրուարի 27-ին, իսկ հակահայկական եղեռնագործութեան ամբոխն իբր ձեռնամուխ է եղել Փետրուարի 28-ի երկրորդ կէսին, քաղկոմի առաջին քարտուղարի քաղաք վերադարձից յետոյ եւ նրա ի գործ դրած գերմարդկային ճիգերին հակառակ։ Ուրիշ հարց, թէ Մուսլիմզադէն ինքը չի ասել եւ մամուլի ներկայացուցիչն էլ հարկ չի համարել հարց տալ, թէ Փետրուարի 28-ին «ամբոխը զսպելու» համար նրան «դէպի ծովափ տանել փորձելիս» առաջին քարտուղարն ի՞նչ նպատակ է հետապնդել. գազազած ամբոխին «լուրդալուր»ի օրինակով իր ետեւից տանել եւ «մուղամ»ով ջո՞ւրը գցել, թէ՝ ծովափնեայ զբօսապտոյտով այվազովսկիական տեսարաններով նրա հոգում բանաստեղծական լարեր թրթռացնել...

Ի դէպ, «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա» թերթի 1988 թուի 72-րդ (5663) համարում շեշտուած էր. «Նրանցից շատերը, ում հետ առիթ ունեցանք զրուցելու, ուղղակի հաղորդում էին բացայայտօրէն սադրիչ-գրգռիչ գործողութիւնների մի ամբողջ շղթայի մասին, գործողութիւններ, որոնց նպատակն էր դաժանացնել մարդկանց, խուճապ եւ խառնաշփոթ առաջացնել։ Օրինակի համար ի՞նչ արժէին ճչաղաղ ճիչերն այն մարդու, որ Սումգայիթի հրապարակում հաւաքուածներին պատմում էր իբր թէ «հայ ոճրագործների» զոհը դարձած իր ընտանիքի ահաւոր պատմութիւնը։ Երբ իրաւասու համապատասխան մարմինները զբաղուեցին «տուժածով», ապա պարզեցին, որ նա բնաւ էլ Ղափանի խաղաղ բնակիչներից չէ, ինչպէս որ իրեն ներկայացնում էր, այլ՝ նախկինում դատուած մի կրկնայանցագործ, ներկայումս անաշխատ ձրիակեր, առանց բնակութեան որոշակի վայրի եւ... բոլորովին անընտանիք»։

Կարիք չկայ զարմանալու, որ թաթարական թէ մոսկովեան-կենտրոնական հետաքննիչ մարմինները, եւ Կատուսեւն անձամբ, նմանօրինակ սադրիչ-գրգռիչների ինքնութեան հետ թաքուն պահեցին եւ առ այսօր պահում են նաեւ այն, որ նրանք դատուել եւ արժանի պատիժ ստացե՞լ են, արդեօք։ Որովհետեւ սումգայիթեան ցեղասպանական յանցագործութեան «հետաքննութեան» կառավարական բեմականացմամբ նախատեսուած չէր ծանրանալ «հիւրախաղերի» հրաւիրուած թափառաշրջիկ աւազակների գործունէութեան իրողութեան վրայ, քանի որ հենց այդ աւազակների խոստովանութիւնները կարող էին դիմակազերծել հակահայկական եղեռնագործութեան կազմակերպիչներին, ուրեմն եւ բացայայտել նախճիրի կանխօրօք կազմակերպուած լինելու փաստը։

Բոլոր դէպքերում վերադառնալով «Կոմսոմոլսկայա Պրաւդա» թերթի եւ անձամբ Մուսլիմզադէի այն ստապատիր պնդման, թէ հակահայկական զանգուածային բռնաճնշումները սկսել են իբր Փետրուարի 28-ին, աւելնք, որ արիւնայեղութեան Փետրուարի 27-ին արդէն իսկ ծաւալուած լինելու վերաբերեալ առկայ է արտակարգօրէն արժանահաւատ մի վկայութիւն։ Սումգայիթի ալիւմինի գործարանի տնօրէնը՝ Ռաֆիկ Ֆարհաթօղլի Էմինբէկլին, որ մի խումբ հայ բանուորների, նրանց կանանց ու երեխաների՝ թւով 36 հոգու փրկել էր կոտորածից եւ որ շուտով պաշտօնանկուած Թ. Սամէտովի փոխարէն նշանակուելու էր քաղաքային խորհրդի նախագահ, եղեռնագործութիւնից «մի քանի օր անց» ընդունելով «Սոցիալիստիչեսկայա Ինդուստրիա» թերթի թղթակիցներին, պարզորոշ յայտարարում էր. «Դեռ Շաբաթ օրը, Փետրուարի 27-ին, բանուորական կամաւորների հետ գնացի կուսակցութեան քաղկոմի դիմացի հրապարակը, որտեղ ընթանում էր տարերային մի հաւաք։ Անմիջապէս զգացի մթնոլորտի շիկացածութիւնը։ Ինչպէս ցոյց տուեցին հետագայ իրադարձութիւնները, սադրիչ-գրգռիչներն սկսեցին գործել հենց այդ ժամանակ, հաւաքի ծածկոյթի ներքոյ։ Մէկ այստեղ, մէկ այնտեղ բարձրանում էին գրգռիչ ճիչեր Հայաստանում ադրբեջանցիների ճնշման մասին։ Կարծում եմ, միայն ես չէ, որ զգացի, թէ իրադարձութիւնները շուտ են գալիս դէպի անբնականոն հուն։ Սակայն չարիքի չափերը գերազանցեցին բոլոր

մտավախութիւնները։ Գործարան սկսեցին հասնել վկայութիւններ, որ քաղաքի տարբեր շրջաններում ծայրայեղականների խմբեր Սումգայիթի ազգութեամբ հայ բնակիչների տներում ջարդեր են կազմակերպում, դատաստանի եւ բռնութեան ենթարկում մարդկանց»։

Այս բոլորը նշանակում է, որ Ուրբաթ օր, Փետրուարի 26-ին սկզբնաւորուած եւ Շաբաթ օր, Փետրուարի 27-ին թափ ստացած հակահայկական եղեռնագործութիւնը կարող էր աւարտուած լինել Կիրակի, Փետրուարի 28-ի օրուայ երկրորդ կէսին, երբ Մուսլիմզադէն «արձակուրդից» իր տիրոյթն էր վերադառնում։ Վերջի վերջոյ 200 հազար բնակչութեամբ (ըստ գլխաւոր դատախազի առաջին տեղակալ Կատուսեւի) կամ քառորդ միլիոնանոց (ըստ քաղաքային խորհրդի նախագահ Էմինբէյլիի) Սումգայիթում 18–20 հազար թուաքանակ ներկայացնող անզէն ու անպաշտպան, նաեւ ցանուցիր ապրող եւ անակնկալի բերուած հայերի դէմ զանգուածային կազմակերպեալ բռնամիջոցների համար 48 ժամը աւելի քան բաւարար մի ժամանակամիջոց էր, մանաւանդ որ ջարդարարների գործունէութեան անարգելութիւնը երաշխաւորուած էր։ Այս բոլորը նաեւ նշանակում է, որ քաղաք վերադարձած Մուսլիմզադէն կա՛մ ենթադրելով, որ հայասպանական դաւադրութիւնն արդէն ի կատար է ածուած եւ ուրեմն անհրաժեշտ է ամբոխին դէպի ծովափ զբօսապտոյտի տանելով հանդարտեցնել ու ցրել, կամ էլ տեղեկանալով, որ բռնամիջոցները, հակառակ ծրագրուածի, անհրաժեշտ ծաւալով ու տարողութեամբ գլուխ չեն բերուել, խաժամուժի գլուխն անցած նրան վճռական գործողութիւնների է առաջնորդել...

...Հասկանալիօրէն հրապարակայնօրէն դերասանական վարպետութիւն էլ դրսեւորելով։ Բանն այն է, որ մոսկովեան դատավարութեան Նոյեմբերի 11-ի նիստում դատախազ Կոզլովսկին տուժածների դատապաշտպանների միջնորդութեամբ դատարանին ներկայացրեց կալանքի տակ գտնուող եւ Վորոնեժի մարզային դատարանի առջեւ կանգնած ջարդարար Ա. Ոզաեւի նախնական քննութեան ժամանակ տուած ցուցմունքների պատճէնը։ Այնտեղ խօսւում է այն մասին, որ Փետրուարի 28-ին քաղաքային կոմիտէի մօտ գումարուած բազմամարդ հաւաքի բեմի վրայ են եղել կուսակցապետ Մուսլիմզադէն եւ քաղաքապետ Մամէդովը, որոնք իբր փորձելիս են եղել խաղաղեցնել «Սպաննել հայերին», «Պատժել հայերին», «Վռնդել հայերին» եւ այլն գոռացող ամբոխին։ Ցուցմունքում այնուհետեւ նշուած է, որ «այդ պահին աւելի չար դերասանի նմանուող» կուսակցապետը իջել է բեմից եւ իր եռեւից դէպի ծովափնեայ պողոտայ առաջնորդել խաժամուժը, որ շարունակելիս է եղել իր հակահայկական լոզունգներն արձակել։ Այնուհետեւ ամբոխը դադարել է հնազանդուելուց եւ տարբեր խմբերի տարանջատուելով սկսել է ցրուել քաղաքով մէկ։

Բոլոր դէպքերում վերեւում մեր ասածն անխուսափելիօրէն ենթադրում է Սումգայիթի հայասպանութեան կանխօրօք ծրագրուած ու կազմակերպուած լինելու վերաբերեալ հաստատ համոզմունքը։ Այն մեզ տալիս են ոչ միայն տարրական տրամաբանութիւնը եւ անհերքելի փաստերը, այլեւ այն իրողութիւնը, որ Խորհրդային Միութեան Գլխաւոր դատախազութեան քննչական բաժինն էլ հենց սկզբից նոյն ձեւի է տրա-

մարանել: Վկա՛յ այն, որ այդ բաժնի պետ Կարակոզովը դատական առանձին համար իր յատկապէս պատրաստուած տեղեկանքում չեշտել է. «Գործի քննութեան ընթացքում մշակուել է վարկած այն մասին, որ զանգուածային անկարգութիւնների անմիջական մասնակիցների գործողութիւնները նախապէս ծրագրուած եւ կազմակերպուած են եղել մասնաւորապէս քաղաքի եւ հանրապետութեան պաշտօնատար անձնաւորութիւններից որեւէ մէկի կողմից»: Ճիշտ է, ըստ նոյն տեղեկանքի «քննութեամբ պարզուած չէ, թէ այդ դրսեւորումները կրե՞լ են, արդեօք, կանխածրագրուած ու կազմակերպուած բնոյթ», սակայն հարցադրմանը դրականի հետ նաեւ ժխտական պատասխան չտալը եւ ընդհանրապէս հատուածը քննչական միջավայրում վարկածի ծագումն իսկ ըստ ինքեան պերճախօս են: Եւ յետոյ, եթէ վերյիշենք, որ «Գործի քննութեան» գլխին կանգնած Նենաշեւի եւ Գալկինի ընթացքը շատ էր հեռու ամբասիր լինելուց, ապա սումկայիթեան եղեռնագործութիւնը հնարաւորի առաւելագոյն չափով տարամացնելու նրանց նկրտումների պայմաններում Կարակոզովի տեղեկանքի «հերքողական» ոգու կողքին հաստատականին սահմանակցուող «պարզուած չէ» դարձուածքը մի ամբողջ ասեկեկոյս արժի:

Մի պահ ենթադրենք, որ ինչպէս Մուսլիմզադէն, այնպէս էլ Բաքուի նրա վերադասներից ոչ ոք նախօրօք ծրագրած ու կազմակերպած չէր հայապաղանութիւնը: Այդ դէպքում ո՞վ կարող է հաստատապէս պնդել, որ ինչպէս Մուսլիմզադէն, այնպէս էլ Բաքուի նրա վերադասները սատուգապէս դէմ էին հայապաղանութեանը: Ինչպէ՞ս պատահեց, որ Մուսլիմզադէի՝ քաղաքի ամենազօր տիրոջ վերադարձից յետոյ (ենթադրելով, որ նա վերադարձել է Փետրուարի 28-ի օրակէսից փոքր ինչ անց), հայապաղանութիւնը շարունակուեց եւս մէկուկէս օր, այն էլ դրսից բերուած բանակային հոծամբոխ զօրամասերի եւ Բաքուից ուղարկուած միլիցիայի օգնական ջոկատների առկայութեան պայմաններում: Գաղտնիք չէ, որ մինչեւ արտակարգ պայմաններ չառաջանան, այլ խօսքով վարչակարգի համար անմիջական վտանգ բացայայտ չդառնայ եւ արտակարգ կամ ռազմական դրութիւն չհաստատուի, որպէս «Ներքին ծառայութեան զօրք» ուղարկուած բանակային ստորաբաժանումներն անգամ, գոնէ տեսականօրէն, ենթարկւում են քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէի նախագահին, վերջինս՝ կուսակցութեան քաղաքային կոմիտէի առաջին քարտուղարին, իսկ սա՝ Կենտրոնական կոմիտէի առաջին քարտուղարին: Արդ, ինչպէ՞ս պատահեց, որ «Ներքին ծառայութեան զօրքի» ստորաբաժանումները չհրաւիրուեցին հենց այն մարդկանց կողմից, ում պարտքն էր ու պարտականութիւնը եւ ովքեր նաեւ իրաւասու էին. ո՛չ Սումկայիթի քաղաքապետ Մամէտովի, ո՛չ Սումկայիթի կուսակցապետ Մուսլիմզադէի, ո՛չ հանրապետութեան կուսակցապետ Բաղիրովի կողմից...

...Բանակային զօրամասերը Սումկայիթ հրաւիրուեցին կուսակցական տեղական վարչամեքենայի սովորական մի «պաշտօնեակ»ի՝ շարքային հրահանգչի կողմից: Եւ քանի որ այդ հրահանգչի անունը գաղտնի է պահւում, չի՞ կարելի ենթադրել, որ նա սումկայիթցի հայ էր:

Հաղորդումը «Կոմսոմոլսքայա Փրաւտա»ի Մարտի 27-ի

համարից է վերցրած. «Ամենապատասխանատու որոշումները՝ սկսած հայ ընտանիքները անվտանգ տեղեր փոխադրելուց եւ վերջացրած Սումգայիթ օգնական զորք կանչելու գործով, իր վրայ է վերցրել… ո՞վ էք կարծում. քաղաքային խորհրդի նախագա՞հը, ոստիկանապե՞տը։ Ո՛չ, Կուսակցութեան շրջային հրահանգիչը, որ ընդհանրապէս պաշտօնական որեւէ հանգամանք չունէր»։

Մարդու գանկուղեղը բանեցնելով այս հաստատումն ի՞նչ է նշանակում։ Նշանակում է, որ ո՛չ քաղաքապետը եւ ոչ էլ քաղաքի կուսակցապետը, ո՛չ ոստիկանապետը եւ ոչ էլ կայազորի պետը չեն ցանկացել, որ սկսուած հայասպանութիւնը դադարեցուի։ Եւ Բաքուի կենտրոնական կոմիտէում ու Կառավարական տանը, որտեղ առաջին իսկ ժամերից տեղեակ են եղել եղեռնագործութեան, նոյնպէս չեն նախաձեռնել զօրական միաւորումների առաքումը, նշանակում է՝ նոյնպէս չեն ցանկացել, որ սկսուած հայասպանութիւնը դադարեցուի։

Ընթերցողն արդէն գիտէ, թէ Մուսլիմզադէն կուսակցական կանոնակարգով օձիքն ինչպէ՞ս ազատեց։ Իսկ նրա ստորադաս մեղսակիցնե՞րը։ Անշուշտ որ «պատժուեցին», ու զարմանալ համայնավարական կանոնակարգով՝ Ադրբեջանի Կենտկոմի «Որոշման» հետեւեալ նախադասութեամբ. «Կուսակցականի պատշաճ յատկանիշներ չեն դրսեւորել, բարդ իրադրութեան մէջ տարտամօրէն ու աննախաձեռնաբար, առանց անհրաժեշտ հաստատակամութեան ու սկզբունքայնութեան են գործել կուսակցութեան Սումգայիթի քաղաքային կոմիտէի քարտուղարներ ընկերներ Մ.Ա. Բայրամովան եւ Ա.Խ. Սամոլազովը, …քաղկոմի բիւրոյի միւս անդամները։ Տեղեկատուութիւն չունենալով տեղերում տիրող իրադրութեան մասին, վատ իմանալով մարդկանց տրամադրութիւնները, նրանք ժամանակին միջոցներ չեն ձեռնարկել կանխելու վերահաս իրադարձութիւնները։ Ցուցաբերած ինքնահանգստացման, քաղաքում տիրող իրադրութեան գնահատման նկատմամբ ոչ քննադատական մօտեցման, հակաիրաւական գործողութիւնների խափանման նպատակով եւ ժամանակին գործուն միջոցներ չձեռնարկելու համար կուսակցութեան Սումգայիթի քաղկոմի երկրորդ քարտուղար ընկեր Մ.Ա. Բայրամովային, կուսակցութեան քաղկոմի քարտուղար ընկեր Ա.Խ. Սամոլազովին յայտարարուել է խիստ նկատողութիւն՝ գրանցելով հաշուառման քարտում»։

Եւ վե՞րջ։ Ո՛չ՝ անշուշտ։ Մի փոքր «խստութիւն» էլ աւելի ստորադաս մարդկանց նկատմամբ. «Ադրբեջանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէն Սումգայիթի քաղկոմի բիւրոյին յանձնարարեց քննութեան առնել այն միւս համայնավար պաշտօնատար մարդկանց անձնական պատասխանատուութիւնը, որոնք չեն ապահովել ողբերգական իրադարձութիւնների կանխման միջոցառումների իրականացումը»։

Իսկ կենտրոնո՞ւմ, Բաքուի գաղափարակենտրոնո՞ւմ։ Այնտեղ բոլորն իրենց օձիքն ազատեցին Կենտկոմի «Որոշման» հետեւեալ «խստագոյն» յանդիմանութեամբ. «Կուսակցութեան քաղաքային կոմիտէի գործունէութեան նկատմամբ հարկ եղած վերահսկողութիւնը չի եղել նաեւ Ադրբեջանի համայնավար կուսակցութեան Կենտրոնական

կոմիտէի բաժինների կողմից»։

Եւ այժմ, երբ պարզեցինք, թէ երկնային ինչպիսի՛ անհեղ դատաստանի են արժանացել Թաթար կուսակցական ու վարչապետական պատասխանատուները սումկայիթեան եղեռնագործութեանը իրենց «ակամայ մեղսակցութեան» համար, ընթերցողին մասնակից դարձնենք Թաթարական Կենտկոմի «Պրոշման» բացառիկ կարեւորութիւն ունեցող հետեւեալ տողերի շուրջ մեր մտորումներին․

«Անհրաժեշտ է ուժեղացնել ղեկավար աշխատողների դաստիարակութիւնը սոցիալիստական միջազգայնականութեան ոգով, ամէն կարգի բացասական դրսեւորումների նկատմամբ անհանդուրժողութեան ոգով»։

Վերլուծենք, թէ ո՞վ է ինքնախոստովանանքի բնոյթ կրող այս խօսքերի հեղինակը․– Թաթար համայնավարների գլխաւոր հրամանատարութիւնը։

Եւ ի՞նչ են խոստովանում Թաթար համայնավարների գլխաւոր զօրակենտրոնում․

1) Թաթար համայնավար-խորհրդային ղեկավար գործիչները կարիքն ունեն սոցիալիստական միջազգայնական ոգով դաստիարակուելու։ Նշանակում է՝ նրանց մօտ գերիշխողը սոցիալիստական միջազգայնական ոգու հակառակն է, պարզ ասած՝ «պուրժուա ազգայնականութեան» ոգին, մուսավաթականութիւնը, որն ըստ էութեան այլ բան չէ, քան՝ ցեղային մոլեկրօնութիւն։

2) Թաթար համայնավար-խորհրդային ղեկավար գործիչները կարիքն ունեն ուժեղացուած դաստիարակութեան, որպէսզի անհանդուրժող դառնան ամէն կարգի բացասական դրսեւորումների նկատմամբ։ Ձանց ենք առնում բացասական տարատեսակ «դրսեւորումները»՝ բարոյական բաղմապիսի տեսերն ու քրէական բազմաբնոյթ յանցագործութիւնները։ Եւ կենտրոնանում ենք հենց «Պրոշման» ու նրա տուեալ տողերին առիթ տուող սումկայիթեան եղեռնագործութեան վրայ։ Նշանակում է, որ Թաթար համայնավար-խորհրդային ղեկավար գործիչները կարիքն ունեն ուժեղացուած դաստիարակութեան, որպէսզի անհանդուրժող դառնան հակահայկական «դրսեւորումների», այդ թւում հայասպանութեան նկատմամբ։ Սա էլ իր հերթին նշանակում է, որ Թաթար համայնավար-խորհրդային ղեկավար գործիչները հանդուրժողութիւն են դրսեւորում մարդկութեան դէմ ուղղուած ցեղասպանական յանցագործութիւն հանդիսացող հայասպանութեան նկատմամբ։

Թաթարը «հանդուրժում» է միայն իրեն սրտամօտ, միայն իր խաւար գանկատուփին հաճոյ «դրսեւորումներին»։

## Է.

Եղեռնագործութեան հենց վաղորդայնին, Մարտի 1-ին, Սումկայիթի համայնավար կազմակերպութեան քաղաքային կոմիտէի շէնքում առաջին քարտուղար Մուսլիմզադէի ընդարձակ աշխատասենեակում, Խորհրդային Միութեան համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի Քաղաքական բիւրոյի անդամ Դեմիչեւի

նախագահութեամբ եւ Ատրպէյճանի համայնավարների կուսակցապետ Բաղիրովի, քաղաք մտցուած զօրքերի հրամանատար Կրաեւի եւ այլ բարձրաստիճանաւորների մասնակցութեամբ գումարուեց կարեւոր մի ժողով, որին, որպէս քաղաքի տուժած հայերի ներկայացուցիչ, հրաւիրուած էր բնագիտութեան դասատու Ալեքսանդր Ղուկասեանը։ Լսենք նրա պատմածը.

«Ինձ խնդրեցին պատմել, թէ ի՛նչ գիտեմ։ Երբ պատմեցի վերջացրի, Դեմիչեւը հարց տուեց.

— Այդուհանդերձ, ինչո՞ւ մարդիկ (իրենց տներից փախած հայերը,– Ե.Ն.) չեն ուզում տուն վերադառնալ։

Ես այն հետեւութիւնն արեցի, որ քաղաքի իշխանութիւնները, երեւի, իրեն՝ Դեմիչեւին ցոյց չեն տուել մեր քարուքանդ արուած բնակարանները։ Իրեն, երեւի, տարել են այն շրջանները, որոնք չեն տուժել։ Ես ասացի.

— Դուք ինձ ներէք, բայց անձամբ ես առաջինը կը հեռանամ այստեղից։ Նոյն կարծիքին են, երեւի, նաեւ մնացած բոլոր հայերը, որոնք փրկուել են։

Այդ ժամանակ ինձ պաշտպանեց Կրաեւը։ Նա վեր կացաւ տեղից եւ դիմեց Դեմիչեւին.

— Վիտոր Նիլովիչ, Ալեքսանդր Միխայլովիչ Ղուկասեանը ճիշտ ասաց միլիցիայի մասին։ Երբ ես Սումգայիթ եկայ, քաղաքում միլիցիայից 850 մարդ էր կենտրոնացուած։ 850 մարդ։ Եւ ի՞նչ։ Ամբողջ միլիցիան դէսուդէն փախաւ։ Ես՝ զինուորականս, իմ զինուորների հետ աւտոկայանի շրջանում հրաշքով ողջ մնացի։ Հրաշքով։ Մեզ վրայ քարեր էին նետում։ Վահանները չէին դիմանում, ջարդւում էին։

Այդ ժամանակ Դեմիչեւը գլուխը կախեց եւ ասաց.

— Ձեռք բարձրացնել բանակի վրայ, դա չափից աւելի է։ Կանչէք Սէիտովին (Ատրպէյճանի վարչապետին,– Ե.Ն.)։

Երբ ներս մտաւ Սէիտովը, Դեմիչեւը նրան կարգադրեց կազմել բոլոր միլիցիոներների ցուցակները, որոնք լքել են իրենց պահակակէտերը, եւ դատի տալ նրանց»։

Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի Մարտի կէսերին ընդունած որոշման մէջ Սումգայիթի ոստիկանութեան մասին ասուած էր. «Սանձարձակ տարրերին դիմակայելու գործում մասնագիտական տեսակէտից անպատրաստ էր նաեւ ներքին գործերի քաղաքային բաժինը (ընկեր Ռ.Ռ. Ճաֆարով)։ Իրենց ծառայողական պարտականութիւնների կատարման նկատմամբ քաղաքի իրաւապահ մարմինների շատ աշխատողների անհոգի ու անպատասխանատու վերաբերմունքը հնարաւորութիւն չտուեց ժամանակին կանխելու անկարգութիւնները»։

Ոստիկանութիւնը (միլիցիան) կամ ներքին գործերի քաղաքային բաժինը ուղղակիօրէն ենթարկւում է քաղաքային խորհրդին, որի նախագահ Մամէդովի մասին, բառացիօրէն կրկնելով Սումգայիթի ժողովրդական երեսփոխանների քաղաքային խորհրդի նստաշրջանի՝ նախագահի պաշտօնանկութիւնը հաղորդող որոշման բանաձեւը, կենտկոմի «Որոշումն» ասում էր. «Քաղաքում պատշաճ կարգուկանոնի եւ

կարգապահութեան ապահովման աշխատանքի կազմակերպման գործում թոյլ տրուած լուրջ թերութիւնների, ցուցաբերած քաղաքական կարճատեսութեան համար, ողբերգական հետեւանքների յանգեցրած բացասական երեւոյթների կանխման նպատակով ժամանակին միջոցներ չձեռնարկելու համար որոշուած է աննպատակայարմար համարել Սումգայիթի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտէի նախագահ ընկեր Թ.Ի. Մամեդովին զբաղեցրած պաշտօնում թողնելը. Նրան յայտարարուած է խիստ նկատողութիւն՝ գրանցելով կուսակցութեան անդամի հաշուառման թերթիկում»։

Բուն իսկ ոստիկանութեան պետի մասին «Պրաւդան» մէջ տուած էր. «Սումգայիթում հասարակական կարգի ապահովման նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի համար, որը յանգեցրեց ողբերգական հետեւանքներ ունեցող անկարգութիւնների, այդ ժամանակ ներքին գործերի քաղաքային բաժնի պետի պաշտօնակատար ընկեր Ռ.Ռ. Ճաֆարովը հեռացուել է կուսակցութեան շարքերից»։

Իսկ ինչպիսի՞ն էր Սումգայիթի ոստիկանութեան վերաբերեալ Մոսկուայի, առաջին հերթին խորհրդային Գլխաւոր դատախազութեան գնահատականը։ Դա երեւում է ԹԱՍՍ-ի ներկայացուցչի հետ Օգոստոսի 20-ին Կատուսեւի հարցազրոյցից.

«ԹԱՍՍ-ի հարցադրումը.- Իրենց բարձրութեան վրայ չգտնուեցին նաեւ քաղաքային (սումգայիթեան) եւ հանրապետական (համադրբէյճանեան) միլիցիայի աշխատողները... ի զօրու չեղան կարգի հրաւիրելու հրահրիչներին, իսկ յետոյ, ի հարկէ, նաեւ մոլեգնած ամբոխին։

Կատուսեւի պատասխանը.- Միլիցիայի աշխատողներն իրենց բարձրութեան վրայ չգտնուեցին։ Նրանք չկարողացան արագագործուն կիրառով վճռական միջոցներ ձեռնարկել արտակարգ պայմաններում կարգուկանոն հաստատելու եւ քաղաքացիների անվտանգութիւնը պաշտպանելու համար։ Կարելի է ուղղակի ասել, որ նրանց մի մասը անհոգի վերաբերմունք ցուցաբերեց դժբախտութեան մէջ ընկած մարդկանց ճակատագրի նկատմամբ։ ...Խորհրդային Միութեան դատախազութիւնը ստիպուած էր քրէական գործ յարուցել միլիցիայի այն աշխատողների նկատմամբ, ովքեր անբարեխղճօրէն էին կատարել իրենց ծառայողական պարտքը։ Քննութիւն է կատարւում»։

Հասկանալի է, որ խորհրդային կենտրոնական մամուլը, ընդհանուր առմամբ թմթարուէր, խնդրոյ առարկայ չէր դարձնելու Սումգայիթի ոստիկանութեան կեցուածքը։ Այնուամենայնիւ եղան թերթեր, որոնք իրենց տարակուսանքը յայտնեցին։ «Մոսկովսկիէ Նովոստի»ն, օրինակ, իր Սեպտեմբերի 30-ի համարում գրեց. «Հետեւելով դատավարութեան՝ ակամայ յիշում ես, որ սումգայիթեան դժոխքի այն օրերին միլիցիան, քաղաքային իշխանութիւնները չկանգնեցրին ջարդարարներին եւ մարդասպաններին։ Անպատիժ մնալու զգացողութիւնը քաջալերեց ամբոխը։ Չգիտեմ, թէ այս դատավարութիւնում պիտի քննարկուի՞, արդեօք, ուրիշ անձնաւորութիւնների պատասխանատուութեան աստիճանը, սակայն անհրաժեշտ է գնահատել նրանց գործողութիւնները կամ ձեռնածալութիւնը»։

Ինչքան էլ սուղ լինեն տուեալները, այնուամենայնիւ կարելի է նրանցից քամել ճշմարտութեան բացայայտմանը նպաստող որոշակի հիմք։

Եւ այսպէս, ուրեմն. ըստ զօրավար Կրաեփի վկայութեան, քաղաքի 850 հոգուց բաղկացած ոստիկանական ուժերը ասպարէզի վրայ են եղել մինչեւ բանակային զօրամասերի մուտքը, իսկ զօրքի ժամանումից եւ ուժեղ քարկոծման ենթարկումից յետոյ՝ մինչեւ վերջին մարդը փախել են։ Տարօրինակ է հնչում, չէ՞. ոստիկանութիւնը, երբ մենակ է եղել խաժամուժի դէմ, փախուստի չի դիմել, իսկ երբ իր կողքին յայտնուել է 20 հազարանոց զօրքը, փախուստի է դիմել։ Նշանակում է, որ ոստիկանութիւնը, երբ մենակ է եղել, ոչ թէ խաժամուժի դէմ է եղել, այլ՝ նրա հետ, նրա կողքին եւ նրա հետ էլ փախուստի դիմել։ Առնուազն եղել է չէզոք ու անգործուն դիտորդ խաժամուժի արարքների, ինչպէս ենթադրել է տալիս Կենտրոնական կոմիտէի ակնարկութիւնն այն մասին, որ ոստիկանութիւնը «մասնագիտական տեսակէտից անպատրաստ էր սանձարձակ տարրերին դիմակայելու գործում»։ Նոյն «Որոշման» ակնարկն այն մասին, որ ոստիկանութեան «շատ աշխատողներ իրենց պարտականութիւնների կատարման նկատմամբ անհոգի ու անպատասխանատու վերաբերմունք» են դրսեւորել ու հենց դա էլ հնարաւորութիւն չի տուել «ժամանակին կանխելու անկարգութիւնները», դարձեալ առաւելապէս ակնարկ է ոստիկանութեան կրաւորականութեանը, թէպէտ եւ դրանում հնարաւոր է մի որոշ տակտով տեսնել ակնարկ՝ մեծ թիւով ոստիկանների ոչ միայն թողտուութեանը, այլեւ քաջալերական կեցուածքին, չասելու համար «սանձարձակ տարրերի» հետ դաշնակցութեանը։

Պիտի անհերքելի պնդել, որ քաղաքի թաթար ոստիկանների, յատկապէս շարքայինների գերակշիռ մասը եղել է ջարդարարների աջակիցը։ Անհերքելի՝ ոչ միայն այն պատճառով, որ թաթար ոստիկանը պարզապէս նոյն հակահայ-ջարդարար թաթարն էր, միայն թէ համազգեստ հագած, ըստ որում համազգեստը կարող էր լինել որքան չափաւորող, նոյնքան եւ սանձարձակող։ Նաեւ ոչ այն պատճառով, որ հայասպան եղեռնագործութեան կանխորոշ բարձր ոլորտների կողմից կազմակերպուած-մշակուած լինելու վերաբերեալ համոզմունքը յուշում է այն, որ ներքին գործերի մարմինների ղեկավար շրջաններ չէին կարող տեղեակ ու մասնակից չլինել, հետեւաբար չքաջալերել իրենց ստորադաս շարքայինների գործուն աջակցութիւնը «զանգուածային անկարգութիւններին» բարեյաջող ու արդիւնաւէտ անցկացմանը։

Ի դէպ, եթէ թաթար մի վկայ՝ Ռ. Առիլովը դատարանում զարմացած բացականչում էր. «Ո՞ւր էր միլիցիան» եւ եթէ քաղաքային խորհուրդն էլ բաւարարւում էր ի պէտս դատաստանի գրաւոր հաստատելով, որ իրեն ենթակայ ոստիկանութիւնը «ամբոխի դէմ ձեռք է առել խիստ անբաւարար միջոցներ», ապա թաթար մի շարք ականատեսների ցուցմունքներով յայտնի են միլիցիայի այն սպաները, որոնք, իրենց զինեալ ջոկատների գլխին կանգնած, անտարբեր դիտել են ջարդարարութիւնը, նոյնիսկ իրենց դիմողներին ասել. «Օգնել պէտք չէ, մէկ է, (հայերը) պիտի սատկեն»։ Այդ վկաներից Թ. Ահմէտովան դատաստանի առաջ հաստատել է, որ «միլիցիան մի կողմ էր կանգնած եւ միայն դիտում

էր տեղի ունեցածը»։ Նոյնպէս թաթար, վկայ Մուրատովը ցուցմունք է տուել. «Միլիցիան կանգնել էր խմբերով, չափազանց անտարբեր եւ ամբոխին զսպելու համար ոչինչ չէր անում»։

Ամբոխը ոստիկանութեան աչքի առաջ կանգնեցրել է մի թաքսի, վարորդի կողքին յայտնաբերել մի հայ մարդու, «Ձեռքերը ջարդելով դուրս քաշել մեքենայից, ըստ որում վարորդը ներսից օգնել է դուրս քաշել նրան», տեղն ու տեղը մահակներով եւ երկաթեայ ձողերով արիւնլուայ գետին են նետել նրան, դանակահարել եւ մեռած ենթադրելով հեռացել։ Թաթար մի անցորդ, տեսնելով, որ մարդը կենդանի է դեռ, կրունկով ճզմել է նրա գլուխը։ Եւ այս բոլորը՝ ոստիկանութեան աչքի առաջ։ Ականատես վկայ Ծ. Ալիեւի դատարանում հարցաքննութիւնից. «—Իսկ ինքներդ ի՞նչ էիք անում այդ ամբոխի մէջ,— հարցրին դատապաշտպանները։ —Պարզապէս նայում էի։ —Հետաքրքի՞ր էր։ —Երդւում եմ խղճովս, ահաւոր էր։ —Այդ դէպքում ինչո՞ւ չհեռացաք, այլ հանդիսատես նայում էիք։ —Ես հանդիսատես չէի նայում։ —Ինչո՞ւ միլիցիա չկանչեցիք։ —Միլիցիա կանչելու կարիք չկար, միլիցիայի աշխատողներն իրենք այնտեղ էին եւ ամէն ինչ տեսնում էին»։

Ամբողջն այս չէ, սակայն։ Աւելին կայ։ Քիչ չեն նաեւ պաշտօնական ատեաններին տրուած այն ցուցմունքները, որոնց համաձայն ոստիկանութիւնը ոչ թէ պարզապէս կրաւորական-քաջալերական կեցուածք է դրսեւորել, այլ՝ ուղղակի մեղսակցել է։ Առանց հիմքի չէ, որ թաթար վկայ Սարիր Ղուլիեւը դատարանում ուղղակի պնդել է, որ «Սումկայիթի միլիցիան յօշոտման էր յանձնել քաղաքը»։ Թաթար մի այլ վկայ, նոյնպէս դատարանում, յայտարարել է. «Միլիցիան իր ետեւից էր տանում ժողովրդին»։ «Գրական Թերթ»ի կողմից մոսկովեան դատավարութեանը հետեւող լրագրող Ս. Շահմուրատեանն, իր հերթին, Հոկտեմբերի 25-ին հաղորդելով, որ «ոստիկանութեան միլիցիան փաստօրէն աջակցել է ջարդարարներին», աւելացրել. «Ասում եմ՝ ձեռքիս տակ ունենալով տասնեակ ու տասնեակ սոսկալի փաստեր»։

Սակայն, ինչպէս վերջնահաշւում պարզ դարձաւ, որոշիչը ոչ թէ փաստերն էին ու ճշմարտութիւնը, այլ բարձր ոլորտների թաթարապաշտութիւնը։

Ոստիկանութիւնից անհամեմատ դժուար է Սումկայիթ մղուած բանակային զօրամասերի դիրքորոշման գնահատականը։ Եւ ոչ այն պատճառով, որ հիմնականում թաթարներից հաւաքագրուած միլիցիային ի հակադրութիւն, զօրքը բազմազգ կազմ ունէր, հետեւաբար եւ զերծ պէտք է լինէր ցեղապաշտ արարքների տրուած խաժամուժի նկատմամբ ցեղակցական կապից թելադրուող բարեացակամութեան ամէն մի մանրէից, այն դէպքում, երբ իրողութիւն է բանակի եթէ ոչ բարեացակամութիւնը, ապա գոնէ աղաղակող կրաւորականութիւնը։ Հե՞շտ է, օրինակ, տրամաբանական եւ ընդունելի բացատրութիւն գտնել այն փաստին, որ երբ 2-Բ չէնքի բակում օրը ցերեկով խորհրդային քաղաքացիների (այդ թւում Աֆղանստանում մարտնչած մի ռազմիկի՝ Եդուարդ Մելքումեանին) էին կացնահար յօշոտում եւ անասուններից ոչ մէկին, անգամ շներին բնորոշ չեղող պղծութեամբ պատի տակ քսան-երեսուն հոգով խորհրդային մի քաղաքացուհու՝ Իրինա Մելքում-

եանին չէին բռնաբարում, կամ մի այլ քաղաքացուհու՝ Լոլա Աւագեանին, մօրից մերկ, չամփրահար ու արիւնլուիկ, գուցէ թէ արդէն կիսախելագար, քարշ չէին տալիս դէպի չորրորդ թաղամասի չայխանա՝ վաւաշոտ, թմրամոլութիւնից ու միասեռականութիւնից վաղուց ներքինիացած ակսակալների առաջ պարել տալու, ապա երկու հարիւր մեթրից էլ պակաս հեռաւորութեան վրայ, թիւ 49 ուսումնարանի շէնքում ու շուրջը «Մեծ քանակութեամբ զօրք էր կանգնած»,- ինչպէս վկայել է խորհրդահայ մամուլը։ Եւ ո՞ւմ, օրինակ՝ հենց ուսումնարանից մի քարանետ հեռաւորութեան վրայ գտնուող շէնքերի նկուղներում ահից կուչ եկած եւ սարսափից լացող երեխաների բերանը, լռեցնելու համար, իրենց բռունցքը կոխելով փակող եւ երկնքից օգնութիւն աղերսող հայ հայրերին ու մայրերին կարելի՞ է համոզել, որ կարմիր բանակայինները իրենց ապահով դիրքերը չէին լքում եւ օգնութեան չէին հասնում, քանի որ ուսումնարան ապաստանածների անվտանգութիւնն էին ապահովում։ Ի՞նչ եղան, ո՞ւր կորան հայրենական պատերազմի անհաշտ հերոսների աւանդոյթները։ Ի՞նչ է, այդ հերոսները խելա՞ռ էին, իսկ մերօրեայ բոլոր կարմիր-աստղաւորները՝ մինչեւ վերջինը խելօք։ Իսկ գուցէ այդ աւանդոյթները չե՞ն էլ եղել եւ գրողներից յօրինուել են յանուն հանրարի։ Կամ՝ գուցէ Գրեմնեւն իր ճահճում խեղդե՞լ է բոլոր քաջարիներին, կորպուսովեան գարաւլրջանին միայն անարիների թողնելով···

Մենք հասկանում ենք Երեւանի «Գրական Թերթ» շաբաթաթերթի յանձնարարութեամբ մոսկովեան գաղութավարութիւնը լուսաբանող Սամուէլ Շահմուրատեանին, որը, տուրք տալով խորհրդային լրագրութեան կանոնակարգին, բանակային առօրաբաժանումների մասին խօսելիս էջերում բարեհոս մի պատկեր է գծել, գրելով. «Սումկայիթ ժամանած զօրքի դերը միանշանակ չէ։ Քանի՛ քանի անգամ են խոստովանել սումկայիթցի հայերը, որ եթէ զօրքը չլինէր եւ քաղաքում չյայտարարուէր պարետային ժամ, ողբերգութեան չափերը անհամեմատ աւելի ահաւոր կը լինէին։ Ոմանք նոյնիսկ կարծիք են յայտնում, որ զօրքի բացակայութեան դէպքում Սումկայիթի հայերը մեծամասամբ կը կոտորուէին, որովհետեւ չկար եւ չէր էլ լինի ամբոխների դէմն առնող մէկ այլ ուժ։ Կարող ենք տասնեակ յուզիչ տեսարաններ նկարագրել, թէ ինչպէս են մեր զինուորները նկուղներից հանել եւ էվակուացրել հայ ընտանիքներին, ինչպէս են լաց եղել եւ նոյնիսկ ուշաթափուել կոտորուած ու մերկ դիակները տեսնելով, ինչպէս են իրենց պաքսիմատն ու թէյը բաժանել հայ մանուկներին։ Մենք՝ հայերս, բարոյական իրաւունք չունենք ապերախտ լինելու բանակի եւ զինուորական միլիցիայի նկատմամբ»։

Մենք նուազագոյն ցանկութիւնն իսկ չունենք ընդդիմախօսելու Շահմուրատեանին, յատկապէս բանավիճելու նրա հետ։ Եւ ոչ միայն այն պատճառով, որ նրա «Հատուցման Շեմին» խորագրեալ հաղորդումները, որոնք լոյս տեսան «Գրական Թերթ»ի Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսների համարներում, առ այսօր սումկայիթեան հայասպանութեան նուիրուած առաւել առարկայական (իսկ Խորհրդային Միութիւնում, առաւել եւս տուեալ հարցում լինել առարկայական, ըստ




Երևան, Մարտ 1988, Մատենադարանի մուտքը

ինքեան նշանակում է չլինել եւ համարձակ) վաւերագրումներն են մնում։ Նաեւ այն պատճառով, որ նրա կողմից ակնարկուած «յուզիչ տեսարանները» անպայման եւ միայն ու միայն կարող են վերաբերուել առանձին «մեր զինուորներին»՝ որպէս մարդ-անհատների։ Ինչ վերաբերում է «մեր զինուորներին»՝ որպէս ինչ որ համակարգի ստորաբաժանման, ուրեմն հասարակականութեան, ապա Շահմուրատեանն առաւել կամ նուազ ինքն իսկ ասել է այն, ինչ կարող էինք ասել եւ մենք։

«Բայց կան ուրիշ, շատ ցաւալի եւ անհասկանալի հանգամանքներ։ Բանն այն է, որ զօրքը որոշ դէպքերում պարզապէս չի միջամտել հայ բնակչութեան ջարդերին, օգնութեան չի հասել մարդկանց, թէեւ հենց դրա համար էր երկրի տարբեր վայրերից ուղարկուել Սումկայիթ։ Վերցնենք հենց Քառասունմէկ-Ա թաղամասը։ Ողբերգութիւնն այստեղ սկսուեց Փետրուարի 29-ին, երբ քաղաքում արդէն մեծ քանակութեամբ զօրք եւ զինուորական տեխնիկա կար։ Հարց է ծագում. մի՞թէ զօրքը տեղեակ չէր, որ մի մեծ բանդա (յելուզակախումբ) է մտել թաղամաս, մանաւանդ որ շրջակայքում անընդհատ ետ ու առաջ են անելիս եղել գրահամեքենաները։ Յիշենք Ս. Ղուլիեւի վկայութիւնը. Ա. Առաքելեանին սպաննելիս եւ նրա կնոջ վրայ մահափորձ կատարելիս ինչ-որ մարդիկ վազել են դէպի գրահամեքենաները, օգնութիւն խնդրել՝ ստանալով իր անբարոյականութեամբ չշմեցնող պատասխան. «Հրաման չունենք միջամտելու...» Առաւել ցաւալի է Քառասունմէկ-Ա թաղամասի նախկին բնակիչ Իրինա Յոլափեանի վկայութիւնը, որը լսել ու գրի եմ առել Հրազդանի շրջանի պանսիոնատներից մէկում։ Յոլափեանը պատմում է, որ Փետրուարի 29-ին, երեկոյեան մօտ, իրենց ընտանիքը ուրիշ հայ ընտանիքների հետ փրկութիւն է գտնում համար 49 պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարանում, ուր մեծ քանակութեամբ զօրք կար կանգնած։ Նա իսկոյն դիմում է սպային. «Չէ՞ք տեսնում, ի՛նչ է կատարւում թաղամասում, օգնէք մեր հայրենակիցներին»։ «Հրաման չունենք,- հետեւում է անգիր արած պատասխանը, որից յետոյ սպան աւելացնում է.- իսկ ձեր հայրենակիցները ի՞նչ պակաս են կոտորում ադրբեջանցիներին Ղարաբաղում»։ Այս վկայութիւնն առաւել ցաւալի համարեցի այն պատճառով, որ համար 49 ուսումնարանը Մելքումեանների տնից ընդամէնը 170-200 մեթր հեռաւորութեան է, եւ չափազանց դժուար է պատկերացնել, որ ուսումնարանից չեն նկատել 200-300 հոգիանոց բանդայի մտնելը, այրուող մարդկանցից բարձրացող ծուխը, չեն լսել ամբոխի ահաւոր գոռգոռոցն ու սուլոցը, Ահմէտովի բարձրախօսի կոչերը կամ Իրինա Մելքումեանի ճիչերը։ Մինչդեռ զօրքի կրաւորական ներկայութիւնն անգամ շէնքի մօտ, կարող էր փրկել մարդկանց։ Այդպէս է, օրինակ, փրկուել Ահմէտովի բանդայի առաջին զոհ Արծուիկ Բաբայեանը, որի նկատմամբ մահափորձ է կատարուել Քառասունմէկ-Ա թաղամասին չհասած, կաթի գործարանի մօտ։ Պատահաբար անցնող գրահամեքենան տեսնելով՝ մարդասպանները փախել են տարբեր կողմեր, իսկ Բաբայեանը հասցրել է թաքնուել կաթի գործարանի պահակատանը»։

Ինչպէս ասում են՝ մեկնաբանութիւններն աւելորդ են։

Սակայն ոչ միայն աւելորդ չէր, այլեւ «զօրքի հանգամանք-

ների լիարժեք, համակողմանի եւ առարկայական պարզաբանման նպատակով» կենսական անհրաժեշտութիւն էր Սումգայիթ մտցուած բանակային ստորաբաժանումների հրամանատար Կրաեւին դատարան կանչելն ու հարցաքննելը, ինչպէս որ պահանջեց զոհերի դատապաշտպան Վ. Ռշտունին, «քանզի արդէն իսկ պարզ է, որ քաղաք մտցուած ինը՛ զորամիաւորումներն անհրաժեշտ, կտրուկ միջոցներ չեն ձեռնարկել քաղաքում մոլեգնող ոտանդն ու ջարդը կանխելու, հայ ազգաբնակչութեան անվտանգութիւնն ապահովելու նպատակով։ Նրանց գործողութիւնները հիմնականում սահմանափակուել են ինքնապաշտպանութեամբ, որի հետեւանքով տուժել են 276 զինուորական ծառայողներ»։

Աւելացնենք, որ Հայաստանի համայնավար կուսակցութեան կենտրոնական կոմիտէի, ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի Նախագահութեան եւ ՀԽՍՀ Նախարարաց խորհրդի պաշտօնաթերթ, իր ռուսալեզուայնութեամբ կրկնակի պաշտօնական «Կոմունիստը» Նոյեմբերի 16-ին, նշանակում է՝ Գերագոյն դատարանի քրէական դատաստանի փակումից երկու օր առաջ գրեց. «Գործի նիւթերի մէջ վկայութիւններ կան այն մասին, որ Սումգայիթ քաղաքում յանցագործութեան կատարման նպաստող պատճառներից եւ պայմաններից մէկը եղել է միլիցիայի ձեռնածալութիւնը։ 1988 թուի Փետրուարի 28-ին Սումգայիթ են մտցուել զինուորական ստորաբաժանումներ՝ իրաւակարգը պաշտպանելու։ Սակայն նրանք որեւէ միջոց ձեռք չեն առել խափանելու ջարդերը, հրկիզումները եւ միւս յանցագործութիւնները, զբաղուել են ինքնապաշտպանութեամբ։ Ինչի՞ց էր թելադրուած նրանց անգործունէութիւնը»։

Մե՞ղմ է հարցադրուած։ Բնաւ երբեք։ Ասում են՝ երեխային «մայր» հայհոյողների ամօթալի խօսքերի շարքում ամենից սրտանցն ու կրքոտը հենց երեխայի մօր սիրածինն է լինում...

Մոսկովեան դատավարութիւնում առաւել ուշադրութիւն գրաւած վկաներից մէկը՝ Իլիասովը, ցուցմունք է տուել, որ բանակային զրահամեքենաները գնում ու գալիս էին կենտրոնական փողոցով, մինչդեռ ոչ-հեռու Ահմէտովի ասպատակախումբը անարգել շարունակում էր իր վայրագութիւնները։ Նա պատմեց, թէ ինչպէս է ամբոխը քարեր շպրտել զրահամեքենաների վրայ։ «Իսկ խեղճ զրահամեքենաներն ի՞նչ էին անում»,- հարցրեց տուժող կողմի փաստաբան Ճաղոշնիկովան։ «Խեղճ զրահամեքենաները արագ-արագ ետ էին քաշւում»,- պատասխանեց Իլիասովը։

Ի դէպ, զօրավար Կրաեւը խոստովանել է, որ ինք «միայն հրաշքով» է կենդանի է մնացել։ Եթէ հաւատանք դատախազութեան հաղորդումներին, ապա Սումգայիթ մտցուած շուրջ քսան հազար բանակայինները ոչ մի զոհ չեն տուել, բոլորն էլ առանց բացառութեան «հրաշքով» կենդանի են մնացել։ Բայց ահա, թէ ի՞նչ է ասել թաթար վկայ Ասկեար Սելիմխանովը Գերագոյն դատարանի մոսկովեան նիստում. «Աւտոկայանի մօտ քարկոծում էին զինուորներին։ Իսկ զինուորները ոչ թէ բնակիչներին, այլ՝ իրենք իրենց էին պաշտպանում։ 38-րդ թաղամասի մօտ մի զինուոր էր վիրաւորուել, գետին ընկած ցնցւում էր, կարծես

վերջին շունչն էր փչում։ Չի՞ կարող պատահել, որ ավտոկայանի մոտ ինքնապաշտպանական «մարտ» մղող Կրաեւից էլ, ինչպես եւ հասարակայնությունից, թաքցրած լինեն իր աչքից հեռու զոհուած չարքային զինուորին, յատկապէս եթէ նրա մարմինն էլ Գաքուի լիազոր Գանիֆաեւի ձեռներից պաշտօնեաները ժամանակին վերացրել են...

Սումկայիթեան եղեռնագործութեանց հետ կապուած խիստ տարօրինակ շատ բան կայ։ Այդ բոլորը հասկանալն այնքան էլ դժուար չի լինի, եթէ պատրանքներն ու զգացական գեղումները մի կողմ դնենք եւ սառնասրտօրէն նայենք ճշմարտութեան աչքերին։ Իսկ այդ աչքերում արտացոլուած է միայն մէկ բան. բազմազգ Խորհրդային Միութիւնում մէկ հայասէրի դիմաց երեւի տասնըմէկ թաթարապաշտ ու հայատեաց անզգամներ են...

Որպէսզի ընթերցողը համոզուի, թէ յատկապէս Մոսկուայի կենտրոնական-համամիութենական կուսակցական-պետական հիմնարկներում ինչքա՛ն ամուր են նստած թաթարասէրները եւ թէ նրանց թաթարամոլ-հայատեաց կրքերը ինչպիսի՛ գարշելի քայլեր են թելադրում, այստեղ կրճատումներով տալու ենք Գ. Վազարչեանի «Սրբապղծութի՞ւն թէ կուրութիւն» յօդուածը, որը որպէս բաց նամակ մոսկովեան «Նարոտնոէ Օպրազովանիէ» («Ժողովրդական Կրթութիւն») հանդէսի խմբագրութեանը՝ լոյս է տեսել «Երեկոյեան Երեւան» թերթի 1988 թուի Յունիսի 28-ի համարում.

«Խորհրդային Միութեան ժողովրդային կրթութեան պետական կոմիտէի եւ Ռուսաստանի Խորհրդային Դաշնակցային Սոցիալիստական Հանրապետութեան Լուսաւորութեան նախարարութեան պաշտօնաթերթ «Նարոտնոէ Օպրազովանիէ» հանդէսի 1988 թուի Մայիս ամսուայ համարում հրապարակուել են Խորհրդային Միութեան լուսաւորութեան նախարարութեան (այժմ՝ նախկին) համակարգի հիմնարկների եւ կազմակերպութիւնների 1987 թուի համամիութենական սոցիալիստական մրցութեան արդիւնքները։ ...Մրցութեան յաղթողի կոչում են տալիս, երբ, ինչպէս ասուած է որոշման մէջ, «առանձին ուշադրութիւն է յատկացուել երեխաների, զեռահասների ու երիտասարդութեան... գաղափարաքաղաքական եւ բարոյական դաստիարակութեան իրականացմանը»... Ղեկավարուելով այդ կողմնորոշիչով, նախարարութեան ղեկավարութիւնը եւ արհեստակցական միութեան կենտրոնական կոմիտէն համամիութենական սոցիալիստական մրցութեան յաղթողներ են ճանաչել համակարգի մի շարք կազմակերպութիւնների ու հիմնարկների...

Ծանօթանալով վերջիններիս ցուցակին, սկզբում տարակուսանք ես ապրում, որը հենց տեղնուտեղը վեր է ածւում արդարացի զայրոյթի։ Որովհետեւ Խորհրդային Միութեան լուսաւորութեան նախարարութեան եւ ճիւղային արհեստակցական միութեան կենտրոնական կոմիտէի կարմիր դրօշով պարգեւատրուածների թւում Ադրբեջանական ԽՍՀ-ից առաջինը նշւում են... Սումկայիթ քաղաքի ժողովրդական կրթութեան հիմնարկների հաւաքականութիւններ»ն ու քաղաքային խորհրդի ժողովրդային կրթութեան բաժինը։

Թւում է, թէ Սումկայիթի իրադարձութիւնների վերաբերեալ

Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի Մարտի վերջերի «Որոշման» մէջ ամէն ինչ տրուած է։ Եւ յանկարծ պարզւում է, որ Խորհրդային Միութեան լուսաւորութեան նախարարութիւնը միանգամայն բաւարարուած է եղել Սումկայիթի ժողկրթբաժնի աշխատանքի «արդիւնաւէտութիւնից»։ Դեռ աւելին՝ սումկայիթցի լուսաւորիչների փորձը երեւի արժանի է ընդօրինակման, եթէ նրանք յաջող են դուրս եկել համամիութենական սոցիալիստական մրցութեան մէջ եւ պարգեւատրուել Կարմիր դրօշով։ Մինչդեռ յաջող քաղաքի մի խումբ ներկայացուցիչներ իրենց վայրագութիւնների համար այսօր կանգնած են դատարանի առջեւ... Թէեւ լուսաւորութեան աշխատողներն անմիջականօրէն իրենք հեռաքննութեամբ չեն անցնում, բայց անկասկած պատիժ է սպասւում նրանց նախկին խնամարկեալներին, որոնք չափազանց իւրովի են սերտել «միջազգայնական դաստիարակութեան» դասերը։

Մենք հասկանում ենք, որ սումկայիթցիներին յաղթականի շնորհներ են մատուցել տեղի ունեցած իրադարձութիւններից առաջ։ Ցայտնի է նաեւ, որ Խորհրդային Միութեան լուսաւորութեան նախարարութիւնը, որը հրատարակում է վերոյիշեալ հանդէսը, լուծարքի է ենթարկուել մի քանի ամիս առաջ։ Բայց «Նարոդնոէ Օբրազովանիէ» ամսագրի մայիսեան համարը տպագրութեան է ստորագրուել Ապրիլի վերջին, եւ դժուար է ենթադրել, թէ խմբագրութեան աշխատողներն այդ ժամանակ ոչինչ չէին լսել Փետրուարին Սումկայիթում տեղի ունեցած ողբերգութեան մասին։

Ի՞նչ է դա՝ սրբապղծութի՞ւն, թէ՞ կուրութիւն։

Չէ՞ որ «Նարոդնոէ Օբրազովանիէ» հանդէսի խմբագրութեան աշխատողների չմտածուած գործողութիւնները կարելի է գնահատել սոսկ որպէս կամայ թէ ակամայ անարգանք ոճրագործների ձեռքով զոհուած անմեղ մարդկանց յիշատակի նկատմամբ...»

Հասկանալի է, որ եթէ համամիութենական-կենտրոնական պատասխանատու շրջաններում յարգանք ու պատիւ էին հասցէագրում ցեղասպանութեան ոստանին, ապա ադրբեջանական-տեղական պատասխանատուները ոչ միայն Սումկայիթի «վաստակն» էին քաջալերելու դրամական խոշորագումար պարգեւատրմամբ, այլեւ՝ հայասպանութեան միւս երկու ոճախների, Շուշիի եւ Խոճալուի։ Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան Կենտրոնական կոմիտէի բիւրոյի Հոկտեմբերի 18-ի նիստի արձանագրութեան մէջ տրուած էր. «Նշուեց Ադրբեջանի Համայնավար կուսակցութեան Կենտկոմի եւ Ադրբեջանական ԽՍՀ Նախարարաց խորհրդի 1976 թուականի Հոկտեմբերի 4-ի Շուշի քաղաքի առողջարանային համալիրի հետագայ զարգացման միջոցառումների մասին որոշման անբաւարար կատարումը, առաջարկութիւններ մտցըւեցին շրջանի սոցիալ-տնտեսական զարգացումն արագացնելու ուղղութեամբ։ Մեծ ծաւալի աշխատանք է իրականացուելու Ասկերանի շրջանի Խոճալուի գիւղական խորհրդի կազմի մէջ մտնող գիւղերում (խմելու ջրով ապահովում, բժշկական սպասարկման բարելաւում, ակումբի, դպրոցի, հիւանդանոցի շինարարութիւն, կազիֆիկացում)»։

Միով բանիւ՝ Ադրբեջանական ԽՍՀ-ում հայասպանութիւնը

*յարգուած եւ քաջալերուող մասնագիտութիւն է համայնավար-խորհրդային ղեկավար շրջաններում…*

*…Որոնք, համաձայն իրենց իսկ խոստովանութեան, միջազգայնական ոգու հարցում թոյլ են։*

*Որովհետեւ ուժեղ են միջցեղայնական ոգով։*

*Իսկ մենք հայերս, ոչ թէ ցեղ ենք, այլ՝ ազգ։ Այն էլ՝ դեռ մեր թուարկութեան նախօրեակից։*

# ՈՐՊԷՍ ՎԵՐՋԱԲԱՆ ՊՐԱԿԻՍ

Մոսկովեան դատավարութեան նիստերում բազմիցս արծարծուելով հանդերձ, համոզիչ պարզաբանում չստացաւ այն իրողութիւնը, որ Փետրուարի 29-ի երեկոյեան, ամբողջ «Քառասունմէկ-Ա» թաղամասում, ելեկտրական հոսանքը յանկարծօրէն անջատուել էր եւ խաւարի մէջ էր ընկղմուել ամէն-ամէն ինչ. ե՛ւ հայերի աւերուած տներն ու բնակարանները, ե՛ւ շէնքերի առաջ ջարդուփշուր կարասիների կոյտերը, ե՛ւ մայթերի վրայ ու բակերում հենց նոր կացնահարուած, խողխողուած ու գանկափշուր հայ զոհերի մարմինները, ե՛ւ հայասպանական բռնարարքներից արբշիռ ու «անհաւատների» արեամբ գինով թաթար բորենիների խրախճանական սեղանները։ Դատարանն այնուամենայնիւ չկարողացաւ պարզել, թէ անձամբ ո՞վ էր կարգադրել հոսանքն անջատել եւ ո՞ւմ ձեռով էր անջատուել լոյսը։ Փաստ էր մի բան. տիրել էր խաւար, թաթարական խաւար՝ խաւա՛ր Ատրպէյճանում։ Եւ այդ խաւարում կեանքի միակ յայտանշանը եղել էր սեւ երկնքի տակ ընկած հայ նահատակների բոցկլտացող աճիւնների փոսփորափայլ լոյսը։

Աւելի դժուար, գրեթէ անհնարին է համոզիչ պարզաբանում ստանալ այն հարցում, թէ անձամբ ո՞վ Խորհրդային Գերագոյն դատարանին կարգադրել էր թուլացնել լոյսը մոսկովեան դատավարութիւնում եւ լոկ աղջամուղջի վերածել Փետրուարի 29-ի խաւարը, դատավարութիւն, որից փարոսի լուսարձակում էին ակնկալում 1920 թուին աւելի՝ լոյսի նկրտած եւ հենց 1920 թուից գլուանի տակ խեղդուած լոյսը որոնող հայրենահայութիւնը, խորհրդային (ու արտախորհրդային) սփիւռքի հայերը, նաեւ՝ տարագրի միլիոնաւոր, 1917, 1920 թէ 1940 թուից լուսակարօտ մարդիկ։ Տարրական տրամաբանութեամբ շարքային ընթերցող հայից աւելի իրազեկ լինելու պարտաւո՛ր եղող, առնուազն աւելի իրազեկ ենթադրուող «Սովետական Հայաստանը», Հայաստանի Համայնավար կուսակցութեան Կենտկոմի, Հայկական ԽՍՀ Գերագոյն Խորհրդի եւ Նախարարաց Խորհրդի պաշտօնաթերթը, Հոկտեմբերի 20-ին գրում էր. «Երկրի Գերագոյն դատարանում Սումգայիթի ոճրագործութիւնը պէտք է ստանայ իր իրաւաբանական գնահատականը։ Յուսով ենք, որ դատը պէտք է բացայայտի այդ ոճրագործութեան պատճառները, ամբողջ յանցագործութեան էութիւնը եւ նրանց, ովքեր կանգնած են մարդասպանների թիկունքում եւ հովանաւորել են նրանց»։ Հինգ օր անց, հոգ չէ թէ արդէն փոքր ինչ տարակուսանքով, նոյն պաշտօնաթերթը հարց էր տալիս. «Կը յաջողուի՞, արդեօք, լրիւ բացայայտել ու արժանի պատիժ տալ ողբերգութեան իրականացնողներին ու նրանց հովանաւորներին։ ...Ուզում ենք հաւատալ, որ դա, իրօք, այդպէս կը լինի, քանի որ երկրում սկսուած վերակառուցումը չի կարող չցնցել ստալինեան ու լճացման

տարիների «արդարութեան» աներեր թուացող սիւները։ Երկրում, ուր կատարւում են իրական պետութեան առեղծման առաջին քայլերը, պէտք է յաղթանակի ճշմարտութիւնը։ Բայց պարզ է, նաեւ, որ այդ ճշմարտութեան ճանապարհին դեռեւս բազմաթիւ խոչընդոտներ կան։

Եւ քանի որ խորհրդային-համայնավար պաշտօնաթերթն իսկ հաստատապէս հաւաստացած չէր, որ թէկուզ կորպաչովեան «վերակառուցման» ժամանակներում ճշմարտութիւնը կը յաղթահարի ստի, խաբէութեան, նենգութեան եւ անարդարութեան խորհրդային ճահճացած առօրեայում ամրապինդ նստած սիւների աներերութիւնը, ապա բնականաբար ցերեկի լոյսի նման պարզ չդարձաւ, թէ Խորհրդային Միութեան Գերագոյն դատարանում ո՞վ խոչընդոտեց ու խափանեց սումկայիթեան եղեռնագործութեան հարցում ճշմարտութեան որոնումն ու բացայայտումը։ Ո՞ւմ քրէական, ու անդամահատմա՛ն արժանի, ձեռքը թուլացրեց, համարեա հանգցրեց լոյսը մոսկովեան դատավարութիւնում։ Եւ արարեց համատարած կիսախաւար՝ ըստ իր էութեան ու հոգու պատկերի. երկրորդական հարցերի կողմնակի խորշերում՝ դեռ հանդուրժուող կիսալոյս (վերջ ի վերջոյ՝ եթէ ոչ իսկական ազնուականութիւնը, ապա գոնէ ձեւական արդարադատութիւնը հարկադրում էր), մինչ գլխաւոր հարցերի կենտրոնական այրերում՝ համատարած մթութիւն։ Խաւար, որում թաղուեց-թաքցուեց մերօրեայ Հայասպանութեան, եաթաղանամեայ սոցիալիզմի օրօք նախնադարեան հասարակարգի կանոնակարգով գործուած նոր Ցեղասպանութեան ամբողջ կծիկը, որի ծայրերը միայն թաթարական խաւարով մածուած խաւար Ադրբէյճանում չէին, այլեւ՝ արհեստականօրէն առեղագործուած Մոսկուայի «անաչառ» գետնադամբաններում։

Եւ, ի բաւարարումն խորհրդային Գլխաւոր դատախազութեան թաթարապաշտ բարձրաստիճանաւորների, ի բաւարարումն Ահմէտովի իմաստազրկուած մահավճռով խորհրդային Գերագոյն դատարանը նսեմացնողների՝ Հայութեան հոգում մնաց «սումկայիթեան արիւնոտ ոճրագործութիւնների բոլոր մասնակիցների եւ կազմակերպիչների անպատժելիութեան առասպելը», որը «ո՛ւր էր թէ առասպել լինէր»։ Եւ ուրեմն հայրենահայութեան, նշանակում է՝ նաեւ նրա անբաժանելի մասնիկ արցախահայութեան, Լեռնային Ղարաբաղից բացի թաթարացուած հայկական միւս հողատարածքների բնակչութեան, վերջապէս թաթարացուած աղուանական հողատարածքների վերջին պանդուխտներին մնաց ակնկալել միայն ու միայն մի բան. Սումկայիթի «արիւնոտ ոճրագործութիւնների չկրկնուելու երաշխիքը», որի համար «Աւանգարդը» Նոյեմբերի 11-ին խորհուրդ էր տալիս ազօթանման կրկնել. «Յուսանք եւ հաւատանք»։

Սակայն ո՞ւմ յուսալ եւ ո՞ւմ հաւատալ, երբ վերեւում չեն հաւատում ցեղասպանութեան իրողութեան եւ մեր ողջերին կեանքի ամբողջ տեւողութեամբ ու մեր զոհերին անդենականում իրենց անէութեան ամբողջ յաւերժութեամբ, սպառնում են ցեղասպանութեան «հեքիաթ»ին հաւատալուն հետեւանքներով։ Այո՛, այդ դէպքում ո՞ւմ յուսալ եւ ո՞ւմ հաւատալ։ Կամ թէ՝ ինչի՞ն յուսալ եւ ինչի՞ն ապաւինել, երբ օրինաւոր մարդկանց միակ մարտազէնքը՝ բռունցքը, որ տեւապէս

մեզ հետ է եղել, մինչև էլ անզոր է դուրս եկել անօրէնների կացնի, խաթա-գանի, մանաւանդ գանկատուփ ճարգող թիւրքական հալածիչների դէմ···

Եւ ուրեմն մնում են այրող ու խորովող հարցերը։ Եւ թերթը, թէկուզ հարցադրումը կատարել է Հայաստանի համայնավար երիտա-սարդութեան պաշտօնական բեմից, կարող է ձայնակցուել ամէն մի հայի կողմից·

«Բարձրաձայն հարց տանք·

— Ո՞ւմ է ձեռնտու հարիւրաւոր աւազակներին պատսպարելը եւ ինչո՞ւ· էլի՞ պէտք կը գան···

— Ո՞ւմ է ձեռնտու ազգային հողի վրայ կատարուած յանցա-գործութիւնները որակել որպէս խուլիգանութիւն···

— Ո՞ւմ է ձեռնտու կազմակերպուած ու ղեկավարուող աղանդն ու թալանը որպէս այդպիսին թաքցնելը։

— Ո՞ւմ է ձեռնտու կազմակերպիչներին չբացայայտելու հանգամանքը։

···Ո՞ւմ ենք հարց տալիս···»։

Ո՞նց թէ «Ո՞ւմ ենք հարց տալիս»։ Սա, մեղմ ասած, կուսակ-ցական սրբազան կարգապահութեան խախտում է, Հայաստանի ընկեր երիտասարդ համայնավարներ։ Չէ՞ որ ձեր ծաղրական բացականչութիւնը ուղղակի հասցէագրւում է ձեր իսկ կուսակցութեան գլխաւորագոյն քարտուղարին ու ձեր ու մեր պետութեան գերագոյն ղեկավարին, որին, եւ առաջին հերթին, հասցէագրուած են ձեր հարցերն էլ։ Երեւի, ճահճու-թիւնից, մոռացել էք Յուլիսի 18-ին, Գերագոյն Խորհրդի Նախագահու-թեան նիստում, նրա՝ հատիչով փորագրած սահմանումը· «Սումգա-յիթում վայրագութիւնները տարերայնօրէն եւ անկազմակերպ գործել են հասարակութեան թափթփուկները եւ ցեղասպանութեան մասին խօսք լինել չի կարող»։

Վարդապետն ասաց· ուրեմն վե՛րջ։

Նա նոյնիսկ սահմանեց յանցակազմերը, հետեւաբար եւ օժիտը ձեռք տուած «թափթփուկներ»ին ու միա՛յն նրանց կարելի էր համա-պատասխան յօդուածներով դատապարտել առանց դատախազ-դատաս-տանի· ի՞նչ կը լինէր՝ մի տարի աւելի կամ երկու տարի պակաս···

Էլ ի՞նչ Գերագոյն դատարան, էլ ի՞նչ փաստաբանների միջ-նորդութիւն, էլ ի՞նչ մամլոյ աղմկարարութիւն, մի ամբողջ ժողովրդի ջղերի պրկում եւ այլն, եւ այլն։

Բոլորը՝ պարզապէս քամի՜։

Եւ, եթէ խորհրդային հայրենասիրութիւնս բռնի ու խեղդիս փչի, կ'ելնեմ ու կ'ասեմ.

— Տօ՛ դու ո՞վ ես, «Գրական Թերթ», որ Յուլիսի 18-ից երեք ամիս ու երեք օր յետոյ գրում ես· «Ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ մեր օրօք էլ հայասպանութիւն կը կատարուի, այն էլ մեր երկրում։ Ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ մենք էլի գաղթ ու գաղթականութիւն կը տեսնենք։ Սում-գայիթի բուն էութիւնը պարզ է մեզ համար»···

— Տօ՛ դու, մանաւանդ դու ո՞վ ես, «Սովետական Հայաստան», որ Յուլիսի 18-ից երեք ամիս ու երկու օր յետոյ, ուրեմն գէթ մանանեխի հատիկի չափ գրական խիզախութեան իրաւունք ունեցող «Գրական

Թերթերից մէկն օր չուտ, հարց ես տալիս. «Ո՞վ էր հազարաւոր մարդկանց հրահրել հայերի սպանութեան»...

Ջամին պատկերում է հողմաղացները եւ հայ բեմական Տոն-Կիխոտները գրոհում են հողմաղացների վրայ՝ յանուն համագիւղացիների մխիթարիչ ոգեւորութեան եւ սփիւռքում էլ նստած Սանչօ-Փանսաների ցնծացող խանդավառութեան...

...Այն ժամանակ, երբ թշնամին գրոհում է «կենդանի նշանակէտ» հայերի վրայ՝ Սումգայիթից յետոյ նաեւ Խոճալուում, Շուշիում, Գանձակում, նոյնիսկ Խորհրդային Հայաստանի տարածքում։ Բարեմիտ հայերի վրայ։ Անզէն հայերի վրայ։ Ինքնապաշտպանութեան անպատրաստ հայերի վրայ։

Ո՛չ, հազար անգամ ո՛չ. Սումգայիթում եթէ բոլոր հայերն անակնկալի բերուեցին, ապա բոլոր զոհերը չէ, որ ընկան առանց ինքնապաշտպանութեան։ Եւ մարդու սիրտ է պայթում այն մտքից, որ հնարաւոր չէ ինքնապաշտպանութեան առանձին դրուագներից կազմել մի ամբողջական հերոսական պատկեր։ Ականատեսների տարած ցուցմունքներից գիտենք, օրինակ, որ երկու առիւծասիրտ հայորդիներ՝ Ռաֆիկ Թովմասեանը եւ Գաբրիէլ Տրդատեանը, զոհուել են հերոսի մահով, բնակարանը մանրանկար Մուսա լեռ դարձրած, եւ զոհուել են այն պարզ պատճառով, որ ֆրանսիական ռազմանաւը չի կրկնել մարդկային իր պարտականութիւնը... Ներողութիւն՝ ի՞նչ ֆրանսիական ռազմանաւ... զոհուել են այն պարզ պատճառով, որ ռուսական դրահամեքենան չի կատարել քաղաքացիական իր պարտքը։ Խորհրդահայ մամուլի վկայութեամբ, «իրենց կանանց ու երեխաներին փրկելով, երկու այլ ազգամարդկանց հետ Թովմասեանը եւ Տրդատեանը ժամեր շարունակ կռուեցին շքամուտքից եւ հարեւանի պատի փլուածքից վրայ տուող, ինչպէս նաեւ փողոցի կողմից հրշէջ մեքենայի աստիճանով բարձրացող վայրագ մարդասպանների դէմ»։

Դժբախտաբար Թովմասեանի, Տրդատեանի ու նրանց երկու անանուն ընկերների սխրանքի մխիթարութեանը ժանտ ու ժահր է խառնում նոյն Սումգայիթում, նաեւ Շուշիում եւ այլուր, առաջին պահի անհաւատալի թուացող, այլ անողոք իրողութիւն եղող (եւ մեզ սրտամկանի պայթիւնի հասցնելու համար կենտրոնական հեռուստատեսութեամբ ու մամուլով սրբէկայաբար քանիցս շեփորուած) մի երեւոյթ։ Ընթերցենք «Մոսկովսկիէ Նովոստի» շաբաթաթերթի Ապրիլի 17-ի ֆրանսիական հրատարակութիւնից մի կարճ լուր. «Սումգայիթում Մարտի 8-ին Թամարա Աւագեանը ամուսնացել է Իլգար Մամէտովի հետ»։

Սումգայիթի եղեռնի զոհերի ութօրէքին՝ ահա այսպիսի՛ սրբապղծութիւն...

...Եթէ հայ աղջիկը թուրքի հարս էր դառնալու, էլ ինչո՞ւ կոտորուեցինք բնօրրանում, ինչո՞ւ կորցրեցինք բնօրրանը։

Եւ ո՞ւր մնաց հայի երդումը։

Մեր լեզուն կանանց որոշ մի դասի կոչում է. «Ծամը կտրած»։ «Վիզը կտրած»՝ չեմ լսել։ Երեւի կանանց որոշ մի դասի ծամը շա՛տ զգոյշ են կտրել...

...Դեռ ինչե՛ր ունենք սովորելու։

Եւ սովորածը՝ կիրառելո՛ւ...



Խաչքար Սումգայիթի զոհերի յիշատակին, Ծիծեռնակաբերդի բարձունքին

Գին՝ 10 Տոլար

Կողքը՝ Սեւակ Ղազարեանի

Հեղինակի հետ թղթակցութեան եւ ապսպրանքներու համար դիմել հետեւեալ հասցէին·

HELP BOOKSHOP,
Jeanne d'Arc St., Hamra,
Beirut, Lebanon.

9(47.925)
Е-27